Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99
L-38

51

ԼԷՕ

ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ Տպարան „ՀԵՐՄԷՍ" ԸՆԿ., Մայդանեան փողոց, 15.
1905

391.39
L-38
2 FEB 2011

ԼԷՕ

ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“, Մադաթեան փողոց 15.
1905 (78)

02.05.2013

33267

2522

Дозволено Цензурою. Тифлисъ, 14-го Декабря 1904 г.

Այս աշխատութիւնը կարելի է պատմական վէպ անուանել այն չափով, ինչ չափով աւանդութիւնը հնարաւոր է պատմութիւն համարել։

Գրաւոր պատմութեան վրա չէ հիմնված «Մէլիքի Աղջիկը», այլ այն աւանդութեան վրա, որ պահել էր իր մէջ Ղարաբաղի Աւետարանոց գիւղը։ Չը գիտեմ՝ այժմ էլ պահվում է նա, բայց քսան տարի առաջ Շուշում իմ ձեռքն անցաւ մի հաստ տետրակ, որ նոր էր գրվել Աւետարանոցում և շատ խառն, գռեհիկ, վայրիվերոյ ոճով, բայց երկար մանրամասնութիւններով պատմում էր այդ աւանդութիւնը։

Ես օգտվեցի նրանից իբրև մի չոր կմախքից, որ մի քանի հատ փաստեր էր տալիս։

Աւանդութիւնը մնաց աւանդութիւն։ Բայց այս երկրորդ տպագրութեան մէջ ես հիմնովին փոփոխեցի ժամանակը լուսաբանող պատմական տեսութիւնները, որովհետև առաջին տպագրութիւնից յետոյ հրատարակվեցին շատ կարևոր պատմական նիւթեր, որոնք միանգամայն կերպարանափոխեցին Ղարաբաղի՝ մինչև այդ յայտնի պատմութիւնը։

ԼԷՕ

1904, դեկտեմբեր։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ա

Կէսօրն անցաւ։ Վիթխարի ընկուզենին, որ միայնակ տարածել էր իր հինաւուրց ճիւղերը մեծ բլրի գլխին, հսկայական շուաք գցեց դէպի արևելք։ Դա նշան էր որ պէտք է նորից սկսել Վարդավառի խաղերը, որոնց ընդհատել էր յուլիսեան միջօրէի տօթը։

Բլրի ետևում, քչքչան առուակի աջ, բարձր ափին, տարածված էր մի մեծ բանջարանոց. Նրա կենտրոնում, ցածրահասակ թփերի մէջ, երևում էր մի գիւղական շինութիւն—չորս հաստ անտաշ, ծուռ ու մուռ փայտէ սիւների վրա հաստատված մի կտուր, որ ծածկված էր հնդով։ Այդ ծածկի տակից դուրս թափվեց աղջիկների և նորահարսերի մի մեծ խումբ։ Ամենքը հագել էին իրանց տօնական ամենագեղեցիկ շորերը։ Ծիծաղը, ուրախ խօսքը գնում էր նրանց հետ։ Կեանքի գարունը այդ օրը բացառիկ արտօնութիւն ունէր. ամենքը ջահել էին, միայն մի հատ հասակաւոր կին կար, նա էլ չէր մօտենում խմբին։

Ճօճանակը պատրաստ էր. մի աղջիկ կանգնեց նրա մէջ և սկսեց ցոյց տալ իր ճարպիկութիւնը։ Նա արագ բարձրանում էր և արագ ծալում իր ծնկները, ցածրանում, իր մարմնի ամբողջ ճկունութիւնը գործ էր դնում՝ առաջ և առաջ մղվելու համար։ Ջուանը հետզհետէ մեծ և մեծ շրջան էր գործում, և բոպէ չանցած՝ աղջիկը յետ ու առաջ էր թռչում ահագին բարձրութեան վրա։

Բայց աղջիկների և նորահարսների հասարակութիւնը այսօր զուր չէր բոլորովին առանձնացել։ Կուսական խորհուրդներ կային։

Ահա մի նորահարս վերցրեց փայտը։ Նա խփում է ճօճվող աղջկայ մերկ ոտներին, իսկ մնացածները պահանջում են, որ նա արտասանէ իր սիրած մարդու անունը։ Հարց ու փորձի ենթարկվածը շուտ չէ կատարում այդ պահանջը. նա դեռ դիմադրում է, լաւ ծեծ է ուտում և ապա միայն, յոգնած, կարմրած, սկսում է պատասխաններ տալ։ Ուրիշ կերպ նա չէ կարող իջնել ճօճանակից և հանգստանալ։ Նա նշանված է և տալիս է իր նշանածի անունը։ Այդ դեռ շատ դժուար չէ։ Ընկերուհիները սկսում են աւելի խոր գնալ նրա սրտի մէջ և ուզում են անպատճառ իմանալ ինչպէս է, սիրում ու հաւանում է նշանածին թէ ոչ։ Սրտի այդ բոլոր նուիրական գաղտնիքները դուրս են հանում անդադար հարուածները . . .

Հարցնում են և այնպիսիներին, որոնք դեռ նշանված չեն։ Անուններ տալ դրանք պարտաւոր չեն. պէտք է միայն նկարագրեն իրանց ցանկացածի դէմքը, հասակը, հագուստը և, եթէ կարելի է, նոյն իսկ պարապմունքը։—Լսողները սկսում են գուշակել թէ ով է այդ անյայտ երիտասարդը. մի-մի թւում են գիւղի նշանածացուներին, իսկ ճօճվող աղջիկը, որին միայն դրականապէս յայտնի է, թէ ով է իր սրտի տէրը, չարչարում է հարցնողներին, դիտմամբ ուրանում է տուած անունները։

Ընկուզենու տակ հաւաքված էր այնքան ուրախութիւն, որ նոյն իսկ չափահասակ կինը հեռուից նայում էր, ծիծաղում և երանի էր տալիս երջանիկ ջահելներին։

Հերթը հասաւ մի բարձրահասակ աղջկան։ Նա, ինչպէս երևում էր, այս տօնի թագուհին էր. ոչ ոք նրա պէս գեղեցիկ և հարուստ զգեստ չունէր։ Նրա կրծքի վրա փայլում էին երկու շարան ոսկի դրամները, մինչդեռ միւսների կուրծքը զարդարում էին արծաթ դրամներ։

—Հիմա մենք կը սկսենք, ձայն տուէն այս ու այն կողմից։

Ամենքը աւելի մօտ եկան ճօճանակին, աւելի խիտ խմբվեցին։ Ամեն մէկն էր ուզում վերցնել ծեծելու փայտը։ Տաքացած հուրիների պէս ամբողջ խումբն ուզում էր տանջել, ծեծել իր ընկերուհուն։

—Խնայել չը կայ, ասում էր մէկը։

—Ինձ տուէք փայտը, կանչեց մի յաղթանդամ աղջիկ,—ես ցոյց կը տամ թէ ինչպէս են մրմնջում մարդու ոտները։

Աղջիկը լուռ էր. նրա հրաշալի ժպիտը համաձայնութիւն էր յայտնում։ Եւ համարձակ բարձրացաւ չուանի վրայ։ Մետաքսէ կարմիր թաշկինակը յետ սողաց, ընկաւ նրա գլխից, բաց անելով նրա սիրուն ճակատը, շքեղ, սաթի պէս թուխ մազերը։ Երկու անգամ յետ ու առաջ գնաց ճօճանակը. աղջիկը եռանդուն ջանքեր էր գործ դնում. Նրա դէմքի վրայ մի սիրուն գոյն իջաւ. լիքը թշերը աւելի ևս կարմրեցին, կարծես աշխատում էին նսեմացնել թաշկինակի գոյնը։ Առաջին հարուածը իջաւ նրա ոտների վրայ և անողոք հարցը արտասանվեց պարզ կերպով.

—Ո՞վ է...

Ամենքը լռեցին։ Աղջիկը իր փոքրիկ բերանի մի անկիւնով կծեց գլխի թաշկինակի մի ծայրը. Նրա նուրբ շրթունքների միջից երևացին ձիւնափայլ ատամները, ժպիտը դարձաւ մի սիրուն, մեղմ ծիծաղ, որ փոսիկներ կազմեց թշերի վրայ, քիչ իջեցրեց երկար ու սրածայր թերթերունքները մի ջուխտ թուխ աչքերի վրայ, որոնք այդ կանոնաւոր, կլորիկ դէմքի հրաշքն էին։ Նա լուռ էր։

—Ո՞վ է, կրկնվեց նոյն հարցը։

Երրորդ, չորրորդ հարուած։ Բայց նա չէ խօսում, պինդ կծում է թաշկինակի ծայրը, ուսերը վեր է քաշում հարուածների ցաւը մոռանալու համար։

Նա դիւրաթեք էր, ճկուն։ Չուանը կատաղի թռիչքներ

էր գործում, կրկնապատկելով իր թափը նրա ծնկների կծկումից։ Երկու շարան ոսկիները հանդարտ չրխկում էին, բաղխվելով նրա բարձր ու լայն կրծքին։ Բարակ քամին մի քանի փնջիկներ խլեց նրա մազերից և սկսեց հեզիկ կերպով խաղալ նրանց հետ։

Նրա յամառութիւնը չափ չէր ճանաչում։ Բերանի մի անկիւնով կծած մետաքսը, կարծես, կապել էր նրա լեզուն։ Բողոք չէր լսվում, հարուածները ցնցում չէին առաջացնում։ Այդ աղջիկը սկսել էր զարմացնել նոյն իսկ իր ընկերուհիներին։—Խփողները այժմ երկուսն էին. փայտով զինվածի դիմացը կանգնել էր մի ուրիշ աղջիկ, որ գործում էր գօտուց հիւսած լախտով։

—Բաղդասար... յանկարծ, բոլորովին անսպասելի կերպով, լսվեց բարձրում աղջկայ բարակ ձայնը, որ մի ակնթարթում փոխվեց մի հնչուն ծիծաղի։ Կարմրութիւնը աւելի ևս խտացաւ, տարածվեց մինչև ականջների ծայրը, կարծես արիւնը հիմա դուրս կը ցայտէր։

—Սուտ է, կանչեցին ներքևից։

—Սաւմդ, բացականչեց նոյն ծիծաղը։

Այդպիսի անուն գոյութիւն չունէր։ Նորից հարցեր, նորից մի շարք անուններ վերևից։ Ծիծաղում էին ամենքը և անզուսպ ուրախութիւնը ամեն մէկին տալիս էր աւելի խիստ պահանջող լինելու եռանդ։ Իսկ նա, որ նազելով ճօճվում էր և ծիծաղում, այդ բախտաւոր, գեղեցիկ արարածը, ո՞րքան բաւականութիւն էր գտնում իր չքնաղ յամառութեան մէջ...

Բանն այն տեղին հասաւ, որ այլ ևս չը մնաց մէկը, որ չը խփէր նրան և չը հարցնէր։ Եւ նա տեղի տուեց, յայտնեց թէ այժմ ասում է։ Տիրեց լռութիւն. բայց լսվեց մի տարօրինակ խօսք։

—Չունեմ, ասաց նա։

Ծիծաղ, իրարանցում, դժգոհութիւն...

—Սուտ է, սուտ է... երէկ նա եկաւ մեր գիւղը...

Այդպէս էին ասում ընկերուհիները։ Այլ ևս թաղ-

ցնելու կարիք չը կար։ Նա երկու անգամ լուռ յետ ու առաջ թռաւ և ապա, աչքերը ուղղելով դէպի վեր, դէպի ընկուզենու խիտ ճիւղերը, ցած ձայնով, այս անգամ առանց որ և է ծիծաղի, արտասանեց.

—Ջալալ...

Ուրախութեան, յաղթութեան աղաղակները ողջունեցին այդ անունը։ Աղջիկը կանգնեցրեց չուանը, ցած իջաւ։ Այժմ նա կերպարանափոխուել էր։ Մի լուրջ մարդ էր, որ լուռ հեռացաւ, քաշուեց մի անկիւն, ծիծաղը թողնելով միւս աղջիկներին։

Բայց չը կար մի տեղ, որ բոլորովին ծածկէր նրան այն սուր ու թափանցող հայեացքներից, որոնք ամեն կողմից ուղղուած էին դէպի նրան։ Հրապարակական խոստովանութիւնը այնքան էլ հեշտ չէր. աղջիկը դժուարութեամբ էր շունչ քաշում, զգում էր որ իր սիրտը հանգստութիւն չունի, որ մի բան այրում է նրան։ Նա սկսեց կարգի բերել իր թաշկինակն ու մազերը։ Ի՞նչ էր նրա դրութիւնը. այդ ոչ ոք չը գիտէր, բայց ամենքը երանի էին տալիս նրան։

Եւ հասկանալի է թէ ինչու։ Բախտաւոր գեղեցկուհին մէլիքի աղջիկն էր...

Արեգակը շատ էր մօտեցել այն սարին, որի ետևում մայր էր մտնում։ Մի քանի հարց ու փորձ ևս—և կը գայ ամառնային երեկոն. բայց Աւետարանոցի ծաղիկները դեռ չէին վերջացրել Վարդավառի բոլոր ծէսերը։ Դեռ մնում էր ամենահետաքրքրական բանը. դեռ այդքան մատաղ սրտերը սպասում էին, թէ ինչ պիտի ասէ բախտը։ Ամեն մէկը բացել էր իր նուիրական գաղտնիքը. բայց... զուր չեն ասում. «թող քո սրտինը, տես ինչ է ասում բախտը»։

Մէլիքի աղջիկը հեռացաւ ընկուզենուց և գնաց դէպի բլրի ստորոտը։ Նրան հետևեց հասակն առած կինը, որ մինչև այժմ հեռու էր պահւում։ Նա աղջկայ դայեակն էր։ Տեսնելով, որ աղջիկը սկսեց դէս ու դէն գնալ և

գեղեցիկ ծաղիկներ հաւաքել, պառաւը կանգ առաւ և հարցրեց.

—Ո՞ւմ համար են դրանք։

Աղջիկը չը պատասխանեց մինչև որ իր ձեռքում մի մեծ գոյնզգոյն փունջ չը կազմուեց։ Ապա, մօտենալով իր դայեակին, ասաց.

—Մեր սափորի համար, որ դրած է աղբիւրի մէջ։ Ես կը ծածկեմ նրան, կը զարդարեմ, կը համբուրեմ նրան, որ լաւ բան գուշակէ ինձ համար։ Ի՞նչ կը լինի, Մէհրի, ինչ կասէ նա ինձ։ Վախում եմ, սիրտս հանգիստ չէ։

—Մի՛ վախիր, Մէհրին մատաղ լինի քո սիրուն աչքերին, ասաց պառաւը մայրական քնքշութեամբ և բռնեց աղջկայ ձեռքը։—Մի՛ վախիր. իմ Գայիանէն Վարանդայի երկնքում մի աստղ ունի, որի նմանը դեռ մարդ չէ տեսել։ Ի՞նչ պիտի ասէ քեզ վիճակը, երբ դու ինքդ մեր ամենքի բախտն ես...

Եւ նորից ու նորից պառաւը մատաղ գնաց իր սանիկին։ Նրա ձայնը, որ դիւթում էր մէլիքի երեխաներին դեռ մանկութեան առաջին տարիներից, այժմ էլ արաւ իր հրաշալի ներգործութիւնը։ Գայիանէն ժպտաց և լի վստահութեամբ ու հաւատով՝ նայեց այն տեղին, ուր խորհրդաւոր սափորն էր գտնւում։

Այդ միջոցին միւս աղջիկներն էլ եկան դէպի այն կողմը, ուր Գայիանէն ծաղիկ էր հաւաքում։ Պառաւը սթափուեց, բարձրացրեց իր գլուխը, և այդ ժամանակ միայն նկատեց, որ արևը մայր մտնելու վրա է։ Նա իսկոյն յիշեց իր պարտաւորութիւնը, և տանելով Գայիանէին դէպի մի կողմ, ասաց.

—Օրը մթնում է, և մենք այստեղ չը պիտի մնանք։

Աղջիկը ապշեց, համարեա ցնցուեց։ Նա չէր կարծում թէ այդ րոպէին աշխարհում կը լինի մի մարդ, որ կխասա կը թողնէ այդ օրուայ խաղերը։

—Իսկ վիճակը, բացականչեց նա յուսահատուած։

Ապա բռնեց դայեակի ձեռքը և ցոյց տալով արևմուտքը, ասաց.

—Դեռ արև կայ. տեսնում ես, երեք-չորս չուանի երկարութեամբ ճանապարհ ունի արեգակը, իսկ նրա մայր մտնելուց յետոյ սկսվում է մի կարճլիկ օր, շուաքի, թարմութեան փոքրիկ օր։ Տղամարդիկ ճրագավառին են տուն վերադառնում. իսկ մինչև այդ ժամը վերջացած կը լինի մեր վիճակը։

Մեհրին սարսափեց վերջին խօսքերից։

—Մինչև ճրագավա՞ռ, հարցրեց նա կոշտ ձայնով.— այդ չի լինի։ Այստեղ ամենքը աղջիկներ են։

—Բայց մեր գիւղը շատ է մօտիկ, երկու թռիչքով կարելի է հասնել։

—Չէ, չէ, ժամանակը չար է... Դու չը գիտես, դու երեխայ ես... Այժմ ցերեկն էլ մեր երկնքի տակ ապահով չէ։ Գնանք, վիճակը տանն էլ կարելի է...

—Տանը Հարմնաղբիւր չը կայ...

—Ջրից կարելի է տանել. Բայց այս ինչ է...

Նա այլ ևս չը շարունակեց։ Նրա աչքերը տեսան մի բան ու սարսափեցին։

Բանջարանոցի միւս կողմում ահագին թեք լանջեր էր տարածել լեռնային բարձրութիւնը. զառիվայրի մեծ կէսը ծածկված էր անտառով, որի ստորին մասերը արդէն ընկղմվել էին երեկոյեան ստուերների մէջ։ Անտառից ցած սկսվում էր բաց, այժմ դեղնած խոտերով ծածկված տարածութիւնը, որ փոքրիկ ձորեր, խորդ ու փոսեր կազմելով, գալիս իջնում էր առուակի վրա։ Անտառի տակ երևում էր մի ձիաւոր։ Նա մի քանի քայլ գնում էր, բայց իսկոյն յետ էր դարձնում ձիու գլուխը և դիմում էր դէպի այլ կողմ։ Ինչպէս երևում էր, նա դիտում էր այդ կողմերը։

Ամեն ինչ հասկացնել էր տալիս, որ դա մի վտանգաւոր մարդ էր։ Ապա նա, կարծես նոր նկատելով բլրի

լանջին ցրված աղջիկներին, սկսեց դանդաղ կերպով դէպի ցած գալ...

—Սուրբ Գրիգորիս... մրմնջաց պառաւ Մեհրին... Ձիաւո՞ր այսպիսի ժամանակ...

Գայիանէն մոռացաւ ամեն ինչ. նա զգաց այն, ինչ զգում է փոքրիկ թռչունը, երբ հեռւում, ծմակների վրա, երևում է բազէն։ Վերջին տարիները նա մեծացել էր այդ վախերի մէջ. նրան միշտ ծածկում էին պատերի ետևում, նրա ականջում ինչ-որ բաներ էին շշնջում։ Եւ միակ նա չէր այդ դրութեան մէջ. ամբողջ գիւղը ահ ու սարսափի մէջ էր։ Եւ այժմ, երբ երևում էր վտանգը, նա սեղմվեց իր դայեակի աջ թևին, կարծես այդ պառաւ ու թոյլ կնոջից էր պաշտպանութիւն պահանջում։ Ձիաւորը կաշկանդել էր երկուսին։ Փոխանակ փախչելու, գլուխ ազատելու, նրանք կանգնել էին և նայում էին թէ ինչ կը լինի...

Այդ միջոցին ձիաւորը յանկարծ շուռ տուեց ձիու գլուխը, փոխեց իր ճանապարհը և գնաց դէպի բանջարանոցի ետևի կողմը. ձին այժմ արագ էր գնում։ Փառք Աստուծու... Բայց ինչ ուրախութիւն։ Րոպէ չանցած՝ երևան եկաւ մի ուրիշ ձիաւոր, որ շտապով գնաց միւսի առաջը։ Նրանք կանգ առան, երևի խօսում էին։

Մեհրին իմացաւ որ րոպէն վճռական է։ Նա կանչել էր Վարանդայի բոլոր սուրբերին, այժմ ձայն բարձրացրեց, սկսեց կանչել աղջիկներին ու հարսներին, ասաց որ պէտք է ամեն ինչ թողնել ու փախչել։ Աղջիկներն էլ տեսել էին ձիաւորներին և նրանք էլ, հալածվող թռչունների նման, շտապով սկսեցին հաւաքվել և շարժվել դէպի այն տեղը, ուր կանգնած էր մելիքի աղջիկը։ Բայց ինչպէս փախչել... Փախչելու տեղ էլ չը կար։

Յանկարծ Գայիանէն ծիծաղեց և օձի բերանից ազատվածի նման բացականչեց բարձր ձայնով.

—Ոչինչ չը կայ. գնացէք, վիճակը պատրաստեցէք...

Մեհրին կը քարանար սարսափից, եթէ Գայիանէն

իսկոյն չասէր նրա ականջին.

—Ես ճանաչեցի…

—Ո՞ւմ։

—Այն միւսին, որ նոր եկաւ։

Որքան Մէհրին լարեց իր տեսողութիւնը, մի բան հասկանալ չը կարողացաւ։

—Մեր գիւղի՞ց է, հարցրեց նա։

—Ո՛չ։

Եւ Գայիանէն նորից շտապեցրեց աղջիկներին ցած իջնել, պատրաստել վիճակի սափորը։

—Ես էլ ճանաչեցի, աղաղակեց մի աղջիկ և վազեց դէպի ցած։

Մի ակնթարթում անցաւ ահը. նա մի փոթորիկ էր, որ յանկարծ կախվեց երկրի վրա և իսկոյն էլի չքացաւ։ Տօնը խանգարված չէր. նորից սկսվեց թռչկոտոցն ու խօսքը։ Պառաւ գայեակը մնացել էր ապշած. նա չը գիտէր թէ ինչ է կատարվում. նրա խորշոմած, արևառ դէմքի վրա անշարժացել էր սարսափը և նրա շրթունքները դեռ արտասանում էին. «մութը գալիս է, ինչ կանենք»։ Գայիանէն չը հեռացաւ նրանից, և ծիծաղելով հարցրեց.

—Հիմա էլ չես ճանաչում։

—Իմ աչքերի մէջ լոյս չէ մնացել, իսկ դու չես ուզում ասել, պատասխանեց նա.—բայց իմ սիրտը կոտրատվում է, և ես չը գիտեմ ինչ կը լինի, եթէ…

Խեղճ կինը չը կարողացաւ շարունակել և լաց եղաւ։ Նա աղաչում էր փորձանքից հեռու մնալ, փախչել, ազատվել։ Գայիանէն գրկեց նրան, իր դէմքը բոլորովին մօտեցրեց բարի գայեակի դէմքին և հիացած արտասանեց.

—Նա է, Մէհրի, նա է…

—Ո՞վ։

—Չես հասկանում։ Ես տուի նրա անունը այնտեղ։

Եւ նա ձեռքը մեկնեց դէպի ընկուզենին։ Բայց Մէհրին ոչինչ չը հասկացաւ, այնքան շշկլվել էր։

—Էլի՞ չը հասկացար։ Հէն մտածիր, ինչու էին ինձ ծեծում մեր աղջիկները։

Գայիանէի ձայնը դողաց վերջին խօսքերի ժամանակ. նա չը կարողացաւ նայել իր գայեակին և շուռ տուեց իր երեսը։

—Ջալա՞լը, րոպէական լռութիւնից յետոյ բացականչեց Մէհրին և պինդ գրկեց Գայիանէին։

—Այո… Նա գիտէ որ մենք այստեղ ենք… Նրա կնիքն էլ վիճակի սափորի մէջ է… Ինքն է ուղարկել։

Պառաւը, վերջապէս, հանգստացաւ, սրբեց իր աչքերը, դրատեց գլխի շորը և ապա սկսեց մոլեգնաբար գգուել իր սանիկին, անթիւ անգամ մատաղ գնալ նրան։

—Ջալալը… կրկնեց նա մի քաղցր ձայնով, մի սրբազան զգացմունքով, կարծես սուրբ Գրիգորիսն էր դա, որին կանչում էր մի քանի րոպէ առաջ։

—Այո, նա… Այժմ մութ գիշերն էլ սարսափելի չէ, այժմ ոչ մի մութ, ոչ մի ծմակ և ոչ մի սար վտանգ չի բերի մեզ, չէ՞։

—Այո, Մէհրին քո ցաւը տանէ… Բայց Աննա-խաթունը…

—Միթէ նա չի հաւատայ, որ այդ երիտասարդը մենակ կարող է պաշտպանել ամենքիս, այս բոլորին։ Օ՜, դու, երևի, չես ճանաչում խաչենցուն։ Գնանք, էլ ինչ հոգս ունենք. տարին մի անգամ է վիճակ լինում…

Նա ցած գնաց, և Մէհրին այլ ևս չը համարձակվեց իր չարագուշակ խօսքերով ու նախազգացումներով տխրացնել սիրուն աղջկան, որ կամենում էր ուրախութեան բաժակը մինչև վերջը խմել։

Բայց Գայիանէն յանկարծ յետ դարձաւ և խորհրդաւոր ու ցած ձայնով ասաց.

—Լսիր, Մէհրի։ Եթէ սափորի մէջ գցած նրա կնիքը լաւ գուշակութիւն չանէ, դու չես թողնի որ խաչենցին տխուր գնայ այստեղից։ Իմաց կը տաս նրան, որ ես գիտեմ թէ երկնքի որ կողմումն է նրա աստղը. ա-

մէն գիշեր ես տեսնում եմ նրան և իմանում եմ, թէ ինչ է անում և ինչ է մտածում մէլիքի որդին։ Կասեմ միմիայն նրան. պահիր այս բանը քո սրտում, ինչպէս ես եմ պահում...

Եւ նա, պատասխանի չը սպասելով, ծիծաղեց ու վազեց դէպի ցած։

Մէհրին նայեց նրան, նայեց և ծանր հառաչանք հանելով սրտից, արտասանեց.

—Զափից դուրս բախտաւոր ես, աչքիս լոյս. դա վատ է, մեր աշխարհը չէ ընդունում այդքան շատ բախտ։

Բ

Արեգակը մայր էր մտնում։ Սառուակի ձորում այլ ևս արևի մի հատ շող չէր մնացել։ Մի սիրուն խորշ պատել էր ձորի աջ կողը. երկու մենաւոր ծառեր, երկու սիրող քոյրերի նման, գրկել էին միմեանց, հովանաւորում էին այդ փոքրիկ խորշը։ Իսկ նրանց արմատների մօտ, սև հողի մի բարձր շերտից դուրս էր թափվում յորդ աղբիւրը։ Այդտեղ էր ամէն տարի կատարվում աղջիկների և հարսների վիճակը։ Եւ այդ պատճառով էր նա Հարսնաղբիւր։

Երբ Գայիանէն մօտեցաւ, ամէն ինչ արդէն պատրաստ էր։ Աղբիւրի ակը, ուր դրած էր մի փոքրիկ հողէ սափոր, կոլած էր կանաչ ճիւղերի, խոտերի և ծաղիկների տակ։ Ահա մի քանի հոգի նստեցին աղբիւրի գլխին. դրանք երգ ասողներն են և դրանց մէջ է Գայիանէն։ Վայրի շուշաններից և կարմիր պուտերից հիւսած փոքրիկ շարաններ պսակում են նրանց գլուխը։ Ահա եօթը տարեկան մի աղջիկ երեխայ նստեց նրանց կողքին. դա վիճակ հանողն է։ Երեխայի գլխին գցում են մի կարմիր շոր, որ ծածկում է նրա դէմքը. բախտ բաժանողը չը պիտի տեսնէ ոչ մէկին. չէ՞ որ նրա հանած վճիռները սարսափելի պիտի լինեն շատերի համար, ինչպէս գեղեցիկ և ուրախալի են լինելու ուրիշ շատերի համար։

Սափորը հանվեց աղբիւրից։ Նրա վրա էլ կարմիր շոր գցեցին, ծաղիկներ ցանեցին, և սկսվեց արարողութիւնը։

Երգողները հերթով մի-մի տուն երգ են ասում, մնացածները կրկնում են ջանգիւլումները։ Ամէն մի երգից յետոյ փոքրիկ աղջիկը գցում էր իր ձեռքը սափորի մէջ, հանում էր մի իր. նրա տիրոջ բախտն այն էր, ինչ որ ասվում էր երգի մէջ։

Առաջին գուշակութիւնները բախտաւոր էին, ամենքը հրճվում էին։ Դա մի անկեղծ ընկերասիրութիւն էր. դա ցոյց էր տալիս թէ՝ ինչպէս այս հանդիսաւոր օրը միացրել էր ամենքին, մոռացնել տալով աղքատութիւն և հարստութիւն, նախանձ և չարակամութիւն։ Ամէն մէկն առաջարկում էր երգի այն տունը, որ իրան սիրելի էր. և եթէ այդ երգից յետոյ պատահում էր որ դուրս էր հանվում առաջարկողին պատկանող իրը, զարմանքն ու հիացմունքը պատում էին ամենքին։ Այստեղ դուրս էին հրաւիրվում սրտի բոլոր տենչանքները. մի տեղ թախիծ էր երևում, մի տեղ երկիւղած անհկալութիւն. մէկը հարցնում էր, թէ կարելի՞ է յուսալ, կամ թէ որքա՞ն դեռ պէտք է տանջվել...

Կային և կատարեալ անբախտներ։ Ահա մի կարճահասակ աղջիկ առաջ անցաւ և թելադրում է Գայիանէին իր ուզած երգը։ Թուխ ու անհրապոյր է նրա դէմքը, բայց ո՞վ գիտէ թէ ինչե՞ր կան նրա սրտում։ Կարծես նա զգում է, որ լաւ բան չի լինի իր համար, կարծես տգեղութեան դրած վճիռը վաղուց յայտնի է նրան։ Ինչ-որ ծանր յուսահատութիւն է նստած նրա աչքերի մէջ, որոնք անթարթ յառած են սափորի վրա։

Իմ հայրն ու մայրը ի՞նչ անեն,
Ճակատիս այս էր գրած...

Գայիանէն անուշ ու սրտառուչ կերպով վերջացրեց երգը։ Երեխան ձեռք է մեկնում այդ սև բախտի տիրոջը

գանելու։ Նա հանեց մի արծաթէ կոճակ… Սուտ չէր վիճակը. կարճահասակ աղջիկը խլեց իր նշանը և հեռացաւ ծառերի տակ։ Գայիանէն վերկացաւ ու մօտեցաւ նրան։

—Դու վշտացա՞ր, Նախշուն, հարցրեց նա։

—Իմ բախտն է, պատասխանեց աղջիկը մի մաղլ ձայնով։

—Բախտը Աստուած է տալիս. բայց ո՞վ գիտէ, այս սափորը այնքա՜ն իմաստուն է, որ ճիշդ հասկանայ Աստուծու գործը։

—Միայն սափորը չը գիտէ, ես ինքս էլ գիտեմ…

—Դու ոչինչ չը գիտես… Տես, ես մի վատ բան կերգեմ և իմ մատանին դուրս կը գայ… Ես այդ զգում եմ։ Լսի՛ր։

Նա նստեց իր տեղը և իսկոյն երգեց.

Վա՜յ, իմ սիրած բլբուլը
Թռչեցին խանի դուռը։

Որքա՜ն էր նա ուզում սիրտ տալ իր անմխիթար ընկերուհուն, ընտրելով իր համար մի այդպիսի դաժան վիճակ… Ամենքը սարսափեցան։

—Ի՞նչ սիրտ ունես, ի՞նչ միտք ունես, ասում էին լողները և իրանց դժգոհութիւնն էին յայտնում։

Դուրս հանվեց կապոյտ թելերով կապած մի արծաթի դրամ։ Ո՞ւմ էր պատկանում այդ սարսափելի բախտը։—Ոչ ոք չիմացաւ։ Գիւղից շատերն էին իրեր տուել, բայց իրանք չէին եկել։ Միւս օրը պիտի գային և իմանային, թէ ինչ է գուշակել վիճակը։

—Հիմա մի ամենալաւը, բայց ո՛չ ինձ համար, ասաց Գայիանէն և էլի երգեց.

Աղջիկ, մազերդ հիւսէիր,
Թուշդ երեսիս քսէիր.
Երնէիր բարձիս վրա,
Բլբուլի պէս խօսէիր։

Երեխայի ձեռքում այս անգամ երևաց մի խոշոր,

թանկագին քարի վրա փորած կնիք։ Հրաշք էր։ Գայիանէն ճանաչեց այդ նշանը, գունատվեց. և մինչդեռ միւսները հարց ու փորձ էին անում, թէ ո՞ւմն է այդ կնիքը, նա վերկացաւ, հեռացաւ։—Մէհրին նա գտաւ առուակի մօտ, նստեց նրա կողքին և ձգեց նրա թևը։ Ի՜նչ զարմանալի դէմք ունէր նա. նախ ժպտաց, բայց այդ ժպիտը վայրկենական էր, անցաւ իսկոյն և աղջկայ աչքերից երկու խոշոր արտասուք գլորվեցան։

—Ի՞նչ եղաւ, գոչեց Մէհրին և գրկեց նրան։

—Դու լսեցի՞ր, հարցրեց նա հեկեկալով։

—Այստեղ ձայն չէ հասնում… Քո վիճակն էր։

Գայիանէն գլխով դրական պատասխանի նշան արաւ և այլ ևս մի բան անգամ չուզեց արտասանել։ Իզուր դայեակը գործի էր հրաւիրում բոլոր աղաչաւոր ձևերը։ Նա շուտով հասկացաւ, որ մի բան իմանալ կարելի է միայն Գայիանէի ընկերուհիներից ու վազեց աղբիւրի մօտ։ Այդտեղ նա յայտնեց թէ ո՞ւմն է կարմիր քարի վրա փորած կնիքը, իսկ վիճակ հանողները պատմեցին թէ ինչ էր ասել սափորը։

Ուրախ և հանգիստ էր պառաւը, երբ նորից գնաց իր սանիկի մօտ։ Նա այժմ չէր վախենում այդ արտասուքներից, գիտէր որ այս անգամ վիշտն ու դժբախտութիւնը չէ արտասուք քամում… Նրա ետևից եկան մի քանի աղջիկներ, շրջապատեցին Գայիանէին, և առուակի զառիվայր ափը ներկայացնում էր մի այսպիսի տեսարան։ Գայիանէն երկու ձեռքով ծածկել էր իր դէմքը. նրա առաջ նստած էր Մէհրին և խորին ուշադրութեամբ նայում էր այդ ձեռքերին, սպասում էր թէ երբ բախտը կը դադարեցնէ իր արտասուքները. իսկ միւս աղջիկները ամեն կերպ հարկադրում էին, որ Գայիանէն բաց անէ իր դէմքը։ Գործում էին կանացի լեզուները, որոնք թաթախված էին հեգնութիւնների ամենադառն թոյնի մէջ. դրանք խայթում էին, ինչպէս վարդերի մէջ թաքնըված փոքրիկ օձերը։ Բայց իզուր։

Մելիքի աղջիկը սիրել էր այդ գիրքը։ Արդեօք ամաչում էր նա, թէ ուզում էր ամբողջ ուշադրութիւնը մի տեղ հաւաքել, որպէս զի լաւ լսէ և ըմբռնէ իր սրտի բոլոր բաբախումները։ Այդպիսի զարկեր, ջերմ ու անհանգիստ զարկեր, այսօր էին հաստատւել նրա կրծքի տակ... Առաջին անգամ...

Բայց ինչ-որ անկարող եղան անել մի խումբ սուր ու փոքրիկ խայթերը, կատարեց մի հաստ ձիաւոր, որ յանկարծ թռաւ ձորը, կարծես երկնքից ընկաւ։ Լեզուները մի ակնթարթում մոռացան խայթելը. բոլոր հեգնողները ճչալով դէս ու դէն փախան։ Մէհրին մինչև անգամ չը նայեց, որ տեսնէ թէ այդ ինչ գիշատիչ էր, որ վրա տուեց։ Խելագարի պէս նա յարձակվեց իր Գայիանէի վրա, ձգում էր նրան, քաշել, տանել էր ուզում։ Միայն այդ ժամանակ աղջիկը բաց արաւ իր դէմքը և մի կատաղի հայեացք ձգեց ձիաւորի վրա, որ մի գլուխ իրան էր նայում և լուռ ծիծաղում։

—Այսօր ամենքը կուրացել են, սառն և դժգոհ ձայնով բացականչեց Գայիանէն։—Չե՞ք տեսնում, մեր Մանասն է։

Ձիաւորը անշարժ էր, ծիծաղում էր։ Բայց և այդպէս, ոչ ոք չը վերադարձաւ։ Դատարկվել էր և Հարսնաղբիւրի գլուխը. ամենքը թաքնվել էին, միայն երեխան, որ իրեր էր հանում, մնացել էր իր տեղը նստած և պլշած այս ու այն կողմն էր նայում, չը հասկանալով թէ ինչու այսպէս խաղն ընդհատվեց։ Սափորը դրած էր նրա կողքին, դարձեալ մի հասարակ, խեղճ անօթ, թէև դեռ շրջապատված ծաղիկներով։ Նա մոռացվել էր. նրան աչք դրածները այժմ մի բան գիտէին, որ լսում էր խեղդված, աղէտալի շշուկների մէջ. «Մանասը... ծմակի մարդը»։

Նա, որին պատկանում էր այդ անունը, ձիուց ցած թռաւ։ Գետնի վրա երևան եկաւ մի փոքրիկ մարմին, որ զէնքերի մի մեծ ժողովածու էր կրում։ Մեծ սուրը

ծեծում էր նրա ձախ ազդրը. շուխայի վրա կապած հաստ ու կարմիր գօտուց կախ ընկած էին խէնջարը, վառօդամանը և մի զոյգ ատրճանակ։ Մորթէ ահագին մի փափախ ծածկում էր այդ ժիր ու դիւրաշարժ մարդու դէմքի վերին մասը, հաղորդելով այդ դէմքին մի ահարկու կերպարանք։

Կախ անելով հրացանը ձիու թամբից, փոքրիկ մարդը մի քանի անգամ էլ դէս ու դէն նայեց, կարծես չը գիտէր թէ ինչից սկսի. ապա գնաց աղբիւրի մօտ, չոքեց, ընկաւ նրա վրա, ջուր խմեց և երբ նորից կանգնեց, սկսեց խօսել, դառնալով դէպի Գայիանէն.

—Վախում են, ասաց նա.—վախում են քրդից, որ Մահմէդին է պաշտում, վախում են և Մանասից, որ կնքված մարդ է, Աւետարանոցի հանգստարանում ունի հօր, մօր գերեզմանները։ Բայց Գայիանէն հօ գիտէ թէ Վարանդայի աղջիկները չը պիտի վախեն ծմակի մարդուց։

Եւ նա դանդաղ քայլերով մօտեցաւ մէլիքի աղջկան, գլուխ տուեց նրան։ Մէհրին պատմեց թէ ինչքան նա վախեցրել էր իրան և Գայիանէին, երբ ցած էր գալիս ծմակից։ Բայց Գայիանէն շտապեց հերքել իր դայեակի խօսքերը. նա բոլորովին չէր վախեցել։

—Ես գիտեմ, ես ճանաչում եմ Մելիք-Յուսէֆի աղջկան, պատասխանեց Մանասը։—Այսօր ուրախութեան օր է, և մի՞թէ Վարանդայում նոյն իսկ Վարդավառի օրն էլ պէտք է վախել։ Չէ, ուրախ լինենք։ Այնտեղ մի երեխայ նստած է մի ամանի կողքին, որի մէջ ամեն մէկը մի նշան ունի։ Բայց յիշե՛լ ես, Գայիանէ, որ Վարանդայի ծմակներում մի Մանաս կայ։ Ի՞նչ է նրա բախտը...

—Դու նշան չունես այնտեղ, պատասխանեց Գայիանէն։—Եւ ինչի՞դ է վիճակը։ Ծմակների մէջ դու չես գտնի այն, ինչ որ գիտէ մեր սափորը։

Մանասը ծիծաղեց և ասաց.

—Այո, Մանասը հին է։ Բայց մի՞թէ այս ամանը միայն աղջիկներին է լսում։ Միթէ չէ կարող մեր տղաների բախտն էլ գուշակել։ Դուք պաշտում էք նրան, ծաղիկներով զարդարում էք, մոմեր էք վառում նրա առաջ։ Ծմակում մի սիրուն տեղ կայ, մի կատարեալ հրաշք։ Մենք աւելի մեծ պատիւներ կը տանք։ Ծառերը հասնում են երկնքին, իսկ նրանց արմատների մէջ խեղդվել ու քայքայվել է մի եկեղեցի, երևի, մի հին ճգնաւորի հանգստարան։ Այնտեղ կը գնեմ ձեր սափորը։ Եկեղեցին կտուր չունի. սեղանի վրա, այնտեղ, ուր մի ժամանակ ճգնաւորները չոքած էին, այժմ մարդահասակ խոտեր և ծաղիկներ են բուսել։ Աղբիւրը դուրս է գալիս աջ կողքից...

Ո՛չ Գայիանէն, որ հաճութեամբ լսում էր Մանասի շատախօսութիւնը, ո՛չ Մէհրին, որ այժմ հանգարտ էր և ապահով և ոչ էլ այն աղջիկները, որոնք հետզհետէ սիրտ էին առնում և մօտենում, չը հասկացան թէ ինչ օգուտ կայ այս խօսակցութիւնից։ Մէլիքի աղջիկը պատահաբար նայեց ջուխտ ծառերին և տեսաւ նրանց ետևում կանգնած երիտասարդին։ Նա նայում էր, հիացած դիտում էր աղջկայ բաց դէմքը։ Մի ակնթարթում Գայիանէն երկու մատով ձգեց կարմիր թաշկինակի ծայրը, ծածկեց իր դէմքը։ Շրջապատողները ծիծաղեցին և այդ ծիծաղը աւելի ևս շփոթութիւն պատճառեց նրան։ Իսկ զարմացած երիտասարդը այլ ևս աւելորդ համարեց ծածկվել, դուրս եկաւ և մի քանի քայլ առաջ եկաւ։

Դա Թաչէնի մէլիքի որդին էր, Ջալալը։

—Հիմա հերթը քոնն է, բէկ, ես շատ խօսեցի, ասաց Մանասը յետ ու յետ գնալով։

Բայց երիտասարդը չը կարողացաւ խօսել. նա ինքն էլ քաշվում էր այդ աղջիկներից։

—Մի՛ վախիր, բէկ, շարունակեց Մանասը. ամեն մէկը արդէն գիտէ թէ ինչ բախտ է առել երկնքը և երջանիկ է. իսկ երջանիկ մարդը չէ կարող անհոգի ու խիստ լինել...

—Եթէ այդպէս է, ասաց Ջալալը հանդարտ ու հեզ ձայնով,—թող ինձ ասեն թէ այս հողէ ամանը քանիսին է այսօր լացացրել։

—Ես միայն մէկին տեսայ, որ լաց էր լինում. և դա մէլիքի աղջիկն է, Գայիանէն։

—Սուտ է, շշնջաց Գայիանէն և բարկացած հեռացաւ։

—Կարող ես, բէկ, բոլորովին հաւատալ ծմակի մարդու աչքերին...

Մէհրին, տեսնելով թէ ինչպէս է Գայիանէն վրդովվում, կռացաւ և շշնջաց նրա ականջին.

—Նրանք քեզ խօսեցնել են ուզում... Դա նշանած տղաների համար կարգ է...

Բայց Գայիանէն պատուիրեց նրան, որ Մանասին իր մօտ կանչէ։ Երբ ծմակի մարդը մօտեցաւ, նա խիստ դժգոհութիւն յայտնեց և ասաց.

—Ի՞նչ գործ ունես աղջիկների մէջ. ինչ տղամարդի տեղ է այսօր այս ձորը...

Մանասը կարծես սպասում էր այս հարցին. ուստի իսկոյն պատասխան տուեց.

—Ամբողջ օրը ես անտառից նայում էի ձեզ. այժմ էլ այնտեղ են իմ ընկերները։ Մենք ձեզ պահպանում էինք։ Տեսայ ձեր խաղերը և յիշեցի այն ժամանակները, երբ ես էլ ջահիլ էի։ Յիշում եմ մեր ժամանակը. այսպիսի վախեր չը կային մեր երկրում, և երիտասարդները այժմեաններին նման չէին,—իւրաքանչիւրը մի-մի կաղնի ծառ։ Ամեն անգամ, երբ հարսն ու աղջիկ հաւաքվում էին մի տեղ, երիտասարդի պարտքն էր յանկարծ երևալ նրանց մէջ, խառնակութիւն, իրարանցում գցել և հեռանալ իսկոյն։ Տեսայ որ այսօր չը կայ մի այդպիսի մարդ. մոռացայ ինձ և եկայ...

—Այն էլ ո՛չ մենակ...

—Այո, գալիս էի և պատմեցի մի ուրիշին, որ խօսեց այս ձորի, այս աղբիւրի մասին. երևում էր որ

Նա էլ ձեզ մօտ գալ է ուզում. բայց ամաչկոտ էր ինչպէս նորահարս։ Առաջնորդեցի նրան...

—Բաւական է, ընդհատեց Գայիանէն նրա խօսքը. —հեռացէք այստեղից. ինչ էք այս աղջիկներին դէս ու դէն ցրվել։ Դա ամօթ է...

—Դու երբեք մի խօսք չես ասել, որ Մանասը չը կատարէ։ Բոլորովին հեռանալ, կորչել։

Եւ տեսնելով, որ աղջիկը չէ պատասխանում, նա շարունակեց.

—Հասկանում եմ։ Մութը գալիս է, իսկ ուր մութ կայ, այնտեղ պատրաստ են գայլն ու աւազակը։ Թոյլ տուր նստել այն բլրի վրա, ընկուզենու տակ։ Դեռ չենք վերջացրել։

—Ո՛չ, քիչ է մնում։

—Շարունակեցէք. մի՛ թողնէք որ սափորը իր փորում մի հատ գաղտնիք էլ պահէ։

Նա կանչեց Ջալալին և երկուսը գնացին դէպի ընկուզենին։

Բայց տօնը իսկապէս փչացել էր և զուր էին Գայիանէի յանդիմանութիւնները։ Ճիշդ է, երեխան նորից ծածկվեց կարմիր շորի տակ և շարունակեց իր պաշտօնը, ճիշդ է, մի քանի աղջիկներ դեռ սրտատրոփ սպասում էին թէ ինչ կասեն իրանց նշանները, բայց խաղը այլ ևս կենդանութիւն չունէր։ Շատերը կամաց-կամաց հեռացան, տուն գնացին, որովհետև Մանասը, ինչ էլ ասէր ինքը, ծմակի մարդ էր, լաւ զինված, ահ ու դող տարածող։ Ծիծաղ չը կար. վազվզոցը, ստախօսները դադարեցին։ Երգողները շտապում էին, երգը սառն էր։ Հոգին մեռել էր, շարունակվում էր ձևականութիւնը։

Եւ դրա գլխաւոր պատճառը դարձեալ Գայիանէն էր։ Ահա նա առանձնացել է, նստել աղբիւրի դիմաց, մի փոքրիկ լանջի վրա։ Ինչու նա այլ ևս չէ կարողանում բռնել իր սիրտը աղբիւրի գլխին, ինչու նրա ձայնը այլ ևս չէ հնչում ջուխտակ ծառերի տակ։ Այդ լաւ գի-

տէ Մէհրին, որ տեղաւորվել է նրա կողքին և գործի է դցել իր գիւթող շշուկները։ Մի աղջիկ վազեց, բերեց Գայիանէի մատանին, շտապով կոխեց այն երգը։ որից յետոյ նա դուրս էր եկել սափորից. Դա էլ մի զարմանալի երգ էր. ճիշդ, դրական պատասխան էր տալիս այն երգին, որ խաչէնցու կարմիր կոխքն էր դուրս հանել։ Բայց այս նոր վկայութիւնը այլ ևս ազդել չէ կարողանում. գիտէ մէլիքի աղջիկը, որ ուրիշ կերպ դուշակել չէր կարող սափորը։

Եւ Մէհրին է, որ ճանաչում է իր սանիկի սիրտը. նա չէ սխալվում և աւելի ոյժ է տալիս իր օրօրող շշուկներին։ Ահա նա գիւթեց. Գայիանէն իր գլուխը թեքեց նրա ուսի վրա, անշարժացաւ, լսել ու երազել է ուզում։ Պառաւը աշխարհային ճշմարտութիւններ է ներշնչում անփորձ ջահիլին։ Բաւական է. օրեր կան դեռ, բախտի քաղցրութիւնը միանգամից ճաշակել չէ կարող մարդը. դա վեր է նրա սրտի ոյժերից... Եւ հարկաւոր են օրեր, երկար տարիներ... Նրանք պիտի անցնեն հանդարտ ու անշշուկ և ծծել պիտի տան այնքան երջանկութիւն, որքան երկինքը գրել է Վարանդայի աղջկայ ճակատին։ Իսկ այժմ... այսքանն էլ բաւական է։ Թող սիրտը կանգ առնէ և սպասէ մնացածին։ Սպասողը երջանիկ է...

Լսում է Գայիանէն այդ մեղմ ու անուշ խօսքերը. դա նոյն ձայնն է, որ մանկութեան օրերում հրաշալի քուն էր բերում՝ ոսկի երազներով լի քուն։ Դիմադրել նրա հմայքին չէ կարելի. ճ անցած օրերը, կարծես, վերադառնում են, կարծես նոյն սիրուն քունը իջնում է այժմ էլ, որ քաղցրացնէ այսօրվայ օրն էլ, ոսկեզօծէ այսքան յուզմունքներն էլ...

Քուն չէ դա, բայց արթնութիւն էլ չէ։ Կիսախուփ աչքերը նկատում են, որ վիճակը վերջացաւ։ Ահա հեռանում են մնացած աղջիկներն էլ. կարծես դրանք մշուշից են շինված և հալվում են այնպէս, ինչպէս սարերի գլխին չքանում են սպիտակ քուլաները, երբ արեգակը

դուրս է գալիս մոր ծոցից։ Սափորը մնաց մենակ. Նա էլ գանգագ, շատ գանգագ կերպով հալվում է։ Անցնում են րոպէներ։ Աչքերը նորից բացվում են, տեսնել են սկսում. մէկը կամաց-կամաց հեռացնում է թմրութիւնը։ Ո՞վ է դա։

Ծառերի ետևից դուրս եկաւ մի հերարձակ աղջիկ։ Սարսափելի է նա։ Վարդավառ չը կայ նրա համար. գզգզված շորեր, չոր ու սևացած դէմք, բաց ոտներ։ Ապուշ է. նա ման չէ գալիս, այլ քարշ է ընկնում։ Նրան զարմացնում է ամեն մի առարկայ, որ երևում է նրա առաջ։

Մէհրլին լռել է, Գայիանէն սթափվում է և իր աչքերը չէ հեռացնում այդ տարօրինակ արարածից։ Ահա նա կանգ առաւ սափորի մօտ։ Զարմացած է։ Ոսկորացած ձեռքերով շօշափում է, և յանկարծ լսվում է մի մռնչոց։ Ծիծաղ է դա։ Այո, նրա նիհար շրթունքները յետ են գնացել, բացել են լայն բերանը և սպիտակ ատամները պսպղում են։ Նա յետ է քաշվում, բայց նորից մօտենում է և նորից տնտղում է իրը։ Հասկացաւ որ սափոր է...

Մի քանի աղջիկներ նոյնպէս տեսել են այդ խեղճին, նստել են մօտիկ տեղ և նայում են. զուարճութիւն է դա, որովհետև ամէնքը ժպտում են։ Իսկ աղջիկը չէ նկատում նրանց։ Նա կաթ-կաթ թափեց սափորի ջուրը, մի կողմ գցեց ծաղիկները։ Յանկարծ մի ճնշված հեծեծանք, որ աւելի ոռնոցի էր նման, դուրս թռաւ նրա կրծքից։

Երկու քայլ հեռացաւ, ընկաւ ծնկների վրա, ինչ-որ բան է որոնում. մատներով ճանկռտում է հողը և ածում է իր ծոցի մէջ։ Այժմ նա լուռ չէ. բայց արդեօք երգո՞ւմ է այդ նուաղած, խռպոտ ձայնը, թէ՞ ինչ-որ տարօրինակ ծէս է կատարում։ Վերջացնելով այդ գործն էլ, նա նորից մօտենում է աղբիւրին. մի ձեռքով ջուր է վերցնում, մօտեցնում է բերանին. և դառն հեծեծանք-

ները դուրս են թափվում այդ բերանից... Նա լաց էր լինում...

Գայիանէն վեր թռաւ տեղից։ Չէր կարելի իմանալ թէ ինչն էր նրան հարկադրողը—այդ լացը, թէ՞ այդ խեղճին նայող աղջիկների բարձրաձայն ծիծաղը, մի անողորմ ծիծաղ, որ սարսուռ տարածեց լացողի մէջ և գողացրեց նրան։ Գայիանէն վազեց, գնաց աղբիւրի մօտ։ Թշուառութիւնը մօտիկից աւելի ցաւեցրեց նրա սիրտը, իսկոյն հալածեց նրա դէմքից այս օրվայ բոլոր ուրախութեան հետքերը։

—Ո՞վ ես դու, հարցրեց նա։

Աղջիկը նրան չարժանացրեց իր պատասխանին. անշարժ կանգնած էր, և նրա մարած աչքերը ինչ-որ բան էին որոնում աղբիւրի ջրի վրա։

—Քեզ եմ ասում, խեղճ աղջիկ, ո՞վ ես, ինչո՞ւ ես այդպէս, նորից հարցրեց Գայիանէն և մատով հրեց նրա ուսը։

Խօսքերը անպատասխան մնացին, իսկ մատը հարկադրեց ապուշին դուրս գալ այդ ընդարմացած դրութիւնից. նա նայեց Գայիանէին և նրա աչքերի մէջ վառվեց կատաղութիւն։ Բայց Գայիանէն չը քաշվեց այդ հայեացքից։

—Չե՞ս լսում, նորից հարցրեց նա։

Ապուշը ցած նայեց։

—Ասա, ես կը լսեմ քեզ. ասա, գուցէ ցաւիդ ճար անենք...

Այս անգամ փոխ ու սևացած դէմքի վրա երևացին ծամածռութիւններ, որոնք արտայայտում էին կատարեալ արհամարհանք... Նա, ուրեմն, լսում էր, խուլ չէր։ Իսկ եթէ խելագար էր, այժմ գտնվում էր այն րոպէական դրութեան մէջ, երբ մթագնած խելքը ազատվում է կապանքներից և սկսում է հասկանալ։

—Դու ինձ ճանաչում ես։

Սա մի հարց էր, որ միւսների հետ առաջարկվեց

պատահաբար։ Վերջապէս... Աղջիկը ըմբռնեց այդ հարցը և գլուխը այնպէս շարժեց, որ կարելի էր հասկանալ թէ ճանաչում է։

—Բայց ինչո՞ւ չես խօսում...

Նա խուլ կերպով մռնչաց.

—Հօրի՛ր...

—Աչքդ հանե՜լ եմ։

—Դու... բախտաւոր ես։

—Դրա համար էլ ատո՞ւմ ես։

—Երկնքի կրակը բոլոր բախտաւորների վրա։

Նա շուտ յոգնեց և նոյն բութ, փայտացած դրութեան մէջ ընկաւ։ Ի՜նչպէս սարսափելի էին նրա հառաչանքները, որոնք անընդհատ դուրս էին գալիս այդ քայքայված ու խեղճ կազմուածքից։ Նա մեքենաբար վերկացաւ, գլուխը կախ հեռացաւ և ոչ ոքին էլ չը նայեց։ Աղջիկները, որոնք լուռ նայում էին այդ տեսարանին, ազատ շունչ քաշեցին։ Սկսվեց մի խուլ քրթմնջոց. ամեն մէկը իր տպաւորութիւնն էր հաղորդում ընկերուհուն։ Բայց Գայիանէն լուռ էր, մելամաղձոտ։

Անգութ հարուածը իջել էր այն ժամանակ, երբ ամեն ինչ սիրուն և գեղեցիկ էր երևում այս աշխարհում։ Անէծքը շանթահար արաւ նրան։ Բախտաւո՞ր... և մի՞թէ, ճշմարիտ, բախտը միայն օրհնութեան, միայն ժպիտների է արժանի. միթէ նրան չէ կարելի ատել և անիծել... Գայիանէն այժմ ամաչում էր... ամաչում էր այդ աղջկանից, այդ ողորմելի ցնցոտիներից և այդ ցաւագար վտիտ մարմնից, որ կրում էր իր մէջ մի սարսափելի վիշտ։— Բայց ի՞նչ էր այդ վշտի անունը։

—Նա նստեց, քրթմնջաց աղջիկներից մէկը։

Դժբախտը նստեց ջուխտակ ծառերի տակ և նայում էր նրանց տերևներին։

—Խօսում է... աւելացրեց մի ուրիշը։

Գայիանէն ձեռքով նշան արաւ որ լռեն, և ինքը սկսեց լարված ուշադրութեամբ լսել։ Տարածվեցին կո-

պիտ ձայներ։ Նա ասում էր.

—Ամօթ չը մնաց... երեսս սև է, պլոկեցին տարան... Ու մի հատ ժանիք չունէի... պատառ-պատառ կանէի...

Տիրեց մեռելային լռութիւն. միայն քամու խուլ ու թեթև սօսափիւնն էր, որ կարծես թէ պատասխանում էր անօգնական խեղճին։ Կարծես տերևներն էին նրա խօսակիցները. և երբ քամին անցաւ ու տերևները անշարժացան, նա շարունակեց.

—Ի՞նչ ես ամեն երեկոյ կանչում տերևների միջից՝ «ապանիր»... Սև հողն էլ քեզ դադար չէ տալիս... Տեսայ սպանված վարազը. լաւ էին նրա ժանիքները... Ինձ տային, մի հատն էլ բաւական է... մէկը—մեծ, սուր ու պատառող...

Վայրկեան չանցած՝ խօսքերի տեղ նրա բերանից դուրս էր թռչում սարսափելի քրքիջ։ Մի վայրկեան ևս, —և տերևները իրանց սօսափիւնով խլացրին նրա ձայնը։

Մի աղջիկ էր մօտենում Գայիանէին։ Նա քայլում էր մեծ զգուշութեամբ, ահով, աշխատում էր ձայն ու ծպուտ չը հանել։ Նա արտասանեց խորհրդաւոր, հազիւ լսելի ձայնով.

—Խեղճ... Նա միշտ խօսում է վարազի մասին. կարծես վարազի վրա էլ գժված է։

Գայիանէն նորից նշան արաւ որ լռեն։ Բայց այլ ևս ոչինչ չը լսվեց։ Աղջիկը խայթվածի պէս յանկարծ վեր թռաւ և երեսը դարձրեց դէպի սարը։ Քամին խաղում էր նրա ցնցոտիների, խճճված ու անկարգ թափված մազերի հետ. գզգզված թշուառութիւնը մի վայրկեան էլ անշարժացաւ երեկոյեան կիսամթութեան մէջ և ապա սկսեց արագ քայլերով հեռանալ...

Նրան հետևում էին աղջիկների պլշած հայեացքները։ Եւ Գայիանէն դեռ չէր կորցրել հեռացողին, երբ նրա ականջում հնչեց Մէհրիի ձայնը, որ հարցնում էր թէ երկա՞ր պիտի մի խենթ գրաւէ նրա ուշադրութիւնը։

—Նա խե՞նթ է, հարցրեց Գայիանէն, նայելով իր դայեակին։

—Չէս տեսնում։

—Դու ճանաչում ես։

Մէհրին մի քանի բառեր ծամծմեց իր բերանում, որպէս թէ պատասխանեց։ Ուղիղ խօսել չէր ուզում։ Եւ երբ Գայիանէն շատ բռնադատեց, նա փոխելով խօսքը, ասաց.

—Բոլորովին մթնեց... Այժմ խօսք չը պիտի լինի. տուն ենք գնում։

Նա ճանապարհվեց, և Գայիանէն ու միւս աղջիկները հետևեցին նրան։

Ընկուզենու տակ աւելացել էին չորս մարդիկ։ Դրանց ուղարկել էր մէլիքի կինը, որ սաստիկ անհանգիստ էր իր աղջկայ վերաբերմամբ։ Մանասը դեռ չէր վերջացրել մի ինչ-որ պատմութիւն, որի մէջ յաճախ յիշվում էր մի Սուլէյման-բէկի անունը։

—Եւ այսպէս, բէկ, Վարանդան չոքած է մի դահիճի առաջ, ասաց նա։—Աստուծու առաջ ուխտ ենք արել, որ գերեզման չը մտնենք, մինչև որ չը խմենք այդ չարագործի արիւնը։ Եւ մեր երկինքը խուլ չէ, այնտեղ նստած Աստուածը լսում է, տեսնում է։ Վա՜յ նրան, ով մեր լացով կուրախանայ... Երբ մտնում ես գիւղը, մի՛ կարծիր, Ջալալ-բէկ, թէ նա միշտ այդպէս տխուր ու որբացած նստած էր իր տեղը։ Ո՛չ. նա այժմ է միայն գլուխը դրել մի գազանի ոտի տակ... Եթէ Սուլէյման-բէկը գայլ է, մենք շներ ենք։ Շատ եմ տեսել, ինչպէս են շները պատառոտում գայլին։ Ո՛վ կարող է, թող իմ խօսքը հասցնէ այդ գազանին։ Զուր է նա կատաղում. զուր է չարչարում մարդկանց, որպէս զի մենք ձեռքից թողնենք մեր գործը։ Ասացէք նրան որ Մանասն ու իր գժերը չեն ընկճվի, եթէ նոյն իսկ մենակ իրանք մնան երկնքի տակ։

Նա վերջացրեց, հեծաւ իր ձին և ասաց.

—Այժմ գնանք. ես ձեզ կը տանեմ մինչև գիւղը։

—Ուրեմն ես աւելորդ եմ, հարցրեց Ջալալը։

—Շատ լաւ արացիր, բէկ։ Ես հաստատ գիտեմ, որ Գայիանէն քեզ հետ կրակի մէջն էլ կը գնայ։ Բարի ճանապարհ, իմ բարևները տարէք մէլիքի կնոջը...

Մտրակը շառաչեց, ձին թռաւ։ Մի ակնթարթում փոքրիկ ձիաւորը անյայտացաւ մթութեան մէջ։

—Նա էլ գնաց դէպի այն կողմը, ուր խենթ աղջիկն էր գնում, ասաց Գայիանէն իր դայեակին։

Բայց Մէհրին չը պատասխանեց։ Ամենքը ճանապարհ ընկան։ Եւ Գայիանէն մօտեցաւ իր մի ընկերուհուն։

—Մի՞թէ խենթը չէ վախենում, հարցրեց նա։

—Խենթը չէ վախենում. ուրիշներն են խենթից վախենում։

—Բայց ես չը վախեցայ, Սառա. ա՜յնպէս խեղճ աղջիկ էր. ես ամաչում էի նրանից։

—Ամաչում էիր...

—Այն խօսքերը... Նա դժբախտ է, մենք բախտաւոր։

—Դա ամօթ չէ։

—Բայց ես ամաչում էի... Հիմա էլ ամաչում եմ, որովհետև նա հիմա էլ աչքիս առաջն է։

Մէհրին մօտեցաւ և կծու կերպով ասաց.

—Դու երեխայ ես... ահա ինչու ես ամաչում։

—Ինչ որ լինի, ես ուզում եմ մի անգամ էլ տեսնել նրան։

—Եւ չես տեսնի... Նա կորած է ծմակներում։

Այլ ևս խօսք չեղաւ։ Ճանապարհը կարճ էր, մութը գնալով թանձրանում էր։ Հեռուից փայլփլեցին գիւղի ճրագները։ Ի՞նչ էր տանում մէլիքի աղջիկը։ Այլ ևս ժպիտ չը կար նրա շրթունքների վրա։

Թշուառ աղջիկը այդ երեկոյ բաց չէր թողնում նրան, տանջում էր անդադար...

Գ.

Մեր նկարագրածը 1732 թուականի Վարդավառն էր. մի թուական, որ շատ նշանաւոր էր մանաւանդ Վարանդայի Աւետարանոց գիւղի համար։

Այդ ժամանակ Ղարաբաղը, ինչպէս և համարեա ամբողջ Անդրկովկասը, գտնվում էր օսմանեան տիրապետութեան տակ։ Թիւրքերը բոլորովին նոր նուաճողներ էին Ղարաբաղի կողմերում։ Մի քանի տարի էր, որ Պարսկաստանը դարձել էր ներքին խռովութիւնների բոյն. և, օգտվելով այդ հանգամանքից, թիւրքերը գրաւել էին ամբողջ Ատրպատականը, Երևանը, Վրաստանը, մինչև Շամախի։ Պարսիկները դիմադրելու ոյժ և ժամանակ չունէին. բայց նրանց փոխարէն նուաճողների դէմ զէնք բարձրացրին լեռնցի հայերը։ Սիւնիքում Դաւիթ-բէկը և Ղարաբաղում հինգ հայ մելիքները արիւնահեղ պատերազմներ մղեցին, երկար ժամանակ յաղթող հանդիսացան, բայց չը կարողացան պահպանել իրերի նախկին դրութիւնը, այսինքն պարսից տիրապետութիւնը։

Սակայն ինչպէս էր, որ հայերը գերադասում էին պարսից տիրապետութիւնը օսմանեան տիրապետութիւնից։

Այստեղ կար մի մեծ խորհուրդ։

1699 թուականի գարնանը Սիւնիքի և Ղարաբաղի լեռներում յայտնվեց մի զարմանալի, խորհրդաւոր մարդ։ Նա ճանապարհորդում էր ծածուկ։ Հաւաքեց երկրի կիսանկախ տէրերին, հայ մելիքներին և իշխաններին ու նրանց յայտնեց իր ով լինելը։

Ճանաչեցին նրան։ Օտարական, անծանօթ մէկը չէր, այլ նոյն այս երկրից, ամենքին յայտնի իշխանական մի տանից։ Եւ նա իր անուան հետ բաց արաւ ժողովի առաջ մի փոքր, մի սուրբ ծրագիր—հայրենիքի ազատութիւնը։ Ինքը ոգևորված էր այդ մեծ գաղափարով և նրա համար կատարել էր մի երկար, դժուար ճանապարհորդութիւն։ Եւ այնպիսի պարզ, գեղեցիկ կերպով բացատրեց նա իր ծրագիրը, որ լեռնցի հայ իշխողները վառակուեցին նրա ոգևորութեամբ, միացան, սկսեցին գործել։

Խորհրդաւոր ճանապարհորդը Իսրայէլ Օրին էր։

Ուղիղ քսան տարի առաջ նա հեռացել էր այս երկրից, հեռացել էր ու անյայտացել։ Մօտիկ հարազատներն անգամ արդէն ընդ միշտ կորած էին համարում իրանց Իսրայէլին, երբ նա յանկարծ երևան եկաւ հայրենի լեռներում իբրև մի սաստիկ շտապող, կարճ ժամանակ ունեցող հիւր։

Բարեկամների և ազգականների կարօտը չէր բերել նրան այստեղ, այլ այն վիթխարի գործը, որ ամբողջովին նրա ստեղծածն էր։

Քսան տարի նա ապրել էր Եւրոպայում։ Ու պատմեց հայ մելիքներին և իշխաններին, որ այնտեղ կայ քրիստոնէութեան գաղափար, որ յանուն այդ գաղափարի ինքը դիմել է քրիստոնեայ իշխողներին ու սրանք խոստացել են իրանց զօրքերով ազատել Հայաստանը պարսկական լծից։ Նա ցոյց տուեց և այդ հեռաւոր, անծանօթ բարերարների պատկերները։ Ազատութիւնը, որ այդպէս անակնկալ կերպով բաղխում էր հայի դուռը, ոգևորեց ամենքին։ Եւ մի ամիս հազիւ անցած՝ Իսրայէլ Օրին գնում էր նորից Եւրոպա, տանելով իր հետ մելիքների լիազօրութիւնը, տանելով և նրանց պատգամաւոր Մինաս վարդապետին։

Նա գնում էր նորից բանակցութիւններ սկսելու, գործը կազմակերպելու։ Դժուարութիւնների հանդիպեց։ Անցան տարիներ, Ղարաբաղը և Սիւնիքը սպասում էին, իսկ Օրին հեռաստանից յոյսեր էր ուղարկում։ Նա բանակցութիւններ սկսեց և Պետրոս Մեծի հետ։ Ռուսաստանի այդ հռչակաւոր բարենորոգիչը առանձին համու-

թեամբ վերաբերվեց հայ պատգամաւորին և խոստացաւ նրան իր աջակցութիւնը։

Անցան էլի տարիներ, քաղաքական հանգամանքները արգելքներ էին դնում գործի առաջ և Պետրոս Մեծի խոստացած արշաւանքը ուշանում էր։ Օրին մեծ փառքով դեսպան ուղարկվեց Պարսկաստան։ Նա անցաւ Շամախու վրայով, նորից տեսնվեց հայ մելիքների հետ, նորից վառեց յոյսը նրանց մէջ։ Պարսկաստանից վերադառնալիս էլ նա դարձեալ ոգևորեց ազատութեան սպասող հայերին։ Բայց այդ անխոնջ, եռանդուն գործիչը չը հասաւ իր նպատակին։ Ճանապարհի կէսին, Աստրախանում, նա մեռաւ 1711 թւականին։

Մեռաւ Օրին, բայց չը մեռաւ նրա գործը։ Ղարաբաղի մելիքները շարունակեցին յարաբերութիւնները Պետրոսի հետ։ Կայսրի խոստումները, խրախուսանքները միշտ վառ էին պահում ազատութեան կրակը լեռներում։ Ղարաբաղը դարձաւ ապստամբութեան բոյն։ Հայերը պատրաստվում էին, անհամբեր սպասում էին թէ երբ հիւսիսի թագաւորը իր զօրքերով կը գայ իրանց օգնելու։

Հասաւ, վերջապէս, և այդ ցանկալի ժամը։

1722 թւին, ճիշդ այն ժամանակ, երբ Պարսկաստանը ներքին երկպառակութիւններից կատարեալ քայքայման էր հասել, Կասպից ծովի վրա երևացին ռուսաց նաւերը, որոնք գրաւեցին Դերբենդը։ Գալիս էին ազատարարները. ինքը, Պետրոսն էլ, եկաւ Դերբենդ։ Հայերը և վրացիները բանակ էին կազմել Գանձակի մօտ և սպասում էին ռուսներին։ Բայց Պետրոս Մեծը հարկադրված եղաւ վերադառնալ Ռուսաստան և միայն մի փոքրաթիւ բանակ թողեց Անդրկովկասում, որ հայերի ու վրացիների օգնութեամբ նուաճեց Կասպից ծովի վրա Բագուն, Գիլանը և Մազանդարանը։ Անա այդ արշաւանքին օսմանցիները պատասխանեցին գրաւելով Երևան, Գանձակ և Ղարաբաղ։ Հայերը տեսնում էին, որ իրանց փայփայած յոյսերին մեծ վտանգ էր սպառնում։ Հեշտ

էր թօթափել քայքայվող Պարսկաստանի լուծը, բայց հեշտ չէր ազատվել օսմանեան տիրապետութիւնից, որ աւելի զօրեղ էր, աւելի ծանր։ Ուստի Ղարաբաղի և Սիւնիքի լեռներում բորբոքվեց պատերազմը թիւրքերի դէմ։ Դաւիթ-բէկը մինչև վերջին շունչը փառաւոր յաղթութիւններ էր տանում։ Իսկ երբ նա մեռաւ և Սիւնիքն անցաւ օսմանցիների ձեռքը, Սարը-Մուստաֆա փաշան 40 հազար զօրքով յարձակվեց Ղարաբաղի վրա։ Ութ օր կատաղի կռիւ էր մղվում նրա և տեղացի հայերի մէջ. յաղթութիւնը հայերի կողմն էր, բայց օսմանցիներն էլ յամառ էին և աշխատում էին հասնել իրանց նպատակին։ Սկսվեց մի երկարատև մրցութիւն երկու կողմերի մէջ։ Հայերը նորից պատգամաւորութիւն ուղարկեցին Ռուսաստան. այդ ժամանակ Պետրոս Մեծը մեռած էր, իսկ նրա քաղաքական ծրագիրը արդէն մոռացութեան էր տրվում։ 1726 թւականին հայ պատգամաւորները վերադարձան Ղարաբաղ, բերելով ռուսաց արքունիքի բարեհաճութիւնը և խրախուսանքը։

Սակայն օգնութիւնը ուշանում էր։ Նա երբէք չեկաւ։ Իսկ փոքրիկ Ղարաբաղը հետզհետէ ուժասպառ էր դառնում անհաւասար հերոսական կռւի մէջ։ Թիւրքաց ահագին բանակը, վերջապէս, կոտրեց մի բուռն քաջերի յամառութիւնը և Ղարաբաղը, դրսից ոչինչ օգնութիւն չը ստանալով, գլուխ իջեցրեց օսմանեան սրի առաջ։ Սարը-Մուստաֆա փաշան բնակութիւն հաստատեց Գանձակում, իսկ իր զօրքերի մեծ մասը ցրվեց նուաճած երկրի զանազան մասերում։

Այդ յամառ կռիւների մէջ անուն հանեց մանաւանդ Վարանդայի տէրը Մելիք-Յուսէֆը։ Այս մարդը երբէք չը հաշտվեց այն մտքի հետ, թէ իր գեղեցիկ երկիրը պիտի օսմանեան սուլթանի հարկատուն լինի։

Նոյն իսկ այն ժամանակ, երբ Ղարաբաղը ճարահատեալ հնազանդութիւն յայտնեց Մուստաֆա փաշային, Վարանդայի տէրը համաձայնվեց ընդունել նոր կարգերը

միայն այն պայմանով, որ օսմանցիների իշխանութիւնը պայմանական լինի և ոչինչ հարկ չը ստացվի։ Նրա յամառութիւնը միացած էր քաջութեան հետ։ Սարը-Մուստաֆա փաշան մի կերպ վերջացրեց այդ վէճը, երբ կարողացաւ ստանալ Մէլիք-Յուսէֆինից մի այլ զիջում. վերջինս թոյլ էր տալիս, որ օսմանեան մի փոքրիկ զօրաբաժին հաստատվի Վարանդայում։ Թիւրք հրամանատարը խոհեմութիւն համարեց չը գրգռել անվեհեր իշխանին և սպասում էր աջող հանգամանքների։

Այդպէս մտածում էր և Մէլիք-Յուսէֆինը։ Նրա յամառութիւնը խիստ դատապարտում էր նրա աներորդին, Դիզակի Մէլիք-Աւանը։ Սա սոսկ քաջութիւնը բաւական չէր համարում մի երկիր կառավարելու համար. պէտք էր և խելք, հեռատեսութիւն։ Կռիւ մղել թշնամու դէմ—դա սովորական պարտք է. բայց պատերազմել թէ թշնամու և թէ հանգամանքների հետ—դա շատ դժուար, անհնարին բան է։ Մէլիք-Յուսէֆինը համաձայնվեց, և սպասում էր, ինչպէս և թիւրք փաշան, թէ ինչ կը բերեն հանգամանքները։

Վարանդայի դժբախտութիւնն էր, որ կատարվեց փաշայի սպասածը։ Մէլիք-Յուսէֆինին չէր վիճակված տեսնել թշնամու տիրապետութեան վերջը։ Այն ժամանակ, երբ սկսվում է մեր պատմութիւնը, նա մեռած էր։ Մօտ երկու տարի էր անցել այդ օրից, բայց Վարանդան դեռ լաւ յիշում էր թէ ինչ սարսափելի հարուած էր այդ մեծ կորուստը։

Եւ իրաւ, երկրի բախտը, կարծես, գնաց մէլիքի հետ սև հողի տակ։ Ամենամեծ աղէտն այն էր, որ Մէլիք-Յուսէֆինը չունէր չափահաս ժառանգ։ Նրա զաւակների մէջ անդրանիկը աղջիկ էր—Գայիանէն. իսկ տղաներից մէկը, Յովսէփը, մի թոյլ և խեղճ երեխայ էր. միւսն էր երրորդը, Շահնազարը, բայց նա դեռ շատ էր փոքր։

Ինքը, Մէլիք-Յուսէֆինը, զգում էր մահվան անկողնի մէջ թէ որքան ծանր դրութեան մէջ է թողնում Վա-

րանդան։ Այդ պատճառով նա յանձնեց իր կնոջը, Աննախաթունին, վառ պահել մէլիքական օջախը մինչև որ երեխաները կը հասնեն։ Ամենից շատ նա խօսում էր Գայիանէի մասին, որին ամենից շատ էր սիրում։ Նա պատուիրեց որ լաւ պահեն իր Գայիանէին, թոյլ չը տան որ նա մաշվի իր հօր մահվան պատճառով։ Եւ իբրև լաւ միջոց, առաջարկեց անտես չանել Խաչէնի մէլիքի ցանկութիւնը։ Վաղուց Վարանդայի և Խաչէնի մէջ տեղի ունէր խնամախօսութեան նման մի բան. բայց Մէլիք-Յուսէֆինը առանձին ուշադրութիւն չէր դարձնում այդ միջնորդութիւնների, թախանձանքների վրա. նա դեռ ուզում էր սպասել, ուզում էր տեսնել թէ ինչպիսի տղամարդ կը դառնայ Ջալալը։ Նա կամենում էր իր սիրելի աղջիկը տալ մի այնպիսի տղամարդի, որը ամեն կողմից արժանի լինի այդ հրեշտակին և այն տանը, ուր նա էր մեծացել։

Այժմ մեռնողի առաջ կար մի այլ մեծ հարց։ Վարանդան առժամանակ որբ ու անտէր էր մնում, մինչդեռ կար ահագին գործ—թիւրքաց լուծը։ Ընդհարումը սպասվում էր ամեն տարի։ Ի՞նչ վախճան կունենար նա—Աստուած միայն գիտէր։ Բայց Վարանդան եթէ չը կարողանար այդ գործի մէջ մեծ դեր կատարել, գոնէ չը պիտի յետ մնար իր հարևան երկրներից. դա Մէլիք-Յուսէֆինի հաստատ ցանկութիւնն էր։ Պէտք էր, ուրեմն, ոյժ տալ նրան. և այդ պատճառով պէտք էր նրան կապել հարևան մէլիքութիւնների հետ։ Հարաւի կողմից Վարանդան արդէն կապված էր Դիզակի հետ. Դիզակի մէլիքի քոյրը Մէլիք-Յուսէֆինի կինն էր։ Հիւսիսից Վարանդան Խաչէնի սահմանակիցն էր. պէտք էր կապ հաստատել Խաչէնի մէլիքի հետ։ Եւ ահա այդ կապը պիտի լինէր Գայիանէն՝ դառնալով Խաչէնի հարս։

Երկար ժամանակ Մէլիք-Յուսէֆինը քննել ու կշռել էր այդ հանգամանքը և հասաւ այն եզրակացութեան, որ իր հայրական սիրտը Գայիանէի ապագայ բախտի դէմ որ և է յանցանք չէր գործում, ընդունելով որ Խաչէնցի

երիտասարդը դառնայ իր տան փեսան։ Գայիանէն անկասկած արժանի էր աւելի լաւ փեսայի. բայց շատ խըստապահանջ լինել այսպիսի հանգամանքներում անկարելի էր. հարկաւոր էր և քիչ զոհողութիւն։ Չէ՞ որ Վարանդան իրաւունք ունէր սպասելու, որ իր աղջիկը իր սեփական բախտից մի մասը զոհէ իր հայրենիքի օգտին։

Մէլիքը այդ բոլոր մտքերը յայտնեց իր կնոջը, համոզեց, որ ինքը միայն այդքանն է կարողանում գտնել իր երկրի և իր տան երջանկութեան համար։ Վերջը աւելացրեց.

—Բայց ինչ-որ էլ լինի, սովորեցրու ամենքին չը մոռանալ մեր օջախը։ Ամեն ինչ Աստուծոյ կամքովն է կատարվում. բայց Աստուծոյ կամքն է և այն, որ չը պէտք է քնել, չը պէտք է խեղճ մնալ։ Լաւ մահը վատ կեանքից սիրուն է. արդար, բայց խիստ ու անողոք պէտք է լինել, ապրել ժողովրդի հետ և ժողովրդի համար։

Մի քանի օրից յետոյ այդ կրակոտ, յանդուգն իշխողը գնում էր գերեզման...

Դա առաջին հարուածն էր, որին խիստ հետևեց երկրորդը, նոյնպէս սարսափելին։ Սարը-Մուստաֆա փաշան ազատ շունչ քաշեց։

Այլ ևս հարկաւոր չէր Վարանդայի վերաբերմամբ հետևել կեղծաւոր բարեհաճութեան քաղաքականութեանը, որի նպատակն էր չը գրգռել անհնազանդ գաղանին։ Փաշան իր մտքերի վրա համրում էր թէ որքան օգուտներ է տալիս այդ մահը։ Ամենից մեծը, ի հարկէ, այն էր որ Ղարաբաղի հինգ մէլիքութիւնների սերտ պաշտպանողական շղթան պատռվեց. Վարանդան մի բաց դուռն էր, որով կարելի էր հեշտ ներս մտնել և պառակտել, բաժան-բաժան անել երկրի ոյժերը, զրկել նրանց համախմբվելու կարողութիւնից։ Դուռը բաց էր, և փաշան շտապեց ներս մտնել, քանի յարմար ժամանակն էր։ Վարանդայում աւելացան օսմանեան զօրաբաժինները. նըրանք սկսեցին հարկ հաւաքել։

Դիմադրութեան ոչ մի նշան չէր երևում։ Բայց փաշան չէր հաւատում այդ հնազանդութեան. զգուշութիւնը հարկադրում էր նրան ենթադրել թէ պատրաստվում է մի ապստամբութիւն։ Առաջին պայմանն էր՝ մի երկաթէ ձեռք ուղարկել այնտեղ, մի ձեռք, որ կարողանար ճնշել, խեղդել ամեն մի ապստամբական միտք։

Այդպիսի մի մարդ կար նրա բանակում և կոչվում էր Սիւլէյման-բէկ։ Փաշան նրան յանձնեց Վարանդայի կառավարութիւնը։ Բէկը մի զօրաբաժնի գլուխն անցած՝ մեծ հանդէսով մտաւ Վարանդա և բնակութիւն հաստատեց Աւետարանոց գիւղում, ուղիղ Մէլիք-Յուսէփի տան դիմաց։

Բայց յաղթողների բոլոր այդ ցոյցերը յուզմունք չառաջացրին։ Ժողովուրդը անտարբեր էր, արդէն հաշտվել էր նոր դրութեան հետ։ Նա տեսնում էր որ ժամանակները փոխվեցին։ Բարձրից, մէլիքների տներից, շարժում չէ սկսվում, իսկ թէ ինչպէս եղաւ որ այնքան յամառ դիմադրութիւնից յետոյ Ղարաբաղը յանկարծ քնեց ու համաձայնութիւն տուեց,—դա մի հանելուկ էր, որը ոչ ոք չէր էլ փորձում լուծել։ Եւ մինչդեռ դուրսը այդպէս հանդարտ էր ու անշշուկ, ահա ինչ տեղի ունեցաւ Աւետարանոցի ապարանքում։

Աննա-խաթունը դեռ արտասունք էր թափում Մէլիք-Յուսէփի դատարկ մնացած սենեակում, երբ լուր հասաւ թէ թիւրքաց մի մեծ զօրաբաժին է գալիս Գանձակից և ուղղակի դիմում է դէպի Աւետարանոց։ Սարսափելի վշտի մէջ մէլիքի այրին մի հատ մխիթարութիւն էր գտնում—վառ պահել հանգուցեալի յիշատակը, սրբութեամբ կատարել նրա վերջին կտակը։ Անտանելի էր իրականութիւնը սգի մէջ թաղված այրու համար. նա կը խեղդվէր, եթէ չը հասկանար որ ինքը պիտի շարունակէ մեռածի գործը։ Սիրտը շրջապատող սևերի մէջ գտել էր մի հաւատ, որին երկրպագում էր մոլեռանդութեամբ. Նա սիրում էր ընդունել, որ գերեզմանը Մէլիք-Յուսէփ-

նի համար լոկ մի կայարան էր, ուր նա պիտի կերպարանափոխվէր։ Այդտեղից նա անցել է մի աշխարհ, որ շատ մօտ է Վարանդային, և ահա այդ աշխարհից նայում է, դիտում թէ ինչպէս են կատարվում իր խրատները։ Աննա-խաթունը սրտով տեսնում էր նրան, զգում էր որ նա երբէք, նոյն իսկ մի ժամ էլ աչքաթող չէ անում իր տունը, իր երկիրը. ուստի տանջւում էր իրան որ կարողանայ ճշգութեամբ կատարել նրա ասածները։ Այդպէս միայն կարելի էր գրաւել թանկագին մեռելի սիրտը և կապել նրան այս տան հետ։

Եւ ահա չարագուշակ լուր—գալիս են Թիւրքերը։ Մէլիքի այրին մոռացաւ իր արտասունքները, իսկոյն մարդ ուղարկեց իր եղբօր ետևից, իսկ ինքը մի ամբողջ գիշեր կեղեքում էր իր ուղեղը այն հրային հարցով թէ ինչ պէտք է անել։ Որքան և սրտոտ լինէր Դիզակի մէլիքի քոյրը, բայց իբրև կին մարդ՝ կռւի գործերի մասին հասկացողութիւն չունէր։ Եւ երբ եկաւ Մէլիք-Աւանը, տանջված, գունատված քոյրը վազեց նրա առաջ, մի ակնթարթում պատմեց թէ իրողութիւնը և թէ իրան տանջող մտքերը։

Դիզակի տէրը սառնասիրտ, ծանր մտածող մարդ էր։ Բայց այս անգամ իր քրոջ աչքին անհոգի և անգութ մի մարդ երևաց, երբ հանդիստ լսեց այդ խօսքերը և իր դէմքի վրա ոչինչ փոփոխութիւն չը ցոյց տուեց։ Աննա-խաթունը վշտի, արտասունքների լեզուով էր խօսում. Վարանդան անուանեց որբերի երկիր։ Սգաւորը ուզում է, որ ամբողջ աշխարհը տեղից վեր կենայ և միայն սգաւորի ցաւը ողբայ։ Բայց Մէլիք-Աւանը ոչ զարմացաւ, ոչ վիշտ յայտնեց, այլ բոլորովին պարզ և անխռով ձայնով պատասխանեց.

—Դա շատ բնական է... Անխելք կը լինէր Մուստաֆա-փաշան, եթէ ձեռքից թողնէր այս յարմար միջոցը։

—Աւա՜ն, հառաչեց քոյրը։

Մէլիքը նորից կրկնեց իր ասածները։

—Ինչու չես ասում ամենքին որ գնան, ջուրը թափվեն։

—Թող թափվեն... Ես ոչ ոքի ձեռքից չեմ բռնի։

Այդ պատասխանը յուսահատական էր այրու համար և նա այլ ևս ասելու խօսք չը գտաւ։ Այն ժամանակ Մէլիք-Աւանը շարունակեց.

—Լացը, արտասունքը ոչինչ չեն շինի... Ուզում ես որ քեզ չուտեն, պիտի խելօք լինես. իսկ խելօք կը լինես միայն այն ժամանակ, երբ կը հասկանաս թէ ինչ է թշնամին։

Նա բացատրեց որ ամբողջ Ղարաբաղը ահագին կորուստ ունեցաւ։ Ոչինչ անել չէ կարելի։ Թշնամին եկել է և պիտի գայ, ուրիշ կերպ չէ կարող լինել։

—Կարո՞ղ ես կանգնեցնել հեղեղը, որ գալիս է սարից և որի առաջ կանգնեցրած պատ չը կայ։ Մեր պատը պատռվել է, և մենք ոչինչ չենք կարող անել։

—Բայց ինչ կը լինի մեր օրը։

—Չը գիտեմ, գուցէ և շատ վատ։ Պէտք է նորից պատ շինել։ Թշնամու դէմ կռւում են դրսում. այդտեղ կրակ են կտրում, մեռնում են որ չը թողնեն թշնամուն մօտենալ տանը։ Բայց ինչ կարելի է անել, երբ նա արդէն մտել է տուն և նստել է օջախի կողքին։

Եւ նա բոլորովին հերքեց դիմադրելու միտքը։ Առանց ցաւակցութեան, առանց խղճահարվելու ասաց որ ժողովուրդը պիտի տանջվի։ Ուրիշ ճար չը կայ, ամեն մէկը պիտի հասկանայ որ վատ փորձը աւելի աղէտալի կը լինի, որ մեծ զգուշութիւն է հարկաւոր։ Օրը օրին նման չէ. լինում է փոթորկալից օր, լինում է և պարզ ու գեղեցիկ օր։ Պէտք է սպասել որ մեզ համար էլ կը գայ լաւ օր. վաղ կը լինի դա թէ ուշ,—միայն Աստուած գիտէ։

Եւ երբ նա հեռացաւ Աւետարանոցից, Մէլիքի կինը զգաց որ ինքը և իր որբացած տունը բոլորովին ճզա-

կտուր են դարձած, ուժասպառ են և անօգնական։ Այո, թեթև բան չէր Մելիք-Յուսէֆնի ժառանգութիւնը…

Օրեր, շաբաթներ անցան։ Երկնքի տակ տեղի ունեցան շատ փոփոխութիւններ։ Փորձանքների ժամանակն էր. նրանք լոյս էին ընկնում ամեն օր և ոչ ոք չը գիտէր թէ ինչ կը լինի միւս օրը։ Մելիքի տունն էլ շատ հարուածներ ստացաւ. նրան արհամարհեցին, անպատուեցին։ Բայց մելիքի կինը, այնու ամենայնիւ, ջուրն ընկնել և խեղդվել չուզեց, ինչպէս ուզում էր դժբախտութեան առաջին րոպէներում։ Օր օրի վրա նա սովորեց գնալ ճակատագրի հետ, տեսնել և լռել. սովորեց ընդունել հարուածները և պահել նրանց իր սրտի մէջ…

Դ

Եւ սովորեցնողը Սիւլէյման-բէկն էր։

Մուստաֆա փաշայի բանակում դա յայտնի էր իբրև ճշմարիտ, կրակոտ մուսլիման և իբրև վերին աստիճանի աջողակ կաւառ։ Նա կրում էր իր մէջ մի հաւատափոխի բոլոր արժանաւորութիւնները։ Սիրիայի ծովափնեայ մի գիւղում էին մնացել նրա ծնողները, որոնք քրիստոնեաներ էին։ Անչափահաս պատանի էր, երբ խլվեց հայրական տանից, որովհետև գիւղը եկած մի թիւրք բէյ հէնց որ տեսաւ նրան, իսկոյն վճռեց որ մեղք է, եթէ շուն գեաւուրները այսպիսի աղայքն գեաւուր պահեն։

Փոքրահասակ գերին մեծացաւ Ստամբուլի մի նեղ փողոցում ապրող իւլէմայի տանը և այնուհետև ուղարկվեց զօրանոց՝ մարգարէի փոխանորդին և Ալլահի շուքին ծառայելու համար։ Նա յանդուգն, անվախ մի զինուոր էր, ինչպէս սարսափելի ենիչէրիները, մանկութիւնից խնամուած այդ քրիստոնեաները։ Բայց Սիւլէյմանը առանց ձիու ապրել չէր կարող, ուստի մտաւ հեծելազօրքի մէջ։ Առաջին տարին ծագեց ենիչէրիների սովորական ապստամբութիւններից մէկը. նա միացաւ

ապստամբներին և գտնվում էր առաջին շարքերում, որոնք խորտակեցին սուլթանի պալատի դռները և պահանջեցին որ իսկոյն իրանց յանձնվի մեծ վեզիրի գլուխը։ Այդ պահանջը կատարվեց, բայց ապստամբութեան գլխաւորները դահիճի ձեռքը մատնվեցին։ Դրանց մէջ էր և Սիւլէյմանը. այնքան յանդուգն էր նա, որ նոյն իսկ մտել էր սուլթանի կանանոցը, ուր և կալանաւորվել էր։ Բայց այդ կատաղի գլուխը չը կտրվեց. ծերունի իւլէման, որ չէր մոռացել իր հոգեզաւակին, բախշիշով ազատեց նրան և փախցրեց մայրաքաղաքից։

Մի քանի տարի նա թագնվեց Ալբանիայի լեռներում, ուր մի մեծ աւազակային խմբի անդամ էր. ապա անցաւ յունական կղզիները, բայց այդտեղ էլ նրա արկածախնդիր հոգին բաւականութիւն չը ստացաւ։ Նա գնաց Եգիպտոս, այնտեղից անցաւ Դամասկոս և նորից մտաւ զօրքերի շարքը։

Կարճ միջոցում լաւ անուն հանեց Սիրիայի անապատներում և Քրդստանի լեռներում կատարած արշաւանքների ժամանակ։ Պատմութիւնների առարկայ դարձան նրա արկածները, քաջագործութիւնները, մանաւանդ այն անգթութիւնը, որ նա ցոյց էր տալիս թշնամիներին կոտորելու ժամանակ։ Նա ստացաւ հարիւրապետի աստիճան և ուղարկվեց Բէյրութ։ Այդտեղ, իր հայրենի երկրում, նա ցոյց տուեց իր նախկին ազգակիցներին, քրիստոնեայ սիրիացիներին, թէ ինչ բան է իսլամացած քրիստոնեան։ Տանջվողները այն աստիճան սաստիկ հառաչանքներ արձակեցին, որ Սիւլէյման-բէկը յետ կանչվեց։ Այժմ սկսվել էին պարսկական պատերազմները՝ բաց անելով նրա արկածախնդրութիւնների համար լայն ասպարէզ։ Յաղթական զօրքերի հետ նա հասաւ Ատրպատական, ուր Մուստաֆա փաշան ճանկեց նրան և պահեց իր մօտ։

Ահա թէ ինչ անցեալ ունէր այն մարդը, որին յանձնված էր Վարանդան։

Իր նոր պաշտօնը նա սկսեց շատ բարեյաջող հանգամանքների մէջ։ Դեռ չէր տեսել իրան յանձնած սիրուն երկրի բոլոր կողմերը, երբ տեղի ունեցան մի քանի դէպքեր. կարծես դրանց սարքողները այն հրեշտակներն էին, որոնց երկրպագում էր բէկը և որոնց հովանաւորութիւնն էր խնդրում իր աղօթքների մէջ...

Սիւնիքի սարերում թափառում էր գիլանցի քրդերի սիւննի ցեղը, որի սիրած արհեստը, ի հարկէ, աւազակութիւնն էր։ Թիւրք-պարսկական պատերազմների ժամանակ առաջ էր քաշվել իսլամական ուղղափառութեան հարցը. կռւում էին ոչ միայն երկու ազգեր, այլ և մահմետական երկու աղանդներ—սիւննի և շիա։ Յաղթանակը սիւննիներին էր պատկանում. և գիլանցիները, որոնք պարսից տիրապետութեան ժամանակ բաւականանում էին աւազակութեան համեստ չափերով, այժմ, օսմանեան տիրապետութիւնը երկրի ամեն կողմերում հաստատվելուց յետոյ, երես առան։ Նրանք այս անգամ էլ մեծ քանակութեամբ յարձակվեցին Վարանդայի արեւմտեան մասի հայ գիւղերի վրա և ասպատակեցին։

Վարանդան վաղուց սովորել էր այդ բռնութիւններին. նրա արեւելեան մասը Արաքսի հովտում ապրող թափառականների սահմանակից էր. այդտեղ էլ անպակաս էին յանկարծակի աւարառութիւնները։ Մէլիքները չը կարողացան արմատախիլ անել ժողովրդական այդ մեծ ցաւը. միակ միջոցը, որ գործադրում էին ասպատակների դէմ, անձնապաշտպանութիւնն էր։ «Ակն ընդ ական» —ահա այն օրէնքը, որ միակ հասկանալին էր վայրենութեան, բռնութիւնների այս աշխարհում։

Եւ երկար ժամանակ այդ օրէնքը այնպէս արմատացել էր ժողովրդի մէջ, որ երբ տեղի էր ունենում որ և է ասպատակութիւն, իսկոյն գիւղերը ինքնաբերաբար, չը սպասելով հրաւէրների, ձիաւոր և հետեւակ խմբեր էին հանում իրանց միջից, ուղարկում էին ասպատակների ետեւից, որպէս զի պատժեն նրանց և յետ խլեն կողոպուտը։

Այս անգամ գիլանցիների յանդգնութիւնը անօրինակ էր։ Քիչ էր մնում, որ նրանք հասնէին Աւետարանոցի սահմաններին։ Եւ այս անգամ հայերն էլ սովորականից շատ էին գրգռված։ Ասպատակութեան լուրի հետ միաժամանակ Աւետարանոց հասաւ և այն լուրը, որ Մէլիքենց Մանասը բազմաթիւ գիւղացիների գլուխ անցած՝ թռել է ասպատակների ետեւից։ Սիւլէյման-բէկն էլ իսկոյն թռաւ հայերի ետեւից, առնելով իր հետ ձիաւորների մի խումբ, որը ինքն անձամբ կազմել էր Գանձակի բանակում գտնվող քրդերից, գէյբէկներից և չէրքէզներից։ Դա այն խումբն էր, որ հէնց առաջին օրից ահ էր տարածել Աւետարանոցի վրա. սարսափելի էր մանաւանդ այն, որ Սիւլէյման-բէկը այդ բաշի-բօզուկների կամքին չէր դիպչում և պահպանում էր նրանց ինչպէս իր աջ թևը։

Մի օր անցած՝ Վարանդայի լեռներում դանդաղ կերպով սկսեց տարածվել մի անսովոր պատմութիւն։ Սիւլէյման-բէկը հրամայել էր իր ձիաւորներին յարձակվել հայերի վրա, որոնք վերադառնում էին արշաւանքից՝ յետ խլած աւարանքների հետ։ Հայերը շշկլվեցին, երբ տեսան որ երկրի կառավարիչը ասպատակների կողմն է, և փախան։ Բայց մի փոքրիկ խումբ Մէլիքենց Մանասի առաջնորդութեամբ, զատվեց փախչողներից և ընդհարվեց բէկի մարդկանց հետ։ Բախումը շատ սաստիկ էր։ Բայց վերջը երկու կողմերն էլ, ծանր կորուստ կրելով, յետ քաշվեցին։ Բէկի մարդկանցից սպանվել և վիրաւորվել էին տասն և հինգ մարդ։ Կողոպուտի մեծ մասը դարձեալ մնաց գիլանցիների ձեռքում։

Բէկը գժգոհ վերադարձաւ Աւետարանոց։ Այդտեղ կանչեց գիւղի ծերունիներին, կայծ-կրակ թափեց նրանց գլխին և պահանջեց որ գիւղը իրան յանձնէ Մանասին ու նրա խումբը։ Եղելութիւնը նա ձեւակերպեց այսպէս. Վարանդան ապստամբվում է փադիշահի դէմ, համարձակվում է սպանել նրա զինուորներին, ուստի պի-

տի կրէ իր արժանի պատիժը։ Այդ գործի մէջ ամենանշանաւոր հանգամանքն այն էր, որ Մանասը երկար տարիներ ապրել էր Մէլիք-Յուսէֆի տանը, այդ տան անդամներից մէկն էր դառել, և հէնց այդ պատճառով էլ կոչվում էր Մէլիքենց Մանաս։ Նշանակում էր, որ մէլիքի տունն է ապստամբութեան գլուխ կանգնել։

Գիւղի տանուտէրը բէկի կողմից գնաց Աննա-խաթունի մօտ և պահանջեց որ «աւազակը»—այդպէս էր նա անուանում Մանասին—յանձնվի բէկին. հակառակ դէպքում... Մնացածը չէր ասել բէկը, բայց աւելացրել էր, որ ինքը գիտէ թէ ինչ կանէ հակառակ դէպքում։

Մէլիքի այրին դեռ չէր կարողացել մի բան հասկանալ, դեռ դէպքերը նրան այս վճռից այն վճռին էին տանում։ Եւ յանկարծ—նրա ամբողջ տունը դէմ առ դէմ կանգնած էր աղէտի դիմաց։ Առաջին միտքը, որ շարժվեց նրա գլխում տխուր պատգամը լսելուց յետոյ, պաշտպանվելն էր, պինդ ամրանալը։

Զգուշութիւններ ձեռք առնվեցին. շրջապարիսպը ամուր էր, պէտք էր հսկել, պինդ կողպել ամեն ծակ ու ծուկ։ Բայց դա, ի հարկէ, մի թշուառ մխիթարութիւն էր. որը թաքնվում էր մի բարակ տերևի ետևում, բայց մի՞թէ որսորդն էլ այնքան խեղճ էր, որ կանգնէր այս արգելքի առաջ։ Երկար կը լինէր Աննա-խաթունի տանջանքը, եթէ նրան անծանօթ մնար մի զգացմունք. դա բոլոր սրտերի բնազդն է, որ սովորեցնում է մեղմացնել բռնութիւնը նրա սիրած անբարոյական միջոցներով։ Եւ մէլիքի կինը—ո՛րտեղից որտեղ—փաթաթվեց այդ միջոցին մի եռանդով, որ միայն զոհերին է յատուկ։ Նա ինքն էլ մարդ ուղարկեց բէկի մօտ, հրաժարվեց Մանասից, ասաց որ ինքը չէ էլ ուզում ճանաչել այդ աւազակին. իրան բէկին է մնում բռնել աւազակին, խաղաղացնել երկիրը։ Իսկ մէլիքի տունը խորասուզված է սուգերի մէջ, անպաշտպան է, չը գիտէ թէ ինչ է կատարվում դրսում։ Նրա համար բաւական են իր սեփական ցաւերը։

Մնացածը լրացրեց կեղծիքը։ Կեղծիք—դա ծանր ու անտանելի ցաւ է շիտակ և անարատ բնաւորութիւնների համար։ Բայց բռնութիւնը և նրա զոհերը չէին ապրի միմեանց կողքին, եթէ երկուստեք չիմանային խաբել միմեանց։ Շինծու բարեացակամութիւն, ծիծաղ՝ իբրև դիմակ արտասունքները ծածկելու համար—այդպէս են նրանք հաշտվում միմեանց հետ։ Մէլիքի այրին գիտէր, որ գերեզմանի խորքից իրան է նայում մի քաջ, յանդուգն մարդ։ Բայց ի՞նչ արած։ Ուժը յաղթում է, կոտրում է։

Մի քանի օրվայ մէջ այրին խեղդեց իր սիրտը և սկսեց նոյն իսկ ընծաներով շահել բորբոքված մուսլիմանի սիրտը։ Գոնէ այս տեսակ գործերով նա ցոյց էր տալիս, որ մէլիքի տունը երբէք ընդդէմ չէ որ ամբողջ այս աշխարհը փադիշահին պատկանէ...

Մէլիք-Աւանը կատարեալ հաւանութիւն տուեց իր քրոջ արածներին։ Նա ինքն էլ մէջ ընկաւ, հանգստացրեց բէկին, և ապա լուրջ կերպով ասաց.

—Այսուհետև դժուար չէ. դու, Աննա, սովորում ես...

Իսկ դէպքերը շարունակում էին իրանց աղէտալի ընթացքը։ Շուտով Ատրպատականից լուր եկաւ, որ Պարսկաստանում էլ յայտնվել է մի նշանաւոր աւազակ, որ երևելի քաջագործութիւններ է անում։ Դա Նադիրն էր, որին ապագայում վիճակված էր նստել Իրանի գահի վրա։ Բայց այժմ այդ անունը—Նադիր—մի դրօշակ էր, որի շուրջը խմբվում էին Պարսկաստանի բոլոր պատերազմող ույժերը։

Նադիրը ոչ միայն կողոպտում էր, այլ և մեծ աջողութեամբ կանոնաւոր կռիւ էր մղում թիւրք զօրքերի հետ։ Մուստաֆա փաշան, հաղորդելով այս տեղեկութիւնը Սուլէյման-բէկին, յանձնարարում էր նրան զգոյշ լինել, մանաւանդ աչքից չը թողնել Դիզակն ու Վարանդան։ «Երբէք չը պիտի մոռանաս—գրում էր փաշան—որ գեաւուրների համակրութիւնը անիծված շիաների կողմն

է, մենք այդ շների համար ժամանակաւոր տէրեր ենք։ Վարանդան ու Դիզակը այնքան մօտ են Արաքսին, որ հեշտութեամբ կարող են ձեռք մեկնել պարսիկ-աւազակներին»։

Դրանք խօսքեր էին, որոնք աւելի կրակեցին Վարանդայի կառավարչին։ Բայց փաշայից աւելի՝ բէկին դրդում էր Մանասը, որ հաստատուել էր ծմակներում և այլ ևս չէր ուզում վերադառնալ իր խաղաղ պարապմունքներին։ Նադիրի և Մանասի աւազակութիւնների մէջ Սուլէյման-բէկը գտնում էր՝ եթէ ոչ ուղղակի կապ, գոնէ նմանութիւն։

Այստեղ էլ մի բուռն հայերն էին ~~[illegible]~~ ջարդում թիւրքերին, որովհետև կատարելապէս անմատչելի էին Քիրսի լեռնային կիրճերում և մութ անտառներում։ Նրանք չէին փախչում, չէին թաքնվում, այլ ամենայանդուգն կռիւներ էին վարում, այնպէս որ Սուլէյման-բէկը մի քանի անգամ ջարդված տեսաւ այն զօրաբաժինները, որոնց ինքն էր ուղարկում աւազակների դէմ։

Իսկ մի անգամ ինքը անձամբ տարաւ զինուորներին։ Նա նոր չը պիտի սովորէր յանդուգն արշաւանքների։ Զինուորները մագլցում էին սեպացած ժայռերի վրա, իջնում էին մութ անդունդները։ Բայց և այդպէս, ոչինչ աջողութիւն։ Գլխիկոր վերադարձաւ Աւետարանոց։

Այդ օրը համբերութեան բաժակը բոլորովին լցվել էր. բէկը թողեց լեռներն ու ժայռերը և իր ամբողջ կատաղութիւնը դարձրեց Վարանդայի ժողովրդի դէմ։ Անմեղ մարդիկ չը կային այդ երկրում. ամենքը մեղաւոր էին ոչ միայն այն պատճառով, որ այդպիսի յանդուգն աւազակներ են հանում իրանց միջից, այլ և այն պատճառով, որ նրանցն էր այս գեղեցիկ, առատ աշխարհը։

Ամենից առաջ հալածանքների ենթարկվեցին Մանասի ընկերակիցների ծնողներն ու մօտիկ ազգականները. բայց շուտով նոյն պատուհասները ճաշակեցին և այնպիսիները, որոնք չէին էլ ճանաչում աւազակներին։

Ամեն տեղ տարածվեց այրող կրակը. չը մնաց այնպիսի մի խուլ անկիւն, որ չը զգար մորմոք։ Բէկը թռչում էր գիւղից գիւղ, որպէս զի ապշեցնէ ամենքին իր անարկու ոյժով։ Օսմանեան զինուորը դարձաւ երկրի լիազօր տէրը. ոչ ոք չէր համարձակվում գանգատ բարձրացնել, որովհետև գանգատվել առանց վկայի, նշանակում էր վիզը գցել օղակի մէջ, իսկ մուսիլմանի դէմ վկայել կարող էր միմիայն մուսիլմանը։

Կարծես բաւական չէին օսմանեան զինուորները, և ահա նրանց գործին մասնակցելու համար Սիւնեաց երկրից հրաւիրվեցին գիլանցի քրդերը։ Նրանցից կազմվել էին ձիաւոր խմբեր, որոնք որպէս թէ ծառայում էին փադիշահին։ Այդ վայրենիները երևում էին ամեն տեղ. մարախի պէս տարածվել էին գիւղերում, ծծում էին բնակիչներին։ Առատ աւարի լուրը քաշում, բերում էր նոր և նոր խմբեր, որոնք փոխարինում էին կշտացածներին։

Բայց տնտեսական հարստահարութիւնը դեռ թշուառութեան ծայրը չէ. մարդը սովորում է ապրել մուրացիկի նման և շատ գոհ է լինում, եթէ գոնէ այդպէս կարողանայ հանգստութիւն գտնել։ Այդ երջանկութիւնից էլ զրկված էր Վարանդան։ Նրա երկնքի տակ յաճախ լսվում էին հեծեծանքներ. դրանք դուրս էին գալիս անպատուած կանանց և աղջիկների կրծքից։

Ոչինչ չէր մնում. կրօն, եկեղեցի, ընտանեկան պատիւ,—ամեն ինչ անարգված էր, ոտի տակ տուած։ Այդպէս էր ուզում Սուլէյման-բէկը, այդքանը հարկաւոր էր նրան որ ոչնչացնէ այդ հարուստ երկրի նիւթական անկախութիւնը, կտրէ նրա հպարտ մէջքը և պատրաստէ ստրուկների մի միջավայր, ուր անհնազանդութեան, հակառակութեան ամեն մի միտք պիտի ոչնչանար։ Եւ նա, կարծես, հասնում էր այդ նպատակին։ Տարի չանցած՝ Վարանդան անապատի տեսք էր ստացել։ Գիւղերը աննկատելի կերպով դատարկվում էին. մարդիկ փախչում էին այդ դժոխքից։

Դրանք թոյլերն էին և շուտ յուսահատվողները։ Մընում էր ժողովրդի այն մասը, որ յօժար է տանջվել իր քաղցր հողի վրա։ Նա նստած էր և զարմանալի օրինակներ էր ցոյց տալիս։ Նա դիմանում էր. ամեն ինչ տեսնում էր, բայց գթութիւն հայցել, աղալ տանջողի ոտների տակ չը գիտէր։ Լեռնցին պահվել էր այդ տեսակ մարդկանց մէջ։ Սուլէյման-բէկը կարծում էր թէ երկաթի ձեռքերի մէջ մըգլվող ժողովուրդը վերջ ի վերջոյ կը յուսահատվի և կը գնայ սարերը, ինքն իր ձեռքով կը բռնէ ավազակներին. նա այդպէս էլ պահանջում էր, խոստանալով պարգևներ, հովանաւորութիւն։

Ոչ ոք, սակայն, չը շարժվեց իր տեղից։ Ընդհակառակն, ժողովուրդը իր տառապանքների մէջ մխիթարութիւն էր գտնում, երբ մի-մի լսում էր թէ ինչպէս Մանասը պատժում է երկրի արնախում թշնամիներին։ Հոգ չէր, եթէ նրա սպանած մի մարդու փոխարէն տուժում էին տասնեակ անմեղներ։ Վրէժը, որքան և թոյլ լինէր ու աննշան, զովացնում էր տապակվող սրտերը։

Միմեանց դէմ կանգնած էին երկու ավազակներ. մէկը ուժեղ, կատաղի և գիշատիչ, միւսը արդէն պառկված, վիզը ճկած և անգութ հարուածներից շշկլված։

Վերջինս, խեղճը, շշնջալով պատմում էր թէ ինչպէս աշխարհը դեռ բոլորովին չէ փչացել, որովհետև դեռ կարելի է հարիւր հարուածին պատասխանել գոնէ մի հարուածով։

Մանասի գործերը մի-մի ահագին քաջութիւն էին համարվում. ժողովուրդը առասպելական սիրուն գոյներով էր զարդարում իր հերոսին։

Այդքան արհաւիրքների մէջ միայն մէլիքի տունն էր անփորձ մնում։ Աւետարանոցի ամենաբարձր տեղում կանգնած այդ ահագին շէնութիւնը, կարծես, աշխատում էր կուչ գալ, աննկատելի մնալ, մոռացնել տալ իր գոյութիւնը։ Եւ իրաւ, բէկը բոլորովին աչքաթող էր արել նրան...

Ե

Հէնց այդ հանգամանքն էր, որ խօսակցութեան առարկայ էր դարձել երկու կանանց մէջ Վարդավառից երկու օր անց, կէսօրից յետոյ։ Ամառնային օրվայ այն ժամն էր, երբ ամեն ինչ թուլացած անշարժանում է արեգակի այրող ճառագայթների տակ, երբ ճանճն անգամ պզզոց չէ հանում։

Երևի տօթը չէր, որ հարկադրում էր երկու կանանց խօսել կամացուկ, համարեա շշնջալով։ Տօթը մնացել էր սենեակներում, իսկ նրանց այգատեղից դուրս էր հանել այն զով շուաքը, որ ամեն օր այդ պահին արձակում էր մէլիքի տունը իր հիւսիսային կողքին կպած մի ցածրիկ կտուրի վրա։ Երբեմն հիւսիսից մի մեղմ քամի էր հասնում այդ հովանոցին, և մենաւոր խօսակիցները խորին բաւականութեամբ ծծում էին նրա զովութիւնը։

Ոչինչ չէր արգելում նրանց մեղմ զրոյցը։ Տան հաստ ու ամուր շրջապարիսպը խնամքով առանձնացնում էր նրանց դրսի աշխարհից. նոյն իսկ հիւսիսային մեծ դըռների մօտ, շուաքում պառկած ահագին շունը դէպի նըրանց էր դարձրել իր կիսախուփ աչքերը և կարծես հասկացնում էր որ ինքն էլ իր միջոցներն է գործադրում, որպէս զի այդ խօսակցութիւնը հանգիստ և անընդհատ լինի։

Խօսողներից մէկը խոշոր կազմուածքի տէր մի կին էր։ Վայելուչ զգեստը, ազնիւ ձևերը առաջին անգամից թելադրում էին տեսնողին, որ դա Աննա-խաթունն է։ Բայց կար և մի պերճախօս վկայ, որ այդ մասին ոչինչ կասկած չէր թողնում. դա դառն վիշտն էր, որ տարածված էր նրա ամբողջ դէմքի վրա և հաղորդում էր լեռնային պարթև կազմուածքի խոշոր դիմագծերին մի ցաւեցնող, կարեկցութիւն շարժող արտայայտութիւն։

Եւ այդ մարմնացած վիշտը այնպիսի լրջութեամբ էր զբաղված իր խօսակցի հետ, որ կարծես եկել էր րոպէն, երբ պիտի վճռվէր ամբողջ տան, նոյն իսկ ամբողջ գաւառի վիճակը։

Միւսը ամբողջովին սևերի մէջ էր, մի գոյն, որ կրօնաւորների սեփականութիւնն է։ Եւ իրաւ, նա կոյս էր. մէկը այն կոյսերից, որոնց բնակութեան և մշտական աղօթքների տեղը Աւետարանոցի կուսանոցն էր, մի փոքրիկ եկեղեցի, որ շինված էր բարձր ժայռի վրա, մելիքի տան հարաւային կողմում։

Տարիքով այդ կոյսը շատ մեծ էր մելիքի կնոջից. նրա սև գլխաշորի տակից երևում էին թանի պէս սպիտակ մազերը։ Նրան կոչում էին Հեղինէ։

Վանական կեանքը երկար տարիների ընթացքում շոյել ու հարթել էր նրա փոքրիկ ու գունատ դէմքը, որի վրա կեանքի բոլոր հանգամանքների մէջ անշարժ էր մնում հեզ և անխռով բարեպաշտութեան կնիքը։ Այդ դէմքը ամէն տեղ լուռ ու մունջ քարոզում էր խունկի և պաղատանքների աշխարհի իմաստութիւնները—սեփական անձի նուաստացում, կոյր հնազանդութիւն ճակատագրի կամքին և սառն ատելութիւն դէպի աշխարհային զուարճութիւնները։ Այդ էր պատճառը որ նա բոլոր վշտահարների սփոփիչն էր, բոլոր փշրված սրտերի յուսատուն։

Բայց միայն տարիներն ու պաշտօնը չէին նրան այդքան հեղինակութիւն տալիս։ Նա էլ ազնուական ծագում ունէր. Վարանդայի մելիքների տոհմից էր, և Մելիք-Յուսէփի կինը նրա մէջ տեսնում էր նաև այդ տոհմի աւագ ներկայացուցիչներից մէկին։ Նեղն ընկած աղամարդիկն էին դիմում նրա սառն, բայց հանգստացնող խորհուրդներին, ուր մնաց մի կին, որի վրա ծանրացած էին այնքան հոգսեր։

Աննա-խաթունը ամէն օր տեսնում էր նրան իր մօտ, ականջ էր դնում նրա ասածներին և մխիթարութիւն էր գտնում։ Բայց այս անգամ խօսակցութիւնը ուրիշ կերպարանք ունէր և Հեղինէն, կարծես, մոռացել էր իր գրքերը, որոնցից այնքան սիրում էր վկայութիւններ, ամբողջ պատմութիւններ բերել։

—Ո՛չ, մեծ անզգուշութիւն էր, պատասխանեց նա, մի սառն, նոյն իսկ անողորմ խստութեամբ։

Նա նորից վերադառնում էր այն առարկային, որ այդ օրը բաւական յուզել էր երկուսին։ Աննա-խաթունը նորից սկսեց պաշտպանվել։ Նա վախում էր այդ դառն վճռից, ուզում էր որ հերքված լինի Հեղինէի այն միտքը թէ ինքը կարող է սխալ կերպով կարգադրել իր տան գործերը։

—Ես երեխայ չեմ, ասաց նա, հետզհետէ տաքանալով.—Գայիանէին ես, ի հարկէ, բաց չէի թողնի, եթէ այդ բէկը այն օրը մեր գիւղում լինէր։ Աստուած ողորմութիւն արաւ իմ խեղճ որբին։ Շաբաթներով Գայիանէն սպասում էր Վարդավառին։ Իսկ վերջին շաբաթը... Դու լաւ չես տեսել նրան, ուստի չես հաւատայ, եթէ ասեմ որ գիշերները արթուն էր մնում և աղօթքներ էր կարդում... Նա, որ մինչև այժմ չէ իմացել թէ ինչ է անքնութիւնը։ Նա համարեա ծոմ էր պահում,—կուսական մի ուխտ... Եւ այդ բոլորը այն յուսով թէ երկինքը ցոյց կը տայ նրա բախտը։ Քանի անգամ—խեղճ երեխայ—իմ վզին փաթաթվեց, համոզում էր, որ այս տարի չարգելեմ Հարսնաղբիւրի ձորը գնալ։ Անցեալ տարի սգաւոր էինք, իսկ հիմա։

Այրին խորը հառաչեց, այդ հարցին միջանկեալ պատասխան տուեց թէ սուգը միշտ կայ, և ապա շարունակեց առաջվայ եղանակով.

—Իմ սիրտը տակն ու վրա էր դառնում... Ո՛չ ես, ո՛չ դու և ոչ մի ուրիշը այս տան մէջ մինչև այսօր չենք համարձակվել խօսել նրա մօտ թէ ինչ վտանգ է սպառնում մի սիրուն եղնիկին, որ ընկնում է գազանների աշխարհը։ Ի հարկէ, նա պիտի իմանար, որ եղնիկը ինքն

է, իսկ գազանները մեր այժմեան տէրերն են... Դա կը լինէր մի անգութ հարուած, որ կը փշրէր նրա սիրտը։ Ե՛ս եմ ճանաչում թէ ինչ սիրտ է դա։ Կիսատ-պռատ ակնարկներ, վախ և զգուշութիւն քարոզող շշուկներ—ահա ինչ կար մեր ձեռքում։ Բայց երեխան մի որոշ բան չէր հասկանում այդ բոլորից... Դժուար, նոյն իսկ անհնարին բան է, որ մի անմեղ ու միամիտ արարած հասկանայ և հաւատայ թէ աշխարհում այսքան դաժան, այսքան զարհուրելի մարդեր կան... Նա ուզում էր Վարդավառ գնալ. և ո՞վ կարող էր արգելել որ նա իմանայ իր բախտը, մանաւանդ այն օրից, երբ նրան էլ յայտնի դարձաւ, որ խաչէնցին մեր փեսան է։ Ես խոստացայ թոյլ տալ. և ինչ հրաշք։ Ուրբաթ երեկոյեան բէկը գընաց Ամարաս, տանելով իր հետ մարդակեր ձիաւորներին. դրանցից մի հատն էլ չէր մնացել Աւետարանոցում։ Դու գիտես թէ ինչու նա այնպիսի պատրաստութեամբ գնաց...

—Գիտեմ, պատասխանեց Հեղինէն.—այսօր սարսափելի լուրեր հասան Սօս գիւղից. բէկը խեղդում է ամբողջ ժողովուրդը։ Եւ այդքան դժբախտութիւնը մի աղջկայ պատճառով։

—Այո, բայց մեղադրել ժողովուրդը անգթութիւն կը լինէր։ Նա դիմացել էր ամեն տեսակ ցաւերի, բայց չը կարողացաւ տանել, երբ օրը ցերեկով մի զինուոր դուրս քաշեց մի աղջկան իր հօր տանից... Ինչ և իցէ, կիրակին լուսացաւ։ Դեռ արեգակ չը կար, դեռ Լուսաստղը բոլորովին չէր անհետացել երկնքում, իսկ Գայիանէն պատրաստ էր։ Հագել էր ամենալաւ շորերը, զարդարվել էր. տեսնէիր նրան, կասէիր թէ մի աղջիկ է դա, որ պատրաստված է պսակի գնալու... Ես մայր եմ, բայց դու էլ կասէիր՝ թող գնայ։ Նա չէր խօսում, նա պատրաստւում էր անխօս գնալ աղբիւրի մօտ, անխօս հաւաքել առաւօտեան ցօղը և ածել բախտի սափոր[ի] մէջ։ Ես օգուտ քաղեցի այդ անխօսութիւնից և մար[դ]

ուղարկեցի տանուտէրի մօտ. երբ նրանից լուր ստացայ թէ բէկը դեռ չէ վերադարձել, Մէհրիին նշան արի, որ կարող է գնալ Գայիանէի հետ։ Իսկ ինքս ամբողջ օրը հսկում էի այստեղ։ Թշուառը շուտ է հնարներ գտնում. ես գիտէի թէ ինչ պիտի անեմ, եթէ յանկարծ մեզ տանջողը գար... Եւ փառք Աստուծու, նա չեկաւ, այսօր էլ դեռ չը կայ։ Կէսօրից յետոյ ես Ջալալին ուղարկեցի դէպի Հարմնաղբիւր, իսկ երեկոյեան, երբ ամենքը տանն էին, ես մտածում էի և ասում, որքան զզուելի է խեղճ մարդը... Նապաստակը վախկոտ է, բայց գոնէ հանգիստ քնում է, երբ թշնամի չը կայ։ Իսկ մենք դողում ենք ամեն ժամանակ, որովհետև կասկածները օձերի նման կուտված են մեր մէջ։ Ո՞վ գիտէ, գուցէ օսմանցիներից ոչ մէկն էլ վատ միտք չունի մեր մասին... Բայց մենք բաւական չենք համարում մեր հաստ պատերն ու փականքները։

Միթէ այսքանն էլ բաւական չէր արդարանալու համար։ Աննա-խաթունը այս հարցն էր տալիս, նայելով իր դատաւորի աչքերին։ Բայց ալէզարդ կոյսը գլխով բացասական նշան արաւ։ Նա, այնու ամենայնիւ, չէր հաւանում։

—Փորձանքը ո՛չ օր է ճանաչում, ո՛չ գիշեր, պատասխանեց նա իր սովորական հեզութեամբ.—փորձանքը գալիս է ամեն ժամ, բայց մանաւանդ այն ժամանակ, երբ դու նրան չես սպասում։ Բէկը գնացել էր, ասում ես։ Շատ լաւ։ Իսկ Մանասը։ Եթէ բէկն իմանայ, որ նա էլ եղել է այնտեղ...

—Ոչինչ չի իմանայ, ասաց այրին և ձեռքով մի շարժում գործեց, որ ցոյց էր տալիս թէ այդ կողմից ինքն ապահով է։—Մանասը եղել է իրիկնապահին և ոչ ոք նրան չէ տեսել։

—Տեսել են այնքան աղջիկները։

—Նրանք ծպուտ չեն հանի։

—Աստուած տայ։ Բայց մի՛ մոռանար թէ ինչ ժա-

մանակներում ենք ապրում։ Նեար ծնվում է. այժմ թուփն էլ, խոտն էլ, քարն էլ լրտեսում են։ Մի բերանը չէ կարողանում գաղտնիք պահել, ինչպէս կը պահէին տասը, քսան բերանները... Ես գիտեմ, որ այժմ ամբողջ գիւղը պատմում է թէ ինչպէս եկաւ Մելիքենց Մանասը, ինչեր ասաց...

Դա բոլորովին ուրիշ հանգամանք էր. Աննա-խաթունը չէր էլ մտածել թէ կարող է այդպիսի բան պատահել։ Նա շփոթվեց, պատասխան գտնել չը կարողացաւ։ Այո, բէկը խնայել չը գիտէր, երբ գործը վերաբերում էր Մանասին։

Տխրած ծանր լռութեան մէջ Հեղինէն, նորից ապացուցված համարելով իր մեղադրանքը, էլի կրկնեց.

—Սխալ բան էր... դու չը պիտի ուղարկէիր։

—Սխալ չը կար... յանկարծ մի բուռն շեշտով արտասանեց մէլիքի այրին, և նրա տխուր աչքերի մէջ ցոլաց ինքնապաշտպանութեան եռանդը։

Նա ոչ մի զիջում չէր ուզում անել այն կէտի մէջ թէ ինքն իր տան դժբախտութեան կարող է նպաստել նոյն իսկ անգիտակցաբար։

—Ի՞նչ սխալ է, շարունակեց նա.—թո՛ղ իմանայ, թո՛ղ կատաղէ։ Գիտե՞ս ես ինչ կասեմ։ Մանասը եկել էր մեր աղջիկներին պահպանելու, որովհետև Վարանդայում ոչ մի կին, ոչ մի աղջիկ ապահով չէ քրդերի, թիւրքերի և հազար ու մի ուրիշ տեսակ շների ձեռքից։ Ահա ինչ կասեմ...

Կինը պարտութիւն չը գիտէ, երբ պաշտպանում է իր պատիւը։ Մէլիքի այրին մի ակնթարթում բոլորովին այլակերպվեց. նրա աչքերը կրակոտ էին և յաղթութիւն էին քարոզում։ Բայց նա մոռացել էր թէ երբ է խօսում և ում մասին։ Հեղինէն շտապեց վերականգնել իրական ճշմարտութիւնը և ասաց.

—Այո, ով չը գիտէ, որ այդպէս է։ Դու կասես անօրէնին, չէ՞։ Բայց նա քեզ չի հարցնի, որովհետև անօ-

րէն է... Մանասը պաշտպանում է մեզ զանազան շներից. իսկ դրանցից մէկն էլ ինքն է, բէկը. ուրեմն այն, ինչ-որ պաշտպանութիւն է մեզ համար, յանցանք է նրա աչքում։ Շներին, գայլերին և ուրիշ պատառողներին ատելի է պաշտպանութեան միտքը, նրանք մի բան գիտեն —ով խլում է նրանց պատառը, յանցաւոր է և պիտի գզգվի...

Բայց այդ առարկութիւնը աւելի ևս բորբոքեց Աննա-խաթունին։ Ինչո՞ւ է այդպէս։ Ինչո՞ւ պիտի պատառը չը բողոքէ իրան կլանող բերանի դէմ։

—Եւ վերջապէս, այս ինչ ցաւ է, բացականչեց նա, մոռանալով որ խօսակցութիւնը ամբողջ ժամանակ ցած ձայնով էր կատարվում։—Ամբողջ գիւղը այնպէս չէ վախում, ինչպէս մենք. բոլոր նորահարսերն ու աղջիկները դուրս գնացին, իսկ մենք—մենք այդ իրաւունքն էլ չունենք...

—Մի՞թէ զարմանում ես, Աննա-խաթուն, ընդհատեց Հեղինէն և իր ծանր հայեացքով երկու անգամ չափեց իր խօսակցին, հասկացնելով թէ ինքը չէր սպասում այդքան միամտութիւն մի կնոջից, որին մի ամբողջ երկիր է յանձնված։

—Մի՞թէ զարմանում ես և կարծում ես թէ ուրիշ կերպ կարող էր լինել։ Վարանդայում հազար աղջիկներ կան, որոնք միմեանց նման են, բայց մէլիքի աղջիկը մի հատ է և ոչ ոքի նման չէ։ Ժողովուրդը մէլիքից ցած է, ժողովուրդը պիտի ցած լինի և նրա աղջկանից, նրա ամբողջ ընտանիքից։ Սա Աստուծու օրէնքն է. և նայիր, աշխարհը ուրիշ պատուիրան չէ էլ ճանաչում։ Թագաւորները վէճ են ունենում իրար մէջ, բայց նրանք մենակ չեն գնում միմեանց դէմ կռւելու. դա նրանց ժողովուրդների պարտքն է. արիւն թափողը, հազար ու մի զրկանք կրողը հարկատուներն են։ Եթէ ժողովուրդը հարկ է տալիս որ իշխանաւորը իր փառքի համեմատ ապրէ, նոյն ժողովուրդը պարտաւոր է իր վրա վերցնել այն բա-

լոր տանջանքները, որ բերում է օտարերկրեայ յաղթողը... Լսե՞լ ես այն հէքեաթը, որ պատմում է թէ ինչպէս մի հրէշ դեւ օրեկան եօթն աղջիկ էր կլանում, բայց էլի գոհ չէր, որովհետեւ իր ուզածը Թագաւորի աղջիկն էր։ Եւ ինչ։ Թագաւորի աղջկան տուին, բայց միայն այն ժամանակ, երբ ամբողջ երկրում այլ ևս մի հատ աղջիկ չէր մնացել՝ անկուշտ բերանը գցելու համար։ Կարգն այս է։ Այժմ, երբ մեր երկրում լոյս է ընկել նոյնպիսի հրէշ, ժողովուրդը նոյնը պիտի անէ...

Նա կանգ առաւ, որովհետեւ նրան այնպէս թուաց թէ Մէլիքի այրին պարզ չէ հասկանում այդ խօսքերը։

—Հասկանո՞ւմ ես, ասաց նա։

Աննա-խաթունը լաւ էր հասկանում. այժմ նա լսում էր կոյսին հանգիստ կերպով, նոյն իսկ բաւականութեամբ։

—Կրկնում եմ, աշխարհը չէ կարող դուրս գալ աստուածային օրէնքներից։ Բայց օրէնքները միմիայն ժողովրդի համար չեն գրված, և աշխարհի վրա ոչ ոք մեղաւոր չի լինի, թէ ինքդ գնաս և քո յօժար կամքով հրէշի բերանն ընկնես։ Դու գիտես, որ մեր երկրի պատիւը քո տանն է դրած. այստեղից է դուրս գալիս ժողովրդի ուրախութիւնն ու դառնութիւնը։ Շատ զգոյշ պիտի լինի այս տունը... Ծառի ամենաբարձր ճիւղի ծայրում հասած պտուղը շատ գրաւիչ է լինում. կարծում են թէ նրա մէջ կայ մի առանձին համ ու քաղցրութիւն, որ չունեն ցած ճիւղերի պտուղները։ Դա, ի հարկէ, ճիշդ չէ. ցած ճիւղերի վրա եղածները շատ անգամ աւելի գեղեցիկ և համեղ են լինում։ Բայց ինչո՞ւ աչքը միշտ վերեւն է նայում և ախորժակը ամենից շատ գրգռողը վերեւինն է։—Որովհետեւ նա բարձր է ամենքից, անմատչելի է։ Այսպէս է և քո տունը։ Բարձր ես, ուրեմն և ախորժելի ես։ Եւ որպէս զի ամեն մի պատահածի բերանը չընկնես, պիտի պինդ պահես քո բարձրութեան վրա, աւելի անմատչելի դառնաս։

Պատասխան չեղաւ. բարձր ճիւղի պտուղը լռութիւն պահպանեց։

Կարճ միջոցից յետոյ կոյսը էլի խօսեց։ Եթէ բաւական չէ այսքանը, նա կը բերէ ուրիշ օրինակներ, ուրիշ խօսքերով կապացուցանէ թէ ինքը լաւ է հասկանում աշխարհի օրէնքները։ Թող Աննա-խաթունը լաւ իմանայ, որ ինքը, այդ կոյսը, թէեւ մազերը սպիտակացրել է աշխարհից հեռու, վանքի պատերի մէջ, բայց տեսել ու լսել է շատ բան, կարդացել է աւելի շատ, և երկար մտածել է կարդացածի վրա։

Բայց աւելորդ էին այդ բացատրութիւնները։ Մէլիքի այրին արդէն գլխաթափ էր դարձել։ Գիտէր որ շատ ճիշդ է ծառի և հասած պտղի օրինակը։ Եւ յայտնեց իր շնորհակալութիւնը, աւելացնելով որ մանկանացու մարդը առանց սխալների չէ, մանաւանդ երբ մենակ է, իսկ ժամանակը այսքան չար։

—Եղածը եղել է պրծել, հառաչեց նա.—այսուհետեւ Աստուած է մեր յոյսը։

—Անպատճառ, հաստատ կերպով արտասանեց Հեղինէն.—Աստուծու փէշը երբէք չը պէտք է բաց թողնել։

Այժմ նա, իր մեղադրանքը հաստատելուց յետոյ, փոխեց իր դերը և սկսեց սիրտ տալ իր խօսակցին։

—Երկար չեն քո նեղութեան օրերը։ Գայիանէն այստեղ հիւր է և երբ դուրս կը գնայ այս տանից, դու ազատված կը լինես ահագին ցաւերից։

Եւ նա խօսք սկսեց հարսանիքի մասին։ Ինչո՞ւ չեն վերջացնում, ինչո՞ւ են այսքան յետաձգում։

Նա, իբրեւ Մէլիքի տան մօտիկ բարեկամ, լաւ գիտէր բոլոր հանգամանքները։ Կէս տարի առաջ, բարեկենդանի առաջին օրերում, տեղի ունեցաւ Գայիանէի և Ջալալի նշանադրութիւնը։

Այդքան անշուք ու խեղճ հանդէս չէր տեսել նոյն իսկ վերջին աղքատի խրճիթը Աւետարանոցում։ Դրսից եկել էին միայն փեսացուն, նրա մայրը և Մէլիք-Աւանը։

Քաշանան օրհնեց մատանին, Աննա-խաթունը արտասունք թափելով ընդունեց շնորհաւորութիւնները և համբուրեց իր փեսայի ճակատը։

Մելիք-Աւանի կարգադրութեամբ էր նշանադրութիւնը այնքան լուռ ու մունջ, համարեա տխուր։ Նա չէր թոյլ տուել, որ Խաչէնի մելիքը գայ իր որդու ուրախութեան, որպէս զի աղմուկ չը լինի և Սուլէյման-բէկը ոչինչ չիմանայ։ Անշուշտ, աղքատիկ նշանադրութիւնը մի նոր ցաւ դարձաւ Աննա-խաթունի համար։ Բայց ինչ կարող էր անել։

Հարսնախօսութեան պայմանների վրա վէճ չեղաւ։ Աննա-խաթունը չէր զրկի Գայիանէին, հօր սիրած ու պաշտած աղջկան. ինչպէս վայել էր Վարանդայի մելիքին, նա տուաւ, նոյն իսկ չափազանց առատ բաժինք նշանակեց։ Իր կողմից Ջալալի մայրը պատասխանեց նոյնպիսի առատաձեռնութեամբ։ Կարգ էր, որ փեսան իր աներոջը մի յայտնի տուրք պիտի տար և ապա պսակվէր։ Այդ տուրքը մի և նոյն ժամանակ ցոյց էր տալիս թէ փեսան ինչպէս է գնահատում իր նշանածին։ Խաչէնի մելիքի կինը այնպիսի մի գումար առաջարկեց, որ Աննա-խաթունը միանգամայն գոհ մնաց։ Գայիանէին շատ բարձր էին գնահատում. այդպիսի գին չը կար մելիքների ընտանեկան աւանդութիւնների մէջ։

Բայց հարսանիքը յետաձգվեց, որովհետև հարսնախօսութեան մի այլ պայմանը հեշտ չէր կատարել։ Խաչէնում այդ ժամանակ խռովութիւններ էին սկսվել Մելիք-Գրիգորի և նրա կրտսեր եղբօր մէջ։ Վերջինս պահանջում էր Խաչէնի մի նշանաւոր մասը և սպառնում էր վէճը կռւի հասցնել, եթէ իր եղբայրը յօժար կամքով չը տայ իր ուզածը։ Այդ նպատակով էլ նա յարաբերութիւն էր սկսել վրաց մի յայտնի ազնուականի հետ, որ մեծ նշանակութիւն ունէր վրաց արքունիքում։ Ղարաբաղի մնացած մելիքները սաստիկ հակառակ էին մելիքի եղբօրը, որ բացարձակ անիրաւութիւն էր գործում

և ձգտում էր խլել Մելիք-Գրիգորից Խաչէնի իշխանութիւնը։

Նրանք կարող կը լինէին զսպել այդ ըմբոստին, եթէ Մելիք-Աւանը չը նախատեսնէր թէ ինչ վտանգ կայ այդ կողմից։ Նա նկատել էր, որ մելիքի եղբայրը ուզում է բարեկամանալ օսմանցիների հետ. իսկ դա մի նոր աղէտ կը դառնար Ղարաբաղի համար։ Թէև օսմանեան տիրապետութիւնը տարածված էր ամեն տեղ, բայց հայերից ոչ ոք դեռ չէր փորձել անցնել նրանց կողմը և Սարը-Մուստաֆա փաշան իզուր էր աշխատում աջակցութիւն որոնել զանազան կողմերի հայերի մէջ։

Խոհեմութիւնը պահանջում էր չը գրգռել անբաւական տարրերը։ Այդ պատճառով գերակշիռ հանդիսացաւ երկու եղբայրներին հաշտեցնելու միտքը. մելիքները այդ գործը յանձնեցին Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսին։ Իրերի այդ դրութեան մէջ Աննա-խաթունը չէր կարող անտես առնել այն հանգամանքը, որ Մելիք-Գրիգորը գուցէ հարկադրված կը լինի կամ կատարել իր եղբօր պահանջը կամ, պաշտպանելով իր իրաւունքը, ներքին երկպառակութիւնների մատնել Խաչէնը։

Երկու դէպքում էլ անկատար էր մնում Մելիք-Յուսէֆի կտակը. երկու դէպքում էլ Գայիանէի հարսանիքը չէր կարող պաշտպանողական կապ հաստատել Վարանդայի և Խաչէնի մէջ։ Ուստի Աննա-խաթունը պայման դրեց, որ հարսանիքը կատարվի միայն այն ժամանակ, երբ վերջնական հաշտութիւն կը կայանայ երկու եղբայրների մէջ։

—Շուտ կը լինի այդ հաշտութիւնը, հարցրեց Հեղինէն։

—Յայտնի չէ, գոնէ Ջալալը չէ հասկանում թէ ինչեր են կատարվում։ Ներսէս կաթողիկոսը, ինչպէս երևում է, շատ չէ շտապում։ Ինչպէս ասում են, նա իր աշխիներն ունի։ Եւ դա շատ հաւանական է։

—Հաչինե՞ր։

—Այո՛։ Ինձ ասացին որ նա աշխատում է իր քրոջ աղջկան դարձնել Թաչէնի մէլիքի հարս։

—Այսինքն Գայիանէի տե՞ղը։

—Ի հարկէ։ Այդ բանը գիտեն շատերը, որոնց թւում և մէլիքը։

—Ջալալն է՞լ գիտէ։

—Հաստատ չեմ կարող ասել։ Պէտք է խոստովանեմ որ նրա սիրտն այստեղ է, այդ պատճառով էլ չափազանց շուտ-շուտ է գալիս մեր տուն։ Եթէ ծեծես էլ, մեր տանից չի հեռանայ։

—Եւ Գայիանէն էլ ի հարկէ...

—Աւելորդ է ասել։ Հարցրու Մէհրիին թէ ինչեր են տեղի ունեցել Վարդավառի օրը։ Երբ նա պատմում էր, իմ արտասուքները թափվում էին։ Է՛հ... ջահիլութեան օրերում որբացած... հօր փայփայանքը չը կայ... և օտար երիտասարդն է... նրա ուրախութիւնը։

Մայրը այստեղ էլ չը կարողացաւ պահել իր արտասուքները։ Հեղինէն բռնեց նրա ձեռքը, սկսեց մեղմ խօսքերով մխիթարել։ Աստուած ողորմած է... Նա չի թողնի, մէլիքի փոխարէն նա ինքն է այժմ որբի հայրը։ Արտասուքը արտասուք կը բերի... Ինչու՞ սուգ խառնել երկու նշանածների ուրախութեան մէջ...

—Ի՞նչ անեմ, հառաչեց այրին։—Մի օր, միայն մի օր խեղճ որբս ուրախացաւ, և մենք ամենքս հաւատացած ենք, որ այդ ուրախութիւնից դժբախտութիւն պիտի դուրս գայ... Մի՞թէ այդքան օտարոտի, այդքան հազուագիւտ բան է եղել ուրախութիւնը իմ երեխաների համար...

Կոյսը հասկացաւ որ դժուար է, անհնարին է պատասխանել այդ հարցին, ուստի փոխեց խօսքը և իր կողմից հարցրեց.

—Իսկ եթէ Ջալալը կամենայ տանել իր հարսին, չը սպասելով, թէ երբ կը վերջանան սահ վէճերը, ի՞նչ կասես...

—Նա խօսքի մէջ մի-մի հասկացնել է ուզում այ-

պիտի բան։ Բայց Մէլիք-Յուսէինի աղջիկը դեռ մայր ունի, դեռ այնքան չէ անբախտացել, որ անտէրութիւնից ընկնի մի տուն, ուր կռիւ ու հայհոյանք է տիրում։

—Բայց այդ պատմութիւնը վերջ չի ունենայ։ Գոնէ պէտք է ասել, որ Ներսէս կաթողիկոսի փոխարէն մի այլ միջնորդ նշանակվի։

—Ո՞վ պիտի ասէ, ես, վրդովված բացականչեց Աննա-խաթունը։—Այդ էր պակաս որ ես սկսէի շրջապեցնել, հնարներ գտնել թէ ինչ է... շուտ աջողվի մի գործ, որից օգտվում են միայն խաչէնցիները։ Ի՞նչ կասեն խաչէնցիները։ Կասեն Վարանդան վախում է, չէ կարողանում պահել մի աղջիկ, աղաչում է, որ շուտ տանեն, ազատեն նրան։ Այս կը լինի նրանց խօսքը... Իսկ ես չեմ թողնի, որ իմ աղջիկը իբրև ողորմութիւն գնայ մի օտար երկիր. աղաչելով ուզել են, աղաչելով էլ պիտի տանեն։ Ի՞նչ կասէ Ներսէս կաթողիկոսը։ Նա, ի հարկէ, չէ մոռացել, որ Մէլիք-Յուսէինը մի անգամ ասել էր նրա ճակատին. «Քանի կայ Եսայի կաթողիկոսը, դուք ամենքդ ոչինչ էք»։ Այժմ նա կասէ թէ այդ մարդու կինը իր դէմ հնարներ է գործ դնում, որպէս զի Ջալալը չուզէ իր քրոջ աղջկան.... Սա մեծ ամօթ է ինձ և իմ ժողովրդի համար...

—Շատ ճշմարիտ է, բայց մոռանում ես Մեհրաբի տունը...

Այդ տանն էր բնակվում Սուլէյման-բէկը։ Այս անգամ Հեղինէի խօսքը տպաւորութիւն չը գործեց։ Աննա-խաթունը կրակ կտրածի նման ասաց.

—Ես կը պահեմ իմ երեխային... Նա պատի ծակից դուրս եկած չէ։ Յիշո՞ւմ ես քո ասածը։ Մենք ծառի կատարին բուսած պտուղ ենք... ամեն մի պատահած մարդ, լինի նա խաչէնցի, թէ մի ուրիշ երկրից, չէ կարող հեշտութեամբ մօտենալ այդ պտղին։

Այդ միջոցին կտուրի վրա երևաց մի փոքրահասակ, վտիտ տղայ։ Նա սաստիկ կաղում էր և հազիւ էր կա-

բողանում տանել իր թևի տակ դրած մեծ գիրքը։ Աննա-խաթունը և Հեղինէն ուշադրութիւն չը դարձրին նրա վրա և շարունակեցին իրանց խօսակցութիւնը։ Նազլի-տղան էլ նրանց չարժանացրեց իր ուշադրութեան. հաս-նելով Հեղինէին, նստեց նրա ծնկան մօտ և իսկոյն բաց արաւ իր գիրքը։ Մի ակնթարթում ընթերցանութիւնը կլանեց նրան, չը նայած որ նրա ականջների մօտ հնչում էր երկու կանանց շշուկը։

—Բայց ի՞նչ է լինելու մեր վերջը, հարցրեց Հեղինէն։

Աննա-խաթունը վեր քաշեց ուսերը, մի պատասխան տուեց, որ կատարեալ անյայտութիւն և յուսահատութիւն էր։

—Ի՞նչ է անում Մելիք-Աւանը։

—Ոչինչ։

—Եւ չէ՞ խօսում...

—Խօսում է, բայց շատ քիչ։ Երկու, երեք բառ կասէ, ինչպէս ուզում ես հասկացիր։ Վերջին ժամանակներում ես համարեա չեմ ճանաչում իմ եղբօրը։ Անդադար դէս ու դէն է քշում իր ձին. մի օր Գիւլստան, միւս օրը Ջրաբերդ, այնտեղից Գանձակ...

—Գանձակ է՞լ է գնում։

—Այո՛, փաշան նրա հետ բարեկամ է։

Հեղինէն ժպտաց և ասաց.

—Էլ ինչո՞ւ ենք շատ մտածում։ Սուլէյման-բէկը, ինչ-որ էլ լինի, չի համարձակվի վատութիւն անել նրա քրոջը։

—Ընդհակառակն, ինքը, Աւանն է, որ միշտ ինձ զգուշացնում է, ասում է որ չը պէտք է հաւատալ թիւրքին։ Երևում է, որ խեղճ եղբայրս հալվում-մաշվում է մի մտքից։ Թէ ինչ գիտէ նա և ինչու այդքան սակաւախօս է դարձել, նոյն իսկ կոշտ ու կոպիտ—ոչ ոք չէ հասկանում։ Տանն էլ նա այդպէս է. նոյն իսկ երեխաների հետ այնպէս չէ վարվում, ինչպէս առաջ։ Ես, ճշ-

մարիտն ասած, նրանից լաւ բան չեմ սպասում, նա ինձ մտատանջութիւն է պատճառում իր գաղտնի հոգսերով...

—Բայց հօ տեսնո՞ւմ է թէ ինչեր են կատարվում մեզ մօտ։

—Ամեն ինչ գիտէ։ Դու կարծում ես թէ Դիզակը շատ լաւ դրութեան մէջ է... Սուլէյման-բէկը այնտեղ էլ է հասցնում իր թաթը։ Բայց Աւանը անտարբեր է և իր երկրի վերաբերմամբ։ «Դա բնական է»—ուրիշ պատասխան նա չունի, երբ լսում և տեսնում է մի նոր դժբախտութիւն... Ի՞նչ ուզում է՝ թող անի, միայն թէ ինքը ողջ լինի։ Ես վախում եմ... Հոգսերը սարեր են խորտակում. ի՞նչ կը լինի իմ օրը, եթէ նրա գլուխն էլ մի բան գայ։ Մենակ նա է մնացել...

—Ի՞նչ մտքեր ես անում,—տհաճութեամբ պատասխանեց Հեղինէն։—Ուրիշ բան չը կայ. նա, երևի, կորցրել է յոյսը, և այդ պատճառով տխուր ու տրտում է։ Մտածիր, հե՞շտ բան է... Ղարաբաղը ընկաւ, այլ ևս վերկենալու յոյս չը կայ։ «Հովիւը զարկեցին և ոչխարները փախան»... կատարվում է Սուրբ-Գրքի խօսքը։

—Երանի՜ մեզ, երանի՜ մեզանից յետոյ եկողներին, լացակամած հառաչեց այրին։—Յովսէփ, ինչ լաւ օրեր են գալիս քեզ համար...

Վերջին խօսքերը նա ուղղեց կոյսի մօտ նստած տղային, որ իր որդին էր։ Հեղինէն միայն այդ ժամանակ ուշադրութիւն դարձրեց փոքրիկի վրա և ձեռքը դնելով նրա ուսին, մի բան ասաց։

Երեխան—դա հասակ առած երեխայ էր—բաժանվեց իր գրքից և բարձրացրեց իր մարած աչքերը, մի անտարբեր և բութ հայեացք գցեց իր մօր վրա և ապա վիզը ծռեց ու գլխով դրական պատասխանի նշան արաւ։ Նա յայտնում էր, որ պատրաստել է իր դասը։ Այդ ժամանակ երկու կանայք ընդհատեցին իրանց խօսակցութիւնը, և լռութեան մէջ երեխան սկսեց թոյլ ու հիւանդոտ ձայնով կարդալ։

Աննա-խաթունը անգրագէտ էր և ոչինչ չէր հասկանում Յովսէփի կարդացածից։ Բայց և այդպէս, նա էլ խորին ուշադրութեամբ ականջ էր դնում, մի և նոյն ժամանակ աչքը չէր հեռացնում երեխայից։ Շատ անգամ էր նա այդպէս լուռ ու մունջ մտածել իր անդրանիկ որդու գալիքի մասին, բայց այսօր, մանաւանդ այնպիսի խօսակցութիւնից յետոյ, մի առանձին հոգս էր պատճառում նրան այդ երեխայի ապագայ բախտը։

Ի՞նչ կը լինի նա։ Օրէնքով նրան էր պատկանում Վարանդայի մէլիքութիւնը։ Բայց նայողը ինչպէս կը հաւատար թէ դա երեխայ չէ, այլ տասն և վեց տարին անցկացրած մի պատանի։ Այդ հասակում լեռնցին տղամարդի յատկութիւններ է ստանում. գնում է ծմակը, գիշերներ է անցկացնում դրսում, կարող է մի տուն կառավարել։ Իսկ Յովսէփը... կարծես ժամանակը ոչինչ չէր աւելացնում նրա վրա։ Նա նոյնն է, ինչ որ էր առաջ։ Սուլէյման-բէկի կառավարութեան ժամանակամիջոցը ոչինչ հետք չէր թողել. և չէր էլ կարող թողնել, քանի որ նա տանից չէր դուրս գալիս, ապրում էր իր մեկուսացած անկիւնում։ Այդպէս էր նա և Մէլիք-Յուսէինի ժամանակ։

Բնական արատը, մի ոտի կարճութիւնը, որ հարկադրում էր սաստիկ կաղալ, կարծես ամաչեցնում էր նրան. և մարդկանց հասարակութիւնից փախած՝ նա մի առանձին աշխարհ էր գտել իր համար։ Դա գիրքն էր, որի վրա դասեր էր առնում կոյս Հեղինէից։ Ուսումն էլ դժուարութեամբ էր նրան մատչելի դառնում։ Ամբողջ տարիներ նա եռանդով, կատարեալ ինքնամոռացութեամբ նուիրված էր գրքերին։ Հեղինէն, որ Աւետարանոցի և նրա շրջակայ գիւղերի համար երկար տարիներ վարժուհու պաշտօն էր կատարել իր վանքում, չէր յիշում մի այլ աշակերտ, որ այդքան դժուարութեամբ սովորած լինէր կարդալը։ Եւ պէտք էր առանձին եռանդով գործադրել մանկավարժական բոլոր իմաստութիւնները, որպէս-

զի կարելի լինէր մտցնել այդ փոքրիկ, բայց կարծր գլխի մէջ գիտութեան սերմերը։ Մէլիք-Յուսէինը ընդունում էր, որ գիտութեան առաջ ամենքը հաւասար են և որ իր որդու միսն էլ պատկանում է Հեղինէին, իսկ իրան մնում է ոսկորը։

Կուսանոցի փոքրիկ խուցը, ուր անցաւ Յովսէփի աշակերտութեան առաջին տարին, ականատես էր թէ ինչպէս Հեղինէն ամենայն բարեխղճութեամբ, չը մոռանալով որ և է մանրամասնութիւն, ծեծում և տանջում էր երեխային, որ չարութիւն չէր անում և մեղաւոր էր միայն նրանով, որ դժուար էր հասկանում իր դասերը։ Եւ սակայն ծեծը նրան առաջ չէր տանում։ Տարիներ անցան. երեխան դանդաղ կերպով առաջադիմում էր, որքան թոյլ էին տալիս իր սահմանափակ ընդունակութիւնները։

Եւ որովհետև ծեծը շարունակվում էր, ուշադրութիւն չը դարձնելով նրա ջանասիրութեան վրա, ուստի նրա մէջ հաստատվեց մի խորին անտարբերութիւն դէպի ամեն մի բռնութիւն, ամեն մի տանջանք։

Նա կարող էր տանել աւելի խիստ պատիժներ, այնպիսիները, որոնք չը կային կոյսի ծրագրի մէջ, իսկ ձանձրանալ նրանցից, հեռացնել իր մարմնի ցաւող մասերը հարուածների տակից—դա անհնարին էր նրա համար, չը կար նրա բնութեան մէջ։ Այդ դանդաղկոտութեան, այդ անտարբերութեան մէջ նա իւրացնում էր հաստատ գիտութիւն. ինչ որ այնպիսի դժուարութեամբ մատչելի էր դառնում նրան, այլ ևս չէր մոռացվում։ Տարիներ շարունակվեցին նրա տանջանքները, բայց տարիներից յետոյ նա ամենալաւ գրագէտն էր գիւղում։ Հեղինէն դէն գրեց ծեծը այն ժամանակ, երբ Յովսէփը զրկվեց հօրից։ Մի և նոյն բախտին ենթարկվեց և կուսանոցը, որի համար Մէլիք-Յուսէինը մի խնամատար հայր էր։ Հեղինէն իբրև կուսանոցի մայրապետ, որբացած անուանեց իրան և իր դառն աշակերտները խառնեց Աննա-խաթունի աշակերտների հետ։ Վշտի այդպիսի արտա-

յայտութիւն դեռ երբեք չէր ցոյց տուել պառաւ մայրապետը։

Եւ այնուհետև, երբ արտասուքները տեղի տուին հանգուցեալի հոգու փրկութեան համար կատարվող աղօթքներին, Յովսէփը Հեղինէի առաջ այլ ևս աշակերտ չէր, այլ հոյակապ իշխանի անօգնական որբ, որին պէտք էր խնամել և պահպանել, թէև վարժապետական խստութիւնը երբեք չէր դադարում քարոզել, որ չէ կարելի խելք և մարդութիւն սովորեցնել առանց ծեծի ու տանջանքների։

Այժմ էլ, երբ վերջացաւ ընթերցանութիւնը, նա հաճութեամբ, առանց չարանալու, ուղղեց իր աշակերտի սխալները և սկսեց հարցեր տալ։ Յովսէփը, խուսափելով նրա գլխի շարժումներից, որոնք հաւանութիւն էին յայտնում, պատասխանում էր անսխալ։

Գոհեց և մայրը։ Դրանից աւել վարձատրութիւն չէր կարող լինել խեղճ երեխայի համար. այդ էր վկայում նրա ընկճված, վախկոտ դէմքը, որի վրա յանկարծ փայլեց հոգեկան բաւականութիւն, մի երևոյթ, որ շատ քիչ էին նշմարում նրան շրջապատողները։

Դասը շատ լաւ վերջացաւ։ Այնուհետև Յովսէփի համար մի և նոյն էր թէ ինչ կասեն իր մասին։ Եւ նա իր սովորական անտարբերութեան մատնվեց, կուչ եկաւ, ինքն իր մէջ ամփոփվեց, երբ նրա մայրը նորոգեց ընդհատված խօսակցութիւնը։

—Ժամանակը իր դժբախտ որդիներն է ծնեցնում, ասաց Աննա-խաթունը.—Վարանդային այժմ հէնց այն է պակասում, որ մի այսպիսի երեխայ լինի մէլիքի ժառանգը։ Երևակայիր մի երկիր, որի յոյսը մեր Յովսէփն է...

—Ոչ ոք յոյս չէ դրել նրա վրա, պատասխանեց կոյսը ծիծաղելով.—ամենքը գիտեն, որ նա այս աշխարհից չէ, ուստի ասում են. «Մէլիք-Յուսէֆնը վարդապետներից փախչում էր, բայց վարդապետացու ժառանգ թողեց»։

—Ցաւն այն է, որ նա վարդապետ էլ չէ կարող դառնալ։

Աննա-խաթունի այս խօսքերը դեռ չէին վերջացել, երբ երեխան յանկարծ սկսեց վերկենալու ջանքեր անել։ Հեղինէն օգնեց. նա, ոտի կանգնելով, մի ակնթարթում գրկեց իր ահագին գիրքը և երեսը դարձրեց երկու խօսակիցներից. նա հեռանում էր՝ իր ոյժերից վեր ճիգեր թափելով, որ իր կարճլիկ ոտը գործէ արագութեամբ. բայց այդ աշխատութիւնը շփոթեցնում էր նրան և նա աւելի ևս սաստիկ էր օրօրվում, ծռվում էր այս և այն կողքի վրա։

Այրին և Հեղինէն բոլորովին անտարբեր մնացին. ոչ ոք չուզեց անգամ կասկածել թէ գուցէ երեխայի ինքնասիրութիւնը վիրաւորված է և նա բողոքում է այդ խօսքերի դէմ։ Ամբողջ տան շուրջը չը կար մէկը, որ ենթադրէր թէ նրա մէջ կայ ինքնասիրութիւն. ոչ միայն հարազատ մայրը, այլ և տան ծառաները սովոր էին կոպտութեամբ վարվել նրա հետ, ընտրութիւն չանել նրան ուղղած խօսքերի մէջ... Դա մի մոռացված, երեսի վրա գցած փոքրիկ մարդ էր։

Օրը վերջանում էր։ Հսկայական ստուերները արագ ծածկում էին լեռնային երկիրը։ Աւետարանոցը լուռ էր. երեկոյեան զովութիւնը նրա մէջ կենդանութիւն չը տարածեց։ Այստեղ քիչ մարդիկ էին մնացել. ամբողջ գիւղը գտնվում էր կալերում, ուր աշխատում էր անընդհատ, թէև հաստատ չը գիտէր թէ ում համար է աշխատում։

Դեռ երկար լսվում էին մէլիքի կնոջ գանգատները։ Սիրտը, որի մէջ բոյն է դնում վիշտը, մի անհուն ծով է. և որքան նրա տէրը աշխատում է դուրս թափել փրփրած, կատաղած ալիքները, այնքան աւելի է զգում, որ իր լեզուն խօսելու շատ բան ունի։ Հեղինէն վերջ տուեց այդ գանգատներին, յայտնելով որ տան վերադառնալու ժամանակն է։

—Մենք էլ ապահով չենք, ասաց նա ոտքի կանգնելով.—անօրէնները, ի հարկէ, չեն մոռանայ մեր վանքն էլ… Ուր որ նայում ես, զգուշութիւն է հարկաւոր։ Իսկ ես որքան նստեցի այստեղ։

Ապա, մի ընդհանուր եզրակացութիւն անելով այդ օրվայ խօսակցութիւնից, նա յանձնարարեց Աննա-խաթունին աւելի խիստ հսկողութիւն, խնդրեց մտածել միայն Գայիանէի մասին։

—Կիրակի օրվայ դէպքերը… Ես չեմ մոռանում… Իմ պարտքը կը լինի օր ու գիշեր երեսս քարերին քսել և աղաչել… Աստուած գուցէ և խղճալու է մեզ…

Աննա-խաթունը լուռ ու մտախոհ գնաց նրա ետևից։ Բակում, սրահի սիւների ետևից, դուրս եկաւ Գայիանէն։ Նա, կարծես, սպասում էր կոյսին, կարծես մի բան պիտի ասէր նրան։ Սիրուն աչքերի մէջ բորբոքվում էր մի պերճախօս հարցասիրութիւն. բայց աղջիկը լուռ էր, սպասում էր, որ ինքը, կոյսը խօսք սկսէ։

Եւ Հեղինէն կանգ առաւ։ Առաջին անգամից կարելի էր իմանալ թէ որքան շատ էր նա սիրում մէլիքի աղջկան։ Նա՝ քաղցր ժպիտը բերանին, նշանով կանչեց աղջկան, երկու ձեռքով բռնեց նրա գլուխը և, հանդարտ համբուրելով ճակատը, ասաց.

—Մեր խօսակցութիւնը շատ երկարացաւ, և ես ուշացայ. գնա տուն, իսկ քո դասը կը մնայ առաւօտեան…

Այդ խօսքերը այնքան անսպասելի էին, որ Գայիանէն, հակառակ իր սովորութեան, չը համբուրեց իր վարժուհու ձեռքը…

Զ

Աւետարանոցի հարաւ-արևելեան ծայրում, ուր գիւղը վերջանում էր, թողնելով իր և գետակի ձորի մէջ մի երկար ու նեղ զառիվայր, երևում էր մի բոլորովին քայքայված փոքրիկ շինութիւն։ Նա տան նմանութիւն

չունէր, չէր շինված մշտական բնակութեան համար. առանձնացած էր, թեքված դէպի ձորի կողմը։ Եւ եթէ գիւղից դէպի այդ կողմը գնում էր մի բաւական բանուկ ճանապարհ, որ ոլորվում էր խիտ կածուկների մէջ, դրա պատճառն այն էր, որ խղճուկ շինութեան կողքին բարձրացած էր գիւղի աղբանոցի ահագին թումբը։

Երևի մի անյայտ ժամանակ գիւղացիներից մէկը կառուցել էր այդ շինութիւնը հովիւների համար և, երևի, կածուկներով պատած զառիվայրը մի տեղ էր, ուր գիշերում էին նրա հօտերը։ Այժմ փարախից ոչ մի հետք չէր մնացել, իսկ հողաշէն տնակը ոչնչանալու վրա էր։

Երեք կողերով նա խրվել էր աղբանոցի մէջ, բայց այդ յենարանների օգնութեամբ էլ հազիւ էր կարողանում դիմանալ իր ծռված կառուցի ծանրութեան. միայն առջևից, գետակին նայող կողմից, ունէր ճիպոտներից հիւսած մի պատ, որ սակայն սկզբից կիսատ էր մնացել, չէր հասել առաստաղին։ Շէնքի հնութեան վկայ էր և այն, որ ճիպոտները փոշիանալու վրա էին և կամաց-կամաց թափվում էին, բաց անելով նոր և նոր ծակեր։

Ձմեռը ոչինչ արգելք չէր այդ պատը, և ձիւնը ներս էր թափվում ու կուտվում։ Այդ ժամանակ տնակը, ի հարկէ, բոլորովին ամայի էր։ Բայց երբ դադարում էին գարնան հեղեղները և ամառվայ չոր եղանակը կամաց-կամաց իր իրաւունքների մէջ էր մտնում, գալիս էր և տնակի բնակիչը։

Բարձրահասակ վայրի բոյսերի մէջ, որոնք սիրում էին փարթամ հասակ քաշել աղբանոցի ստորոտներում, երևում էր մի պառաւ կին, որ բնակութիւն էր հաստատում հողէ ծածկի տակ մինչև աշնան առաջին ամսի վերջը, մինչև այն ժամանակ, երբ բոլոր գեռունները, ինչպէս ասում է ժողովուրդը, ծակ են մտնում, այսինքն ձմեռվայ բնակարանների մէջ են թագնվում։ Այդ ժամանակ պառաւն էլ թողնում էր իր ամարանոցը և անյայտանում էր, որպէս զի մի տաք անկիւն մուրայ Աւե-

տարանոցում կամ շրջակայ գիւղերից մէկում։

Դա անտուն անտէր արարածներից մէկն էր, ապրում էր երկնքի թռչունների պէս. ոչ վարում էր, ոչ հնձում, բայց մի կտոր հաց ունէր.—մէկը այն մարդկանցից, որոնց մոռանում է մահը և որոնք ապրում են ամէն տեսակ նեղութիւնների մէջ ու, կարծես, ծանր հանգամանքներից են ոյժ ու կենսունակութիւն քաղում իրանց համար։

Ցերեկները պառաւը քիչ էր այցելում իր անօրինակ բնակարանը։ Այդ ժամանակ մի փոքրիկ աղջիկ, որի մարմինը հազիւ էր ծածկում կեղտոտ, անթիւ կարկատաններով պատած մի շապիկը, սկսում էր թափառել աղբանոցի բարձր լանջերի վրա։ Նա պառաւի անբաժան ընկերն էր։

Ո՞վ էր դա։ Ինքը պառաւը ասում էր թէ իր աղջկայ թոռն է, որբացել է վեց ամսական հասակում, այն օրից մնում է իր մեծ տատի մօտ և այլ ևս մի ուրիշ բան չունի այս աշխարհում։ Բայց թէ ո՛րտեղից էր ինքը՝ այդ մեծ տատը, ո՛ւր էր մնացել նրա տունը, այդ մասին հաստատ բան յայտնի չէր։

Եւ ոչ ոք էլ մանրամասն հարց ու փորձ չէր անել։ Ի՞նչ կարիք կար։ Ամէն տեղ յայտնի էր, որ Փէրին—այսպէս էր պառաւի անունը—ձրիակեր մուրացկան չէ, այլ, ընդհակառակն, հարկաւոր մարդ է։ Նա հաց ստանում էր իր արած ծառայութեան փոխարէն։

Ի՞նչ էր նրա արածը։

Նստել հիւանդի կողքին, լուռ ու մունջ նայել, դրստել նրա բարձը, ծածկել ճակատը, զարմանալի տոկունութեամբ քշել ճանճերը. ցաւալի ձայնով շշնջալ տանեցիների հետ, երբ հիւանդի դրութիւնը անյուսալի էր դառնում, ախ ու վախ անել և դրա հետ ծեծել իր ծնկները իբրև մեռնողի ամենամօտիկ ազգական. ապա —երբ մահը տանում էր իր զոհին—ամբողջ օրերով սուգ կանչել, լացացնել ոչ միայն ազգականներին, այլ և օտարներին։ Սրանք էին Փէրիի պարապմունքները։

Ուրախութեան հետ նա գործ չունէր։ Այնտեղ, ուր կատարվում էր կամ հարսանիք, կամ կնունք, կամ հասարակ խնջոյք, Փէրին չէր երևում և եթէ հազարից մի անգամ երևար էլ, մի կտոր հաց կը խնդրէր մուրացկանի նման և իսկոյն կը հեռանար, չը կարողանալով շնորհաւորել, բարի ցանկութիւններ յայտնել։ Սգատուն... այդտեղ նա տէր էր։ Ղեկավարում էր, բարկանում էր, հրամաններ էր տալիս, երբեմն նոյն իսկ նեղանում էր ու հեռանում։ Իր բաժին հացն ու եփուածքը նա սգատանից չէր խնդրում, այլ ուղղակի պահանջում էր։

Ամէն ժամանակ, ի հարկէ, սգատուն չէր լինում. բայց Փէրին պարապ մնալ չէր սիրում։ Համարեա օր չէր լինի, որ նա չը գնար հանգստարանը. իսկ այդտեղ օր չէր լինի, որ կանանցից մէկը չայցելէր իր համար թանկագին գերեզմանը, որպէս զի խօսէ նրա հետ, հառաչանք և ողբ թափէ նրա քարերի վրա։ Փէրին, շատ անգամ առանց հրաւէրի, մօտենում էր լացող կնոջը, խլացնում էր նրա ձայնը իր խաղտ հեծկլտանքներով... Ինչ այրող խօսքեր էին թափվում նրա բերանից, ինչ երգեր էր նա հիւսում։ Սգաւորը ինքն իրան կեղեքում էր, իսկ պառաւը իւղ էր ածում նրան այրող կրակի վրա։ Եւ երբ գալիս էր ժամանակը, նա վերջ էր դնում արտասուքներին, բռնում էր սգաւորի թևից ու տանում էր դէպի տուն։ Այժմ նա սփոփում էր՝ գովելով հանգուցեալին։ Նրա համար լաւ էր ամէն մի մարդ, որ պառկած էր հողի տակ. ամէն մէկին հերոսացնում էր, ամէն մէկին անուանում էր թագաւոր, լուսնեակ, առիւծ... Քիչ չէր պատահում և այն, որ նրան որոնում էին գիւղի մէջ. տանը մենակ մնացած մի որ և է սգաւոր խնդրում էր գալ և լացացնել իրան։

Այսպէս էր ապրում փլված տնակի ամարային բնակչուհին։ Մահվան երգչուհին էր նա, և—ամենքն էին ճանաչում—տաղանդաւոր երգչուհին։ Այդ տխուր

պաշտօնը նրան չէր հեռացնում մարդկանցից. նրա հետ հաշտվել էին, ինչպէս հաշտվում են գերեզմանի հետ։

Երեկոյ էր։ Պառաւը այսօր շուտ էր տուն վերադարձել և նստած էր իր տնակի առաջ։ Նրա գոգում պառկած էր կիսամերկ երեխան. իսկ երկու քայլ հեռու, պատի պէս ցցված զառիվայրի տակ, վշշում էր գետակը. Նրա փոքրիկ ալիքները ծփծփում էին վերջալոյսի կարմիր գոյների մէջ, որոնք թափվում էին երկու զարաւոր կաղնիների արանքով։ Ամարային երեկոն իր բոլոր հմայքներով հանդարտ իջնում էր և ամենից առաջ սկսել էր կախարդել այն մեծ ձորը, որ լայնասիրտ բնութիւնը բացել էր այս փոքրիկ գետի համար։ Նրա միւս ափը բարձրանում էր, կազմում անտառապատ բլուրների մի շղթայ։ Այդտեղից, ծմակի միջից, տարածվել էին շինական երեկոյի մեղեդիները. բառաչում էին կովերը, մկըկում էին այծերը, հաչում էին նրանց պահապան շները, կանչում էր հովիւը։ Իսկ այս կողմին, դատարկ տնակի մէջ, ծղրիդը սկսել էր իր գիշերային երգը։

Փէրին լուռ ու մենակ էր այդ կախարդական ձայների, երգերի, սոսափիւնների մէջ։ Նա նայում էր երեխային, նայում էր և իր չորս կողմը ու դանդաղ, շատ դանդաղ կերպով, կարծես օրինակ վերցնելով անուշ քամու տակ կանգնած բոյսերից, օրօրվում էր, որպէս զի օրօրէ իր գոգում ընկած խեղճ երեխային։ Երբեմն նա տանում էր իր ոսկորոտ մատները, խրում էր փոքրիկի խճճված մազերի մէջ և սկսում էր կամաց-կամաց քորել։ Դա գգուանք էր. և երեխան, որ սովոր էր ամեն երեկոյ այդպէս քուն մտնել, արդէն բաց ու խուփ էր անում իր աչքերը։ Տատը երբեմն մռռում էր ինչ-որ աղխուր, շատ տխուր եղանակ—չէ՞ որ նա ուրախ բան չը գիտէր—և նրա այդ խեղդված սուգը խառնվում էր ջրի ու տերևների թեթև աղմուկի հետ, կորչում էր ձորի խորշերում։

Ահա նա լռեց. երեխան քնել է։ Ծղրիդը աւելի բարձր

ձայնով է երգում, կարծես կանչում է տնակի բնակչուհուն։ Բայց պառաւը դեռ մի շատ կարճլիկ երեկոյ ունի աստղերի տակ։

Քնած երեխան ախորժելի տաքութիւն է տարածում Նրա գոգում, սակայն նա անշարժ է, կարծես քարացած։ Նրա պէս է և ամբողջ բնութիւնը. սկսած չոր շիւղից մինչև ամեհի սարերը օրվայ այդ պահին, կարծես, զգալու ընդունակութիւն են ստանում, բայց իսկոյն քարանում են հիացմունքից ու այդպէս դիտում են գիշերվայ խորհրդաւոր ընթացքը։ Թւում էր թէ պառաւն էլ այդ կախարդված առարկաներից մէկն է… Ահա մի ուրիշ հրաշք էլ կաշկանդեց այդ կախարդվածներին. երկնքի արևմտեան անկիւնում շողշողաց լուսնի բարակ մանգաղը. Նա նայեց իւրաքանչիւր տերևի տակից և ինչպէս էր ժպտում…

Միաժամանակ ձորի մէջ երևան եկաւ և մի այլ առարկայ, բայց շարժուն և ոչ թէ կախարդված։

Նա ստուերի նման սլացաւ, անցաւ գետակը. Նա գալիս էր դէպի պառաւի բնակարանը։ Փէրին ոչ մի շարժում չը գործեց, թէև տեսաւ եկողին։ Իսկոյն հասկացաւ որ դա մարդ է. իսկ մարդը, ինչ էլ լինէր, չէր կարող վնասել անտուն, անտէր պառաւին։ Եկողը բարձրացաւ ձորից և իսկոյն նստեց Փէրիի կողքին։ Այդ ժամանակ միայն իմացաւ պառաւը որ իր հիւրը մի գլխաբաց աղջիկ է։

—Չե՞ս վախում, հարցրեց նա։

Այդպիսի կորած անկիւնում գիշերողը չէր կարող վախկոտներից լինել։ Պառաւը այդ ուզեց հասկացնել՝ երկու անգամ թօթվելով իր ուսերը։

—Չե՞ս վախում… ես վախեցնող եմ… Երեխաները փախչում են իմ աչքից, որովհետև ես սարսափելի եմ…

Այդ խօսքերին հետևեց մի վայրենի, անմիտ ծիծաղ, խելացնորի ծիծաղ, որ սարսուռ է ազդում։ Դա նոյն

աղջիկն էր, որ այնքան զարմացրեց Գայիանէին Վարդավառի օրը։

—Ինչո՞ւ չես վախում, հը՞, բացականչեց նա, բռնելով պառաւի թեւը.—դու էլ ինձ նման ես, հա՜...

—Ես քեզ չեմ ճանաչում, վերջապէս պատասխանեց Փէրին։

—Ճանաչում ես... Գլոկված, խայտառակված մի աղջիկ կայ... այդ ես եմ...

Նա յանկարծ փոխեց խօսքը, ձեռքը տարաւ իր ծոցը և մի բուռը պտուղներ հանելով, ածեց քնած երեխայի գօգը։

—Քեզ համար է...

Նրա ձայնը այժմ խուլ էր և դողդոջիւն։ Ծմակից էր քաղել պտուղները։ Մի քանի բուռ էլ հանեց և շարունակեց.

—Ես էլի կը բերեմ։

Ապա մի վայրկեան կանգ առաւ, կարծես ուզում էր խօսքեր գտնել։ Ձեռքը քսեց ճակատին և արտասանեց մի խեղճ աղաչաւոր ձայնով.

—Ինձ համար մի երգ ասա, մի սուգ, որ այս գիշերից էլ սև լինի... Դու լաւերը գիտես, ընտրիր ամենից խիստը, որովհետև ես լաց լինել եմ ուզում։

Փէրին իսկոյն պատրաստվեց։ Նրա գլուխն սկսեց ծանր կերպով տատանվել. դա նշան էր որ գալիս են արտասուքները։ Բայց նա չը գիտէր թէ ո՛վ է իրան այցելողը, ինչ վիշտ ունի և որտեղից պիտի սկսել։

—Սկսի՛ր այն տեղից, ուր կանգնած է նշանած աղջիկը, ասաց տարաժամ այցելուն.—ասա, որ այդ աղջիկը անբախտ էր, որովհետև շատ երջանիկ էր... Գիտե՞ս դու, տեսե՞լ ես... Սև բեղերը ոլորող մի երիտասարդ գալիս էր այն տունը, ուր այդ աղջիկն էր ապրում իր մօր հետ։ Նազլու... աղջկայ անունը... այդ ես եմ։ Մարիամ... մայրս... Մի երեկոյ... սև՛, սև՛ երեկոյ էր... Նազլուին տեսնելու էր գնում ոչ թէ թուխ բեղերով երիտասարդը, այլ երկու դևեր, որոնց մեր կողմի մարդիկ, կեղծաւորնե՛րը, թիւրք են անուանում։ Ես որբ եմ... Գոնէ ատամներս սուր լինէին... Ինչո՞վ պատռեմ, ինչո՞վ ծուատեմ նրանց... Ա՜հ, իմ միսը պղծեցին նրանք և ես չը կարողացայ նրանց միսը թել-թել քաշել։ Յետոյ միայն, երբ անցել էր սև գիշերը, ես տեսայ մի վարազ, որ ունէր սուր ժանիքներ... Լա՛ւ ատամներ... Բայց մենք չունենք...

Նորից էլի այդ ժանիքները խառնեցին նրա խելքը. նորից նրա պատմութիւնը դարձաւ անկապ։

Փէրին հազիւ էր կարողանում մի բան հասկանալ այդ խառնափնթոր պատմուածքից։ Նա իմացաւ, որ այդ գիշերը Նազլուի տանը կատարվել էր մէկը այն գազանութիւններից, որոնք այնքան սովորական էին դարձել վերջին ժամանակները։ Բայց ոչ նշանած աղջիկը, ոչ նրա մայրը չէին կարողացել անյայտութեան քօղ գցել այդ դժբախտութեան վրա։ Մայրը վազել էր իր փեսայի տունից։ Փեսան եկել էր և կռիւը նրա ու երկու գազանների մէջ շուտ կը վերջանար ու լաւ կը լինէր այդ տան պատուի համար, եթէ հարևան տանը քնած գինուորները դուրս չը թափվէին։ Նրանք օգնեցին իրանց ընկերներին և նշանած երիտասարդը ընկաւ տան շէմքում. գինուորի սուրը շատ խոր էր մտել նրա կրծքի մէջ։

—Արեգակը ծագեց, թռչունները երգեցին, ասում էր Նազլուն իր խառն պատմուածքների մէջ.—էլի լա՛ւ էր աշխարհը... Միայն մեր տանը մահ և խայտառակութիւն։ Եկան, շատերը հաւաքվեցին և լաց էին լինում միայն նրա համար, տղամարդի համար։ Իսկ ինձ վրա մի կաթիլ էլ չը գցեցին։ Նրան թաղեցին, իսկ ինձ... Ես մնացի... Եւ ինձ, Տէ՜ր Աստուած, մեռած չեն համարում...

Վերջին խօսքերը դարձեալ գրգռեցին նրա սարսափելի քրքիջը. նրա ձայնը էլի խեղդվում էր վայրենի կատաղութիւնից...

Բաւական էր։ Պառաւը արձակեց իր սրտի կապերը։

Սկզբում դեռ խեղդված ու մեռած էին նրա հեծկլտանքները, կարծես նա շարունակում էր օրօր կարդալ իր անբախտ որբիկին։ Բայց ինչպէս կրակը մահ է գալիս դալար ճիւղերի տակ և յանկարծ բռնկվում է, երբ չոր, այրեցող նիւթեր է գտնում, այնպէս էլ պառաւի ձայնը բարձրացաւ, երբ հասաւ դէպքերը պատմելու րոպէին։

Ողբերը ուժգին հոսանքով դուրս էին թափում, գալարվում էին խաղաղ օդի մէջ, ոռնում էին, խրխնջում։ Ծանր, շատ ծանր էին նրանք, դէպի բարձր չէին գնում, այլ ընկնում էին թշուառ հողի վրա, քարշ էին ընկնում լալով, հառաչելով... Նա միայն սև բեղերը ոլորող երիտասարդին չէր ողբում, որ գերեզմանի մէջ է. ցաւում, խորովվում էր նշանած աղջկայ համար, անիծում էր գժերին, գթութիւն էր հայցում։ Մարդիկ անգութ են, գոնէ երկինքն օգնէր... Մի՞թէ նա էլ չէ տեսնում, որ երկրի վրա թափառողը չափահաս աղջիկ է, անպատիւ, անհերես, խայտառակ... Նրանից փախչում են, ինչպէս սև ժանտախտից և չը կայ մէկը, որ զովացնէ նրա տապակված շրթունքները։ Մարդիկ սովորեցին իրանց քոյրերի և երեխաների խայտառակութեան... Եւ զոհերը շատ են ամեն տեղ. նրանք խեղդվում են ամօթի մէջ...

Մթութեան միջից մի ամբողջ թաղնված աշխարհ նայում էր այս խեղճ տնակին, լսում էր այս թունալից հառաչները։ Հեռուից, ծմակների ծոցից, բուն սկսեց ձայնակցել պառաւին... Կաղնիները այժմ ինչպէս ծանր ու տխուր կերպով են օրօրում իրանց տերևները, կարծես նրանք էլ են սուգ անում։

Իսկ Նազլուն կպել է պառաւի կողքին և չէ համարձակվում շարժվել։ Երջանի՜կ է նա. անձայն արտասունքները հեղեղի նման թափվում են նրա աչքերից։

—Ախ, լա՜ւ է... ի՜նչքան լաւ... բացականչում է նա ամեն անգամ, երբ պառաւը ընդմիջում է ողբը՝ շունչ քաշելու համար։

Նրա մէջ կատարվում էր մի զարմանալի փոփոխութիւն. շշկլված գլուխը թեթևանում էր, այնտեղ մի տեսակ թարմացնող պարզութիւն էր վառվում։ Նա հանդարտվում էր։ Թւում էր, թէ Փէրին զգում է այդ և հէնց դրա համար է, որ ձանձրանալ չը գիտէ։

Նրա վրա մի առանձին ոգևորութիւն էր եկել. կարծես այստեղ, ուր սիրում էր նա մենակ ապրել, ուր ջրերն ու տերևները օր ու գիշեր խուլ պայքար են մղում իրանց մեղմ քրթմնջիւններով,—այստեղ նրա սիրտը աւելի զգացված, աւելի կրակոտ է դարձել։ Նա նայում էր իր գրկում հանգստացած փոքր երեխային և հասկանում էր, թէ ինչու է նրա քունն այնքան քաղցր. փոքրիկ դժբախտն էլ ծծում է այս արտասունքների, այս հեծեծանքների դառնութիւնը... ամենալաւ քաղցրութիւնը ցաւերի աշխարհի մէջ...

Լուսինն անցաւ, կարծես նրան յանկարծ կլանեց մի սև վիշապ։ Մութ է, աստղերն են այժմ, որ ճաճանչում են վերևում։ Ծղրիդը դադարեցրել է իր երգը։ Փէրին վեր է կենում, ներս է տանում երեխային։ Նազլուն նրա հետ է։

—Ի՞նչ դառաւ յետոյ, հարցրեց պառաւը, երբ հեկեկանքները դադարեցին և նա խօսելու կարողութիւն ստացաւ։

Եւ Նազլուն սկսեց հանդարտ ձայնով.

—Նոյն օրը տարան իմ մօրը և նշանածիս հօրը։ Դատաստան պիտի լինէր. դրսում, կռւի մէջ, սպանվել էր մի թիւրք և դեռ մենք մեղապարտ էինք... Իբրև թէ խայտառակութիւն չէր, որ կատարվեց այդ գիշերը, այլ սարքած դաւադրութիւն... Մայրս ինձ ազատելու համար չէր վազել, օգնութեան կանչել, այլ զինուորներին սպանել տալու համար... Եւ մեղաւորը մենք ենք... Օ՜, էլ լաց լինել եմ ուզում...

Հեկեկանքները խեղդեցին նրան։ Փէրին շտապով փաթաթեց երեխային ինչ-որ փալասների մէջ, որ պա-

հում էր իրան յայտնի անկիւնում, և նստեց: Լաց էր խընդրում աղջիկը և նա այս անգամ էլ չը մերժեց. նա մերժել չը գիտէր: Թանձր խաւարի մէջ նրանք չէին տեսնում միմեանց. Նազլուն շօշափելով գտաւ նրան, տարածվեց հողի վրա և այս անգամ գլուխը դրեց նրա ծընկանը: Այսպէս հեշտ էր արտասունք թափել...

Աստղերը ծանր առաջանում էին իրանց գիշերային ճանապարհին, զովութիւնը զգալով սաստկանում էր: Փէրին լռեց, բայց աղջիկը ընկած էր անշարժ: Նա քընել էր...

«Խեղճ»... մի քանի անգամ շշնջաց պառաւը, բայց սիրտ չարաւ շարժել իր ծունկը, խանգարել այդ խոր քունը:

Իսկ երբ քունը սկսեց իրան էլ յաղթահարել, այն ժամանակ նա ամենայն զգուշութեամբ վերցրեց այդ գըլուխը, դրեց իր կողքին, չոր հողի վրա, իսկ ինքը կուչ եկաւ երեխայի մօտ:

Բայց այս երեկոն սկիզբն էր:

Նազլուն սովորեց. ոչինչ չէր կարող հեռացնել նըրան այն մխիթարութիւնից, որ տալիս էր այդ քայքայված տնակը: Եւ աղբանոցի մենաւոր բնակչուհին հակառակ չէր այդ այցելութիւններին: Նրանք սովորում էին միմեանց. երկու սիրտ ձորի գլխին միացնում էին ողբի երեկոները, որոնք դառն արտասունքներից յետոյ բերում էին անվրդով քուն: Նազլուն կամաց-կամաց խելքի էր գալիս: Ի՞նչն էր այդ հրաշքի պատճառը. արդեօք զովացնող արտասունքները, պառաւի մտերմութիւնը, խաղաղ քունը, թէ՞ գետակի ձորը իր գիշերային սքանչելի համերգներով:

Ցերեկները աղջիկը շարունակում էր թափառել կալերի մօտ, ծմակներում, ուր պտուղներ էր հաւաքում պառաւի և նրա երեխայի համար: Բայց կատաղութեան բօպէական բռնկումները այժմ համեմատաբար քիչ էին երեւում և այժմ նրան աւելի յաճախ կարելի էր տեսնել

գիւղում: Փէրին այնքան մտերմացել էր, որ կարողանում էր խօսեցնել նրան: Նոյն իսկ ակլոր Մարթան —փոքրիկ աղջիկը—չէր վախենում նրանից, մեկնում էր նրան իր փոքր ձեռքերը, իսկ մի անգամ մտաւ նրա գոգը և այնքան լաւ զգաց իրան այդտեղ, որ նայեց նրա դէմքին, մատով մի քանի անգամ հրեց նրա ծնօտը, միանգամից արտասանեց իր բոլոր իմացած բառերը և վերջը, հրճուանքի ծայրագոյն աստիճանին հասնելով, բաց արաւ իր ահագին բերանն ու ծիծաղեց...

Առաւօտները, նախ քան միմեանցից բաժանվելը, Փէրին ու Նազլուն նստում էին տնակի առաջ, այնտեղ, ուր առաջին երեկոն Նազլուն պատմեց իր ցաւը: Կաղնիների թանձր շուքը երկարացնում էր հանգստութեան ժամերը:

Բայց մի օր Փէրին սովորական ժամից էլ երկար մնաց. շուտով վերջանում էր, իսկ նա տնից չէր շարժվում: Այդ օրը Մարթան մի հազուադէպ երեւոյթ էր ներկայացնում: Նա բարձրացել էր աղբանոցի լանջի վրա և, երևի, զգալով որ երբէք այդքան բարձր չէր գնացել, մի շարք ուրախութիւններ էր կատարում. կանչում էր իր բարակ ու սուր ձայնով, խօսում ու վիճում էր մէկի հետ, որին երևակայում էր օդի մէջ կանգնած, թաւալվում էր փափուկ աղբի վրա և անդադար ծիծաղում էր: Տխուր ու անձայն ծիծաղով հեռուից նրա ուրախութեան մասնակցում էր պառաւը, որին վաղուց հմայել էր այդ տեսարանը: Մարթան այդքան ուրախ և կայտառ...

Մինչև այժմ գիտէր տատը, որ իր արհեստը թոյն է թափել խեղճ երեխայի մէջ: Երբ ինքը նստում էր սուգ կանչելու, Մարթան հեռանում էր, կարծես գիտէր, որ չէ կարելի խանգարել տատին: Նա չէր մօտենում ուրիշ երեխաներին, իսկ եթէ սրանք գնում էին նրա մօտ, բօպէ չանցած նա այնքան էր նեղվում, որ սկսում էր լաց լինել: Նա սիրում էր մենակութիւն, խաղում էր հան-

դարտ, առանց աղմուկի: Բայց այսօր նա բոլորովին փոխվել է:

Մի՞թէ պատճառը Նազլուն էր: Փէրին մի-մի նայում էր իր առջևը նստած աղջկան, բայց չէր համարձակվում այդ հարցը տալ նրան: Նազլուն լուռ էր, երեսը դարձրել էր դէպի ձորը:

Նրա աչքերի առաջ էլ կատարվում էր այս ձորի համար մի անսովոր բան:

Ինչ-որ տեղից վազէվազ ձորը մտան երեք տղաներ: Թւում էր թէ նրանք խաղում էին, բայց շուտով յայտնի դարձաւ, որ նրանց մէջ սկսվել է կռիւ: Մէկը բաժանվեց և սկսեց փախչել, իսկ միւս երկուսը միաբանված էին նրա դէմ. և նախ քան փախչողը կարողացաւ մի քիչ հեռանալ, խոտի հարուածները թափվեցին նրա մէջքին:

Անգութ էին այդ հարուածները. փախչողը, չը նայած որ չաղ էր ու դանդաղաշարժ, մի յուսահատական թռիչք գործեց և անցաւ գետակի վրայով: Բայց երբ տեսաւ որ ջուրն էլ չը կանգնեցրեց հալածողներին, հաւաքեց իր վերջին ուժերը և սարսափահար վազեց ուղիղ դէպի աղբանոցը: Ուրիշ ճանապարհ չէր գտնում. մինչև անգամ չը նկատեց երկու կանանց, որոնք կարող էին իր պաշտպանը լինել: Գլուխ վերցրած՝ նա սկսեց վազել դէպի բարձր: Կարմրած դէմքի վրա նկատվում էր սարսափելի զայրոյթ. բարկութիւնից նա կծոտում էր իր շրթունքները, հազիւ էր պահում լացը:

Հալածողները կանգ առան ձորի գլխին. այժմ նրանք և՛ ծիծաղում էին, և՛ փախցնում էին նրան իրանց աղաղակներով:

—Ետևից մէլիքի որդուն է նման, ասաց Փէրին.— կարծես Շահնազարն է:

Նազլուն համարեա չը լսեց այդ խօսքերը:

Նրան յափշտակել էին փախչողի տանջանքները: Խեղճ տղայ. ամէն չարչարանք յանձն էր առնում, միայն թէ կարողանայ շուտ բարձրանալ աղբանոցի գլուխը

և ազատվել: Քրտինքը ծլլում էր նրա դէմքից, ծնկները ծալվում էին, իսկ աղբանոցի փխրուն լանջերը չէին թող տալիս, որ ազատ փախչէ. նրա ոտները սահում էին, յետ ու յետ էին գնում: Այդ ժամանակ նա գործի դրեց իր ձեռքերն էլ. չորեքթաթ տալով բարձրացաւ: Ո՜րքան վախկոտն էր . . .

Այդ տանջանքների մէջ տղան տեսաւ Մարթային և կանգ առաւ: Երեխան չէր էլ նկատում անծանօթ տղային, այնքան յափշտակված էր իր երեակայական ախոյեանով, որի հետ վիճում էր շարունակ:

—Նա է... Շահնազարն է, հաստատապէս ասաց Փէրին:

—Խեղճ, բացականչեց Նազլուն.—տես ինչպէս է ուզում ձեռքը մէջքին քսել. երևի ցաւում են ծեծած տեղերը . . .

Ենթադրութիւնը ճիշդ էր. Շահնազարը շփում էր իր թիկունքը, որ ջարդվածի նման էր: Ցաւը սաստկացաւ և նա սկսեց խուլ կերպով տնքալ:

—Խեղճ, նորից արտասանեց Նազլուն:

Բայց «խեղճը» մի սարսափելի բան արաւ: Յանկարծ հեռացրեց ձեռքը ցաւեցնող տեղերից և ոռնալով յարձակվեց Մարթայի վրա: Մի ակնթարթում բռնեց նրա մազերից և ցած գլորեց նրան:

Միայն մի սրտապատառ ճիչ կարողացաւ արձակել Մարթան և գլխի վրա ցած գնաց:

Փէրին խայթվածի նման վեր թռաւ, բայց սարսափը իսկոյն կաշկանդեց նրա լեզուն ու ոտները: Ձեռքերը տարածեց օդի մէջ, կարծես ուզում էր հեռուից գրկել գլորվող երեխային:

—Մարթա... Մար... գոռաց նա սարսափելի ձայնով, և ձեռքերով խփեց իր գլխին:

Այդպէս չէր Նազլուն. սակայն որքան և արագ վազեց նա, դարձեալ չը կարողացաւ օգնել. երեխան զարնվեց մի քարի և ապա, մորթած հաւի պէս, ընկաւ

բարձրահասակ բոյսերի մէջ։

Նրան վերցրեց Նազլուն, և առաջին բանը, որ ընկաւ նրա աչքին, արիւնն էր, որ հոսում էր խճճված մազերի միջից։ Մի ցուրտ զարզանդ վազեց նրա միջով... Նա կատաղեց։ Իսկ Փէրին հազիւ կարողացաւ երկու քայլ փոխել, խլեց երեխային նրա ձեռքերից ու սեղմեց իր կրծքին...

Մահվան խեղճ երգիչը գլուխ էր կորցրել․ նա էլ այժմ չը գիտէր թէ ինչ անէ, ինչպէս չը գիտէին հարիւրաւոր մայրեր և տատեր, որոնց ինքն էր խրատում, հասկացնում, մխիթարում...

Իսկ Շահնազարը։ Զարմանալի էր․ մինչդեռ նրան հալածողները, տեսնելով երեխայի ցած ընկնելը, փախան, ձորը մտան, նա կանգնած էր իր տեղը և անշարժ դիտում էր իր կատարած չարագործութիւնը։ Կարծես կիսամեռ երեխան բաւականութիւն էր պատճառում նրան։

—Մեռնում է, ճչաց Փէրին և մի քանի անգամ կանչեց Նազլուին։

Բայց աղջիկը փախաւ, չուզեց տեսնել թէ ինչպէս են մեռնում։ Փախաւ դէպի բարձր, դէպի այնտեղ, ուր կանգնած էր Շահնազարը։ Չարագործը նոր հասկացաւ Նազլուի դիտաւորութիւնը, փորձեց փախչել, բայց վախը բոլորովին կաշկանդեց նրան և մի ակնթարթում նա աղջկայ ձեռքին էր։

Առաջին վայրկեանում Նազլուն ոչինչ չարաւ, միայն սկսեց դէպի ցած քարշ տալ նրան։

—Թող, գոռում էր բռնվածը մի կատաղի ձայնով, որ ցոյց էր տալիս թէ որքան յանդուգն է նա։

Եւ երբ տեսաւ որ ուշադրութիւն չեն դարձնում գոռոցների վրա, սկսեց սարսափելի հայհոյանքներ թափել։ Սովորաբար նա այս զէնքով էր փախուստ դարձնում խեղճ, աղքատ կանանց, երբ կամենում էր ցոյց տալ նրանց իր քաջութիւնը։ Բայց այս անգամ այս միջոցն էլ չօգնեց։ Ընդհակառակն, Նազլուն յետ դարձաւ

և, բռնելով նրա ականջը, խորին զզուանքով քաշեց։

—Այս դու արիր, փչացած, ասաց նա, ցոյց տալով երեխային, և աւելացրեց.

—Եթէ Մարթան մեռնի, դու այստեղից կենդանի չես հեռանայ։

—Շատ լաւ արի, բղաւեց Շահնազարը լացողի ձայնով. հապա ինչու էին ինձ հալածում... Ես կրակ էի ընկել և սիրտս հովացրի։

Չարագործութեան նպատակը սարսուռ ազդեց Նազլուին. և մի լաւ ապտակ իջեցնելով նրա կարմրած ու մքը դէմքին, աղջիկը փշշաց միմեանց սեղմած ատամների միջով.

—Զզուելի լակոտ... ես քեզ կը խեղդեմ, եթէ երեխան...

Սարսափելի էին նրա աչքերը․ կատաղութիւնից կապտած շրթունքները կծկվում էին։ Շահնազարը վախեց և գործի դրեց իր վերջին զէնքը։

—Թող ինձ, ես մէլիքի տղան եմ, ասաց նա հպարտութեամբ։

Դա աւելի վատ յանցանք էր։ Նազլուն նորից խփեց նրան և աւելի անգթաբար քարշ տուեց իր ետևից։

—Գիտեմ, միամի՛տ եղիր, խօսեց նա դողալով, և եթէ քո հայրը մէլիքից վեց աստիճան էլ բարձր լինի, դու իմ ձեռքից չես պրծնի...

Այդ խօսքերից յետոյ մէլիքի տղան սկսեց լաց լինել։ Լաց եղաւ և Մարթան։ Ի՞նչպէս էր Փէրին հասկացել, որ ջուր պէտք է սրսկել։ Հէնց առաջին անգամից ջուրը հրաշք գործեց։ Երեխան բաց արաւ աչքերը, սկսեց դողալ։ Բախտը օգնում էր Շահնազարին։ Բայց այդ միջոցին ձորից դուրս եկան նրան հալածողները և խնդրեցին որ չարագործի դատաստանը իրանց յանձնեն։

—Մենք կիմանանք... ասաց մէկը, — դա միշտ այդպէս է։

—Վախկոտ, գոչեց միւսը խորին արհամարհանքով։

Փէրին չը գիտէր էլ թէ ինչ են անում իրան շրջապատողները։ Բաւական էր որ Մարթան շունչ էր քաշում և տասը կամաց-կամաց հանգստանում էր. մինչև անգամ սկսեց կամացուկ սուլ տալ...

Բայց Նագլուն ուրիշ կերպ էր հասկանում։ Զարագործութիւնը զգալի պատճառաբանութիւն ունէր։ Միթէ Աստուած Մարթաներին ստեղծում է այն մտքով, որ բախտաւորները տանջեն նրանց, երբ իրանք տանջւում են իրանց նմաններից։ Ո՛չ, այդպիսի օրէնք չը կայ և չէ կարելի արձակել այդպիսի յանցաւորին։ Բայց ինչ անել։ Երկու տղաները շարունակում էին իրանց պահանջը, իսկ յանցաւորը խղճալի ձայնով աղաչում էր, որ իրան ազատեն նրանցից։

—Նրանք երկու հոգի են, ինձ կը սպանեն, կանչում էր մէլիքի տղան և խոշոր արտասուքներ էր թափում։

Դա ճիշդ էր. ուստի տղաներից մէկը յայտնեց Նագլուին, որ ինքը կը հեռանայ, տուն կը գնայ, թողնելով իր ընկերին։ Շահնազարը այդ առաջարկութիւնն էլ չընդունեց։ Այժմ նա մի գլուխ խնդրում էր, որ իրան տանեն իր մօր մօտ։

—Դա դրսումն է հաւի ճուտ, հեգնութեամբ ասաց նոյն տղան,—իսկ իրանց տանը առիւծ է դառնում։ Չը հաւատաս. այնտեղ ինքը կը սկսէ քեզ խեղդել։ Կը կանչէ ծառաներին...

—Ես սրան կը տանեմ ուղիղ իր մօր մօտ, ասաց Նագլուն։

—Մայրը որդուն է պաշտպանում։

—Հիմա էլ կը պաշտպանէ։

—Ամեն ժամանակ պաշտպանում է...

—Օ՜, դա զարհուրելի կը լինի... Տեսնենք։ Բախտաւորներին ցոյց կը տամ թէ ինչ է նրանց պտուղը...

Փէրին էլ համաձայն էր, որ պէտք է Մարթային տանել, ցոյց տալ մէլիքի կնոջը։

—Ես կասեմ, որ այս արիւնը զուր չի անցնի... Թէև խեղճ ենք, բայց արիւն է սա... Թող հատուցում տայ...

Աղքատը գիտէ իր իրաւունքի տեղը. գիտէ որ իր արիւնը գին ունի և այդ գինը պահանջելու համար նա կարող է նոյն իսկ թագաւորի մօտ գնալ։ Փէրին արդար կարգ էր համարում, որ Մարթան չը զրկւի իր արեան գնից։

Քիչ անցած՝ նրանք ճանապարհ ընկան։ Նագլուն գնում էր առջևից, տանելով Շահնազարին, իսկ Փէրին խառել էր Մարթային։ Երեխան ուշադրութիւն չէր դարձնում նրա քաղցր պաղատանքների վրա և ձայն չէր հանում։ Նա շարունակ դողում էր, ինչպէս մի ծիտ, որին նոր էին ազատել բազէի ճանկերից...

Է.

Գայիանէն աջողութիւն չունեցաւ և Հեղինէի մօտ։ Պառաւ կոյսը սկզբում քաղցր էր խօսում, բայց երբ Գայիանէն վերջացրեց իր պատմութիւնը խեղճ, խելագար աղջկայ մասին, նա կնճռեց իր սպիտակ յօնքերը, յանդիմանեց և մի երկար ու խիստ խրատ կարդաց։

Աշխարհը առանց խեղճերի չէ լինում։ Անբախտ մարդիկ նրա համար են ծնվում, որ բախտաւորները տեսնեն ու փառք տան Աստուծուն։ Տեսե՞լ է Գայիանէն, որ թոնրում թխած հացերը միատեսակ լինեն։ Ո՛չ, մէկը շատ լաւ է լինում, միւսը քիչ լաւ, երրորդը այրվում է, անպէտքանում, չորրորդի կէսն է միայն դուրս գալիս։ Աշխարհն էլ մի թոնիր է։ Բայց ինչ գործ ունի Գայիանէն՝ թէ ով ինչպէս է։ Դա մեծերի բանն է։ Նրանք կը տեսնեն, ողորմութիւն կը տան, ինչպէս հրամայել է Աստուած։ Մոռանում է Գայիանէն, որ ամեն ինչ Աստուծու կամքով է կատարվում։ Բայց մանաւանդ մոռանում է, որ ինքը մի աղջիկ է, պիտի ապրի իբրև աղջիկ։

—Ի՞նչ է աղջիկը։

Այսպիսի հարց էր տալիս Գայիանէն մի օր իր դայեակին։ Մէհրին ծիծաղեց, բայց աղջիկը հասկացրեց, որ ծիծաղեցնելու համար չէր հարցնում։ Արեւը ցոյց էր տալիս, որ վաղուց վերջացել է առաւօտեան ժամասացութիւնը, ուրեմն կոյսը շուտով կը գար։ Եւ սակայն Գայիանէն կիսատ թողեց իր դասը, որ պատրաստում էր, փակեց գիրքը և նորից կրկնեց հարցը.

—Ի՞նչ է աղջիկը, ասա՛, Մէհրի։

—Աղջիկը... դա մի կարմիր խնձոր է, որին նախշում են և ուղարկում են մի լաւ, շատ լաւ տղամարդի...

—Կարմիր խնձոր... լաւ խօսք է... էլ ուրիշ ոչի՞նչ։

—Ոչինչ։ Նրան հոտոտում են, պահում են սնդուկի մէջ և նա մնում է կարմիր, սիրուն, աչքի լոյս։

—Բայց գիտե՞ս, Մէհրի, որ կարմիր խնձորը մի միտք ունի իր մէջ...

—Էլ՛ միտք... Բաւական է, ո՛րքան միտք արաւ իմ կարմիր խնձորը, մեռնեմ նրա սիրուն թշերին...

—Չէ, չէ, այդ չէ։

—Հապա ի՞նչ է։

—Կարմիր խնձորը նկարել է ուզում։

Պառաւը ոչինչ չը հասկացաւ։

—Չը գիտե՞ս ինչ է նկարելը... ծիծաղելով հարցրեց Գայիանէն և բաց անելով իր կողքին դրած մեծ աւետարանը, ցոյց տուեց նրա մէջ նկարած գոյնզգոյն պատկերները։

—Հա՛, դրանցից եկեղեցում էլ կան, արտասանեց պառաւը ջերմեռանդութեամբ և երեսին խաչ հանեց։

—Կան, ես մոռացայ այնտեղից սկսել... Ահա ասում եմ՝ նկարել, ինչպէս այս պատկերներն են նկարել։

—Յետո՞յ։

—Գեղեցիկ բան է, չէ՞։

—Սուրբ բան է...

—Ես շատ եմ սիրում։ Մի քանի օր է, ես նայում

եմ, նայում և սիրտս շատ է ուզում վերցնել ու նկարել։ Դժուար է, ինչ խօսք... Բայց ես գիտեմ, որ անկարելի չէ. օրինակ՝ ինչո՞ւ ես չեմ կարող օրինակել այս պատկերը։

—Ինչո՞ւ չես անում։

—Ամենից առաջ հարկաւոր են գոյներ։ Մեր տանը մի քանի տեսակ կան, բայց դրանք քիչ են։ Երկրորդ...

Նա կանգ առաւ, չէր վստահանում շարունակել։

—Ի՞նչ, հարցրեց դայեակը։

—Ես օրինակել չեմ ուզում, այլ նայել ու այնպէս նկարել։ Տեսնում եմ, օրինակ, քեզ և նկարում եմ քո պատկերը գոյն-գոյն թանաքներով...

—Դու, ուրեմն, սուրբի պատկեր չես նկարում...

Մէհրիի այս խօսքերը արտայայտում էին մի տեսակ երկիւղ։ Գայիանէն էլ երկիւղ զգաց, ուստի պատասխանեց դժուարութեամբ, համարեա ամաչելով.

—Ո՛չ, ես ուզում եմ նկարել կենդանի մարդկանց...

—Դա մեղք է։

—Մե՞ղք...

—Այո՛... կենդանի մարդկանց պատկերները չեն դնում եկեղեցում և գրքերի մէջ...

Գայիանէն կանգ առաւ, մտածութեան մէջ ընկաւ։ Բայց յանկարծ գտաւ ելքը։

—Կը հարցնեմ մայր Հեղինէից, եթէ կարելի լինի...

—Բոլորովին չը հարցնես։ Նա կը բարկանայ. նա ինքն էլ քեզ կասէ, որ պատկերը սուրբի պատկեր պիտի լինի... Մնացածը սատանայական է։

—Սատանայակա՞ն... բացականչեց աղջիկը, լայն բաց անելով իր աչքերը։

Նա ապշած էր, բոլորովին չէր հասկանում այդ նոր բանը։

—Այո՛, միթէ չես հասկանում, որ ինչ որ Աստուծունը չէ, սատանայինն է պատկանում։

—Բայց ես ո՛չ եկեղեցու համար եմ ուզում նկարել, ո՛չ էլ գրքի համար։

—Հապա ո՞ւմ համար։

—Ինձ, քեզ, մայրիկի, Յովսէփի և ուրիշների համար։ Կը նայենք, կը տեսնենք։

—Եւ ի՞նչ։

—Ա՛խ, Մէհրի... Գեղեցիկ բանը ինչի՞ համար է... Ինչո՞ւ դու գովում ես Սանդուխտին, որ այնպիսի գեղեցիկ ծաղիկներով գորգեր է գործում։ Գիտե՞ս, գոյներ չը կան։ Օրինակ, ես ուզում եմ մի գոյն, որ այն մեր տեսած աղջկայ դէմքը նկարէր...

—Էլի նա՞։

—Միքաէլ ասում է, որ միայն նրան կարող եմ լաւ նկարել։ Այժմ էլ նա աչքիս առջևն է։

—Ա՛խ, Գայիանէ, դու կարող ես մարդ սպանել, յանկարծ բացականչեց Մէհրին մի այնպիսի խիստ եղանակով, որ մինչև այդ անծանօթ էր Գայիանէին։ Այդ ձայնի մէջ դայեակը խառնել էր բարկութիւնը դառն գանգատի հետ։

—Ի՞նչ ես քեզ համար ցաւ շինել այն դէմքն...

Աղջիկն շտապեց հանգստացնել պառաւին. նա ծիծաղեց ու նրա գիրկն ընկաւ։

—Ցա՛ւ, ասաց նա։—Ես ցաւ չունեմ... Ես... կարմիր խնձոր եմ։ Բայց տե՛ս, Մէհրի։ Ես շատ փորձեր արի և ոչ մէկն էլ չաջողվեց։ Չեմ հաւանում։ Սրանք բոլորովին այն չեն, ինչ ես եմ ուզում։ Զարմանալի՜ է...

Այդ խօսքերի հետ նա համարեա դողալով բաց արաւ մի քանի կտոր թղթեր, որոնց վրա երևում էր մի մարդու նկար, ապա խորին երկիւղածութեամբ նայեց Մէհրիին, ինչպէս նայում է աշակերտը, որ իր ստեղծագործութիւնը հանում է խստապահանջ ուսուցչի հայեացքի առաջ։ Եւ կարմրելով, շփոթված, նա շարունակեց թոթովել.

—Զարմանալի՜ է. քանի գիծը չեմ փոցրած, ինձ

թւում է թէ ամեն ինչ կարող եմ շատ հեշտ նկարել։ Բայց...

Պառաւի դէմքը ցուրտ էր, անհրապոյր։ Նա չուզեց էլ երկար նայել, միայն նրա շրթունքի վրա անցաւ մի թեթև շարժում, որ հեգնութիւն էր արտայայտում։ Աղջիկը հառաչեց և խորտակված ձայնով ասաց.

—Անաջող է, մայրիկն էլ է ասում... Նա էլ կրկնեց քո խօսքերը։

Մէհրին, լսելով որ մէլքի կինն էլ համաձայն է իր հետ, հպարտացաւ և, գէն հրելով թղթերը, պատասխանեց.

—Ասում էի... Յիմարութիւններ են։

Նա չիմացաւ թէ ինչ խիստ հարուած տուեց իր սանիկի սրտին։ Ու չը հասկացաւ և այն՝ թէ ինչո՞ւ Գայիանէն յանկարծ բորբոքվեց, ինչո՞ւ արտասունքը սրբելով, հաւաքեց իր թղթերը, մի և նոյն ժամանակ կարծես ինքն իր հետ խօսելով, ասաց.

—Դու է՛լ, Մէհրի... դու է՛լ կարգին խօսք չունես։ Շատ լաւ։ Ամենքն ուզում են ինձ յուսահատեցնել, բայց ես չեմ յուսահատվի. ես գիտեմ որ կարող եմ... Օր ու գիշեր մտածել եմ... իմ սիրտը կպել է, և ես կը սովորեմ։

—Ա՜հ, ինչպէս է հառաչում, ասաց Մէհրին խիստ զղջացած.—կարծես թէ աշխարհը կը քանդվի... Թո՛ղ այդ բաները, ցաւդ տանեմ. ես լաւ խօսք ունեմ քեզ համար, այն էլ ի՜նչ խօսք...

Եւ երբ Գայիանէն բարձրացրեց իր խոնաւ աչքերը, նա ծիծաղելով պատասխանեց.

—Ես ասացի...

—Ի՞նչ ասացիր։

—Առաջ հարցրո՛ւ թէ ո՞ւմ։ Ասացի նրան։

Դայեակի խորհրդաւոր, փորձիչ հայեացքի առաջ աղջիկը կարմրեց, ինչպէս յանցանքի տեղը բռնված մի երեխայ։ Իսկոյն հասկանալի դարձաւ թէ ով է «նա»։

—Յիշո՞ւմ ես՝ ինչ պատուիրեցիր ինձ Հարմաղբիւրի

մօտ... Դու գիտես թէ ուր է նրա ասողը, դու չուզեցիր որ նա յուսահատված գնայ, եթէ վիճակը...

—Դա խոստովանք էր, վրդովված ձայնով թոթովեց Գայիանէն։

—Այո... իմ երեխան սուտ չէ խօսում։ Բայց ինչ ծածկեմ մեղքս... Չը պահեցի խոստովանքդ։

—Ինչու. մի՞թէ վիճակը...

—Վիճակը խօսեց, շատ լաւ խօսեց, և ես պիտի լռէի։ Բայց ներիր։ Մէհրին չը կարողացաւ լուռ մնալ։ Նրա սիրտը կը ճաքէր, եթէ յարմար միջոց չը գտնէր և չը յայտնէր «նրան» որ զուր ենթադրութիւններ չանէ, զուր չը տանջէ իրան այն հարցով, թէ որքան իմաստուն է վիճակը։ Ինչու հազար ու մի միտք անել, երբ իմ լեզուն կարող էր հաստատուն ասել, երբ նրա օրհնածը իմ ձեռքի մէջ էր...

Աղջիկը այլ ևս չը բողոքեց։ Նա, ուրեմն, համաձայն էր։

—Քո ասածները նա լսեց, ի հարկէ, մեծ ուրախութեամբ, բայց քեզ պէս կարմրեց, քեզ պէս շփոթվեց. առաջին անգամ չը կարողացաւ խօսել, քեզ պէս ամաչում էր։ Երկուսդ նման էք, ինչպէս միջից կիսած մի նուռ։ Նա շուտով հասկացաւ, որ Գայիանէն իր Մէհրիից ծածուկ բան չունի և, վերջապէս, նայեց իմ դէմքին։

Պառաւն աշխատում էր շատ համ ու հոտ մացնել իր պատմութեան մէջ, խօսում էր դանդաղ, իսկ երիտասարդի պատասխանը յայտնելուց առաջ կանգ առաւ։ Նրա աչքերը կուլ գնացին այն կնճիռների մէջ, որ կազմեց ժպիտը, խորին հիացմունքի յայտարարը։

Գայիանէն մի կողմ էր թեքել իր դէմքը, իսկ աջ ձեռքը բարձրացրել էր, պահում էր դէմքի մօտ, կարծես պատրաստվում էր պաշտպանել նրա քնքուշ կաշին մի ջերմութիւնից, որ պիտի գար այրէր նրան։

—Այս խօսքերն ասաց. «Հաւատում եմ. բայց ասա Գայիանէին, որ գոհ չը լինի իր սրտից. նա քիչ բան

գիտէ, շատ քիչ. եթէ գոնէ մի ժամ, մի րօպէ հասկանար թէ 'ինչե՛ր է տանում իմ սիրտը, ինձ մենակ չէր ուղարկի Խաչէն։ Այնտեղ ես չեմ ապրում, իսկ այստեղ սպասում եմ թէ կապրեմ»։ Այսպէս ասաց ու գնաց։

Աղջկայ ձեռքը հանդարտ իջաւ դէմքի վրա։ Երևում էր, որ Մէհրիի հաղորդած կրակը արհամարհեց ամեն մի արգելք և տեղ հասաւ։

—Ահա ինչե՛ր կան քեզ համար, աչքիս լոյս. ապրի՛ր, վայելի՛ր, բախտաւո՛ր եղիր, աշխարհը քեզ պիտի հայէ նախանձով, բայց դեռ դու ես—անմե՛ղ երեխայ—աչքդ գնում աշխարհին և ուզում ես իմանալ թէ ինչ կայ այնտեղ։ Ոչինչ չը կայ, ոչինչ։ Ամեն ինչ շատ է ցածընկած, շատ է դատարկ. ոչ ոք արժանի չէ, որ դու նրան նայես... Նկարել ես ուզում. նայի՛ր թէ ինչ կայ առջևդ, տես ինչն է քեզ վայել։ Նկարի՛ր խաչէնցուն...

—Ինչ ասացի՛ր, ապշած բացականչեց Գայիանէն։

Նա յանկարծակիի եկածի նման էր։ Բայց մի վայրկեանում հասկացաւ դայեակի միտքը։

—Մի՛ ասիր այդպիսի բան, դու սրբապղծութիւն ես կատարում, ասաց նա մի կրակոտ ջերմեռանդութեամբ։—Գիտե՞ս թէ եղել է մէկը, որ հնարած լինի այնպիսի գոյներ... Ո՞վ է սրել այն վրձինը, որ կարողանայ գլուխ բերել այդպիսի մի յանդուգն միտք։ Ես ծոցի քսակ էի ուզում գործել նրա համար։ Շատ բան գիտեմ ասեղնագործութիւնից, չէ՞։

—Օ՜, ոսկի են մատներդ, դու մի հատն ես մեր երկրում։

—Մի՛ գովիր. ես սկսեցի, բայց տեսայ որ ոչինչ չը գիտեմ, չը գիտեմ մի բան, որ արժանի լինէր նրան։ Եւ դէն գցեցի... Ի՞նչ եմ ես որ նրան վայել մի գործ կարողանամ ստեղծել մտքիս մէջ։ Այդ անկարելի է։ Չէ՞ որ նա...

Եւ բռնելով պառաւի գլուխը, բերանը մօտեցրեց

նրա ականջին ու վերջացրեց մի գմայլմունքով, որ շըշնջաց.

—Նա ամենագեղեցիկն է երկնքի տակ...

Մէհրին սկսեց համբոյրներ դրոշմել նրա ճակատին։ Ոգևորվեց, տաքացաւ և նա։

—Բայց մի բան ինձ զարմանալի է թւում,—աւելացրեց Գայիանէն, ազատվելով նրա գգուանքներից.—ինչու նա միշտ այստեղ չէ լինում։

Նրանք նայեցին իրար։ Մէհրին խղճահարվեց, հասկացաւ, թէ ինչն է մտատանջութիւն պատճառում ջահել աղջկան։ Այո, հասկանալի է. ուրիշ ինչ ցանկութիւն կարող է ունենալ մի նշանած աղջիկ, որ աշխարհի մէջ միայն իր փեսային է տեսնում։ Աստուծու գործերը այդպէս հրաշալի են. Խաչէնցին, տասը սարերի ետևից, եկել է և մի հաստ օրհնած մատանին այսպէս կապել է երկուսին։ Բայց Աստուած համբերութիւն էլ է հրամայել... Կանաչ-կարմիր պսակը հեռու չէ...

—Ո՛չ, ես այդ չեմ ասում, ընդհատեց Գայիանէն.—եթէ նա այստեղ լինէր, մենք դուրս կը գայինք տանից։ Գեղեցիկ է մեր երկիրը, բայց լցված է վախով։ Ամառն անցնում է, շուտով Աստուածածին կը լինի, բայց ինչ ենք տեսել... Կանաչները դեղնեցին, ծաղիկները թառամեցին. երկար սպասեցին մեզ, չիմացան որ մենք վախում ենք։ Մի՞թէ նա այդ չէ հասկանում. մի՞թէ չը գիտէ, որ եթէ ինքը այստեղ լինի, մենք չենք վախենայ...

Միամի՛տ աղունակ... Նա երեխայի հասկացողութիւն ունէր դրսի մասին։ Եւ Մէհրին երբէք չէր էլ համարձակվել հասկացնել ամեն բան։

Անզօր էր նրա լեզուն, ինչպէս և ամեն մի լեզու ամբողջ տան մէջ։ Այդ ակարութիւնը նա նորից փաթաթեց գգուանքների մէջ, սկսեց կամաց-կամաց հեռացնել աղունակին դրսի աշխարհից։ Այո, անցել են են ազատութեան օրերը... Գայիանէն այժմ ազատ աղջիկ չէ, որ դուրս գնայ ու ներս մտնէ, երբ կը կամենայ։ Ո՛չ,

հարսնացուների համար սահմանված են խիստ օրէնքներ. պէտք է թաքնվել, չերևալ մարդկանց աչքին։ Հարսնացուի տեղը պուճախն է, իսկ գործը՝ լուռ սպասելը...

Նորից Գայիանէն զգաց, որ դայեակը ծռում է իր լեզուն. նորից նա հասկացաւ, որ պատճառները հնարած են։ Բայց այս անգամ էլ նա մի բան չասաց որ հասկացնէր թէ ինքը միամիտ երեխայ չէ, այլ վերջ դրեց խօսակցութեան ու դուրս գնաց, արտասանելով քթի տակ.

—Կարմիր խնձոր...

Ամառվայ օրը տաքացել էր։ Աղջիկը նստեց փոքրիկ պատշգամբի շուաքում։ Ներքևի յարկի մեծ սրահում լըսվում էին վիճաբանութիւններ։ Աննա-խաթունը գիւղացիներից հարց ու փորձ էր անում տնտեսական գործերի մասին։

Բազմաթիւ դատն գանգատների մէջ նա աշխատում էր անցկացնել իր միտքը—որ մարդիկ չը մոռանան մէլիքի տունը և հնար գտնեն հողային տուրքերի գոնէ մի մասը տալու։ Բայց հակաճառողները այնպիսի զօրեղ փաստեր ունէին, որ այրին հետզհետէ կորցնում էր համոզելու կարողութիւնը։

Գիւղացիներից ոչ ոք չէր ուրանում, որ վերջին տարիները մէլիքի տունը բոլորովին մոռացվածի պէս է, որ նա զրկվել է իր հասոյթներից։ Ո՞վ չէ հասկանում, որ մէլիքի հարստութիւնը գիւղացիների տուած տասանորդն է։ Մարդ չը կայ, որ մոռացած լինի թէ մէլիքն է երկրի տէրը, հասարակաց հայրը։ Բայց և երբէք չէ եղել, որ գիւղացին քաղցած մնայ, երբ մէլիքի հորերը լիքն էին։

—Գիտէ սուրբ Գրիգորիսը, վկայ է սուրբ Ղևոնդիկը, որ մեղը մերը չէ,—ասում էր մի յաղթանդամ ծերունի։—Մեզանում շունչ չէ մնացել։ Լսել ենք սարկութիւն, գերութիւն, լսել ենք հին-հին պատմութիւններ սովի, ժանտախտի, մարախի մասին, բայց այսպիսի դրութիւն երբէք, երբէք չէ եղել մեր տաղերի տակ։ Երկինքը չէ փասել մեր արտերն ու անդաստան-

ները, բայց մենք տկլոր ենք, մեր շապիկն անգամ մեզ չէ պատկանում։ Օր ու գիշեր, շարունակ, անընդհատ, մեզ պլոկում են,—սա չափազանցութիւն չէ։ Դու պէտք է տեսնես թէ ինչ ամենի գազաններ են լոյս ընկնում մեր գիւղերում. կշտացնել նրանց անկարելի է դարձել, որովհետև մեր տների մէջ այլ ևս չը կայ մի նուիրական պուճախ, ուր կարելի լինի մի բան թագցնել։ Եւ մենք տուն էլ չունենք. տները պատկանում են զինուորներին, իսկ մենք նրանց ծառաներն ենք. ինչ ծառաներ, անասունն էլ լաւ է մեզանից, որովհետև չէ հասկանում, իսկ երբ շատ է տանջվում, ընկնում է ու սատկում։ Գոնէ զինուորներին հանէին մեր տներից, պահէին մի առանձին տեղ և մեզ հարկադրէին կերակրել նրանց։ Ո՛չ, ամեն մի տան նստացրել են և նրանք կտրում են մեր կոկորդը բութ դանակով. չեն սպանում, այլ պահում են կիսամեռ, որ լաւ խորովեն մեր տան մէջ, մեր կրակի վրա։ Վերջապէս, մեր ցաւերը մեր սարերից էլ բարձրացան. էլ ուր գնան...

Քանի այսպիսի մրմունջներ էին լսվում մէլիքի սրահում։ Աննա-խաթունը չէր [էլ փորձում սփոփել գանգատվողներին, սփոփել նոյն իսկ մութ բառերով. նոյն իսկ այն յաւիտենական խօսքերով՝ թէ Աստուած ողորմած է։ Ի՞նչ հարկաւորութիւն կար։ Այլ ևս գոյութիւն չունէր մի սփոփանք, որ ազդէր. ինչպէս այլ ևս արտասունք չէր քամում կատաղութեան ծայրին հասած թըշուառութիւնը։ Ո՛չ մի պերճախօսութիւն, ո՛չ մի ողբ չէր կարող հասկացնել տալ այնպիսի մի բան, որ յայտնի չը լինէր այրված, մոխիր դարձած սրտերին։ Եւ մէլիքի այրին աշխատում էր չարծարծել այդ մոխիրների տակ թագնված կայծերը, ընդհակառակն, ջանք էր գործ դընում, որ խօսակցութեան նիւթը մնայ նոյնը—տնտեսական գործերը։

Աջողութիւն նա, ի հարկէ, չունեցաւ։ Մերկ ժողովուրդը մերկ ժայռ է, ինչ կարելի էր առնել։ Մնում

էր մխիթարվել միայն նրանով, որ գոնէ անվնաս է Մէլիք-Յուսէֆնի թողած մեծ տնտեսութիւնը, որ մինչև այժմ բաւարարութիւն էր տալիս տան բազմաթիւ պահանջներին։ Զարմանալի էր, որ արհաւիրքների, կողոպուտների այդ տարիներում մի առանձին բախտ հովանաւորում էր այդ տնտեսութիւնը. նոյն իսկ գազանները չէին պատռում մի հատ ոչխար կամ կով։

Բայց Վարանդայում տևական ոչինչ չը կար։ Աննա-խաթունի առաջ կանգնած էր օրհասական այն հարցը՝ թէ մինչև երբ կը շարունակվի այդ բարօրութիւնը և արդեօք ժամանակ չէ՞, որ նրա տանն էլ հասնէ կողոպտելու հերթը...

Գայիանէն համարեա ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում այդ խօսակցութիւնների վրա, թէև դրանք երբեմն ընդունում էին աղմուկի ձև։ Նրա միտքը նորից գրաւել էին լեռների կոյտերը, որոնք անկարգ ցրված էին Աւետարանոցի հարաւային կողմում։ Կային և հարթավայրերի տեսարաններ, որոնք տարածված էին դէպի հիւսիս և արևելք, բայց դրանց այրել ու դեղնացրել էր արևը. այդտեղ էին արտերը, որոնց տէրերը արիւն-արտասունք էին թափում Աննա-խաթունի մօտ, արտեր, որոնք այժմ արեգակի տակ վհատութիւն ու մեռելութիւն էին քարոզում։

Ուրիշ բան էին հարաւային լեռները. միայն նրանց հսկայ լանջերի վրա փռված կուսական անտառներն էին, որ անտես էին անում երկնքի կրակը և շարունակում էին փայլեցնել նրա տակ իրանց հրաշալի կանաչները։ Այդտեղ էր Մանասը։ Նրանից գանգատներ չէին լսվում. նրա գործը լաւ էր այդ զարհուրելի բարձրութիւնների վրա, ծառաստանների մութ խորշերում։

Ի՞նչ տարօրինակ հակադրութիւններ է սիրում երկիրը. մշակված արտերում հեծեծանքներ են լսվում, թէև այդտեղից է գալիս հացը, մարդու երջանկութեան աղբիւրը. իսկ այնտեղ, ուր ոչինչ չէ անկվում մարդ

ձեռքով, ուր վայրի գազանները պատառում են, արիւն են լափում, այնտեղ մարդու զանգատը չէ լսվում։ Ինչու է այսպէս․․․

Արեգակը բարձրանում էր. հարցը մնում էր հարց։ Գիւղացիների մեծ մասը հեռացել էր, սրահում մնացել էին երեք հոգի, որոնք դեռ խօսում էին Աննա-խաթունի հետ։

Յանկարծ դրանք էլ լռեցին։ Բացվեցին դրսի մեծ դռները, Շահնազարը կատաղած ներս ընկաւ, իր ետեւից քարշ տալով գզգզված աղջկան, որ, այնու ամենայնիւ, պինդ բռնած էր պահում նրա փէշերը։ Յետոյ երևաց պառաւ Փէրին՝ երկու ձեռքով գրկած երեխային, վշտահար, արտասուք թափելով։ Աղմուկը սաստկացաւ, երբ դուռը նորից փակվեց. Շահնազարը մռնչում էր, ոստոստում, բարկութիւնից պատռվել էր ուզում։

Առաջին վայրկեանում Գայիանէն չէր հաւատում իր աչքերին և դեռ հարցնում էր՝ նա՞ է արդեօք։

Ապա տեղից վեր թռաւ և ցած վազեց։

Ը

Տեսարանը փոխված էր, երբ նա հասաւ բակը։

Շահնազարը արդէն բոլորովին ազատ էր։ Մայրը տեսնելով նրա դրութիւնը, բարկացաւ, մի ակնթարթում խլեց Նազլուի ձեռքից նրա փէշերը և կոպիտ կերպով դէն հրեց այդ աղքատ աղջկան։ Դա առիթ էր, որ Շահնազարի կատաղութիւնը կրկնապատկվի։ Եւ նա բղաւում էր, լաց էր լինում, սոսկալի հայհոյանքներ էր թափում, մեծ-մեծ քարեր էր փորձում վերցնել, որպէս զի ջարդէ մարդկանց։

Նրա կատաղութիւնը ամբողջովին Նազլուի դէմ էր. նա զգացել էր նոր վտանգ և գտել էր ամենից ապաանկիւն, թաքնվելով Աննա-խաթունի կողքին։ Գիւղերը, որոնց միացաւ և մէլիքի ծառան, աշխատում

էին խանգարել Շահնազարին, խլում էին նրա ձեռքից քարերն ու փայտերը։ Աննա-խաթունն էլ օգնում էր, բայց նրա բարկութիւնը, յորդորները, նոյն իսկ աղաչանքները չօգնեցին։ Ամէն մի դիմադրութիւն աւելի բորբոքում էր նրան։ Նազլուն քաշվել էր սրահի ծայրը, յենվել էր պատին, ձայն չէր հանում. նա պաշտպանվում էր իբրև մի յոգնած գայլ, որին արդէն շրջապատել են չարացած շները. պաշտպանվում էր իր կատաղի հայեացքներով, երբեմն նաև սպառնական դիրք բռնելով դէպի յարձակվողը։

Իսկ Գայիանէն։ Նա էլ փորձեց հանգստացնել իր եղբօրը։ Մի քանի անգամ գնաց դէպի նրան, յայտնեց որ ինքը նրա կողմն է, կծու խօսքեր ասաց Նազլուին։

Նա չէր կեղծում։ Շահնազարը ամբողջ տան սիրելին էր. ինչ որ էլ լինէր, նա էր այդ տան տէրը, նրա ապագայի յոյսը. Մէլիք-Յուսէինը ուրիշ որդի չունէր, որ լաւ լինէր թէ Յովսէփից և թէ Շահնազարից։

Բայց կատաղութիւնը այնպէս էր կուրացրել չար տղային, որ նա նոյն իսկ իր քրոջը չը ճանաչեց, մինչև անգամ նրա դէմ բարձրեց եռոտանի կասկարան, որ ճանկել էր թոնրատանը և ուզում էր խփել Նազլուի գլխին։

Տեսնելով այդ բանը, ծառան զոռով խառեց նրան, ուշադրութիւն չը դարձնելով այն հարուածներին, որոնք սկսեցին թափվել իր գլխին, ու հեռացրեց տանից։ Պարիսպների ետևից էլ գալիս էր Շահնազարի բղաւոցը։ Հէնց որ բակում քիչ հանգստութիւն տիրեց, Աննա-խաթունը և Նազլուն դիմաւորեցին միմեանց կոշտ հարցերով.

—Ի՞նչ արիր, հարցրեց առաջինը։

—Ինչու խլեցիր, ասաց միւսը։

—Դու իմ տունը… իմ երեխային…

—Հայակալ տուն է, արժէ որ նրա մէջ լինի մի այդպիսի տանու տէրը։

—Դու ծաղրում էլ ես… Ճանաչում ես։

—Ճանապարհին գիտէի որ գնում եմ մէլիքի կնոջ մօտ։

—Իսկ դու ի՞նչ ես… Դու քանի գլուխ ունես, քաղցած գիժ, որ բռնում ես մէլիքի տղային ու ձեռք ես բարձրացնում նրա վրա։

—Իրաւունք չունէի, հա՛…

—Ո՛չ մի հարկատու իրաւունք չունի։

Նազլուն լուռ գնաց դէպի Փէրին և ասաց նրան.

—Այստե՞ղ էինք մենք դատաստանի գալիս։

Պառաւը չը լսեց այդ խօսքերը։ Մարթան նորից փակել էր իր աչքերը և նորից Փէրին չէր հասկանում թէ որտեղ է ինքը։

—Փա՛կ աչքեր, շարունակեց Նազլուն.—ո՞ր քունն է դա, մի՞թէ երկար…

Ու նորից դիմեց մէլիքի կնոջը.

—Ես գնում էի, հեռանում էի քեզանից, բայց ո՞վ գիտէ, գուցէ երկարն է երեխայի քունը. և չեմ հեռանայ, այնքան անօգուտ եմ։ Լսիր։ Երկու տղայ ծեծում էին քո որդուն։ Նա փախաւ, այդ քաջութիւնից—կարող ես փառք տալ Աստուծուն—շատ ունի։ Փախչողի առաջ ամեն ինչ ճանապարհ է և այս անգամ քո որդու ճանապարհը աղբանոցն էր։ Այդ ճանապարհին… ո՛չ, ճանապարհին չէր, այլ բաւական հեռու, ընկած էր այս երեխան, որին Աստուած մի շապիկ է միայն տուել։ Նա ծիծաղում էր ինքն իր համար. արև կար, գոլ կար, ջուրը գնում էր, ծառերը օրօրվում էին—ինչո՞ւ ուրախ չը լինէր։ Տղադ տեսաւ նրան և ի՞նչ արաւ. ասա՛, եթէ նրան ճանաչում ես… Օ՛, դու լռում ես, ուրեմն լսիր։ Ցած գլորեց երեխային աղբանոցի գլխից։ Հեշտ էր այդ բանը, ինչպէս հեշտ է մատով ճանճ ջարդելը։ Երեխան ընկաւ քարի վրա, գլուխը պատռեց։

Նա վերին աստիճանի զգուշութեամբ վերցրեց Մարթայի գլխին դցած շորի կտորը. երևան եկան թուխ գանգուրները, որոնց մէջ դեռ չէր չորացել արիւնը։

Աննա-խաթունը, որքան և զգացված էր, չը կարողացաւ երկար նայել այդ ցաւալի տեսարանին, որ ներկայացնում էր փոքրիկ գլուխը։ Իսկ Գայիանէն մօտ վազեց, կռացաւ երեխայի վրա, իր մատները քսեց նրա ճակատին և մի քանի փաղաքշական խօսքեր ասաց։ Անմխիթար Փէրին, այնու ամենայնիւ, մրմնջում էր.

—Աչքերը չէ բաց անում… չէ՛…

—Բայց դա բոլորը չէ, շարունակեց Նազլուն տիրած լռութեան մէջ։—Որքա՞ն թեթևութիւն կը լինէր թէ երկրի և թէ երկնքի համար, եթէ յանցաւորը, յանցանք գործելուց յետոյ, կարողանար գոնէ երկու հատ արտասունք կաթեցնել, զղջման արտասունք։ Քո տղան չէ զղջում, գիտէ, որ լաւ բան է արել և շատ լաւ բան. նա չէ ծածկում, որ իրան ծեծողների վրէժը հանեց այս մանուկից։ Սրա գլուխը ջարդվեց, որպէս զի քո տղայի սիրտը հովանայ… Այժմ դատաստան արա…

Ախտա, անգութ պահանջ էր։ Նազլուն այդ րոպէին հպարտ էր, արհամարհող և մի առանձին բաւականութիւն ու հանգստութիւն էր գտնում մեղադրողի դերի մէջ։ Այս բախտաւոր կնոջ և ամբողջ այս բախտաւոր տան ճակատին շպրտելով այդպիսի սուր ոճրագործութեան մեղադրանքը, նա մի քանի քայլ յետ գնաց և լուռ դիտում էր թէ ինչ կը լինի հետևանքը։

Երբէք մէլիքի դուռը այսպիսի զանգատ չէր եկել։ Նա ճիշդ էր, անհերքելի. Աննա-խաթունը պատրաստ էր ասելու, թէ այո, ո՛վ է պնդում, որ դա վատ բան չէր, անգթութիւն չէր. ի՞նչ մեղ ունէր խեղճ երեխան… Բայց նա չը խօսեց։

Նրա սիրտը սկզբից էր տակնուվրա եղել. նրա մէջ խօսում էր մի մօր ինքնասիրութիւնը, մանաւանդ իրականութեան այն կողմը, որ այսպիսի դժբախտ ժամանակներում դարձել մէլիքի չար ու անգութ զաւակն է իր հօր օջախի սիւնը։ Հպատակը արդարութիւն է հայցում, լալով խնդրում է ուշադրութիւն, ողորմութիւն։

Իսկ այստե՞ղ։ Այնպիսի խօսքեր են լսվում, որոնց չէ կարող կուլ տալ նոյն իսկ այդ աղջկայ հաւասարակից մարդը։ Դա յանդգնութիւն է, դա մի նոր ապացոյց է, որ նոյն իսկ մուրացկանները մոռացել են իշխանական տան պատիւը։

Արդեօք այս անհրեսութիւնը ուրիշից չէ՞ ներշնչված։ Մէլիքի այրին մի վայրկեան կարծեց թէ թիւրքերն են այսքան կատաղեցրել մուրացկաններին. չէ՞ որ նրանք մէլիքի ընտանիքը նուաստացնելու համար միջոց չեն խնայում...

Կարծես մի և նոյն մտքերն էր անում և Գայիանէն։ Նա նայեց Նազլուի դէմքին և գրգռված ձայնով արտասանեց.

—Բայց և այդպէս, դու իրաւունք չունէիր ծեծել մեր երեխային։

—Մայր ու աղջիկ միմեանց վկայ են, պատասխանեց Նազլուն, նորից առաջ գալով։—Վերջացրէնք։ Ի՛նչ որ եղաւ, անցել է պրծել։ Այժմ մի բան ասացէք, և ես կը գնամ։ Տեսնում եմ որ տանու առիւծը մեծ յարգանքի մէջ է այստեղ. ամեն ինչ պաշտում է նրան։ Նրան մեծացնում էք, որ մէլիք դառնայ, հա՞...

Դարձեալ նա կծեց, դարձեալ մէլիքի այրին կրակ ընկաւ։ Նա էլ գործադրեց նոյն հեգնական եղանակը և ասաց.

—Ասենք թէ այդպէս է, դու համաձայն չէ՞ս...

—Դուք ինձանից համաձայնութիւն չէք հարցնի, բայց կը պահանջէք, որ աղօթք անեմ մեր իշխանի համար։ Դա իմ պարտքն է. կը խնդրեմ որ երկինքը հազարներով թափէ Մարթաներին մեր երկիրը։ Նրանք բախտաւոր չեն լինի, և հարկաւոր էլ չէ որ լինեն, միայն թէ մէլիքը միշտ հովացնէ իր սիրտը։

—Անամօթ... շշնջաց այրին խորին զզուանքով։

Բայց նրան և միւս լսողներին շամփրեց աղջկայ սուր քրքիջը։

—Անամօթ, կրկնեց նա և, զսպելով իր սարսափելի ծիծաղը, գլուխը կախ արաւ ու շարունակեց.—դա շատ թոյլ խօսք է, դա իմ ամբողջ անունը չէ։ Ինձ վրա չը կայ միս, որ ամաչել, կարմրել իմանայ. համարիր որ ես դուրս եմ եկել գերեզմանից, ուր իմ ոսկորները սկըսել էին փտել. դուրս եմ եկել, մեռած եմ, մարդկանց շարքից ջնջված... Քեզ ի՞նչ օգուտ... Եկել եմ որ ասեմ... մի՞թէ իմ անամօթութիւնը կը մոռացնէ այս բանը...

Նա նորից ցոյց տուեց երեխային։

—Սուրբ Ղեւոնդիկ, համբերութիւն տուր, աղաղակեց Աննա-խաթունը, անօգնականի պէս նայելով իր շուրջը։—Ի՞նչ անեմ։

Այդ հարցը նա տալիս էր ներկայ եղողներին։ Բայց ոչ ոք չը գիտէր թէ ինչ պիտի անէ նա։ Գիւղացիներից մէկը հեռացել էր, մնացած երկուսը կանգնել էին հեռու և զարմացած նայում էին։

Զարմացած էր և Գայիանէն։ Ինչե՞ր է ասում այս աղջիկը։ Եւ ո՞վ է ասում թէ նա խենթ է։ Տես, ինչպէս նորից նրա աչքերի մէջ ցոլաց վրդովմունքի արտայայտութիւնը. տես, նա էլի մի քայլ արաւ դէպի առաջ և էլի բացաւ իր բերանը։

—Այդ հարցին ես պատասխան կը տամ, ասաց նա։ —Ինչ անե՞լ։ Քեզանից չեն պահանջում որ սարեր վերցնես ու տեղափոխես։ Նայիր երեխային։ Մօր արգանդ է մեծացրել նրան, ցաւելով լոյս աշխարհ է բերել, տալով նրան կարմիր արիւն և որքան կարմիր։ Քո տղան հանեց այդ արիւնը, որ քեզ ցոյց տայ թէ փոխ, հացի կտոր, աղբերի վրա թաւալվող մարմնի մէջ էլ վազում է արիւն։ Մի՛ դատիր այժմեան տեսքով. այժմ արիւնը չորանում է, սեւացել է։ Եթէ քո որդուն ծեծողներն էլ քիչ արիւն հանէին նրա չաղ, բամբակի մէջ պահած, հարիւր ձեռքով գգված մարմնից, այն ժամանակ դու չէիր կարող հաստատել թէ քո որդին աւելի կարմիր արիւն ունի։ Հաւատա ինձ, այդ երեխան զարմանալի կարմիր

արեան տէր է. ինքս տեսայ, մի քիչ էլ եթէ մօտ լինէր, այլ եւ կարմիր չէր աւելի, այլ թուխ... Այժմ էլ չես իմանում թէ ինչ պէտք է անել...

Նա լռեց. բայց նրա բարակ ու սուր շրթունքների վրա նստած հեգնական ժպիտը շարունակում էր նոյն հարցը, մի՞թէ չես հասկանում...

Աննա-խաթունի համբերութիւնը սպառվեց։ Ա՛յդքան էլ անբերանութի՜ւն...

—Ո՞վ ես, ինչ ես ուզում, աղաղակեց նա։

Նազլուն շարունակ ժպտում էր։

—Եթէ այդ օձի լեզուն չը պահես, ես այս րոպէին կուղարկեմ քեզ... Թիւրքերի մօտ... Անամօթ...

Նա ինքն էլ զգաց թէ չափազանցութիւն էր այդ սպառնալիքը, որ արտասանվեց մի առանձին պարզութեամբ, առանձին խիստ շեշտով։ Դա ցոյց էր տալիս, որ նա հասել է յուսահատութեան ծայրին։

Բայց որքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ Նազլուն կատարեալ անտարբերութեամբ լսեց այդ սպառնալիքը, մինչև անգամ չը թողեց իր ժպիտը, որ այժմ աւելի թունալից էր և արտայայտում էր լիովին գիւական հեգնութիւն։ Նա պատասխանեց նոյն սոսկալի սառնութեամբ.

—Ես նրանց մօտ եղել եմ... Սա ամօթ է, բայց մի ամօթ, որ մեր ամբողջ երկրի վրա է ընկած։ Դեւերը, որոնց ամենքը—կեղծաւորնե՜ր—մարդ, թիւրք են անուանում, սարսափելի են նրանց համար, որոնք չեն սպասում նրանց..., ձեզ համար... Ինչո՞ւ ես ուղարկում թիւրքերի մօտ. ուղարկելը աւելորդ նեղութիւն է։ Այս հաստ պատերից դուրս ամեն ինչ նրանց ձեռքումն է։ Այնտեղ, ուր վերջանում են ձեր դռները, սկսվում է մեր՝ անամօթներիս աշխարհը, մի բաց ու արձակ տեղ, ուր մի շիւղ անգամ չը կայ, որ մենք վերցնենք ու կոխենք մեր աչքերի աչքը։ Իսկ այստեղ հաստ պատեր, աշտարակներ, ահագին փականքներ... Այստեղ դուք մտածում էք,

հսկում էք օր ու գիշեր, վախում էք. իսկ դրսում... մենք այրվում ենք, գիտենք որ մի կտոր քար, մի երկաթ չի վերկենայ մեզ պաշտպանելու... Գիտենք որ մեզանից բարձր երկինք կայ, որին մեր ձայները չեն էլ հասնում։

Բարկացած ժամանակ այրին մի կատարեալ տղամարդ էր։ Նրա աչքերը բոցբոքվեցին, ճակատի վրա կուտվեցին սպառնալից կնճիռներ։

—Լեզուդ պապանձվի... ճչաց նա մի սարսափելի ձայնով և գնաց դէպի Նազլուն։

—Դո՛ւրս, աներևս բօզա... գոռաց նա և մեկնեց իր ձեռքերը, կարծես ուզում էր ճանկերով պատռել նրա դէմքը։

Րոպէն վճռական էր։ Գայիանէն մի ցնցում զգաց և առաջ վազեց։ Մի աներևակայելի կարճ միջոցում նրա մէջ հարց ծագեց թէ ում օգնել։

Նա մօտեցաւ իր մօրը, նրան էր ուզում բռնել, օգնում էր սարսափելի աղջկան։ Բայց այդ միջոցին մի ուրիշը բռնեց նրան ու յետ քաշեց։

Կոյս Հեղինէն էր դա, որ մի ակնթարթում կանգնեց մէլիքի կնոջ և նրա ախոյեանի մէջտեղ։

Պառաւ վանականի վրա չէր մնացել սովորական հեզութիւնը։ Նրա դէմքը թխպած էր, իսկ կլոռած յօնքերը, միմեանց սեղմած կնճռոտ շրթունքները ցոյց էին տալիս որ նա, ինչպէս ասում են, հանել էր իր փշերը։ Աննա-խաթունը յետ գնաց, բայց կատաղի յուզմունքը նրան չէր թողնում, կցկտուր մրմունջներ էր հանում։

—Օ՛, երեսը... Տէր Աստուած... այդպիսի երես...

Ապա Հեղինէն նայեց Նազլուին։ Սա տհաճութեամբ շուռ տուեց իր դէմքը և սկսեց դանդաղ քայլերով հեռանալ։ Բայց Հեղինէն էլ քայլեց նրա հետ։

—Որբի համար դատաստան չը կայ... այս աշխարհը կը քանդվի, բացականչեց Նազլուն։

Յետոյ, դառնալով դէպի Հեղինէն, նայեց նրան, կարծես ուզում էր ճանաչել, և աւելացրեց.

—Սա էր... Այն առաւօտը, երբ ես սրտաճաք, պատրաստված փախչում էի, Աստուծու խաչը երևաց աչքիս․ ինչպէս լաւ էր նայում նա, կանչում էր ինձ... Վազեցի վանքը․ սա էր որ ինձ դուրս արաւ և ասաց որ կորչեմ այդ տեղերից, որովհետև կարող եմ նրանց փչանել... այսինքն բոլոր բախտաւորներին... Պինդ պահվեցէք, բախտաւորներ, չը քսվէք դժբախտներին...

Հեղինէն հասաւ նրան, մի քանի անգամ բռունցքով խփեց նրա գլուխը ետևից։ Իսկ նա յետ էլ չը նայեց, այլ արագացրեց քայլերը և շտապով հեռացաւ։ Դուռը նրա ետևից փակեց ինքը, Հեղինէն։

—Ես զարմանում եմ քո խելքի վրա,—ասաց նա, վերադառնալով Աննա-խաթունի մօտ։

Յանդիմանութիւնը անխնայ պիտի լինէր։ Բայց նա յանկարծ կտրեց իր խօսքը և, մօտենալով Գայիանէին, որ դեռ պլշած նայում էր դռներին, կարծես դեռ տեսնում էր աղջկան, քաշեց նրա թևը և հրամայեց գնալ տուն։ Այս անգամ էլ չը մոռացվեցին սովորական յանդիմանութիւնները թէ նա խառնվում է ամեն գործի մէջ, մոռանում է որ ինքը աղջիկ է, մի ժամանակաւոր աւանդ այս տան մէջ։ Յետոյ կոյսը գնաց Փէրիի մօտ, նրան էլ յանդիմանեց, հասկացրեց որ աշխարհը չէր քանդվի, եթէ երեխայի գլուխը քիչ էլ աւել պատռվէր։

Փէրին այժմ նստած էր հողի վրա և լաց չէր լինում, որովհետև Մարթան մի-մի բաց էր անում իր աչքերը։ Նա լսեց Հեղինէի բերանից և յուսադրական խօսքեր։ Ոչինչ, կանցնի, պէտք է լուանալ արիւնը, դեղ դընել վէրքի վրա։ Թող այժմ Փէրին գնայ խոհանոց, մի կտոր բան տայ երեխային, մնացածը կը կարգադրէ ինքը, կոյսը։

Թէ Փէրին և թէ Գայիանէն կատարեցին նրա պատուէրները։ Եւ միայն այդ ժամանակ նա շարունակեց իր կիսատ թողած խօսքը։

—Այո, շատ եմ զարմանում. օձերդ դրել ես մի

մրրը մուրացկանի ձեռքում, խօսում, վիճում ես, կարծես նրա ընկերն ես։ Ճանաչում ես՝ ով է նա։ Անօրէնները պղծել են նրան և այդ օրից նա զէն է գցել ամօթը...

Այրին զայրոյթից խօսել չը կարողացաւ. նա միայն տխուր կերպով շարժեց գլուխը, կարծես ասում էր կոյսին. «Հեշտ է ասելը»։

Բայց ինչ դժուարութիւն կար․ հօ տեսաւ Աննա-խաթունը թէ ինչպէս շուտ վերջացաւ ամեն բան։ Ժամանակները այնպէս չեն, որ դեռ ամեն մէկին ականջ դնես, խօսք հասկացնես։ Գլուխ պահելու ժամանակներ են. ով խեղճ է, հեշտ մոլորվող, նրա գլուխը կուտեն ագռաւներն անգամ...

—Չեմ ուզում որ անէծք լինի,—վերջապէս ասաց այրին։—Իմ տունը կը քանդեն այդ ագռաւների կռանչոցները։

Հեղինէն խօսք չունէր դրա դէմ։ Կղերը նախապաշարմունքների հզօր պաշտպանն էր. նա ինքն էլ հաւատում էր դրանց և վաւերացնում էր իր գրքերի խօսքով։ Իսկ Աւետարանացի միանձնուհին կատարեալ ֆանատիկոսութեան էր հասցրել իր հաւատը նախապաշարմունքների վերաբերութեամբ։ Ուստի նա հաստատեց մէլիքի կնոջ ենթադրութիւնները։ Այո, անէծքը չորացնող է։ Գրքերը լիքն են անէծքի զօրած աւերմունքների նկարագրութիւններով։ Անէծքի սկիզբը Աստուած դրեց, երբ Ադամն ու Եւան մեղանչեցին։ Եւ հէնց այդ է պատճառը, որ եկեղեցու պաշտօնեան աշխարհի հզօր իշխաններին տապալում, ոչնչացնում է իր անէծքով։ Դա մի զէնք է, որից սարսափում են երկինքն ու երկիրը։

Եւ կոյսը երկար բացատրում էր այդ բանը, ցոյց էր տալիս թէ ինչպէս Աննա-խաթունը կարող է ազատ պահել իր տունը ամբախի անէծքներից։

Իրիկնադէմին մէլիքի դռներից դուրս եկաւ Փէրին։ Այժմ նա յուսահատ չէր․ լիուլի վարձատրութիւն էր

ստացել և Մարթան էլ լաւ էր։ Երեխային առաջին անգամից դժուար էր ճանաչել. նրան հագցրել էին նոր շորեր։ Տատի գրկում հանգիստ պառկած, նա շուտ-շուտ բաց էր անում իր անկենդան աչքերը, տխուր ու թոյլ կերպով ժպտում էր և բռնելով իր նոր շապիկը, ցոյց էր տալիս տատին։

—Հա՛, հա՛, քոնն է մատաղ լինեմ, քոնն է, տեսնո՞ւմ ես ինչ լաւն է,—ամեն անգամ կրկնում էր տատը և աւելացնում.

—Հիմա մենք յաճախ կը գնանք մէլիքի տունը, ամեն օր կը գնանք, եթէ կամենանք։

Երեխան աւելի ուրախանում էր, իսկ մի-մի այնքան սաստկանում էր նրա հիացմունքը, որ մոռանում էր իր թուլութիւնը, թեւը մօտեցնում էր բերանին և համբուրում էր նոր շորը։ Փէրին կանգ էր առնում, որ լաւ համբուրէ նրա ճակատը և արտասունքն աչքերին՝ արտասանում էր.

—Խեղճ երեխայ... խեղճի՜ մատաղ...

Ու շարունակում էր քայլել դէպի իր տնակը։

Այս անգամ սովորականից շատ երկարեց Փէրիի և Նազլուի երեկոն աստղերի տակ։ Բայց անհամեմատ շատ երկար էր այն երեկոն, որ անցկացրեց Գայիանէն։ Քունը չէր մօտենում նրա աչքերին, որովհետեւ դրանց առջեւ բացվում էր նոր աշխարհ—իրական աշխարհը, որ ապրում էր, շունչ էր քաշում մէլիքի փառաւոր ամրոցի շուրջը...

Թ

Օգոստոսի կէսին սարերում արդէն աշուն է։ Գալիս են ցուրտ գիշերներ և ցած են քշում խաշնարած ժողովուրդը, որ նոր էր բարձրացել գագաթների վրա, որպէս զի չը զրկէ իր հօտերը այնտեղի փափուկ կանաչներից, հրաշալի ջրերից։

Գիշեր էր, հարաւի մութ գիշերներից մէկը։

Լեռնային Վարանդան ոչ մի տեղ այդ ժամանակ այնքան ահարկու չէ, ինչպէս Տումի գիւղի շրջականերում։

Քիրսի շրթան, ոչ մի տեղ չը բաժանվելով իր կուսական անծայր անտառներից, այստեղ կտրատվում է, ներկայացնում վայրենի պարի տեսարան. աջ ու ձախ, դէպի ամեն կողմ, ցցում է ոտներ, ճիւղեր, բազուկներ, թիկունքներ ու լանջեր, կուտակելով այդ բոլորը ահռելի ձորերի մի աներեւակայելի խառնուրդի մէջ այնպէս, ինչպէս սիրելի է եղել իր սանձարձակ քմահաճութեան։

Ցերեկն անգամ, երբ պարզ երկնքի մէջտեղը մեխված արեգակը ողողում է ամեն ինչ լոյսի և ջերմութեան մէջ, այս կողմերում բռնացած է անլոյս թագաւորութիւնը. նա թանձր ստուերներ է խիտ անտառների մէջ, կիսամթութիւն է անթիւ ծուռ ու մուռ խորշերում, կատարեալ խաւար է նեղ, անողորմ կերպով սեղմված կիրճերում։ Եւ երբ անցնում է լուսատուն, բոլոր բաց և ծածկված անկիւններից յաղթական հոսանքով դուրս է սողում մութի թագաւորութիւնը, արագ կազմվում է, խառնում, տարածվում է ու կլանում բոլոր լեռնային տիտանները, կախ է ընկնում երկնքից և սովորականից առաջ վառում է նրա անհամար ճրագները...

Այսպէս է լեռնային քաօսի գիշերը...

Արեւմուտքը դեռ բոլորովին չէր ընկղմվել համատարած խաւարի մէջ. այնտեղ դեռ կար վերջալոյսի աղօտ, մահամերձ շառաւիղը, որ հազիւ նշմարելի ցոլքեր էր տարածում երկնքի ծայրում և նրա մի կտորը պահպանում էր խաւարի կլանող անդունդներից։ Այդ մարող լոյսերի մէջ ցցվել էր Դիզափայտի վիթխարի մարմինը։

Դա Քիրսի արբանեակը չէ. տիրապէս անջատվել է, նստել լեռնաստանի մէջ և ոչ մի հսկայ այս կողմերում չէ հասնում նրա բարձրութեան։ Իր փառահեղ առանձնութիւնը նա միայն ամպերով չէ զգվում, որոնց այնքան

սիրում է փաթաթել իր ժայռոտ կատարներին. Նա որոշվում է և իր արտաքինով: Ատում է անտառը. դրա փոխարէն նա շռայլութեան հասնող առատութեամբ զարդարում է իր մարմինը կանաչ, ծայրայեղ կանաչ խոտերով և ամէն գոյներ ցոլացնող ծաղիկներով: Դիզափայտ—դա երկրից մինչև երկինք բարձրացած մի անհուն ծաղկանոց է . . .

Նրա արևելեան լանջերից բաւական հեռու, այնտեղ, ուր չքանում է ծաղիկների ծածկոցը և անտառները նորից խլում են հողը ու աստիճանաբար ցած են գնում, դէպի Տումիի գետակը, մի թեք ու ընդարձակ դաշտավայրի վրա, երևում էին կրակներ:

Բոցերի մի մեծ խումբ էին դրանք, ցրված զանազան կողմերում և հեռուից սիրուն տեսարան էին ներկայացնում: Մինչդեռ մէկը յանկարծ բռնկվում էր, բարձրանում, միւսը նուազում էր, ցած ընկնում, երբեմն նոյն իսկ անհետանում: Եւ այսպէս փոփոխաբար: Կրակը անդադար լափում էր չոր նիւթերը և անդադար նոր ու նոր պաշարներ էր պահանջում իր գալարուն լեզուների համար:

Հովուական այդ խարոյկների շուրջը գիշեր էր անցկացնում Թափառական քրդերի ոչ այնքան խոշոր մի հատուած: Երեք գիշեր էր, որ նա այսպիսի հրավառութիւն էր սարքում երկնքի տակ: Նա վերջացրել էր իր գործը սարերում և այժմ դանդաղ կերպով ցած էր գնում դէպի իր ձմեռոցները:

Խարոյկների մօտ երևում էին Թաղիքէ բազմաթիւ վրաններ, որոնց տակ ամբողջ Թափառական համայնքը ընկղմված էր խոր քնի մէջ: Դրսում այդ քնի պահապաններն էին մի քանի հատ շներ, որոնք, երես առնելով համատարած անտէրութիւնից, մեծ վստահութեամբ որոնում էին ոսկորներ, իրանց տէրերի թողած պատառները:

Այդպէս չէր վրաններից քիչ հեռու, ձորի լանջերի վրա: Այնտեղ պահապան էին ահագին գամփռները, որոնք

պատառների ետևից չէին ընկած, այլ անկաշառ պահապանի աչալրջութեամբ՝ գրաւել էին այն բոլոր անցքերը, որոնք շրջապատող մութ աշխարհից այստեղ կարող էին բերել թշնամիներին: Իսկ այդտեղ խմբված էր համայնքի ամբողջ հարստութիւնը—ոչխարի ու տաւարի հօտեր, ձիերի մի մեծ երամակ: Սրանք վաղուց վերջացրել էին արածելը և այժմ հանգստանում էին, կարծես խորին ուշադրութեամբ ականջ էին դնում թէ ինչեր է խօսում մութ գիշերը:

Նոյնպէս ուշադիր, նոյնպէս զգոյշ էին և հովիւները՝ թէ քնածները և թէ նրանք, որոնք հերթով արթուն պիտի մնային: Իւրաքանչիւր խշրտոց, իւրաքանչիւր կասկածելի ձայն, որ խորին լռութեան մէջ բարձրանում էր որ և է խորհրդաւոր քայլի գլորած փոքրիկ քարից, հարկադրում էր նրանց գլուխ բարձրացնել, նայել և ականջ սրել:

Այդպիսի ձայներով ու շշուկներով էր հովիւը ճանաչում իր անհաշտ և աներևս թշնամիներին: Գիտէր նա որ Թափառականների ետևից անխուսափելի, որպէս ճակատագիր, գնում է երկնային պատիժը: Այդ պատիժը գայլերն են, որոնք անքուն և անխոնջ, հետազօտում են ամէն մի ափ հողը, որպէս զի ձեռքից չը փախցնեն յարմար ժամը, երբ կարելի կը լինի կամ յանդուգն յարձակում գործել կամ թէ գողի պէս յափշտակել որսը: Եւ ամէն անգամ, երբ գիշերը իր անհասկանալի շշիւններով փորձում է պահապանների արթնութիւնը, թէ չորքոտանի պահապանները և թէ նրանց տէրերը գիտէին որ շրջակայ բարձրութիւնների գլխից այժմ նայում են բազմաթիւ աչքեր, որոնք վառ ճրագների են նման:

Բայց այս գիշեր չորքոտանի գիշատիչները չէին վազվզում այն բարձրութիւնների վրա, որոնք հիւսիսարևելեան կողմից նայում էին Դիզափայտի լանջերին: Գայլերը չքացել էին, երևի մի բան գիտէին:

Եւ իրաւ, միայն նրանց աչքերն էին կարող որոշել,

որ այդտեղ ինչ-որ մարդիկ էին գտնվում, շարժվում էին պապանձված, կատուի անձայն քայլերով։

Ամենից բարձր տեղում, մի ժայռոտ խութի վրա, երկու մարդ պառկած էին և դիտում էին աստղերը։ Դրանք էին միայն, որ խօսում էին, բայց այդ խօսակցութիւնը աւելի բարձր չէր, քան օդի ամենահեզ հոսանքը, որ երբեմն խաղացնում էր խոտի թերթերը։ Երևի այդ էր պատճառը որ նրանք շատ մօտիկ էին պառկած, համարեա միմեանց կպած։

Նրանց խօսքը աստղերի ճանապարհի մասին էր։

Չափվում, որոշվում էր այն տարածութիւնը, որ անցնում էին գիշերվայ այդ պայղուն աչքերը։ Եւ երբ երկուսի կարծիքները համաձայնվում էին միմեանց հետ, խօսքը ընդհատվում էր, իւրաքանչիւրը նայում էր երկնքին։

Աստղերը այս գիշեր դանդաղաշարժ էին երևում. մանաւանդ ծանր էր մի խմբի ընթացքը արևելքից դէպի երկնքի մէջտեղը, ուր ընկած էր Յարդգողի ճանապարհը։

Պառկածներից մէկը կորցրեց իր համբերութիւնը և նստեց։ Ցածրում ամեն ինչ հանգստացել էր, կարծես գետակն անգամ քնաթաթախ ձայն էր հանում։ Խարոյկները մարելու վրա էին. այլ ևս ոտքի կանգնած մարդ չէր մնացել, որ փայտ մատակարարէր. վրանները հազիւ էին նշմարվում նրանց թոյլ լոյսերի շրջանում։ Մեռելութիւնը համատարած էր։

—Ժամանակ է, տէրտէր, ասաց Նստածը։

Նա, որ պիտի տէրտէր լինէր, լուռ վերկացաւ և մի խօսք փնթփնթաց։

—Շուտով այնտեղ կրակ չի մնայ և մենք չենք իմանայ դէպի ուր գնանք։

Պատասխանը համոզիչ էր։ Տէրտէրը ոտքի կանգնեց իր ընկերի հետ միասին։

—Սկսիր այս կողմից,—ասաց վերջինս.—սկսիր Թագաւորի գերեզմանի մօտից։

Տումի գիւղից բարձր, սարի գլխին, գտնվում էր մի հնադարեան գերեզման,—միապաղաղ և խոշոր մի քար, որի վրա գիր ու յիշատակութիւն չը կար։ Բայց ժողովուրդը չէր մոռացել թէ ինչ է դա. նա գիտէր որ քարի տակ թաղվածը մի թագաւոր է, որի անունն է Գագիկ։ Այդ գերեզմանի մօտից պիտի սկսէր քահանան։

Սակայն նա չէր շտապում։ Ձեռքը կոխեց ծոցի մէջ, գտաւ փոքրիկ տուփը, դուրս հանեց, նորից դրեց տեղը։ Յետոյ չոքեց մի ծնկան վրա և սկսեց իր ոտների վրա պնդացնել թարմ ճիւղից ոլորած կապը, որի օգնութեամբ լեռնցին հեշտ կարողանում էր ցած գնալ չոր զառիվայրերով՝ առանց սահելու և ընկնելու։

—Շուտ, տէրտէր, օրը բացվեց, ասաց քահանայի ընկերը մի ձայնով, որ վկայում էր թէ նա ինքն էլ շատ էր շտապում։

—Համբերիր, օրհնած. վերջապէս խօսեց քահանան։ Ինձ միշտ սովորեցրել են չը շտապել և ասել են որ դա աջողութեան մեծ կէսն է։

—Խօսքի ժամանակ չէ, տնաշէն, մենք ուշանում ենք։

Քահանան՝ փոխանակ պատասխանելու՝ նորից հանեց փոքրիկ տուփը։

—Օրհնեալ լինի իմ ծուխը, ասաց նա։—Փոքր է, տուն-տեղ չունի, մկրտութիւն ու պսակ չէ կատարում, բայց մեղքեր քաւել գիտէ։ Իմ ծխի մէջ դու առաջինն ես, Մանաս, քեզանից էլ կը սկսեմ։

Եւ նա մի խիստ ձայնով աւելացրեց.

—Վերցրու փափախդ։

Մանասը իսկոյն վերցրեց։

—Ասա՝ մեղայ Աստուծոյ։

—Մեղայ Աստուծոյ։

—Բաւական է։

Նա երկու մատով տուփից հանեց հաղորդութիւնը և դնելով Մանասի բերանում, ասաց.

—Աստուած ընդունելի անէ։ Քո մեղքերը այնքան

ծանր են, որ հագիւ այս գիշեր քաւես։

Նա սլացաւ դէպի ցած, չիմանալով թէ իր կատաղած խորհուրդը ինչ տպաւորութիւն թողեց իր ընկերի վրա։

Իսկ այդ տպաւորութիւնը զարմանալի էր, մինչև այժմ անծանօթ։

Մանասը իր կեանքում մի առանձին եկեղեցասիրութիւն չէր ցոյց տուել։ Նա մէկն էր այն գիւղացիներից, որոնք եկեղեցու մօտով անցնելիս և ժամերգութիւնը լսելիս միայն խաչ են հանում երեսներին և դրանով վերջացրած են համարում իրանց պարտաւորութիւնները։ Եկեղեցու պաշտօնեաների վերաբերմամբ նա, իբրև ժողովրդի մարդ, սաստիկ նախապաշարված էր։ Նա գիտէր որ եկեղեցին սրբութիւն է, որ իւրաքանչիւր հայ քրիստոնեայ երեք անգամ լինում է այնտեղ—ծնված ժամանակը, պսակվելիս և մեռնելուց յետոյ. բայց կատարելապէս հաւատում էր որ քահանայի կամ վարդապետի պատահելը դժբախտութեան նշան է, որ դևերը և սատանաները ամենից շատ սիրում են նրանց կերպարանքն ընդունել։

Այժմ ինչպէս էր որ նրա խորհրդակիցը, նրա կողքին պառկածը մի քահանայ էր. ինչպէս էր որ նա ինքն էր շտապեցնում այդ քահանային։

Պատճառը պարզ էր. այդ քահանան էլ նրա ընկերն էր։

Նա վաղուց թողել էր խունկն ու բուրվառը, և նրա ծուխը ծմակներում բոյն դրած աւազակներն էին։ Դեռ ցերեկ էր, երբ նա յայտնեց որ գիշերը, որոշ ժամին, ինքը պիտի հաղորդէ բոլոր տղերանց։ Մանասը տուեց իր կատարեալ համաձայնութիւնը։ Եւ այժմ, երբ նա ինքը եղաւ տէրտէրի ծխի մէջ առաջինը, որից պէտք էր սկըսել, հասկանալի դարձաւ թէ ինչ բան է եղել եկեղեցու խորհուրդը։

Բնութեան այս ահաւոր բարձրութեան գլխին, կէս

գիշերային ժամին, ընկեր քահանայի մատները մի թեթև յուզմունք, սրբազան մի երկիւղ գցեցին նրա մէջ։ Կարծես սիրտը դողաց. թւում էր թէ աստղերը այժմ այնքան հեռու չեն և ամեն մի թուփ, ամեն մի խոտ հարցեր է տալիս։ Մե՞ղք։

Պարզամիտ լեռնցու մէջ այս խօսքը այժմ մի անսովոր խիստ արձագանք տուեց։ Արդեօք Մանասը մեղաւո՞ր է։ Այս էին, կարծես, հարցնում ամենքը։

Մեղաւո՞ր։ Գիտէր նա, որ եթէ այդ ժամին Սիւլէյման-բէկը կանգնած լինէր իր կողքին, առանց տատանվելու իսկոյն կասէր. այո, մեղաւոր է, աւազակ է։ Նա գիտէր որ ինքը մեղաւոր է, գազան տիրողի հակայադութիւնների առաջ։ Եւ միայն ինքը չէր այդպէս. մահապարտ մեղաւոր էր ամեն մէկը, որ չէր հպատակվում տիրող անօրէնութեան։ Դա արդէն հասկանալի էր երկու կողմին՝ թէ բռնակալներին և թէ նրանց անլեզու զոհերին։ Բայց ինչ են ասում իր եկեղեցին, իր Աստուածը. չէ՞ որ նրանք այժմ տեսնում են, գիտեն ամեն ինչ։ Իսկ ինչ կասէ նրանց պաշտող ժողովուրդը, երբ վաղը վերջացած կը լինի գործը։ Արդեօք հաշտ կը լինի Մանասի հետ, թէ կանիծէ նրան էլ, նրա գործն էլ։

Բայց ինչ գործ էր դա։

Թափառականների այն համայնքը, որ իջևանել էր ցածրում, այժմ քնած գազանների մի փոհմակ էր։ Արեան ծարաւը երբեք չէր յագենում նրա մէջ. երբեք նա չէր իմացել թէ ինչ է խնայելը, ինչ է ուրիշի կեանքը, սեփականութիւնը։

Իսկ այն ժամանակից, երբ այս լեռների վրա տարածվեց օսմանեան օրէնքը, ցեղապետ Հասանը դարձաւ զարհուրելի անուն. չէր կարելի ասել թէ բորենիի, վագրի անունը այնքան սարսափ էր ազդում, որքան Հասանը, թէև դա մարդու անուն էր։ Նրան շոյում, փայփայում էին թիւրքերը. հեռու չէր այն ժամանակը, երբ, ինչպէս ասում էր այդ շէյխը, ամբողջ գաւառը հպա-

տակված կը լինի իրան և հարկ կը տայ ոչ միայն Թագաւորին, այլ և իրան։ Նա յաճախ գնում էր Աւետարանոց և վերադառնում էր աւելի կատաղած, աւելի անգութ դարձած։

Գաղտնիք չէր որ Սուլէյման-բէկը նրան շարժում էր, բորբոքում։ Բայց ի՞նչ էին ուզում այդ երկու գազանները. չէ՞ որ հայերը հլու հպատակ էին, տալիս էին ինչ որ ունէին։

Այդ հարցը շատ լաւ պարզում էր Տէր-Սողոմոնը՝ Մանասի ընկեր քահանան։ Նա փախստական էր, Զանգեզուրի Խնձորեսք գիւղից։ Նրա պատմութիւնները Մանասը լսում էր յափշտակված։

Իրերի դրութիւնը մի և նոյնն էր բոլոր կողմերում։

Քրդերի ահագին բազմութիւն ապրում էր և Սիւնեաց աշխարհում։ Դաւիթ-բէկի մահից յետոյ Թիւրքերը, տիրելով երկրին, արձակեցին քրդերի սանձը։ Ի՞նչ միտք ունէր այս անգթութիւնը։ Պէտք էր քանդել, ոչնչացնել ամէն ինչ, պէտք էր արիւն և արտասունք տարածել ամէն տեղ, որպէս զի հասկացվի թէ փադիշահի ույժը զարհուրելի է, անխախտելի։

Եւ ինչ։ Չորս տարի է անցնել Դաւիթ-բէկի մահից և ամբողջ Սիւնիքը մահացել է սարսափից։ Երկիւղը—դա ստրուկներին անասնացնելու ամենալաւ միջոցն է։ Եւ միայն անասնացած ստրուկներն էին կարող չորս տարվայ մէջ մոռանալ Դաւիթ-բէկին, մոռանալ նրա գործը։

Բայց այդ դեռ ոչինչ։ Անասնութիւնը այն աստիճանին հասաւ, որ երբ Դաւիթ-բէկի հերոսներից մէկը, Մխիթար սպարապետը, հաւաքեց երկրի ցրված ույժերն ու սկսեց հալածել թշնամիներին՝ նորից պարզելով ազատութեան դրօշակը, ինքը ժողովուրդը, այդ սարսափահար ստրուկը, բռնեց այդ մարդուն, կտրեց նրա յանդուգն գլուխը և տարաւ Թաւրիզի փաշայի մօտ։

Տէր-Սողոմոնը ներկայ էր ստրուկների այդ եղեռնագործութեան։ Ո՛չ աղաչանքները, ոչ խրատները, ոչ

եկեղեցականի անէծքները, ոչ նոյն իսկ խաչն ու աւետարանը—ոչինչ չը կարողացաւ ազդել փչացած արեան վրա, որ վազում էր այդ մարդկանց երակներում։ Մարդիկ, որոնք ցած ու ստոր կերպով թափել էին այդ առիւծի արիւնը, երբ նա քնած էր, պատրաստ էին թափել և իրանց քահանայի արիւնը։ Տէր-Սողոմոնը փախաւ և տարիներ անցկացրեց աստանդական, չը կամենալով վերադառնալ իր անարժան հօտի մօտ։

Սիւնեաց աշխարհը կորած էր. այնպիսի մի ժողովուրդ ինքն էր փորել իր գերեզմանը։

Մնում էր միայն Ղարաբաղը. և ահա այդտեղ էլ գործ էին դնում նոյն միջոցը։ Իր թափառումների ժամանակ Տէր-Սողոմոնն իմացել էր որ Վարանդայի լեռներում բոյն են դրել մի բուռն գժեր և եկել էր նրանց մօտ, հովւում էր այդ փոքրիկ ծուխը։

Բայց միայն այդ հանգամանքը չէր, որ թելադրել էր մի բուռն գժերին սկսել այս գիշերային գործը։ Նոյն այդ Հասանն էր, որ մի տարի առաջ յարձակվել էր հայ գիւղերի վրա և տարել էր մեծ աւար։ Մենք տեսանք թէ ինչպէս Մանասը ընկաւ նրա ետևից, յետ խլեց աւարը, բայց Սուլէյման-բէկը անցաւ գիւղացիների կողմը և օգնեց, որ նրանք կրկին խլեն աւարը ու տանեն։ Կռւի մէջ կոտորվել էին բաւական մարդիկ. հարիւրաւոր ընտանիքներ աղքատացել էին, ինքը, Մանասը, փախստական էր դարձել, իսկ Սուլէյման-բէկը այն օրվանից աւելի բացվել էր և դարձել երկրի հոգեհան հրեշտակը։

Այրված սիրտը վրէժ էր պահանջում։ Ահա ինչու այն գիշեր սարի գլխից գիւղացիների վրաններին գայլեր չէին նայում, այլ զինված մարդիկ։

Ամբողջ երեք օր Մանասը պատրաստել էր իր մարդկանց։ Ամէն բանի մէջ գործադրվում էր Տէր-Սողոմոնի ծրագիրը։ Նա էր մտցրել այդքան կարգ, զգուշութիւն։ Նա էր նախատեսել ամեն մի դէպք, որ կարող էր խանգարել գիշերային յարձակումը։ Եւ ահա այժմ, երբ ժա-

մը հասել էր և նա գնաց միւս աղաներին էլ հաղորդելու, այս լուռ ու խորհրդաւոր ժամին, Մանասը զգաց այն, ինչ մինչև այժմ անծանօթ էր նրա սրտին։

Նա վախ կամ զղջում չէր զգում. Նա անձնուրացութիւն էր, որ գնում էր զոհվելու և միայն այն էր ուզում հասկանալ թէ ինչպէս կընդունվի այդ զոհը վերեւում, աստղերի աշխարհում, և ներքևում, վրդովված մարդկութեան մէջ։

Յանկարծ նա ցնցվեց։ Կարծես մի ահագին հարուած էր այն ձայնը, որ մթութեան մէջ կորած մի հեռաւոր անկիւնից հասաւ նրա ականջին։

Դա մի առաձգական, գազանային ձայն էր, սկզբում խուլ և թանձր. յետոյ նա բարձր, սուր ու բարակ ելևէջներ առաւ և տարածվեց հեռու, հեռու, ծմակների վրա։ Գիշերային բնութիւնը իր լռութեամբ հնազանդութիւն էր յայտնում այդ աղերսախառն ու մի և նոյն ժամանակ սպառնալից, կատաղի հրաւէրին։

Ոռնում էր գայլը։ Նա, կարծես, հասկացնում էր, որ եթէ Մանասը ուշանայ, ինքը կը գնայ դէպի ձորը, ուր այնքան մացառներ կան, կը փորձէ պատռել իրան հանդիպողներին և, եթէ չաջողվի էլ գազանային որսը, մեծ աղմուկ կը գցէ շների և հովիւների մէջ։

Մանասը հասկացաւ որ այդպէս է։ Եւ թողնելով բոլոր մտքերը խութի գլխին, շտապով երեսին խաչ հանեց ու կորաւ խաւարի մէջ...

Իսկ երկնքի աստղերը, որոնց յայտնի չեն երկրի հոգսերն ու վշտերը, դանդաղ ու չափաւոր ընթացքով առաջ էին գնում։ Ո՞ւր էր վերջանում նրանց ճանապարհը։ Այդ գիտէր միայն մի բան, որ սկսվեց երկրի վրա։ Բնութեան մէջ տեղի էր ունենում մի մեղմ փոփոխութիւն։

Կարծես մի ինչ-որ նոր զօրութիւն էր գալիս, հանում էր նը շտապելով, որպէս թէ սպասելով իր հերթին։ Ո՞րտեղից էր այն հրաշալի զովութիւնը, որ իջաւ սարերի վրա և սկսեց մրսեցնել։ Կարծես ինչ-որ անյայտ դռո-

ներ լայն բացվեցին և այնտեղից դուրս եկաւ մի կենդանարար շունչ, որ ընկաւ օդի մէջ, հաղորդեց նրան թարմութիւն և թեթևութիւն։

Գիշերվայ կապանքները թուլանում էին. խաւարասէր թռչունները, ծանր թափահարելով իրանց թևերը, շատ պտոյտներ էին գործում, երևի վերջացրած էին համարում գիշերային ճանապարհորդութիւնը և այժմ մօտենում էին իրանց բոյներին։ Համատարած թուխ գոյնը նօսրանում էր։ Լուսաբացի կարապետները թռչում էին միմեանց ետևից. ինքը, լոյսը, շատ հեռու չէր...

Յամր, բայց հաստատ քայլերով, չը շտապելով, բայց և ոչ յետ մնալով, սարի լանջն ի վայր գնում էին մարդիկ։ Ամենքին ղեկավարում էր վերին աստիճանի լարված ուշադրութիւնը։ Քայլը չափված էր, բոլորովին անձայն։ Նոյն իսկ թփերի մէջ քնած վախկոտ կենդանիները չիմացան, որ իրանց մօտով անցնում են մարդիկ և նըրանցից ամեն մէկը ձեռքին բռնած ունի մի հրացան։ Ամեն ինչ օգնում էր իջնողներին, ամեն ինչ ծածկում էր այդ շարժողութիւնը, խաբում էր, քօղարկում։

Երևում միայն մեծ ու փոքրիկ ձորերը, փոսերը, թումբերը։ Մնում էր մի զառիվեր եւ, և այնուհետև ծուռ ու մուռ քարափն էր, որ պայտաձև կիսաշրջան էր տալիս, սեղմելով զետակի ձորը։ Այստեղից շատ մօտ էին վրանները, որոնց առաջ հազիւ պլպլում էին խարոյկները, կարծես նրանց էլ կաշկանդել էր քնի թմրութիւնը, որ այնքան սաստկանում է լուսաբացից առաջ։

Գետի փրփրած ալիքները կլանեցին մի քանի քարեր, որոնք վերևից ընկան։ Մարդիկ հասել էին նշանակած տեղը, այժմ աւելորդ էր զգուշութիւնը։ Բայց չանցած՝ պադդացին կայծակներ, հա[illegible] թնդիւններ լսվեցին։ Ծուխը չերևաց, մութը դ[illegible]ր էր ձորի մէջ։ Հարիւրաւոր արձագանքներ [illegible] լէն վազեցին մեռած ծմակներում, տարածեցին [illegible] սկսեցին ճոթռտել նրանց խուլ ծոցերը, կար[illegible]տում էին դարաւոր

բուները, հսկայ ճիւղերը։ Միաժամանակ շները ահռելի աղմուկ բարձրացրին, որի հետ շուտով խառնուեց կոտորուող մարդկանց վայնասունը։ Լեռնային վեհափառութեան անկիւնը մի ակնթարթում դժոխքի փոխուեց։ Կարծես պատռուեց գետի ձորը և անհամար դևեր ծածկեցին շրջակաները։ Հրացանաձգութիւնը գնալով սաստկանում էր։ Մարդ ու անասուն խառնուել էին, արիւնահեղութիւնը անգութ էր, անխնայ . . .

Եւ երբ արեգակը երևաց Տողի հսկայատիպ սարի գլխին, ծառերի երկարաձիգ շուաքները աջ ու ձախ շերտեր գցեցին մարդկային վրէժի զարհուրելի պատկերի վրա։

Դաշտավայրը, ուր այդ գիշեր մարդիկ էին ապրում, այժմ ներկայացնում էր մահ և ոչնչութիւն։ Վրաններից մնացել էին մոխրի կոյտեր. դրանց մօտ, դրանցից հեռու, խոտերի մէջ, ծառերի տակ, փռուած էին դիակներ և անշարժ, քարացած աչքերով նայում էին ծիծաղկոտ, գեղեցիկ երկնքին, նայում էին զարմացած, ապշած։

Դարձեալ փափուկ ու սիրուն էր վաղորդեան աշխարհը. մահը անցել էր, և այստեղի մշտական բնակիչները դարձեալ շարժվում էին, ձայն էին հանում, վայելում էին կեանքի բարիքները։ Ոչ ոք չէր հասկանում թէ ինչ պատահեց և ինչու. ոչ ոք չը գիտէր թէ արդեօք ազատվեցի՞ն մարդիկ գիշերային կոտորածից։

Կեանքը տարաւ իր հուժկու հոսանքը դիակների վրայով. մօտիկ մի ծառի վրա մի ինչ-որ ժիր թռչուն տաքացած անդադար երգում էր իր առաւօտեան մեղեդին . . .

Բայց հրանօթը դեռ չէր լռել։ Նա այժմ թնդում էր բարձրերում, հիւսիսային լեռների լանջերում։ Այդտեղ դեռ շարունակվում էր կռիւը։ Մանասը իր մարդկանցով յետ էր քաշվում. այժմ նրա դիմաց կանգնած էին թիւրք զինուորները։ Դրանք Տուտի գիւղում ապրողներն էին։

Հրացանների ձայնը այնտեղ չէր հասնի. բայց շու-

տով մի քուրդ վազեց գիւղը և սարսափելի բաներ պատմեց հարիւրապետին։ Թիւրքերը օգնութեան վազեցին, բայց այլ ևս ուշ էր։ Ամեն ինչ վերջացնելով, Մանասը նահանջում էր։ Նա թոյլ չը տուեց որ թիւրքերը մի քայլ մօտենան, որ և է աջողութիւն ձեռք բերեն։ Տոկուն և անխռով, ինչպէս շրջապատի ժայռերը, յարձակվողները քայլ առ քայլ յետ էին քաշվում, դիմելով միշտ դէպի բարձր և բարձր . . .

Հրացանների աղմկալից պայքարը հեռանում էր դանդաղ կերպով։ Նա թուլացաւ, նա ուշ վերջացաւ։ Արեգակը շատ էր բարձրացել, այրում էր, երբ օդի մէջ չքացաւ վառօդի ծխի վերջին քուլան։ Նորից ամեն ինչ մատնվեց լռութեան։ Հայերը անցան սարի միւս կողմը։ Ուրախ էին նրանք, բարձր ձայնով խօսում էին, ծիծաղում, համբուրում էին միմեանց։

Այդ ժամին նրանք չը գիտէին թէ ինչ են թողել ճանապարհին։

Բարձր ու լերկ զառիվայրի վրա, երկու վախտ թփերի մէջ, ընկած էր մի տղամարդ։ Նրա մի ոտը ջարդված էր և արիւնը լճակ էր կազմել մանր խճերի մէջ։ Ներքևում, քարերի վրա, երևում էին արիւնոտ հետքեր. վիրաւորը երկար տեղ էր քարշ ընկել, բայց այստեղ նրա ուժը սպառվել էր։

Ի զուր նա երեսի վրա ընկած փորսող էր տալիս, ի զուր նրա մատները ճանկռում էին հողն ու քարերը. առաջ գնալ նա այլ ևս չը կարողացաւ. կարծես սարեր էին դարսել նրա մէջքի վրա և նա ուշաթափված՝ ընկաւ ու անշարժացաւ։

Անցան րօպէներ։ Վիրաւորը բաց արաւ աչքերը, նորից սարսափելի ջանքեր գործ դրեց, խուլ հառաչանքներով աղմկեց շրջակայքը։ Նա միայն կարողացաւ շուռ գալ մէջքի վրա և նորից ուշաթափվեց։ Մօտիկ տեղով անցնող նապաստակը տեսաւ նրան և սարսափահար փախաւ դէպի ցած։ Ներքևից պատահական մի քամի եկաւ,

շարժեց թփերի տերևները, քսվեց նրա դէմքին ու թը-
ռաւ, անյայտացաւ։ Նրա զօրութիւնը բացեց արնաքամ
մարդու աչքերը։ Մթնած խելքը չը կարողացաւ մի բան
հասկանալ. ամէն ինչ — սար, ձոր, երկինք, արեգակ խա-
ռն էին, շարժվում էին, փախչում էին դէպի ինչ-որ
կողմ։ Բերանը հնոց էր դարձել, այրվում էր. լեզուն չէր
շարժվում, իսկ աչքերի կոպերը ծանր էին, անշարժ, որ-
պէս փայտի տախտակներ։

Վերջին անգամ նա մի թոյլ շարժողութիւն գործեց,
բերանը բաց արաւ։ Վերջին անգամ մի ցաւալի, օրհա-
սական աղաղակ դուրս թռաւ նրանից և արեգակը սկսեց
խաշել նրա բաց դէմքը․․․

Երկու ժամ անցած՝ մի խոր ձորի մէջ, որ բաւա-
կան հեռու էր մեր նկարագրած տեղերից, երևացին եր-
կու հեծեալ մարդիկ։

Դուրս գալով ծառերի միջից, նրանք իջան այն փոք-
րիկ կածանի վրա, որ գալիս էր վերևից, կտրում ձորը,
անցնում բլուրների լանջերով. նրա կողքին, մօշի թփե-
րի տակ, հոսում էր փոքրիկ աղբիւրը։ Երկուսն էլ մօ-
տեցան, երկուսն էլ խմեցին։ Ապա միմեանց բարի ճա-
նապարհ մաղթելով, բաժանվեցին։

Մէկը գնաց դէպի հարաւ։ Նա լուր էր տանում Մէ-
լիք-Աւանի Տոզ բերդը։ Իսկ միւսը բռնեց նրան հակառակ
ուղղութիւն և սկսեց արագ քշել դէպի սարերը։

Ժ

Համարեա միաժամանակ երկու հակառակ կողմերից
Աւետարանոց մտան երկու սուրհանդակներ։

Մէկը աղբիւրի մօտ մեր տեսած հեծեալ գիւղա-
ցին էր։ Այժմ նա հանել էր չուխան, փափախը դրել էր
թևի տակ. նշանակում էր որ նա թեթևանալու պէտք էր
զգում, որպէս զի շուտ չը յոգնի։ Լեռնցու հաստատ քայ-
լերով նա անցաւ գիւղի արևելեան ծայրից, իր ձեռքի

փայտով պաշտպանվելով շներից, որոնք մի ակնթարթում
նկատել էին անծանօթ մարդուն ու ընկել էին նրա
ետևից։

Նրան տեսան շատերը, բայց նա ցոյց տուեց որ իր
ճանապարհորդութիւնը այս գիւղում չը պիտի վերջանար,
մի րոպէում հասաւ հիւսիսային լանջիվայրին, կանգ չա-
ռաւ գիւղի վերջում և շարունակեց իր ճանապարհը դէ-
պի հիւսիս. կարելի էր կարծել որ նա գնում է մի ու-
րիշ գիւղ և շտապում է ժամանակին տեղ հասնել։

Բայց երբ բաւական հեռացել էր գիւղից, դուրս ե-
կաւ ճանապարհի վերի մասը և, թեքվելով դէպի ձախ,
գնաց դէպի լեռնային բարձրաւանդակի գլուխը։ Այստեղ
նա նորից երեսը դարձրեց դէպի Աւետարանոցի կողմը
և սկսեց այս անգամ հանդարտ և զգոյշ քայլել, շուռ-
շուռ նայելով իր չորս կողմը, կարծես աշխատելով որ ոչ
ոք չը նկատէ իրան։ Բարձրաւանդակը երկար շղթայի նը-
ման ձգվում էր դէպի հարաւ և վերջանում էր գիւղի
մէջ բարձր ու լերկ ժայռերով, որոնց գլխին շինված էր
մելիքի տունը։ Գիւղացին, ուրեմն, գնում էր այդ տունը։

Միւս սուրհանդակը այդքան զգուշութիւնների կա-
րիք չունէր։ Նրա տանջված ձին կանգ առաւ նոր շինած
մի մեծ տան առաջ, որ բարձրացած էր գիւղական խըր-
ճիթների մէջ, ժայռի արևելեան ստորոտի մօտ, երեսը
դարձրած դէպի մելիքի տունը։ Առաջին խօսքը, որ նա
լսեց բակը մտնելիս, այն էր թէ բէկը առաւօտեան նա-
մազից յետոյ գնացել էր որսի։

Սակայն նա զուր չէր այնքան շտապել։ Աւետարա-
նոցում մի ժամ առաջ յայտնի դարձաւ, որ պատահել է
ինչ-որ սարսափելի բան։ Սուրհանդակը, իբրև հարազատ
թիւրք, չէր կարողացել անխօս մնալ ճանապարհին. իր
կատաղութիւնը չէր ծածկել ամէն անգամ, երբ հանդի-
պել էր գեաւուրին և սուրը պատրաստ էր համարել սպա-
նալիք կարդալ ամենքին։ Իրողութիւնը նա չէր պատմել.

նրա կցկտուր խօսքերը բերվեցին գիւղը և այդտեղ հաւաքվեցին միասին։

Ճշմարիտ էր, սուրհանդակը աղէտալի լուր էր բերում։ Այդ հաստատեց ծերունիների անժամանակ ժողովը, որ գումարվեց եկեղեցու դռների առաջ։ Զանազան ծայրերից մարդիկ գնում էին դէպի այդտեղ, հարիւր ու մի ենթադրութիւններ անելով։ Ամեն մի կասկած վերացրեց տանուտէր Աճմէզը, որ դուրս եկաւ բէկի դռներից և իր ձին քշեց դէպի արեւմուտք։ Անտարակոյս նա տանում էր բէկին այն լուրը, որ բերել էր սուրհանդակը. շատերին էր յայտնի որ բէկը որս է անում արեւմտեան բարձրութիւնների անտառներում։

Գիւղը կամաց-կամաց տակն ու վրա էր դառնում։ Այլ ևս անկիւն չը կար, ուր չը լսվէր փսփսոց ինչ-որ վերահաս վտանգի մասին։ Բայց ի՞նչ վտանգ էր։ Անյայտութիւնը աւելի սաստկացնում էր տագնապը։ Եկեղեցու դրան ժողովը ստուարանում էր, խօսակցութիւնը տաքանում էր, բազմաթիւ ենթադրութիւնների մէջ անյայտ վտանգը հրէշաւոր կերպարանք էր ընդունում։

Մէկն առաջարկեց մարդ ուղարկել մէլիքի տունը. գուցէ այնտեղ մի բան գիտեն։ Բայց այդ միտքը չընդունվեց։

—Հարկաւոր չէ, ասաց մէկը.—ժամանակը չար է, ով գիտէ թէ ինչ դուրս կը գայ դրանից։ Ինքը, մէլիքի կինը, միշտ այն է ասում, որ իր անունն անգամ չը տան գիւղի մէջ...

—Երևի թաքնվել է ուզում։

—Ուրիշ ինչ կարող է անել մի կին, մէջ ընկաւ երրորդը։—Մեծ բան է եթէ նա կարողանայ պահել իր գլուխը։

—Եւ իր աղջկայ գլուխը, աւելացրեց միւսը, վեր կենալով իր տեղից ու առաջ գալով։—Լսեցի՞ք ինչ սատանայ է եկել մեր գիւղը։

Ոչ ոք չը պատասխանեց։ Երևում էր, որ ամենքն

էին իմացել, երևում էր և այն, որ ոչ ոք սիրտ չունէր այդ սատանայի մասին խօսելու։

—Փորձանք փորձանքի ետևից... Մեր վերջը եկել է...

—Հա՛, ճշմարիտ է, հաստատեց այդ յուսահատական խօսքերն ասողի մօտ նստածը և նայեց նրա տխուր, մռայլ դէմքին։

—Բայց ինչո՞ւ մէլիքի կինը չէ փախչում։

—Նա իր ժողովրդից հեռանալ չէ կարող. և ո՞ւր գնայ... ո՞րտեղ է լաւ, ո՞րտեղ է հանգիստ։

—Գոնէ փախցնէր աղջկան...

—Մենք էլ աղջիկներ ունենք, չէ՞։ Իմ տանը չորս հատ կան։

Այսպէս խօսողը մի աղքատ մարդ էր։ Նրա ողորմելի շորերը ցոյց էին տալիս որ նա, իրաւ, չորս աղջկայ հայր է։

Վէճ սկսվեց աղջիկները փախցնելու մասին։ Մի քանիսները պնդում էին, որ մէլիքի աղջիկն էլ այս երկրի աղջիկներից մէկն է, իսկ շատերը այն կարծիքի էին, որ նրա բանը ուրիշ է, նա մի հատ է և պիտի միւս աղջիկների նման չը լինի։

—Է՜հ, ինչե՞ր էք խօսում, բացականչեց մի բարակ ձայն։—Ամենքս էլ մի և նոյն ենք։ Երբ օձը բարձրանում է ծառի վրա և գլուխը տանում է դէպի թռչունի բոյնը՝ թէ ճտերը և թէ նրանց հայրն ու մայրը քարանում են, կապվում, շարժվել ու փախչել չեն կարողանում. իսկ օձը կլանում է նրանց։ Մենք ամենքս թռչունների դրութեան մէջ ենք. օձը կապել է մեր ոտները, թէ չէ՝ փախչելը դժուար չէ։

Վէճին վերջ տուեց այդ օրինակը. լռվեցին անճար հառաչանքներ...

Այդ ժամանակ եկաւ ծերունի քահանան և սկսեց պատմել թէ ինչպէս են ջնջվել քուրդ Հասանն ու նրա ցեղը։ Հետեւակ սուրհանդակը մէլիքի տանից գնացել էր

քահանայի մոտ և նրան էլ հաղորդել էր իր բերած լուրը։

Պատմութիւնը սարսափելի տպաւորութիւն գործեց ամբոխի վրա։ Տիրեց մեռելային լռութիւն. իւրաքանչիւրը խորհրդածում էր իր հետ, կշռում և գտնում էր թէ ինչ կը լինի այսուհետև։

—Այժմ կը սկսվեն,—տխուր ձայնով ասաց քահանան,—աւելի խիստ կը սկսվեն մեր տանջանքները։ Մանասը արաւ, իսկ ո՞վ է պատասխանատուն։ Ի հարկէ մենք...

Լռութիւնը շարունակվեց և այս անգամ։

—Մանասը սարերումն է, իր գլուխը լաւ է պահում. բայց չէ հասկանում, որ այսքան ժողովուրդը անմեղ է և պիտի տանջվի իր պատճառով... Դա անաստւածութիւն է...

Այդ խօսքերը յուսահատութիւն չը տարածեցին։ Ամբոխը, որ սովորաբար սիրում է ողբալ իր գլուխը և պահանջում է, որ ամենքը մասնակցեն իր ողբերին, այժմ տարօրինակ, նոյն իսկ անտեղի համարեց քահանայի սև գուշակութիւնները։ Մի մարդ համարձակվեց թոյլ, ամաչկոտ ձայնով գովել Մանասին։

—Հասանը չը կայ...

Ո՜րքան անհեթեթ, խառն մանկական հրճուանք կար այդ բացականչութեան մէջ։ Նա բացաւ և միւսների լեզուն։ Սկսեցին խօսել, և զարմա՜նք... ամենքն էլ մի տեսակ էին խօսում։

Ճնշված, ահաբեկված ամբոխը, որ քիչ առաջ իր սրտի հառաչանքներով հաստատում էր թէ ինքը օձի շունչից կաշկանդված թռչուն է, տաքացաւ, շարժվեց. դէմքի վրա կենդանութիւն երևաց, աչքերի մէջ փայլեց բաւարարութիւն ստացած մարդու գոհունակութիւնը։ Խօսքը, դատողութիւնը շուտով ընդհատվեց. մարդիկ նստեցրին քահանային, իրանք տեղաւորվեցին նրա շուրջը, ինչպէս ոչխարների հօտը պատկում է հովուի շուրջը, որ լսէ նրա սրինգը։ Նորից պատմել էին տալիս Մա-

նասի արածները, լսում էին խորին ուշադրութեամբ։

Վերջապէս դատաստան եղաւ. վերջապէս արդարութիւնը յաղթանակ տարաւ... Վրդովված հոգին, այրված սիրտը համակվեց վրէժի զգացմունքով, որ խեղդեց, ոչնչացրեց ամեն երկչոտութիւն... Կարծես այնուհետև հեշտ էր մեռնել, կարծես այնուհետև այնքան դառն չէին լինի տանջանքները։

—Երկիրը կը հանգստանայ, փառք Աստուծու, կոչեցին բազմաթիւ բերաններ...

Կը հանգստանա՜յ... Դա չափազանցութիւն էր, դա երազ էր։ Կը հանգստանայ... Իսկ նա՞...

Գիւղը մտան որսորդները։ Առջևից վազում էր մի մարդ, շրջապատված բարակներով։ Շները յոգնած չէին, կախ չէին արել իրանց լեզուները, կարծես նոր էին որսի գնում։ Յետոյ իր սև նժոյգի վրա գալիս էր Սիւլէյման-բէկը, իսկ նրան հեռուից հետևում էին մօտ տասը ձիաւորներ. երեք հոգի տանում էին բազէները, որոնք անհանգիստ թրթռում էին նրանց ձեռքերի վրա և թեթև աղմուկ էին տարածում իրանց ոտներին կապած բոժոժներով։ Ոչինչ չէր մոռացված, իշխանական որսի բոլոր պատրաստութիւնները տեսնված էին, բայց երևում էր, որ որսորդները բախտ չէին ունեցել։ Միայն երկու ձիաների թամբերից կախ էին ընկած մի քանի հատ կաքաւներ։ Ուրիշ որս չը կար։

Արդեօք այդ անյաջողութի՞ւնն էր պատճառ, թէ տանուտէր Անմէգի տարած լուրը, բայց բէկը այժմ սովորականից աւելի մռայլ ու դժգոհ էր երևում։

Երկու պատճառներն էլ, երևի, ազդել էին։ Արևելքում որսը իշխանական փառքի մեծ նշաններից մէկն է։ Աւետարանոցը վաղուց սովոր էր այդ նշանին։ Մելիքների որսորդական հանդէսներից շատերը այնքան շքեղ էին, որ չէին մոռացվել. նրանց պատմութիւնը անցել էր որդուց որդի։ Ի՛նչ խնջոյքներ էին կազմվում մանաւանդ ձմեռը, երբ ամբողջ գիւղը պարապ էր լինում։

Ժողովուրդը գնում էր տեսնելու որսորդների հարուածների աջողակութիւնը։ Մէլիքի տան մեծ սրահում օրերով ցոյց էին հանվում այդ հարուածները. վարազներ, ահագին եղնիկներ, լեռնային այծեր, երբեմն նոյն իսկ անտառների թագաւոր արջը, թափված էին լինում սրահի մէջ. ամեն մէկը ցոյց էր տալիս թէ ինչ դիրքի մէջ ինչպիսի հարուածից է սպանվել։ Երբեմն որսը այնքան առատ էր լինում, որ գիւղի կէսը բաժին էր ստանում...

Այժմ այդպիսի բաները աւանդութիւնների կարգն էին անցել. ժողովուրդը հեռուից էր նայում Սուլէյման-բէկի որսերին, որոնք յաճախ էին տեղի ունենում։ Բէկը թէև գիտէր, որ գեաւուրները շներից էլ պիղծ են, բայց, իբրև իշխանաւոր, հարկ էր համարում ցոյց տալ իր ձեռքի աջողակութեան նշանները իր անհաւատ հպատակներին։

Սովորաբար, երբ նա վերադառնում էր որսից, երկու ձիաւորներ, որոնք տանում էին որսած կենդանիները, գիւղը մտնելուն պէս հանդարտ էին գնում. առջևից անցնում էր մի այլ ձիաւոր, որ հանդիպած գեաւուրին հրամայում էր «մուսասաա չանել»։ Եւ իրաւ, ամեն մէկը պարտաւոր էր հեռու պահվել, չը դիպչել որսին, որպէս զի չը պղծէ նրան։ Մեղք չէր միայն նայելը։

Իսկ այսօր ամենքը շտապով անցան։ Բէկը իր աչքերը դարձրեց դէպի եկեղեցու կողմը. այնտեղ հաւաքվածները արդէն ոտքի վրա էին, սկսեցին մինչև գետին խոնարհվել և ողջոյններ տալ, որոնց պատասխանելը արժան չը համարեց գոռոզ, ինքնակալ մուսիլմանը։

Սիբիրական արեգակը անջնջելի հետքեր էր թողել նրա խոշոր դէմքի վրա։ Նա համարեա թուխ էր, ներկայացնում էր այրված անապատների բարեկամ, խոշոր տղամարդութեան տիպը։ Ածամբով ածիլած կլոր ծնօտը, լիքը այտերը, գէր շրթունքները, որոնց վրա իջել էին շատ հաստ, երկար ու սրածայր բեղերը, նրա տա-

փակ քիթը իր լայն ծակերով առաջին անգամ տեսնողի մէջ գործում էին մի խիստ տպաւորութիւն, որ շուտ չէր մոռացվում։

Բայց այդ մարդու ամբողջ ոյժը, եռանդը, ամբողջ հոգեկան կարողութիւնը յայտնագործվում էին դէմքի վերին մասերում. մի զոյգ թուխ աչքեր և նրանց վրա հաստ, նոյնպէս թուխ յօնքեր—այստեղ էր Վարանդայի պատիժը. այստեղ էր նստած Սուլէյման-բէկը։ Դէմքի ընդհանուր թուխ ֆօնի վրա մի ուրիշ գոյն, որ թխութեան հակապատկերն է, սարսափելի պայթումներ էր անում. դա աչքերի սպիտակուցն էր։

Երբ անհանգիստ էին այդ աչքերը, իրանց բոյների մէջ պտտւում էին արագութեամբ, սպիտակուցը փայլատակումներ էր անում, ահաւոր փայլատակումներ։ Իսկ երբ նրանց վրա իջնում էին հաստ յօնքերը կամ, աւելի ճիշդ ասած՝ յօնքը, որովհետև նրա յօնքերը չէին բաժանվում միմեանցից, այլ ընդհակառակն, աւելի հաստ գծով միանում էին քթի վերջաւորութեան վրա,—այդ ժամանակ սիրացին ներկայացնում էր կէս գիշերային մի փոթորիկ, որ ընկնում է սևաթոյր ամպերից։ Որքան կոպիտ, յանդուգն, գազանային վայրենութիւն էին ցոյց տալիս դէմքի այդ երկու մասերը—աչքերը և յօնքերը։

Կարծես միայն այդ ընդունակութիւնն ունէին նրանք. կա՞ր այդ դէմքի համար ուրախ, մեղմ, թախծալի, ցաւագար արտայայտութիւն—դժուար էր ասել։ Ամբողջ հասակն էլ համապատասխանում էր այն տպաւորութեան, որ թողնում էր դէմքը. դա մի ուղիղ, հպարտ, միջակ մարմին էր, որի հաստութիւնն ու բարձրութիւնը շատ վայելուչ ներդաշնակութիւն էին կազմում։ Մանաւանդ լաւ էր բէկը իր ձիու վրա, որ Ղարաբաղի ազնուացոյն տեսակից էր և այժմ խրոխտ քայլեր էր անում։

Ամբոխը այրական բարեկազմութեան, պարթև ու վայրենի գեղեցկութեան երկրպագուն է, մանաւանդ երբ այդ գեղեցկութիւնը ներկայացնում է խստապարանոց իշ-

խանութիւն, անողոք ոյժ, կտրուկ հրաման։

Որքան և Սիւլէյման-բէկի կազմուածքը օտար լինէր լեռնային երկրի համար, որքան և տեղական հասկացողութիւններին հակառակ լինէր այդ թուխ մարդու գեղեցկութիւնը, բայց այդ պողվատը, այդ կայծեր արձակող բնաւորութիւնը սարսափի հետ միասին տարածում էր և մի այլ տեսակ զգացմունք, որ միայն հիացմունքից կարող է առաջանալ։ Բռնութիւնը տեղական է լինում մանաւանդ այն ժամանակ, երբ բռնակալը հեգնութիւն չէ պատճառում իր անկանոն կազմուածքով, իր բնական պակասութիւններով։ Սիւլէյման-բէկը այդ կողմից շատ բախտաւոր էր...

Նա իջաւ ձիուց և մտաւ տուն։ Դա մի ընդարձակ շինութիւն էր, որ նոր էր վերջացրել բէկը՝ տալով նրան թիւրք ազնուականի պահանջած բոլոր յարմարութիւնները։ Այդ տունն էլ ցոյց պիտի տար տեղացիներին, որ օսմանեան տիրապետութիւնը հաստատ է նստած և չէ էլ մտածում թէ կարող է մի օր հեռանալ այդտեղից։ Մնում էր որ գիւղի մէջ բարձրանայ և մուսուլմանների կոթողը՝ մզկիթի մինարէն։

Դրա մասին էլ մտածում էր բէկը։ Օսմանցիները սովորութիւն չունէին նոր նուաճած երկրում իսկոյն մզկիթ կառուցանել. առաջին անգամ նրանք բաւականանում էին քրիստոնեաների եկեղեցիները մզկիթի վերածելով։ Բէկը մտածում էր մի և նոյնն անել Աւետարանոցի եկեղեցու հետ. գեաւուրների համար բաւական էր և կուսանոցը, որ շինված էր ժայռի գլխին, մէլիքի տանից ցած։

Տան մէջ իսկոյն նկատելի եղաւ իրարանցում։ Բէկը արդէն ունէր գործողութեան ծրագիր։ Կանչեց սուրհանդակին, նորից հարց ու փորձ արաւ։ Հարկաւոր էին զօրքեր. նա իսկոյն հրամաններ ուղարկեց մերձակայ գիւղերը և ապա դուրս եկաւ բակը, ուր արդէն փռված էին գորգեր և փափուկ օթոցներ։ Նա չոքեց նամազի. իսկ երբ

վերջացրեց, նստեց բարձի վրա և ղալեան պահանջեց։

Այդ միջոցին հանդարտ քայլերով մօտ եկաւ մի բարձրահասակ և շատ բարակ թիւրք։ Հագուստը ցոյց էր տալիս, որ նա զինուոր չէ, այլ պատկանում է վաճառական դասակարգին. իսկ շարժողութիւններից երևում էր, որ հասարակ վաճառական չէ։ Մահմեդական աշխարհի ամենանուրբ քաղաքավարական ձևերով նա ողջոյն տուեց. խոնարհվելով մինչև գետին, աջ ձեռքը դիպցրեց գորգին և ապա դրեց իր բերանի ու ճակատի վրա։ Յետոյ մի քանի քայլ առաջ գնալով, նորից խոնարհվեց և այս անգամ մատների ծայրով բռնեց բէկի զգեստի քղանցքը և համբուրեց։

Դա ամենաբարձր պատիւն էր, որ հասարակ մարդը տալիս էր իշխանութեան ներկայացուցչին, հասկացնելով որ ինքը նրա առաջ հող ու մոխիր է։ Այդ ծառայական ծէսից յետոյ նա նորից վերադարձաւ իր տեղը, փոքրաւորի պէս կանգնեց գորգի ծայրում։

Բէկը նրան ճանաչում էր։ Երեք օր առաջ նա հասել էր Աւետարանոց, բերելով իր հետ յանձնարարականներ Կ. Պոլսից։ Նրա անունն էր Քէօսա-Մուխտար։ Իր կողմից պատշաճաւոր քաղաքավարութեամբ պատասխանելով ողջոյններին, բէկը հրաւիրեց նրան նստել և առաջարկեց իր նարգիլէն։

—Շնորհդ չափազանց մեծ է, էֆէնդի, խօսեց Քէօսան.—ծառադ, հաւատացիր, այդքանին արժանի չէ։ Ինձ համար արդէն մեծ բախտ է քեզ մօտ նստելը...

Շողոքորթութիւնը անկեղծ էր երևում, այնքան այդ մարդը կարողանում էր լաւ գործածել իր խոնարհ, մեղմ ձայնը։ Բէկը իսկոյն ընկաւ այդ ձայնի իշխանութեան տակ և նորից կրկնեց իր առաջարկութիւնը։ Այդ ժամանակ միայն նա վերցրեց նարգիլէն իբրև մի սրբութիւն, փոխեց իր կերպարանքը, դարձաւ հիացած, այս աշխարհից վերացած մի մարդ և սկսեց ծծել երկար խողովակի ծայրը։

Դա չորացած, ձգված մի կազմուածք էր, որին արդէն կռացրել էր ժամանակը։ Երկար ու նեղ դէմքի վրա մազ չէր երեւում. կաշին կարծես այրված էր եռացող ջրի մէջ։ Այտերի դուրս ցցված ոսկորները վկայում էին, որ այդ մարմինը կաշիով և չոր ջղերով ծածկված մի կմախք է. կար մի առանձին արտայայտութիւն այդ կմախքի ամբողջութեան մէջ, որ յայտնում էր թէ դա հարեմների խորքում հեշտասիրութեան մաշուցած մի զոհ է։ Դուրս ընկած էր և նրա նեղլիկ ճակատը. դրա և այտերի մէջ խոր էին ընկել երկու ոսկորոտ փոսեր, որոնց բաժանողը տափակ քիթըն էր. փոսերի յատակից նայում էին մի ջուխտ աչքեր, որոնց մէջ դեռ պլպլում էր աղօտ, մարող լոյսը։

Կարծես ընդհանուր աւերմունքից ազատ էին մնացել միայն շրթունքները, որոնք համեմատաբար հաստլիկ էին, կարմրած, չէին կարողանում ծածկել դեղնած ու նօսր ատամների երկու շարքը։ Նրանք ցոյց էին տալիս, որ այդ մարդու մէջ փորձել էին միանալ խափշիկ և մոնղոլ ցեղերը, բայց դուրս էր եկել մի վաղաժամանակ թառամած խառնուրդ։

—Այսօրվայ որսը անաջող էր, էֆէնդի, ասաց նա, վերջացնելով նարգիլէի ծխակատարութիւնը։

—Անաջող, պատասխանեց նա իր թանձր կոկորդային ձայնով։—Զարմանալի էր. կարծես անտառի բոլոր բնակիչները խօսք էին տուել մեր առաջը դուրս չը գալ։

—Լսեցի, այո։ Երեւում է, որսը դժուար է այստեղ...

Բէկը ժպտաց իր հաստ բեղերի տակ և մի առանձին եղանակով, որ բարեհաճ հովանաւորութեան նշան էր, հարցրեց.

—Քո որսն էլ վատ էր...

Նա խօսում էր մի արարածի հետ, որի արհեստը կարօտ էր իր նման իշխանաւորների խնամքին ու հոգատարութեան։

Կ. Պօլիսն էր այդ տեսակ առեւտրականներ ուղարկում ամեն տեղ, ուր կային օսմանեան զօրքեր։

Կ. Պօլիսը բաւական չէր համարում, որ այնքան երկիրներ իր իշխանութեան տակ են մնում, նա հաւաքում էր և այդ երկիրների մեղրն ու կարագը՝ իր բերանը քաղցրացնելու համար։ Եւ իւրաքանչիւր Քէօսա-Մուխտար հարկաւոր մարդ էր. նրանից լսում էին թէ Ստամբուլի մեծամեծները, թէ զանազան երկիրների կառավարիչները և թէ զինուորները։ Այս էր պատճառը, որ Սուլէյման-բէկը, չը նայած իր ներքին յուզմունքներին, աշխատում էր ուշադրութեամբ վերաբերվել իր այլանդակ հիւրին։

—Քո հովանու տակ աւելին հարկաւոր չէ, էֆէնդի, պատասխանեց Քէօսան։—Մեր զինուորները—Ալլահը նրանց երկար բազուկներ տայ—վատ չեն գործում։

—Եւ այժմ քանի՞սն ունես։

—Հեշտ չէ դրան պատասխանելը։ Երբեմն լինում են քանի, որոնք մի հատ էլ չարժեն։ Լինում է և հակառակը. ճանկ է ընկնում մի հատ այնպիսին, որ հարիւրի գին ունի։

—Հիմա քեզ մօտ ո՞րն է—քանին, թէ մէկը։

Վաճառականի մէջ կասկած յարուցեց այդ հարցը։ Նա պարտաւոր էր ոչ միայն շողոքորթութիւն իմանալ, այլ և լինել սաստիկ խորամանկ։ Խնդրելով բէկի աջակցութիւնը, նա չը պիտի թոյլ տար, որ համեղ կտորը ձրի ընկնի բէկի բերանը։ Եթէ իւրաքանչիւր զօրապետ, որի վիճակում գործ է տեսնում վաճառականը, լաւ պատառները կլանէ, այն ժամանակ ինչ կը մնար Ստամբուլ ուղարկելու։ Մուխտարը ասաց.

—Միթէ իմ խօսքերը պարզ չեն, էֆէնդի։ Եթէ այդպէս է, ես ուրիշ կերպ կը խօսեմ։ Երեք օր առաջ, երբ գալիս էի այս կողմերը, ինձ հրամցնում էին անտառները, սարերը։ Ո՜րքան ծաղիկներ, ինչ զովութիւն և ջրեր, ջրե՜ր... Գեղեցիկ է այս երկիրը։ Եւ անհնարին է, որ այսպիսի տեղերում չը լինեն լերան եղնիկներ, սև ու կապոյտ աչքեր։ Դրանց գտնելը դժուար է. պիղծ գեաւուր-

ները, նզովվէ՛ն նրանք, գիտեն լաւ թագցնել, պահել։— Պէտք է քո հաճութիւնը լինի, որ դուրս բերվեն...

Նրա հաստ շրթունքների վրա երևացին ագահչաւոր ծալքեր, և նրա ամբողջ դէմքը ցանկութիւն, տենչանք էր յայտնում։ Բէկի դէմքը յուսատու էր, կարծես ասում էր, որ ինքը միշտ պատրաստ է։

—Կարսի ճանապարհին ես մի հիանալի բան տեսայ, — բացականչեց Մուխտարը, ձեռքը անցկացնելով շրթունքների վրա, կարծես կամենալով սրբել նրանց խոնաւութիւնը։—Մի հիանալի՜ բան։ Տանում էին երկու տղայ երեխաներ, քեզ պէս մեծերին վայել երեխաներ... Բոլորովին ծախված, վերջացած ապրանք էր. կարծեմ Ստամբուլ չը հասնէ, Էրզրումում կամ Տրապիզոնում անպատճառ կը խլեն...

—Ո՞րտեղից էին տանում։

—Կարծեմ Գանձակի կողմերից. հաստատ չիմացայ։ Եւ ինչպէս էին գտել։

—Գուցէ Ենիչէրիների համար...

—Ո՛չ, երեխաները փափուկ, սիրուն էին. մեղք է նրանց զինուոր տալ։ Ասում եմ որ քեզ պէս էֆէնդիներին վայել բաներ էին... Այնուհետև ես մտածում էի. մի՞թէ այն կողմերում, ուր Սիւլէյման-բէկն է իշխում, չեն լինի այսպիսի անգին գոհարներ...

—Կը լինեն, պէտք է միայն գտնել... Դա քո գործն է։

—Այո, եթէ բախտ լինի...

Այդ բացականչութիւնը զգալի էր նոյն իսկ Սիւլէյման-բէկի համար։ Նա սառն կերպով պատասխանեց.

—Եթէ չը գտնես էլ, քո Մուրադ-աղան քաղցած չի մնայ...

Բայց Բէօսան այդ խօսքերը իր համար նոր զէնք շինեց։

—Մի՞թէ, էֆէնդի, դու կարծում ես թէ իմ տէրը այդ չը գիտէ։ Բայց նա ի՞նչ կարող է անել։ Ի՞նչ անէ Մուրադ-աղան, երբ յանկարծ փադիշահի «կըլլար աղասին» պահանջում է այսքան և այսքան ապրանք։ Այդ դեռ փադիշահը—թող Ալլահը նրա մի օրը հազար դարձնէ։ Ստամբուլում քանի՜ երևելի փաշաներ կան, էֆէնդիներ, վաճառական պատուելիներ կան։ Ամենքը պահանջում են...

Բէկը ոչինչ չը գտաւ դրա դէմ խօսելու։ Իսկ Մուխտարը շարունակեց չլացնել նրան.

—Մեծ մարդկանց գոհացնելը առհասարակ շատ դըժուար է, էֆէնդի։ Իսկ այժմ բոլորովին դժուարացել է։ Քանի տարի է ահա, նրանց մէջ սովորութիւն է դարձել հեռուից, անծանօթ տեղերից բերել տալ։ Սրանից մի քանի տարի առաջ ես տեսայ այսպիսի բան. Սինան փաշայի զօրքերը քանդել էին լեհական երկու գիւղ, կոտորել էին անհաւատներին։ Ասում էին, որ այդտեղի կանայք շատ գեղեցիկ են։ Րիզա-փաշան, հօ ճանաչում ես, բէկ,—մեծ Րիզա-փաշան, սադրազամի փեսան, սաստիկ ցանկանում էր այդտեղից մի կին ունենալ։ Մեծ գումար էր առաջարկում մանաւանդ աղջկայ համար։ Մուրադ-աղան, իմ տէրը, չէր կարող անտես անել փաշայի բաղձանքը։ Մարդ ուղարկեց, երկու թէ երեք ամսից յետոյ բերին մէկին։ Ո՛րքան ճանապարհ էր անցել... Այսպէս է մեր գործը։

—Լաւն էր, հարցրեց բէկը։

—Եթէ ինձանից ես հարցնում, էֆէնդի, ես չեմ համարձակվի ասել վատ էր, եթէ Րիզա-փաշան այդ չէ ասում։ Ես չնչին մարդ եմ, ինչպէս կասեմ թէ ձեզ պէս երևելիները չեն հասկանում... Աստուած հեռու պահէ ինձ այդ անխելքութիւնից։ Բայց Մուրադ-աղան ասում էր, թէ ինքը մի չէրքէզուհու մի հատ աչքը չէր փոխի այդ կնոջ հետ։ Ասում էր որ դա մի հաստ ու կոպիտ գիւղացի կին էր։ Սակայն փաշան շատ հաւանեց, որովհետև կինը շատ կատաղի էր. նրա աչքերը լցված էին կայծակներով։ Մորթել էին նրա երեխային և նա այդ բանը չէր մոռանում, ինքն իրան սպանել էր ուզում։ Փաշան վերցրեց

և այն օրը, երբ նա կը մոռանայ երեխայէն, կը հանդարտուի, կը դառնայ մի սովորական կին, նրան դուրս կանեն հարեմից, որ գնայ լուացք անելու։ Կատաղած հիւրին, ասում են, ուրիշ բան է լինում...

—Հը՛մ... Ստամբուլում լաւ են ապրում...

Սուլէյման-բէկի այս խօսքերի մէջ լսվում էին նախանձ և գանգատ։ Բէօսան շտապեց շահագործել դրանց.

—Հրամանքդ ճիշդ է, էֆէնդի։ Աշխարհումս մի հատ Ստամբուլ կայ, աշխարհիս գոհարը մի հատ է։ Մարգարէն իր ամենալաւ ծառաների համար է պատրաստել այդ գոհարը։ Ո՞վ չը գիտէ որ դու էլ այդ ծառաներից ես։ Այո, էֆէնդի, դու էլ կը լինես այնտեղ և ինչպէս կը լինես։ Քո ապարանքը ուրիշներից ցածր չի լինի, և դու Մուրադ-աղայէն պակաս հրամաններ չես ուղարկի։ Եթէ հարցնես, կասեմ որ ամենքն են այսպէս խօսում։ Ահա հերթը հասել է այս կողմերին։ Կարսում ես նամակ ստացայ. ինքը, Մուրադ-աղան, գրում է որ այժմ պահանջում են այս կողմի ապրանք և պատուիրում է ինձ, որ անյապաղ դիմեմ քո օգնութեան։ Ես չը գիտեմ, էֆէնդի, թէ ինչու է այսպէս գրված. մարգարէն ինձ չէ տուել նուրբ խելք, մտքեր գուշակելու շնորհք. ես միայն մեծերի ծառան եմ։ Բայց նոյն իսկ իմ մութ հասկացողութեան համար էլ պարզ է, որ Մուրադ-աղան, ցոյց տալով ինձ քո դուռը, երբէք իր մտքով չէր անցկացնի թէ պարտաւոր չէ քեզ շնորհակալութիւն անել։ Եւ նա կարող է անել այնպիսի բան, որ միանգամայն վայել լինի քո անուան, քո փառքին։ Հարկաւոր չէ որ ես յիշեցնեմ քեզ թէ փադիշահի «կզլար աղասին» նրա հետ եղբօր պէս է. այդ դու ինձանից լաւ գիտես։ Եւ եթէ Մուրադ-աղան կամենայ քո մասին երկու-երեք խօսք հասցնել փադիշահի կամ սադրազամի ականջին, դա կը լինի նրա համար մի շատ հեշտ բան։

Գազաններ որսալու համար այնքան ոյժ չեն գործադրում, որքան հնարագիտութիւն։ Զարմանալի չէ, երբ

ամեհի վագրին զսպողը շատ անգամ լինում է թոյլ, բայց ճարպիկ մարդը։ Զարմանալի չէր, որ այժմ այս վոխտ, չնչին մարդը բռնել էր բէկի սրտի լարերը և գլորում էր նրան իր անտեսանելի ցանցի մէջ։ Արիւնռուշտ սիբիացին պարզ տեսաւ իր օգուտը։ Նա այնքան միամիտ չէր, որ չը հասկանար թէ Ալլահի հարազատ զաւակը պիտի վայելէ աշխարհի բոլոր բարիքները։

Եւ նրա առաջ միայն այժմ չէր բացվում Ստամբուլի կախարդական աշխարհը. իր բոլոր արկածախնդրութիւնների մէջ նա աչք դրած էր փառքի և հարստութեան։ Նա հաւատացած էր, որ Բէօսա-Մուխտարի խօսքերի մէջ կայ ճշմարտութիւն։ Հարեմները մահմեդական աշխարհի կառավարիչներն են. նրանց մէջ գործողներն են մարդկանց բարձրացնում և ցած գլորում։ Այդ պատճառով նա մեծ հաճութեամբ լսեց իր խօսակցից հետևեալը.

—Ծառադ իր սուրբ պարտքը կը համարէ գրել Մուրադ-աղային, որ Սուլէյման-բէկի նման իշխան ես ոչ մի տեղ չեմ տեսել և որ նրա բարերարութիւնները շատ մեծ են։

—Բայց...

Մուրադ-աղայի գործակատարը այնպիսի ճարպիկներից էր, որոնք երկաթը տաք ժամանակին են ծեծում։ Նա չը թողեց որ իր լեզուի արածը թուլանայ. ձեռքը խփեց իր կրծքին և զարմացած բացականչեց.

—Ի՞նչ ես հրամայում, էֆէնդի, ես փոքրաւոր եմ... Ասես, չասես, ինձ համար մի և նոյն է, գիտեմ ինչ պիտի լինի հրամանդ. դու, ի հարկէ, կարօտ չես մեր բարեխօսութեան. դու մի թուր ունես, որ կը պատրաստէ քեզ համար ամեն ինչ... Բայց ես պարտաւոր եմ. թէկուզ էգուց ինձ կախել տաս այս ժայռից, ես էլի չեմ վախի, կը գրեմ...

Բէկը նորից ուզեց խօսել, բայց նա նորից ընդհատեց։ Այժմ նա սկսեց աղաչել աւելի խոնարհ, աւելի

սաստ եղանակով.

—Շնորհ արա, էֆէնդի, ես քո ոտները կը համբու-րեմ. շնորհ արա ծառայիդ և այս մասին այլ ևս խօսք մի՛ ասա։

Նա տարաւ կատարեալ յաղթութիւն. Սիւլէյման-բէկը գլխով հաւանութեան նշան արաւ։ Ապա պատմեց այդ օրը իրան հասած լուրը, բացատրեց թէ ինչ է ու-զում ինքն անել։ Ամբողջ ժամանակ Քէօսա-Մուխտարի դէմքը ծամածռութիւններ էր կատարում, արտայ[այտե]-լով միշտ, կատաղութիւն, սարսափ և աղաչան

—Ալլա՛հ, Ալլա՛հ, բացականչեց նա մի ողորմ նով, որ կրակ գցեց բէկի մէջ։—Տե՛ս գեաւուրը ձակվի ձեռք բարձրացնել ուղղահաւատների վրա... բոլը, էֆէնդի, կը զարմանայ, կը քարանայ. մի ա նի Սիւլէյման-բէկը և այնտեղ մի հատ մուսլիման ա վի... Ես չեմ հաւատում... Դու կը տեսնես, որ այդ րը սխալ է... Անկարելի է որ այնտեղ այդպիսի բ պատահէ...

—Լուրը սխալ չէ, ասաց բէկը րոպէական լռութիւ-նից յետոյ։—Եւ ես ցոյց կը տամ այդ շներին...

Նրա յօնքերը ցած դնացին, աչքերը փայլատակեցին. կատաղութիւնը բորբոքվեց, սկսեց եռ գալ։ Քէօսան լռեց. նա իր անելիքն արել էր. կայծը մօտեցրել էր վա-ռօդին և այժմ թող տուեց որ փոթորիկը կատարեալ ա-զատութեամբ գործէ...

—Մինչև այժմ ես մտածում էի տաւարների մա-սին. մոռացել էի նրանց ոչնչացնել։ Բայց հիմա փոխում եմ այդ միտքը։ Վաղը կը թալանեմ մի քանի գիւղեր... Ես ցոյց կը տամ թէ ինչ բան է մուսլիմանի արիւն թափե-լը։ Ինչ որ կողոպտուի մեր որսերից, քեզ եմ տալիս... Հաւաքիր...

Նա լռեց, աչքերը ցած ուղղեց. նրա ջղայնութիւնը այժմ լսելի էր, կուրծքը նկատելի կերպով բարձրանում էր և ցածրանում։ Քէօսան շնորհակալութիւն չը յայտ-

նեց։ Նա այժմ Մուրադ-աղայի գործակատարը չէր, այլ մի վրդովված մուսլիման։

—Հասկացա՜յ... բացականչեց նա մի զզուելի ձայ-նով, որ յատուկ է մոլեռանդներին։—Ուրեմն այդ էր պատ-ճառը, որ անհաւատները այսօր հաւաքվել էին իրանց եկեղեցու դուռը և լսում էին իրանց քահանայի պատ-մութիւնը... Հեռուից տեսայ... շատ բազմական էին, նոյն իսկ ուրախ։

Բէկը նայեց նրա դէմքին և ցոյց տուեց որ ինքն էլ հասկացաւ։

—Ես էլ տեսայ, ասաց նա։—Վաղը, նախ քան մեր գն այդ եկեղեցին փակված կը լինի, իսկ շները՝ բան-

Ահմէդ...

ապետը փաղէվազ մօտեցաւ և լսեց բէկի հրա-

ը...

—Ալլահի բարիքները օր ու գիշեր անձրևի պէս քո ին թափվեն, էֆէնդի. Ալլահը մեզ միշտ քո շուա-ում պահէ, քո մի օրը հազար դարձնէ,—մեղմ, աղօթքի ձայնով արտասանեց Մուխտարը, երբ Ահմէդը հեռացաւ։

—Դու շնորհ արիր, մեզ ընծայելով թրից ազատվածնե-րին։ Բայց ինչու ես ազատում. հրամայիր որ ամենքին ջնջեն։ Մուսուլմանի սուրը գործի համար ոչինչ չէ կա-րելի՞ խնայել. Թող Մուրադ-աղային այս անգամ ոչինչ չը հասնի, միայն թէ քո արդար բարկութիւնը լիուլի հատուցում ստանայ...

Եթէ Սիւլէյման-բէկը բարձր շրջանի հարեմական փչացած կեանքին ծանօթ լինէր, խոկոյն կը նկատէր, որ իր հիւրը այդ բոպէին էլ առևտուր է անում, որ նրա խօսքերը վաճառականի խորամանկութեամբ արտասան-վեցին։ Վաճառականը փափուկ էր ենթարկում իր շա-հերը, կամենալով աւելի թեթև գնով պրծնել։ Եւ երբ տեսաւ որ բէկը չը նկատեց իր յետին միտքը, այլ լսեց և մտածմունքի մէջ ընկաւ, նա գոհութեան մի թեթև ժպիտ հանեց իր հաստ շրթունքների վրա և դրանով տօ-

նեց իր այդ յաղթութիւնն էր։

Ընթերցողը հասկացաւ թէ ինչ արհեստ ունէր Բէօսա-Մուխտարը։ Նա գործակատար էր, որ Կ. Պօլսի խոշոր գերեվաճառներից մէկի, այն է՝ Մուրադ-աղայի յանձնարարականներով ման էր գալիս զանազան կողմեր և «ապրանք» էր ուղարկում Կ. Պօլսի մեծ վաճառանոցի համար։ Տեսանք թէ ինչ ապրանք էր դա.—կանայք, աղջիկներ, տղաներ, երիտասարդներ, մի խօսքով՝ մարդկութեան գեղեցիկ, առողջ ծաղիկները։ Նրանք ծախւում էին հրապարակում։

Գերեվաճառութիւնը այն ժամանակ բացարձակ էր. Կ. Պօլիսը այդ առևտուրի ամենամեծ կենտրոնն էր, որ «ապրանք» էր մատակարարում մահմեդական աշխարհին՝ սկսած Բօսնիայից մինչև Արաբիա և Տրիպօլիսից մինչև Հնդկաստան։ Ահագին պետութեան բոլոր ծայրերից ամբողջ կարաւաններ էին գնում դէպի մայրաքաղաք։ Այդտեղ հաւաքւում էին աշխարհի չորս կողմից ամեն տեսակ հեծեծանքներ, արտասունքի ամբողջ գետեր։ Եւ այդ գետերից ուղղահաւատ միւսիլմանը վերցնում էր իր երկրաւոր դրախտի, իր հարեմների զարդարանքները։ Դրանից էր նա քաղում իր զգայնական երջանկութիւնը, իր վաւաշոտ հեշտասիրութեան բուռն կրքերը այդ դժբախտ մարմինների ծովի մէջ էր թաղում։ Վաճառողը գովում էր ապրանքը, աշխատում էր թանգ գնով ծախել։

Շուկան միշտ բանուկ էր. Նրա դատարկ տեղերը լցնում էին Բէօսա-Մուխտարները, որոնք ման էին գալիս աշխարհի բոլոր կողմերը։ Խաղաղ ժամանակը, երբ չը կար կողոպուտ, աւերում, նրանց բանը դժուարանում էր։ Իւրաքանչիւր տուն մի շարք միջոցներ գիտէր՝ իր անդամներին Կ. Պօլսի վաճառանոցից ազատելու համար։ Նա թագցնում էր ջահիլներին, այլանդակում էր նրանց դէմքը և, վերջապէս, ամեն զէնքերով կռւում էր առեւանգողների դէմ։ Ուրիշ բան էր կռիւը. զինուորները

իրանք էին ապրանք գտնում և վաճառում էին չնչին գներով։

Հասկանալի է թէ ինչո՛ւ այնքան գոհ էր Բէօսա-Մուխտարը։ Միւս օրը մի ամբողջ արշաւանք պիտի սկսվէր, որ նշանաւոր շահ էր խոստանում։ Մի և նոյն ժամանակ նա հաշւում էր, որ մի հարուածով երկու նապաստակ սպանեց։ Եթէ բէկը մի քիչ փորձված մարդ լինէր և քիչ հաւատ ընծայէր իր լսած շողոքորթութիւններին ու Մուրադ-աղայի հրաշագործ միջնորդութիւններին, այն ժամանակ հարկաւոր կը լինէր երկու քսակ ոսկիներն էլ տալ նրան։ Իսկ այժմ... բաւական էր և մէկը։ Մուխտարը հանեց իր ծոցից մի քսակ միայն, մօտեցաւ բէկին, աւելի ևս ծալեց իր կոր մէջքը և նորից համբուրելով նրա զգեստի քղանցքը, ասաց.

—Մեզ համար կարգ է, որ քեզ պէս մեծ իշխանների դռնով չը համարձակվենք մտնել առանց նուէրի։ Ծառադ լաւ գիտէ, որ դու, էֆէնդի, ոսկի գահերի ես արժան։ Բայց այս անգամ ներիր։ Սա մի չնչին նուէր է իմ տիրոջ կողմից։ Մնացածը... վկայ է Ալլահը, նա չի մոռանայ։

Բէկը այդքանին էլ չէր սպասում. մի ագահ հայեացք գցեց քսակի վրա, ապա նայեց Մուխտարին, զըլխով հաւանութեան նշաններ արաւ և, տեսնելով որ նա նոյն քաղաքավարական ձևերով հրաժեշտի ողջոյն է տալիս, ժպտաց, աջողութիւն մաղթեց նրան։

—Աջողութիւն և քեզ, էֆէնդի, հազար աջողութիւն։ Իմ ասելը աւելորդ է, որովհետև աջողութիւնն է քո մայրը... Բայց ծառաները պարտաւոր են աղօթել։ Մի բան էլ եմ խնդրում...

—Ի՞նչ կայ։

Մուխտարը մօտեցաւ և մի խորհրդաւոր եղանակով ասաց նրան.

—Բնական է որ երբ մտնում ես մի պարտէզ, ման ես գալիս, որ գտնես վարդերի թագաւորին։ Այս ժայրի

գլխին մէլիքի տունն է։ Այնտեղից տանել կարելի է... Քո կամքը լինի։

—Ի՞նչ տանել։

—Այստեղ, գինուորների մօտ տեսայ աղային։ Վատ չէր...

Բէկը առանց տատանվելու պատասխանեց.

—Ո՛չ, այդ անկարելի է... Ինձ Մուստաֆա-փաշան հրամայել է ձեռք չը տալ այդ տանը։ Նա բարեկամ է մէլիքի կնոջ եղբօր հետ։ Եւ բացի դրանից...

Նա քիչ կանգ առաւ, կարծես վճռում էր թէ կարելի է այդ մարդուն յայտնել ամեն ինչ։ Բայց յետոյ աւելացրեց.

—Նա մեզ հարկաւոր է...

—Զինուորացն... Հասակն անց է։ Միշտ դեւաւոր կը մնայ։

—Ո՛չ, նա մեզ տեղեկութիւններ է հաղորդում։

Մուխտարը վերջին անգամ ողջոյն տուեց ու հեռացաւ։

Դրսում վաճառականի ագահութիւնը գրգռեց մի տեսարան։ Տասնապետ Ահմէդը նստած էր ցանկապատի տակ, իսկ Շահնազարը խաղում էր նրա հետ։ Մօտենում էր ետեից, խփում էր և սաստիկ ծիծաղելով փախչում էր հեռու, ապա նորից վերադառնում, նորից սկսում։ Նրա առողջ կազմուածքը, կարմիր թշերը ցոյց էին տալիս թէ ինչ զգալի հարուստ հասցրեց բէկը Մուրադ-աղայի շահերին՝ պաշտպանելով այս աղային։

Գործակատարը ափսոսաց, բայց ինչ կարող էր անել։ Նա տեսաւ թէ որպիսի համբերութեամբ է ծերունի զինուորը վերաբերվում մէլիքի որդու չարութիւններին։ Ահմէդը լուռ ու մունջ էր, չէր շարժվում, մինչև իսկ չէր նայում Շահնազարին. իր մէջքը նա դրել էր վերջինիս տրամադրութեան տակ, իսկ ինքը քարային անտարբերութեամբ նայում էր իր առջեւ, կարծես խոր մտածութիւնների մէջ էր։ Տեսարանը, այո, ագահութիւն

էր գրգռում, բայց մի և նոյն ժամանակ ցոյց էր տալիս, որ ագահութեան առարկան ճշմարիտ որ հարկաւոր էր բէկին։

ԺԲ

Տանջանքների մէջ գուցէ ոչ մէկը այնքան հոգեմաշ չէ, ինչպէս այն մարդու դրութիւնը, որ անդադար սպասում է մի անհաւոր դժբախտութեան։ Սպասում է օրերով, ամիսներով, սպասում է մի զարմանալի յամառութեամբ, հնարաւորութիւն չունենալով ոչ մի ժամանակ՝ թէ ծիծաղի և թէ հառաչանքների մէջ, մոռանալ որ կայ այդ հարուածը, անխուսափելի է, պատրաստվում է ամեն ժամ, ամեն րոպէ։

Այդ դրութիւնը սպառել էր Աննա-խաթունի համբերութիւնը, հոգեկան բոլոր ույժերը։ Ո՛չ ոք, նոյն իսկ նրա հարազատ եղբայրը, չը գիտէր թէ ինչ է կատարվում այդ կնոջ մէջ, ինչ մորմոք է զգում մի մարդ, որ կաշկանդված է, նստած վառ ածուխների վրա և սպասում է անթարթ աչքերով, լարած իր բոլոր զգայարանները։

Տեսնում էին որ նրա դէմքը օր օրի վրա գունատվում է, որ աչքերի տակ խոր փոսեր են գոյանում, բայց չը գիտէին որ դրանք ներքին տագնապի թոյլ նշաններն էին։ Մայրական սիրտը երբեք չէր դաւաճանում իր կոչման. նա պինդ փակել էր իր պատերի մէջ միայն իրան յայտնի զգացմունքը, տանջվում էր լուռ, նահատակի համբերութեամբ։

Բայց նա էլ մարդ էր, նա էլ յոգնել գիտէր։ Վերջին օրերում յաճախ էին գալիս այնպիսի րոպէներ, երբ նրան թւում էր թէ Աստուծու ողորմութիւնը կը լինէր, եթէ միանգամից կատարվէր վերջանար այն, ինչ որ պիտի լինէր։ Լաւ թէ վատ,—այդ մի և նոյն է։ Նոյն իսկ վատն էլ կը գոհացնէր սիրտը, միայն թէ վերանար այն

մերկ սուրը, որ կախված էր սպասողի գլխին։ Այո, երանի նրանց, որոնք ստացել են իրանց բաժինը դժբախտութեան բաժակից և այլ ևս չեն սպասում։ Աննա-խաթունն էլ ուզում էր այդպիսիներից մէկը լինել։

Բայց դա, ի հարկէ, մէկն էր այն բազմաթիւ սխալներից, որոնք յատուկ են տանջվող սրտին։ Մի սխալ, որ միայն այն ժամանակ կանգնեց աչքի առաջ, երբ ներս մտաւ Մանասի սուրհանդակը։

Աւագակապետը կարեոր էր համարել իսկոյն լուր հասցնել մէլիքի կնոջը և Աւետարանցի աւագներին իր յանդուգն քաջագործութեան մասին, որը պիտի հանէր բոլոր մարդկանց սրտերում ցցված փուշը։ Լրաբերը դեռ ճանապարհին գիտէր, որ իրան սպասում է Աննա-խաթունի անկեղծ խնդակցութիւնը։ Իսկ Մանասի դժերը սպասում էին թէ ինչ ընծաներ կուղարկէ մէլիքի տունը, որովհետև հին կարգ էր մէլիքների համար՝ երբեք առանց վարձատրութեան չը թողնել ամեն մի քաջութիւն, որից օգուտ ունէր երկիրը։

Այրին սկզբում զարմացաւ, ապշեց։ Նա համարեա չէր հաւատում, հարցեր էր տալիս, մինչև անգամ երդվեցրեց լրաբերին։ Գուցէ առժամանակ նա էլ հիացաւ, գուցէ նրա սրտի մէջ էլ անցաւ մի գովաբար հոսանք։ Բայց երբ վերջացաւ սարսափելի պատմութիւնը, տեղից վերկացաւ աւելի սարսափելի իրականութիւնը և ճնշեց նրան։ Նա զգաց որ այժմ եկել հասել է այն ժամը, որին ինքը սպասում էր, որին երանի էր տալիս։

Դա մի դառն, յուսահատ ճշմարտութիւն էր, որին նա չը կարողացաւ նայել։ Այժմ միայն նա հասկացաւ թէ ինչ վատ բան էր ուզում ինքը, այժմ պարզվեց թէ ինչ անհրապոյր դժոխային միտքն էր նա համարում Աստուծու ողորմութիւն։ Ո՛չ, փառված ածուխների վրա կեանքն էլ կեանք է. իսկ իւրաքանչիւր կեանք լաւ է, քանի գոյութիւն ունի երկնքի տակ։

Նա սառն, համարեա թշնամական կերպով դարձաւ

սուրհանդակին և ասաց.

—Ասում ես՝ Մանասը գոհ է, հա՞։

—Միթէ դու գոհ չես, մէլիքի կին, պատասխանեց նա։

—Ե՞ս...

—Ամեն օր մեր մարդկանց հալածում, տանջում են։ Մի օր էլ մենք...

—Վրէժ է, խօսք չունեմ, մի անգութ վրէժ, որ միայն չափից դուրս կատաղած հակառակորդին է վայել։ Ցետո՞յ։

—Ցետո՞յ, զարմացած կրկնեց սուրհանդակը։—Ցետոյ ինչ...

—Այն, որ այդ վրէժը կը դառնայ մի նոր, աւելի ահաւոր վրէժխնդրութեան առարկայ։ Ո՞վ պիտի այժմ կանգնեցնէ Թիւրքին, ո՞վ կը հասկացնէ նրան թէ հայերի վրէժը աշխարհի օրէնք էր, կատարվեց ու վերջացաւ և այսուհետև երկու կողմերը հաւասարապէս բաւարարութիւն են ստացել, ուստի այլ ևս պէտք չէ միմեանց միս կրծել։ Ո՞վ պիտի կատարէ այնպիսի դատաւորի պաշտօնը. ասա ինձ, կա՞յ մէկը...

—Չը կայ, շփոթված ձայնով պատասխանեց լրաբերը։

—Ուրեմն Մանասի գործը միայն այն լաւութիւնը կունենայ, որ կը շտապեցնէ օրհասական ժամը, մի ժամ, երբ այս երկիրը բոլորովին քարուքանդ կը լինի... Մինչև այժմ շները առիթ էին որոնում. հիմա առիթը տուեց Մանասը։ Բայց մի՞թէ դա լաւութիւն է...

—Նա ինձ չի հաւատայ, եթէ պատմեմ քո ասածները։

—Թո՛ղ հաւատայ... Թո՛ղ իմանայ որ գերիներին, ծառաներին, անպաշտպան ոչխարներին չէ տուած վրէժի իրաւունք։ Նա պիտի հանգիստ թողնէ այս խեղճ մարդկանց, թոյլ տայ որ ամեն մէկը իր դժբախտ գլուխը պահէ, ինչպէս կարող է։ Դա միակ բարերարութիւնն է, որ կարելի է անել այժմեան ժամանակ...

Սուրհանդակը շուռ տուեց իր դէմքը, ուզում էր հեռանալ։

— Սպասիր, ասաց Աննա-խաթունը.— չը մոռանաս ասել մանաւանդ այս խօսքերը։ Ես շատ խնդրում եմ որ այսուհետև ինձ մօտ լրաբերներ չուղարկէ Մանասը։ Ի՞նչ հարկ կայ։ Ի՞նչ եմ ես։ Ես էլ մի մարդ եմ, որ աշխատում է պահպանել իր գլուխը և ոչ միայն իրը, այլ և իր երեք երեխաներինը։ Ինձ պէս մարդուն օգնութիւն կանէ Մանասը, եթէ ցոյց չը տայ թէ ինձ ճանաչում է... Վաղը կիմանան որ դու եկել ես այստեղ և...

Խօսքը նա կիսատ թողեց, հրամայեց լրաբերին հեռանալ ամենամեծ զգուշութեամբ, այնպէս որ ոչ մէկի ուշադրութիւնը չը գրաւէ։ Չը մոռացաւ պատուիրել և այն, որ ճանապարհին մարդու հետ չը խօսէ։

Այսպէս մէլիքի տունը բոլորովին մերժեց Մանասին։ Աննա-խաթունը, լաւ հասկանալով թէ ինչ է անում, կտրեց այն բոլոր յարաբերութիւնները, որոնք դեռ մնում էին այս տան և Մանասի մէջ։ Կարո՞ղ էր ծմակի մարդը սպասել, որ իր ամենամեծ գործը առաջին անգամից կը դատապարտվի հէնց այն տանը, որին ինքը նուիրված էր ամբողջ սրտով։

Զարմանալի էր նրա բախտը։ Քանի որ մանր գործեր էր կատարում, ամենքը ուրախանում էին, գոհ էին, թէև նրա վտանգ մի մարդու փոխարէն վտանգվում էին մի քանի հայեր։ Իսկ այժմ, երբ խոշոր էր նրա գործը, հեռաւոր և աւելի խոշոր վտանգ պիտի պատճառէր երկրին, լսվում էին դժգոհութեան ձայներ։

Ինչու էր այսպէս։

Աննա-խաթունը, կարծես, լսում էր այդպիսի հարց Մանասի բերանից, ուստի սուրհանդակի գնալուց յետոյ նա առանձնացաւ, խորհրդի հրաւիրեց իր մտքերը։ Եւ այն ժամանակ, երբ Քէօսա-Մուխտարը կատաղութեան բոց էր արծարծում խլամացած սրիկացու մէջ, նա այսպէս էր դատում.

Մի համաճարակ ախտ, դիցուք մի սև ժանտախտ, մտեցել է մի երկրի և ուզում է անգթութիւններ գործել այնտեղ։ Բայց նա կանգ է առնում սահմանի վրա, դուրս է կանչում ամբողջ ժողովուրդը և առաջարկում է նրան պայմանաւորվել իր հետ։ Նրա անդառնալի վճիռն է՝ ջնջել ժողովրդի այս ինչ մասը. և այժմ դնում է պայման՝ կամ միանգամից կոտորել այդքան բազմութիւնը, մի կամ երկու օրում մի ահեղ հարուածով վերջացնել ամեն ինչ ու հեռանալ, կամ թէ գործել դանդաղ ու անշշուկ, մահացնել անհատներին առանձին-առանձին, վերջացնել գործը ամիսների ընթացքում։ Ի՞նչ կասէ ժողովուրդը։— Ի հարկէ, առանց տատանվելու, առանց երկար մտածելու կընդունէ վերջին պայմանը։ Հասկանալի է թէ ինչու։ Մարդու համար մի օրվայ կեանքն էլ մեծ գին ունի...

Այո, հզօր փաստեր ունէր ապրելու ցանկութիւնը։ Նա դէմ էր Մանասին, որովհետև աշխարհի իշխան էր և տիրաբար քարոզում էր թէ կեանքը կեանք է՝ թէկուզ առանց շապիկի, թէկուզ քաղցած, ամօթահար, վիզը ծռկած։ Կար, ճիշդ է, և մի այլ փոքրիկ բան, որ այդ իշխանի թշնամին էր։ Նա սրտի մի նեղ ու աննշան խորշն էր. այնտեղ էր Մէլիք-Յուսէփի վերջին ձայնը, այնտեղ ընկնում էր նրա հայեացքը միւս աշխարհից։

Չէր կարելի ասել թէ փոքրիկ խորշը բոլորովին մոռացութեան էր մատնված. նա դեռ թրթռում էր, բայց մեղմ, համեստ ու հեզ էր։ Կոյս Հեղինէն նրա մէջ կաթեցրել էր ցուրտ ջուր և նա այլ ևս չէր տաքանում, իսկ Սիւլէյման բէկը փակեցրել էր կոյսի գործը։ Եւ այդպէս լաւ էր. լաւ էր յետաձգելը, լաւ էր մի աւելորդ օր ևս անցկացնել այս աշխարհում։

Ահա վերջացաւ մի այդպիսի օր։ Ընտանիքը հանդարտ վերջացնում էր ընթրիքը։ Սեղանի վրա տիրում էր խորին լռութիւն։ Այս երեկոյ ամենքը համակված էին մի տխրութեամբ։

Եթէ Աննա-խաթունը չէր խօսում, համարեա ուշա-

դրութիւն չէր դարձնում իր մօտ նստածների վրա, դա դեռ հասկանալի էր, որովհետև մի էր նրա չափ մտածում։ Բայց ինչ էր լսել Գայիանէն. մի՞թէ նրան էլ յուզում էին մօր մտքերը։ Մէհրին ոչինչ չէր հասկանում նրա թախծալի դէմքից, անշարժ շրթունքներից և հարցական հայեացքներ էր ուղղում թէ՛ նրան և թէ՛ մօրը, բայց ոչ մէկն էլ չէր պատասխանում այդ հարցումներին։

Պառաւի կողքին կուչ էր եկել Յովսէփը։ Անկարելի էր ասել, թէ սա այժմ միւսներից է վերցրել իր անտարբեր, տխրագին տրամադրութիւնը. ընդհակառակն, ուղիղ կը լինէր ենթադրել, որ միւսներն են այս անգամ համակերպվել նրա հոգեկան անփոփոխ դրութեան։ Միայն Շահնազարն էր, որ դարձեալ անհանգիստ էր ու չար. նա խառնում էր սփռոցի վրա դրած իրերը, պահանջում էր մեծ բաժին, չարչարում էր իր մեծ եղբօրը չը թողնելով որ նա ուտէ այն, ինչ ինքը չէր ցանկանում։ Այդ բոլոր քմահաճութիւնները կատարվում էին անխափան։ Ոչ ոք սիրտ չունէր նրա հետ խօսելու, նրան խրատելու։

Շտապով ներս ընկաւ սպասաւոր կինը, սկսեց շտապով հաւաքել սփռոցը, կարծես ուզում էր փախցնել։ Եւ կարծես իր այդ տարօրինակ վարմունքը արդարացնելու համար էր որ նա կիսաձայնով ասաց.

—Դրսում ինչ-որ տարօրինակ ձայներ են գալիս։

Ամէնքը, բացի Յովսէփից, մի ակնթարթում դուրս թռան։ Առաջնորդողը Աննա-խաթունն էր, որ այսպիսի դէպքերում տղամարդի սիրտ ունէր։

Կարծես օդն էլ հասկանում է թէ ինչ է անսովոր դժբախտութիւնը։ Լսվում էին խառն ձայներ. հեռուում մի սուր ճիչ մարեց, շները կսկծալի հաչոց բարձրացրին և ապա տիրեց կարճ լռութիւն։

Այդ բոլորը կարող էր գիւղական առօրեայ աղմուկի մի կտորը լինել. բայց օդը ինչ-որ չարագուշակ բան էր իրանից աւելացնում այդ ձայների վրա։ Գիշերային խաւարի մէջ սիրտը բռնում էր օդից այդ առանձնայատուկ

նշանները և միանգամայն անսխալ գործում էր՝ փոխարինելով տեսողութեանը։

Բոպէ չանցած՝ մի այլ չարագուշակ ձայն տարածվեց, այս անգամ բոլորովին մօտիկ տեղ, տան բակում։ Մէկը բաղխում էր դրսի դուռը։

Առաջին վայրկեանում Աննա-խաթունը այնքան գլուխը կորցրեց, որ չը կարողացաւ այլ ևս պահել այն հառաչանքը, որ այնքան ժամանակ փակել էր իր սրտի մէջ։ Նա չիմացաւ որ Գայիանէն արդէն դողում է գիշերային ձայներից և բոլորովին պարզ կերպով մրմնջաց մի սարսափելի բառ.

—Սկսվե՜ց . . .

Դա մի աղաղակ էր, որ դուրս էր թռչում ինքն ըստ ինքեան, անգիտակցաբար։ Նորից կրկնվեց բաղխոցը։ Ծառան վազեց դռների մօտ։ Լսվում էր միայն նրա ձայնը. նա հարց ու փորձ էր անում։

—Ո՞վ է, Թէոս, ինչ է ուզում, կանչեց այրին։

Այդ անհամբերութիւնը ցոյց էր տալիս, որ նա արդէն պատրաստ է ամէն մի հարուածի դէմ գնալու։ Թուլութիւնը չքացաւ, որովհետև վտանգը շատ մօտիկ էր երևում։ Բայց ծառան իսկոյն չը պատասխանեց։ Բաւական առաջ գալով, նա հանդարտ ձայնով ասաց.

—Կոյս Հեղինէն խնդրում է բաց անել...

—Կոյս Հեղինէ՞ն... Դու լա՞ւ ես ճանաչում նրա ձայնը։

—Նա է, ասում է շատ հարկաւոր գործ կայ։

Տիրեց վայրկենական լռութիւն։ Դա հարկաւոր էր թուլասրտութեան վերջին նշոյլը ոչնչացնելու համար։ Բակի մէջ հնչեց այդ կնոջ տխրական խռոխտ ձայնը.

—Բա՛ց արա . . .

Եւ ինքը ցած գնաց, հրամայելով Մէհրիին ու Գայիանէին որ ներս գնան։

—Ջր վախէք, աւելացրեց նա ներքևից.—գնացէք տուն։ Թէոս, մի ճրագ բեր։

Հեղինէն էր, այո, բայց մենակ չէր։ Հէնց որ դռ-

ների անագին փեղկերից մէկը յետ գնաց ու մի նեղ ճեղք բացվեց, նա շտապով ներս մտցրեց երկու փաթաթված կանանց, ապա ինքը մտաւ։ Ծառան դուռը փակելուց յետոյ, կոյսի հրամանով ճրագը դրեց սրահում ու հեռացաւ։ Այն ժամանակ Հեղինէն հարցրեց.

—Ո՞ւր կարող ենք տեղաւորել սրանց։

Նա թոյլ չը տուեց որ Աննա-խաթունը մի այլ հարց տայ, իմանայ որ և է պատճառ։ Խօսքը միմիայն թագցնելու տեղի մասին էր։

Եւ այդպիսի մի տեղ գտնելը երկար չը տեւեց. դա մի փոքրիկ սենեակ էր, որ գտնվում էր սրահի տակ և մի ժամանակ մէլիքի բանտն էր։ Ինքը Հեղինէն ներս տարաւ իր բերած կանանց, նրանց օգնութեամբ տեղ պատրաստեց մի կարճ միջոցում, իսկ մէլիքի կինը պատուիրեց որ վերևից անկողին ու կարպետներ բերեն։

Ամեն ինչ վերջացնելով, Հեղինէն ճրագը թողեց այնտեղ, ինքը դուրս եկաւ և դուռը կողպելով, բանալին յանձնեց Աննա-խաթունին։

—Քեզ եմ տալիս, ասաց նա. լաւ նայիր, շուտ-շուտ տեղեկացիր թէ ինչ են ուզում։ Բանալին ծառաների ձեռքը չը տաս. աշխարհը մեղքերով լցված է...

Նրանք սկսեցին աւելի հանդարտ ձայնով խօսել։

—Ուրեմն սկսվեց, ասաց Աննա-խաթունը։

Պառաւ կոյսը այժմ միայն բաց արաւ իր յուզված սրտի դուռը։ Նա պատասխանեց դառն կերպով.

—Վաղուց էր սկսված. այժմ սկսածը սաստկացաւ...

—Ի՞նչ աղաղակներ էին...

—Զինւորք... Տէր-Մարութի տունը թալանվեց։ Նրան բռնեցին տարան բէկի մօտ, երեխաները այս ու այն կողմ փախան։ Նրա մեծ աղջկան փախցրին... Տէր Աստուած...

Տասնապետ Ահմէդը յայտնի էր ամբողջ Աւետարանոցին։ Սովորաբար, երբ նա մենակ էր ման գալիս, ոչ ոք նրանից չէր վախենում։ Խաղաղ, նոյն իսկ բարեհոգի

թուրք էր Ահմէդը. նա ինքը դէմ չէր՝ որ նոյն իսկ երեխաներն էլ ծիծաղեն իր վրա, չարչարեն իրան։ Սիրում էր այդպիսի բաներ։ Բայց աւելի շատ սիրում էր կրկնել.

—Ինձ օնբաշի Ահմէդ կասեն։

Այդ բանը նա ցոյց էր տալիս այն ժամանակ, երբ բէկի հրամաններն էր կատարում, այն էլ ոչ թէ մենակ, այլ բէկի բաշիբոզուկների հետ միասին։ Այդ դէպքերում նա իսկ որ սարսափելի զինուոր էր։ Սարսափելի էր մանաւանդ այժմ, երբ, աւելորդ համարելով մինչև առաւօտ յետաձգել բէկի հրամանը, գնացել էր Տէր-Մարութին հասկացնելու, որ իրան օնբաշի Ահմէդ կասեն։

—Խեղճ Տէր-Մարութ, մրմնջաց Աննա-խաթունը։

Բայց ցաւակցութիւնը կարճ տեւեց։ Նա յիշեց ուրիշ բան և աւելացրեց.

—Բաւական բարձրից են սկսել։

—Այո, հաստատեց Հեղինէն։—Ես հէնց այդ պատճառով շտապեցի փախցնել երկու կոյսերին։ Նրանք ամենից ջահիլներն են, իսկ մեր վանքը շատ էլ ամուր չէ։ Շրջապարիսպը, ճիշդ է, շատ պինդ է, բայց այս երեկոյ ինձ յանկարծ սկսեց վախեցնել նրա վերևի, հիւսիսային մասը։ Այդ կողմում քարերը խախտված են երեւում... Հիմա որ հանգստացայ։ Նրանք այստեղ ապահով են։

—Ապահով...

—Ի հարկէ... Այստեղ մտնելը հեշտ չէ։

—Ո՞վ պիտի արգելէ։

—Պատերը, աշտարակները, դռները, կողպէքները։ Լոյս դառնայ Մէլիք-Յուսէփի հոգին... Քո տունը երկաթի սնդուկ է։

—Իսկ ինչ կը լինի, եթէ գան և դրսից կանչեն որ բաց անենք այդ սնդուկը։

—Ո՞վ պիտի գայ։

—Հէնց նոյն օնբաշի Ահմէդը։

—Լուռ ու մունջ նստիր տեղդ, ոչինչ պատասխան

մի տուր։ Փառք Աստուծու, ինչդ է պակաս։ Քառասուն օր էլ եթէ փակված մնաս, պաշար կունենաս։

—Բայց վե՞րջը։

—Վե՞րջը մէկ է—Աստուած։ Եթէ նա գրել է որ այս ամբողջ աշխարհը պիտի քանդվի, ոչ ոք չէ կարող մազի չափ դիմադրել այդ կարգադրութեան։ Սաղմոսն ասում է. «Եթէ Տէրը չէ շինում, զուր են աշխատում գործողները»։

Աննա-խաթունը բաւականացաւ այդ բացատրութեամբ։ Ուր որ կար Աստուծու կամքը, այնտեղ ոչինչ էր մարդու խելքն ու զօրութիւնը։ Նա փառք տուեց այդ կամքին, ապա պատմեց Մանասի մասին, թէ ինչ էր ասել նրա սուրհանդակը և ինչ էր պատասխանել ինքը։

Կոյսը հաւանութիւն տուեց. խիստ դատապարտեց Մանասի արածը։ Նա էլ նոյնը կրկնեց, ինչ ասել էր մէլիքի կինը։ Այժմ երկուսը բոլորովին համամիտ էին. նրանք, վերջապէս, միացան մի կէտի վրա, թէև մինչև այդ հակառակ կողմերում էին կանգնած։ Հեղինէն գոհ էր։ Այդ երևաց նրա խօսքերից, որոնց սովորաբար գործ էր ածում իբրև հրաժեշտի ողջոյն, երբ հեռանում էր անհոգ սրտով։

—Մեր մեղքերի համար է, ասաց նա, ձեռքը թափ տալով, և քայլեց դէպի դուռը։

Ճանապարհին նա մի անգամ էլ յիշեցրեց Աննա-խաթունին իր նախկին պատուէրը կոյսերի մասին, նորից խնդրեց լաւ պահել նրանց, բանալին չը տալ ուրիշին։

—Մեղքերի ծով է մեր աշխարհը, իսկ նրանք ջահիլ են... Առհասարակ աշխատիր որ շատ մարդիկ չը մտնեն այստեղ։

Այրին խոստացաւ կատարել այդ բոլորը. նրա ձայնը հաստատ էր, վճռական։ Եւ միայն այդ ժամանակ Գայիանէն պոկ եկաւ իր տեղից ու մտաւ իր սենեակը։

ԺԳ

Մօր հրամանը նա չէր կատարել... Սա առաջին անգամն էր։

Նա լաւ տեսաւ թէ ինչպէս թագցրին երկու կոյսերին, լսեց իր մօր և Հեղինէի ամբողջ խօսակցութիւնը, ուշադրութիւն չը դարձնելով Մէհրիի թախանձանքների վրա, մինչև իսկ երկու անգամ դէն հրելով նրան։ Ի՞նչ կարող էր անել դայեակը. նա զարմացած էր այդ անօրինակ դիմադրութիւնից, ուրիշ իշխանութիւն էլ չունէր որ հարկադրէր։ Եւ կա՞ր արդեօք այդպիսի իշխանութիւն։

Ջէթի ճրագը, որ դրած էր բարձր ճրագակալի վրա, դժգոյն, կարմիր լոյս էր թափում գորգերով զարդարված սենեակի մէջ։ Նրա առաջ նստած էր Գայիանէն, լուռ, հայեացքը բևեռած սենեակի դռներին։ Մէհրին մի քանի անգամ փորձեց մօտենալ նրան, բայց ինչ զարմանալի բան... այժմ նրան դէն էր հրում մի տարօրինակ, մինչև այժմ անծանօթ զգացմունք։

Կարծես մի ժամում նրանք օտարացել էին միմեանցից. կարծես այժմ միայն յայտնի դարձաւ որ մէկը Վարանդայի իշխանի աղջիկն է, իսկ միւսը մի խեղճ, անտուն գեղջկուհի, որ կեանքի կէսը անց էր կացրել այս տանը, ծառայել էր և փոխարէնը մի կտոր հաց կերել։ Տարբերութիւնը շատ մեծ էր. նա այժմ ցոյց էր տալիս որ ծառային պատշաճ տեղը տիրուհուց հեռու լինելն է։

Ի՞նչպէս էր որ այս հանգամանքը այժմ միայն յայտնի դարձաւ, այսպէս յանկարծակի և այսքան պարզ։ Ահով շրջապատված հոգիները որոնում են միմեանց, կպչում են իրար, տաքացնում, փոխադարձ խրախոյսներ հաղորդում միմեանց։ Անհասկանալի՜ երևոյթ. հէնց այդպիսի ժամանակ, երբ դրսի աշխարհը սարսուռ էր զգում գիշերային յուսահատական ձայներից, տարիների մտերմու-

թիւնը ոչնչանում էր դայեակի և սանիկի մէջ։ Նրանք բաժանվում էին այս երկիւղալի րոպէին, մինչդեռ, երկար անցեալին նայելով, սանիկը հէնց այժմ պիտի սեղմվէր դայեակի կրծքին և հանգստութիւն պիտի որոնէր նրա փաղաքշանքների մէջ։ Մէհրին շատ լաւ զգաց որ այժմ իր կուրծքն ու փաղաքշանքները ոչինչ են։

Երբեք նա այդպիսի դէմք չէր տեսել Գայիանէի վրա։ Դա այժմ տխրութեան հրեշտակը չէր, որին մի ժամանակ մխիթարում էր պառաւը։ Շատ հեռու չէ գնացել այդ ժամանակը։ Վշտի, սուգի այն սև օրերում, որոնք խեղդում էին այս տունը Մէլիք-Յուսէֆնի մահից յետոյ, նա մի կատարեալ հրեշտակ էր, ամբողջապէս թաթախված հառաչանքների, արտասուքների մէջ։ Անհայր որբը այն ժամանակ ուրիշ բան էր. իր տեսքով շարժում, քանդում էր մարդու սիրտը, արտասունք էր հանում նոյն իսկ օտարի աչքերից։ Ոչ մի որբ նրա պէս չէր հասկացրել տեսնողին թէ որքան անգութ է մահը։

Իսկ այժմ։ Դարձեալ գունատ է գեղեցիկ դէմքը, դարձեալ լուռ ու մտախոհ է նա, իսկ ամբողջ կազմուածքը չէ թագցնում որ ընկել է ինչ-որ սարսափելի ծանրութեան տակ։ Բայց նմանութիւնը հէնց այդքանով էլ վերջանում էր։ Կային նոր գծեր. դրանք նոր կերպարանք էին հաղորդել նրա դէմքին։

Վառվել էր մի ուրիշ լոյս հրաշալի աչքերի մէջ։ Մեղմ ու հեզ, բայց դրաւիչ, թախծալի էին այդ նոր ճառագայթները. կարծես աստղերի շողերն էին դրանք, որոնք ընկել էին աչքերի մէջ և չէին կարողանում դուրս գալ անյատակ խորութիւնից։ Երբեք Գայիանէն այդպէս չէր նայել այս աշխարհին։ Կարծես նա գտել էր մի նոր, ուրիշ աշխարհ. նրան էր նայում, զգում էր, մտածում, դատում։ Ի՞նչ էր դա՝ այդ աշխարհը։ Թւում էր թէ այնտեղից խօսում էին սրբերը. և խօսքը երկրաւոր չէր, այլ ինչ-որ խորհրդաւոր ուխտի մասին էր։ Թւում էր թէ հէնց այդ է պատճառը որ Գայիանէն այնքան անմատչելի

էր երևում, այնքան բարձր, ցուրտ։

Սիրտը, այո, կոյր չէ. բայց նրա տեսածը շատ անգամ մութ է, ծածկված ինչ-որ նուրբ շղարշով, որ չէ ցոյց տալիս բոլոր խորութիւնները, բոլոր եռացող անկիւնները։ Մէհրիի սիրտը չէր տեսնում թէ ինչ մեծ անբաւականութեամբ է համակված Գայիանէի սիրտը։ Նա անբաւական էր ոչ միայն իր պառաւ դայեակից, այլ և այն փոքրիկ աշխարհից, որ ամփոփված էր մելիքի ամրոցում։

Փակված միջավայրի, երկաթէ պատով սնդուկի ծանրութիւնն էր նրա վրա ընկած։ Նա ուզում էր լայնարձակ տարածութիւն։ Մինչդեռ ուրիշները դրսից գալիս էին այս ամրոցի մէջ՝ թագնվելու պատրաստվող ահեղ փոթորիկից, Գայիանէն ուզում էր դուրս գալ՝ ոչնչացնելով այդ բոլոր փականքները, բոլոր արգելքները։

Դուրս գալ… բայց ո՞ւր։ Այնտեղ խաւար է, արհաւիրքներով լի. այնտեղ շատ են գազանները. վիշապներ, եօթն գլխանի ճիւաղներ սողում են, սպասում են, ամենի են, անյաղթելի։

Ո՞ւր գնալ, ինչպէս գնալ։ Այստեղ Գայիանէն կանգ է առել, չը գիտէ։ Այստեղ նա դողում է…

— Դու վախենում ես, յանկարծ տարածվեց սենեակի լռութեան մէջ մի խոնարհ, ճնշված շշուկ։

Նա բարձրացրեց գլուխը, նայեց։ Խեղճ, բարեհոգի դայեակն էր դա, որ կուչ էր եկել պատի տակ, խոնարհ, աղերսաւոր, ոչնչացած։ Նա դանդաղ կերպով շարժեց իր գլուխը. դրական պատասխան էր տալիս… Այո, վախում էր…

Ու Մէհրին շտապեց օգնութեան հասնել։ Լեզուն գործի գցեց, էլի նոյն Մէհրին էր։ Նորից հաւատաց իր խօսքի ուժին, նորից մտաւ իր պաշտօնի մէջ և իր նեցուկ դարձրեց անցեալը, իր ծառայութիւնները, իր երախտիքը։ Թէև խօսում էր մի կերպ քաշվելով, մի տեսակ անվստահութեամբ, կարծես սպասում էր ամեն րոպէ թէ սանիկը կընդհատէ, բայց պառաւական ձայնը

հաստատ էր, անկեղծութեան, անձնուիրութեան և սիրոյ շեշտերով ամրացած։

—Թող բարի հրեշտակները քեզ պահապան լինեն, թող աչերն ու խաչերը քո թևը, քո թիկունքը դառնան։ Աղաչում եմ Սմբատի սուրբ Գրիգորիսին, Դիզափայտի լուսաթաթախ նահատակներին, մեր սուրբ Ղևոնդեկին, մեր երկրի բոլոր խաչերն եմ կանչում և աղաչում, որ քո բոլոր ցաւերն ինձ տան։ Թող ինձ վրա ընկնի այն, ինչ որ քեզ պիտի հասնէ։ Ես վերջացրել եմ ամեն բան, ոտս գերեզմանում եմ դրել. ուրախութեամբ, փառք տալով կը տանեմ քո բոլոր ցաւերը...

Այդ նախերգանքից յետոյ պառաւը փոխեց իր ձայնը և սովորական եղանակով շարունակեց.

—Ինչու ես այդպէս, ինչու ես իմ սիրտը արիւնով լցնում, Գայիանէ։ Ի՞նչ եմ տեսնում. դու փոխվել ես, քեզ դժուար է ճանաչել։ Դու վախում ես և լուռ ես մնում... Իսկ քո Մէհրին—քարանձյ Մէհրին—հարիւր ու մի մտքեր է անում այստեղ։ Վախում ես... Բայց գիտե՞ս ինչեր կան ինձ մօտ քո վախը փարատելու համար։ Օ՜, մի՛ վախիր. եթէ բաւական չեն քեզ շրջապատողները, միտդ բեր թէ որքան հաստ ու ամուր պատերի մէջ ես նստած։ Լսեցի՞ր կոյս Հեղինէի խօսքերը։ Երկաթէ սընդուկ... Հե՞շտ է երկաթէ սնդուկը բաց անել։ Բայց Հեղինէն չը գիտէ, որ այս երկաթէ սնդուկի մէջ դրած է մի ուրիշ, աւելի պինդ երկաթէ սնդուկ։ Դու էլ չը գիտես և չը պիտի իմանայիր, եթէ այդքան վախեցած չը լինէիր։ Ես կը պատմեմ այդ զարմանալի գաղտնիքը. բայց դու էլ գաղտնի պահես։

Նա մօտեցաւ Գայիանէին, ձեռքը դրեց նրա ուսի վրա և ցած ձայնով շարունակեց.

—Քո պապը իմաստուն էր... Իր ձեռքով շինել է տուել մի ստորերկրեայ սենեակ, մի զարմանալի թաքստարան նեղ օրերի համար։ Ո՞րտեղ է նա, ինչպէս են մտնում այնտեղ—երկնքի տակ միայն մէկին է յայտնի։

Ասում են որ շինողը, մի պանդուխտ պարսիկ, չէ դուրս եկել հողի տակից. ասում են որ նա սպանվել է այդտեղ, որպէս զի գաղտնիքը միայն պապդ իմանայ։ Նա մեռնելիս յայտնել է հօրդ, կարգ դնելով որ միայն մէլիքն իմանայ թէ ուր է սենեակը և ինչպէս կարելի է այնտեղ գնալ։ Հայրդ, լուսահոգին, սրբութեամբ կատարեց այդ պատուէրը և ինքն էլ մօրդ յայտնեց իր իմացածը։ Այժմ մոռացվել է այդ բանը։ Բայց մի ժամանակ շատ տեսակ պատմութիւններ էին անում մէլիքի դռանը։ Այն ժամանակ այսպէս չէր ձեր տունը. պապդ կենդանի էր, օրեկան հարիւր և աւել մարդ էր մտնում այստեղ. ես դեռ ջահել էի. ինչ լաւ կը լինէր, Տէր Աստուած, եթէ այն ժամանակ մեռնէի... Ասում էին թէ շատ հրաշալի է այդ սենեակը, թէ նա գտնվում է հիւսիսային դռների տակ. մուտքը, ասում էին, պարտզի մէջ է և ծածկված է քարուկրի պատով։ Մի նեղ ու երկար անցք սենեակից տանում է հեռու, հեռու, կտրելով թումբերի տարածութիւնը. դա ջրի ճանապարհն է, մի և նոյն ժամանակ և փախչելու ճանապարհը։ Ոլոր-մոլոր պտոյտներ անելով հողի տակ, նա դուրս է գալիս մի ձորի մէջ, ուր հոսում է մի վտակ։ Երկու ապառաժ սալեր կան ջրի ափին. դրանց մէջտեղ երևում է դռների նման մի նեղլիկ խոռոչ. դա է, ասում էին, ճանապարհի վերջը...

—Դու տեսե՞լ ես, յանկարծ հարցրեց Գայիանէն։

Այդ հարցը ցոյց էր տալիս, որ նրան հետաքրքրում է պառաւի պատմութիւնը։ Եւ Մէհրին ուրախացաւ. վերջապէս նրան աջողվեց կտրել աղջկայ յամառութիւնը։

—Չէ, ցաւդ տանեմ, ասաց նա.—ես չեմ տեսել, բայց տեսնողներն էլ, հաւատացիր, ոչինչ չեն իմացել։ Ուրիշները հակառակն էին պնդում. սենեակը, ասում էին, այդտեղ չէ, այլ փորված է ժայռերի մէջ, կուսանոցի տակ։ Գետի ձորի կողմից կուսանոցի ժայռի վրա երևում է ինչ-որ ծակ. ասում էին թէ դա սենեակի պատուհանն է. իսկ ջրի ճանապարհը սանդուղքներով է, ո-

րոնք անաղմուկ բարձրութիւնից ժայռի միջով իջնում են գետի վրա… Այս պատմութիւնը հաստատում է որ ոչ ոք ոչինչ չը գիտէ…

—Զարմանալի է… ասաց Գայիանէն, նորից կախ անելով իր գլուխը։

—Եւ դու դեռ վախում ես, յաղթական ձայնով բացականչեց Մէհրին։—Միամիտ երեխայ, դու կարծում ես թէ դու էլ նրանցից մէկն ես, որոնք ապրում են դըրսում, խրճիթների մէջ։ Ամեն անգամ, երբ սիրտդ վախ է զգում, խելոյն միտդ բեր որ դու մէլիքի աղջիկն ես, մեր ամենքի ուրախութիւնը, մեր բախտը։ Եթէ երկրի վրա եղածները քիչ լինեն, մեր աղօթքները, մեր պաղատանքները կը հասնեն երկնքին և նա չի թոյլ տայ, որ անբախտութիւնը մօտենայ քեզ։ Մի վախիր, Գայիանէ, ուրախ պահիր սիրտդ, հանգիստ… Պահիր քեզ, իմացիր որ եթէ քո երեսի վարդերից մէկը թառամէ, Մէհրին չի ապրի, Մէհրին, քո շունը…

Խեղճ պառաւ։ Երբէք նրա համար այսքան դժուար չէր եղել գրաւել իր սանիկի սիրտը։

Նրան անակնկալ կերպով խանգարեց Աննա-խաթունի գալուստը։ Այրին զարմանք յայտնեց, որ Գայիանէն դեռ չէ քնել։ Զուր էր նա աշխատում ցոյց տալ, որ այժմ ինքը անհոգ է և հանգիստ. նրան մատնում էր ձայնը, որի մէջ անզսպելի էր մնացել մի դառն, խղճալի շեշտ։

—Ի՞նչ կայ որ չէք քնում։ Ի՞նչ էիք խօսում, Մէհրի, հարցրեց նա այդ ձայնով։

Գայիանէն ընդհատեց իր շնչառութիւնը, սպասում էր թէ ինչ կը պատասխանէ դայեակը։ Ո՛րքան գոհ մնաց նա, երբ պառաւը, զսպելով իր ձայնը և ջանք գործ դնելով որ չը յայտնէ իր հոգեկան դրութիւնը, ասաց.

—Ոչինչ, մէլիքի կին. սովորաբար, երբ երեխան քիչ վախեցած է լինում, ես պատմութիւններ եմ անում։ Այժմ էլ…

—Նա վախեցած է… Ես այդ գիտէի. նա երեխայ է

և ծառի սիրտ ունի։ Բայց ոչինչ չը կար, դատարկ բան էր… Ես էլ կարծում էի թէ վատ բան է պատահել գիւղում… Հեղինէն պատմեց… Նա պատժել էր իր երկու կոյսերին և փակեց նրանց մեր հին բանտի մէջ…

Սուտը, կարծես, այրեց նրա շրթունքները։ Նա չը գիտէր որ Գայիանէն լսել է ամեն ինչ, բայց և այնպէս, ո՛րպիսի դժուարութեամբ արտասանեց այդ խօսքերը. կէսը կուլ տուեց, շտապում էր անցնել. և այլ ես յոյս չը դնելով խօսքերի վրա, մօտեցաւ իր աղջկան, սկսեց գըրգվել նրան, համբոյրներ դրոշմել նրա ճակատին։ Գայիանէն սառն ու անտարբեր չը մնաց մայրական փաղաքշանքների տակ. նա մինչև անգամ ժպտաց, նայելով մօր դէմքին։

Բայց ի՞նչ ժպիտ էր դա… Նա խղճում էր իր մօրը, ինչպէս խղճում էր Մէհրիին, որ պապանձվել էր և դողում էր այն մտքից թէ Աննա-խաթունը ամեն ինչ փըչացրեց իր հնարած պատմութեամբ։

—Ինչո՞ւ ես վախում… դու ոչնչից և ոչ ոքից չը պիտի վախես, քանի կենդանի է քո մայրը,—ասում էր այրին, շոյելով նրա սիրուն ճակատը։—Դու չես վախի, դու այժմ չես վախում, այնպէս չէ՞։

Գայիանէն հաւանութեան նշան արաւ։ Նորից նա խղճաց իր մօրը։

—Վախի դէմ ամենալաւ միջոցը քունն է։ Վեր կաց քնիր, այն ժամանակ կիմանամ որ դու իմ խելօք երեխան ես։

Աղջիկը շտապեց ցոյց տալ որ խելօք երեխայ է։ Նա վերկացաւ, տախտից հանեց իր անկողինը, փռեց գորգերի վրա։ Եւ երբ ամեն ինչ վերջացրեց, շտապով հանեց իր շորերն ու անյայտացաւ վերմակի տակ։

—Դո՛ւ էլ քնիր, Մէհրի, պատուիրեց մայրը և դուրս գալով սենեակից, դուռը կողպեց։

Մէհրին այժմ ամօթահար էր, լուռ։ Նա համարեա դողաց, երբ մէլիքի կնոջ հեռանալուն պէս Գայիանէն, չարաճճի երեխայի նման, մի ակնթարթում յետ գցեց

վերմակի ծայրը, բաց արեց դէմքը, որ այդ րօպէին անողորմ ծիծաղկոտ էր, և ասաց.

—Ծրագը թո՛ղ մնայ. բարձրացրու պատրոյգը։

Նա վեր կացաւ, երեսը դարձրեց դէպի լոյսը և թիկըն տալով բարձին, հանեց իր մերկ թևը, գլուխը դրեց ձեռքի վրա։ Պառաւը անխօս կատարեց նրա հրամանը։ Ծրագի բոցը մեծացաւ, աւելի առատ լոյս թափեց սենեակի մէջ։

—Այժմ լաւ է… Վախի դէմ ամենից գեղեցիկ միջոցը լոյսն է։

Մէհրին նստեց իր անկողնի մէջ, չը հանելով իր շորերը։ Նա էլ նայեց ճրագին, թեթև հոգոց արձակեց և գլուխը կախ արաւ։ Նրան երկար նայում էր աղջիկը, կարծես նոր էր տեսնում։

—Դու չե՞ս խօսում, յանկարծ հարցրեց նա։

—Ի՞նչ խօսեմ, վշտալի ձայնով պատասխանեց Մէհրին։

Նա այժմ բոլորովին ուժաթափ էր դարձել։

—Խօսիր, շարունակիր… Սիրտ էիր տալիս որ չը վախենամ։

Դա հեգնութիւն էր։ Դայեակը պատասխանի փոխարէն վեր քաշեց իր ուսերը։

—Ինձ մի անուն ասա, Մէհրի։ Ի՞նչ անուն ունի նա, որ վախից սիրում է ուրիշին սիրտ տալ։ Նա ինքը սաստիկ վախում է, հարկաւոր է որ նրան սիրտ տան, բայց չէ, նա ինքն է ուրիշին խրատում, որ չը վախենայ։ Գիտե՞ս այդ անունը։

—Է՜հ, սևանայ Մէհրիի ծնված օրը… Մէհրին ոչինչ չը գիտէ…

Այդ նա խօսքեր չէին դուրս գալիս պառաւի բերանից, այլ հեծեծանքներ։

Գայիանէն ծիծաղեց և կախ ընկնելով դէպի նրա կողմը, հանդարտ ձայնով արտասանեց.

—Ասա ինձ մի խօսք և դու կը հասկանաս իմ բոլոր մտքերը։

Մէհրին մի ճնշված, ողորմելի հայեացքով հարցրեց նրան թէ դա ինչ խօսք է։

—Մի կարճ խօսք։ Դու պիտի ծածուկ պահես այն, ինչ կը լսես ինձանից։ Խոստանու՞մ ես։

—Խոստանում եմ,—իսկոյն, առանց տատանվելու, պատասխանեց նա։

—Երդվիր։ Ծածուկ ամենքից, հասկանու՞մ ես։ Եթէ պինդ պահես երդումդ, իմ սիրտը կը տեսնես. թէ չէ՝ երեսս էլ չես տեսնի։

Ո՛րքան սիրուն էր սիրտ ցոյց տալու խոստումը, այնքան խիստ էր սպառնալիքը։ Զը տեսնել նրա երեսը։ Բարի դայեակի մէջ տարիների ընթացքում մայրական զգացմունք էր հաստատվել դէպի այդ աղջիկը։ Եւ այդ զգացմունքը մանաւանդ այժմ, այս տարօրինակ երեկոյին, ցանկանում էր տեսնել նրա սրտինը։ Նա երդվեց բոլոր սրբերի անունով։

ԺԴ

—Հիմա խօսում եմ, Մէհրի։ Բաց լինենք և համարձակ, թէև երբէք ինձ չէք թոյլ տուել լինել համարձակ։ Ես, սակայն, արձակ համարձակ էի իմ մէջ. այս տախտակի տակ մի ամբողջ աշխարհ կայ, ուր ես բոլորովին ազատ եմ։

Նա ձեռքը դրեց իր կրծքի վրա։

—Ա՜հ, գիտե՞ս այժմ ինչ է ասում իմ այս ազատ աշխարհը։ Նա ասում է որ դուք վախկոտներ էք… մայրիկը, մայր Հեղինէն։ Ո՛րքան վախկոտ։ Դուք նից ծածկում էիք… Բայց այժմ իզուր է, այժմ ձեզ էլ ես գիտեմ, ամեն ինչ գիտեմ…

Մէհրին լայն բաց արաւ իր աչքերը։ Նա ապեւ հազիւ կարողացաւ ասել.

—Ի՞նչ գիտես։

—Օ՜, շատ բան։ Ես, օրինակ, գիտեմ որ մեր երկիրը այժմ մի դժոխք է։ Գիտեմ որ Վարանդայի աղջիկները մի-մի Նազլուներ են։ Ցիշիր, Մէհրի, Վարդավառի օրը, այն ժամանակ, երբ մենք բախտ էինք որոնում. երբ մենք ուրախութիւնից տրաքվում էինք, նա, խեղճ աղջիկը, ոռնում էր ծառերի տակ։ Երկրորդ անգամ նրան տեսայ այստեղ, մեր բակում։ Նրան փնտրեցին, որովհետև նրա լեզուից թոյն էր ծլլում։ Ամենքդ, դու էլ, խենթ էիք անուանում նրան։ Եթէ անբախտութիւնը խենթութիւն է, նա, ուրեմն, ամենամեծ խենթն էր մեր երկրում։ Նրա բերանից խօսքեր չէին թափվում, այլ կրակի կտորներ, բայց այրել չէին կարողանում—և ինչպէս չը խենթանար։ Նա տապակվում, գալարվում էր իր ցաւից, մարդիկ ծաղրում էին այդ պարը, երես էին դարձնում նրանից—կարո՞ղ էր նա չը խենթանալ։ Խենթ էր, որովհետև աղաղակում էր... Բայց եթէ խելք ունենար, կը լռէր, չէ՞։ Ա՛հ, այդ ինչ, ինչ խելք է... Այսօր լուռ ու մունջ մահ կը գար, ոչ ոք ոչինչ չէր իմանայ և նրա նշանածն էլ չէր պանվի։ Երջանիկ մարդ կը լինէր... Խենթ Նազլու։ Մի հատ մարդ կայ, որ անպատուութիւնը չէ ուզում տանել, որ կանչում է մարդկանց և Աստուծուն—և նա խենթ է։ Այսպէս է մեր երկիրը... Դու, ի հարկէ, գիտես նրա պատմութիւնը։

Մէհրին յայտնեց որ չը գիտէ։

—Բայց ինչու ծածկում էիր ինձանից. ինչու գոնէ երկու խօսք չէիր ասում, երբ ես հարցնում էի թէ ինչ աղջիկ է...

—Որովհետև առհասարակ բոլոր այդպիսի թշուառների մասին դու ոչինչ չը պիտի իմանայիր։

—Օ՜, ի հարկէ... Մելիքի աղջիկ եմ ես... Դու կարմիր խնձոր անուանեցիր այդ աղջկան, մայր Հեղինէն—ժամանակաւոր աւանդ այս տան մէջ. իսկ իմ մայրը—ծափ սիրտ ունեցող երեխայ, մի փոքրիկ երեխայ... Ի՞նչպէս Նազլուն չանուանէր ինձ բախտաւոր... Ի՞նչպէս կը լինի որ այդ բախտաւորը խօսէ, մտածէ թշուառների, տկլորների մասին... Բախտաւո՜ր...

Նրա բերանից դուրս թռաւ մի թոյլ ու կարճ ծիծաղ, որ թունալից սլաքներ տարածեց ամեն կողմ։ Դրանցից պաշտպանվելու համար էր որ Մէհրին հասաց.

—Ժամանակն է այդպէս, մեզ մի՛ մեղադրիր։

—Ժամանակը, այո։ Լսի՛ր այժմ Նազլուի պատմութիւնը. դա ժամանակի պատմութիւնն է...

Եւ լսեց պառաւը։ Նրան սարսուռ պատճառողը այդ պատմութիւնը չէր, որ սովորական կարելի էր համարել, այլ այն՝ որ այդ պատմութիւնը այդքան մանրամասն յայտնի է Գայիանէին։

—Նազլուները շատ են մեր մէջ, այսպէս վերջացրեց աղջիկը։—Բայց ինչու այդպէս պլշել ես աչքերդ, ինչու այդքան զարմացած ես։ Հասկանում եմ քեզ, Մէհրի... Երէկ, անցեալ օրը, շաբաթներ, ամիսներ առաջ՝ դու այդպիսի պատմութիւններ էիր լսում, բայց այդքան չէիր սարսափում։ Թող, ասում էիր դու, ինչ ուզում է լինի, միայն թէ իմ Գայիանէն չիմանայ։ Եւ դու երջանիկ էիր, որ քո կարմիր խնձորը միամիտ է, անտեղեակ... Այժմ տեսնում ես որ մեր երկաթէ սնդուկն էլ չը կարողացաւ դիմանալ դրսի ձայներին. հառաչանքները ծակեցին և նրա պատերն ու ներս մտան...

—Մի իմանամ թէ ո՛վ պատմեց քեզ այդ բոլորը, լացախառն ձայնով արտասանեց Մէհրին։

—Պատմողը չը կայ. Փէրին...

—Լակոտը։ Պապանձվի՛ նրա լեզուն։ Դրա համար էր որ մտաւ այստեղ։ Ես նրան...

—Դու ոչինչ չես անի նրան, հրամայողական ձայնով ընդհատեց Գայիանէն։—Նա իր ողբերով մխիթարում է բոլոր Նազլուներին։ Երկու օր է, չեմ տեսնում խեղճին։ Երևի գործ շատ ունի... Եթէ կարողանում ես, Մէհրի, գտի՛ր մի քանի Փէրիներ էլ, որ գնան, ման գան

ամեն տեղ։ Օ՜, քանի՜ Փերիներ են հարկաւոր Վարդանգայլին . . .

Նրա ձայնը դողաց։ Ո՜րքան վիշտ, ո՛րքան տխուր երևէջներ կային այդ քնքուշ, բարակ ձայնի մէջ։ Յաղթելով այն խոչընդոտը, որ յանկարծ կանգնեցրեց լեզուն, աղջիկը շարունակեց.

—Բայց ոչ, դու այդ էլ չես անի… Ես քեզ չեմ մեղադրում, գիտեմ որ ոչ ոք չի անի։ Մի բուռը ջուր ամեն մէկը կարող է վերցնել ու տալ տապակվողներին, բայց քանի՞սն են վերցնում։ Մնում է որ այրվողը ինքը որոնէ ու գտնէ։ Ես մի պատկեր էի ուզում նկարել։ Վերից մէկը իմ սրտի մէջ կաթեցրել էր մի այդպիսի տենչանք։ Եւ նա ինձ ցոյց էր տալիս Վարդավառի օրը տեսած աղջկան. այն ժամանակ աղջիկը ինձ համար մի խեղճ էր, որ քանդել էր իմ սիրտը, այն ժամանակ նա դեռ Նաղլու չէր։ Ո՛րպիսի սիրով, ո՛րպիսի յոյսերով սկսեցի այդ գործը։ Նա ինձ հանգստութիւն էր տալիս, նա սառում էր իմ ականջին. «Մի՛ վախիր. այլ ես այն աղջիկը չէ կարող քո դէմքին շպրտել «բախտաւոր» անունը»։ Եւ երբ ես տեսայ, որ չեմ կարողանում իմ ուզածի պէս կատարել այդ գործը, երբ տեսայ որ մենակ եմ և շատ խակ, գնացի օգնութիւն, խորհուրդ որոնելու։ Ոչ որ մի հատ քաղցր խօսք չունէր ինձ համար։ Վերջին յոյսս դու էիր, բայց դու էլ կրկնեցիր մի և նոյն խօսքերը՝ թէ ես երեխայ եմ, թէ աղջիկը չը պիտի այդպիսի բաներ իմանայ, որովհետև նա կարմիր խնձոր է միայն և ուրիշ ոչինչ. դու մինչև անգամ սատանաների անունով վախեցրիր ինձ։ Չը գիտեմ ինչո՞ւ այն օրը չասացի քեզ. «Բաւական է, վերջապէս, քիչ էլ ուրիշ խօսքեր սովորեցէք»։ Չասացի, երևի, այն պատճառով, որ չէի կարող խօսել առանց արտասուքների. իսկ ձեզ մօտ լաց լինել, կը նշանակէր ձեզանից էլ վախկոտ լինել, կը նշանակէր հաստատել, որ ես ճշմարիտ որ երեխայ եմ… Նոյն օրը, երբ դու ասացիր ինձ այդ խօսքերը, Վարդա-

վառի գզգզված աղջիկը դարձաւ Նաղլու։ Ես իմ գործը սկսեցի. մենակութեանս մէջ ինձ օգնում էին իմ արտասունքները. դրանք հրաշագործ էին, դրանց միջոցով մի ներքին ձայն սկսեց խօսել ինձ հետ, դարձաւ իմ ուսուցիչը, իմ ղեկավարը։ Հասկացա՞յ. իմ նկարած պատկերը ձեզ համար չէր. դուք նրան չէք տեսնի, այլ…

Նորից մի ինչ-որ ծանր բան արգելեց նրան առաջ տանել իր խօսքը։ Նա նստեց անկողնի մէջ. նրա հաստ ծամը ուսի վրայով ընկաւ կրծքի վրա, ծալվեց գոգի մէջ։ Ձեռքը դնելով դալեակի թևի վրա, նա մի թեթև հոգոց հանեց, կարծես դրա հետ կուլ տուեց այն ծանրութիւնը, որ արգելում էր խօսել, և ապա ասաց.

—Ես իմացայ թէ ո՛ւմ համար է պատկերը… Այսպէս վերջացաւ այդ գործը, Մէհրի։

Իր անունը լսելուն պէս պառաւը կարծես սթափվեց մի շշմեցնող տպաւորութիւնից և պատասխանեց.

—Ես չը գիտեմ թէ ինչ ասեմ քեզ, Գայիանէ, ես շուարած եմ, իմ խելքը կարծես գնում է . . .

—Ճշմարիտ, դու խօսել չես կարող. բայց զուր ես կարծում թէ քո խելքն է այդտեղ մեղաւոր։ Ո՛չ, դու խօսքեր չունես, Մէհրի։ Ի՞նչ պիտի ասես. չէ՞ որ ես գիտեմ քո բոլոր խօսքերը. տարիների ընթացքում դու մի և նոյն բառերն էիր կրկնում. բայց այժմ, այսուհետև, չես կարող նոյնը ասել, դու ինքդ կամաչես քո իմացածից։ Ուրեմն կը մնայ որ դու լսես ինձ։ Օ՜, հաւատացիր, ոչ-ոք ինձ չէ սովորեցրել, ոչ ոք չէ ցոյց տուել այն տեղը, ուր այժմ գտնվում եմ ես։ Խոստովանում եմ՝ կար մի բան, որ օգնում էր ինձ, մի բան որ այն էր միայն ասում թէ ես մենակ չեմ, առանց նեցուկի չեմ։ Ի՞նչ էր դա։ Անունը չը գիտեմ, բայց եթէ երազներ ասեմ, չեմ սխալվի։ Երազներ։ Դու երբ և իցէ բաց աչքերով տեսե՞լ ես երազ. երբ և իցէ պատահե՞լ է քեզ լինել մենակ, բոլորովին մենակ և զգալ, որ մէկը քեզ հետ է, մօտ է գալիս քեզ հետ, տեսնում է քեզ ամ-

բաղձալին, խօսում է, բայց ինքը մարմին չէ, երևոյթ էլ չէ։ Հապա ի՞նչ է, կը հարցնես դու։ Չը գիտեմ, երևի մի շունչ, գուցէ մի թեթև դողոց։ Չը գիտեմ նաև թէ ինչպէս էր նա գալիս։ Կարո՞ղ ես իմանալ թէ ամարային առաւօտի շունչը ինչ ճանապարհով է գալիս և ուր է գընում։

—Նա էր, որ սովորեցրեց ինձ մի քանի հրաշալի բաներ,—շարունակեց Գայիանէն մի վայրկեան լռելուց յետոյ.—սովորեցրեց թէ ատելի է այս փախկոտութիւնը, վատ ու անարժան բաներ են այս հաստ պատերը, երկաթի սնդուկները։ Ո՛րքան անուշ, որքան արբեցնող էին նրա մեղմ թելադրութիւնները։ Բայց մի՛ կարծիր թէ նա միայն շոյել, գուրգուրալ գիտէ։ Նա ինձ ծաղրում, տանջում էր այսօր, այս երեկոյ։ «Տես, տես», ասում էր նա և ինձ ամաչեցնում, երբ մայրիկը դատապարտում էր Մանասին, իսկ մայր Հեղինէն թագցնում էր իր կոյսերին այն պատճառով, որ վանքի պատերի մի քանի քարերը խախտված են երևում։ «Տես, ասում էր, մեծերը, ուժեղները պինդ տեղեր են որոնում, ուրեմն մօտ է սարսափելի փոթորիկը. դրանք անհատներ են, հինգ թէ տասը հոգի, և կը գտնեն»։ Եւ ապա հարցնում էր. «Իսկ ինչ անեն հարիւրները, հազարները, ինչ անեն նրանք դրսում, բաց ու արձակ դաշտի մէջ»... Նա ինձ տանջում էր, երբ դու պատմում էիր ստորերկրեայ սենեակի մասին։ Սենեակը գեղեցիկ միջոց էր գազաններից ազատվելու համար։ Եւ ես ասում էի ինձ տանջողին. «Ինչու չէ, եթէ այդ ստորերկրեայ անցքերում տեղաւորվեն Վարանդայի բոլոր աղջիկները, ես էլ կը լինեմ նրանց հետ»։ Բայց դա րոպէական պատրանք էր։ Ինձ տանջողը ծիծաղեց ճրագի ետևից։ Հասկացայ թէ ինչ է ասում նրա դառն ծիծաղը. բոլոր աղջիկները չեն տեղաւորվի... Իմ պապը, որքան էլ իմաստուն լինէր, երբէք չէր էլ մտածի այնքան լայնարձակ տեղ պատրաստել, որ իր երկրի բոլոր աղջիկներին թագցնէ այնտեղ։ Խեղճ պապ։ Եթէ նա այս

որ կենդանի լինէր, Մէհրիի նման կասէր. «Ինչո՞ւ ես վախենում, կարմիր խնձոր, տես քեզ համար ինչ տեղ եմ պատրաստել»։ Եւ նա նոյնպէս կը զայրանար, եթէ ես ասէի. «Տես, պա՛պիկ, ինձպէս կարմիր խնձորներ շատ կան, ա՜հ, որքան շատ. չես խղճում նրանց»։ Ահա, Մէհրի, այսքան զարմանալի է այն շունչը, իմ երազների այն աներևոյթ հոգին։ Ի՞նչ է ուզում նա։ Արդեօք այն, որ ես թողնեմ այս երկաթի սնդուկները ու գնամ իմ քոյրերի մօտ...

—Գայիանէ... Գա՛յիանէ... ինչե՞ր ես ասում...

Մէհրին լաց էր լինում. նրա թևը դողում էր Գայիանէի ձեռքի տակ։ Բայց որքան փոխվել էր մելիքի աղջիկը։ Նա այլ ևս չը խղճահարվեց, նրա խօսքը հոսում էր աղբիւրի նման, դարձեալ դառն էր, լի անողորմ հեգնութեամբ։

—Սպասիր, ասաց նա.—դեռ այստեղ եմ ես։ Կարծում ես թէ այնքան հեշտ է այս պատերից դուրս գընալը։ Ո՞ւր էր, եթէ ես ամեն ինչ հասկացած լինէի։ Դա կը լինէր իմ տանջանքների վերջը։ Մինչդեռ այժմ միայն սկիզբն է. դեռ ամենադժուարը կանգնած է առջևս։ Իմանալ որ մենակ փակվելը վատ է—դեռ շատ քիչ է։ Յետոյ։ Այդ «յետոն» է մութ, դժուար...

—Դու կը քանդես այս տունը, հարիւր տարվայ տունը, բացականչեց պառաւը հեծեծանքների մէջ։

—Կամա՛ց, Մէհրի, մի՞թէ դու ուզում ես աղմուկ բարձրացնել...

—Ի՞նչ անեմ... սարսափում եմ քո լեզուից։

—Սարսափո՞ւմ ես...

Նա ծիծաղեց, և դէն հրելով նրա թևը, երեսը դարձրեց, ասելով.

—Աւելորդ է, ուրեմն, շարունակելը։ Մոռացիր լըսածդ, քնիր, արտասունքներդ կը սրբէ բարձդ. Վերջացաւ. այսուհետև հանգիստ կը լինես։

Ծերութիւնը երկրորդ երեխայութիւն է։ Որքան էլ

ծանր լինէր այդ սպառնալիքը, սակայն Մէհրիի համար շատ էլ հեշտ չէր կանգնեցնել իր արտասուքները։ Նա միայն այն ժամանակ լռեց, երբ տեսաւ որ Գայիանէն դարձեալ պառկել է իր տեղը։

— Չե՞ս խնայում մեզ, Գա՛յիանէ, հարցրեց Նա։

—Դուք էլ ինձ չէք խնայել։

—Բայց ո՞րն է մեր յանցանքը։ Մի՞թէ այն, որ քո երջանկութիւնը, քո բախտն ենք պաշտել. Թէ՞ այն, որ պատրաստ ենք քո բոլոր ցաւերը մեզ վրա առնել։ Ո՞րն է, ասա՛, աղաչում եմ։ Վատ ենք մենք... բայց ո՞րն է լաւը...

—Ամենից լաւը աղմուկ չը բարձրացնելն է։ Իմացի՛ր, դրանով ինձ չես վախեցնի։ Ոչ ոք ինձ չէ կարող այժմ հարկադրել կամ խրատել այնպէս, ինչպէս մինչև այժմ էր խրատում։ Հօ գիտես, որ մի բարձր ժայռ է մեր տան հիմքը։ Ամեն ժամանակ այդ ժայռը մահ ունի պատրաստած ամեն մէկի համար, ով կը կամենայ ցած գլորվել։ Նա ինձ կօգնէ որ ցոյց տամ ձեզ թէ անցածը անցել է, այլ ևս չի վերադառնայ։ Իմ մէջ միշտ կը գտնվի այնտեղից ընկնելու քաջութիւնը։ Հասկանո՞ւմ ես։

—Դեռ ո՛չ բոլորովին։ Դու ինքնագլուխ ես համարում քեզ։ Բայց մոռանում ես, որ վաղը կը գայ քո տէրը և ձեռքիցդ բռնած կը տանէ քեզ։

Մի կարճ, շատ կարճ լռութիւն տիրեց։ Գայիանէն նորից նստած էր. և այս անգամ նրա աչքերի մէջ մարեց հեգնութեան կծու կրակը։ Պառաւը չէր հաւատում իր աչքերին. դարձեալ երևան եկաւ շնորհալի Գայիանէն. դարձեալ այդ թարմ մարմնից, որ իր սքանչելի գծագրութիւնները այժմ մի հաստ շալլիկով էր վարագուրել, տարածվեց մեղմութեան, վայելչութեան բուրմունք։

—Այո, Նա կարող է գալ, ասաց Նա զուարթ ձայնով։ — Եւ շատ լաւ. ես սպասում եմ նրան։

Առաջին անգամն էր արտասանվում մի այդպիսի խօսք։ Սպառնո՞ւմ է։ Դա համարձակութիւն էր, վայել չէր

մի նշանած աղջկան, որին օրէնքը հրամայում էր ծածկել կրծքի տակ իր բոլոր տենչանքները։

Այժմ Մէհրին չէր հաւատում իր ականջներին էլ։ Անհնարին էր որ Գայիանէն ճիշդ հասկացած լինէր իր ասածի միտքը։ Ուստի ասաց.

—Գիտե՞ս, իմ խօսքը Ջալալի մասին է...

Եւ որքան մեծացաւ նրա զարմանքը, երբ Գայիանէն հանգիստ կերպով հաստատեց այդ բանը.

—Այո, այո, Ջալալի...

Մինչև անգամ նշանածի անունն էլ տուեց... Հրաշալի էր այդ արտասանութիւնը, բայց համարձակութիւնն էլ այն աստիճան անօրինակ էր, որ Մէհրին զարմանքից իր մատը կծեց։

—Թո՛ղ գայ, շարունակեց նա, ուշադրութիւն չը դարձնելով պառաւի զարմանքի վրա։ — Աշխատիր հեռուից տեսնել նրան, Մէհրի. իմացիր թէ երբ նա կը մօտենայ գիւղին, բարձրացիր Թումբի գլուխը և նայիր տե՛ս, ինչպէս է գալիս։

—Ինչո՞ւ։

—Դու կը տեսնես մի հրաշալի ճանապարհ։ Դա այն չէ, որ նրա ձիու ոտների տակ է փռված։ Ո՛չ, դա մի ուրիշ ճանապարհ է։ Երանի՜ քեզ. եթէ ես էլ տեսնէի...

—Ի՞նչ է նշանակում դա։

—Ես քեզ ասում էի որ ինձ հետ մահ եկողը, ինձ խօսացնողը՝ նա, որ մերթ հիացնում է ինձ և մերթ տանջում, մի շունչ է, գուցէ մի դողոց։ Ի՞նչպէս է նա գալիս... Այդ դու կիմանաս, երբ հեռուից կը տեսնես թէ ինչպէս է գալիս խաչէնցին։

Նա նայեց զայեակին, տեսաւ նրա միամիտ, անհասկացող դէմքը։ Եւ յանկարծ փաթաթվելով նրա վզին, ասաց մի բորբոքված խանդով.

—Հասկացի՛ր, հասկացի՛ր, խեղճ Մէհրի... Այդ շունչը, որ ինձ հետ է, նրանից է գալիս...

Ոչինչ չը խօսեց Մէհրին. միայն խիստ կծկվեցին

նրա բազուկները և նա պինդ սեղմեց իր գրկի մէջ այդ աղջկան, որին կարծես նոր էր գտնում։ Բացվեց նրա սիրտը. երկար նրա թօշնած դէմքը քսվում էր այդ փափուկ դէմքին, երկար նա ման էր ածում իր դողդոջուն շրթունքները սիրուն դիմագծերի վրա, հոտոտում էր, մխիթարվում։ Զղջում, խանդաղատանք, խղճակցութիւն միասին ալէկոծում էին նրա սիրտը։ Գայիանէն հազիւ կարողացաւ ազատվել այդ գորովալից գրկից։ Նա խօսել էր ուզում և նրա շրթունքները հրաշք էին գործում։

—Սիրում եմ նրան, ինչո՞ւ ծածկել, արտասանեց նա մի մաքուր, սրբազան ջերմեռանդութեամբ։—Այսօր իմ սրտի խորհուրդներն եմ քեզ յայտնում, Մէհրի. և ես յանցաւոր կը լինեմ նրա առաջ, եթէ չասեմ որ այդ խորհուրդների մէջ ամենից մեծը սէրն է...

Նրա կուրծքը ծանր կերպով բարձրացաւ, հազիւ լսելի մի հոգոց դուրս թռցրեց և ապա էլի ցածրացաւ։ Նա երկու մատով հեռացրեց ճակատի վրա ընկած մազերը և երկու աչքերը բարակ յօնքերի տակից յառեց ճրագի վրա, որ այրվում էր աշխոյժով և կարծես մի առանձին հաճութեամբ էր կատարում իր ծառայութիւնը։

—Այո, սիրում եմ... վկայ է այս սիրտը, վկայ են Աստուծոյ այն բոլոր սրբազան գործերը, որոնք խորհուրդներ հասկանալ են կարող։ Իմ անքուն գիշերներ, իմ երկար երազներ, դուք էլ վկայ էք։ Սիրել, պաշտել —որքան խոր, ծածուկ, անլեզու բան է դա... Արդեօք կը հասկանա՞ս, Մէհրի։ Անհագին տարածութիւն է բաժանում մեզ։ Այստեղից Թաշէն... մի ամբողջ օրվայ ճանապարհ է դա։ Սարեր ու ձորեր անթիւ են. ինչ անհագին բարձրութիւններ, ինչ անհագին խորութիւններ։ Միակ ուղիղ, հարթ ճանապարհը երկինքն է, և այնտեղով է իմ սիրտը գնում դէպի նրան։ Գիշերը աստղերն են իրանց ժպիտներով ուղեկցում, իսկ ցերեկը արեգակն է կանգնած, որ չէ այրում ճանապարհորդին, այլ տաքացնում է։ Բայց միշտ պարզ ու ժպտուն չէ կապոյտ հոր-

թութիւնը. և մութն ու մրրիկն էլ չեն կանգնեցնում ուխտաւոր ճանապարհորդին։ Կայծակները շողում են նրան, փոթորիկները նրա ուղեցոյցներն են։ Նրա համար դժուարութիւն չէ ծնել աշխարհը. նա գնում է հիանալու և ո՞վ է կարող արգելել նրան։

—Աստուած ինքն է տանում, Աստուած ինքն է օրհնում, մրմնջաց Մէհրին։—մեռնեմ նրա մեծութեան... Բայց գիտե՞ս, Գայիանէ. նա էլ դէպի մեր կողմերն է գալիս, նա էլ ուխտաւոր է։

—Ինձ պէ՞ս... Երանի քեզ, Մէհրի, որ գիտես թէ ինձ պէս է։ Ես չը գիտեմ, ես այդ չեմ զգում։ Մի՞թէ նա էլ չէ զգում որ ես գնում եմ ու նայում։ Նայում եմ հեռուից։ Ի՞նչպէս են քո աչքերը, Մէհրի։ Նա ինձ ա՛յնքան բարձր, ա՛յնքան մեծ է երեւում։ Ո՛րքան հեռու է նա մեզանից, հասարակ մարդկանցից։ Եւ կարելի՞ է նրան հասնել։ Ո՛չ, ինչո՞ւ հասնել. նա լաւ է այդպէս, այդքան բարձր, այդքան անհասանելի։ Եթէ հնարաւոր լինէր նրան հաւասարվել, այն ժամանակ կարելի կը լինէր կատարել և մի մեծագործութիւն, այսինքն իմանալ թէ ինչ պիտի անել այս երկաթի մղուկի դռներից դէնը։ Ես ինքս, մենակ, լոկ նրա տուած երազների աջակցութեամբ, գնացի մինչև այդ դռները. աւել չը կարողացայ, որովհետև ինչ եմ ես նրա հետ համեմատած։ Այժմ կանգնած եմ այդ դռների մօտ. գիտեմ որ վախկոտներ են ապրում այստեղ, գիտեմ որ հազարաւոր քոյրեր տանջվում, խորովվում են և կանչում են իրանց մի քրոջը, որ կանգնած է ամրոցի դռների մէջ և չէ իմանում թէ ինչ անէ։ Ես սպասում եմ նրան, կանչում եմ։ Թո՛ղ գայ, թո՛ղ շտապէ, բանէ իմ ձեռքից և դուրս հանէ տանջվող աշխարհի մէջ... Օ՜, ե՞րբ կը գայ...

Դարձեալ նոյն խօսքերը... Նա չէ մոռանում, նա դուրս գալ է ուզում և ո՛րքան ատում է այս ամրոցը։ Բայց այս անգամ սարսափելի չեն նրա խօսքերը։ Նա մենակ չէ, նա առանց իր նշանածի քայլ չի փոխի։ Եւ

փառք Աստուծու... Գուցէ Աննա-խաթունը քիչ հակառակվի, ասելով թէ իր դրած պայմանը չէ կատարված։ Բայց ի՞նչ կարելի է անել, երբ աղջիկը այլ ևս չէ ուզում մնալ։ Մէհրին համարձակ, անկեղծ սրտով հաւատացնում էր Գայիանէին, որ նա կարող է ապահով լինել թէ իր բաղձանքը կը կատարվի։

—Նա կը գայ, անպատճառ կը գայ,—ասում էր նա։

—Բայց երբ... Արդեօք նա շատ չի՞ ուշանայ։ Խե՜ղճ, անբախտ Մարգարիտ։ Յիշո՞ւմ ես նրան վիճակի ժամանակ. համեստ, ծանրաբարոյ, ընկերասէր և ամօթխած. Տէր Աստուած, նա ամաչում էր ամեն մի երեխայից... Այժմ գազանները խլեցին, տարան նրան. ո՞ւր... Իսկ մայրիկը ասում է թէ ոչինչ չը կայ։ Մի՞թէ այդքան չնչին է Մարգարիտը։ Եւ ի՞նչ լաւ բախտ էր գուշակել վիճակը նրա համար. եթէ իմանայի՛ր, Մէհրի։ Այսօր ամեն ինչ սուտ է... Նա ոչինչ է, հա՞, Մէհրի։

—Ո՛չ, ինչո՞ւ է ոչինչ, նա էլ Աստուծու հոգին է։

—Հապա ինչո՞ւ մէկը նրա համար լաց չէ լինում, ինչո՞ւ մի հատ ափսոսանք, մի կտոր ցաւակցութիւն չը կայ...

Աղջիկը լռեց, իսկ մնացածը շարունակեցին նրա արտասուքները, որոնք ծլլացին, նրա գոգը գլորվեցին։ Մի թուլութիւն գրկեց նրան, կանացի բնութիւնը գերակշռեց և նա ընկաւ Մէհրիի ուսին։ Այժմ դայեակը գիտէր թէ ինչով կարելի է նրան սիրտ տալ, մխիթարել. Նա շարունակ խօսում էր Ջալալի գալու մասին։ Ոչինչ դժուարութիւն չը կայ այդ բանի մէջ։ Ինքը Ջալալը պատրաստ է այստեղ լինել թէկուզ ամեն ժամ, ամեն րոպէ։ Միայն իմաց տալ նրան։ Բաւական է, եթէ Աննա-խաթունը նոյն իսկ մի երեխայ ուղարկէ, միւս օրը նա այստեղ կը լինի։

Յանկարծ Գայիանէն բարձրացրեց իր գլուխը, մի հայեացքով չափեց պառաւի բարի դէմքը, կարծես փորձում, վերլուծում էր նրան։

—Դու ինձ սիրում ես, Մէհրի, չէ՞, հարցրեց նա։

—Նո՞ր ասեմ...

—Բաւական է այդքանը։ Ուզո՞ւմ ես ինձ հետ լինել։

—Մինչև գերեզմանս։

—Շատ լաւ։ Ինձ համար մի բան արա, իմ Մէհրի, և կը լինես իմ մայրը, իմ քոյրը։ Դու ինքդ իմաց տուր Ջալալին որ գայ։ Իմա՛ց տուր այնպէս, որ ոչ ոք չը հասկանայ։ Ամեն ինչ իմ մօրից ծածուկ պիտի լինի. նա ոչինչ, ոչ մի բան չը պիտի իմանայ. լսո՞ւմ ես։

Մէհրին գլխի շարժմամբ պատասխանեց որ լսում է։

—Որ նա գայ և չասէ թէ իրան կանչել են այստեղից։ Որ նա պահէ այդ գաղտնիքը։

Մէհրին դարձեալ շարժեց իր գլուխը։

—Այդ դեռ բաւական չէ։ Դու պիտի այնպէս անես, որ նա տեսնվի ինձ հետ, խօսէ և դարձեալ ոչ ոք չիմանայ։ Զարմանո՞ւմ ես, օրէնք չէ՞։ Բայց մի՞թէ օրէնք է այն դրութիւնը, որի մէջ գտնվում ենք։ Մենք ոտի տակ կը տանք շատ այդպիսի կարգեր։ Կարո՞ղ ես այս բոլորն անել ինձ համար։

—Կարող եմ, եթէ դու մի նամակ գրես...

Գայիանէն տարածեց իր թևերը, պինդ գրկեց պառաւին և նրա հետ ընկաւ իր անկողնի մէջ...

Ճրագը օրհասական պլպլոցների վրա էր։ Պատրոյգը վերջացել էր։

ԺԵ

Աղբանոցի տնակը վաղուց էր մերկացել իր ամառային զարդերից։ Բարձրահասակ փայտի բանջարները վաղուց էին չորացել և այժմ փտում էին հողի վրա, պատահարների կամքին թողնելով հինաւուրց օթեանի երկու կողերը և քայքայված մուտքը։ Կանաչները գնացել էին։ Երկու կաղնիները ջրի ձորում օր ու գիշեր թափում էին կանաչ-կարմիր տերևների կոյտեր, շտապում էին մեր-

կացնել իրանց հսկայ ճիւղերը։ Աշնանային քամին շրջապատի մեռելութեան մէջ միայն չոր շիւղեր, թափառական տերևներ էր գտնում իր ցաւալի, ողբաձայն շրշիւնները տարածելու համար. երբեմն էլ յարձակվում էր տընակի կտուրի վրա, դողոց էր գցում մեռած խոտերի մէջ, կարծես մրսեցնում էր ամենքին։

Այս անգամ Փէրին սովորականից շատ երկար մնաց իր խղճուկ բնակարանում։ Պատճառը միայն այն չէր, որ չոր ու տաք ամառվան յաջորդել էր պայծառ ու մեղմ աշունը, երբ պարզ երկինքը երկար հիացնում է ամբողջ աշխարհը իր քաղցրիկ արևով։

Կար և մի այլ պատճառ։ Այժմ նա ինքնագլուխ չէր, այժմ նա կատարում էր մէկի պատուէրները։ Նա յաճախ ճանապարհորդութիւններ էր անում դէպի շրջակայ գիւղերը և ամեն վերադարձին գնում էր մէլիքի տուն։

Վերջին ճանապարհորդութիւնը մի ամբողջ շաբաթ տևեց։ Աւետարանոցից նա դուրս գնաց Մարթայի և Նազլուի հետ, ուղևորվեց դէպի արևմուտք։ Այժմ թէ պառաւը և թէ նրա երկու ընկերակիցները անգործ մուրացկանների տեսքը չունէին։ Նոյն իսկ Մարթան քայլում էր կայտառ, կարծես հասկանում էր, որ գործը այդպէս է պահանջում։

Դարձեալ տխուր և կատաղի էր Նազլուն։ Զարգված սրտերի ամենալաւ բուժիչը առհասարակ ժամանակն է համարվում. բայց այդպէս է նա այն դէպքում, երբ դաժան բախտը ձեռք է վերցնում իր զոհից։ Իսկ Նազլուի ճակատին գրված էր միշտ լինել անողոք թշուառութեան ճանկերի մէջ։

Երկու շաբաթ առաջ Սիւլէյման-բէկի բանտից մի դիակ հանեցին. դա ծերունի Ասլբեան էր, Նազլուի նըշանածի հայրը։ Թիւրքի արդարադատութիւնը պատրաստվում էր պատժել այդ մարդուն, որովհետև նա չէր արգելել իր որդուն վազել իր հարսնացուի օգնութեան։ Նա, ինչպէս տեսանք, Նազլուի մօր, Մարիամի, մեղսակիցն

էր։ Բանտի տանջանքներից նրան ազատեց մահը։

Իսկ Մարիամը։ Դիակի հետ բանտից մի շշուկ դուրս եկաւ, որ սկսեց պտտել ու պատմել թէ Մարիամը չը կայ։ Ո՞ւր էր կորել, ի՞նչ էր եղել—դա բանտի գաղտնիքն էր։ Գուցէ նրան էլ ազատել էր մահը, գուցէ և կենդանի է, բայց հեռացրել են այս կողմերից։ Վերջին ենթադրութիւնը անհաւանական չէր, քանի որ Մարիամը դեռ ջահիլ էր, նոյն իսկ գեղեցիկ։

Իզուր Նազլուն ամեն օր գնում էր բէկի դուռը և ամեն մի պատահողից պահանջում էր ասել թէ ո՞ւր է իր մայրը։ Նրա կատաղութիւնը ոչ ոքին չէր զայրացնում, որովհետև ամբողջ գիւղը անուանում էր նրան խենթ աղջիկ։ Միայն տանուտէր Ահմէդը, որ մի առանձին հաճութիւն ունէր դէպի խենթերը, խօսում էր նրա հետ, մեծ բաւականութեամբ ծիծաղում էր, մինչև անգամ մատի ծայրը դիպցնում էր նրա ուսին և կրկնում իր սովորական խօսքերը.

—Ինձ ծերաշի Ահմէդ կասեն...

Մի-մի անգամ բարեհոգի թիւրքը մեկնում էր իր ձեռքը դէպի հիւսիս, խաղացնում էր մատները, հասկացնելով թէ շատ հեռու տեղ է իր ցոյց տուածը և աւելացնում էր.

—Այնտեղ է... նրան չես տեսնի։

Նազլուն չէր հաւատում և յուսահատութիւնից կատաղած՝ բարձրացնում էր իր բռունցքը, տում էր սպառնալով Ահմէդին.

—Ես քո հոգին կը հանեմ...

Տանուտէրը աւելի մեծ ախորժակով էր ծիծաղում, աւելի լայն էր բաց անում իր բերանը, այնպէս որ պըսպղում էին նրա բոլոր ձիւնափայլ ատամները։

Այս տեսարանը ճշդութեամբ կրկնվեց և այժմ, երբ Փէրին ու Նազլուն հասան աղբիւրին։ Ահմէդը, որ նըստած էր քարի վրա, կանչեց նրան։ Տանուտէրը այժմ մենակ չէր. նրա կողքին կանգնած էր Բէօսա-Մուխտարը։

—Արի՛, արի՛, ասաց Անժէզը՝ նոյն երջանիկ ժպիտը բերանին.—չե՞ս ուզում քո մօր մօտ գնալ։

Աղջիկը կանգ առաւ, իսկ տասնապետը, ցոյց տալով իր ընկերին, աւելացրեց.

—Սա է տարել քո մօրը, սա քեզ էլ կը տանէ...

Եւ էլի ծիծաղեց։ Այդ ծիծաղը սաստիկ խաբում էր Նազլուին, թոյլ չէր տալով հասկանալ թէ որն է կատակը և որն է իրողութիւնը։ Այս անգամ նրա մէջ կասկած չը մնաց, որ Անժէզը կատակ է անում։ Անկարելի էր, որ նրա մօտ կանգնած այլանդակ մարդը լինէր իր մօր տանողը։ Եւ նա շարունակեց իր ճանապարհը, ուշադրութիւն չը դարձնելով Քէօսա-Մուխտարի վրա, որ նոյնպէս չարժանացրեց նրան իր ուշադրութեան։

Բայց այդպէս չէր Նազլուն մի շաբաթից յետոյ, վերադարձի ժամանակ։

Նա և Փէրին շրջապատուած էին մի տարօրինակ, մի սարսափելի բազմութեամբ։ Եւ այժմ նա հասկանում էր տասնապետ Անժէզի խօսքերը, գիտէր որ դրանց մէջ կատակ շատ քիչ կար. հասկանում էր մանաւանդ թէ ինչ է եղել տասնապետի այլանդակ ընկերը։ Եթէ երկուսը, Անժէզը և այն չորացած գէլը, այժմ էլ նստած լինէին աղբիւրի մօտ, Նազլուն ուրիշ կերպ կը խօսէր։ Բայց ոչ ոք չէր երևում այդտեղ, ոչ ոքին նա բան չասաց և ուղիղ գնաց դէպի աղբանոցի ձորը։ Այդ օրը հինաւուրց տունը օթևան տուեց շատ դժբախտների։

Դա աշնանային մռայլ օրերից մէկն էր։ Առաւօտեանից երկինքը պատած էր գորշ ամպերով. սարերի վրա ձգուել էր մշուշի մի անհուն ծով։ Մառախլապատ, անլոյս օրվայ խոնաւութիւնը նստել էր ամէն տեղ. իսկ ցուրտ քամին թէև շատ մեղմ էր, բայց սառցրել էր այդ խոնաւութիւնը և փայտացնում էր մարդու քիթ ու պռունգը։

Չը նայած այդպիսի եղանակին, Աւետարանոցը մի առանձին կենդանութիւն էր ստացել. նա դուրս էր թափվել և տեղաւորվել էր կտուրների վրա, ցանկապատերի ետևում։ Շրջակայ գիւղերից գալիս էին խումբ-խումբ գիւղացիներ. դրանց քշում բերում էին Սիւլէյման-բէկի ձիաւորները։ Մարդկանց կոյտերը խռնում էին մանաւանդ բէկի տան մօտ, իսկ մէլիքի տան հիւսիսային կողմում՝ բարձր թումբի լանջերը սևացել էին մարդկանց բազմութիւնից։

Ամէնքը սպասում էին. ամէնքի աչքերը ուղղված էին դէպի բէկի տան մօտ եղած լայնարձակ հրապարակը, որի մէջտեղում տնկված էր մի բարձր, սրածայր և հաստ ձող։

Մարդակեր բարբարոսութեան այն ժամանակներում երեխան էլ գիտէր, որ շուտով հրապարակի մէջ մի մարդ կը հանվի ցցի վրա։ Դա ամենազարհուրելին էր սպանութեան բոլոր եղանակների մէջ, որ մարդը հնարել է մարդու համար, և շատ յաճախ չէր գործադրվում։ Ամէնքը հասկանում էին, պատժվողը մի շատ նշանաւոր ոճրագործ պիտի լինէր։

Ասում էին որ բէկին, վերջապէս, աջողվել էր ձեռք գցել Մանասի մարդկանցից մէկին և այժմ նրա վրա պիտի թափէր իր ամբողջ կատաղութիւնը։ Նա հաւաքել էր այսքան բազմութիւն, որ ցոյց տայ թէ ինչպէս ինքը գիտէ պատժել. մինչև անգամ հրաւէրներ էր ուղարկել Մէլիք-Աւանին, մի քանի քուրդ ու թուրք բէկերի։ Միայն հայ մէլիքն էր անտես արել իրան հասած հրաւէրը։

Բայց ամբոխը մի առանձին տագնապի մէջ չէր։ Անհոգի, ցուրտ մի զանգուած էր նա և մինչև անգամ անհամբերութեան նշաններ էր ցոյց տալիս։ Լուր էր պտտում, որ ցցի հանվողը թէև Մանասի մարդկանցից է, բայց անյայտ օտարական է, վարանդեցի չէ, եկել է մի հեռու տեղից։ Օտարը օտարին կարեկից չէ. այս անողորմ օրէնքը այժմ ամբոխի մխիթարութիւնն էր։ Գոնէ իմանում էին, որ սպանվողը օտար է, ուրեմն կարելի էր նայել առանց ցաւակցութեան, առանց լացի, նայել այնպէս, ինչպէս փողոցում հաւաքվածները դի-

տում են թէ ինչպէս ընկած ձին կամ եզը փչում է վերջին շունչը։

Ժամանակն անցնում էր, իսկ սպասողների համբերութիւնը գնալով սպառւում էր։ Լեռնային քմահաճ բնութիւնը սկսեց մի քանի զարմանալի փոփոխութիւններ. մշուշը չքացաւ լեռներից, երկնքի ամպերը յանկարծ ծուէն-ծուէն դարձան և արեգակը մի քանի տեղ ճառագայթներ թափեց խոնաւ ու սառած երկրի վրա։

Կարծես հէնց դրան էր սպասում Սիւլէյման-բէկը։ Նա դուրս եկաւ տանից. ծալապատիկ նստեց գորգերի վրա առանձին պատրաստած տեղը, իսկ նրա շուրջը բազմեցին պատուաւոր հիւրերը։ Ամեն տեղ տիրեց մեռելային լռութիւն. մարդիկ չէին համարձակւում նոյն իսկ շունչ քաշել։

Բէկը կարգադրութիւններ արաւ, բայց այսօր նա չափից դուրս դանդաղկոտ էր, կարծես վճռել էր անհամբերութիւնից ճաքեցնել այդքան մարդկանց։ Նրա թիկնապահներից մի քանիսը դէս ու դէն վազեցին, նորից վերադարձան և ինչ-որ բան ասացին։ Անցան ծանր րոպէներ։

—Բերում են, վերջապէս լսվեց մի խեղդված շշուկ, որ սկսեց ալիքների նման ման գալ նայողների կոյտերում։

Գլուխների ծովը երերաց, ամեն մէկն աշխատում էր յարմար տեղ բռնել։ Տան ետևից մի քանի մարդիկ երևացին և անհամար աչքերը վերջապէս տեսան յանցաւորին։

Նա չէր քայլում, այլ քարշ էր ընկնում ծնկների վրա, որովհետև նրա աջ ոտը բոլորովին չէր գործում։ Առջևից գնացողը ձգում էր նրա վզին կապած շղթան և նա զարհուրելի ջանքեր էր գործ դնում, որ կարողանայ աւելի արագ շարժվել։ Մեռելային գունատութիւնը նըստել էր նրա դէմքին, որի վրա երևում էր մի նոսր միրուք։

Դեռ տեղ չը հասած՝ նա արդէն մեռած էր. կարծես նրան դուրս էին քաշել մահվան անկողնից։

Այդ հանգամանքը զարմանք պատճառեց հանդիսատես հիւրերին. հիասթափումն ընդհանուր էր։

—Սա մեռնելու վրա է, ասացին մի քանիսները։

—Ձողի ծայրին չի հասնի. կէս ճանապարհին հոգին կը տայ։

Կալանաւորը կարծես խիստ զգացած էր այդ վկայութիւններից։ Բարձրացնելով իր գլուխը, նա նայեց չորս կողմը, տեսաւ ահագին բազմութիւնը և ընդունելով արհամարհող մարդու հպարտ դիրք, ասաց, աչքերը բևեռած բէկի վրա.

—Հանգիստ եղիր, ես չեմ խանգարի քո այս մեծ հանդէսը... Իմ մէջ դեռ ոյժ կայ, կարող եմ, եթէ ուզեմ՝ քեզ զուարճացնել, երկար մնալ ձողի գլխին։

Նա հասաւ իր նպատակին. նա հասկացրեց որ սպանութեան հանդէսը կորցնում է իր նշանակութեան մեծ մասը։ Ամենաանգութ չարագործներն անգամ այքան հանդարտ ու անտարբեր չէին մօտենում այս տեսակ մահվան։

Նոյն իսկ այնպիսի գազաններ, որոնց համար մարդասպանութիւնը զուարճութիւն էր, դողում էին ցցի դիմաց։ Շատերը այնքան թուլանում էին, որ սկսում էին գթութիւն հայցել, իսկ շատերը այնքան զայրանում էին, որ կատաղած այս ու այն կողմն էին ընկնում, հայհոյանքներ էին թափում ամենքի վրա։ Թէ աղաչանքները և թէ կատաղութիւնը, սակայն, մի և նոյն միտքն էին յայտնում. նրանք հաւասար չափով ցոյց էին տալիս թէ որքան սոսկալի բան է ձողի գլխին սպասող մահը։

Իսկ այս ջարդված, կիսամեռ մարդը գոնէ մի հատ ցնցումով չը յայտնեց թէ իր մէջ էլ կայ երկիւղ։ Նրանից երկու քայլ հեռու գտնվող ձողը ոչինչ տպաւորութիւն չէր գործում նրա վրա։ Նոյն իսկ նրա վզին անցկացրած շղթան բոլորովին աւելորդ էր, ոչինչ նշան չը

կար թէ նա զգում է այդ մարդու մէջ որ և է կիրք։

Սուլէյման-բէկը, սակայն, ուշադրութիւն չը դարձրեց այդ արհամարհանքի վրա։ Նա մի սարսափելի ձայնով ասաց, ցոյց տալով ձողի ծայրը.

—Այնտեղից քո մարմինը կընկնի քեզ պէս շների առաջ. քո մի հատ ոսկորն էլ չի ազատվի շների բերանից։

Դատապարտվածի գունատ դէմքը քարացածի էր նման և երևան չը հանեց ամենաթեթև ջղաձգութիւն անգամ։

—Եթէ աղաչես, ես քեզ մի ողորմութիւն կանեմ, —շարունակեց Սուլէյման-բէկը.—ձողի վրա քո երեսը դարձրած կը լինի դէպի եկեղեցին, ուր դու հագնում էիր ծաղրածուի շորեր և ծէսեր էիր կատարում։ Գուցէ քո պիղծ հաւատի մեծերը գան և ազատեն քեզ իմ ձեռքից։ Ուզո՞ւմ ես, անհաւատ շուն։

Անպատասխան մնաց և այդ հայհոյանքը, որ արտասանվեց կարծես միայն այն մտքով, որ շրջապատողները հասկանան թէ սպանվողը եկեղեցու պաշտօնեայ է։

Եւ իրաւ, դա Տէր-Սողոմոնն էր։ Լեռան լանջին ընկած արնաքամ վիրաւորը, որին չէին նկատել Մանասի մարդիկ, այդ անվախ քահանան էր։ Արշաւանքից վերադարձող թիւրք զինուորները գտան նրան անզգայ դրութեան մէջ և տարան իրանց հետ։

Ամբողջ երեք շաբաթ նրա երկաթի կազմուածքը, ոչինչ համարելով արեան այնքան կորուստը, մաքառում էր զինուորի մահվան դէմ, և յաղթեց նրան, բայց յաղթեց, որպէս զի մատնէ մի աւելի սարսափելի մահվան։

Սուլէյման-բէկին հասած քահանայի կմախքն էր. բայց նա շտապեց այդ կիսամեռ մարմինը սպանել հրապարակի վրա։ Նա վրէժ էր հանում Մանասից. իսկ վրէժի զգացմունքը այս դէպքում կատաղութեան աստիճանին էր հասցնում այն, որ ձեռք ընկածը մի հոգևորական էր, հակառակ, անհաշտ կրօնի մի ներկայացուցիչ։

Մահմեդականութիւնը դարերի ընթացքում այդ ներ-

կայացուցիչներին չէր խնայել... Երևի վրէժի ամբողջ զովութիւնը ծծելու համար էր որ նա այսօր չէր շտապում։ Ինչպէս կատուն մի առանձին հաճութեամբ նախ խաղում է իր ճանկերի մէջ ընկած որսի հետ և ապա միայն խեղդում ու ոչնչացնում նրան, այնպէս էլ սէ-բիացին դեռ երկար զննում էր իր զոհին։ Ի՞նչն էր այդքան զրաւել։ Դրսից—ոչինչ. նա ընկած էր հողի վրա, առանց ուրիշի օգնութեան չէր կարող կանգնել, շարժվել։ Նա հիւանդ էր, շատ թոյլ...

Չը կար աւելի զզուելի տմարդութիւն, ինչպէս այդ հիւանդից վրէժ հանելը։ Նոյն իսկ բոլոր գազաններին չէ յատկացրած այդքան փոքրոգութիւն։ Դա բորենու հաճութիւնն էր, որով նա մօտենում է գերեզմաններին, փորում է ու դիակներ պատառում։ Բայց հանդիսականներից ոչ ոք չէր զգում այդ ստորութիւնը։ Բէկին շըրջապատողները նոյն բորենիների դասից էին, նոյն իսկ այստեղ էլ, այսպիսի հանգամանքների մէջ էլ, շողոքորթութիւններով էին գրգռում նրա ախորժակը։

Իսկ ամբոխը գիտէր իր բանը—սպասում էր վերջին գործողութեան։ Երկինքն անգամ անտարբեր էր դէպի աշխարհային վատութիւնը։ Նա կամաց-կամաց պարզում էր իր դէմքը, կարծես ուզում էր աւելի փայլուն, աւելի դուրեկան լուսաւորութիւն հաղորդել պատկերին։ Ամպերը ճեղքվում էին, հեռանում միմեանցից. արևը լայն ու մեծ շերտեր էր տարածել լեռների վրա, որոնց սև ու խոնաւ մարմինները դեռ շարունակում էին ծխալ, բարձրացնելով գոլորշիների խիտ ամպիկներ. կարծես հարիւրաւոր անտեսանելի բրմեր խորհրդաւոր զոհեր էին մատուցանում և նրանց ծուխը ուղարկում էին դէպի երկինք, դէպի ինչ-որ գերագոյն էակ, ինչ-որ անհասկանալի, տարօրինակ աստուածութիւն...

Կենսատու, փայլուն շերտերից մէկն էլ ընկաւ գետնատարած մահապարտի վրա։ Բայց երկնքի շնորհն էլ նա

չուզեց նկատել. ոչինչ ազդեցութիւն չարին նաև տաք, փաղաքշող ճառագայթները։

Բէկը, վերջապէս, նշան արաւ։

Մի խումբ մարդիկ թափվեցին քահանայի վրա և բարձրացրին… Գործողութիւնը կատարվեց մի զզուելի դանդաղկոտութեամբ։ Եւ երբ դահիճները, վերջապէս, մի կողմ քաշվեցին, փայտի սուր ծայրին շամփրած մարդը տիրեց ամբողջ շրջապատի վրա, նուաճեց, սառցրեց բոլոր լեզուները։ Բայց որքան էլ մեռած ու անշարժ լինէր մանջերի այդ անապատը, ձողի վրայից մի հատ մռմռունջ, մի հատ տնքոց չը լսվեց օդի մէջ։

Կապած ձեռքերը սեղմված էին նրա մէջքին, աջ ոտը փայտի նման կախ էր ընկել։ Այժմ էլ այդ ոտը փաթաթված էր հնամաշ շորերի մէջ։ Դա դահիճների մոռացկոտութեան նշան չէր. այժմ էլ դաւաճան գնդակի պատճառած մեծ վէրքի վրա դեռ գործում էր սպեղանին։ Նա խլել էր այդ մարդուն հանգիստ մահվան գրկից և այժմ էլ պիտի շարունակէր իր պաշտօնը, որպէս զի ցցի մահը կատարէ իր սոսկալի գործը, որքան կարելի է դանդաղ կերպով։

Ծանր րոպէներ անցան։ Դեռ ամենքը սպասում էին։ Չը կային տանջանքներ, բայց պիտի անպատճառ լինէին։ Հօ երեխայ չէր Սուլէյման-բէկը, որ այսքան մարդ հաւաքէր սոսկ այն նպատակով, որ ցոյց տայ թէ ինչպէս է ցցի վրա խրվում մի կտոր միս։ Այս միտքը բէկի շըրջանում էր պտտում։ Իսկ դէնը, բազմութեան մէջ, խօսում էր բազմութեան տրամաբանութիւնը։ Տանջանքներ չը կան, ուրեմն ոչ ոք չէ կարող ասել թէ վերջացել է տեսնելու պարտականութիւնը։

Բայց տանջանքներ կային, վաղուց էին սկսվել, միայն համր էին և անտեսանելի։

Հիւծված մարմնի մէջ ոտքի էր կանգնել ամբողջ կամքը, մի պողպատի ձուլուածք, որ միշտ առաջնորդում էր այդ անվեհեր մարդուն։ Նա հպատակութեան էր կան-

չում մարմնի բոլոր մասնիկները, որոնց վերաբերմամբ երբեք քնքշութիւն չէր իմացել։ Բայց մարմինը մարդկային մարմին էր. նա կծկվում էր հարիւրաւոր տեղերից, իր բոլոր ջղերը պաղ օձեր էր դարձրել, որոնք գալարվում էին, ձգվում, տարածելով տենդային ցնցումներ։

Երկու հակադիր ույժեր—մարմնի բնութիւնը և պողպատի կամքը—միմեանց զիջումներ չէին անում, ու տանջանքները աւելի անգութ էին։ Այս մրցումը հաւաքվել, կենտրոնացել էր դէմքի վրա։ Այդտեղ երեւում էր լուռ փոթորիկը, տեղի ունէր մի ալէկոծում, որ եթէ ձայն ունենար, կը դղրդացնէր գետի ամբողջ ձորը…

Տեսան այդ դէմքը… Բէկը առաջիններից մէկն էր։ Նրա ճակատի կնճիռները դրսավեցին, մի քիչ հանգստացաւ այդ թխպած կերպարանքը։ Չը համարձակվելով խօսել, նա խոնարհվեց դէպի իր կողքին նստածը և մատով ցոյց տուեց սպանվողի դէմքը, ուր ամեն ինչ տակն ու վրա էր դառած և կարծես հարիւրաւոր տեղերից ճաքճքել էր ուզում։

Ամբոխն էլ տեսաւ։ Իսկ նահատակը չը տեսաւ մարդկային հետաքրքրութեան այդ զզուելի անհամեստութիւնը, այլ զգաց իր այրվող սրտով, և շտապեց թաքցնել իր դահիճների մխիթարութեան այն վերջին նշանն էլ։ Նա յետ գցեց իր գլուխը. դէմքը այլ ևս աշխարհին չէր երեւում, յառած էր երկինքին։ Մարմինը հետզհետէ թուլանում էր. նա առանց այդ էլ քայքայված էր. ցցի սուր ծայրը պատառոտել էր նրա փորոտիքը և մի պահ, ամենակուլ կրակ սովորականից շուտ բոյն էր դնում վէրքերի մէջ։ Շատ էր շտապել Սուլէյման-բէկը…

Արեգակը անցնում էր կէսօրվայ տեղից։ Նրան դիմաւորում էր անհեղ մրցութեան դաշտը։ Սարերը կռիւ էին յայտարարել արևին։ Նրանք այժմ ծխում էին մոլեգնաբար, հաւաքում էին իրանց բոլոր մշուշները և մեծ-մեծ յորձանքներով ուղարկում էին դէպի երկինք, կարծես խօսք էին տուել միմեանց կլանել հրեղէն գունդը

և նրա համատարած ոսկի շողերը։ Գոլորշիների եռացող ծովը արագ տարածվում էր, գրավելով երկնքի բոլոր բաց տեղերը։ Նա կանոնաւոր պատերազմ էր մղում. գալարուն, թեթևաշարժ հոսանքները առաջապահ գնդերի պէս գրոհ էին տալիս և արդէն անցնում էին արեգակի վրայով, իսկ նրանց ետևից գալիս էին դանդաղ և միաձոյլ կուտակումները։ Խոնաւ երկրի երեսին վազում էին նրանց ստուերները։ Սակայն արևելքը այդ միջոցին սքանչելի խաղաղութիւն էր ներկայացնում, այնտեղ երկնքի ծայրը պարզվում էր. այնտեղից ամպերը յամրընթաց լողում էին դէպի արևմուտք, դէպի կուի դաշտը։ Օրվայ մնացորդը պատկանում էր մառախուղին։

Յանկարծ փայտի ծայրին շամփրած մարդը մի սաստիկ ցնցում գործեց և դարձեալ խլեց ընդհանուրի ուշադրութիւնը։ Նա լարեց իր բոլոր ջղերը, զարհուրելի հաստատակամութեամբ ձգեց իր կծկված իրանը, ուղղվեց և կուրծքը շուռ տուեց դէպի արևելք։

Դա մեռնողի ծայրայեղ յանդգնութիւնն էր, որ ահ տարածեց մինչև իսկ Սուլէյման-բէկի շրջանում։ Յանդգնութիւն՝ այդ զարհուրելի դրութեան մէջ անգամ... Այսպէս են մեռնում հսկաները։

Թէև այդ շարժմամբ նա կոտրեց իր փորոտիքը, բայց էլի ձայն չը հանեց։ Կարծես բաւական էր, որ այժմ նայում էր երկնակամարի պայծառ ծայրին. ուզեց առաջ տանել իր աջ թևը, բայց տեսնելով որ նա պինդ կապված է, երեք անգամ գլուխ տուեց անհուն բարձրութեան։

Ամբոխի վրա այժմ բռնացաւ մի գերբնական ահ։ Ամէն մէկը դողաց, երբ օդի մէջ հատատա ու անշփոթ ձայներ տարածվեցին.

—Ազատիր մեր երկիրը...

Նա աղօթում էր. նա խօսում էր երկնքի հետ։ Դա վերջին քահանայագործութիւնն էր, որ բարիք էր աղերսում աշխարհի համար։ Ապա նա թուլացաւ ու գլուխը

կախ գցեց աջ ուսի վրա։ Այլ ևս կծկումներ չը կային։ Մահը հանդարտ վերջացնում էր իր գործը...

Այս անգամ էլ ամբոխը անշարժ էր։ Այժմ նրան շղթայել էր գերբնական ահը։ Այս վայրկեանից ցցի գլխին նստածը նրա սուրբն էր։ Ամբոխի առաջ այլ ևս մարդ չէր, այլ պաշտելի ոսկորներ։

Մոմի լոյսերով և խունկի ծխով, ջերմեռանդ համբոյրներով և սրտի հառաչանքներով նա կը փառաբանէր ոսկորների ամէն մի կտոր և կուղարկէր նրան երկնքի գահի առաջ՝ ցաւագար, տանջվող աշխարհի համար բարեխօսելու։ Բռնութեան զոհերը միշտ ամբոխի սրբերն են դարձել. դա արդար օրէնք է...

Հասաւ այդ օրէնքի ամենահանդիսաւոր նուիրագործման բոպէն. մարդկանց կոյտերի մէջ մի սրբազան ողբ սկսվեց։ Նա անձայն էր առաջաւոր խմբերի մէջ, բայց խուլ հեկեկանքներ դարձաւ, երբ անցաւ շարքից շարք, կամուրջներ գցեց կտուրների վրայով, մինչև անգամ դիմեց դէպի բարձր, դէպի մէլիքի տան մեծ թումբը. նա շոշափեց բոլոր աչքերը, որոնք նայում էին սպանութեան...

ԺԶ

Միաժամանակ երևան եկաւ մի ուրիշ հրաշք։

Դա երկնքից նահատակի վրա կաթող լոյս չէր, դա փայլատակում չէր, ոչ արևի խաւարում և ոչ առհասարակ որ և է գերբնական երևոյթ, որ պիտի վաւերացնէր ամբոխի վճիռը և հաստատէր թէ երկինքն էլ ընդունում է որ սուրբ է այդ զոհը։

Դա մէլիքի աղջիկն էր, որ կանգնած էր ամրոցի պարսպի վրա...

Տեսե՞լ էր նա ամէն ինչ։ Լսե՞լ էր աղօթարանին ուղղած աղաղակը։

Բարձր և ուղղաձիգ է այն ժայռը, որ բնութիւնը տնկել է Աւետարանոցի մէջ իբրև մի փոքրիկ միջնա-

բերդ. բարձր էր և այն շրջապարիսպը, որ պսակում էր միջնաբերդի գլուխը։ Այդ կրկնակի բարձրութեան վրա Գայիանէն մենակ էր, անշարժ կանգնած, բարձրահասակ, տասն և ութ տարիների մի ծաղկափթիթ ստեղծագործութիւն։

Ներքևից, գիւղի միջից, հրաշալի օդային երևոյթ էր այդ դիրքը. գլուխը քիչ կորացրած, մտախոհ, ամբողջովին հայեացք դարձած։ Ամեն ինչ—օդը, բարձրութիւնը, արեգակի դժգոյն լոյսերը, որոնք արագ փոխանակվում էին ամպերի փախչող ստուերների հետ, շրջապատող հանգամանքները,—դիւթական գեղեցկութիւն էր թափում նրա վրա։

Թւում էր թէ բազմաչարչար երկրի արդարութիւնը այլ ևս ջախջախված, արնաքամ դիակ չէր. թւում էր թէ նրան աջողվել է դուրս գալ մարդկանց ոտների տակից, թողնել արհամարհանքների միջավայրը և բարձր գնալ։ Եւ ահա նա հաստատվել է անմատչելի պատուանդանի վրա և հանդէս է բերել իր ամբողջ չքնաղութիւնը. անդուլ և անողոք, ինչպէս վայել է անպատուած սրբութեան, նա նայում է դէպի ցած, տեսնում է և զգում։ Թւում էր թէ այժմ նա պիտի դատէ, պիտի հաշիւ և պատասխան պահանջէ չարագործների այս հանդէսից։

«Ի՞նչ արիր»... Այս հարցն է, որ գալիս է բարձրից, այդ զարմանալի էակից։

«Ի՞նչ արիր»...

Արդար հարց։ Բայց լուռ է ցածրում փռված աշխարհը. պատասխան չունի յանցաւորը...

Եւ արդարութիւնը վրդովված է. միայն երկինքը կարող է իր կրակներով այդքան զայրոյթ դարձնել և տալ իր ընտրածին։ Գայիանէն փռված է, պատրաստ է ոչընչացնել յանցանքի տեղը կանգնած այն ամբողջ բազմութիւնը։ Ոչնչացնել, այո. արժանի են ամենքը, մեղաւոր են ամենքը։ Նա ոչինչ չէ խնայում, բայց զէնք ու հրանոթ չէ տուած նրան իբրև գործիք արդարութեան։

Դարձեալ ամեն ինչ թողնված է նրա հրեշտակային դէմքին—դա է նրան տուած։

Եւ գործի է դրված այդ զէնքը. նա այնպէս կնճռոտել է յօնքերը և շրթունքները միմեանց սեղմել որ թոյն է կաթեցնում վարդագոյն կաշու իւրաքանչիւր խորշից։ Մի ջուխտ կայծակներ անընդհատ հոսում են աչքերից և անդադար ճայթում են բազմութեան գլխին։

«Ի՞նչ արիր»...

Ուրիշ խօսք չը կայ. այս են հարցնում նրանք ամեն մէկից, չը խնայելով նոյն իսկ անհասկացող երեխաներին։

Շատ էին հարցաքննութեան ենթարկվողները, և երկար թափառում էին կայծակները...

Ոչինչ պատասխան. նրանք վերադառնում էին հանդէսի կենտրոնը, ուր դահիճները դեռ իրանց գոհի հետ էին։

Մի անգամ էլ ջուխտակ շանթերը բարձրացան ցցի գլուխը, սահեցան անկենդան դիակի լանջերով, ապա ցած թռան և մոլեգնաբար փաթաթվեցին թիւրք զօրապետին։

Այս անգամ նրանք երկար կանգ առան այդ կոշտ ու վայրենի մարմնի վրա. և այս անգամ էլ սիրիացին անգէտ չը մնաց։ Նա էլ դարձրեց իր դէմքը դէպի այնտեղ, ուր ուղղված էին բազմաթիւ հայեացքներ. նայեց և... առաջին իսկ վայրկեանից տեսաւ անասելի զզուանքի, ատելութեան տարափը, որով նրան հեղեղում էր անծանօթ, բայց սքանչելի դէմքը։

Սիրիական արիւնը անհանգիստ հեղուկ է. նրա իւրաքանչիւր կաթիլը կրակ ընկաւ մի ակնթարթում։ Երկու կայծակները նրան էլ մօտեցրին այն հարցը, որ ման էին ածում աջ ու ձախ։ Բայց նա չը հասկացաւ. նա երբէք չէր ճանաչել հաշիւ ու պատասխան պահանջող հարցերը։

Զզուանքը ոչնչացնող, պատժող չէր. գեղեցիկ աղջիկը բռնակալներին չէ պատժում։ Ընդհակառակն, նա

մի թեժ կրակ էր, որ գլորվեց, ընկաւ բռնակալի սրտի այն կողմը, ուր ամբարված էին անասնական գիւրավառ կրքերը։ Այդտեղ հրդեհ բռնկվեց, որ կայծեր ցայտեցրեց դէս ու դէն։ Վճիռը բոլշական էր...

Երկու հայեացքների մրցութիւնը կարճատև էր։ Բէկը իր սարսափելի ախտակուցներին հանգիստ էր տուել։ Տէր-Սողոմոնը հանել, տարել էր նրանց ամբողջ կատաղութիւնը և այժմ հպարտ ու ինքնաբաւական հայեացքը տափանքի կրակն էր արծարծում իր մէջ։

—Ո՞վ է այն եղնիկը, բացականչեց բէկի հիւրերից մէկը։

—Ո՞ւմ աղջիկն է, հարցրեց միւսը։

Սկսվեց խօսակցութիւն։ Տանտէրը քիչ էր խառնվում. նա լաւ էր համարում լսել և նայել։ Արաքսի ափին ապրող մի երիտասարդ բէկ հաւատացնում էր որ այդպիսի մի գանձ ունեցողը հէնց այժմից կարող է համարել իրան մարգարէի դրախտում։ Նրա դրացի և հասակակից մի այլ բէկ բոլորովին համաձայն էր որ այդպէս է, բայց աւելացնում էր որ գանձը դժուար տեղերում է լինում թաղված, ուստի այս մի գանձին տիրանալն էլ հեշտ չէ։

—Ինչո՞ւ, զարմացած հարցրեց Սիւլէյման-բէկը։

—Չե՞ս տեսնում. նա հպարտ է ինչպէս մի փէրի. իսկ այդ ամրոցը, երևի, շատ լաւ է պահպանում նրան... Կարծես թէ երկու թագաւորութեան տէր հայր ունի...

—Եթէ Մէլիք-Ցուսէինի աղջիկն է, ուրեմն հայր չունի։

—Ի՞նչ ասացիր, Սիւլէյման-բէկ. դու ուրեմն չը գիտե՞ս էլ թէ ով է նա։

Բէկը հարկադրված եղաւ խոստովանել այդ բանը։ Երկու հասակակից երիտասարդները ծիծաղեցին, չը կարողանալով պահել իրանց զարմանքը։

—Միշտ այդպէս է, ասաց մէկը.—ամենալաւ որսը արծիւն է. բայց նա, ասում են, իրանից մօտ

գտնվող որսը չէ տեսնում։ Այդպէս էլ Սիւլէյման-բէկը...

Այդ հաճոյախօսութիւնը բէկին շատ դիւր չեկաւ. Նա չէր ուզի այս անգամ նոյն իսկ արծիւ դառնալ և աչքից գցել այսպիսի որսը։

—Գիտէ՞ք ինչ կասեմ ես, մէջ մտաւ մի հասակաւոր թուրք, ըստ երևոյթին մի խան, որի մէջքին փաթաթած էր Քիրմանի թանկագին շալ։—Վկայ է մարգարէի միրուքը, այդպիսի կասկածներից վայելչութիւն չի լինի։ Ընտանիքը մի խաղաղ պարտէզ է և ոչ թէ կռւի ասպարէզ։

Նա ընդհանուր հեգնութիւն առաջ բերեց իր այդ մտքով։

—Դու, Շէրիֆ-խան, ծերացել ես և հանգիստ ապրելն ես սիրում։ Բայց չը գիտե՞ս միթէ թէ ինչ զուարճութիւն է վայրենի ձին զսպելը, հնազանդեցնելը։

—Այո, հաստատեց Սիւլէյման-բէկը։—Սամբուլում ահագին արժէք ունեն կատաղի հիւրիները. այնտեղի մեծամեծները ահագին փողեր են ծախսում՝ այսպիսի գեղուհիներ ձեռք բերելու համար...

—Ճի՞շդ է, ճիշդ է, ասացին ամենքը։

Շէրիֆ-խանը լռեց, որովհետև Սամբուլը այնպիսի հեղինակութիւն չէր, որ կարելի լինէր նրա դէմ վիճել։

Իսկ նա, որ այս խօսակցութեան նիւթն էր, շարունակում էր բարձրից իր զզուանքը թափել։

Խեղճ. նա չը գիտէր թէ ինչ գնահատութիւն էր գտնում իր սրտի սրբազան, մաքուր զգացմունքը այն շրջանի մէջ, որին տալու, արհամարհելու համար դուրս էր եկել այդ սարսափելի ժամին։

Նա միամիտ էր լեռնային եղնիկի նման։ Հէնց այդ էր պատճառը, որ կոյս Հեղինէն, Աննա-խաթունը և ամենքը աշխատում էին սովորեցնել նրան նոյն եղնիկի զգուշութիւնը։ Նրանք գիտէին որ բոլոր գիշատիչները մի և նոյն են՝ ինչ կաշուի և կերպարանքի մէջ էլ լինեն. ուստի քարոզում էին, որ որսի համար մի փրկու-

թիւն է սանձել աշխարհը—թաղնվել։ Ուրիշ ոչ մի բան չէր օգնի. և խեղճ է այն եղնիկը, որ կուլ է գնում գայլի դէմ։

Մի այդպիսի կռիւ ներկայացնում էր Գայիանէն թուրք զօրապետի դիմաց։ Բայց այդպէս երեւում էր հեռուից նայողին։ Ինքը, աղջիկը, այնքան ոգեւորված էր իր կռւով, որ բաւարար չէր համարում իր միակ զէնքը և այն թոյնը, որի մէջ նա եռանդով թաթախում էր այդ զէնքը։ Իսկ թոյն պատրաստում էին նրա համար այն ահռելի անցքերը, որոնք տեղի ունեցան վերջին շաբաթներում...

Այն ժամանակ, երբ Գայիանէն կանգնած էր պատի գլխին, նրանից քիչ հեռու, ձախ կողմին, զառիվայրի լանջերին կային տեսարաններ, որոնք քարեր էին լացացնում։ Սառն, քարքարոտ հողի վրա թափված էր այն սարսափելի բազմութիւնը, որ առաւօտեան իրանց հետ բերել էին Փէրին ու Նազլուն։

Այդտեղ երեւում էին ծծկեր երեխաներ, որոնց մերկ մարմնի վրա փտում էին օսմանեան զէնքերի պատճառած վէրքերը. անհայր ու անմայր որբերի մի մեծ թիւ մեռնում էր սովից և ցրտից։ Իսկ ի՞նչ էին անում մայր ունեցողները։ Ահա այն կողմը, ամէնքից հեռու, մի կին է երեւում. Նա պատառոտել է իր բոլոր շորերը, ծածկել է նրանց կտորներով իր փոքրիկ երեխային, բայց մանուկը դարձեալ դողում է։ Եւ այլ ևս ճար չունի խեղճ մայրը, ուրիշ միջոց չը գիտէ նրան տաքացնելու համար, այլ միայն շուտ-շուտ համբուրում է նրան, կաթեցնելով իր աչքերից խոշոր արտասուքներ...

Ահա դրանք են Գայիանէի կողմնակիցները։ Սուլէյման-բէկը իր հիւրերի հետ վճիռ էր կայացնում կատաղած հիւրիի մասին։ Իսկ այստեղ այսքան թշուառներ, այսքան մերկ, փայտացող մարմիններ... Ի՞նչ էին ասում նրանք Գայիանէին։

Խօսք չէր դուրս գալիս նրանց բերաններից, բայց

տանջանքները հարիւրաւոր լեզուներից էլ պարզ հասկացնում էին, որ հիւրիի ամբողջ կատաղութիւնը քիչ է, շատ չնչին, և այս զարհուրելի դժբախտութեան մէջ ոչինչ, ոչինչ մխիթարութիւն չի տայ...

Ոչինչ մխիթարութիւն չէր տալիս և Փէրին, թէև այս անգամ պակաս եռանդով չէր կատարում իր գործը։ Նա նստած էր դժբախտների շարքում և իր ամբողջ շնորհքը գործ էր դնում, որ արտասուք գլգլէ այդ ուշակորոյս բազմութեան մէջ, լաւ իմանալով, որ բացի դրանից մի ուրիշ միջոց չը կայ, մի միջոց, որ ծուատած սրտերին գոնէ աննշան թեթեւութիւն տայ։

Բայց իզուր. ոչ ոք նրան չէր հասկանում և ոչ ոքի մէջ այլ ևս արտասուք չէր մնացել։ Այդ րոպէին եթէ դեռ կար մի բան, որ կարող էր շարժել արիւնոտ սրտերը, դա անասնական այն հրճուանքն էր, որ յայտնի է միայն սովածներին և որը դուրս է հանում մի կտոր հացը։

Հա՛ց... Նա էր այս զարհուրելի մարդկանց տանջող երազը. նա էր կարող թացութիւն տալ նրանց բորբոքված, ապուշ աչքերին։ Իսկ Փէրին սուտ է ասում, յիշում է անցեալ օրերը, յիշում է աղէտները, ողբում է կորածներին... Կրակոտ պատմութիւններ են, բայց նրանց լացները քարեր են. քարեր, թափված շրջակայքում, երկնքի տակ, և քարեր, ամփոփված այս մարդկանց սրտում։ Հա՛ց...

Եւ պառաւի լացը կարծես միայն Գայիանէի համար է. կարծես այդ սուտն է, որ շարունակ հասկացնում է մէլիքի աղջկան թէ պէտք է, դեռ շատ պէտք է թանձր թոյն, ատելութիւն ու անէծք թափել այս անբախտ աշխարհի վրա։ Եւ չէ կշտանում Գայիանէն իր կռւից, չը գիտէ թէ երբ կը վերջանայ դժբախտների, զրկվածների թոյնը։

Արեգակը վերջնականապէս թաղվեց ամպերի մէջ. սարերի գլխից մշուշը կամացի արշաւանքներ սկսեց դէ-

պի անագին ձորերը։ Կախվեց մութ ու անգոյն օրը. սագի ծայրերի մեծութեամբ կաթիլները սկսեցին մաղվել ցուրտ օդի մէջ։ Մարդկանց գծագրութիւնները այլ ևս պարզ չէին երևում։ Տեղ չէին հասնում և Գայիանէի բարկութեան շանթերը . . .

Այդ միջոցին մի ձեռք դիպաւ նրան և մի հեզ ձայն արտասանեց.

—Ժամանակ է . . .

Մէհրին էր։ Նրան չաջողվեց իսկոյն իր վրա դարձնել Գայիանէի ուշադրութիւնը, որին ներքևում փռված տեսարանը բոլորովին գերել էր...

—Գնանք, Գայիանէ, մայրդ հիմա կը վերադառնայ, նորից խօսեց Մէհրին։

—Այդքան շո՞ւտ, հարցրեց աղջիկը, աչքը չը հեռացնելով մահվան պատժի հրապարակից։

—Ամենքն են գնում։

Իրաւ, հանդէսը վերջացել էր։ Փողոցները, կտուրները դատարկվում էին. շատ խմբեր արդէն հեռանում էին Աւետարանոցից։

—Այո, գնում են ամենքը, մնում է միայն նա...

Մէհրին հասկացաւ թէ ում մասին է խօսքը։ Եւ խորը հառաչելով, ասաց ջերմեռանդութեամբ.

—Նա նահատակ է։

—Օ՜, նահատակ... Բայց ինչ էլ լինի նա, այս մարդիկ արժանի են երկնքի կրակներին։ Դու տեսար ամեն ինչ... Ես չէի ուզի հեռանալ այստեղից, մինչև որ արդարութիւն չը լինի։ Մի՞թէ ոչ ոք չը պիտի պատժվի, մի՞թէ ամենքը լուռ ու հանգիստ կը գնան իրանց տները և դեռ կը պատմեն ինչ որ տեսան ու լսեցին։

—Այո, կը գնան, հոգիս, կասեն էլ։ Ո՞վ է աշխարհի տէրը, ո՞վ պիտի արգելէ, եթէ վաղը մի ուրիշին էլ այդպէս անեն։

Մէհրին այժմ ուրիշ տեսակ էր երևում։ Կարծես նա հաշտվել էր մի նոր դրութեան հետ և այդ պատճառով

խօսում էր այնքան համարձակ. նա այլ ևս կարիք չէր զգում կիսատ, անորոշ խօսքեր արտասանելու, քնացնելու։ Եւ նա չը զարմացաւ, տեսնելով Գայիանէի այլայլված թուխալից դէմքը. գիտէր որ հէնց այդպէս էլ պիտի լինի։

Առանց նրա խորհրդի և, որ գլխաւորն է, առանց նրա աջակցութեան չէր Գայիանէն իրագործել իր միտքը, յանկարծ դուրս գալով աշխարհի առաջ։ Մի ամբողջ օր ու մի ամբողջ երեկոյ երկուսը միասին խորհրդակցել էին, պատրաստել էին այդ գործը, որ անհնարին կը լինէր, եթէ Մէհրին տեղեակ չը լինէր տան բոլոր հանգամանքներին։

—Գնանք, էլի կրկնեց նա։

—Բայց ինչ տանենք մեզ հետ։ Մխիթարութիւն չը կայ, Մէհրի։ Իմ սիրտը այժմ աւելի սև է, աւելի ցաւագար։ Ա՜հ, ինչ մռայլ օր է, Տէր Աստուած, ինչ դժոխային օր . . .

Մէհրին ձգեց նրա թևը և երբ երկուսը մի քանի քայլ գնացին պարսպի վրա, ասաց.

—Մէհրին թոյլ չի տայ, որ դու այդպիսի տխուր խօսքեր ասես։ Լսի՛ր. ես տանը պիտի քեզ ասէի. այս երեկոյ... դու նրա հետ կը լինես։

—Ի՞նչ ես ասում, բացականչեց Գայիանէն, կանգնեցնելով պառաւին և ուշադրութեամբ նայելով նրա աչքերին։

Մի ակնթարթում այլակերպվեց այդ տխուր ու յուսահատ արարածը։ Բայց այդ փոփոխութիւնը հեշտութեամբ չը կատարվեց։ Աղջիկը չը դիմացաւ ներքին ցընցումներին և նրա աչքերից գլորվեցին արտասունքները . . .

—Կատա՞կ էր, հարցրեց նա լացի միջից։

—Ո՛չ, սուրբ Գրիգորիսը վկայ, շտապեց հաւատացնել Մէհրին։—Այսօր առաւօտեան, երբ նա գնում էր, ես մօտեցայ, որպէս թէ ուզում եմ խուրջինը տալ նրան։ Բայց մինչև խուրջինը ինձանից առնելը նա լսեց իմ բերանից մի քանի խօսք, որոնց միտքը իսկոյն հաս-

կացաւ.—Ես այդ իմացայ նրա ժպիտից և գլխի շարժումներից։ Նա գիտէ որ այսօր երեկոյեան ես պիտի յայտնեմ նրան քո կողմից մի շատ կարևոր գաղտնիք։ Եւ եթէ քեռիդ այս գիշեր չը պահէ...

—Նա չի մնայ, ընդհատեց Գայիանէն.—նա գիտէ...

Եւ ինքն իր խօսքը ընդհատելով, Մէհրիի հետ ցած իջաւ։

Բոպէ չանցած՝ նրանց տեղը բռնեց մշուշի մի թանձր կոյտ, որ իսկոյն փաթաթվեց միջնաբերդի ժայռին, կլանեց նրան և ապա ցած գնաց, քարշ ընկաւ գիւղի փողոցներում։ Լեռնային ջրողող, մառախլապատ օրը մեռելութիւն տարածեց ամեն տեղ...

Այդ մեռելութիւնը, կարծես, շատ հաճելի էր մի մարդու համար, որ կանգնած էր բէկի տան հարևան մի կտուրի վրա։

Վաղուց էր նա այդտեղ, այն ժամանակից, երբ բէկի հիւրերը խօսակցութիւն էին սկսել Գայիանէի մասին։ Այժմ նա դեռ չէր փոխել իր դիրքը, դեռ նրա դէմքը դարձրած էր դէպի մէլիքի տունը, նայում էր մշուշի կոյտերին, կարծես սպասում էր թէ երբ գեղեցիկ աղջիկը նորից կերևայ այնտեղ։

Մտախոհութիւնը մի տաղնապալից յուզմունք էր պատկերացրել նրա դէմքի վրա. մի առանձին եռանդով նրա ոսկորոտ մատները յետ ու առաջ էին դարձնում փոքրիկ համրիչի հատիկները։ Երբեմն նա նայում էր նրանց և նրա հաստ շրթունքները արտայայտում էին կամ երկիւղ, կամ համարձակութիւն։ Վերջապէս նա համրիչը գցեց իր գրպանը, մի անգամ էլ կարօտալի հայեացք ուղղեց դէպի միջնաբերդը և արագ քայլերով ցած գնաց։

Դա Քէօսա-Մուխտարն էր։ Այսօր նրա հաշիւները բոլորովին խառնվել էին։

Մի բան միայն հասկացաւ նա, այն, որ այդքան հեշտ չէ իրան տանջող հաշիւներին միանգամից վերջ տալ։ Պահանջվում էր դեռ շատ նրբամտութիւն, բայց

մանաւանդ մեծ պատրաստութիւն։ Այլապէս չէր կայանայ մեծ վաճառքը։

Նա էլ անյայտացաւ գիւղի ինչ-որ անկիւնում։ Այնուհետև դրսում մնացին միայն շները, նոյնպէս և մի քանի հատ անտէր, վէրքերով պատած ու մերկ երեխաներ։

Սրանք մոլորվել էին իրանց բախտակիցների սոսկալի խմբից և այժմ թափառում էին ստուերների նման, դանդաղ ու անզգայ...

ԺԷ

Աննա-խաթունը այդ օրը չը մնաց իր տանը։ Պատճառները մի քանիսն էին, բայց գլխաւորը կոյս Հեղինէն էր։

Մէլիքի այրին կատարեալ այրական դիմացկանութիւն և սառնասրտութիւն ցոյց տուեց և այն աղէտների մէջ, որ նախատեսել էր Մանասի սուրհանդակի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ։ Սուլէյման-բէկը քանդել, հողին էր հաւասարեցրել երեք գիւղեր, որոնք գտնվում էին Մանասի բնակութեան մօտերքում։

Այդ գազանութիւնը պատճառաբանված էր թիւրքական նուրբ խորամանկութեամբ. որպէս թէ այդ գիւղերն են օգնութիւն տալիս աւազակներին, պահպանում են նրանց և հարկ եղած ժամանակ միանում են նրանց հետ ու միասին կռւում։ Վերջին կատարածը Տումի գիւղի շրջականերում, որպէս թէ, տեղի չէր ունենայ, եթէ այդ գիւղերը չը մասնակցէին Մանասի արշաւանքին։

Մարդու աչքը, որքան էլ սովոր լինէր բռնութեան հրէշային գործերին, չէր կարողանում հաշտվել այն իրականութեան հետ, որ ներկայացնում էին բարբարոսների կատաղութեան մատնված երեք թշուառ գիւղերը։ Գուժկաններ եկան, որ մէլիքի տանը յայտնեն եղելութիւնը։ Նրանք միաբերան վկայում էին թէ չէ կարելի հաւա-

տալ աչքերին։ Դրանից աւելի սարսափելի նկարագրութիւն չէր կարող անել լեզուն։ Նշանակում էր որ սիրտը աւելի լաւ է համարում թերահաւատ լինել, սփոփվել նրանով թէ աչքերը չափազանցում են, բարբարոսութիւնը աւելի մեղմ չափերով է կատարված, քան ընդունել թէ հնարաւոր է այնպիսի մի դժոխք երկրի վրա…

Աննա-խաթունը ցաւում էր, խոստովանում էր որ աղէտը իր ենթադրածից տասնապատիկ աւելի է, և այդքանով էլ բանականանում էր։ Նա մերժեց գարի կամ կորեկ փոխ տալ կոտորված ժողովրդի մնացորդին, որ ոչինչ չունէր, որ մերկ ու քաղցած դուրս էր շպրտվել աշնանային երկնքի տակ…

Այդպէս նա վարվում էր կոյս Հեղինէի խորհուրդներով։ Կտրվել աշխարհից, փակել աչքերը և խցել ականջները—ահա ինչի մէջ էր նա գտնում փրկութիւնը։ Որքան սաստկանում էր դժբախտ երկրի վրա հաւաքված փոթորիկը, այնքան անսխալ էին դառնում այս երկու կանայք։

Մայրապետը մանաւանդ այժմ անողորմ կերպով շահագործում էր իր քարոզած իմաստութիւններից մէկը—հլու հնազանդութիւն ճակատագրի կամքին։ Բոլոր դիմողների, աղերսողների համար նրա պատասխանը մէկ էր. Աստուծու կամքն է. ամէն փորձանք մեր մեղքերի համար է գալիս, ոչ ոք չէ կարող ջնջել այն, ինչ գրված է ճակատի վրա…

Նա մեծ ուշադրութիւն չը դարձրեց այն լուրի վրա, որ մի քանի օր առաջ սկսեց պտտել թէ Մանասի մարդկանցից մէկը պիտի ցցի հանվի։ Բայց երբ պատժի ժամանակին երկու օր էր մնացել, Հեղինէն յանկարծ սկսեց չը ծածկել որ բէկի դիտաւորութիւնը վրդովմունք է պատճառում իրան, որ սպանութեան այդ եղանակը անաստուածութիւն է, որ ինքը, պառաւ կոյսը, այդ օրը կը չոքէ սեղանի առաջ և արտասունք կը թափէ։ Այդ անհանգստութեան, այդ բողոքների պատճառն այն էր,

որ հաստատապէս յայտնի դարձաւ թէ սպանվողը մի քահանայ է։

Հեղինէն նրան չէր տեսել, նրա անունը չէր լսել, բայց բաւական էր որ նա քահանայ էր, կարգաւոր մարդ։ Ենթարկել եկեղեցու պաշտօնեային այդպիսի անարգ, ամօթալի մահվան՝ նշանակում էր անպատւել եկեղեցին, անարգել նրա կանօնները, նրա սրբազան ծէսերը։ Եկեղեցին առանձին կարգ էր սահմանել քահանայի թաղման համար։ Հեղինէն յուզված, բորբոքված յիշում էր այդ կարգի բոլոր մանրամասնութիւնները և ապա խորին վրդովմունքով մտաբերում էր, որ թիւրքերը սովորութիւն ունեն ցցի վրա սպանված մարդուն գցել շների առաջ…

Պատժի նախընթաց օրը նա գնաց Աննա-խաթունի մօտ և բոլորովին յուսահատեցրեց նրան իր ախ ու վաշերով, իր տխուր բացականչութիւններով։

—Էգուց եկեղեցու համար սև օր է, ասաց նա. —էգուց սուգ պէտք է անել… Տէր Աստուած, օծված քահանան շների առաջ… Ո՞ր մեղքերի համար ես մեզ այս սարսափելի պատիժը տալիս, Աստուած…

Այս բացականչութիւնը աւելի ևս յուզեց, քրքրեց նրա սիրտը և նա լաց եղաւ։ Աննա-խաթունը ամօթահար էր նրա առաջ։ Արտասունքներ պառաւ կոյսի աչքերում… Նա սկսեց մխիթարել նրան և վերջապէս ասաց, որ ինքն էլ վաղը կը լինի նրա հետ։

—Ես չեմ իմանում թէ ինչ կը լինի դրանից յետոյ աշխարհի հետ, շարունակում էր կոյսը յուսահատութեան վերջին ծայրին հասած։—Այսօր էլ լաց եղայ, կուրծք ծեծեցի, աղաղակեցի. եթէ Աստուած չը լսէ մեզ և չազատէ իր օծեալ պաշտօնեային, մեծ դժբախտութիւն կը լինի։

Մէլիքի կնոջ համար սովորութիւն էր շուտ-շուտ, շաբաթը գոնէ մի անգամ, մանել կուսանոց։ Այդ վանքի գաւթում էր թաղված Մէլիք-Յուսէինը։ Սրտամաշ աղխութեան րոպէներում այրին այդտեղ էր մխիթարութիւն

գտնում, արտասունքով թացացնելով գերեզմանի սրբատաշ քարը։ Նա ինքն էլ հաւատաց, որ վաղը տխուր ու սգալի օր կը լինի։ Ուստի շատ պատշաճ էր համարում այդ օրն էլ թրջել թանկագին գերեզմանը։

Բացի դրանից կար և մի այլ հանգամանք։ Վաղը, երբ մեծ բազմութիւն կը հաւաքվէր գիւղում, մելիքի տունը կատարելապէս լուռ կը լինէր և դատարկ։ Նա ոչ մի բանով չէր ցոյց տայ թէ ինքը հետաքրքրվում է կամ չէ հետաքրքրվում բէկի գործերով։ Այդ դէպքում պէտք էր տանել և Գայիանէին։ Բայց Աննա-խաթունը մտաբերեց, որ կոյս Հեղինէն պիտի լաց լինի, կուսանոցում խօսք ու զրոյց կը լինի սպանվող քահանայի մասին։ Եւ բացի դրանից որքան յարմար կը լինէր այդպիսի մի օր դուրս հանել աղջկան, տանել թէկուզ կուսանոց։ Մի կողմ թողնելով ճանապարհը,—կուսանոցի հարաւային և արևելեան կողմերը բոլորովին բաց են, չունեն պարիսպներ։ Աննա-խաթունը վճռեց թողնել Գայիանէին տանը, Մէհրիի հսկողութեան տակ։ Իսկ Ջալալը, որ դրանից մի օր առաջ էր եկել և չէր յայտնում թէ ինչու է եկել, կը գնար Տող, Մէլիք-Աւանի մօտ։ Այդպիսով երիտասարդը պարտաւորված չէր լինի գնալ Սուլէյման-բէկի մօտ իբրև հանդիսական և լուրեր կը բերէր Մէլիք-Աւանից։

Երբ նա վերադարձաւ կուսանոցից Շահնազարի հետ, մութը հասնելու վրա էր, իսկ Ջալալը դեռ չէր եկել Տողից։ Նա ներս մտաւ, Գայիանէին ոչինչ չասաց թէ ինչ էր տեսել և լսել վանքում։ Սովորականի պէս նա հանգիստ էր երևում։ Բայց երբ երեկոյեան դուռը ծեծեցին և յայտնի դարձաւ, որ Ջալալը վերադարձել է, Աննա-խաթունը չը ծածկեց իր դժգոհութիւնը և սկսեց յանդիմանել իր փեսային, որ նա ճանապարհ է եկել այսպիսի ժամանակին։ Միթէ չէր կարելի կամ քիչ շուտ ճանապարհվել, կամ թէ այս գիշեր մնալ Տողում։

Ջալալը հարկաւոր էլ չէր համարում պատասխանել,

արդարացնել իրան։ Նա միայն ծիծաղում էր՝ ծիծաղ և հիացմունք պատճառելով Գայիանէին և Մէհրիին, որոնք միայն գիտէին տարաժամ վերադարձի պատճառը։

Խաւար, անձրևային գիշեր էր։ Քունը վաղուց հանգստացրել էր ամենքին, դրսում նոյն իսկ շան հաջոցի ձայն չէր լսվում։ Մէհրին կամացուկ մտաւ Գայիանէի մօտ և նշան արաւ, որ հետևէ իրան։

Աղջիկը բոլորովին պատրաստ էր, հագել էր իր գեղեցիկ շորերը, ճիշդ այնպէս, ինչպէս Վարդավառի օրը։ Անձայն քայլերով դուրս եկան նրանք, իջան ցած։

Ներքին յարկի մեծ սենեակը, որ շինված էր բանտի վրա, բոլորովին դատարկ էր. այնտեղ էր մելիքը իր հպատակների վէճերը վճռում։ Սենեակի վերին ծայրում, անկիւնի պատուհանում, դրած էր ճրագը։ Մէհրին, ներս մտցնելով Գայիանէին, ինքը մնաց դրսում։ Րօպէ չանցած՝ եկաւ և Ջալալը։

Առաջին անգամն էր, որ նրանք տեսնվում էին առանձին, առանց վկաների։ Լեռնաբնակ ժողովրդի համար խորթ էր այն օրէնքը, որ արգելում էր փեսային ու հարսին խօսել միմեանց հետ մինչև պսակը. բայց մելիքների տներում պարսկական ճոխութեան հետ ընդունված էին նաև Պարսկաստանի ազնուական դասակարգի հասկացողութիւնները կանանց մասին. դրանք հետզհետէ մտնում էին և հասարակ ժողովրդի մէջ։ Գայիանէն ու Ջալալը շատ լաւ գիտէին, որ իրանք խախտում են այդ օրէնքներից մէկը, այն էլ այսպիսի մի տեղ, կէս գիշերային խաւարի և պառաւ դայեակի հովանու տակ։

Իբրև յանցաւորներ, նրանք առաջին վայրկեաններում լուռ էին, մինչև իսկ սառն. ամեն մէկը զննում էր սենեակի տկլոր պատերը, երբեմն երկչոտ հայեացքներ գցելով դիմացինի վրա։ Նրանք [illegible] մօտենում էին, միմեանց սովորում էին դանդա[illegible]։ Երկուսին էլ փշրում էր կուսական ամօթխա[illegible], երկուսի մէջ գործում էր մի և նոյն զգացը, [illegible]ջանում էր մի

անծանօթ, սրբազան զգացմունքից։

Ճրագի առաջ երկու հակառակ կողմերից առաջ եկան, հանդիպեցին երկու՝ միմեանց հակառակ գեղեցկութիւններ։

Մէկը կանացի էր, դաշտային հարաւի կրակոտ ներկայացուցիչը, որի զարդերը բնութեան համարձակ ձեռքով գծագրված էին գլխաւորապէս կարմիր և թուխ գոյների միջոցով։ Իսկ միւսը, խաչէնցին, ներկայացնում էր ամպերի մէջ խրված անտառապատ լեռների բարձրութիւնը, ուր բնութիւնը սիրում է մեղմութիւն, քնքշութիւն, ուր գոյները աւելի պարզ են, ջերմութիւնը աւելի չափաւոր. Նրա կաշին սպիտակ էր, մազերը խարտեաշ, աչքերը փոքրիկ, կապոյտ և վերին աստիճանի զգայուն։ Նրբակազմ տղամարդութեան միջակ հասակի նշաններից ոչ մէկն էլ բնութիւնը չէր զլացել այդ մարդուն։

—Դու ինձ կանչել էիր, Գայիանէ, վերջապէս խօսեց նա մի անչափ համեստ ու շփոթված ձայնով, որ կարծես հալվում էր ներքին մի ջերմութիւնից։

—Այո, համարեա շշնջաց Գայիանէն, ջանք գործ դնելով, որ ազատ ու համարձակ նայէ իր փեսայի դէմքին։

—Եւ ես եկայ, քո նամակը այստեղ է (նա ցոյց տուեց իր ծոցը)։ Եկայ և այժմ, այս մութին, որովհետև գնալիս Մէհրին յայտնեց, որ պիտի գամ...

—Շնորհակալ եմ, պատասխանեց Գայիանէն և լռեց, ինքն էլ զգալով, որ մի թանձր, մի ջերմ կարմրութիւն ծածկեց իր ամբողջ դէմքը։

Խօսակցութիւնը դեռ չըսկսված՝ վերջացածի էր նմանվում, այնքան դժուար էր ընկճել տեսակցութեան առաջին ժամը, որ տրամադրում էր լուռ նայել միմեանց, լուռ ականջ դնել սրտի զարկերին, բուռն զգացմունքներին։ Բայց Ջալալը, իբրև տղամարդ, շուտ կարողացաւ յաղթել այդ դժուարութիւնը և ասաց.

—Այժմ պատմիր, Գայիանէ։ Նամակը, որ դու գրել ես Մէհրիի անունից, ինձ յայտնեց որ դու գաղտնիք ունես և պիտի պատմես ինձ։ Գաղտնի՜ք... Դրա պէս զարմանալի բառ չը կայ... Ես համբերութիւն չունէի. երկար ու անվերջ էին այս քանի օրերը ինձ համար։ Այժմ ես լսում եմ քեզ։

Ո՛ւր էր թէ Գայիանէն էլ այդքան հաստատ ձայն ունենար և կարողանար այդքան երկար խօսել։ Նա նման էր մի երեխայի, որ վճռական րօպէին կորցնում է բացատրելու ընդունակութիւնը, բայց իր սիրուն աչքերի միջոցով իմաց է տալիս, որ ասելու բան ունի, միայն չէ կարողանում ասել։

Այդ սրտառուչ պատկերին Ջալալը նայում էր հիացած, շարունակ ժպտալով։ Դեռ ամօթխած, անհամարձակ էր երիտասարդի դէմքը. բայց այդտեղից արդէն նայում էր այն մարդը, որ գիտէ ապահովապէս թէ ինքը շատ երջանիկ է...

Նա համարեա չը նկատեց թէ ինչպէս Գայիանէն հանեց մի թղթի կտոր և մեկնեց դէպի նրան։ Նա բռնեց թուղթը ճրագի առաջ և տեսաւ նրա վրա նկարած պատկերը։

—Ի՞նչ է սա, հարցրեց երիտասարդը։

—Մի աղջիկ, պատասխանեց Գայիանէն հազիւ լսելի ձայնով։

—Ես այդ տեսնում եմ. բայց ինչացու է...

—Ես նկարեցի... քեզ համար։

Վերջին խօսքերը երկուսի մէջ էլ մի և նոյն յուզմունքը գործեցին. երկուսն էլ չը համարձակվեցին նայել միմեանց։

—Զգում էի, որ այդպէս էլ պիտի լինի, ասաց Ջալալը.—քո շնորհքը իսկոյն է աչքի զարնվում։

—Հաւանո՞ւմ ես։

—Հաւանե՜լ... ի՛նչ է նշանակում դա։ Հիանա՜լ... Այսպէս է ամեն մի բան, որին դիպչում է քո ձեռքը, որին դու հաղորդում ես մի առանձին շունչ։

—Ես գիտէի որ միայն դու կը հասկանաս այդ բա-

նը,—ուրախութեամբ արտասանեց Գայիանէն և կարծես մի մեծ ծանրութիւն ընկաւ նրա ուսերից։—Ուրիշներն էլ են տեսել պատկերը և... չեն հաւանել։

—Ի հարկէ... Հաւանելու համար պէտք է հասկանալ հանճն ու հոգը։ Իսկ հասկանալ կարող է միայն նա, ում օր ու գիշեր քո մասին է մտածում, որի աչքից դու չես հեռանում ոչ մի ժամ, ոչ մի րոպէ...

Նա նորից նայեց պատկերին։ Թղթի երեսից նրան մտիկ անողը մի խեղճ աղջիկ չէր, այլ գծեր, որոնք վըկայում էին թէ Գայիանէի մատների գործն են, գոյներ, որոնք Գայիանէի շունչի ջերմութիւնն էին ցոյց տալիս։

Պատկերը կորչում էր, նրա տեղ նստել էր նկարողը։ Երիտասարդը դանդաղ կերպով ծալեց թուղթը, տարաւ դէպի իր ծոցը։ Իսկ Գայիանէն դեռ չէր գտել այն եղանակը, որով պէտք էր սկսել։ Նրա մէջ էլ մրցում էին պատկերն ու նկարողը. պատկերը անհետանում էր, իսկ նկարողի հրճուանքը հարցնում էր. մի՞թէ բաւական չէ այդքանը, մի՞թէ սրտի համար ամենամեծ, վերջնական երջանկութիւնն այն չէ, երբ սիրում է և տեսնում է, որ իրան էլ են սիրում։ Եւ մի՞թէ այժմ այդ երջանկութեան մասին դեռ կասկած կայ։

Ջալալը իր կողմից հաստատեց որ չը կայ։ Նա յանկարծ ասաց.

—Այժմ իմացայ քո գաղտնիքը, Գայիանէ։ Հասկանում եմ... քո ձեռքով պիտի տայիր, քո խօսքերին պիտի արժանացնէիր... Շնորհակալ եմ. այժմից երկու բան կը լինեն ինձ հետ, որոնք ցոյց կը տան թէ դու ինձ հետ ես—նամակը և պատկերը... Կարող ես հասկանալ թէ որքան շնորհակալ եմ քեզանից...

Սիրող սրտերին յատուկ չէ երկար կանգ առնել մի կէտի վրա. նրանց համար չը կան երկար պատմութիւններ, մեծ հարցեր։ Ջալալը թողեց պատկերը, այժմ խօսք սկսեց մանր-մունր, առօրեայ, անգոյն բաների մասին։ Նա ուզում էր մանրամասնութիւններ իմանալ Գայիա-

նէի կեանքից. պատմում էր թէ ինքն ինչպէս է օրերն անցկացնում։ Գայիանէն, վերջապէս, սթափվեց։

—Այդպիսի խեղճեր շատ կան,—արտասանեց նա յանկարծ, անսպասելի կերպով և մի խղճուկ ձայնով։

Խօսքը անտեղի էր։ Ջալալը ուշադրութիւն չը դարձրեց, շարունակեց իրանը։ Բայց Գայիանէն շուտ ընդհատեց նրան։

—Գիտե՞ս, այդ աղջիկը այժմ էլ կենդանի է, նրան ես չեմ հնարել։ Առաջին անգամ ես նրան տեսայ Վարդավառի օրը, վիճակի ժամանակ... երբ դու էլ եկար... Ինձ ոչ ոք չէր ասում թէ ով է նա, ինչու այնքան խեղճ է, գզգզված, ինչու է այնպէս լաց լինում... Ո՛չ Մէհրին, ոչ մայրիկը, ոչ կոյս Հեղինէն... Ամենքը նրան խենթ էին անուանում... Իսկ ես իմացայ թէ ով է նա։

—Ո՞վ է։

—Առաջ նա մի հատն էր այն խեղճերից, որոնք դուրս են գալիս մարդկանց մէջ, չեն թագնվում, չեն ծածկում իրանց դժբախտութիւնը... Բայց այժմ նա մի հատ չէ, նրա պէս հարիւրները կան։

—Իսկ ես այնպէս կարծեցի թէ մի նշանաւոր տան աղջիկ է, որ յանկարծ ընկել է դժբախտութեան մէջ և այդ պատճառով է քեզ այնքան հետաքրքրել։

—Ո՛չ, միայն խեղճերն ու անպաշտպաններն են այդ օրում։

—Աշխարհի մէջ ամեն տեսակ բան լինում է...

—Ամե՞ն տեսակ։ Հօ ոչ մի մեծ, ոչ մի ուժեղ մարդ չէ կարող պարծենալ թէ վաղը նա չի լինի նոյնը։ Լինում է որ մեծերն էլ ոչնչանում ճիշդ այնպէս, ինչպէս խեղճերն են ոչնչանում։

—Շատ է պատահում։ Մահը ոչ որի չէ խնայում։

—Լինում է որ թոյլը գլուխ է բարձրացնում, ջարդում է իր շղթաները և ազատվում բանտից։ Որ արդարութիւնը ուժեղանում է, իսկ չարը խորտակվում։

Ջալալը այդ հարցերին գրական պատասխան էր տա-

լիս, չըհասկանալով թէ ինչ մտքով են նրանք արտասանվում։ Նա աշխատում էր հեռացնել Գայիանէին այդ տեսակ բաներից, մէջ էր գցում իր հարցերը, բայց նա յամառ էր և տեղի չէր տալիս։

—Ասա ինձ և մի բան։ Ի՞նչպէս է մի տուն, որ լցված է վախկոտներով։ Նա, օրինակ, գտնվում է արեան և արտասունքների աշխարհում. նրա կողքին, նրա պատերի տակ հառաչանքներ են լսվում, գազանները խեղդում են մարդկանց, որոնք օգնութիւն են կանչում։ Բայց լուռ ու խուլ է տունը, որովհետև վախկոտներ են ապրում այնտեղ։ Ի՞նչպէս է այդ տունը։

—Վախկոտութիւնը առհասարակ վատ է, ուր և լինի։

—Վա՜տ։ Օ՜, ինչպէս լաւ ես խօսում դու։ Հիմա մի ուրիշ բան։ Ահա այդ տան մէջ եղաւ մէկը, որ հասկացաւ թէ վատ է վախկոտութիւնը և որին ահա ասացին թէ այո, վատ է։ Եւ նա չէ վախում, ուրեմն պիտի դուրս գնայ, տեսնէ սգաւոր աշխարհը, ման գայ նրա մէջ։ Բայց մենակ է նա, ոյժ չունի. հասել է տան դռներին, այլ ևս չը գիտէ թէ ինչ անէ, դէպի ուր գնայ։ Դրսում խաւար է երևում նրա աչքերին, որովհետև անփորձ է նա. պէտք է ուղեցոյց, պէտք է մի ուժեղ ձեռք, որի վրա նա յենվի։ Եւ նա կանչում է այդ ձեռքը, ընկերի, պաշտպանի ձեռքը։ Ի՞նչ կը լինի։

—Չը գիտեմ։ Ի՞նչ կը լինի։ Ընկերից է կախված։

—Բայց կը գա՞յ նա։

—Անպատճառ, եթէ լաւ ընկեր է։

Գայիանէն մի քայլ առաջ գնաց և, բռնելով նրա ձեռքը, համարձակ ասաց.

—Սա է այն ձեռքը, իսկ ես մենակ եմ, Ջա՜յլ...

Այդ տպաւորութիւնը կայծեր լցրեց երիտասարդի մէջ. մի ակնթարթում նա յարձակվեց աղջկայ վրա և գրկեց։ Լուռ մի վայրկեան էր դա, երբ ինքը Գայիանէն էլ ընկաւ մի կրակոտ հոսանքի մէջ։ Նա հրճուանքով անձնատուր եղաւ այդ հոսանքին, թոյլ տուեց որ սիրով

վառված սիրտը գգայ, յուզվի այդ գրկի մէջ։

—Դու՜, դու՜, Գայիանէ, ասում էր նա, համբոյրներ թափելով նրա դէմքին.—մի՞թէ ես մեռած եմ, որ դու այդպէս լինես...

Եւ այդ առաջին կրակ համբոյրների տակից աղջիկը պատասխանեց.

—Դրա համար կանչեցի քեզ։

—Օ՜, ես քեզ կը տանեմ, կը հեռացնեմ բոլոր վախկոտներից. ես չեմ թողնի որ խաւար երևայ քո աչքերին։ Բարձր, շատ բարձր մի տեղ կը տանեմ քեզ, ամպերի տակ, ուր քարայծն էլ չէ համարձակվում ոտ դնել։ Քեզ այնտեղ կը պահեմ ես, բարձր ու ազատ, անհոգ և ուրախ։ Քոնը կը լինեն լեռան բոլոր եղնիկները. արծիւը պտոյտներ կանէ քեզանից ցած, դու կը տեսնես թէ ինչպէս են աստղերը դուրս գալիս իրանց օթևաններից և ինչպէս է ծնվում երկնքի ամպը։ Իսկ ես քո կողքին կը լինեմ միշտ, ամեն օր, ամեն ժամ։

—Ցեռա՞յ։

—Մեր երջանկութիւնը մեզանից կը լինի. ոչ ոք չի համարձակվի խանգարել մեր անդորրութիւնը, մարդու աչքը այն տեղին չի հասնի։ Դու չես տեսել Խաչէնը։ Այնտեղ սարեր կան, որոնց նայելն անգամ սարսափելի է։ Մենք նրանց վրա ենք ապրում...

Գայիանէն մի քայլ յետ կանգնեց։ Համբոյրները դեռ այրում էին նրան, բայց նա զգաց որ կրակոտ, հաճելի հոսանքը հեռու է տանում, ուզում է ծածկել, ուզում է կլանել աշխարհի բոլոր գործերը։

—Մի՞թէ պակաս է Վարանդան, ծիծաղելով հարցրեց նա։—Այստեղ սարերը չեն միայն, որ կարող են մեզ թաքցնել։ Մեր տների տակ, մշտական խաւարի գրկում, կայ մի ամբողջ ապաստարան, ուր չեն մտել նոյն իսկ չղջիկները. չորս կողմը, վերևից, ներքևից, միապաղաղ ժայռ է։ Բայց ոչ սարը, ոչ հողի տակը իմ ուզածները չեն։ Կեանք ես ասում. նա այդ տեղերում չէ գտնվում։

—Հապա ո՞ւր է։

—Այնտեղ, ուր մարդիկ են ապրում, ուր արտասունք է թափում գրկվածը, ուր ծիծաղում է երեխան, ուր տնքում է հիւանդը։ Եթէ լսես ինձ, պատմութիւններ գիտեմ ես, որոնք կարող են քո սալերը ճաքեցնել։ Եւ նրանց ոչ ոք չէ հնարել։ Մի խեղճ պառաւ կայ մեր գիւղում. նա գնում է, ման է գալիս, մտնում է ամեն տեղ և գալիս է, պատմում ինձ իր տեսածը։ Ա՜հ, Ջալալ, դժբախտ է մեր երկիրը. լցրու մեր բոլոր ձորերը արտասունքով և նրանք մի օր չեն դիմանայ այքան թշուառութեանը։ Տա՛ր ինձ այնտեղ, այդ դու կարող ես։

Երիտասարդի դէմքի վրա երևաց զարմանք, խառն մի թեթև հեգնութեան հետ։

—Ի՞նչ պիտի անես այնտեղ։

—Ե՞ս... Ես կը լինեմ հարիւրաւորներից, հազարաւորներից մէկը, կապրեմ ապրողների հետ, կը տանջվեմ տանջվողների հետ։ Դու այս կողմից բոլորովին ապահով եղիր. ո՛չ զանգատ կը լսես իմ բերանից, ո՛չ արտասունք կը տեսնես իմ աչքերում։ Այո՛ այնտեղ ինչ որ լաւ է, ինչ որ խեղճերի, թշուառների ցաւերին դարման կը դառնայ։ Դու գիտես ինչ պիտի անես։ Ես—քեզ հետ. ես—քո թևը։ Առանց քեզ ես ոչինչ եմ, բայց քեզ հետ—մեր սէրը ինչե՛ր չի անի...

Երիտասարդը միանգամից խօսք չը գտաւ պատասխանելու։ Քիչ միջոց մտածեց և ապա խօսեց, անպատասխան թողնելով Գայիանէի ասածների այն մասը, որ իրան էր վերաբերում։

—Տարօրինակ ցանկութիւն, ասաց նա.—ես չեմ տեսել որ մէկը թողնէ հանգիստ ու ապահով անկիւնը և ինքնակամ գնայ վտանգների մէջ։

—Ես աւելին կասեմ. վտանգների տեղից ամենքն են ուզում փախչել, բայց ո՛ւմ է աջողվում այդ։ Միայն նրանց, որոնք առանց այդ էլ ունեն ապաստան, թագնվելու տեղ։ Մի երեկոյ մեր գիւղում աղմուկ ընկաւ.

տարան Տէր-Մարութին և փախցրին նրա աղջկան։ Կոյս Հեղինէն այդ ժամանակ մտածեց և նրան այնպէս թւաց թէ վանքի պատերի մի քանի քարերը խախտված են երևում. վերցրեց իր երկու կոյսերին, բերեց մեր տուն, փակեց այստեղ մի մութ սենեակում։ Բայց ամիսներ առաջ մի աղջիկ, անհայր և անմայր մի խեղճ, տանջված, անպաշտպան, վազել էր դէպի վանքը, որ այնտեղ հանգստացնէ իր պատառված սիրտը։ Եւ ի՞նչ... նոյն կոյս Հեղինէն դուրս շպրտեց նրան։ Ինչո՞ւ է այսպէս։ Ինչո՞ւ վանքի կոյսերը Տէր-Մարութի աղջկանից լաւ են։ Տեսե՞լ ես երբ և ի՛ցէ որ արեգակը կամ լուսինը ուրիշ գոյնի շողերով լուսաւորէ նրանց, որոնք լաւ են համարվում. տեսե՞լ ես որ աղբիւրը խեղճի համար ուրիշ տեսակ ջուր բերէ, իսկ բախտաւորի համար ուրիշ տեսակ... Ա՜հ, դու չը գիտես թէ ինչե՛ր են լսում իմ ականջները այս վերջին ժամանակները։ Թո՛ղ, ասում են, աշխարհը քանդվի, միայն թէ Գայիանէին ոչ ոք ձեռք չը տայ, որովհետև նա Մէլիք-Յուսէփի աղջիկն է։ Անցեալ օրերը մարդիկ եկան, խնդրում, աղաչում էին գարի կամ կորեկ տալ սովածների համար... Գիտե՞ս ինչ սովածներ են դրանք. վաղը գնա գիւղամէջ, կը տեսնես նրանց ցանկապատերի տակ, մե՛րկ դիակներ և ոչ թէ մարդիկ... Եւ չը տւին՝ դարձեալ իմ պատճառով. թիւրքերը կարող են իմանալ, վրէժ կը հանեն մեզանից, կը վնասեն ինձ։ Բայց եթէ տեսնես ինչպէս ամեն ամիս մեր հօրերից ցորեն ու գարի են տալիս թիւրք գինւորների համար, որոնք այս օրին են հասցրել մեզ... Միշտ առատ են նրանց համար, միշտ մի քանի չափ էլ աւել են տալիս... Օ՜, ազատի՛ր ինձ այս անարդարութիւնից...

Նրա ձայնը ընդհատվեց, աչքերի մէջ պսպղաց արտասունք։ Ջալալը դարձեալ յարձակվեց, ուզում էր բռնել նրան, պահել, սիրտ տալ։ Ու մի թևով գրկելով նրա իրանը, նայեց նրա աչքերի մէջ սաստիկ յուզված և ասաց.

—Բայց ես ի՞նչ անեմ, Գայիանէ, ասա, մի տանջիր.

թո՛ղ հաւատամ որ քանի ես կենդանի եմ, քո աչքերի մէջ արտասուք չի երևայ... Ամենից արդար ու հեշտ միջոցն այն է, որ ես վերցնեմ քեզ ու տանեմ։ Բայց չես ուզում...

—Իսկ այս երկիրը......

Ջալալը հեգնօրէն ծիծաղեց, հասկացնելով որ ինքը բոլորովին չէ հասկանում, թէ այդ ինչ առարկութիւն է։

—Թողնել արիւն-արտասուքը ու գնալ... Լսել ես. ասում են այստեղ լոյս է ընկել մի այլ գազան, որ գողանում է մեր աղջիկներին ու հարսներին և տանում է հեռու, հեռու... Ստամբուլ, ուր և ծախում է... Ո՛չ, քարերը, թփերը, ձորերը կը կանչեն իմ ետևից, կանիծեն ինձ, եթէ ես գնամ...

—Երևում է որ դու շատ ես անփորձ, Գա՛յիանէ, պատասխանեց Ջալալը մի փոքր սառն, թեթև խրատական եղանակով։—Դու կարծում ես թէ գրքի բաներն էլ այնպէս լաւ գիտես, ինչպէս գրելը, շնորհալի ասել-խօսելը, ասղնագործելը... Դու չը գիտես շատ բան։ Ո՛չ դու, ո՛չ մի ուրիշը, ո՛չ ես՝ չենք կարող մի բան անել։ Երեխայութիւն կը լինի կարծել թէ մի կամ երկու, հինգ կամ տասը մարդ կարող են վերացնել այս ցաւերը։ Ուժը այնտեղ է, նրանց կողմը. եթէ այստեղ, մեր կողմը լինէր, մենք այսպէս չէինք լինի, իսկ նրանք այնպէս։ Ուժի դէմ ուժ է հարկաւոր և ոչ թէ խօսք։ Գանձակի և Ղարաբաղի կողմերում քառասուն հազար թիւրք զինուոր կայ, ինչ ուզում ես ասա... Քառասուն հազար...

Գայիանէի հայեացքի մէջ Ջալալը ահ նկատեց և նորից կրկնեց.

—Քառասուն հազար...

ԺԸ

Աղջիկը յուսահատութեամբ կախ արեց իր գլուխը։ Թիւը ճնշող էր, սոսկալի։ Եւ երբ նա նորից նայեց, տե-

սաւ որ Ջալալի դէմքը փայլում է գոհունակութիւնից։ Այդ հանգամանքը աւելի ևս թուլացրեց նրան։

—Բայց դո՛ւ ինչ ես ասում, հարցրեց նա։—Ես, այո՛, անփորձ եմ, խոստովանում եմ քո առաջ, ես երեխայ եմ. ինձ տանն էլ երեխայ են անուանում, բայց այնտեղ ես այդ անունը ինձ վրա չեմ վերցնի. այնտեղ ամենքը վախկոտներ են. իսկ դու... քեզ մօտ, այո՛, մեղք չէ երեխայ լինելը։ Ասա՛, ինչ կը լինի։

Ջալալը աւելի ևս սիրտ առած՝ պատասխանեց.

—Նախ մեր գործը չէ իմանալ թէ ինչ կը լինի և ինչ պէտք է անել։ Երբ մի տան մէջ լինում են մեծեր, փոքրերը չը պիտի կարծեն թէ իրանք մեծերից լաւ են հասկանում այն, ինչ պէտք է անել։ Այսպէս և մենք։ Ղարաբաղում մելիքներ կան, որոնք ամեն ինչ տեսնում են, հասկանում և եթէ մեզանից խորհուրդ չեն հարցնում, այդ չէ նշանակում թէ չը գիտեն իրանց գործը։ Երկրորդ՝ եթէ հարցնեն ինձանից, ես կասեմ որ ուրիշ ճար չը կայ, թո՛ղ ով ինչպէս ուզում է՝ պահէ իր գլուխը...

—Ա՜հ, մի՛ ասիր այդ խօսքերը, բացականչեց Գայիանէն մի յուսահատ ձայնով.—դրանք քո խօսքերը չեն, քեզ չեն սազում, դրանք Մէհրինների, կոյս Հեղինէների խօսքերն են...

—Խելօք խօսքը կարող է ասել ամեն մէկը։

—Բայց նրանք վախկոտներ են...

—Վախկո՛տ, արտասանեց Ջալալը մի կծու հեգնութեամբ և ծիծաղեց։—Եթէ մէկը չէ ուզում մերկ ձեռքերով յարձակվել առիւծի կամ վագրի վրա, նա վախկոտ չէ, այլ խելօք մարդ...

Դարձեալ կապվեց Գայիանէի լեզուն, դարձեալ անողորմ ճշմարտութիւնը խլեց նրա զէնքերը և մի ծանր ու խոր լռութիւն տարածեց նրա վրա։

Նա, ուրեմն, համաձայն էր, անձնատուր էր լինում։ Եւ Ջալալը, որ սկզբից այդ մասին որ և է կասկած

չունէր, մի հանգիստ, հեղինակաւոր եղանակով շարունակեց իր խրատները։

Նա նորից և նորից կրկնեց թէ Գայիանէն չէ հասկանում շատ բան։ Քաղցր խօսքերով, վկայ կանչելով իրանց սէրը, հաւատացրեց որ եթէ հնարաւոր էլ լինի երկիրը ազատել այդքան աղէտներից, դա մի հսկայական գործ կը լինի, որը չէ կարող կատարել մի աղջիկ, որքան և սրտոտ, նոյն իսկ անվախ լինի նա։

—Մի անկարգ, վայրիվերոյ բան չէ մեր աշխարհը, ասաց նա։—Այստեղ ամեն մէկն ունի իր տեղը, իր չափը։ Ծիծաղ է յարուցանում նա, ով դուրս է գալիս իր չափից, ինչպէս ծիծաղ է յարուցանում տասը տարեկան երեխան, երբ ճգնում է ապացուցանել թէ ինքը կարող է կատարել երեսուն տարեկան տղամարդի գործը։ Մի զրոյց կայ, որ պատմում է թէ ինչպէս մի կարճլիկ մարդ, կամենալով ցոյց տալ իր ահագին ույժը, ամբողջ երկու շաբաթ աշխատում էր չուանով պոկել ժայռի ահագին բեկորը, որ ցցված էր սարի ծայրին։ Ճիշդ որ նա ուժեղ էր, երկու մատով ոլորում էր պղնձի պնակը։ Բայց պոկել ժայռը նա չը կարողացաւ և մի օր չուանը կտրվեց, նա ցած ընկաւ ու հոգին փչեց։ Այսպէս է և ամեն մի կռիւ, որ մղվում է ճակատագրի դէմ։ Ի՞նչ ես կարծում, Գայիանէ. եթէ այս երկրի ճակատագիրը այսպէս չը լինէր, կարո՞ղ էին թիւրքերը այստեղ մնալ։

Այժմ նա սկսեց բացատրել իր այս վերջին միտքը։ Օրինակ բերեց Սուլէյման-բէկին։ Եթէ չը լինէր ճակատագիրը, նա այդպէս անպատիժ չէր մնայ, մի որ և է փորձանք ինքն իրան կը գար և վերջ կը դնէր նրա կեանքին. ժայռի տակով անցնելիս՝ մի քար կընկնէր նրա գըլխին, կամ օձը կը կծէր, կամ ձիուց վայր կընկնէր. չը լինի ճակատագիրը, ագռաւն անգամ կը կտցահարէ նրա աչքերը...

Նա հասկացնում էր այս ամենը մի ուշադրութեամբ, մի հոգատարութեամբ, որ միայն մեծին, ծնողին է յա-

տուկ։ Խնդրում էր չը մոռանալ, աչքի առաջ ունել բոլոր հանգամանքները, ձեռք վերցնել վտանգաւոր մտքերից, որոնել խաղաղ, հանգիստ անկիւն, որովհետև աշխարհը այսպէս եկել է, այսպէս էլ կերթայ։ Վերջը սկսեց նոյն իսկ աղաչել...

Մռայլ ու անընակ սենեակում այդ ձայնը հնչում էր մեղմ կերպով, ճգնում էր համոզել, դառնալ անսխալական, անհերքելի։ Գայիանէն լսում էր, թող տուեց որ նա ասէ ամեն ինչ, բաց անէ իր ամբողջ հոգին։

Այդ խրատներից, այդ աղաչանքներից գերեզմանային մի ցրտութիւն գոյացաւ, որ մտաւ աղջկայ սիրտը, քամեց նրան ամեն կողմից և մի խղճալի, անհրապոյր տպաւորութիւն տարածեց այնտեղ, մի քայքայիչ անյուսութիւն։ Տարիների յամառ աշխատութեամբ կառուցած ահագին շինութիւնը հեշտութեամբ քանդվում է մի քանի օրում. բայց ոչ մի գործիք խօսքի նման աւերիչ չէ։

Զալալը չէր ենթադրում թէ իր խօսքը այստեղ կարող է քանդող լինել։ Նա շատ էր հաւատացած, շատ ապացոյցներ ունէր որ ամուր է, անխորտակելի է իր նուաճած տեղը այդ սրտում, քնքուշ արարածի սրտում։ Եւ նա ոչ մի կասկած չը տարաւ, երբ Գայիանէն յանկարծ ընդհատեց այդ խրատներն ու ասաց մի շատ համարձակ ձևով.

—Դու շատ հեռու գնացիր... Այդքան հեռու չէին գնացել մեր տան խրատողներն անգամ։ Ո՞վ ասաց քեզ թէ ես մեծագործութիւնների ետևից եմ ընկել. ո՞վ ասաց թէ ես չուանով ահագին ժայռ եմ ուզում պոկել... ազատել երկիրը, ջնջել նրա ճակատագիրը... Ո՞վ ասաց այս բաները։ Ես էի որ հէնց սկզբից ասացի թէ ոչինչ եմ առանց քեզ, թոյլ եմ և առանց քո օգնութեան չեմ կարող գնալ դրսի սև աշխարհը։ Ես էի որ ընդունեցի թէ, այո, մի երեխայ եմ քո առաջ... Մինթէ չը հասկացար. ես շատ պարզ ասացի որ մեծ գործերը քեզ եմ թողնում։ Օ՜, ես հաւատում էի որ դու ընդունակ ես

ամէն մեծ գործ կատարելու։ Իմ աչքին դու երեւում էիր մի հսկայ, որի մեծութեան չէ կարելի հասնել։ Բայց այստեղ, երբ հիացած լսում էի քեզ, մի քանի խօսքեր դուրս եկան քո բերանից. դու ասում էիր որ այս թշուառութեան դէմ ոչ ես, ոչ ուրիշը և ոչ դու—ինչքան դու ամենից յետոյ—չէ կարող մարտնչել։

Նա մի վայրկեան կանգ առաւ, սպասում էր պատասխանի, բայց երիտասարդը չը կարողացաւ պատասխան հասցնել այդ կարճ միջոցում։ Եւ Գայիանէն աւելի մեծ համարձակութեամբ շարունակեց.

—Թող այդպէս լինի, այլ ես չը խօսենք մեծագործութիւնների մասին, քանի որ նրանք մեզ համար չեն։ Ամէն օր տեսնում եմ դժբախտների, որոնք իմ սիրտը կտոր-կտոր են անում, հալածում են ինձ իրանց զարհուրելի տեսքով, իմ երեսին են խփում իմ յանցանքը, որ ամենածանր յանցանք է այժմեան ժամանակ. դա այն է, որ ես բախտաւոր եմ, միակ բախտաւորը մի ամբողջ երկրի մէջ։ Մի՞թէ դրանից ծանր վիշտ կարող է լինել։ Եւ ես ուզում եմ գնալ, ապրել դրսում, այն թշուառների մէջ։ Սա մի վառ ցանկութիւն է, իմ ուխտն է։ Ո՞վ սովորեցրեց։ Այն՝ որ երկնքի տակ արդարութիւն պիտի լինի. այն՝ որ հաւասարութիւնը հարկաւոր է մանաւանդ թշուառութեան մէջ։ Դրութիւնն այնպէս է, որ ով չէ տանջւում, նա, ուրեմն, տանջողներից է։ Ահա թէ ինչու իմ ցանկութիւնը այնքան բուռն է։ Դու տարօրինակ անուանեցիր այդ ցանկութիւնը։ Բայց մի՞թէ չը կան ուրիշ տարօրինակ ցանկութիւններ. մէկը ուզում է խեղդվել ջրի մէջ, միւսը սարի բարձրութիւնից ընկել է երազում։ Ասա ինձ. դու ինձ հե՞տ ես այս տարօրինակ ցանկութեան մէջ, միասին, ձեռք ձեռքի տուած...

—Ես իսկոյն կասեմ...

—Սպասիր. ես զգում եմ թէ ինչ պիտի ասես. բայց նախ քան դու կը պատասխանես, լսի՛ր թէ ինչ եմ աւելացնում իմ ասածների վրա։

—Տեսար թէ որքան համեստ, փոքրիկ բան է իմ ցանկացածը,—ասաց նա մի խոր և երկար հոգոց հանելով։—Բայց ես աղջիկ եմ... ինձ համար ամուր բանտ է մեր այս տունը։ Ինձանից ծածկում են ամէն ինչ, ինձ խաբում են... Եթէ տեսնէիր թէ ինչ ստեր են հնարում խաբելու համար։ Քանի՜ աչքեր են հսկում որ իմ գոյնը չը թռչի, որ տխրութիւնը չը մօտէ ինձ. նոյն իսկ արտասվելու իրաւունք չեն տալիս, որովհետև մարդ չեն համարում ինձ, գոնէ մի այնպիսի մարդ, ինչպէս է մեր Յովսէփը։ Դու ես իմ յոյսը. դու կը փշրես իմ շղթաները. և այդ հեշտ է քեզ համար, բաւական է որ կամենաս։ Գուցէ այդ բարերարութիւնը դու դժբախտութիւն ես համարում քեզ համար, բայց չե՞ս ուզի որ քո փոխարէն ես լինեմ բախտաւոր։ Իմ սիրտը յաւիտեան պարտական կը լինի քեզ, որովհետև երբէք, երբէք չի մոռանայ քո տուած զոհը... Եւ ես, հաւատացի՛ր, ոչ մի ժամանակ չեմ կարող երախտահատոյց լինել քեզ։ Այժմ ասա, խղճում ես ինձ, կարո՞ղ ես անել՝ եթէ ոչ քեզ համար, գոնէ ինձ համար։

Պատասխանը պատրաստ էր. նա արտասանեց իսկոյն, մի վճռական, նոյն իսկ խիստ եղանակով.

—Ո՛չ... Ես չեմ անի և թոյլ չեմ տայ որ դու էլ անես...

Լեռնցին կոշտ և գիւղաբարբառ է ամէն տեղ, ուր նրա այրական ինքնասիրութիւնը հանդիպում է յամառութեան, ուր նրան թւում է թէ կարող է անհասկացող երևալ։ Այդ յատկութիւնը աւելի է մանաւանդ այն դէպքում, երբ նրա առաջ կանգնած է թոյլ էակը, որին նա սիրում է։

—Դու նեղացար, դու այժմ երեսս ես դարձնում ինձանից,—շարունակեց նա։—Դու խօսում ես զոհվելու մասին։ Թող քո մտքերը, լսի՛ր ինձ. արի գնանք այնտեղ, ուր ես եմ ուզում, և դու կը տեսնես թէ ինչպէս ես գիտեմ զոհվել քեզ համար։ Թող մէկը համարձակվի մօ-

տենալ քեզ, նոյն իսկ վատ միտք անել քո մասին... այն ժամանակ կը տեսնես ինձ։ Բայց ինչ... Դու չես ուզում երջանիկ կեանքը, այլ քաշում ես ինձ դէպի սովի և մերկութեան աշխարհը։ Գիտե՞ս որ ամբողջ հինգ ամիս է, մեր տանը հարսանիք է պատրաստվում։ Չես տեսել և չես կարող հասկանալ թէ իմ մայրը ինչպիսի ուշադրութեամբ, ինչպիսի սիրով շինում-սարքում է այն ամենը, ինչ հարկաւոր է իր հարսին։ Հայրս նրանից պակաս չէ։ Նրանք երկուսով օրեր են համրում, սպասում են, կարօտ են իմ բախտին։ Ինձ տուն ու տեղ է հարկաւոր. ես նոր պիտի հասկանամ համ ու հոտ։ Ես մէլիքի որդի եմ, ինձ են նայում հազարաւոր մարդիկ, նախանձում են, երանի են տալիս։ Իսկ դու ասում ես թէ լաւը դա չէ, լաւը կամաւոր աղքատութիւնն է։ Ծիծաղելի՜ բան... Եւ առհասարակ ինձ թւում է թէ քեզ կախարդել է մի չար վհուկ։ Կուզէի իմանալ՝ ո՞վ է տարել խելքդ։ Եւ տարել է այնպէս, որ դու մինչև անգամ բանտարկութիւն ես համարում այն, որ քեզ պահում-պահպանում են, չեն ուզում որ քո մազը ծռվի, որ քո սիրտը կուչ գայ երկիւղից։ Վկայ է Աստուած, այդքան խակ ջահիլութիւն ես չեմ տեսել։ Մի՞թէ ես էլ չը պիտի նոյնն անեմ, ինչ որ անում է քո մայրը... Իմ միակ բախտը, իմ միակ երջանկութիւնը կը լինի տեսնել քեզ միշտ ուրախ, միշտ թրթռուն, միշտ ծիծաղկոտ... Դրա համար ես կեանքս էլ չեմ խնայի...

Տագնապը նոր չէր սկսվել։ Ծանր, շատ ծանր էին երիտասարդի խօսքերը. նրանք մի ինչ-որ անախորժ, շշմեցնող աղմուկ յարուցին Գայիանէի ականջների մէջ և սառուց կոտրած քարերի նման մի-մի ընկան նրա սիրտը, հարուածելով, ցաւեր պատճառելով։

Այլ ևս ոչ մի հաշիւ չը տալով ինքն իրան, այդ սիրտը զգաց մի անդրդուելի ինքնամոռացութեամբ պաշտպանվելու, դիմադրելու բուռն ցանկութիւն. այդքան թուլկոտ էր քայքայման գործողութիւնը։ Ո՞ւր կորաւ նախկին ղամճառականութիւնը, ո՞ւր մոռացվեց ամօթխածութիւնը։

Դրանց փոխարէն դուրս էր վազում դառն հեգնութիւնը, իբրև մի կծու ծուխ, որ բարձրանում էր փլատակների տակից։

Որքան և անհանդուրժելի էր ցաւը, բայց նա առաց մի վերին աստիճանի սառն, թէև այրող մեղմութեամբ, որ միայն կնոջն է տուած.

— Շնորհակալ եմ... Գոնէ անկեղծ էիր դու, ոչինչ չը ծածկեցիր, խարուսիկ ծամածռութիւններով, դատարկ խոստումներով չը մոլորեցրիր։ Հասկանալի է այժմ այն, ինչ որ դու անուանում ես երջանկութիւն և պատրաստել ես ինձ համար։ Լաւ ուտել, խմել, լաւ հագնվել. երբէք ախ չը քաշել, երբէք յօնքեր չը կիտել... Այս բոլորը երջանկութիւն է։ Իսկ եթէ լինի մէկը և ասէ քեզ թէ երջանկութեան գործերից չէ կարելի վանդել սիրտը, որ նոյնպէս կերակուր է պահանջում, նոյնպէս սիրում է զարդարվել, դու, ի հարկէ, կասես թէ սրտի ուզածն էլ ուրիշ բան չէ, եթէ ոչ առատութիւն, հարստութիւն և անհոգութիւն... Այսպէս է։

— Ի հարկէ...

— Օ՜... ի հարկէ...

Դա մի ցաւագար, մի սուր հեծեծանք էր, որ դուրս թռաւ նրա բերանից և այնքան ուժեղ ու ցնցող էր, որ նա երերաց ամբողջ մարմնով։

— Ո՛չ մի վիճում, ոչ մի բացատրութիւն, ասաց նա։ — Դու անողոք ես, — իմ աղաչանքը զուր էր... Բայց էլ ինչ անեմ։ Եթէ սկսեմ գանգատվել. եթէ ասեմ որ իմ վիշտը դառն է, դու չես զղջայ, դու կը պատասխանես՝ ճակատագիր է, ինչ արած։ Ճակատագրով դու շատ գեղեցիկ ես բացատրում ամեն ինչ... Երեխան լաց է լինում — ճակատագիր է, որբանում է — ճակատագիր է, կըտոր-կտոր է անվում կամ թէ գցվում է կրակի մէջ — ճակատագիր է... Աշխարհի բոլոր անքննելի բաները հասկացել ես — ճակատագիր է. չը կայ մեղաւոր և արդար մարդ, կայ ճակատագիր։ Սիւլէյման-բէկն ինչ անի, մե-

դաւորը ճակատագիրն է... Քո ճակատագիրը, խոստովանիր, շատ է բարեհաճ, կակուղ և խելօք։ Նա էր, երևի, որ այսօր առաւօտեան ասաց քեզ. «Հեռացիր Աւետարանոցից»։ Եթէ չասէր, դու այստեղ կը տեսնէիր սարսափելի բաներ։ Իմը այդքան ողորմած չէ. ոչինչ չէ ուզում թագցնել, ամէն վատութիւն ցոյց է տալիս ծայրէ ծայր։ Դրանից է որ ես զարհուրելի պատմութիւններ գիտեմ և խօսում եմ այնպէս, որ դու կարծում ես թէ ինձ կախարդել են վհուկները։ Ո՛չ, իմ վհուկը իմ սիրտն է... Այդ Սիւլէյման-բէկը, որից դողում է աշխարհը, մի ցածահոգի, ստոր անասուն է։ Նա այսօր սպանեց մի հիւանդ, կիսամեռ մարդու, սպանեց հրապարակով, մեր աչքի առաջ։ Նրա աչքերը տրաքվում էին հրճուանքից։ Իմ ճակատագիրը ցոյց տուեց վատութեան ամենազզուելի մասն էլ. ես տեսայ նրա աչքերը...

—Նա քեզ տեսաւ, շտապով և վրդովված ընդհատեց Ջալալը։

—Եթէ կոյր չէր, տեսաւ։

Ջալալը ձեռքը թափ տուեց յուսահատական կերպով. այժմ նրա դէմքի վրա երևում էր կատարեալ երկիւղ։

—Իսկ ո՞ւր էր քո մայրը, ինչ էր մտածում որ քեզ թոյլ տուեց։

Նա նեղացած էր, նրա ձայնը վիշտ ու գանգատ էր յայտնում։

—Դու վախենո՞ւմ ես, սառն լրջութեամբ հարցրեց Գայիանէն։

—Վախե՞լ... ինչո՞ւ վախել։ Բայց ապահովութեան համար ամենից լաւ է չերևալ գազանի աչքին։

—Բայց չէ՞ որ դու այստեղ ես...

—Շատ էլ այստեղ եմ. ինչո՞ւ երևալ, ինչ հարկաւորութիւն կար...

—Մի խուսափիր պատասխանից. դու վախում ես, դու չես կարող նրա առաջը դուրս գալ։

—Եւ զարմանալի չէ. ամբողջ երկիրը չէ կարողանում դուրս գալ, իսկ ես մի մարդ եմ։

—Քառասուն հազար զինուոր... չէ՞։

Գայիանէն ծիծաղեց, իսկ նա աչքերը ցած գցեց, կարծես ամաչեց։

—Պէտք էր դուրս գայիր որ իմանայիր թէ ինչպէս է քեզ պէս հարիւրաւոր Ջալալների դրութիւնը... Թէ՞ կարծում ես որ մենակ դու ես ջահիլ, մենակ դու ես ուզում տուն-տեղ ունենալ։

—Ի՞նչ գործ ունեմ ես նրանց հետ, յանկարծ պատասխանեց նա մի հպարտ և բարձր եղանակով։—Ես նրանց ընկերը չեմ։ Իմ հայրը մի ամբողջ երկրի տէր է, ես պատիւ ունեմ, անուան տէր եմ։ Վախելու բան ես չունեմ, բայց չեմ ուզում որ իմ անունը խօսքի առարկայ դառնայ։ Դու չը պիտի դուրս գնայիր։

—Դու չէիր, ուրեմն, այն ձայնը, որ գիշեր-ցերեկ շշնջում էր իմ ականջին մի հրաշալի պարզութեամբ. «Գնա, մի վախիր»։ Քեզանից չէր այն թեթև շունչը, որ ինձ թելադրում էր այնքան զարմանալի, այնքան ցաւեցնող ճշմարտութիւններ։ Ես, ուրեմն, մոլորված էի, կարծելով... Բայց ո՛չ, ինչո՞ւ մեղք գործել. ես չէի կարծում, այլ հաւատացած էի իմ ամբողջ սրտով թէ ամէն ինչ, որ գեղեցիկ է, արդար, անուշաբոյր—այդ դու ես... Ներիր...

Տխուր, շատ տխուր ձայնով արտասանած այդ խօսքերը ընդհատեց մի տարօրինակ ծիծաղ, որ թէ հեծեծանք էր և թէ բրբիջ և ցնցումներ տարածեց նրա մարմնի մէջ։

—Ներիր, դու չէիր... Այժմ հանգստացիր, ես... սխալված էի։ Օ՜հ ինչ դառն, ինչ անողորմ սխալ... Իրաւունքը, ի հարկէ, քոնն է և դու մեղաւոր չես, եթէ չես լսում իմ աղաչանքը։ Բայց ո՞վ էր նա, ո՞վ էր ինձ տանջողը, ինձ հիացնողը։ Ես կորոնեմ նրան և... կը գտնեմ, անպատճառ...

Եւ նա բարձրացրեց աչքերը, մի թախծալի, խոնարհ հայեացք ման ածեց դատարկ սենեակում, կարծես

այդտեղ էր որոնում իր ուզածին, որոնում էր անձկութեամբ։

Ջալալը չը հասկացաւ նրան։ Նա էլ նայեց և այնպէս կարծեց թէ նրա զղջումը այժմ կատարեալ է։ Այդ խօսքերը, այդ հոգոցները և թափառող հայեացքը նրա համար ապացոյց էին որ Գայիանէն ազատվում է վհուկների կախարդանքներից։

Ուրիշ կերպ երիտասարդը չէր հասկանում այս տարօրինակ տեսակցութեան պատճառները. նա այժմ էլ, ինչպէս և ամբողջ խօսակցութեան ժամանակ, չէր հաւատում թէ աղջիկը չէ խօսում ինչ-որ զարմանալի երազների ազդեցութեան տակ։ Նա զգաց որ խօսակցութեան վերջն է և շտապեց քաղցրացնել հրաժեշտը մեղմ, փաղաքշական եղանակով.

—Ասում էի քեզ, Գայիանէ, որ մոլորված ես. ասում էի որ քո խելքը տարել են... Հէնց այդ պատճառով էլ աւելացրի թէ ես չեմ թոյլ տալ քեզ անել այն, ինչ ուզում ես՝ չը հասկանալով։ Ես իրաւունք ունեմ արգելելու... Մի մոռանար որ դու Թաշէնի մէլիքի հարսն ես և Վարանդայի մէլիքի աղջիկը։ Այն տունը, որից դու պիտի հեռանաս, և այն տունը, ուր դու պիտի մտնես, հազարաւոր հպատակներ ունեն. դրանք քո ծառաներն են և ոչ թէ քեզ հաւասար մարդիկ, պիտի հնազանդվեն, պաշտեն քեզ, պատկառանք զգան.. Նրանց և քո տեղերը երբէք միմեանց հետ չեն խառնվի։ Ուր կայ տէր, այնտեղ կան և ծառաներ։ Եթէ չես ուզում որ տէրն ու ծառաները ջոկվեն միմեանցից, նախ քանդիր այս տունը և մեր տունը, ոչնչացրու հարիւրաւոր տարիների կարգերը... Հպատակները տանջվում են միշտ. նրանք են վարողը, քրտնողը, լացողը։ Կարգն այն է, որ մէլիքը կը նայէ նրանց, ողորմութիւն կը տայ։ Դու էլ, եթէ ուզում ես, մի քանի բեռն ալիւր տար այստեղի թշուառներին, ով կը բռնէ քո ձեռքը... Կամենում ես, փողը ես մարդ կուղարկեմ որ մեր տանից բերեն։

—Բայց ինչ որ էլ լինի, շարունակեց նա, չը ստանալով Գայիանէից ոչ մի պատասխան,—ես հասկանում եմ որ քեզ այլ ևս երկար չէ կարելի թողնել այստեղ։ Արհաւիրք, վախ, կոտորած—ամեն ինչ կայ այս երկրում։ Մեր Թաշէնը, մի վախիր, որքան էլ վատ օրում լինի, իր մէլիքի հարսի համար հանգիստ ու ապահով անկիւն կունենայ։ Ուրեմն թողնենք այդ խօսքերը, Գայիանէ. այժմ խօսենք ուրիշ բաների վրա. չէ՞ որ մենք կարող ենք միմեանց շատ ուրախացնել... Ո՛րքան հեշտ է մեզ համար մինչև լոյսը քչփչալ...

Նա ինքը ընդհատեց իր խօսքերը, յանկարծ ամաչելով այդ աղջկայ հպարտութիւնից, քարային անտարբերութիւնից։ Այժմ այդ հրաշալի աչքերից նայում էր օտարը, որ անխնայ թաղել էր, վերջացրել ամեն ինչ։

Եւ անտեղի, դատարկ ու ողորմելի էին այդ բոլոր քաղցր խօսքերը, փաղաքշանքները։ Գայիանէն այժմ անգութ հրեշտակ էր. նրա կուսական վսեմ, երկնային վրդովմունքը պարզ ցոյց տուեց, որ այժմ այդ մարդու քնքշութիւնները միայն խոցոտել, վէրքեր բանալ են կարող...

—Մենք միմեանց չենք հասկանայ... Երբէք...

Ասաց հպարտ աղջիկը և գնաց դէպի դուռը։

Ջալալը անշարժ չը մնաց։ Դեռ դռներին չը հասած, ճրագի կիսալոյսերի շրջանում, երկու ձեռք յանկարծ գրկեցին Գայիանէին և սկսեցին սեղմել... Լսվեցին մի քանի կիսատ խօսքեր, ինչ-որ այրող հնչիւններ։ Ույժ էր գործադրվում. հրատապ, ընդհատվող շունչը ձգտում էր նորից մօտենալ նրա դէմքին։ Բայց այժմ միայն մրցութիւն կարող էր լինել երկու երիտասարդ ույժերի մէջ. գիրկը աշխատում էր յետ ու յետ տանել իր սեղմած փափուկ մարմինը, բայց սա մի զարմանալի դիւրաթեքութեամբ և ճկունութեամբ դուրս էր սողում, կարծես ազատվում էր օձի պաղ և ուժեղ օղակներից։ Յաղթութիւնը աղջկան էր պատկանում, և նա մի ակնթարթում անյայտացաւ խաւարի մէջ։

Խաչէնի մելիքի որդին մենակ էր սենեակում։ Նայեց ճրագին, կարծես նրա հետ էր խօսում.

—Կատարեալ կայծ ու կրակ... Ո՜րքան հրաշալի է բարկութեան ժամանակ... կայծակներ թափող—հրեշտակ են ասում։ Ահա նա...

Երեսը դարձրեց դէպի դուռը, սպասում էր։ Անցան լուռ վայրկեաններ։ Ոչինչ ձայն չը լսվեց, իսկ աշնանային խաւար գիշերը նայում էր նրան դրսից և իր ցուրտ ու մունջ լեզուով հասկացնում էր նրան որ զուր է սպասելը, բոլորովին զուր։

—Դէհ, կրակ աղջիկ, պատրաստվիր... Ես վաղը և եթ կը սկսեմ։ Այլ ևս ոչ մի զիջողութիւն իմ կողմից... Կը տանեմ քեզ, որ այդ բոլոր կրակներդ ու կայծերդ ամփոփեմ իմ գրկի մէջ...

Նա վերցրեց ճրագը։ Նրա կապոյտ, զգայուն աչքերի մէջ հրդեհվել էր անդադար կրակը...

ԺԹ

Պատի խորքում, մի փոքրիկ, քառակուսի պահարանի մէջ, Տիրամայրը նայում էր երկնքին։ Երկու դեղին մոմեր, որոնք կպած էին պահարանի աջ ու ձախ պատերին, հեզ ու դողդոջիւն բոցերով լուսաւորում էին նրա վշտալի դէմքը։ Երկուսն էլ, փոքրիկներին յատուկ աշխոյժով, ճիգ էին թափում սրբել, ոչնչացնել փոքրիկ ստուերները, որոնք չարաճճիների նման թրթռում էին, ստուերում այդ հրաշալի հայեացքի և նրա առաջ բացված երկնային ճանապարհի վրա։

Սենեակի անկիւններում հաւաքված կիսամթութիւնը հեզհեզ խառնում էր, տալով սենեակին վանական խուցի կերպարանք։ Բայց դա խուց չէր։ Տիրամօր ճրագները դիմացի պատի ճակատին երևան էին հանել մի քանի առարկաներ, որոնք գործ չունեն վանքերի խաղաղ պատերի հետ։ Դրանք զէնքեր էին—մի մեծ սուր՝ ար-

ծաթապատ պատեանի մէջ, վառօդաման, երկու փոքրիկ խէնջար...

Պահարանի տակ, գետնի վրա, պլպլում էր երրորդ փոքրիկ ճրագը, բայց նա լայն ու արձակ ասպարէզ չունէր իր լոյսի համար։ Նա ամփոփված էր մի անձուկ տեղ, հաստ գրքի կողքին, լոյս էր տալիս դեղնած էջերին և այն խոնարհ դէմքին, որ կախվել էր նրանց վրա։

Ծնկաչոք, մէջքից ծալված մի կին, ամբողջապէս կորած սևերի մէջ, կարդում էր խորին ջերմեռանդութեամբ։ Միայն նրա սուր շրթունքներն էին շարժվում, ձայնը անընդհատ էր, միանման, ինչպէս խոր ձորի յատակում կորած աղբիւրի գլգլոցը գիշերվայ լռութեան մէջ։ Երբեմն սրտի խորքում ամբարվող վիշտը բարձրացնում էր նրա կուրծքը, և շրթունքների քրթմնջիւնը ընդհատվում էր մի սուր, լալագին հառաչանքից, որին հետևում էր հաւատացողի ջերմեռանդ բացականչութիւնը.

«Մեղայ Աստուծու»...

Այդ ժամանակ ծնկների վրա բարձրանում էր մի խորտակված, սգաւոր արարած, նայում էր Տիրամօրը և ձեռքը զարնելով կրծքին, շշնջում էր կտրված ձայնով «Մեղայ»... Եւ ապա, երբ ընթերցանութիւնն ընդունում էր իր սովորական ընթացքը, նա նորից ընկնում էր ծնկների վրա, նորից կուչ էր գալիս խաւարի մէջ և լըսում էր։

Աննա-խաթունն էր այդ խեղճ արարածը։

Աւելի հանգիստ, աւելի անխռով էր Գայիանէն, որ պառկած էր նրա մօտ, անկողնի մէջ։ Ողբ, հառաչանք և երկիւղ չէր պատճառում նրան այս վանական սարք և կարգը, այլ մի խաղաղ, հեզ անդորրութիւն։ Նուիրական պահարանը ուղիղ նրան էր նայում. և նա ինքն էլ չէր կարողանում բաժանվել սրբազան պատկերից, որ դրած էր երկու մոմերի ետևում։

Ո՜րքան սիրելի, որքան մխիթարող էր Տիրամայրը։

սրա դէմքի վրա կուտակված էին ծանր տառապանքներ. դա—ամբողջ աշխարհն էր։

Բայց դաժան, ցաւոտ աշխարհի մէջ այն ինչ հրաշալի ճառագայթ էր, որ հոսում էր Տիրամօր աչքերից։ Մի մօր աչքեր են դրանք, որոնք նոր են տեսել անմեղ զոհի արիւնը, տեսել են թէ ինչպիսի զարհուրելի ոճիր գործեցին մարդիկ, սպանելով այդ զոհի հետ բոլոր խեղճերի, բոլոր հալածվածների դատը։

Նկարչի վրձինին գեղեցիկ կերպով աջողվել էր կըտաւի վրա անցկացնել այդ աղէտալի րոպէն։ Նա չէր գծագրել ամբողջ պատմութիւնը, չէր դուրս բերել բոլոր գործող անձինքներին։ Ո՛չ, ճրագների ետևից նայողը միայն այդ դէմքն էր, որ և ամբողջ պատմութիւնն էր։

Մայրը Գողգոթայի վրա է, կանգնած է բարձր խաչի պատուանդանի մօտ։ Վերևում—բևեռված որդին է։ Չորս կողմում վխտում են մարդիկ, որոնք դեռ չեն կշտացել չարագործութիւնից, դեռ հաճութեամբ կեղեքում են նահատակին։ Օ՜, այդ մայրը պատրաստ է մի վայրկեան լռեցնել իր սրտի մորմոքները, կանգնել բազմութեան առաջ, խօսել, ազդու ձայնով բողոքել։ Բայց անզօր և համեստ մի կին, նա ընկճված է, կորագլուխ։ Այնտեղ է ոյժը, չարագործների մօտ. նրանցն է իշխանութիւնը...

Եւ նրա սիրտը պատրաստ է պատռվել տագնապից, բայց յանկարծ լսում է վերևից հեզ ձայնը. «Ո՛վ կին, ահա քո որդին»։ Եւ ապա, դարձնելով աչքերը իր սիրած աշակերտի վրա, նահատակն աւելացնում է. «Ահա քո մայրը»։

Ո՛չ վրդովմունք, ո՛չ դառնութիւն, ո՛չ գանգատ այդ ձայնի մէջ։ Հրաշքը տեղի է ունենում և այդ կնոջ, այդ մօր սրտում. նա հասկանում է թէ ինչն է արդարութեան զոհի ոյժը, գիտէ որ իւրաքանչիւր սուրբ գործ թաթախված պիտի լինի աշխարհի արտասունքների և արեան մէջ։ Մայրը—առաջինն էր, որ դաւանեց այդ ճշմարտութիւնը և այդ րոպէից տանում է իր հետ իր վըշ-

տերը։ Այն րոպէից է երկնային ճառագայթը Տիրամօր աչքերում, այն րոպէից է նա նայում այդպէս, դէպի բարձր, դէպի երկինք, նայում է, չէ կշտանում, յափշտակված է, կարծես այժմ էլ լսում է հրաշագործ ձայնը և պատասխանում է նրան. «Այո՛, ո՛րդի, ես լաց չեմ լինի, որովհետև դու զոհ ես»։

Եւ նրան՝ առանց սուգի, առանց երկիւղի, բայց ջերմ սիրով, նայում է Գայիանէն, և որքան շատ է նայում, չէ կշտանում։

Նա հիւանդ չէր, բայց նրան պառկեցրել էին անկողնում։ Դրանով էին առայժմ վերջացել նրա վրա գործադրած մի շարք բռնութիւնները։

Առաջինը սկսվել էր այն գիշերից յետոյ, երբ նա և Զալալը տեսնվեցան միմեանց հետ, բաց արին իրանց սրտերը։ Դեռ նոր էր լուսացել այդ գիշերը, դեռ վաղ առաւօտ էր, բայց Աննա-խաթունը արդէն գիտէր ամեն ինչ։ Նա թռաւ իր աղջկայ մօտ, յարձակվեց նրա վրա, գործի դնելով իր բոլոր զէնքերը—յանդիմանութիւն, անէծք, արտասունք, նոյն իսկ հայհոյանքներ և մինչև իսկ բռունցքներ...

Յանդուգն աղջկայ բոլոր արարքները կարելի էր տանել, բայց այն, որ նա դուրս էր եկել, երևացել բէկի աչքին, կատաղութեան վերջին աստիճանին էր հասցնում խստապահանջ մօրը։ Մէհրիին նա աչքից գցեց, ուղղակի հրամայեց կորչել։ Բայց այդքան հեշտ չէր վերջացնել գործը Գայիանէի հետ։ Մի քանի անգամ սպառնաց փակել նրան մութ սենեակի մէջ, օրերով զրկել հացից։ Մի քանի անգամ էլ նրա լեզուն կապվեց, խիստ խօսք չըգտաւ արտասանելու, և նա մնաց կանգնած. դողում էր, ուզում էր իր աչքերը պայթեցնել, շպրտել նրա դէմքին...

Գայիանէն դիմանում էր այդ բոլորին, նոյն իսկ դիմադրում էր, մի-մի էլ պատասխանում էր։ Բայց յանկարծ մէջ նետվեց մի անակնկալ, սարսափելի հանգա-

մանք. մայրը յայտնեց որ բոլոր տեղեկութիւնները իրան հաղորդել էր… Ջալալը։

Նա պատմել էր ամեն ինչ, որ տեղի էր ունեցել գիշերային տեսակցութեան ժամանակ. չէր թաքցրել ոչ մի մանրամասնութիւն, ոչ մի խօսք։ Առանց այդ էլ Գայիանէն փշրվածի էր նման, յոգնած էր, յուսահատ, այդ պատկառով կանգնած էր անկիւնում, յենվել էր պատին և այդպէս պաշտպանվում էր։

Ջալալի արարքը կապեց նրա լեզուն, թոյլ չը տուեց մի խօսք անգամ արտասանել։ Նա թուլացաւ, ընկաւ ծնկների վրա, ձեռքերով ծածկեց իր դէմքը, որի վրա իջել էր մեռելային գունատութիւն։ Մի ինչ-որ տաք բան, եռացող հեղուկի նման, նախ ցած վազեց նրա մէջքով, ապա խեղդեց կոկորդը, խփեց գլխին ու պտոյտներ գործեց այնտեղ… Նա վայր ընկաւ։

Ջղային դողը սաստիկ ցնցում էր նրան…

Առաջին վայրկեաններում չը դադարեց մօր անէծքների տարափը։ Աննա-խաթունը մինչև անգամ գոհ էր որ իր խօսքը այդպէս սաստիկ ազդեց։ Բայց յանկարծ կատաղութեան մէջ գլուխ բարձրացրեց մօր զգացմունքը. նա մոռացրեց ամեն ինչ, հասկացրեց որ այդ դիակը Գայիանէն է։ Եւ մի ակնթարթում հայհոյանքները տեղի տուին փաղաքշանքներին։ Աննա-խաթունը գրկեց նրան, բարձրացրեց, իր դէմքը քսեց նրա դէմքին։

Բայց ոչ գգուանքները, ոչ յուսահատ աղաղակները ազդեցութիւն չարին. աղջիկը դողում էր, արտասանում էր անկապ խօսքեր։ Հարկաւոր եղաւ մարդ կանչել։

Սովորական ժամին եկաւ և կոյս Հեղինէն։ Նա գլուխը դողացնելով լսեց ամեն ինչ, զայրացաւ, անիծեց աշխարհը, անիծեց մարդկանց։ Այդ յուզված դրութեան մէջ նա չը նկատեց, որ Գայիանէի վրա գործադրվում են մի շարք բժշկական միջոցներ. ջուր էին սրսկում դէմքին, շփում, ձգձգում էին մարմինը, բզաւում էին ականջների մէջ, ուզում էին զոռով բաց անել բե-

րանը։ Նա դադարեցրեց այդ բոլոր գործողութիւնները, հրամայեց ամենքին հեռանալ և պահեց միայն Աննա-խաթունին։ Ապա երկու հոգով փռեցին անկողինը և Գայիանէին պառկեցրին նրա մէջ։

Դա բարերար միջոց էր. հիւանդին միայն հանգըստութիւն էր հարկաւոր և րոպէ չանցած՝ նա ընկաւ խոր քնի մէջ։ Հեղինէն չոքեց նրա գլխի մօտ, ձեռքը դրեց ճակատին և սկսեց հանդարտ կերպով ինչ-որ աղօթք մրմնջալ։

Այդ րոպէից նա ձեռք առաւ բոլոր կարգադրութիւնները այդ տան մէջ։ Աննա-խաթունը ինքը տուեց կատարեալ իրաւունք. նա լուռ էր, գլուխը կորցրած, կուչ եկաւ իր աղջկայ կողքին և սկսեց ինքն իրան տանջել, կեղեքել…

Նոյն օրը երեկոյեան Գայիանէն բաց արաւ աչքերը, մինչև անգամ խօսեց։ Իսկ Հեղինէն կատարեց մի գործ, որ ահով լցրեց ամբողջ տունը և ցոյց տուեց թէ որքան ծանր են բարդված հանգամանքները, մի և նոյն ժամանակ թէ որքան մեծ է կուսանոցի սէրը դէպի մէլիքի ընտանիքը։ Հեղինէն բերեց Տիրամօր պատկերը, դրեց պատի մէջ շինած պահարանում, նախապէս ծածկելով այդ տեղը մետաքսէ թաշկինակներով։

Դա կուսանոցի ամենանշանաւոր սրբութիւնն էր։ Քսան և հինգ տարի այդ օրից առաջ Իսրայէլ Օրիի թղթաբերը Գանձասարի վանքում հայ մէլիքներին յանձնեց ազատութիւն աւետող մի թուղթ և նրա հետ այս պատկերը, որ Օրին նուիրել էր Բաւարիայի իշխաններից մէկը։ Թուղթը ուրախացրեց, իսկ պատկերը հիացմունք պատճառեց։

Տիրամայրը գեղեցիկ Գանձասարին էր սազում. բայց Մէլիք-Յուսէֆը խնդրեց ընծայել Վարանդայի կուսանոցին, և ոչ ոք չընդդիմացաւ նրան։ Քսան և հինգ տարի Տիրամայրը աշխարհից հրաժարված կոյսերի պաշտամունքի առարկան էր, արդէն նա յայտարարվել էր հրաշա-

գործ և այդ պատճառով էլ բազմաթիւ ուխտաւորներ ունէր գիւղի մէջ։

Այժմ նա, բոլոր վշտացածների մայրը, պիտի ողորմութիւն անէր մէլիքի աղջկան։ Հեղինէն չոքեց նրա առաջ. կարդաց Աւետարանի բժշկութեան գլուխները, ապա անցաւ Նարեկի ամենազօրաւոր տեղերին։ Նա որոշել էր երեք օր պահել Տիրամօր պատկերը հիւանդի մօտ։

Երկրորդ օրը Գայիանէն, հակառակ իր կամքին, մընաց ակողնում։ Աննա-խաթունը նրա մօտ էր, արտասունք և աղաչանք չէր խնայում իր աղջկայ «քարացած սիրտը» կակղացնելու համար։ Իզուր նա աշխատում էր Ջալալի անունը հաշտեցնել աղջկայ ականջների հետ։ Մի անգամ նա անզգուշութիւն ունեցաւ յայտնելու, որ երիտասարդը շատ է տանջվում, շատ է խնդրում որ իրան թոյլ տան տեսնել Գայիանէին, իմանալ նրա դրութիւնը։ Աղջկայ հանգիստ դէմքի վրա երևաց մի հիւանդոտ, տանջող ծամածռութիւն, որ սարսափ և յուսահատութիւն էր ցոյց տալիս, և մօրը այնպէս թւաց թէ նորից սկսվում է երէկվայ ուշաթափութիւնը։ Նա հարկադրված էր հանգստացնել նրան, հաւատացնելով որ Ջալալի ցանկութիւնը չի կատարվի. բայց ո՜րքան արտասունք ծլացին դրա փոխարէն նրա աչքերից . . .

Այցքանը քիչ էր. գիւղից եկան նոր ցաւեր։ Բէկը խօսել էր մէլիքի տան մասին, յանկարծ սկսել էր դժգոհութիւն յայտնել, որ այդ տունը շատ հպարտ, փակված է մնում. չէ ճանաչում երկրի կառավարչին և մեծարել չը գիտէ։

Լուրը բերել էր Շահնազարը. նա պատմեց հաճութեամբ, ուրախ էր, ասում էր թէ շուտով ինքը, բէկը, կը գայ իրանց տունը։ Աննա-խաթունը միայն այդ ժամանակ հասկացաւ, որ մէլիքի տունը փակված չէր, առանձնացած չէր, այլ մօտիկ յարաբերութիւններ ունէր նրանց հետ, որոնցից այնքան փախենում էր... Այդ տղան... միշտ

գնում էր զինուորների մօտ, բայց հասկանում էր որ ոչինչ չը պէտք է խօսել . . .

Եւ նա յանկարծ խելագարի նման յարձակվեց, բռնեց Շահնազարին. բայց կատաղութիւն չը կար նրա մէջ. նա չը խփեց, վատ խօսք չասաց... Սկսեց արտասունքներից դողացող ձայնով աղաչել նրան, որ ոչինչ չասէ տան մասին, չասէ թէ ով կայ այստեղ և ինչ են անում... Նա չը համարձակվեց հարցնել թէ արդեօք մինչև այդ օրը Շահնազարը որ և իցէ բան ասե՞լ է թէ ոչ... Այդ հարցի պատասխանին նա չէր դիմանայ, աւելի խնդրում էր, սաստում էր միայն ապագայի մասին։ Թշուառ կին։ Նա դեռ յոյս ունէր, դեռ խաբում էր իրան...

Երեկոյեան Հեղինէն չը կարողացաւ պահել իր զարմանքը, երբ տեսաւ մէլիքի կնոջը. նա էլ հիւանդ էր, երկու օրվայ մէջ բոլորովին հալվել էր։ Իսկ երբ նրա բերանից լսեց թէ ինչ լուր է բերել Շահնազարը, ոչինչ խօսք չը գտաւ, այլ շտապեց չոքել պատկերի առաջ։ Այս անգամ շատ երկար էր նրա ընթերցանութիւնը, իսկ խըղճալի հառաչանքները, մեղաները աւելի յաճախ էին ընդհատում նրա միանման աղաչաւոր ձայնը։

Երրորդն էր այն երեկոն, երբ մենք առաջին անգամ տեսանք նրան այդ դրութեան մէջ։ Երրորդ երեկոյին էլ պիտի վերջանար նրա բժշկութիւնը։ Նա տեսաւ որ Գայիանէն այլ ևս ցաւ չունէր, թէև շատ գունատ էր և տխուր։ Պաշտօնն սկսելուց առաջ, նա առանձին խօսակցութիւն ունեցաւ Աննա-խաթունի հետ։ Նախ ասաց որ մէլիքի կինը այս անգամ աւելի հիւանդ, չորացած ու ջարդված է երևում, հասկացրեց որ դա լաւ չէ, որ մի ամբողջ տուն նրան է նայում։ Յետոյ պատմեց որ Ջալալը իր մօտ էր, սաստիկ գանգատվում էր, պահանջում էր վերջացնել։ Նա այլ ևս չի թոյլ տայ յետաձգել մի գործ, որ ընդամենը մի կամ երկու ժամում կարելի էր վերջացնել։ Այստեղ հարսանիք չէ ուզում, այլ միայն իր հարսն է պահանջում. Մնացածը, ինչպէս կարգ

է, կը կատարվի Թաշքենում։ Նա համարեա լաց էր լի-նում, գանգատվում էր որ իրան ոչ ոք չէ խղճում, չէ ուզում իմանալ որ ինքը հանգստութիւն չունի, օր-գիշեր ոչ մեռած է, ոչ կենդանի. մի՞թէ նրա հասակին վայել է տխրութիւն . . .

Վերջին խօսքերի հետ Աննա-խաթունը համաձայն-վեց լուռ արտասուքների անընդհատ շիթերով։ Իսկ թէ կարելի՞ էր շատ շուտ վերջացնել հարսանիքը, դրա մա-սին նա չէր էլ մտածել։ Վարանդայի պատիւը, մէլիքե-տան ինքնասիրութիւնը չէին մոռացվում նոյն իսկ այս դրութեան մէջ։ Ո՛չ, ինչո՞ւ խօսել հարսանիքի մասին... Այժմ բաւական էր և այն, որ ամենքը, բայց մանաւանդ թուրքերը իմանան թէ Գայիանէն տէր ունի, նշանած աղջիկ է։ Բայց ճի՞շդ էր դա։ Նոյն իսկ եթէ չը լինէին արգելքները, եթէ հարսանիքը կարելի լինէր կատարել վաղը կամ միւս օրը, ի՞նչ անէ մայրը, քանի որ Գայ-իանէն չէ էլ ուզում լսել Ջալալի անունը։

Հեղինէն ոչինչ չասաց, բայց իր մտքում վճռեց գոր-ծադրել վերջին միջոցը և մտաւ Գայիանէի սենեակը։

Երկար ու երկար կարդալուց յետոյ նա վերկացաւ և նշան արաւ Աննա-խաթունին։ Սա իսկոյն դուրս գնաց սենեակից։

Շէմքի մօտ նրա ոտների տակն ընկաւ մի կին, որ անդադար լաց էր լինում։ Նա իսկոյն ճանաչեց թէ ով է դա և, ուշադրութիւն չը դարձնելով խեղճի վրա, ան-ցաւ գնաց. բայց նրա հետ միւս սենեակն ընկաւ Մէհ-րին։ Նա էր այդ խեղճ կինը, որ երեք օր վռնդված էր այս սենեակներից, ուր անց էր կացրել իր կեանքի մեծ մասը. այժմ նա ապրում էր թոնրատանը։

Նա էլ էր կուչ եկել, թշուառացել։ Անդադար ար-տասուք թափելով, թողութիւն էր աղաչում։

—Ներիր, մէլիքի կին, ներիր, ինչպէս ներում ես քո դռան շներին... Մէհրին չի տանի այս ցաւերը... Նա գիտէ որ ինքն է այս բոլորի պատճառը։

Սաստիկ զղջացած, խոստովանում էր իր յանցանքը խփելով իր գլխին, կրծքին, անթիւ անգամ մեղայ կան-չելով։ Իսկ մէլիքի կինը լուռ էր, այս անգամ սիրտ չու-նեցաւ կրկնելու պառաւի յանցանքը։

—Ի՞նչ անէր Մէհրին, շարունակեց պառաւը.—ես չիմացայ թէ այսպէս կը լինի վերջը... Աշխարհը փոխվել է, մէլիքի կին, իսկ ես կարծում էի թէ չէ փոխվել... Ջահիլները հիմա ուրիշ սիրտ ունեն. ինչե՞ր են ասում, Տէր Աստուած, ինչ բաներ... Ներիր... Մէլիքի գերեզ-մանի համար ներիր . . .

Նա առաջ գնաց, ուզում էր չոքել, համբուրել Ան-նա-խաթունի ոտները, բայց սա թոյլ չը տուեց և ինքն էլ արտասվելով պատուիրեց պառաւին, որ լաց չը լինի։

Ի

Այդ միջոցին Հեղինէն վերջացրեց իր գործը։ Ար-ծաթապատ Աւետարանը դնելով Տիրամօր պատկերի ա-ռաջ, վառեց նոր մոմեր, մետաքսեայ թաշկինակը կի-սով չափ կախեց պահարանի առջևից։ Եւ ապա, մօտե-նալով Գայիանէին, բռնեց նրա ձեռքը, օգնեց որ նա վեր կենայ ու նստէ անկողնի մէջ։ Մի վերին աստիճա-նի ցուրտ ձայնով նա հրամայեց.

—Չոքի՛ր։

Գայիանէն դուրս եկաւ անկողնից ու չոքեց գորգի վրա։

—Կարդա «Անկանիմքը»։

Նա հանդարտ, վշտալի ձայնով կարդաց։ Կոյսը չո-քեց նրա կողքին և ձեռքը պարզելով դէպի պահարանը, ասաց.

—Տեսնո՞ւմ ես սուրբ Աստուածածինը։ Քսան և հինգ տարի է մեր վանքում և ոչ ոք չէ տեսել որ նա չօգնէ իրան դիմողներին։ Նա գթառատ մայր է, ողորմած բա-րեխօս։ Կոյրերին, կաղերին բժշկում է, մխիթարում է

ադաւորին։ Տեսնո՞ւմ ես ինչպէս է նայում երկինքին։ Նա միշտ այնտեղի հետ է խօսում և հրեշտակները բերում են վերևից նրա բարեխօսութիւնների պատասխանը։ Բայց մի՛ կարծիր թէ բարերար և ողորմած է նա անխտիր ամենքի համար։ Ո՛չ։ Մեղաւորը չը պիտի համարձակվի մօտենալ նրան։ Բոլոր վատերի, բոլոր չարերի, անձնադաւաճանների համար ոչ մի բարի խօսք չունի նա, այլ ընդհակառակն, պատիժ և տանջանք է բերում երկնքից։ Նա քեզ էլ կը պատժէ... Ո՛հ, սարսափով եմ նայում քեզ, իմ խեղճ Գայիանէ։ Դու չարի ետևից ես գնում, քո հոգին խլել են դևերը... Դու տանջում ես քո մօրը. տեսա՞ր նրա արտասուքները։ Դա ծանր, դարհուրելի մեղք է. դու չես լսում քեզանից մեծերին... Բոլոր գրքերը— Աստուածաշունչը, Աւետարանը, հայրապետների գրուածքները—վայ են տալիս քեզ պէս որդուն... Հասկանո՞ւմ ես...

Գայիանէն նայեց նրա դէմքին և հասկացրեց որ լսում է, խորին ուշադրութեամբ և ակնածութեամբ է լսում։

—Եւ Տիրամայրը քեզ անպատիժ չի թողնի,—շարունակեց նա, երկու խօսքով այդ ուշադրութիւնը գովելուց յետոյ։—Նա քեզ առողջացրեց, նա խնդրեց երկնքից որ քո ցաւերը կորչեն, որպէս զի դու խելքի գաս։ Այն ինչ ուշաթափութիւն էր, որ եկաւ քեզ վրա երեք օր առաջ։ Չե՞ս հասկանում։ Սատանան մտել է քո փորը, բայց սրբերը քեզ խնայեցին, հալածեցին չարին։ Այժմ դու պիտի զղջաս, պիտի ապաշխարես... Աղաչի՛ր Տիրամօրը, որ նա քեզ ողորմութիւն անէ։ Պա՛ս պահիր, օրերով ծո՛մ պահիր, կուրծքդ ծեծի՛ր, արտասո՛ւնք թափի՛ր, ասա՝ մեղա՜յ, մեղա՜յ... Թէ չէ, սարսափելի ցաւեր կը գան քեզ վրա... Բոլոր սրբերը երես կը դարձնեն քեզանից և դևերը կը տանջեն քեզ, կայրեն, կը խորովեն... Անձնադաւաճան որդի... դու մեղաւոր ես, քո յանցանքին չափ չը կայ...

Նա չորէքչոք առաջ գնաց, տանելով իր հետ Գայիանէին։ Նուիրական պահարանը մօտիկուց աւելի խոր և ազդու տպաւորութիւն էր գործում. ճրագների անհանգիստ բոցերը կարծես ինչ-որ սրբազան, երկնային բաներ էին պատմում։ Տիրամայրը կարծես շունչ էր քաշում։

Այդտեղ Գայիանէն կոյսի հրամանով եօթն անգամ ծունր դրեց և ամեն մի ծնրադրութիւնից յետոյ չորէքչոք մօտեցաւ Աւետարանին ու համբուրեց։ Հեղինէն իր պաղ ու ծանր ձեռքը դրեց նրա գլխին, կարդաց մի աղօթք, որի մէջ աղաչանքներ էր անում կորած հոգու փրկութեան համար։ Դրանից յետոյ նա շարունակեց իր գործը։

—Այժմ աղօթի՛ր, ասաց նա.—աղաչի՛ր, լա՛ց եղիր, Տիրամայրը քեզ կը լսէ։ Ժամանակ մի՛ կորցնիր, քանի քո գլխին չէ ընկել Աստուծու արդար բարկութիւնը։

Մեղաւորը ձայն չը հանեց, նա միայն դիտում էր պատկերը և զմայլված էր։

—Եթէ չը խոստովանես քո մեղքերը, չանիծես քեզ և երդումով չը հաստատես, որ ձեռք ես վերցնում չար սատանայից, ես ինքս կանիծեմ քեզ... Ի՛ս, լսո՞ւմ ես... Ամենևին չեմ խնայի. կը չոքեմ այստեղ, Տիրամօր առաջ, երեսս հողերին կը քսեմ, արտասունք կը թափեմ և կանիծեմ քեզ, կը չորացնեմ... Խնայի՛ր քեզ, խնայի՛ր այդ հասակը... Դու գիտես թէ որքան եմ սիրում քեզ. հարազատ որդին էլ այնպէս չի լինի, ինչպէս դու ես ինձ համար։ Բայց իմ անէծքից յետոյ դու կը դառնաս պիղծ, զարշելի. քեզանից կը փախչեն, քո երեսը տեսնել չեն ուզի... Եւ դու կը հալածվես, մենակ ու անիծված կը լինես աշխարհի մէջ... Ուզո՞ւմ ես այդ օրին հասնել։

Նա մատներով բռնեց նրա ծնօտը, դարձրեց երեսը դէպի իր կողմը և սկսեց փորձել նրան իր անողորմ հայեացքով, որի մէջ հանդէս էր եկել եկեղեցու պաշտօնեայի ամբողջ իշխանութիւնը։

Միայն քարը կարող էր անտարբերութեամբ տանել

այդ հայեացքը։ Գայիանէն կարծես երկիւղ զգաց, կարծես կակղում էր։ Յանկարծ նա խօսեց.

—Ես այսօր շատ մտածեցի, ասաց նա համեստութեամբ, մի մեղմ եղանակով, որի մէջ պարունակվում էր անսահման խղճահարութիւն։—Մտածում էի այնքան որբերի մասին և հարցնում էի թէ ինչ կը լինի... Ո՛չ մէկը հայր կամ մայր չունի, ո՛չ մէկի մարմինը ծածկված չէ։ Գառնուկներ են նրանք, բայց ո՛չ կայտառ ու ժիր գառնուկներ, որոնք այնքան սիրելի են մարդկանց։ Ո՛չ խօսում են, ո՛չ ժպիտ ունեն, ո՛չ էլ արտասվել գիտեն. նոյն իսկ չեն զգում քաղցածութիւն և հաց ուզել չեն իմանում։ Միայն որբեր չեն նրանք... ո՛չ... չը կայ փոքրիկ ու վտիտ մարմին, որի վրա վէրքեր չը լինեն... Տեսել եմ մէկին, որ չորս տարեկանից աւելի չէր լինի. նրա ոտը ջարդված էր. մի ուրիշի ուսը ծակել էր քրդի նիզակը. կար և մէկը, մի ծծկեր երեխայ, բայց լաւ է որ ես չը տեսայ նրան. ասում են, հրացանի գնդակը մնացել է նրա աջ թևի մէջ... Կը մեռնեն, ամէնքը կը մեռնեն... փողոցներում, ցանկապատերի տակ, շների առաջ... Ի՞նչ կը լինի այդ կրակը...

Նա խառնվեց, կուլ տուեց արտասուքները։ Եւ ապա դարձաւ դէպի պատկերը, իսկ ձայնը իջաւ ստորին աստիճանի վրա։

—Ի՞նչ կը լինի... Տիրամայրը նայում էր երկինքին, բայց թւում էր թէ ինձ հետ է խօսում։ Բոլոր թշուառների, բոլոր վիրաւորների մայրը նա է։ Ի՞նչպէս, նա լինի այստեղ և այդպիսի որբե՛ր մնան փողոցում։ Նրա վանքում տեղ շատ կայ և հացն էլ առատ է։ Պատսպարել փոքրիկ թշուառներին այնտեղ, պահպանել, մեծացնել. իւրաքանչիւր կոյս կը դառնայ մայր, իւրաքանչիւր խուց մանուկ նահատակների պաշտպանը կը լինի ցրտից, անտէրութիւնից և մահից։ Ի՞նչ հրաշալի էր այս մխիթարութիւնը։ Չը գիտեմ Տիրամայրն էր այդ բոլորը ասում, թէ՞ ինձ էր այդպէս թւում...

—Սպասի՛ր, ընդհատեց Հեղինէն, կնճռոտելով իր դէմքը։—Դու, ուրեմն, ոչի՛նչ ես համարում իմ այնքան խօսքերը։

—Ի՞նչպէս կարող եմ ոչինչ համարել։ Ո՛չ, ես հաւատում եմ, որ Տիրամայրը բոլոր թշուառների մայրն է. հաւատում եմ, որ դու կարող ես անիծել՝ ում կամենաս և երբ կամենաս։ Ես խոնարհ եմ, հնազանդ և միայն աղաչում եմ, մայր։ Մի՞թէ որբերի համար աղաչելը մեղք է...

—Մեղք չէ, ո՛չ... Բայց մեղք է, երբ հորթը իր մօրից առաջ է ընկնում. մեղք է, երբ փոքրաւորը ընդդիմանում է իր մեծին, յամառութեամբ հարկադրում է կատարել այն, ինչ մեծը բարի չէ համարում...

—Ես չեմ հարկադրում. ինչ ույժ ունեմ, որ հարկադրեմ. ես կուչ եկած եմ իմ անկիւնում, ուզում եմ նայել, տեսնել թէ ինչ կանեն մեծերը...

—Ապրե՛ս, որդի։ Խօսի՛ր այդպէս և ես կը բացատրեմ ամեն ինչ։ Բարերար Աստուածը նայում է վերևից և տեսնում է թէ որբին և թէ աղքատին։ Լաւը այն է միայն, ինչ կամենում է Աստուած։ Եթէ նա չուզէ որ այդ որբերը ապրեն,—ես, դու, մի ուրիշը ինչ շներ ենք որ ասենք. «Չէ, Ա՛ստուած, մենք ուզում ենք որ նրանք ապրեն»...

—Այո՛, ոչ ոք չէ կարող այդքան յանդուգն լինել։ Բայց Աստուած դէ՞մ կը լինի, եթէ որբերին պահէք վանքում։ Կեանքը և մահը, այո՛, Աստուծու ձեռքին են, իսկ մի կտոր հացը մարդն է պահում իր ձեռքում։ Ասա՛, մայր, աղաչում եմ, մի՛ բարկանար, սովորեցրո՛ւ ինձ...

Նա համարեա արտասվելով թախանձում էր կոյսին լինել ողորմած, խօսել հանդարտ, քաղցրութեամբ, չը վախեցնելով։ Եւ Հեղինէն, վերջապէս, տեղի տուեց այդ թախանձանքին։

—Նախ իմացի՛ր, որ յանդգնութիւն գործեցիր ասելով թէ Աստուծու ձեռքին չէ մի կտոր հացը, այլ մար-

դու ձեռքին։ Այդ պատճառով երեք անգամ ասա՝ «Մեղայ Աստուծոյ»։

Գայիանէն իսկոյն կատարեց այդ հրամանը։

—Այժմ լսիր։ Լաւ կը լինէր, ի հարկէ, եթէ բոլոր որբերին պահէին վանքերում, եթէ եկեղեցին դառնար ամենքի հայրն ու մայրը։ Բայց դա անկարելի բան է։ Ի՞նչպէս են պահվել վանքերը մեր երկրում։ Եկել են շատ բռնաւորներ, կոտորել են շատ մարդկանց, հիմնայատակ են արել շատ գիւղեր, տարել են հազարաւոր գերիներ. իսկ վանքերը կանգուն են մնացել։ Ինչո՞ւ— Որովհետև վանքերը բռնաւորների դէմ չեն գնացել, խոնարհ հնազանդվել են. եպիսկոպոսները, վարդապետները լաց ու պաղատանքով գնացել են նրանց առաջ, ողորմութիւն են հայցել և պահել են սուրբ տաճարները։ Երկիրը քանդվել է, մարդիկ բնաջինջ են դարձել, բայց Աստուծոյ եկեղեցին մնացել է կանգուն։ Եւ ուրիշ կերպ չէր կարող լինել. ժողովուրդը—եկեղեցու ծառան է։ Եղել են, ճիշդ է, և այնպիսի վանքեր, որոնք հակառակվել են, փորձել են ժողովրդի կողմը լինել, պաշտպանել նրան։ Եւ ի՞նչ։ Տեսնում ես մեր լեռներում քանի աւերակ վանքեր կան... Դրանք այդ անհնազանդ վանքերն են։ Աստուծոյ քանդված տները այժմ էլ արտասուք են հանում տեսնողի աչքերից։ Այսպէս է աշխարհի կարգը։ Մենք մարդկանց հետ գործ չունենք, մենք հոգիների համար ենք աղօթում։ Որբեր շատ կան, դու ճիշդ ես ասում. բայց նրանք անցաւոր են, իսկ վանքը պիտի մնայ. Տիրամայրը պիտի տեղ ունենայ, միշտ ձէթը վառ պիտի լինի նրա առաջ... Թո՛ղ Աստուած ողորմութիւն անէ բոլոր որբերին. բայց եթէ դա Աստուծոյ կամքը չէ, ի՞նչ պիտի անենք։ Մենք կաղաչենք, կը պաղատենք, որ Աստուած այդ բոլոր փոքրիկներին իր արքայութեան մէջ ընդունէ Բեթղեհէմի մանուկների շարքում։ Այժմ հասկացա՞ր։

—Հասկացայ, մայր, բայց մի բան մութ մնաց։ Աս-

տուծոյ տան համար դու էլ կը գնաս բռնաւորին աղաչելու։

—Ի հարկէ, որդի, դա իմ պարտքն է... Բայց փառք Աստուծոյ, այդ սև օրին դեռ չենք հասել։ Մի ժամանակ խօսք կար թէ անօրէնը ուզում է գիւղի եկեղեցին... ո՛հ, Աստուած... մզկիթ դարձնել։ Եւ ո՞վ գիտէ, գուցէ սուտ էլ չէ... Արդէն փակել է եկեղեցին, քանի՜ օր է, ժամասացութիւն չը կայ։ Վա՜յ մեր գլխին, եթէ անօրէնը իր ուզածն անէ... Ահա այն օրը լաց եղիր, որդի, գլուխդ ծեծիր... Աստուած կը տեսնէ քեզ և ողորմութիւն կանէ . . .

Լացը խեղդեց նրա ձայնը։ Բայց արտասուքներ չերևացին պառաւ դէմքի վրա. դրանց փոխարէն դառն յուսահատութիւնը պատեց նրան։

—Այսպիսի ցաւեր կան, հառաչեց նա.—իսկ դու, խեղճ երեխայ, ի՞նչ մտքերի վրա ես...

—Մի բան էլ եմ ուզում իմանալ, մայր, ասաց Գայիանէն համարեա փսփսալով։—Կասե՞ս ինձ։

Հեղինէն գլխով հաւանութեան նշան արաւ։

—Ժողովուրդ չեղած տեղն էլ պիտի հաստատ մնայ Աստուծոյ տունը։

—Ամեն տեղ, ամեն տեղ, ասաց կոյսը։—Աշխարհի մէջ ամեն ինչ անցաւոր է, միայն եկեղեցին է յաւիտենական։

Տիրեց լռութիւն։ Գայիանէն թեքեց իր գլուխը դէպի կոյսի կողմը, հոգոց հանեց և էլի իր հանդարտ հայեացքը դցեց պատկերի վրա։ Իսկ նրան քննում էր Հեղինէն։ Այնինչ չը գտաւ նա այդ գունատ ու անդորր դէմքի վրա, որ ցոյց տար համարձակութեան, յանդգնութեան նշան։ Նրա սրտի մէջ շարժվեց կարեկցութեան նման մի բան, և դնելով իր ձեռքը նրա ուսին, ասաց իր սովորական հեզ ձայնով.

— Դու միշտ խելօք էիր և շատ հասկացող. չը գիտեմ ինչպէս եղաւ որ այն պղծված, անամօթ աղջիկը

թունաւորեց քեզ և գցեց սատանաների ճանկը։ Այժմ դու նոյն Գայիանէն ես դառնում, որին ես սիրում էի։ Ապաշխարիր, Թողութիւն խնդրիր Աստուծուց, որ այնքան տանջեցիր քո խեղճ մօրը։ Հնազանդ եղիր, լեզուդ պահիր, սուս ու փուս նստիր տեղդ և մտքումդ միշտ աղաղակիր. «Աստուած, դու պահիր իմ մեծերին»։ Խօսք տալիս ես։ Ասա՝ այո, տալիս եմ...

Պատասխան չը կար։

—Ասա . . .

Լռութիւնը շարունակվեց։ Նա էլի բարկացաւ, էլի բռնեց աղջկայ ծնօտից և վեր քաշեց գլուխը, հարկադրեց որ ուղիղ իրան նայէ։

—Ասա՝ այո, խօսք եմ տալիս։

Լսվեց աղջկայ հրաշալի, մանկական թոթովանքը.

—Ես սիրում եմ իմ մայրիկին, սիրում եմ մեր տունը, ամբողջ Վարանդան։

—Շատ ապրես, շատ օրհնեալ լինես։ Ասա որ դու այլ ես չես խօսի դրսիների մասին։

—Սիրում եմ ամենքին...

—Վնաս չունի. ասա որ չես հակառակվի քո նշանածին...

—Այդ... մի՛ ասիր...

Եւ նա ընկաւ կոյսի գիրկը։

—Ի՞նչ, ինչ . . .

Հեղինէն դէն հրեց նրան և ասաց.

—Մինչև չասես, ինձ չը մօտենաս։

—Խոստովանում եմ, մայր, ես մեղաւոր եմ... Այդ մէկը չեմ կարող . . .

—Այդպէս ես սպանում քո մօրը, յանդուգն աղջիկ... Այնքան մօտացել ես քեզ, որ մինչև անգամ ինձանից չես ամաչում... Ի՞նչ խօսքեր են դուրս գալիս քո բերանից... Հեռու ինձանից, հեռու...

Ո՛րքան նա կատաղեց, երբ Գայիանէն խոյս այդ հրամանն էլ կատարեց. Ծալով ծնկների վրա, նա քիչ

հեռացաւ կոյսից, մէջքը դարձրեց դէպի նրան և գլուխը կախ արաւ։

—Լսիր, ես քեզանից բացատրութիւններ չեմ ուզում։ Ես բաւական փորձված եմ, իմ մազերը սպիտակել են, իսկ քո շրթունքների վրա դեռ չէ չորացել քո մօր կաթը։ Աստուծու օրէնքով դու նշանված ես այն տղամարդի հետ և պարտաւոր ես հետևել նրան, հնազանդվել, որովհետև նա է քո տէրը։ Հայր, մայր, ազգական ոչինչ են այն րոպէից, երբ մատանին օրհնվում է։ Մի կարծիր թէ ամեն անգամ քո քէֆը, քո ցանկութիւնը կը հարցնեն. դու աղջիկ ես, իսկ աղջիկը մի տղայի է պատկանում։ Քո բախտից է որ լաւ, շատ լաւ տղայի ես արժանացել. բայց եթէ վատ էլ լինէր, դարձեալ դու պարտաւոր ես հնազանդվել նրան։ Աստուծու արդար դատաստանը քո սատանայութիւնների համար կարող է պատիժ և տանջանք գրել քո ճակատին. կարող է խրատացնել քո ամուսնու սիրտը, խլել քո ամբողջ բախտը... Եւ ինչ պիտի անես։ Պիտի չարչարվես, տանջվես, լուռ ու առանց դժգոհութեան. դու աղջիկ ես։ Ականջդ բաց և լաւ լսիր. ոչ ոք քեզ չի խնայի. քո նշանածը բոլորովին չէ ուզում ձեռք վերցնել իր իրաւունքից. և որքան դու շատ յիմարութիւններ անես, այնքան նա խիստ պիտի ցոյց տայ, որ քո տէրն է։ Հաւատա ինձ, ես խօսում եմ նրա կողմից, գիտեմ նրա միտքը։ Նա քեզ զոռով կը տանէ և քո մայրը չէ կարող և չէ էլ ուզում խլել քեզ։ Ուրեմն, հնազանդվիր... Շողոքորթ գառը, ասում են, երկու մօր ծիծ է ծծում, իսկ վատ, կուարար մարդը ընկնում է աշխարհի աչքից, այնպէս որ ափսոսում են նրա կերած հացն անգամ։ Դու այժմեանից աշխատում ես վատ երևալ քո նշանածի աչքին. այդ մի՛ կերթայ։ Մտածիր, մինչև մահդ դու նրանն ես։ Գրքերի մէջ ասած է. «ով չէ լսում ականջով, նա կը լսէ թիկունքով»։ Հասկանո՞ւմ ես միտքը։ Կինը տղամարդի փէքրաւորն է,

իսկ փոքրաւորին խրատում են նախ խօսքով, ապա և ծեծով . . .

—Թո՛ղ այդպէս լինի, յանկարծ ասաց Գայիանէն բըրթի տակ, չը փոխելով իր դիրքը։—Աշխարհի մէջ միայն այդ կարգը չէ. կայ և մահ... հարիւր ու մի ժայռեր պատրաստ են և հեշտ կազատեն . . .

—Ի՞նչ, ի՞նչ, բացականչեց Հեղինէն ոտքի կանգնելով։—Դու՛ ասացիր այդ խօսքերը... Անամօթ . . .

Ու բռնելով նրա ականջից, չոքէչոք առաջ քաշեց, մինչև որ նրա գլուխը դիպցրեց պատին։

—Լսի՛ր այստեղ, քարացիր... Դու ինձ անպատւեցիր, անարգեցիր իմ սպիտակ մազերը... Խնդրել եմ կամակատար Աստուածանից, որ այս գիշեր ցոյց տայ քեզ թէ ինչ է քո պատիժը։ Մինչև առաւօտ էլ քեզ ժամանակ եմ տալիս։ Էգուց կը տանեմ պատկերը, բայց իմացիր որ այս գռներից դուրս գալուց առաջ Տիրամայրը կանիծէ քեզ . . .

Նա համբուրեց պատկերը և Աւետարանը, երեսին խաչ հանեց ու դուրս գնաց։

Անցաւ բաւական ժամանակ։ Գայիանէն ճակատը չէր հեռացնում պատից. այդպէս լաւ էր, այդպէս նա հեշտութեամբ էր տանում իր վրա ընկած ծանրութիւնը։ Աչ ոք չէր խանգարում նրան և դառն միտքը անարգել սեղմում էր նրա կոկորդը, դրդում էր յուսահատութեան արտասունքներ . . .

Յանկարծ նրա ականջին հասան ինչ-որ տարօրինակ ձայներ. կարծես մէկին խեղդում էին պատի ետեւում։ Մի քանի խրխռոց, ծանր տնքոցներ, ինչ-որ ջարդւող բանի խուլ աղմուկ, և տիրեց լռութիւն . . .

Գայիանէն բարձրացրեց գլուխը, սկսեց ականջ դնել։ Բայց չանցած՝ ձայները կրկնվեցին, բայց այս անգամ պատից քիչ հեռու, մի խոր տեղ։ Ու այս անգամ տնքոցները տառապական էին, աւելի խոր և յուսահատ. նրանք պարզ ցոյց էին տալիս, որ մի անհաւասար կռիւ

մօտենում է վախճանին և կռւողներից մէկը ձեռքից գնում է . . .

Կայծակի արագութեամբ տեղից վեր թռաւ աղջիկը և առանց մի վայրկեան մտածելու՝ դուրս վազեց։ Այդտեղ միայն հասկացաւ, որ կռիւը տեղի ունի հարևան սենեակում, ու յուսահատ կերպով յարձակվեց դռան վրա։ Մի ակնթարթ նա կանգ առաւ շեմքում, բայց այդքանն էլ բաւական էր ամեն ինչ տեսնելու և հասկանալու համար։

Շահնազարը խեղդում էր Յովսէփին։ Նա կատաղել էր, նրա աչքերը լցվել էին արիւնով. անդադար յարձակվում էր, հարուածներ հասցնում, չոքում էր Յովսէփի սրտին, ձեռքերով սեղմում էր նրա կոկորդը։ Դեռ երեխայութեան հասակում երևում էր ապագայ եղբայրասպանը *)։

Իսկ խեղճ կաղը ընկել էր մէջքի վրա, չէր կարողանում պաշտպանվել, այլ իր փոքրիկ ուժերը անխնայ գործ էր դնում, որ գոնէ կուչ գայ կրծքի վրա և վերկենայ. բայց այն ամենը, ինչ նա գլուխ էր բերում այդքան տանջանքներով, Շահնազարը ոչնչացնում էր բռունցքի մի հարուածով։ Այն ժամանակ Յովսէփը սկսում էր յուսահատութեամբ շարժել իր ձեռքերը և գալարվելով իր եղբօր չաղ մարմնի տակ, օրհասական խրխռոցներ ու տնքոցներ էր արձակում . . .

Կարծես կրակ թափվեց Գայիանէի գլխին։ Մի թռիչքով նա հասաւ Շահնազարին, բռնեց, յետ քաշեց և բարկացաւ նրա վրա։ Փչացած երեխաները առհասարակ ունեն տան մէջ մէկին, որի խօսքին են միայն ականջ դընում, որից քաշվում են։ Եթէ մելիքի տանը կար այդպիսի մէկը Շահնազարի համար, դա Գայիանէն էր։ Բայց և այդպէս, նա չը դադարեց. ընդհակառակն, այժմ աւե-

*) Աւանդութիւնը պատմում է, որ երբ Յովսէփը, իբրև Մելիք-Յուսէֆի մեծ որդի, մելիք դարձաւ, Շահնազարը մի գիշեր մտաւ նրա սենեակը, իր ձեռքով սպանեց նրան, կոտորեց նրա ընտանիքը և այդպիսով ձեռք գցեց մելիքութիւնը։

լի տաքացաւ և սկսեց այս ու այն կողմ վազվզել, իր գործը շարունակելու նոր փորձեր անել։ Գայիանէն ուշադրութիւն չը դարձրեց նրա վրա. կռացաւ, խըլեց Յովսէփին և վերցնելով, տեղաւորեց իր կրծքի վրա, երկու կռների մէջ։

—Մի վախիր, ես եմ, Գայիանէն,—մի քանի անգամ կրկնեց նա և սկսեց մինչև անգամ օրօրել նրան։

Խեղճ երեխայի մէջ միայն մի թոյլ շունչ էր մնացել, որ դժուարութեամբ էր գնում գալիս։ Դէմքից գոլորշի էր բարձրանում, ամբողջ մարմինը կրակ ընկածի էր նման։

Այդ փոքր, դեռ չամրապնդած կազմուածքը ցոյց էր տալիս թէ որքան իր կարողութիւնից վեր էին այն ջանքերը, որ նա գործադրում էր իր չար եղբօր դէմ. նա ամբողջապէս քրտնել էր և դողում էր, անընդհատ ցնցումներ գործելով... Բայց ճրպխի զարմանք. նա մի կաթիլ արտասունք էլ չէր կաթեցրել։

Այժմ, երբ նա ապահով էր իր քրոջ գրկում, երբ, վերջապէս, համարձակ բաց արաւ իր տխուր աչքերը, իսկ ծանր շնչառութիւնն սկսեց կամաց-կամաց կանոնաւորվել, նա չը յայտնեց ցաւ կամ գանգատ։ Իր թոյլ կազմուածքի, իր փոքրիկ կարողութեան հլու ստրուկ, նա սովորել էր ցոյց տալ, որ եթէ չունի հակառակվելու ոյժ, գոնէ կարող է արհամարհել... Այդ էր նա հասկացնում Գայիանէին, նայելով նրա աչքերի մէջ։

Իսկ Շահնազարը չէր ուզում այդպէս հեշտ ձեռքից թողնել իր զոհը։ Տեսնելով որ Գայիանէն տանում է Յովսէփին, Շահնազարը կպաւ նրա շորերին, ձգձգում էր, աշխատում էր արգելել, մինչև իսկ փորձեց կծել նրա ոտը։ Գայիանէն, վերջապէս, չը համբերեց և ոտով խփեց նրան։ Զարանճին իսկոյն ձեռք վերցրեց, գոռալով վազեց մօր մօտ։

Դնելով Յովսէփին իր անկողնի մէջ, աղջիկը մոռացաւ ամէն ինչ, և միայն սիրտ էր տալիս, հանգստա-

ցնում էր խեղճին։ Այս երեկոյ զարմանալի էր նրա քնքշութիւնը, նրա սէրը դէպի իր եղբայրը։ Կարծես այժմ միայն նա զգաց թէ որքան յանցաւոր էին տանեցիները այս թոյլ մարդու առաջ, թողնելով նրան մենակ, անօգնական։ Նա, կարծես, ուզում էր մի ժամում քաւել ամենքի յանցանքները։ Մի քանի անգամ համբուրեց նրա դէմքը, արտասանեց քաղցր, համակրական խօսքեր, խոստացաւ նրա պաշտպանը լինել։

Բայց Յովսէփը փոխանակ հանգստանալու՝ սկսեց լաց լինել։ Խեղճ երեխայ... Առաջին անգամն էր, որ նա արտասունք էր ցոյց տալիս իր մերձաւորներին, որովհետև առաջին անգամն էր տեսնում քնքշութիւն, կարեկցութիւն. ցաւերը չէին այդ արտասունքների պատճառը, այլ շնորհակալութեան զգացմունքը։

Քոյրը այդ շատ լաւ հասկացաւ և այնքան խղճահարվեց, այնքան յուզվեց, որ հազիւ կարողացաւ պահել իր արտասունքը։

—Ինչո՞ւ էր ծեծում, հարցրեց նա տխրութեամբ։

— Չը գիտեմ։

Դա Յովսէփի սովորական անտարբեր պատասխանն էր։ Բայց այժմ նա սովորական դրութեան մէջ չէր. նոյն զգացմունքը, որ արտասունք հանեց նրանից, շտապեց աւելացնել մի ողբալի եղանակով.

—Նա միշտ այդպէս է, միշտ ծեծում է, երբ նեղացած է մի բանից...

Նրանք մենակ մնացին։ Աննա-խաթունը այդ ժամանակ խորհրդակցում էր կոյս Հեղինէի հետ։ Իսկ աղջիկը, սրտից բղխող շշնջոցներով իր տանջված եղբօր աչքերին քուն բերելուց յետոյ, չը հեռացաւ անկողնից, այլ, յենվելով բարձին, երկար նայում էր այդ փոքրիկ փոքր դէմքին։

Նա դեռ չէր կշտացել. ուզում էր դեռ երկար, շատ երկար շարունակել, ուզում էր որ Յովսէփը քնի մէջ էլ իմանայ, որ քոյրը իր պաշտպանն է, այլ ես թոյլ չի տայ,

որ մարդիկ արհամարհեն նրան։ Պաշտպանել... Այժմից իսկ, խիստ, քաջաբար պաշտպանել մարդուն։ Միշտ այդ միտքն էր նրան յափշտակել։ Եւ ահա դէպք... Այստեղ, ձեռքի տակ, այս տան մէջ։ Ի՞նչպէս չէր նկատել մինչև այժմ...

Այդ բուռն ոգևորութիւնը մի քաղցր, մի յուսատու արտայայտութիւն դրոշմեց Գայիանէի դէմքի վրա։ Երեք օրվայ տանջանքները անցած էին երևում. այժմ նա փշերի վրա չէր ընկած. այժմ յարմար ու հանգիստ էր նրա տեղը։ Յովսէփը մի առանձին թեթևութիւն էր ներշնչում նրան։ Այդ փոքրիկ մարմնի դողոցը, քրտինքը, վերջապէս արտասուքները ուժ էին տալիս, մեծացնում, ամրացնում էին մենակ, անարգված աղջկան։

Խեղճ Յովսէփ... Միայն այն պատճառով որ թոյլ է նա, չունի ուժ, դիմադրելու, պաշտպանելու ընդունակութիւն, նրա վրա բռնանում է նոյն իսկ եղբայրը, կրտսեր եղբայրը։ Բաւական է խեղճ լինել և իսկոյն պատրաստ է բռնութիւնը. նա ծնվում է նոյն իսկ հայրական օջախում, նոյն իսկ հարազատների ծոցում։ Հարկաւոր էլ չէ, որ խեղճը ունենայ նախանձելի դիրք. լինի կատարելապէս անփառ. խեղճութիւն և բռնութիւն—դրանք երկուորեակներ են, մէկը միւսի համար է ստեղծված, մէկը անկարելի է առանց միւսի։

Միթէ բռնաւորը միայն նա է, ով անչափ ուժեղ է, ով կեղեքելու բոլոր յարմարութիւններն ունի և ոչ ոքից չէ վախենում։ Ի հարկէ ոչ։ Բռնակալ է թէ Սիւլէյման-բէկը և թէ չնչին Շահնազարը։ Երկուսն էլ հաւասարապէս զզուելի են։

Միթէ տանու առիւծ չէ և կոյս Հեղինէն։ Ի՞նչ ուժ ունի նա։ Քար դնել սրտում, հագնել սև շորեր, վախեցնել աղօթքի գրքերով, սրբերի անունով—ահա թէ ինչպէս է նա բռնանում։ Եւ ո՛րքան հպատակներ ունի։ Ամենքը խոնարհվում են նրա առաջ, որովհետև ամենքի համար նա միջնորդ է երկրի և երկնքի մէջ։ Նա հրամայում է, արգելում է, հաւատացած լինելով, որ իրան է տուած աշխարհի չարն ու բարին հասկանալու արտօնութիւնը։ Եւ ինչպէս է հասկանում։ Եթէ, ասում է, ոչնչանայ ամբողջ աշխարհը, փոյթ չէ. բաւական է որ կենդանի մնան երկնքի հաւատարմատարները, նրանք օր ու գիշեր կաղօթեն, որ բոլոր կոտորվածների, բոլոր արիւն արտասուք թափողների հոգիները գտնեն երկնքի ճանապարհը։ Որբերին հաց չէ հարկաւոր, այլ Բեթղեհէմի մանուկների երկնային խումբը, իսկ այդ խմբի մէջ նրանք չեն մտնի առանց խունկի ծխի։ Մարդը մեռնող է, նրան հարկաւոր չէ այս աշխարհը,—տևականը, անմահը միայն քարն է, երբ դարսվում է հոգիների փրկութեան և հոգի փրկողների համար. ուստի հարկաւոր է բանակալների տները համբուրել ո՛չ թէ մարդու մարմնի համար, այլ նրա հոգու խնամակալների համար...

Ինչքա՛ն են լաւ այս տանու առիւծները դրսի վայրենի, իսկական առիւծներից։

Գայիանէն զանազանութիւն չէր գտնում։ Դրսինը քանդում էր, աւերում, իսկ միւսը, որ նստած էր ներսում՝ ապահով պատերի ետևում, ասում էր. հեռու մնանք, գործ չունենանք, սուր բարձրացնողը սրով էլ կընկնի։ Եւ երբ խօսք է լինում այդ խրատի դէմ, նա կատաղում է, օգնութեան է կանչում աղօթքները, սրբութիւնները, նրանց կողմից սպառնում է պատիժ, տանջանք...

Ո՛չ, մի և նոյն են դրսինները և ներսինները, ամենքը մի անուն ունեն—բռնակալ։

Միամիտ, սիրելի Յովսէփ, դու կարծում ես թէ քո կաղութիւնն է պատճառ, որ քեզ տանջում են, չը մտածելով որ դու էլ մարդ ես... Միթէ չես տեսնում քո քոյրը. ահա նա ոչինչ պակասութիւն չունի, թոյլ չէ, բայց ճմլվում է աւելի խիստ բռնութեան տակ։

Նա լուռ խօսում էր եղբօր խղճուկ, անմեղ դէմքի հետ, տեսնում էր թէ ինչպէս խոր քունը կամաց-կամաց

կազդուրում է նրան, ջնջում է տանջանքների հետքերը։ Եւ նա ինքն էլ կազդուրվում էր։ Կայ գործ, ամեն տեղ կայ։ Ամեն մի անկիւնում մարդը, տանջվող, ճնշվող մարդը...

Յանկարծ նրա մտքի առաջ կանգնեց մեծ, սրածայր ցիցը և նրա վրա նստած քահանան։ Նահատակը... Նա էլ եկեղեցու պաշտօնեայ էր, նրան էլ յանձնված էր կապելու և արձակելու իրաւունքը։ Բայց ինչ պատմութիւններ էր բերել Փէրին այդ քահանայի մասին։

Ուր որ կայ տառապանք, ուր որ հեծեծում է հարըստահարվածը, ուր շառաչում է ստրուկի շղթան, այնտեղ երկնքի բոլոր սրբութիւնները վրդովված են։ Երկինքը երբէք չէ հովանաւորել մարդու չարագործութիւններին. երկինքը արդարութեան տեղն է, իսկ արդարութիւնը այն է, երբ գերին իր շղթաները կրծատում է ատամներով և մարդը իր պարտքն է համարում լաւ մեռնել, եթէ չէ կարող լաւ ապրել։

Եւ քահանան միայն խօսել չը գիտէր. նա ինքն էր դրդում մարդկանց, ինքն էր առնում. գնալիս՝ ամենից առաջ, վերադառնալիս՝ ամենից յետոյ—այսպէս էր նա հասկանում իր պաշտօնը։ Կարող էր մի Հեղինէ փոխարինել նրան։ Երբէք. նա պատերի ետևում լացող է և պահանջում է, որ նախ ամենքը մեռնեն, ապա միայն ինքը...

Մտքերը վերջ չունէին, մէկը միւսից հրատապ, մէկը միւսից պարզ։ Նրանց թելը կտրեց Տիրամօր մոմերից մէկը, որ վերջացել էր և յանկարծ ցած թռաւ մի փոքրիկ կայծակի նման։ Գայիանէն վերկացաւ, վերցրեց ընկած կտորը։

Ամբողջ սենեակին այժմ մի հատ ճրագ էր լոյս տալիս. բայց այն փոքրիկ շրջանի մէջ, որը նա իր դողդոջիւն բոցով խլում էր գիշերվայ խաւարից, դարձեալ սքանչելի էր վշտահար Աստուածամայրը։

Դարձեալ յափշտակված է նրա երկնային հայեացքը։ Նրան չէին վրդովել այն մտքերը, որ անում էր աղջիկը իր եղբօր գլխատակին. ընդհակառակն, թւում էր թէ նա այժմ աւելի բարեհաճ է, աւելի համակիր։ Թէև գիշեր էր, այն ժամը, երբ Հեղինէն յոյս ունէր թէ կը կատարվի իր սարսափելի խնդրուածքը, բայց քաղցրիկ ու մեղմ դէմքը իր դառն վշտերի անունով վկայում էր, որ ինքը երբէք չի պատժի, չի բռնանայ... Ո՛չ. նա, որ այնքան այրվել է մարդկանց անարդարութիւնից, բռնութիւնից, միշտ մայր կը մնայ, մի գթառատ, ցաւակից մայր...

Եւ հրաշալի մի վայրկեան իջաւ սուրբ պատկերի առաջ։ Գայիանէն ջերմեռանդ ուխտաւորի նման կանգնած էր լուռ, հիացած, սքանչելի իր մենակութեան մէջ, իր լուրջ, գեղեցիկ դէմքով։ Դեղին մոմը, որ նա վերցրել էր վառելու, անշարժացել էր նրա ձեռքի մէջ, որ դրած էր կրծքին։

—Բոլոր որբերի, բոլոր սգաւոր նորահարսների ամօթահար աղջիկների հետ քեզ եմ դիմում... Մարդիկ անսիրտ են, դու եղիր մեզ հետ, մայր...

Եւ իսկոյն նրա դէմքի վրա փայլեց յոյսի չքնաղ ժպիտը։ Նա արդէն հասկանում էր. Տիրամայրը չը մերժեց այդ աղաչանքը։

Մոմը կպցնելով պատին, նա գլուխը մացրեց պահարանի մէջ և նրա շրթունքները սեղմվեցին Տիրամօր ոսկեզօծ շրջանակին...

ԻԶ

Նոյն երեկոյեան Աւետարանոցը զինուորական մեծ բանակ էր դարձել։

Ձիաւոր և հետևակ զինուորներ, ենիչէրիներ, բաշիբօզուկներ լցվել էին փողոցները, տները. տեղ չը կար այլ ևս. ամենքին տեղաւորել չը կարողացան։ Գիւղի ետևում, հիւսիսային հարթութիւնների վրա, վառված էին բազմաթիւ խարոյկներ, որոնց շուրջը հաւաքվել էին զի-

նուորների ստուար խմբերը։

Դա մի ամբողջ զօրաբաժին էր։ Խառնիճաղանճ բանակի երեկոն չափազանց աղմկալի էր. մարդկանց աղաղակները խառնվել էին ձիաների խրխնջոցների հետ և երկար տարածութեան վրա միայն բանակի ժխորն էր տիրում։

Նոր էր տեղ հասել այդ ահաւոր ույժը։ Նա գալիս էր Գանձակի և Գիւլիստանի կողմերից, անցել էր բաւական ճանապարհ, որի երկարութեամբ շարված էին բազմաթիւ հայ գիւղեր։ Ամեն տեղ, ուր յայտնվում էր բանակը, բարձրանում էին բնակիչների հեծեծանքները. կողոպուտը, հարստահարութիւնները գնալով ահագին չափեր էին ընդունում։ Զինուորներին արված էր կատարեալ ազատութիւն. գլխաւորները մասնակից էին զինված խուժանի բարբարոսութիւններին։ Դա նշան էր, որ բանակը գնում է կռւի։

Եթէ կար մի բան, որ քիչ թեթևացնում էր այդ դժբախտութիւնը, այն էր, որ զօրքը շտապում էր, երկար կանգ չէր առնում։ Այժմ էլ Աւետարանոցի գետափը լցված էր շրջակայ գիւղերից հաւաքած գրաստներով, որոնք լուսաբացին պիտի առնէին զօրքի ծանրոցները։ Յայտնի էր որ բանակը շտապում է դէպի Արաքսի ափը։

Առաւօտից Սուլէյման-բէկը զբաղված էր իր բազմաթիւ հիւրերին ընդունելու պատրաստութիւններով։ Բանակի գլխաւորները հասան կէսօրին և իջան բէկի տանը. Նրանք բերել էին Սարը-Մուստաֆա-փաշայի բերանացի հրահանգները։ Փաշան միանգամայն հաւանութիւն էր տալիս բէկի արածներին, ասում էր որ նա բոլորովին ճիշդ է հասկացել թէ ինչ պէտք է անել, և վերջապէս նորից յանձնարարում էր լինել զգոյշ և խիստ, նկատի առնելով Պարսկաստանի դէպքերը։

Գլխաւոր հրամանատարի հաւանութեան արժանացած գործը երեք գիւղերի հիմնայատակ կործանելն էր։

Եւ այն ժամանակ, երբ բէկը լուր էր ուղարկում Մուստաֆա-փաշային իր այդ քաջագործութեան մասին, յայտնի չէր թէ ինչ են Պարսկաստանի դէպքերը։ Միւս օրը Աւետարանոց հասան մի խումբ ձիաւորներ, որոնք գալիս էին Ատրպատականից։ Նրանք Գանձակ էին տանում բաւական տխուր լուրեր։

Նադիրը, որին դեռ շարունակում էին աւազակ անուանել, նոր և նշանաւոր յաղթութիւն էր տարել. օսմանցիները ստիպված էին յետ քաշվել մի քանի կարևոր տեղերից։ Նադիրը, սիրտ առնելով այդ աջողութիւնից, առաջ էր գնում ահագին բանակի հետ։ Մի շարք պաշտպանողական միջոցներ ձեռք առնելով, Ատրպատականի հրամանատար փաշան օգնութիւն էր խնդրում Մուստաֆա-փաշայից, որովհետև Թաւրիզին շատ մեծ վտանգ էր սպառնում. միաժամանակ նա մարդ էր ուղարկել և Վանի փաշայի մօտ։

Մուստաֆա-փաշան իսկոյն կատարեց իր պաշտօնակցի խնդիրքը։ Նա կարելի համարեց իր հրամանատարութեան տակ գտնվող զօրքերից մի բաւական նշանաւոր բաժին անջատել։ Զգուշութեան համար այդ բաժինը հանվեց միայն Գանձակի և Գիւլիստանի գիւղերից, ուր կատարեալ խաղաղութիւն էր տիրում և ուր աւելի խիտ էին զօրքերի փոքրիկ հատուածները։ Երկաթի լուծի տակ խեղդվող երկրի համար այդ տեղափոխութիւնը մի առանձին թեթևութիւն չէր։ Մի և նոյն էր թէ ահագին ժայռից ընկնում էր մի ահագին բեկոր։ Ժայռը, ի հարկէ, փոքրանում էր, բայց նրա տակ ճխլվածների համար ծանրութիւնը նոյնն էր մնում։

Այդ միտքն էր յայտնում Պարսկաստան գնացող բանակի գլխաւորը, ալէզարդ Ֆէհմի-փաշան։ Դա մի շատախօս և պարծենկոտ մարդ էր։ Սուլէյման-բէկը, այնուամենայնիւ, լսում էր նրան խորին ուշադրութեամբ։ Երկար ժամանակ հեռու մնալով զինուորական կենտրոնից, նա սաստիկ հետաքրքրվում էր թէ ինչ կարծիքներ և

ծրագիրներ ունեն ղեկավարող մեծերը։ Խօսակցութեան մասնակցում էին և երկու բէկեր, որոնք փաշայի օգնականներն էին։

— Ո՛չ, այս կողմերում մենք շատ պինդ ենք նստած, — ասաց Ջէհմի-փաշան։ — Գլխաւորն այն է որ ուժեղ հակառակորդներ չունենք մեր սահմանների վրա։ Դաղստանի խաները և շամխալները մեր կողմն են։ Վրաստանում մարդ չը կայ, որ չը դողայ մեր անունից։ Մի քիչ երկիւղ կար Ռուսաստանի կողմից, բայց չէկ գեաւուրները այժմ բոլորովին ձայն չեն հանում. նրանք պայմանով պարտաւորվել են հաշտ մնալ մեզ հետ. դեռ երկար ժամանակ նրանք չեն մոռանայ մեր տուած ջարդերը։ Չորս կողմում ոյժ չը կայ մեզ դէմ։ Իսկ ինչ վերաբերում է ներքին խլրտումներին, դրանք դատարկ բաներ են...

— Դատարկ, ի հարկէ, հաստատեց Սուլէյման-բէկը։

— Բոլորովին դատարկ, կրկնեց Ջէհմի-փաշան։ — Եւ ճշմարիտ, շատ ողորմելի կը լինի մի զօրք, որ նուաճելով մի երկիր, տարիներ նստելով նրա մէջ, յանկարծ տեղի տայ, յաղթվի իր հպատակներից և փախչէ։ Եթէ մենք այդ օրին հասնենք, ես իմ ձեռքով կը կտրեմ այս թեւը և կերթամ ողորմութիւն հաւաքելու։

Նա ցոյց տուեց իր աջ թեւը, ծիծաղեց, ուսերը շարժեց և միանգամայն պարզ կերպով հասկացրեց թէ որքան ծիծաղելի, որքան անհեթեթ է թւում նրան այդպիսի միտքը։

— Եւ վերջապէս ինչ են տեղացիները, որ կարողանան մարդ վախեցնել, խօսեց Վէլի-բէկը, փաշայի օգնականներից մէկը։ — Ես զարմանում եմ, որ մենք մինչև անգամ ուշադրութիւն ենք դարձնում դրանց վրա։ Եթէ տասը տարի պատրաստվեն, կարո՞ղ են դիմանալ մեր մի հատ աքացիին։

— Հէնց այդ ասա. բայց ինչ են անում... ահագին զօրք են հանում Պարսկաստան՝ ինչ-որ աւազակի դէմ, — դժգոհութեամբ աւելացրեց միւս բէկը։

Փաշան անուշ ժպիտներով համաձայնվեց ամենքի հետ և յետոյ ասաց.

— Ճշմարիտ է, այդպէս է... Հասան-փաշան, ինչու թագցնենք, մի վախկոտ, ծոյլ մարդ է. նրան վայել էր թուխս գալ հարեմի մէջ և օր անցկացնել իր աքաղաղների ու կաքաւների հետ։ Հօ գիտէք թէ որքան է նա սիրում աքաղաղներ կռուացնել։ Նա իմ ընկերն է, ես լաւ եմ ճանաչում. մի անգամ նա ունէր հինգ կաքաւ. մեծ փող էր տուել, առել և ամբողջ օրը ծիծաղում էր, տեսնելով նրանց հնարքները։

Երկու բէկերը սկսեցին հաստատել Հասան-փաշայի կատարեալ անպիտանութիւնը։ Նրանք գիտէին, որ Ջէհմի-փաշան սաստիկ թշնամութիւն ունի նրա հետ և ամեն կերպ աշխատում է բռնել նրա տեղը։

— Նախիրը մեր ձեռքից չի պրծնի. դա այնքան պարզ բան է, ինչպէս այն, որ հիմա երեկոյ է և մենք Սուլէյման-բէկի հիւրերն ենք, — շարունակեց փաշան աւելի սանձարձակ պարծենկոտութեամբ։ — Հասան-փաշան իրան էլ կը տեսնէ, մեզ էլ։ Բայց, որդիք, մի սխալ կայ ձեզանում։ Մի՛ մոռանաք, որ Մուստաֆա-փաշան ուրիշ մարդ է... Ա՛...

Նա մատը բարձրացրեց. բերանը բաց թողեց, հիացմունք և պատկառանք էր ցոյց տալիս իր ամբողջ դէմքով։

Երկու բէկերը այժմ էլ սկսեցին փառաբանել իրանց հրամանատարին. Սուլէյման-բէկը նրանցից յետ չը մնաց։ Ոչ ոք, ի հարկէ, չէր մոռանում, որ Մուստաֆա-փաշայի բարեհաճութիւնից է կախված իր բախտաւորութիւնը։ Եւ ամեն մէկն աշխատում էր, որքան կարելի է, պերճ շողոքորթութիւններ արտասանել, յոյս ունենալով որ դրանցից մէկն ու մէկը կը հասնի նրա ականջին։

— Նա խելք է, որդիք, քաջութիւն է... Մենք մի տարվայ ընթացքում չենք հասկանայ այն, ինչ նա կարող է ըմբռնել մի ակնթարթում։ Մի ահագին երկիր նուա-

ձեց նա, Սորպատականից սկսած մինչև Դարպասն, և մի՞թէ չէ հասկանում թէ ինչ պակասութիւններ կան։ Սպասեցէք, ամեն ինչ կը դրսավի։ Մեր այս բանակը, Սուլէյման-բէկ, երբ Ալլահի կամքով կը վերջացնէ իր գործը Պարսկաստանում, կը վերադառնայ և կը մնայ այստեղ, քո ձեռքի տակ։ Մի քանի թեթև գործեր կան։

Յանկարծ նա ընդհատեց իր խօսքը մի բարձր ծիծաղով, որ բոլորովին այլափոխեց նրա կերպարանքը։ Աչքերը անյայտացան կարմրած կոպերի մէջ, լայն բացված բերանում երևացին մի քանի հատ դեղնած, միմեանցից հեռու կանգնած ատամները, կզակը ցնցվում էր անզուսպ հեգնութիւնից։

—Այստեղ էլ կայ աւազակ, մի ինչ-որ գեաւուր, հա... Ասում են թէ նա միտք ունի օսմանեան պետութիւնը ամբողջովին կործանել . . .

Ծիծաղը վարակեց ամենքին, և երբ վերջացաւ, փաշան լուրջ կերպով շարունակեց.

—Մի օրը բաւական է, որդի, աւելի ժամանակ գործ դնելը մեղք է. կոչնչացնես ապուշի բոյնը. մի վրդովվիր, եթէ Ալլահը օսմանեան առիւծների առաջ մի-մի էլ արգելքներ է հանում... Ի հարկէ, նրան կը բռնես, ինչպէս բռնում են մկանը. բայց կուղարկես Գանձակ, որովհետև Մուստաֆա-փաշան ուզում է տեսնել նրան... Հիմա անյարմար է, սարերում արդէն ձմեռ է, այս էլ գիտէ փաշան... Ասաց որ պատրաստ լինես գարնանը։ Այն ժամանակ էլ կը վերջացնենք բոլոր հաշիւները այստեղի մելիքների հետ...

—Վաղո՞ւց էր հարկաւոր, բացականչեց Սուլէյման-բէկը սաստիկ ոգևորութեան մէջ։—Ես չը գիտեմ թէ ինչու են պահում այդ մելիքներին։ Քանի նրանք կան, այսեան մեզ չը պիտի ճանաչէ։ Տողի Մելիք-Աւանին տեսնողը կասէ թէ օսմանցիները նրա հպատակներն են։ Հըպարտ, գոռոզ, մեզ չէ ուզում նայել, չը գիտեմ ինչից է այդքան փքվել։ Քանի անգամ եմ ուզեցել ցոյց տալ

նրան թէ գաւառի, ոչինչ բան է նա։ Ասում են թէ շատ քաջ մարդ է։ Թո՛ղ ինձ էլ ցոյց տայ այդ քաջութիւնը...

—Ամա՜ն, Սուլէյման-բէկ, աղաղակեց Ֆէհմի-փաշան և ձեռքը դնելով բերանի վրա, ցոյց տուեց, որ չը պէտք է այդպիսի բաներ խօսել։—Քնացրու, որդի, փափուկ բարձեր դիր գլխատակին, որ ոչինչ չը հասկանայ... Բանը պէտք է լինի յանկարծակի, անսպասելի կերպով։

—Ասելը հեշտ է, բայց կուզէի տեսնել թէ մի ուրիշը ինչպէս կը համբերէր, եթէ իմ տեղը լինէր։ Այս անհաւատները, չը նայած որ քոսոտ շներ են, քիչ բան են համարում այն, որ թողնում ենք ապրել երկնքի տակ։ Ի՞նչպէս չը կատաղես։ Այստեղի մելիքի տանը ոչ ոք չը կայ. մի կին է միայն, բայց ինչ կին... Կը հաւատա՞ս, այն աւազակը սրա հրամաններով է շարժվում...

—Ի՞նչ ես ասում, բացականչեց Վէլի-բէկը։

—Հաստատ բան եմ ասում։ Ջիլանցիների կոտորածի մասին նա ինձանից շուտ լուր ստացաւ։ Աւազակը մարդ էր ուղարկել նրա մօտ, չը գիտեմ ինչ նոր հրամաններ է ուղարկել այդ կինը աւազակին. այսքանը յայտնի է, որ լրաբերին նա յետ է դարձրել մեծ զգուշութիւններով, որպէս զի ոչ ոք չիմանայ։ Եւ իրաւ, մենք չիմացանք։

Վէլի-բէկը այժմ բոլորովին կատաղեց և, ընդհատելով Սուլէյման-բէկին, դրականապէս ասաց, որ ինքը չէ հաւատում։

—Ի՞նչպէս չը հաւատալ, պատասխանեց Սուլէյման-բէկը.—այս ամենը մեզ պատմել է մելիքի կնոջ որդին, մի զզուելի տղայ, որ միայն այդ շներին է արժանի...

—Ես կը կապէի այդ կնոջը և կը տայի մեր զինուորներին, բացականչեց Վէլի-բէկը։

Իսկ նրա ընկեր Սէլիմ-բէկը աւելացրեց.

—Ապա կը մերկացնէի և հրապարակում այնքան ծեծել կը տայի, որ կը սատկէր...

Ֆէհմի-փաշան, որ առժամանակ լսում էր ջահիլնե-

րին, անհամբերութեամբ ձեռքերը միմեանց զարկեց. ամէնքը լռեցին, իսկ նա ասաց.

—Քնացրու, որդի, ամբողջ ձմեռ թող լաւ քնեն։ Մուստաֆա-փաշան քանի անգամ կրկնեց այս հրամանը. նշանակում է, նա շատ լաւ գիտէ թէ ինչ պէտք է անել։ Վկայ է մարգարէն, նա իր մատների պէս է ճանաչում բոլոր գեաւուրներին, հասկանում է որ ոչնչացնել ամէնքին մի և նոյն է թէ մի բուռը ջուր խմել։ Բայց ձմեռ է գալիս, մեր զինուորները ցրուած են գիւղերում, միմեանցից հեռու են։ Գարունը... հա՛, այն ժամանակ ինչ ուզում ես։ Եւ վստահ եղիր, որդի, դու կը լինես այդ գործի գլխաւորը։ Ես չեմ վերադառնայ, Աստուածականից ուղղակի կերթամ Տրապիզոն։ Եւ գիտեմ, իմ տեղը կը բռնես դու. այստեղ ամէն ինչ վերջացնելուց յետոյ դու փաշա ես։

Սուլէյման-բէկը մեծ բաւականութեամբ լսեց ծերունի փաշայի վերջին խօսքերը։ Խօսակցութեան առարկան մի կողմ մնաց. այժմ բէկը եռանդով շնորհակալութիւններ էր յայտնում, անթիւ բարիքներ էր ցանկանում իր մեծերին։

Փաշան շողոքորթութիւններից հալվող մարդ էր. նա շարունակ հաւատացնում էր, որ իր խօսքը հաստատ է, մինչև անգամ վկայ կանչեց իր սպիտակ բեղերը։ Նրա օգնականները նոր էին լսում այդ լուրը. նրանք Սուլէյման-բէկից պակաս չուրախացան. և հիացման, գովասանքներին վերջ չը կար։

—Միայն պէտք է Մուստաֆա-փաշայի աչքին լաւ երևալ։ Քնացրու, որդի։ Հօ այստեղ էլ մենք չը պիտի պատերազմ մղենք. բաւական է մեր զօրքերի մի փոքրիկ գրոհը... Ի հարկէ, սա չէ նշանակում թէ էգուցվանից դու կռիւ պիտի դասնաս։ Ալլահը չանէ։ Թայեան էլի քոնն է. եղիր խիստ, հսկիր. բայց մեծերը թող ըննեն, այնպէս իմանան թէ մենք գործ չունենք նրանց

հետ։ Թող... Փոթորիկից առաջ միշտ հանդստութիւն է տիրում։

Այդ միջոցին երկու մարդ ներս բերին ընթրիքը. պղնձի մեծ մատուցարանների վրա կուտած էր փլաւը, իսկ նրա շուրջը շարված էին խորոված փասխաններ։ Տանտէրը ներողութիւն խնդրեց, աղաչեց որ քիչ չը համարեն իր համեստ ընթրիքը և վերջ տուեց խօսակցութեան, յայտնելով որ ինքը երբէք չի յանդգնի դուրս գալ Մուստաֆա-փաշայի հրամաններից։

Մինչդեռ մեծերը ուտում էին, դրսում ամբողջ գիւղը կեղեքվում էր զինուորների ձեռքով։ Խուզարկվում էր ամէն մի անկիւն. ինչ որ գտնվում էր, տէրոջը չէր։

Գիւղից դուրս, խարոյկների մօտ, հաւաքվել էին բաւական թւով ոչխարներ, այծեր, երինջներ. բայց չը նայած որ գիւղից խլած պաշարը այդքան առատ էր, մինչև կէս գիշեր շարունակվում էին բնակիչների տանջանքները։

Պահանջը միայն ուտելեղէնին չէր վերաբերում։ Ամբողջ աշխարհը գիտէր, որ երբ Ալլահի զինուորները ու են գնում մի գիւղի մէջ, գեաւուրները պարտաւոր են իմանալ, որ իրանց հարստութիւնը, իրանց բոլոր գեղեցիկ բաները պատկանում են նրանց։ Ալլահի զինուորները պիտի կշտանային, և կշտանալուց յետոյ պիտի քէֆ անէին գեաւուրների կանանց ու աղջիկների հետ։

Սակայն այս գիշեր նրանք բախտ չունէին։ Աւետարանոցի մարագներում, թոնիրների մէջ և հարիւր ու մի անանուն պուճախներում թագնվել էին հարսները, աղջիկները, նոյն իսկ ջահիլ տղաները. տներում չէր մնացել գեղեցկութիւն, որ գազանային կիրք գրգռէր։ Շատերը հեռացել էին գիւղից, ծածկվել էին կալերի մօտ, ձորերում, քարերի մէջ։ Աշնանային գիշերը ցուրտ էր, բայց նրանք մի սարսափելի համբերութեամբ սպասում էին՝ անշարժ, քարացած, իրանց շունչով տաքացնում էին սառած ձեռքերը։ Այդ էր պատճառը, որ Բէջօս-

Մուխտարը շարունակ վազվզում էր, բայց օգուտ չէր տեսնում։

Որսկան շան հոտառութիւնը այս անգամ կատարեալ տանջանք էր դառել Սամսունի մեծ վաճառանոցի ներկայացուցչի համար։ Նա գիտէր որ պիտի լինի որս, ճանաչում էր իւրաքանչիւր տուն, ուր «լաւ կտորներ» կային։ Այս գիշեր նա շատ առատաձեռն էր, անդադար պարպում էր իր գրպանները, փող էր բաժանում զինուորներին և ուղարկում էր նրանից իր նշանակած տները։

Բայց ամեն տեղ մի և նոյնն էր կրկնվում։ Նա մընում էր դրսում, ծածկվում էր, իսկ զինուորները ներս էին մտնում, ջարդում էին տան մէջ եղածներին, բայց սրանց բերանը չէր բացվում. և ոչ ոք տեղից չը վերկացաւ, որ իր գլուխը ազատելու համար ցոյց տայ թագցրած գանձը։ Մի քանի տներ, ուր կային շատ լաւ կտորներ, այդ գիշեր մի քանի անգամ ենթարկվեցին զինուորների բռնութեան, բայց էլի դիմացան, պինդ պահեցին իրանց գաղտնիքը։

Մուխտարը զժվում էր այդ՝ նմանը չը տեսած անաջողութիւնից. իւրաքանչիւր դռուշ, որ նա տալիս էր զինուորներին, աւելի և աւելի գրգռում էր նրա ագահութիւնը։ Նա պատրաստ էր ընդունել նոյն իսկ աւելի աննշան որս։ Բայց ովքեր էին մի-մի դուրս գալիս նրա առաջ։ Այս կիսամեռ դժբախտները, որոնք ազատվել էին երեք գիւղերի կոտորածից և եկել էին հաց որոնելու։

Դրանք չէին թաղնվել. և ինչ հարկաւոր էր։ Երբ մարդը ցաւերի անդունդն է գլորվել, նա այլ ևս կիրք չէ շարժում։ Մարդու մարմինը ուտելու, գզգզելու կըտոր է միայն այն ժամանակ, երբ ծածկված է փայլուն հագուստի տակ. իսկ երբ նա բաց միս է, և արև, քամին ու ցուրտը անարգել շօշափում են նրան, դրոշմելով նրա վրա մոյգ-դեղին պղնձի գոյն, այն ժամանակ նա միայն զզուանք է պատճառում...

Բայց մեծ է ուղղահաւատների մարգարէն. աւելի

մեծ է ուղղահաւատների Ալլահը, իսկ այս աշխարհում մարգարէի ստրուկը և Ալլահի ստուերը փադիշահն է։ Նրա զօրքերը դեռ երկար ճանապարհ ունէին. դեռ շատ գիւղեր կային նրանց առաջ և Մուրադ-աղայի խոնարհ սպասաւորը յոյս ունէր, որ գեաւուրները ամեն տեղ այնքան զգոյշ և խորամանկ չէին լինի, ինչպէս Աւետարանոցում։

Այդ յոյսով էլ նա միւս օրը ճանապարհ ընկաւ զօրքերի հետ։

Առաւօտ էր. դեռ արեգակ չը կար։ Աւետարանոցից դէպի հարաւ տանող ճանապարհը երկար տարածութեան վրա բոլորովին սևացած էր. նա շատ էր նեղ ու անձուկ, և մարդկանց անհամար խմբերը կուտվում էին միմեանց վրա, սաստկացնում էին իրարանցումը. բանակի աղմուկը լցրել էր բոլոր ձորերը և խուլ արձագանքներ էր տալիս սարերում։

Մուխտարը այդ ալէկոծված ծովի մէջ հեշտութեամբ գտաւ իրան յարմար տեղ. դա վերջապահ խումբն էր, որի հետ գնում էր Ֆէհմի-փաշան։ Այդտեղ էր և Սիւլէյման-բէկը։ Երբ, վերջապէս, բաւական հեռացաւ բանակի ժխորը և հրամանատարը ճանապարհ ընկաւ, Մուխտարը առաջ քշեց իր ձին և ամեն կերպ աշխատում էր արժանանալ փաշայի ուշադրութեան։ Բայց փաշան այս առաւօտ միայն Սիւլէյման-բէկին էր տեսնում։

Երկուսն էլ հիացած էին միմեանց վրա։ Բէկի հիացմունքը սկսվել էր երէկ երեկոյեան, այն րոպէից, երբ ծերունի փաշայի բերանից լսեց թէ ինչ փառք է իրան սպասում։

Իր որդիական յարգանքը և շնորհակալութիւնը նա յայտնեց նրանով, որ ընծայեց փաշային իր սեփական գեղեցիկ նժոյգը։ Իսկ առաւօտեան, ճանապարհ ընկնելուց առաջ, մատուցեց նրան մի քսակ ոսկի, այն՝ որ ստացել էր Բէօսա-Մուխտարից։ Եւ փաշան չէր կշտանում նրա հետ խօսելուց։ Երկար ճանապարհ գնացին նրանք,

բայց քաղցր խօսքը անհատնում էր։ Վերջապէս եկաւ և հրաժեշտի ժամը։

Խումբը կանգ առաւ, իսկ Ֆէհմի-փաշան ոչինչ պատիւ չը խնայեց իր «որդուն»։ Վերջը նա բացականչեց.

—Այժմ Ալլահը քեզ հետ, Սիւլէյման-փաշա։

Դա չափազանցութիւն էր։ Որքան դուրեկան և ցանկանալի լինէր այդ տիտղոսը, որ առաջին անգամ էր կըպչում Սիւլէյման անուան, բայց բէկը շփոթուեց, կարծես վիրաւորանք զգաց։

—Մի նեղանար, որդի, ես երեխայ չեմ և շատ լաւ գիտեմ թէ ինչ եմ ասում։ Ինձ համար մեծ բախտ է այն, որ ես առաջին անգամ, այսքան մարդկանց մէջ, քեզ անուանում եմ փաշա։ Այն ժամանակ, երբ ամէնքը կանուանեն քեզ այդպէս, ես հեռու կը լինեմ այս տեղերից, նըստած իմ տանը, ծովի ափին։ Ուրեմն էլի ասում եմ. Ալլահը քեզ հետ, Սիւլէյման-փաշա . . .

ԻԳ.

Բէկի հետ վերադառնում էր նրա միակ թիկնապահը, տասնապետ Ահմէդը։ Բայց յանկարծ փաշայի խըմբից բաժանուեց Քէօսա-Մուխտարը և ձիու գլուխը յետ դարձրեց։

Նա փոխեց իր միտքը. այժմ նրա տկլոր դէմքի վրա երևում էր կատարեալ տհաճութիւն։

Երկար ժամանակ նրա ձին գնում էր Ահմէդի ձիու հետ. բայց նա չէր խօսում, մինչդեռ ծերունի զինուորը յաճախ դիմում էր նրան։ Չը կարողանալով թագցնել իր ներքին գոհունակութիւնը, նա հիացած նայում էր բէկին և ասում.

—Փաշա՜... նա ծնված է փաշայութեան համար . . .

Բարեհոգի զինուորի այդ անկեղծ տիրասիրութիւնը, վերջապէս, այնքան ձանձրացրեց Մուխտարին, որ նա ստիպված եղաւ առաջ ընկնել. բէկի և Ահմէդի մէջ

բաւական տարածութիւն կար և այդ տարածութեան կէսում պահվում էր Մուխտարի ձին։

Իսկ բէկը շատ քիչ էր յետ նայում։ Փառասիրութիւնը, որ յատուկ է այդպիսի կատաղի բնաւորութիւններին, լիուլի յագուրդ էր ստանում նրա առաջ բացված մօտիկ ապագայից, վառում էր նրա մէջ հպարտութեան կրակները։ Իսկ վերևից արեգակը թափում էր նրա վրա վերին աստիճանի ախորժելի լոյս։

Օրը թէև պարզ, բայց ցուրտ էր։ Ճանապարհը անցնում էր ծմակների միջով, որոնք դեռ բոլորովին չէին չորացել վերջին անձրևներից։ Մի-մի երբ ճանապարհը բարձրանում էր թումբի գլուխը, կամ դուրս էր գալիս մի բաց տեղ, լեռնային աշխարհը իր հարիւրաւոր հսկայական տեսարաններով փռվում էր աջ ու ձախ, գեղեցիկ, պայծառ լոյսերով ողողված։ Հեռու, հեռու ընկած էին սարերի շղթաները, որոնք արդէն ծածկված էին ձիւնով։ Այդ ձիւնեղէն բարձրութիւններն էին այսպէս ցրտացնում աշնան վերջի այս պարզ օրը և այնքան քաղցրացնում էին արևի ջերմութիւնը։

Մի տեսակ ծուլութիւն, դանդաղութիւն էին թափում առատ և մեղմ ճառագայթները. և բէկի ձին քայլում էր հանդարտ, կարծես ինքն էլ զգում էր թէ որքան հաճելի է այդ արևի մէջ երկա՜ր, երկա՜ր գալը։ Երբեմն ճանապարհի վրա երևում էին գիւղացիներ, հատ-հատ կամ խմբերով։ Հէնց որ նրանք նկատում էին եկող ձիաւորին, խայթվածի պէս վազում էին դէպի իրանց էշերը և ջուխտ ձեռքը դնելով նրանց գաւակի վրա, հրում էին, մի ակնթարթում հեռացնում ճանապարհից, իսկ իրանք կանգնում էին նրանց կողքին, ձեռքները դնում էին իրանց կրծքին և խոնարհ գլուխ էին տալիս բէկին։

Մի մեծ ձորի կողքով իջնելիս, նա յետ նայեց, տեսաւ Մուխտարին և կանչեց.

—Ինչո՞ւ չը գնացիր։

Մուխտարը ձին առաջ քշեց, հասաւ նրան։

Մի ակնթարթում նա այլափոխվել էր. այլ ևս ձևա-ներ հաշւող և մեծ վաստակի սպասող վաճառականի ուրախութիւնը չէր նրա դէմքի վրա, այլ փոքրաւորի սովորական շողոքորթ կերպարանքը։

—Ինչո՞ւ վերադարձար, ասաց բէկը.—այնտեղ, զօրքի մէջ, քո բանը լաւ կը լինէր։

—Անյարմար էր, էֆէնդի։

—Ինչո՞ւ։

Մուխտարը մի լիրբ ժպիտով պատասխանեց.

—Ես նոր հասկացայ մի հասարակ ճշմարտութիւն. ոչ ոք ձեռքից բաց չէ թողնում փախածը, որ ծառը բռնէ։

—Փախածը... Ի՞նչ է դա նշանակում։

Պատասխանի փոխարէն նա ցոյց տուեց Աւետարանոցի կողմը և դէմքի մի շարք ճարտար ծամածռութիւններով հասկացրեց թէ ով է փախածը։

Բէկը շարժվեց թամբի վրա, մի խիստ հայեացք ուղղեց դէպի իր խօսակիցը. իսկ նրա ձին, զգալով իր տիրոջ անհանգստութիւնը, գնաց արագ քայլերով։

—Ի՞նչ... Դու էլ տեսար նրան։

—Միայն կոյրը չի տեսնի այնպիսի բանը...

—Բայց լաւ էր, եթէ դու այս դէպքում կոյր լինէիր։

—Ինչո՞ւ, էֆէնդի։

—Նրան տեսնելուց օգուտ չը կայ։

—Այդ Աղլահը գիտէ։

—Ո՛չ, ես էլ գիտեմ։ Նա քոնը չէ։ Նա—իմն է...

Քէօսա-Մուխտարը վաղուց սպասում էր այդ սարսափելի խօսքերին։ Այդ պատճառով գլուխը չը կորցրեց, այլ խելքն հանգիստ ձայնով արտասանեց պատրաստ պատասխանը.

—Նա քոնն էլ չէ, էֆէնդի։ Նա նշանած աղջիկ է...

Բէկը և՛ ծիծաղեց և՛ բարկացաւ։ Նրան արդէն չափազանց էր այն հանգամանքը, որ այդ մարդը գիտէ ամէն ինչ։

—Նշանած, կրկնեց նա։—Ո՞վ ասաց։

—Երկու օր ես քարշ եմ եկել ամրոցի պատերի տակ և հազիւ այդքանն եմ իմացել։

—Բայց իմացե՞լ ես և այն, որ եթէ Սիւլէյման-բէկն ուզէ, նշանածը մի կողմը կը մնայ։

—Երևխայ չեմ, էֆէնդի, որ այդքան պարզ բանն էլ չը հասկանամ։ Բայց դու չես անի այդ բանը։

—Ինչե՞ր ես ասում...

—Հասկանալի է։ Դու այս երկրի գլխաւորն ես և չը պիտի գործես անարդարութիւն...

—Անարդարութի՞ւն է, եթէ ես մի հայ աղջիկ առնեմ գեաւուրներից։

—Աղլահը չանէ։ Եթէ հինգը, քանը առնես, անարդարութիւն չէ, էֆէնդի։ Այն աղջիկը պիտի շատ բախտաւոր համարէ իրան, եթէ քո հարէմում պատսպարան գտնայ. դու և նա—նշանակում է երկինք և երկիր։ Բայց չես ճանաչում գեաւուրներին։ Այդ անհաւատ շները շատ մեծ կարծիք ունեն իրանց մասին. գլուխդ կը ցաւացնեն, կը գնան Գանձակ, կը գանգատվեն, լաց կը լինեն, մինչև որ փաշայի դահլէն կը տանեն։ Ուժով, ի հարկէ, ոչինչ չեն համարձակվի անել, բայց շատ պէս գաներ մաչելով, ազաչելով մի բանի կը հասնեն։ Էֆէնդի, ես չեմ հասկանում թէ ինչու այդ շները մնում են աշխարհում։ Ուրիշ բան կը լինի, եթէ աղջիկը Մուրադ-աղայի աղբանքը գտնայ։ Նա կը կորչեմ այս կողմերից, օր ու գիշեր կը փախչեմ, իսկ դու մարդիկ կուղարկես ամէն կողմ, ինձ փնտռել կը տաս և, ի հարկէ, կառես որ ոչինչ չեգաւ։ Ժամանակ կանցնի և ամէն ինչ կը մոռացվի. աղջիկը կը առնէ մի մեծ մարդու, գուցէ նոյն իսկ փաշիշահին, կիմանան ամէնքը, որ դու ես ուղարկել... և փոխարէնը դու կը ստանաս...

Նա չը համարձակվեց լրացնել գինը, որովհետև բէկը, սաստիկ վրդովված, բռնեց իր սրի կոթը, և ձիու գլուխը դարձրեց դէպի նրա կողմը։ Այդ առևտուրը գի-

պաւ նրա կրքերին, որոնք այրվում էին նրա մէջ այն րոպէից, երբ տեսաւ Գայիանէին։ Նրա աչքերը սոսկալի էին. այդ րոպէին նրա մէջ գործում էր այն յանդգնութիւնը, որ մի ժամանակ տարել էր նրան մինչև սուլթանի հարէմը։ Եւ եթէ այժմ նրա առաջ կանգնածը ինքը, ուղղահաւատների խալիֆը լինէր, նա դարձեալ չէր կարող զսպել այդ կրքերը։

Նա մռայլ, ինչ-որ հայհոյանք արտասանեց։ Իսկ Մախտարը չը փախաւ, այլ, ընդհակառակն, ցոյց տուեց որ իր շահը հասկացող վաճառականը վտանգաւոր ժամին նոյնպէս անձնազոհ է և անվախ, ինչպէս բարեխիղճ զինուորը պատերազմի դաշտում։

—Խփիր, էֆէնդի, մի խնայիր, եթէ ծառադ մեղաւոր է, — ասաց նա մի զարմանալի վճռական ձայնով և շարունակ նայելով բէկի աչքերին։—Իմ վիզը կտրելը նոյնքան դժուար կը լինի քո սրի համար, որքան մի ծտի վիզ կտրելը։ Բայց գոնէ իմ տէրը կխնայ . . .

—Ծտի վիզ, բայց կաշաղակի յանդգնութիւն, — նորից մռնչաց բէկը։

Իր կատաղութիւնը նա թափեց իր գեղեցիկ ձիու վրա, մտրակի մի սաստիկ հարուած իջեցնելով նրա կողքին։ Ձին առաջ նետվեց, բայց նրան պահեց սանձը, որ մի ձեռքով բռնած էր ձիաւորը։ Եւ նա դէս ու դէն ընկաւ, պտոյտներ գործեց, աշխատելով գտնել յարմար րոպէն, երբ կարող էր նետի պէս թռչել։

Սիրուն արևի տակ այդ տեսարանը հիացում էր պատճառում տանտիկին Անմէլին, որ հեռուից դիտում էր երկու ախոյեաններին և մեղմ ծիծաղում։ Կատուն կռւում էր գայլի դէմ. հին զինուորի մէջ հրճուանքի արտասունք զգացողը գայլն էր, այն համարձակ, կորովի տղամարդը, որի իւրաքանչիւր շարժուածքը, որի ձիու զսպված կատաղութիւնը կարող էր արժանապէս գնահատել միայն նա, ով մազերը սպիտակացրել է կռիւների մէջ։

Բայց կատուն էլ պակաս չէր. այդ չորացած կմախքը, որ կարծես, կը փշրվէր մի հատ հարուածից, զիջողութիւն չէր անում, այլ գնում էր իր դաժան հակառակորդի դէմ։

Տարօրինակ հակառակորդներ. մէկի հայեացքը կրակ էր թափում, իսկ միւսը հակադրում էր այդ կրակին հարէմական մեղկութիւնից հանգած մի խեղճ հայեացք . . .

Եւ ինչ զարմանալի առիթներից է առաջանում պայքարը մարդկանց մէջ. վէճը մի հատ ոսկի վրա էր, որ դեռ չէր էլ բռնված։ Վիճողներից մէկն ուզում էր նրան իր սեփական անձի հաճոյքների համար, իսկ միւսը աշխատում էր խլել, տանել ուրիշների համար, ներկայացնում էր անյայտ, պատահական մարդկանց կրքերը, ախորժակը։

Երկուսն էլ յափշտակողներ էին. մէկը համարձակ, ուժեղ, ուղիղ յարձակվող, իսկ միւսը ստորաքարշ էր, թաքնվող, բայց աներես. կարողութիւնից զուրկ, բայց յենված մեծաւորների հեղինակութեան... Ո՞վ կը յաղթէր։

Ճանապարհը շարունակ դէպի բարձր էր գնում։ Բլուրների ետևից դուրս եկաւ Աւետարանոցը. նա հանդարտ տարածվում էր արևի տակ. երդիկների ծուխը մի նուրբ կապոյտ շղարշի պէս անշարժացել էր նրա վրա, խաղաղ ու մաքուր օդի մէջ։

Բէկի ձին այժմ մոռացել էր իր կերած հարուածը և զգալով, որ իր տէրը այլ ևս կատաղած չէ, քայլում էր հանդարտ։ Քէօսա-Մախտարը մի զարմանալի աներեսութեամբ նորոգեց խօսակցութիւնը. նա լաւ իմացաւ որ բէկը զիջում է։

—Գոնէ իմ տէրը կխնայ, որ ես զոհվեցի նրա համար... Բայց ոչ, ինչու՞ նրա համար... Նա չէ ուղարկել ինձ այստեղ. նրան պատուիրել են ուղարկել, թող իմանան պատուիրողները և այնուհետև . . .

—Ի՞նչ պիտի անեն, հարցրեց բէկը հպարտութեամբ։

—Այն ժամանակ, էֆէնդի, փաշայութիւն շուտ կը ստանաս, շատ շուտ։

Նրա բախտն էր, որ բէկը երէկվանից անձնատուր էր եղել փաշա դառնալու մտքին. այդ պատճառով նա թէև տեսաւ Մուխտարի լիրբ ծիծաղը, բայց պահեց իրան։ Կատուն կապեց գայլի բերանը. նա մի ակնթարթում հասկացաւ որ բռնել է գայլի կոկորդից և սկսեց աւելի խոր խրել իր ճանկերը։

—Ֆէհմի-փաշայի խօսքը հաստատ էր, էֆէնդի, ասաց նա։—Այստեղի համար վճռված բան է, որ դու փաշա ես։ Իսկ Ստամբօլը։ Դու լաւ գիտես որ այնտեղ ոչինչ չի լինի առանց միջնորդի, առանց բարեխօսի և ընծաների։ Այնտեղ բարեկամ և հովանաւոր չունես, իսկ ծախել քեզ կարող է ամէն մէկը. բաւական է որ իմանան, թէ դու մահվան դատապարտված էիր և փախել ես բանտից, իսկ այստեղ թոյլ տուիր որ կտորեն մուսլիմաններին... Մի հատ բարեկամ ունես միայն և դա Մուրադ-աղան է, բայց ինչ արած, նրան չես ուզում...

—Ո՞վ ասաց...

Այս հարցը ցոյց տուեց, որ բէկը նորից ընկել է այդ մարդու ցանցի մէջ։

—Ուրիշ ինչ պիտի հասկանայ նա, եթէ լսէ որ դու սպանեցիր նրա ծառային, որ քո ծառան էլ է...

—Ոչ, ես քեզ չեմ դիպչի, միամիտ մնացիր... Բայց այն աղջիկը իմն է։ Դու գտիր ուրիշներին, հօ այս երկիրը չէ քանդվել։ Սպասիր մինչև գարուն և տես ինչ լաւ գործ կանենք։ Գարնանը մենք պիտի ոչնչացնենք ամէն ինչ։ Ռայեան մեր ոտների տակ կը լինի. Դիզակն ու Վարանդան ինձ են յանձնված. գեաւուրներից մի հատ մեծ մարդ, մի հատ մէլիք չի մնայ...

Նա յանկարծ լռեց, յանկարծ հասկացաւ, որ չը պիտի յայտնէր այս մարդուն այն, ինչ Ֆէհմի-փաշան հաղորդել էր իբրև գաղտնիք։

Մուրադ-աղայի բարեկամութիւնը վստահելու հա-

մար այդքանն էլ բաւական էր. զգուշութիւնը հարկադրեց կանգ չառնել ծրագրի մանրամասնութիւնների վրա։ Բայց Բէօյու-Մուխտարի ականջներին հարկաւոր չէին երկար ու բարակ բացատրութիւններ. նա իսկոյն հասկացաւ և բացականչեց.

—Օրհնած է Ալլահը և միակն է նրա մարգարէն. անհաւատներից շուտով մի հատ էլ չի մնայ։

Նա դարձրեց երեսը դէպի երկինք, կարծես փառք էր տալիս։ Ապա, վերադառնալով իր գործին, յանկարծ փոխեց խօսքը.

—Գոնէ մի շնորհ արա, էֆէնդի։

—Ի՞նչ ես ուզում։

—Ծախիր այդ աղջկան Մուրադ-աղայի վրա։ Այսինքն առաջ քոնը լինի, յետոյ մերը։ Գինը որքան ինքըդ կուզես...

Այս առաջարկութիւնը Մուխտարը արաւ մի կատարեալ յանդգնութեամբ։ Նա գիտէր որ թիւրք պաշտօնեաներին խորթ չէ այդ տեսակ առևտուրը, գիտէր որ ոսկին շատ անգամ է կուրացնում նրանց և զրկում նոյն իսկ անձնական հաճոյքներից։ Բայց չիմացաւ, որ բոլոր մարդիկ մի տեսակի չեն։

Սուլէյման-բէկին չէր կարելի առաջարկել այդպիսի առևտուր։ Նա իր հայրենի բնութիւնից և երկար տարիների արկածախնդրական թափառումներից ստացել էր մի ահագին անձնասիրութիւն, որ հաւասար էր նրա մէջ եղած քաջութեան և անվախութեան։ Վայրենի, անսանձ հակումների գերի, նա երբէք չէր հաշտվել այն մտքի հետ թէ տղամարդը կարող է ծախել իր զէնքը, ձին, որսկան շունը և կնոջը։ Նուիրել, սպանել, տանից դուրս շպրտել նա կարող էր, իսկ փողով ուրիշին տալ—այդ մի այնպիսի ստորութիւն էր, որ նրա զզուանքն էր յարուցանում։

Այդ էր պատճառը, որ նա այլ ևս չը կարողացաւ պահել իրան և աղաղակեց.

—Կորիր, քանի գլուխդ վրադ է. կորիր և փառք տուր, որ Մուրադ-աղայի ծառան ես...

Մտրակը բարձրացաւ, բայց ձին չը սպասեց հարուածին, առաջ թռաւ։ Իսկ Մուխտարը չը համարձակուեց գնալ նրա հետ, ձգեց ձիու սանձը և կանգ առաւ։

Վերջին միջոցն էր նա փորձել։ Բայց յուսահատուած չէր. ընդհակառակը, նայելով նրա ետևից, ծիծաղեց և ասաց.

—Տեսնենք... ես, թէ դու...

Նա գնաց դէպի Անմէզը և, ուշադրութիւն չը դարձնելով նրա տուած հարցերին, ասաց.

—Ինձ հարկաւոր է այն գեաւուր աղջիկը, որի հետ դու սիրում ես խօսել։

—Ո՞րը։

—Նա, որ իր մօրն է որոնում։

—Խէնթը։

—Խենթը։ Ե՞րբ կը տեսնենք նրան։

—Հեշտ է, հէնց այսօր։

—Ես կը սպասեմ քեզ։

Անմէզը գլխով հաւանութեան նշան արաւ և խփեց իր ձիուն։

Իսկ Բէօսա-Մուխտարը չէր շտապում։ Նրան կաշկանդել էր մի ինչ-որ բարդ ծրագիր, որ դեռ խառն էր, որի մէջ դեռ բոլորովին պարզ չէր գործունէութեան եղանակը։ Ձին էլ ենթարկուել էր տիրոջ տրամադրութեան և հազիւ էր փոխում իր քայլերը։ Այդ լաւ էր. հեծեալը դառնում էր հանդարտ, կշռում էր ամեն մի հանգամանք. լաւ էր և արեգակը, որ իր քաղցրիկ ջերմութեամբ շոյում էր նրա մէջքը, տալիս էր համարձակութիւն, եռանդ էր ներշնչում։ Նրա աչքերը շարունակ յառած էին մէլիքի ամրոցի վրա, որ ցցուած էր ժայռի գլխին և այստեղից, ձորից, երևում էր կապոյտ երկնքի մէջ խրուած։

Այնտեղ էր նրա միտքը. այնտեղ կար մէկը, որի համար նա ծրագիր էր պատրաստում։

Խեղճ Գայիանէ, խեղճ գեղեցկուհի։ Երեք մարդ միաժամանակ այրվում էին նրան տիրանալու մտքից։ Մէկը խաչէնցի երիտասարդն էր, նրա ջարդված սէրը. միւսը վայրենի բռնակալն էր, հայրենի երկրի դաժան պատիժը, որին նա ատում էր ամբողջ սրտով. իսկ երրորդը գծուծ, զզուելի վաճառականն էր, որի մասին նա լսել էր։

Երեքին էլ նա դրել էր իր աչքերի կրակով, իր արհամարհանքով, որ այնքան հրաշալի էր նրա դէմքի վրա։ Բայց ինչպէս պիտի դիմադրէր, քանի որ նրա զէնքը միայն նոյն այդ կրակն էր...

ԻԳ.

Կողոպտուած գիւղը իր ցաւերի մէջ չը կարողացաւ անտես անել այն չարագուշակ լուրերը, որոնք յանկարծ սկսեցին դուրս գալ մէլիքի ամրոցից։

Շատերը գիտէին, որ այնտեղ ինչ-որ վատ բան է կատարվում։ Թէև տեղեկութիւնները դեռ կցկտուր էին, բայց ամբոխը կարկատում էր նրանց, միացնում իր անորոշ դատողութիւնների օգնութեամբ։

Կոյս Հեղինէն կատարել էր իր սպառնալիքը. բայց դրա հետ միասին նա երես դարձրեց մէլիքի տանից, երբ հասկացաւ, որ Գայիանէի «անամօթութեան» հետ միացել է նրա մօր յիմարութիւնը։ Հեղինէն հրամայել էր Աննա-խաթունին, որ այլ ևս կարգին բան չը սպասէ իր աղջկանից. հրամայել էր կէս-գիշերին վեր կացնել անամօթին, մազերից քաշելով տանել, դցել կուսանոց, թագուն կատարել պսակի կարգը և իսկոյն ճանապարհ դընել Թաշէն։

Աննա-խաթունը չը կարողացաւ մի վճռական պատասխան տալ։ Նա դէմ չէր, որ Գայիանէին խրատեն, ինչպէս ուզում են, բայց կար մի և նոյն կարծիքը— ինչ կասեն խաչէնցիները։ Հեղինէն բարկացաւ այդ յի-

մար հպարտութեան վրա և յայտնեց, որ այնուհետև ինքը միմիայն Մէլիք-Աւանի հետ կը խօսէ։ Աննա-խաթունն էլ հէնց նրան էր սպասում։ Բայց միթէ անաստուածութիւն չէր. մի այսպիսի ժամանակ մէլիքը էլի գնացել էր Գանձակի կողմերը...

Այրին այնքան յուսահատված էր, որ սկսել էր նոյն իսկ անիծել իր եղբօրը...

Այսպիսի լուրեր այժմ հեշտ էին դուրս գալիս ամրոցից։ Ջալալը փորձում էր բոլոր միջոցները. իսկ դըրանցից մէկն այն էր, որ նա վերջին օրերում դրսում էլ չէր թաքցնում թէ իրան զրկում են, ոչինչ են համարում։ Յանդիմանում էր բոլոր վարանդացիներին, զարմանում էր թէ այդ ինչ տեսակ երկիր է, ուր ոչ ոք չէ խօսում, տեսնելով որ կինը տղամարդուն ճանապարհ է ցոյց տալիս։ Հայրական կարգերը ոտի տակ են տալիս և չըկայ մէկը, որ ասէ թէ դա վատ բան է, թէ աշխարհը աչք ու ականջ ունի և չի թոյլ տայ, որ ամեն մէկը ինչպէս ուզում է, այնպէս լինի։ Միթէ այդ տեսակ ժողովուրդ կայ...

Ժողովուրդն ընդունում էր, որ այդպէս է, բայց ծպուտ հանել չէր համարձակվում, որովհետև արդէն հասկացել էր, որ այդ գործի մէջ կայ Սուլէյման-բէկը, և խօսել հայրենի կարգերի մասին, կը նշանակէր գնալ բէկի դէմ։ Այդ կարծիքը կազմվում էր այն շշուկներից, որոնք հաւատացնում էին թէ մէլիքի տան բոլոր անկարգութիւնների պատճառը մէլիքի աղջիկն է... Գայիանէն, այն խելօք, համեստ աղջիկը, որ Մէլիք-Յուսէփինի պարծանքն էր։ Ամէնքը յիշում էին քահանայի սպանութեան օրը, երբ նա դուրս եկաւ պատի գլուխը և բաց գլխով նայում էր ամբողջ հանդէսին։ Հէնց այդ օրվանից էլ նա սառաւ իր նշանածից... Հասկանալի էր։

—Խե՜ղճ Մէլիք-Յուսէփն... եթէ կենդանի լինէր և այժմ տեսնէր իր աղջկան։

—Նա չէր դիմանայ. նրա սիրտը կը ճաքէր...

—Չէ՞ք ճանաչում մեր մէլիքին... Նա իր ձեռքով կը սպանէր իր աղջկան...

—Եւ լաւ կանէր... Ի՞նչ գեղեցիկ տղամարդ է խաչէնցին. կատարեալ կաթն ու արիւն՝ խառնված իրար հետ։ Իսկ բէ՞կը։

—Կամաց խօսիր։ Բէկը նրա մօտ մի սև սատանայ է, թէև այնքան վախ ազդող տղամարդ է...

—Հա՛, բայց արի տես, աղջիկը...

—Սիրտը երբ կպչում է, ոչինչ չես անի... Սուտ չեն ասում, որ մի աղջիկ մի ժամանակ սիրահարվել էր գոմշի չորացած կաշու վրա...

—Բայց թիւրքին, անօրէնին...

—Ա՛յ տղայ, կամաց, լսող կը լինի... Տնաշէնը կարծես աշխարհից տեղեկութիւն չունի։

—Է՛հ, որ լաւ միտք անէք, չէք ցաւի... Հաշւեարէք, տեսէք քանի-քանի աղջիկներ և հարսներ են փչացրել թիւրքերը, քանիսն են տարել...

—Բայց իր կամքով, իր սրտով գնալ... Խայտառակութիւն է...

Այսպէս էր դատում ամբոխը պատերի տակ, կտրած անկիւններում։

Փէրին ականջ չէր դնում այդ փսփսոցներին։ Բայց եթէ աւելի պարզ լինէր մարդկանց խօսքը, եթէ գըտնվէին այնպիսիները, որոնք առանց քաշվելու, առանց վախենալու ասէին այն, ինչ հասկացնել էին ուզում կիսատ-պռատ ակնարկներով, պառաւը դարձեալ չէր հասկանայ թէ ինչու մէլիքի դռները փակվեցին իր առաջ։

Այդ բանը տեղի ունեցաւ յանկարծ, անսպասելի կերպով, չընայած որ Փէրին հասկացնում էր թէ մի խումբ խեղճեր կոչնչանան, եթէ Գայիանէն չիմանայ նրանց ցաւերը։

Ջուղեցին լռել. մարդիկ բարացել էին... Իսկ աղբանոցի անկիւնում միմեանց վրա թափվել էին անտէր որբեր, կիսամեռ մայրեր, վշտից ցնդված պառաւներ։

Եւ դրանց յոյսը Փէրին էր, նա, որ ապրում էր ուրիշի տուած հացով։

Ի՞նչ անէր նա։ Դանակը հասաւ ոսկրին. նա գնաց գիւղ, խնդրեց, աղաչեց—չը լսեցին. գնաց մէկէքի տուն—դռները փակեցին...

Արեւը վերջանում էր, իսկ երեկոն սառցնող շուաքներ էր տարածում, երբ աղբանոցի բնակիչները վերադարձան գետի ձորից։

Բութ ու անզգայ թշուառութիւնը կանգ չառաւ. նա մրսում էր, վազեց դէպի բարձր, ցրվեց աղբանոցի լանջի վրա։ Ամեն մէկն սկսեց իր համար մի կտոր արեւ որսալ։ Արեւի դժգոյն շերտերը, որոնք դեռ մնում էին այդ բարձրութեան վրա, մի ակնթարթում բաժան-բաժան դարձան, մերկ մարմինները ագահութեամբ կլանում էին երկնքի աղքատիկ ջերմութիւնը, վայելում էին հաճելի վայրկեանները։

Բայց միայն վայրկեաններ, որովհետեւ արեւը անխիղճ էր, շտապով հաւաքում էր իր ճառագայթները և դէպի բարձր էր գնում։ Նրա հետ վազում էին և մերկերը. շուտով ամենքը հաւաքվեցին թմբի գլխին, ուր մի փոքրիկ, կարմրագոյն շերտ մնաց. նա դանդաղկոտ էր, չէր մարում. որքան գրաւիչ էր... Տեղի ունեցաւ մի խռարանցում. ամեն մէկն աշխատում էր շատ արեւ խլել, կանգնելով լաւ տեղում։ Բայց այստեղ էլ իրաւունքը ուժեղին էր պատկանում. և զրկվածների հեծեծանքները դեռ չէին վերջացել, երբ կարմրագոյն շերտի վերջին շողերն էլ վերացան, կորան, իսկ համատարած ստուերը սկսեց սառցնել ամեն ինչ, որ ընկած էր երկնքի տակ։

Մերկութիւնը ցած իջաւ. նա էլի դողում էր, էլի կարօտ էր տաքութեան...

Եւ այժմ, երբ նոյն իսկ արեւի մի հատ շողի չափ փոքրիկ բան էլ չը կար, որ մխիթարէր, շոյէր նրանց, կէս ժամ առաջ կատարված գործը կամաց-կամաց գլուխ բարձրացրեց, ընդունեց մի զարհուրելի ուրուականի

կերպարանք, որ ահ ու սարսափ էր տարածում։ Ամենից շատ նա տանջում էր Փէրիին։

Կէս ժամ առաջ տնակի բնակիչներից կազմվեց թաղման հանդէս, որ լուռ, զգուշութեամբ, կարծես մի մեծ յանցանք գործելով, մի դիակ տարաւ դէպի ձորը։

Դագաղի պաշտօն կատարում էր կապերտի մի փոքրիկ կտոր, որի մէջ գիշերը Փէրին փաթաթում էր Մարթային։ Իսկ մնացածը երկար հասակի տէր կին էր։ Վեց հոգի բռնել էին կապերտի ծայրերից, գնում էին, իսկ դիակը ծանր կերպով երերվում էր. ցնցոտիները, որոնք չէին ծածկում նրա ամբողջ մարմինը, քարոզում էին որ դա կոտորածից ազատվածներից մէկն է։ Կապերտի երկու ծայրերից կախ էին ընկել նրա գլուխն ու ոտները, որոնք փայտի կտորների պէս ճօճվում էին։

Դա այն կինն էր, որ անդադար խորովվում էր ցաւերի մէջ, որի աչքերին քուն չէր մօտենում։ Դեռ ջահիլ էր նա. Թիւրք գիւղացի ձին նրան կոխկռտել էր այն միջոցին, երբ նա ծունկ չոքած՝ աղաչում էր կոտորողներին խնայել իր երեխային։ Երեխան սրի մի հարուածով երկու կէս դարձաւ և այդ բոլորը տեսաւ մայրը, թէև արդէն ջարդված, արիւնաթաթախ դիակ էր։ Եւ լաւ եղաւ. գոնէ այդպէս Անուշն ազատվեց իր երեխայի դահիճների ձեռքն ընկնելուց։

Նա մեռաւ երէկ. ոչ պատ անկիւն կար, ուր ընկնէր դիակը, ոչ մի չոր կտոր, որ ծածկէր տանջանքների մէջ սառած դէմքը։ Նրա շուրջը, մի անձուկ տեղ, ապրում, շարժվում էին նրա նմանները, որոնք դիպչում էին նրան, անդադար կոխ էին տալիս նրա ձեռքերը, ոտները, նոյն իսկ դէմքը։

Դիակը հանգստացաւ այն ժամից, երբ ամենքը կուշ եկան, սկսեցին աշխատել, որ իրանք իրանց տաքացնեն ու այդպէս քնեն։ Բայց դա մի սոսկալի գիշեր էր. քամին հեծեծում էր դրսում, խօսում էր կաղնիների ստուերի հետ. նա բերում էր մութ սարերի, անտառնե-

րի և ձորերի ձայները, որոնք ասում էին թէ այդ գիւղը անմաքուր է. ոչ մոմ է վառվել նրա վրա, ոչ աղօթք է կարդացվել։

Առաւօտեան Փէրին վազեց մարդկանց աղաչելու, բայց լսող չը գտաւ. մարդիկ բոլորովին քարացել էին... Քահանայ էլ չը կար. խեղճ Տէր-Մարութը դեռ բանտումն էր, իսկ միւս քահանան գնում էր հարևան գիւղը՝ ջորի առնելու...

Ճար չը կար. Փէրին վերցրեց բահն ու բրիչը, գնաց գետի ձորը. մի փափուկ, աւազոտ տեղ գտաւ, ուր դըժուար չէր խոր փոս փորելը։ Նազլուն օգնում էր նրան, Մարթան գոգը լցնում էր հողով և դուրս թափում։ Երբ արեգակը ցոյց տուեց, որ շատ շուտով պիտի հեռանայ, բոլոր չափահասները զգացին, որ մօտ է գիշերը իր սարսափներով և քամու չարագուշակ ձայներով. ուստի յոժարութեամբ տարան թաղեցին իրանց անբախտ ընկերուհուն...

Բայց թաղումն էլ չօգնեց։ Այժմ, երբ թարմ գերեզմանի վրա իջնում էր առաջին գիշերը, Նախապաշարմունքները սկսեցին աւելի անողորմ կերպով տանջել ամբոխի մարդկանց։ Նրանք հասկանում և հասկացնում էին միմեանց, որ Անուշն այսուհետև կը սկսէ վրէժ հանել։

Կենդանի ժամանակն էր նա այնքան խեղճ, անլեզու, այնքան տանջվում էր, աղաչում էր։ Մտնելով հողի տակ, նա դարձաւ մի կատաղի, անողոք ուրուական. այլ ևս նա չէ մրսում, չը գիտէ քաղցրութիւն. այժմեանից սկսած ամեն գիշեր դուրս կը գայ գերեզմանից, կը թափառէ ձորում, կը բարձրանայ դէպի գիւղը, որոնելով աւերակ, հին շինութիւններ և ուր որ մարդ տեսնէ՝ կը սկսէ չարչարել նրան, պահանջել իր պատանը, իր բաժին օրհնութիւնը, խունկն ու մոմը։ Եւ ո՞վ կարող է ազատվել նրանից. ամենի գազանն էլ նրա համար ոչինչ է։ Այդպէս նա կը տանջէ իրան և ուրիշներին, մինչև որ

պատան չը հագցնվի նրան, մինչև որ խաչ չը դնվի նրա կրծքին։

Փէրին ամենից շատ էր վախում. այժմ նրա ձեռքերը այրում էր բրիչը, որով գերեզման էր փորել, իսկ Մարթայի կապերտը, որ ընկած էր նրա կողքին, դարձել էր մի անխուշտ վիշապ, որ ուզում էր կլանել նրան...

Մռայլ ու յուսահատ էր այդ փոքրիկ անկիւնը, ուր այնքան շատ դժբախտութիւն էր հաւաքված։ Մութը գալիս էր... Քաղցածութիւնը, ցուրտը մոռացված էր. ամեն մէկը դողում էր այն երկիւղից, որ մեռածը կը գայ, կը խեղդէ իրան. իսկ կեանքից բաժանվել չէր ուզում ոչ ոք, որովհետև ամենքը կիսամեռ էին։ Փոքրիկ երեխաներն էլ կարծես մի բան հասկանում էին. նրանք էլ լուռ էին, հաց չէին ուզում, ցրտից չէին ռնում...

Այդ սև ժամին ներս ընկաւ Նազլուն, որ անհետացել էր թաղումից առաջ։ Ուրախ ու ծիծաղկոտ էր նա. նմանվում էր մի մարդու, որ չէ կարողանում մենակ տանել սրտի մէջ ամբարված քաղցրութիւնները։ Կիսամթութեան մէջ իսկոյն գտնելով Փէրիին, չոքեց նրա կողքին, սկսեց շարժել նրա ուսը և յանկարծ լաց եղաւ. բայց լացին յաջորդեց նոյնպէս անակնկալ ծիծաղ և այդ ժամանակ նա յայտնեց, որ իր մայրը գտնվել է։ Վերջապէս...

Վերջապէս բախտը խղճում էր այդ աղջկան։ Նա չասաց թէ ուր և ում մօտ է մայրը՝ նա միայն հրճվում էր, հաւատացնում որ նա կենդանի է, կորած չէ։ Ցոյց պիտի տային առաւօտեան, ասել էին որ պէտք է սպասել այս գիշեր. բայց ինչպէս անցկացնել այդ ծանր, անվերջ գիշերը։ Խոստացել էին անպատճառ առաւօտեան... Եւ դա ճիշդ էր, այժմ ոչ ոք չէր խաբում նրան, այժմ նա խենթ չէր համարվում և նրա հետ խօսում էին ոչ թէ զուարճանալու, ծաղրելու համար, այլ լրջութեամբ, կատարեալ ուշադրութեամբ... Ա՜հ, նա էլ, վերջապէս, հարկաւոր եղաւ մարդկանց...

Առաջին անգամն էր, որ Փէրին մասնակցում էր այդ զգայուն, տանջված աղջկայ ուրախութեան։ Որքան սուր և ցաւեցնող էր Նազլուի վիշտը ամիսների ընթացքում, այնքան այժմ բուռն ու անզուսպ էր այս ուրախութիւնը, որ յանկարծակի խփել էր նրա սրտին, դողացնում էր, ծիծաղը շաղախում արտասունքների հետ։

Այժմ հաւատ էր երևում այդ կծու, մաշված, միշտ անյոյս դէմքի վրա. նա գիտէր այժմ, որ երկինք կայ, որ սևին միշտ սև չէ յաջորդում։ Եւ պառաւը ճիշդ մայրական անկեղծութեամբ խնդակցում էր նրան։ Մինչև այժմ միայն թշուառութիւնն էր Փէրիին կապում մարդկանց հետ. այժմ, առաջին անգամ, ուրախութիւնը ցոյց էր տալիս որ ծիծաղն էլ ամուր կապ է, երբ թարգման է դառնում երկու սրտերի անկեղծութեան։

Եւ այժմ մի կողմ մնաց պատառ պահանջող մեռելը։ Երբ գիշերը խլեց տնակի բոլոր դժբախտներին օրվայ իրական դժոխքից ու տարաւ հիւանդոտ, խեղդող երազների դժոխքը, Փէրին մնաց արթուն, Նազլուի ուրախութիւնն էր ճաշակում։

Քամին փչեց գետի կողմից, շարժեց կաղնիների ճիւղերը, քսվեց հողին, քսվեց աղբի կոյտերին, սուլեց հինաւուրց պատերի անթիւ ծակերում։ Նա բերում էր նոյն զարհուրելի ձայները. սնոտիապաշտութիւնը նորից յաղթեց պառաւին։

Թւում էր թէ մէկը նայում է տան բոլոր ծակերից, ներս է մտցրել իր երկար, շատ երկար ձեռքը, տարածել է ոսկորացած մատները, բռնել, խեղդել է ուզում։

Միթէ դա Անուշը չէ… Դարձեալ տանջված է նա, դարձեալ մերկ. շորերի ծուէնները, որոնք նրա հետ գերեզման մտան, այժմ դողում են գիշերվայ քամուց, բայց նա կուչ չէ եկել, այժմ չէ մրսում։

Նա կատաղի է, անխնայ։ «Ինչո՞ւ այնպէս թաղեցիր ինձ», հարցնում է քամին բոլոր ծակերի մէջ։ Աշխարհը անսիրտ էր, և ահա այդ խեղճ կինը պատիժ դարձաւ և

ամէն տեղ կը հասնի ու իր ոսկրոտ մատներով կը խեղդէ… Եւ նա հեծեծում է, ասում է որ այդպէս ինքը չի մնայ իր փոսում։

Քամին մի ուժգին յարձակում էլ գործեց, բերելով իր հետ ջրի ձայները. կարծես հարիւրաւոր ոգիներ այնտեղից հաստատում են, որ ճիշդ է ասում խեղճ Անուշը։ Եւ պառաւը կծկվում է, զգալով որ սարսափելի ձեռքը, չոր ջղերով միմեանց կպած ոսկորների հինգ ցուրտ շարաններ, բռնում է իր կոկորդը։ Բայց այդ միջոցին նա լսեց իր աջ կողքին մի թեթև հառաչանք, որին հետևեց ձիգ յօրանջոցը։ Նազլուն էր. նա էլ արթուն էր…

—Ինչո՞ւ չես քնում, դողալով հարցրեց Փէրին։

—Նա մեռած չէ, նա կորած չէ, պատասխանեց աղջիկը։

Հանգիստ, վստահ էր այդ ձայնը։ Քամու տխուր ողբերի մէջ նա սիրտ տուեց խեղդվողին։ Սկսվեց երկու արթուն մարդկանց մեղմ շշնջիւնը։

Փէրին հասկացնում էր, որ դուրսը այժմ ամբողջովին պատկանում է պատառ պահանջող ուրուականին։ Բայց Նազլուն ոչինչ չը գիտէր և չէր ուզում իմանալ, բացի այն բանից, որ կայ իր մայրը, որ իրան խոստացել են և այդ խոստումը հաստատ է։ Այլ ևս չեն խաբում, որովհետև այժմ ինքը հարկաւոր է մարդկանց… Պառաւն էլ գնաց նրա սրտի ետևից, մոռացաւ ուրուականը։

Լոյսը բացվելուն պէս Նազլուն անհետացաւ, չը կարողանալով մի բառ անգամ արտասանել։ Փէրին էլ չը համբերեց, գնաց մի նոր փորձ անելու Մէլիքի դռների առաջ։

Գոնէ այս անգամ աջողվէր… Շատ և շատ բան պիտի հաղորդէր Փէրին. քանի օր է նա չէր մտել Գայիանէի մօտ, չէր պատմել աշխարհի ցաւերը։ Պէտք էր տնակի դժբախտներին ուղարկել ուրիշ գիւղեր, բաժանել աստուածասէրների մէջ։ Մէլիքի աղջիկը այնքան բարի

էր, այնքան ողորմած, որ անպատճառ լաց կը լինէր, եթէ իմանար որ Անուշը առանց պատանքի և առանց քահանայի գնաց հողի տակ... Բայց յետոյ որքան կուրախանար, լսելով որ Նազլուի մայրը գտնվել է...

Այն ժամանակ, երբ Փէրին վերադառնում էր, դարձեալ չը հասկանալով թէ ինչու այդքան պինդ են փակում մէլիքի դռները իր առաջ, Գայիանէն գգվում էր Մէհրիին, լացացնում էր նրան։ Խեղճ դայեակին ի վերջոյ աջողվել էր իր արտասունքներով աշել մէլիքի կնոջ սիրտը, արժանանալ կատարեալ թողութեան. այժմ առաջին անգամն էր մնում Գայիանէի մօտ։

—Քեզ էլ տանջեցին, խեղճ Մէհրի, ասում էր Գայիանէն, գրկելով նրան։—Ա՜հ, որքան ես սպասվել... Մոռացէք ամէն ինչ, այժմ մենք դարձեալ միասին ենք և կը խօսենք... Շատ բան կայ խօսելու. այս քանի օրերը ես շատ բան տեսայ...

—Օ՜հ, խօսիր, Գայիանէ. քանի՜ օր է, ես կարօտ եմ քո ձայնին։ Բայց, աղաչում եմ, խօսիր այնպէս, որ ես կարողանամ լսել։ Ամիսներ, տարիներ առաջ դու գիտէիր խօսել. վերադառնանք այն ժամանակներին։ Իսկ եթէ կը սկսես նորերը, այն ինչ որ կար վերջին շաբաթներում, ես քեզ չեմ լսի...

—Որովհետև արգելել են քեզ։

—Չեն արգելել, բայց ես այլ ևս գաղտնիք պահել չեմ կարող...

—Իմ գաղտնիքները... Նրանք շատ ծանր էին քեզ համար, խեղճ Մէհրի։

—Ո՛չ. քո մայրը ինձ ներեց այն պայմանով, որ ինչ լսեմ քո բերանից, իսկոյն պատմեմ նրան։ Ես երդվել եմ...

Արտասունքները նորից երևացին նրա աչքերում, որ ցոյց տան թէ ինչքան ծանր էր այդ երդումը։ Բայց Գայիանէն ծիծաղեց. նա այժմ չէր վրդովվում։

—Գաղտնիք... ծիծաղելի խօսք խաբված սրտի համար, ասաց նա։—Այլ ևս չը կայ այդ խօսքը, մի վախիր, Մէհրի։ Երազը, նոյն իսկ երկարատև երազը, անցնում է. այն էլ երազ էր, ինչ դու գիտես—և անցաւ... Անցաւ իբրև մի մեծ գաղտնիք։ Անարգված է սէրը. սիրտը այլ ևս կարօտ չէ աշխարհի դատաստանին, նա ինքն արդէն արձակել է իր վճիռը...

—Բայց ինչու այդպէս...

—Մի ընդհատիր ինձ, Մէհրի։ Ինձ հարց ու փորձ չէ հարկաւոր. ինչացու է նա. ինչ պիտի ինձ հասկացնես, խեղճ պառաւ... Ամբողջ մի շաբաթ ես որոնում էի մի ականջ, որ ինձ լսելու յօժարութիւն ունենար։ Խեղճ մայրիկ, որքան տանջվում է։ Երբ խօսելու հերթը ինձ է գալիս, նա կատաղում է, չէ թողյ տալիս որ ես էլ ասեմ իմ հասկացածը։ Նա գիտէ որ խօսքի հերթ տալ ինձ՝ կը նշանակէ երես տալ. մինչդեռ ինձ խրատել է հարկաւոր... Անիծված օրէնք։ Նա մայր է և պիտի հարկադրէ. բայց ես ճանաչում եմ թէ ինչ մայր է նա և գիտեմ որ նա շատ է ուզում հասկանալ իմ մտքերը։ Ահա ինչու նա երդվեցրեց քեզ... Լսիր, ես կը պատմեմ քեզ իմ գարնանայի երազը. նա քո ուզած ժամանակին՝ անցեալին է վերաբերում։ Բայց նախ իմացիր, թէ ինչե՜ր տեղի ունեցան այս սենեակում, երբ դու բացակայ էիր...

Նրանք նստած էին սենեակի մէջտեղը, կլոր երդիկի տակ։ Արևը, ճանապարհ բաց անելով կիսաբաց դռան ճեղքից, մի լայն շերտ էր փռել նրանց առաջ։ Գայիանէն պատմում էր հանդարտ, առանց կրքի, չէր շտապում. Նրա ձայնի մէջ չէր լսվում չարչարված մարդու գանգատը։

ԻԵ

—Կոյս Հեղինէն աղաչեց Տիրամօրը, որ այդ գիշեր

ինձ ցոյց տայ թէ ինչ սարսափելի պատիժ կայ ինձ համար,—ասաց նա, վերջացնելով երեք օրվայ պատմութիւնը։—Ես պառկեցի. Յովսէփը քնած էր իմ կողքին և իր շունչով տաքացնում էր ինձ։ Աչքս փակելուն պէս սկսվեց մի երկար երազ։

Ի՞նչ եմ տեսնում։ Տարիները յետ են գնացել. ես երեխայ եմ, Մէհրին հէքիաթներ է պատմում. մեր երկիրը չը գիտէ թէ ինչ է թշուառութիւնը։

Սիրուն ժամանակ։ Ամառ է։ Մեր ամբողջ գիւղը գտնվում է կալերում. մենք էլ այնտեղ ենք։ Հայրս տանը չէ, էլի գնացել է Գանձասար։ Ես, Յովսէփը, նոյն իսկ Շահնազարը գիտենք, որ Գանձասարը մի սիրուն վանք է, հեռու մեր կողմերից, սարի գլխին, ծմակների մէջ։ Ասում են որ մէլիքները այնտեղ են հաւաքվում, շուտ-շուտ խորհուրդ են անում, բայց թէ ինչ կայ,—մենք այդ չը գիտենք։

Ամառվայ անուշիկ օրը լուսանում ու մթնում է այնպէս, որ մենք չենք նկատում. միայն կէսօրն է մեզ հանգստացնում, որովհետև շատ տաք է։ Իսկ միւս ժամերին մենք կամ կալերի մէջ ենք, կամ վազվզում ենք գետի ձորում, կամ խաղում ենք անտառներում։ Երբեմն Մէհրին գտնում է մեզ, բարկանում է, անիծում, իսկ մենք ծիծաղում ենք և աւելի բարկացնում նրան . . .

Գալիս է երեկոն։ Մեր կալը ամենից մեծն է և գտնվում է շատ բարձր տեղ։ Նստում ենք մեր անակի առաջ և նայում ենք։ Միմեանց ետևից հազարաւոր աստղեր են վառվում երկնքում. իսկ նրանց տակ կալերի երեկոն է իր փոքրիկ ճրագներով։ Մարդիկ հաւաքում, կուտում են, վերջացնում են օրվայ աշխատութիւնները։ Առատ է բերքը. հանգիստ, ախորժալի խօսակցութիւնը գիշերվայ անդորրութեան մէջ այդ քաղցր խաղաղութիւնն է պատմում։

Մթութեան մէջ մի աննկատելի շարժում է տեղի ունենում։ Երբեմն հեռուից գալիս է ուշացած գիւղացու

ձայնը, իսկ երբեմն կալերի ճրագներից բաժանվում է մէկը, սկսում է թափառել մութ տարածութեան մէջ։ Կարծես դա մի գիւթական լոյս է, որ մեն է գալիս իր համար, զուարճանում է, խաղեր է կատարում։ Ահա նա կորաւ, բայց իսկոյն էլի հանդէս եկաւ մի անսովոր պայծառութեամբ. մերթ ծանր ու չափաւոր ընթացքով, մերթ սաստիկ շտապելով գնում է, կանգ է առնում մի տեղ և շրջաններ է գործում. ապա էլի ետ է գալիս այդ կախարդված շրջանից և դարձեալ գնում է թափառելու։ Փոքրիկ բոցը ինքնագլուխ չէ. նա լուսաւորում է մի ինչ-որ բան որոնողի ճանապարհը։ Երբեմն որոնողը անորոշ ձայներ է արձակում և նրան պատասխանում են կալերից։

Իսկ մօտիկ մի տեղ, խաւարի կլանած մի անկիւնում, քնած է աշխատաւորը, և քամին, որ քիչ առաջ բաժանում էր հատիկները յարդից, այժմ տանում է մըշակի հսկայական խռմփոցը, քսում է խուրձերին, տարածում է ամեն տեղ, ուր նրա ձեռքերի պտուղներն են թափված . . .

Ահա վերջացաւ ընթրիքը բոլոր կալերում. մածնի ամանները դատարկվել են և կանայք գիտեն, որ միւս օրը հաց պէտք է թխել. բաց է ամենքի ախորժակը. ուտում են և անհոգ են. փառք Աստուծու, սար ու ձոր լցվել է, այնքան տուել է երկիրը։ Ճրագները հանգցնում են միմեանց ետևից. խռմփոցն այժմ գալիս է ամեն մի կալից։

Բայց մենք դեռ չենք քնում. մայրիկը դեռ պիտի պատուէրներ տայ ծառաներին թէ ով ինչ պիտի անէ միւս օրը։ Մէհրին արդէն պատրաստել է անկողինները և մեզ կամաց-կամաց քշում է դէպի քուն։

Կալի միջով անցաւ մի փոքրիկ ստուեր. Մանասն է։

Նա միշտ ուշ է գալիս։ Հրացանը կախում է սիւնի ճակատից, զգուշ արձակում է սուրն ու ատրճանակները, և այնուհետև նա մեր ընկերն է։

Մէհրին մոռանում ենք. էլ նա չը կայ մեզ համար,

այժմ Մանասը պիտի պատմութիւններ անէ, որ լսենք։ Եւ շրջապատում ենք նրան, տանջում ենք… Նա միայն ժպտում է, ուրախ է մեզանով։ Որքան բարի է նրա փոքրիկ չեչոտ դէմքը։ Ինչու մարդիկ վախենում էին նրանից. ինչու նրան համարում էին կոշտ ու բութ։ Նա ոչինչ չունէր այս աշխարհում. մենակ էր, և նրա տունն ու ազգականները մեր ընտանիքն էր։ Նա այնքան սիրում էր մեզ. այդ անհրապոյր մարդու մէջ, որի ընկերներն են հրացանն ու ձին, մի քնքշութիւն կար, որ միայն ծնողի մէջ ես տեսնում…

Գոմի մաքուր, ապխտակ կտուրի վրա, պարզ, աստղազարդ երկնքի տակ, փռված են մեր անկողինները։ Ամենքն արդէն տեղաւորվել են։ Մէհրին վաղուց ննջել է, իսկ նրա մօտ, մեծ անկողնու մէջ, հանդիստ ու դադար չեն գտնում մեր երեխաները։

Եւ ինչպէ՞ս քնեն։ Մանասը պառկած է նրանց մօտ և ուզում է այս գիշեր լուռ մնալ։ Բայց գիտեն երեխաները, որ սովորաբար այդպէս է Մանասը. հեշտ չէ սկսում, որովհետև նրան պէտք է լսել մինչև վերջը։ Նրա պատմութիւնները Մէհրիի հէքեաթները չեն, որ կարելի լինի սկսել ու կիսատ թողնել։ Ցոլակն անգամ յետ չէ մնում իր քրոջից ու կրտսեր եղբօրից. ցերեկը նա տանն էր, դուրս գալ չէ սիրում, իսկ այժմ, վերմակի տակ, ուրախ է, ինչպէս Աստուծու խաղաղ աշխարհը, և նոյնպէս թախանձում է, նոյնպէս անհամբեր սպասում է Մանասի խօսքին։

Իսկ Մանասն երբեմն ինչ-որ բան է մտմտում, յետոյ երկար լռում է, յոյս ունի որ քունը շուտով կը յաղթէ երեխաներին։ Բայց իզո՜ւր։ Երեք զոյգ աչքեր համրում են աստղերը. երեքի լսելիքին անշուշտ չէ վրիպում գիշերային ոչ մի ձայն։ Կալերի կողքին որոճում են եզները. դա մի ներդաշնակ շշնջիւն է, որ գիշերը խնամքով տարածում է ամեն տեղ։ Հնձած հացաբոյսերի, ծաղիկների և խոտերի անուշահոտութիւնը զմայլե-

ցնում է մարդուն։ Ահա երկնքի ծայրում փայլեց վայր ընկնող աստղը, լոյսի անձրև թափելով սարերի գլխին։ Շները հաջեցին. երկնքի երևոյթը տարօրինակ էր նրանց համար։ Եւ նորից նոյն խօսքերը. «Մանաս, շուտ արա, սկսիր»։ Ահա, վերջապէս, յամառ տղամարդը յաղթվեց յամառ երեխաներից։ Նա շուռ է գալիս մէջքի վրա և հարցնում է.

—Պատմե՞լ եմ Ղանլու-Ջամալի մասին…

Մենք չենք լսել այդպիսի անուն։ Նա սկսում է։

Պատմում է հանդարտ, ծանր կերպով. կարծես ակամայ։ Անցած բաներ են, արիւնահեղ գործեր։

Կատաղի է Ջամալը. մարդիկ զուր չեն նրան անուանում արիւնարբու—Ղանլու։ Իրանն է նրա հայրենիքը. բայց նա թռչող մի կայծակ է. մի օր Հերաթ, միւս օր Ղանդահար. մի տարի նրա ձայնը գալիս է Բաղդադի կողմերից, միւս տարի նա Հնդկաստան է։ Ամեն տեղ թալանում է նա, ամեն տեղ նրա առջևից փախչում են մարդիկ։ Հրաշալի է Հնդկաստանը. այնտեղ է խունկի ծառը, այնտեղ օձերի աչքերը անգին քարեր են, այնտեղ ոսկի պալատներ են շինված, որոնց մէջ մարդու պէս խօսող թռչունները ծիծաղում են, կանչում։ Յանկարծ Մանասը կանգ է առնում և հարցնում է.

—Հը՛, ինչ կայ, լսո՞ւմ էք, թէ քաղցր քուն է եկել…

Ոչ ոք չէ քնել. և Մանասը առաջ է գնում։ Ղանլու-Ջամալը անցել է Արաքսը, Վարանդան ահ ու դողի մէջ է։ Արշաւանքը սպառնում է Ամարասի կողմից։ Բայց դեռ չը կայ ոչ մի նշան և ժողովուրդը արդէն թողել է գիւղերը, լեղապատառ փախչում է դէպի Աւետարանոց։ Դժբախտութիւնը միանգամից է գալիս. միաժամանակ լուր է տարածվում, որ լեզգիները մի մեծ արշաւանք են սկսել դէպի Ղարաբաղի կողմերը։

Գլուխ է կորցրել ամբողջ երկիրը. բայց մի հատ մարդ կայ, որի համար տարաժիւլին միմիայն խեղճ մր-

նալն է։ Դա Մէլիք-Շահնազարն է։ Շտապով մարդ է հաւաքում բոլոր կողմերից, կազմում է մի մեծ խումբ. մի մասը ուղարկում է լեզգիների ճանապարհը կտրելու, միւս մասը ինքը տանում է Զամանի դէմ։

Օրեր են անցնում. մէլիքը լուռ ու մունջ հետեւում է արնախումին. յարմար տեղ և յարմար ժամանակ է որոնում։ Մի երեկոյ նա ուշ վերադարձաւ իր մարդկանց մօտ և հրամայեց ձի նստել։

Սև-սև ամպերը կուտակուել էին երկնքի վրա. մութ էր, այնպիսի մութ, որ մատդ մարդու աչք կոխէիր, չէր տեսնի։ Գնում են, բայց գիտեն որ անձրև պիտի լինի։ Ձիաների ոտների տակից կայծեր են թռչում, հեռուից որոտի ձայն է գալիս։

Սարի լանջին կրակ է երևում. դա Զամանի բանակն է։

Գնում են, գնում, միայն մէլիքը գիտէ թէ ուր է տանում իր մարդկանց։ Փչեց ուժգին քամին, ծմակը ճարճատում է, ցուրտ է գալիս. սկսւում է ամպրոպի փոթորիկը. սարերում գոռում է որոտը, կայծակներն են որ լոյս են տալիս սև ձորերին. «Տղերք, առաջ շարժեցէք», ասում է մէլիքը։ Պէտք է մինչև անձրևը տեղ հասնել։

Շտապով փաթաթում են հրացանների կայծհանները, որպէս զի չը թրջվեն։ Այդտեղ յայտնւում է որ հրացան չը պիտի պայթէ. սրերով, անշշուկ, յանկարծ, առանց նախազգուշացնելու։ Այստեղ Մանասը կանգ է առնում. մտաբերում է այդ սարսափելի ժամը, և ապա, թողնելով պատմութիւնը, նորից հարցնում է.

—Քնեցի՞ր։

Միայն մի ձայն է պատասխանում նրան, միայն մէկն է արթուն...

—Դեռ ես, Դայիանէ... Աղջիկը պիտի քնէ և պառաւները պիտի լսեն, իսկ այստեղ հակառակն է։

—Ես լսում եմ, Մանաս, ես մինչև լոյս չեմ քնի. պատմի՛ր...

—Չը քնես, թող պատմեմ սրտումս հաւաքվածը. այլ ես չեմ կարող պահել։ Մանասին խօսեցրին և իրանք քնեցին...

Եւ նա շարունակում է. բայց ինչպէս...

Կարծես նա հիմա էլ այնտեղ է, այն մութի մէջ, կայծակների տակ։ Նրա ձայնը դողում է, նա չէ կարողանում պառկած մնալ և նստում է։

Ինչե՜ր է տեսել նա... Դևերն են միայն այդպէս կռւում. սուրը հարուածում էր սրին, կայծեր թռցնում. ոչ ոք չը գիտէր թէ ում հետ է բռնված. դիմադրութիւնը երկու կողմից սարսափելի էր։ Զամանը իսկ որ գազան էր, ամեհի գազան, բայց Վարանդեցին կռւել գիտէ։

Սկզբում աւազակի խարոյկը լուսաւորում էր կռւի տեղը, բայց նա շուտ չքացաւ։ Սկսւեց հեղեղը. նրան չէին նկատում կռւողները, բայց նա փութացրեց Վարանդացիների յաղթութիւնը։ Մանասը ինչ-որ սաստիկ հարուած ընդունելով ձախ ականջի վրա, գլորվում է խլացած. այն ժամանակից նրա ականջը լաւ չէ լսում։ Ուշքի է գալիս շատ ուշ, այն ժամանակ, երբ ամեն ինչ հանդարտված էր, կռիւ չը կար, անձրև չը կար, երկինքը պարզ էր և լուսնի եղջիւրը երևում էր աղօթարանում. Ցեխաթաթախ նա դուրս է սողում դիակների տակից և փորսող է տալիս, որովհետև թուլացել է նրա մի ոտը, գլուխը ծանր է, վէրքը կապել է ուզում։ Այդպէս նա ճանապարհ է գնում. մի քանի տեղ ուշաթափվում է, ցած գլորվում, յետոյ էլի ուշքի է գալիս և սողում։ Մինչև կէսօր հազիւ է գտնում ընկերներին. նա մոռանում է իր վէրքերը, երբ լսում է որ մէլիքն էլ է վիրաւորված, թէև թեթև կերպով։ Լուր են բերում, որ սպանվածների մէջ է և Զամանը։ Մէլիք-Շահնազարը ձի է հեծնում, ոչինչ համարելով իր վէրքը. ուզում է իր աչքով տեսնել արնախումի գլուխը։ Եւ նոյն

որը նա իր մարդկանց տանում էր լեզգիների դէմ…

Ա՜հ, օրհնվի՛ հոգիդ, մէլիք, բացականչում է Մանասը և նայում երկնքին. դու այդտեղ ես, այդ վառ աստղից նայում ես մեզ։

Եւ լռում է։ Լուռ է և նրա ունկնդիրը։ Բայց յանկարծ նա դառնացած հարցնում է.

—Դու էլ քնեցիր. դու էլ, Գայիանէ։

Վերմակը յետ է գցվում, Գայիանէն նստում է անկողնում և խնդրում է ցոյց տալ թէ ո՞րն է այդ աստղը։

—Տեսնո՞ւմ ես այն մէկը, երկնքի մէջտեղ, որ ուղիղ մեզ է նայում. կարծես այրվող խուրձ լինի… Նա է մեծ մէլիքի աստղը։

Աղջիկը մի նոր աստղ էլ ճանաչեց։ Մանասը գիտէր երկնքի ամբողջ երեսը կարդալ. ուրիշ աստղեր էլ էր ցոյց տուել մինչև այդ։ Մեծ-մեծ, անվախ մարդիկ անցել են մեր աշխարհից, բայց նրանց անունը պահում են աստղերը և այնտեղից պատմում են երևելի գործեր։

—Մարդիկ կային մի ժամանակ, այժմ են թզուկները շատացել։ Գո՛նէ դու, Գայիանէ, մի՛ մոռանար մեծերին…

—Նա կը պատմէ իր թոռներին, յանկարծ լսվում է Աննա-խաթունի ձայնը։

Մայրս լսել էր ամբողջ պատմութիւնը. նա էլ քնած չէր։ Եւ այժմ նրա ու Մանասի մէջ մի խօսակցութիւն է սկսվում այդ անցքի մասին։

Աննա-խաթունն ուղղում է մի քանի անճշտութիւններ, աւելացնում է մի քանի մանրամասնութիւններ, որոնք մոռացվել են Մանասի յիշողութեան մէջ։ Եւ սա խոստովանում է որ մէլիքի կինը իրանից լաւ տեղեակ է, որ ինքը շատ բան մոռացել է, թէև մասնակցել է մեծ մէլիքի գիշերային արշաւանքին։ Նա գովում է իմ մօրը, իսկ ես յիշում եմ թէ ինչպէս իմ հայրը ասում էր յաճախ. «Դիզակի արիւնը կանանց համար չէ ստեղծված, ինչպէս դու աղջիկ ծնվեցիր»։ Համարեա մի և

նոյնը կրկնեց և Մանասը։ Նա ասաց.

—Աստուած Դիզակի և Վարանդայի տոհմերի գեղեցկութիւնը, խելքը տուել է Գայիանէին. ապա բաժանել է՝ խելքը տուել Յովսէփին, իսկ գեղեցկութիւնը—Շահնազարին, բայց երկուսին էլ զրկել է ձեր արիւնից. այդ պատճառով մէկը ոչինչ է իր խելքով, միւսը—իր գեղեցկութեամբ։

Դրանք Մանասի սիրած խօսքերն էին, որոնք կրկնվել էին շատ անգամ։ Մանասը երբէք չէր թաքցնում իմ ծնողներից, որ ինքը շատ զզւում է նրանց երկու որդիներից։ Այս անգամ էլ մայրս հաստատեց որ այդպէս է։

Ահա երկուսն էլ լռեցին։ Գիշերն անցնում է արագ և կալերում քնածների խռմփոցն ու որոճող եզների միանման ձայնը քամին բերում է մօտեցնում մարդկանց ականջներին։ Այլ ես լսող չը կայ։

Միայն Գայիանէն է արթուն։ Նոր աստղը, որ յայտնեց իր անունը, գերել է նրան. բայց դեռ քանիսները կան, որ չեն սկսել իրանց պատմութիւնները…

Եւ մենակ երկինքը չէ Մանասի գիրքը. լեռները, ձորերը նոյնպէս խօսում են նրա լեզուով։ Ինչ որ զարմանալի է, ինչ որ մեծ է այդ երկրում, լինի դա անդունդի վրա կախված մի քերծ, թէ նեղ խոռոչում դղրդացող մի գետակ, կամ հնաւուրց մի հսկայ ծառ, որ իր հուժկու արմատներով պատռել է քարափի կուրծքը,—ամէն մէկն ունի իր խօսքը, իր հերոսական պատմութիւնը… Շատ շատերը հին կորած ժամանակներից են մնացել, բայց քիչ չեն և նորերը, այնպիսի անցքեր, որոնց ականատես վկաները դեռ կենդանի են։

Եւ այդ հրաշալի պատմութիւնները խառնվում են, ծանրանում Գայիանէի վրա. նրանք փակում են նրա աչքերը…

Այն ժամանակվայ Գայիանէն քնում է, Մէհրի, իսկ այժմեանը զարթնում է։ Երազը վերջացել էր, ափսոս, նա երկար պիտի շարունակվէր, օրերով…

Ա՜հ, Մէհրի, գեղեցիկ բան էր ապրել այն ժամանակներում։ Յիշում ես, ինչպէս էին անցնում օր ու գիշեր, ձմեռ ու ամառ։ Ես փակեցի աչքերս, կանչում էի ուրիշ պատկերներ. հօ՛, միայն կալերի այն աստղազարդ գիշերը չէր, երբ Մանասը պատմում էր Դանլու-Ջամանի մասին։

Յիշում ես, իմ հայրը առաջին տեղ ունէր Մանասի միւս պատմութիւնների մէջ, որոնք վերաբերում էին օսմանցիներին, այժմեան օսմանցիներին. չէ՞ որ մի ժամանակ մենք նրանց ոտների տակ չէինք։

Յիշում ես ինչեր է արել հայրս. յիշում ես, ինչպէս էր պատմում Մանասը. յիշում ես, ինչպէս էր նա վարվում օսմանեան զինուորների հետ, որոնք մի-մի գալիս էին մեր գիւղը և ալիւր էին խնդրում մեր տանից։ Ամենքս էինք նրանց ծաղրում, ինչպէս ծաղրում են ակլոր բոշաներին։

Այդ օրերը… Ես դրանց էի կանչում, բայց իզո՛ւր. նրանք չը վերադարձան։ Ես վերկացայ։ Աղօթարանում վառվել էին կարմիր կրակները և նրանց ցոլացումները վազուց խաղում էին մեր պատի վրա։

Բայց արի դուրս. արշալոյսի մի մեծ կտոր ընկաւ պահարանի վրա և Տիրամայրը—ճ, մի զարմանար—ժպտաց. մի ակնթարթում յայտնվեց այդ երևոյթը և անհետացաւ, կարծես կայծակի մի շողշողոց էր։ Բայց ես տեսայ, ես ինքս էլ ծիծաղկոտ էի։ Եւ միթէ միայն ես։ Ծիծաղում էր ամբողջ առաւօտը, որ գալիս էր աղօթարանից. հրեշտակային ժպիտի պէս մարեց վերջին աստղը, երբ նրան էլ հասան արևելքի կրակոտ շողերը։ Մեր մեծ շունը դանդաղ ման էր գալիս բակում, յանկարծ նայեց ինձ և, հաւատացիր, Մէհրի, շունն էլ գիտէ ծիծաղել. մեր պախրաները, դրսի սարերը, երկինքը, երկիրը… ամենքը կարծես իմ երազն էին տեսել, և չը կար մի բան, որ տխուր ու դժգոհ լինէր այդ ժամին։

Հեղինէն եկաւ. նա էր միայն, որ չը գիտէր խնդակցութիւն։ Իմ պատասխանը կարճ էր և հեշտ. բայց նա երկար փորփրեց, շատ խօսեց, չը գիտեմ թէ ինչ. երեք անիծեց ինձ, հայհոյեց։ Ապա տարաւ Տիրամօրը… Անխիղճ մարդ, գոնէ թոյլ տար համբուրել նրա ողորմած դէմքը… Նա չէր լսել Հեղինէին. նա ինձ տարեց այդ երազը…

Գալիանէն վերջացրեց, բայց յափշտակված Մէհրին դեռ չէր կշտացել, սպասում էր շարունակութեան։

Անցեալը… Դառան էլ գիտէր մեծարել նրան իր սրտի բոլոր կրակներով։ Մի ժամանակ էր դա… Ապրում էին մարդիկ, և ծիծաղ, գոհութիւն կար աշխարհի մէջ։ Յիշողութիւնների մի փոթորիկ բարձրացաւ նրա մէջ ու բաց արաւ նրա բերանը։ Ժամանակը թռչում էր, իսկ նրանք զարթեցնում էին տարիների տակ թաղված դէպքեր, հոգի և կենդանութիւն էին տալիս նրանց և խօսեցնում էին՝ խնամքով վերականգնելով բոլոր մանրամասնութիւնները։ «Յիշում ես»։ «Այո. իսկ դու յիշում ես»…

Բայց նրանք յաճախ վերադառնում էին և ներկային. յիշողութիւնները դիւթական են, երբ շփվում են իրականութեան հետ, երբ անցած-գնացածը և այսօրը կողք կողքի են տուած։ Եւ Գալիանէն հարց էր տալիս Մէհրիին. ինչ կը լինի, եթէ Մանասը յանկարծ իջնէ սարերից, տեսնէ ամեն ինչ. արդեօք այժմ էլ նա կը հաւանէ միայն Գալիանէին։

Այդ փոքրիկ, չէչոտ մարդը ինչպէս տառում է վախկոտներին։ Ա՛խ, եթէ նա իմանար այն, ինչ իմացել է Գալիանէն… Մանասն էլ մեծ կարծիք ունէր խաչենցու կապոյտ աչքերի վրա։ «Դեռ երեխայ է, բայց արդէն երևում է գայլի ճուտը», ասում էր նա տարիներ առաջ։ Նա սխալվել է, գայլ չէ. բայց գիտէ և գտնել այնպիսիներից, որոնք գայլի մորթի ունեն հագած, իսկ ներսից նապաստակներ են։ Պատմել Մանասին ամեն ինչ… Ո՜հ, որքան շատ բան կայ Գալիանէի սրտում։

Եւ Մանասը էլի մեղմ կերպով կը ծիծաղէր իր նօսր բեղերի տակ, դարձեալ կը հիանար Գայիանէի վրա և կասէր, որ նա Մէլիք-Յուսէֆնի աղջիկն է, իսկ Աննա-խաթունը չէր ասի թէ նա սխալվում է...

Մէհրին վերացած էր. ի սէր այդ յիշողութիւնների, համարեա անգիտակցաբար, հաստատում էր Գայիանէի իւրաքանչիւր խօսքը: Դարձեալ նա մոռացել էր ամեն ինչ և ուրախութեամբ ականջ էր դնում, հաւանութիւն էր տալիս:

Նրա Գայիանէն պատմեց թէ ինչպէս անցեալը ներկայ դարձաւ, ինչպէս ինքը՝ Մէլիք-Յուսէֆնի աղջիկը, փախվեց, մտաւ տան պուճախը: Դեռ նոր էր նա որբացել, դեռ Մանասը նոր էր սարերը քաշվել, երբ նա, աշխարհից անտեղեակ, միամիտ մի աղջիկ, սկսեց հաւատալ իրան շրջապատողներին: Նա սիրում էր և չէր կարող չը հաւատալ: Սէրը նրան հաւատացրեց մէկի առաջ, հասկացրեց որ անձնական բախտը աշխարհի գոհարներից ամենամեծն է: Նա սիրում էր, և երբէք չէր թոյլ տայ, որ մի ուրիշը հաւասար լինի իրան. ոչ ոք չէր համարձակվի ասել, թէ հասկանում է սէրը նրա չափ, թէ ունի նրա սրտի ջերմութիւնը: Նա ճանաչում էր իրան և իր երջանկութիւնը չէր տայ ոչ ոքին...

Բայց եկաւ փորձանքը, սէրը չը դիմացաւ փորձանքին: Սէրը խաբել էր, էլ ինչու վախել...

Եւ այժմ նրա մէջ մի բան փշրվել էր, նրանից մի բան պոկ էր եկել ցաւով ու կսկիծով, բայց այդ բոլորը հարկաւոր էր, որ ձուլվի մի բոլորովին ուրիշ Գայիանէ... Նա այժմ մերժել սովորեց. մերժեց սէրը, մերժեց ծնողին, անտես արաւ նոյն իսկ եկեղեցու խորանը: Այժմ նա ինքը պիտի երկիւղ ներշնչէ, որովհետև կարող է դեռ ուրիշ շատ բաներ էլ մերժել...

Բայց քաղցր յիշողութիւնների դուրս կանչած խոստովանութիւնները յանկարծ ընդհատեց դուռը, որ մի սաստիկ հարուածից շուռ եկաւ կրունկի վրա և շառաչ-

մամբ զարնվեց պատին: Երևաց Աննա-խաթունը. նա նըման էր օգնութիւն կանչող մարդուն. կարծես դրսում ինչ-որ աղէտ էր պատահել:

Գայիանէն վազեց օգնութեան, հարցրեց թէ ինչ կայ. բայց մինչև պատասխան ստանալը յետ քաշվեց, հասկանալով որ ինքն է պատճառը, իր վրա է կատաղել մայրը: Դարձեալ նոյնը... Նա չուզեց այլ ևս խօսել, բայց Աննա-խաթունը ասաց մի ցած ձայնով, կարծես վախենալով թէ իրան կը լսեն.

—Ա՛յս օրին էիր սպասում, հա՛... գնա այժմ...

Նա չը շարունակեց. Շահնազարը, որ կանգնած էր նրա ետևում, գլուխը ներս մտցնելով՝ բացականչեց.

—Սուլէյման-բէկը... գալիս է:

Մէհրին կպաւ պատին, կարծես ուզում էր մտնել նրա մէջ, իսկ աղջիկը, մի ծանր հարուած զգալով իր ներսում, երեսը դարձրեց դէպի պատը:

—Նա մենակ չէ, շարունակեց չարաճճին.—նրա հետ են Ահմէդը և չորս ձիաւոր չերքէզներ. իսկ տանուտէր Օհանը վազում է ոտով. ամենից յետոյ...

Տանուտէրի անունը նրան ծիծաղ պատճառեց և նա ցած գնաց, որ տեսնէ թէ ինչպէս է վազում Օհանը:

Ներքևից նա կանչեց.

—Եկա՛ն... Բայց Թէօդոր չէ ուզում դուռը բաց անել:

Այդ խօսքերը սթափեցրին Աննա-խաթունին. մի ակնթարթում նա գնաց, հրաման տուեց ծառային, բարկացաւ նրա վրա: Իսկ երբ եկողները ներս մտան, նա կատաղութիւնից սեղմեց իր բռունցքները և նորից կանգնելով Գայիանէի շեմքում, խփեց իր կրծքին ու ասաց.

—Բայց ես բաց աչքով չեմ տեսնի քո խայտառակութիւնը, անիծեալ աղջիկ... Ես կընկնեմ այս ժայռից, այնուհետև սպան ես:

Նա հեռացաւ. ամենախիստ պարտաւորութիւնները կանչում էին նրան:

Սենեակում բռնացաւ մի անտանելի լռութիւն. կար-

ծես սենեակը մի անթարթում հսկայական գերեզմա-նաքար դարձաւ։

Դրսից լսվեցին ձիաների խրխնջոց, սուլիչներ և դրանց հետ ինչ-որ վայրենի, սաստող աղաղակներ։ Ապա լսելի դարձաւ թէ ինչպէս մի քանի ոտներ բարձ-րանում են սանդուղքներով դէպի վերին պատշգամբը։ Այդ ծանր քայլերը մեռելութիւն էին բերում մէլիքի տանը. օդը երկաթի պէս ճնշում էր։ Իսկ Մէհրին յան-կարծ քաշեց դռան ետևի փականքը, պինդ կողպեց։ Ձայ-ները լռեցին, բայց սենեակը աւելի նեղ ու անձուկ դար-ձաւ. կարծես հաստ պատերը դանդաղ կերպով գնում էին իրար դէմ, խօսք էին տուել ճզմել, տափակացնել ամեն ինչ, որ գտնվում էր մէջտեղ...

Գայիանէն այլ ևս չը դիմացաւ. արիւնը թնդում էր նրա քունքերի վրա, աղմկում էր ականջների մէջ... Կարմրած, տաքացած, նա գնաց, յետ քաշեց փականքը և դուռը բաց արաւ։

—Այլ ևս զուր են փականքները, իմ խեղճ Մէհրի, ասաց նա։

Դրսի օդը հանգստութիւն բերեց։ Եւ այդ ժամա-նակ նա պատասխանեց իր մօր վերջին խօսքերին.

—Խեղճ իմ մայր... Դու չը փախցրիր քո սպառ-նալիքներով. դու չես սպանի քեզ, այդքան հեշտ չէ ա-պատվելը։ Այժմ են սկսվում քո խոկական ցաւերը. բայց դու պարտքեր ունես, պիտի հատուցանես. դու պարտա-ւոր ես ամենքիս պաշտպանել անհաւասար կռւի մէջ...

ԻԶ

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ պատշգամբում։ Սի-րուն արև էր. բէկն ուզեց դրսում ճաշել և բազմեց գոր-գերի վրա։ Նրա թիկնապահները մնացել էին ներքևում. խօսակցութեան ներկայ էր միայն տանուտէր Օհանը, որ թարգմանի պաշտօն էր կատարում, երբ Աննա-խաթունը

դժուար էր հասկանում բէկին կամ չէր կարողանում թիւրքերէն լեզուով հասկացնել իր միտքը։

Նա կանգնել էր տանուտէրի մօտ, նայում էր սի-րիացու թուխ, յանդուգն դէմքին և սառնասիրտ պա-տասխաններ էր տալիս։ Գայիանէն չէր սխալվել. գոնէ բէկը չէր նկատում, որ մէլիքի կինը յուզված, անհա-ւական լինի։ Վարանդայի տիկինը պատուաւոր էր, նոյն իսկ հպարտ։ Ո՞րտեղից նա վերցրեց այդ քաջութիւնը։

Թէև բէկը սկզբից իրան հիւր էր անուանել, բայց այդպիսի անկոչ հիւր դեռ չէր տեսել մէլիքի տունը։

Անչափ զսպողութիւնը, խառն մի կծու արհամար-հանքի հետ, որ միայն մահմեդականն է կարող ցոյց տալ իր հպատակ պիղծ գեաւուրի տանը, կաթում էր նրա իւրաքանչիւր շարժումից, իսկ նրա կատաղի աչքերին ու ահարկու յօնքերին տալիս էր մի արտայայտութիւն, որ արհամարհված գեաւուրի մէջ միայն դղուանք կարող էր ծնեցնել։

Առանց քաշվելու, համարձակ իբրև ամեն ինչի տէր, նա դիտում էր ամբողջ ներսը, մանրամասն քննում էր թէ իւրաքանչիւր դուռն ինչ նշանակութիւն ունի, ինչ կայ վերևում և ներքևում։ Դա անմեղ հետաքրքրութիւն չէր, այլ կատարեալ հարցաքննութիւն. կարծես պատե-րազմի ժամանակ հակառակ բանակից հաշտութեան պա-տրուակով եկած մի զինուորական էր, որ, օգուտ քա-ղելով հանգամանքից, զննում, ուսումնասիրում է թըշ-նամու բերդի դիրքը, ամրութիւնները, նրանց թոյլ և ուժեղ կողմերը։ Այդ անկրթութիւնն էր այնքան սիրտ տալիս Աննա-խաթունին։

Հաշտվելով իր դրութեան հետ,—մի անպաշտպան խեղճի դրութեան հետ—նա, ինչպէս այդ յատուկ էր Դիզակի արիւնին, մի րոպէում ընդունեց իր պատիւը հասկացող, գլուխը բարձր պահող կնոջ դիրքը։ Մէլիք-Աւանի քոյրը երբէք օտարների առաջ թուլութիւն, եր-կիւղ չէր ցոյց տայ։

Նա պատմեց իր հանգստութիւնը և այն ժամա-նակ, երբ Սուլէյման-բէկը յանկարծ հարց ու փորձ ըս-կըսեց մէլիքի տանը ապրողների մասին։ Այրին պատաս-խանեց, որ բացի Շահնազարից կայ և մի անդամալոյծ տղայ։

—Իսկ աղջի՞կը, հարցրեց բէկը, լիրբ հայեացք գցե-լով նրա վրա։—Մէկին ես տեսայ, լաւն էր . . .

—Նա մեզ չէ պատկանում, նա տէր ունի, շտա-պով ընդհատեց Աննա-խաթունը, որպէս զի չը լսէ այդ խօսքերի շարունակութիւնը.—Նա նշանված է. վաղը, միւս օրը կը պսակվի։

—Ձեր եկեղեցո՞ւմ։

—Ի հարկէ։ Նրա նշանածը Խաչէնի մէլիքի որդին է։

—Այն տղա՞ն, որ մօտ է գալիս գիւղում։

Դրական պատասխանը Աննա-խաթունի փոխարէն տուեց տանուտէր Օհանը։ Բէկը, ինչպէս երեւում էր, առանց այդ էլ գիտէր թէ ով է նշանածը։ Մէլիքի կի-նը պարզ նկատեց, որ նա յօնքերով ու բերանով մի ար-համարհական ծամածռութիւն գործեց։ Չափազանց չնչին մարդ էր նրա հակառակորդը։

—Այդ լակոտը արժան չէ քո աղջկան, ասաց նա քիչ լուռ մնալուց յետոյ։—Ինչո՞ւ ես շտապում։

—Շտապեցնողը Խաչէնի մէլիքն է. նա ամեն շա-բաթ մարդ է ուղարկում, պահանջում է շուտ վերջա-ցնել։ Նա ասում է, որ հարսանիքը պատրաստ է, հիւրե-րին հրաւէր է գնացել. շատ մեծ մարդիկ են կանչված։

—Շա՞տ է սիրում իր որդուն։

—Այո, որդուն և հարսին . . .

Այդքանն էլ չօգնեց։ Բէկը չը գիտէր, որ մէլիքի կինը չափազանցում է, բայց բարձրացրեց իր ձեռքը, արգելման նշան արաւ.

—Ես կը փակեմ ձեր բոլոր եկեղեցիները, որ ոչ մի գեաւուր շուն չը համարձակվի պսակ կատարել։ Իսկ այն լակոտին ասա, որ կորչի այստեղից։

Պսակն արգելվում էր, բայց ինչո՞ւ։ Պատճառը չը յայտնեց բէկը։ Եւ հարկաւոր էլ չէր. աղջկայ մայրը ար-դէն հասկացել էր ամեն ինչ։

Այլ ևս ոչ մի կասկած, ոչ մի հանգամանք, որով կարելի լինէր խաբվել։ Կայծակը տրաքեց նրա գլխին, աչքերի առաջ ինչ-որ սև շրջաններ երևացին և նա վայր պիտի ընկնէր, յուսահատ աղաղակ պիտի արձակէր, եթէ մի լաւ մայր չը լինէր։

Տագնապի վճռական րոպէին հրաշալի է մայրը. հրա-շալի՝ անձնազոհութեան այն զգացմունքով, որ տանում է նրան գայլի առաջ, պողպատ է թափում նրա մերկ բազուկների մէջ, որոնց և խլում է գազանի բերանը՝ զաւակն ազատելու համար։ Հրաշալի էր Աննա-խաթու-նը, երբ գունատված, համարեա շնչասպառ, բայց առանց դժուարութեան, նոյն իսկ հպարտութեամբ, պատաս-խանեց.

—Դա մեր գործը չէ. Մէլիք-Յուսէփը սկսել է իր ձեռքով և մեզ հրամայել է վերջացնել. նրա կամքը սուրբ է մեզ համար։

—Ես վաղուց գիտեմ, որ դու շարունակում ես քո մարդու գործերը. առաջին նշանն այն է, որ դու էլ թըշ-նամի ես մեզ . . .

—Թշնամի . . .

Աննա-խաթունը մինչև անգամ ծիծաղեց։ Եւ իրաւ, այդ անունը, որ տուեց բէկը, միայն ծիծաղ, մի տխուր ծիծաղ կարող էր յարուցանել նրա մէջ։

Թշնամի... Ի՞նչ է նա, ի՞նչ ոյժ ունի, որ թշնամի անուանվի, այն էլ օսմանցիների թշնամի... Բայց այս ճշմարտութիւնը համոզիչ չէր բէկի համար. ընդհակա-ռակը, նա աւելի մռայլեց իր յօնքերը և աւելի ցուրտ եղանակով ասաց.

—Խաբում ես... Ով աւազակ Մանասի կողմնակից է, նա մեր թշնամին է. իսկ դու յարաբերութիւն ունես աւազակի հետ։

—Մանասը մեր տան ծառան էր մի ժամանակ. յետոյ կորաւ, գնաց սարերը, ինչ-որ յիմարութիւններ սկըսեց, և ես ձեռք վերցրի նրանից. մինչև անգամ չը գիտեմ՝ կենդանի՞ է նա թէ մեռած...

—Չը գիտես... Բոլոր գեաւուրները փախկոտ նապաստակներ են և սուտ են ասում։ Մանասի սուրհանդակը քեզ մօտ էր, խօսում էր քեզ հետ և դու ասում ես թէ չը գիտես...

Այրին մի ակնթարթում յաղթահարված էր և լուռ ու ամօթահար մնաց։ Տէր-Մարութը... Այդ անունը կայծակի պէս անցաւ նրա մտքով. բանտարկված քահանան, ուրեմն, պատմել էր սուրհանդակի մասին։ Եւ այժմ ինչ անել, մի՞թէ ուրանալ...

Յանկարծակիի եկած մարդը սուտն էլ չէ կարողանում շուտ գտնել, որպէս զի ընդհատէ իր լռութիւնը, որ այսպիսի հարցաքննութեան ժամանակ յանցանքի ամենապարզ նշան է։ Բէկը իր սարսափելի հայեացքը տնկեց նրա աչքերի մէջ և թոյլ չը տուեց որ խեղճ կինը ուշքի գայ։

—Եւ դու խրատներ էիր տալիս քեզ մօտ ուղարկած մարդուն, դու պատուիրեցիր նրան հեռանալ այնպէս, որ մենք չը տեսնենք։

Այս խօսքերը աւելի սաստկացրին մէլիքի կնոջ յուզմունքը։ Տէր-Մարութը մեղ չունէր, որովհետև նա չը գիտէր թէ ինչպէս է ճանապարհվել սուրհանդակը։ Ուրիշ մարդ էր պատմել բէկին, մի մարդ, որ այս տանից էր։ Ո՞վ էր լուր տարել։ Աննա-խաթունը նայեց բակին, տեսաւ որ Շահնազարը խաղում է տասնապետ Ահմէդի ծոյլ և անշարժ մարմնի հետ. և չը կարողանալով զսպել իր զայրոյթը, աջ ձեռքով ճանկ արաւ իր որդուն, գետինը կոխեց նրան։ Դա մի նոր զէնք էր Սուլէյման-բէկի համար, որ զզվելով ծիծաղեց և ասաց.

—Անիծված գեաւուրներ, ամենքդ փչանալու սերմեր էք։ Այլահը վկայ, մեղք է ձեզ լաւութիւն անել։

Արժէր որ դու իմանայիր իմ ձեռքի զօրութիւնը, արժէր որ ցոյց տայի քեզ թէ օսմանցին չէ կարող խաղալիք դառնալ կանանց ձեռքին։ Բայց, տեսնում ես, քեզ խըղճում եմ, մինչև անգամ հիւր եկայ քո՛ տունը. պատճառն այն է, որ դու այնքան լաւ աղջիկ ունես... Փախցրու այն լակոտին. լսում ես...

Դարձեալ այդ սարսափելի հանգամանքը, դարձեալ աղջիկը։ Աննա-խաթունը էլի մայր դարձաւ և նրա լեզուն ազատվեց կապանքներից։ Ի՞նչ խօսքեր են դրանք։ Եթէ մէկը պատմել է Մանասի ուղարկած մարդու մասին, նա պիտի պատմէր և այն, որ մէլիքի կինը դատապարտեց Մանասի արածները, հրամայեց որ այսուհետև իր տունը մարդ չը գայ։ Մի՞թէ սա յանցանք է...

Նա երկար կանգ առաւ այդ հանգամանքի վրա, մի քանի անգամ կրկնեց իր ասած խօսքերը։ Բէկը լսեց, բայց վերջը գլխով բացասական նշան արաւ. նա մնում էր իր կարծիքին։ Յանցանքը հաստատված էր և հաստատողը այն հանգամանքն էր, որ սուրհանդակը ծածուկ էր հեռացել այստեղից։ Ծածուկ աջակցութիւն... Բայց օսմանեան առիւծները քնած չեն. պէտք էր պատժել, եթէ բէկը չուզենար բարերարութիւն անել։

Սակայն թիւրքը ձրի բարերարութիւն անել չը գիտէ։ Տեղից վեր կենալով որ գնայ, բէկը նշանակեց և վարձատրութիւնը։ Նա յայտնեց որ ինքը շուտով էլի հիւր կը գայ և աւելացրեց.

—Բայց այն ժամանակ դու պիտի ցոյց տաս քո աղջկան...

Ձիաները նորից իրար խառնվեցին, դոփիւնները, սաստող աղաղակները մի րոպէ աղմկեցին լուռ ամրոցը։ Իսկ խեղճ մայրը այլ ևս ոչինչ չէր զգում. նա նստել էր գորգի վրա, աչքը ձգել էր արևելեան սարերին, բութ ու անզգայ կերպարանք էր ստացել։ Ի՞նչ էր այդ բոլորը. միթէ երազ չը կար տեսածի և լսածի մէջ, միթէ թիւրքը հանաք չէր անում, միթէ նրա միտքը այն չէր,

որ տանջէ մի կնոջ և զուարճանայ... Բռնութեան զոհը դեռ այնքան թշուառ չէ, երբ բոլորովին անմեղ է տանջվում. բայց այդ տանջանքը անտանելի է դառնում մանաւանդ այն ժամանակ, երբ նրա վրա զոռով յանցանք են բարդում, երբ փորձում են զրպարտութիւններով հաստատել, թէ նա արժան է տանջանքի, իբրև արդար պատժի...

Հէնց որ հեռացան, կորան այն քայլերը, որոնք ամրոցի մէջ տարածել էին մեռելութիւն, Գայիանէն, առանց ուշադրութիւն դարձնելու Մէհրիի վրա, դուրս գնաց իր սենեակից: Նա ուղիղ դիմեց իր մօրը, չոքեց նրա կողքին և յայտնեց որ պէտք է այժմ բացարձակ խօսել, չը թագցնելով ոչ մի բան: Սակայն մօր դրութիւնը այնպէս չէր, որ կարելի լինէր պահանջներ անել:

—Մի վախիր, մայրիկ, ասում էր նա և գգվում, սիրտ էր տալիս նրան:

Անօգուտ չէր նրա աշխատութիւնը: Մայրը, վերջապէս, երեսը դարձրեց դէպի նրան, բայց չիմացաւ թէ ինչ խօսէ:

—Մի վախիր, ինչ եղել է, ասա... Ինչու ես վախում...

Ինքը աղջիկը չէր վախում. Նա գիտէր արդէն թէ ինչ կարելի է անել: Մայրը բացասական նշան արաւ իր գլխով և հանդարտ մրմնջաց.

—Այժմ ուշ է...

Ապա նայեց տան պատերին, կարծես գննում էր թէ որքան դիմացկուն են նրանք, և յանկարծ աղաղակեց.

—Տունս քանդվում է...

Երկու կաթիլ արտասունքները, որոնք ընկան նրա աչքերից, հաստատեցին այդ հանգամանքը: Բայց Գայիանէն կանգ չառաւ, այլ նոյն հաստատ ձայնով շարունակեց սիրտ տալ.

—Մի վախիր, ոչինչ չի լինի...

Սանդուղքի վրա լսվեցին քայլեր, որոնք խլեցին

երկուսի ուշադրութիւնը: Գայիանէն տհաճութեամբ նկատեց, որ գալիս է տանուտէր Օհանը:

—Ի՞նչ կայ, հարցրեց նա մի խիստ ձայնով:

Տանուտէրը մօտ եկաւ, իր սովորական հանդարտ եղանակով յայտնեց, որ մէլիքի կինը մոռացել է ամենագլխաւորը:

—Բէկլին և նրա մարդկանց պէտք էր ընծաներ տալ, ասաց նա:

—Ինչո՞ւ, բացականչեց Գայիանէն, յանկարծ բարկանալով:

—Կարգ է... Նա շնորհ է բերել ձեր տունը իբրև հիւր և դրա համար ընծաներ պիտի տաք:

—Ո՞վ դրեց այդ կարգը...

—Կարգ դնողին չեմ տեսել, բայց կարգը կայ... Իմ պարտքս համարեցի յիշեցնել. Նա անպատւութիւն կը համարէ. նա առանց այդ էլ կատաղած է...

—Ո՞ւմ վրա, այս խեղճ կնոջ վրա... Թող կատաղի. մեր ոչ մի ընծան չէ կարող նրա սիրտը շահել:

—Դուք գիտէք... Բայց կարգ է, և այդ կարգից անցեալ տարի դուրս չեկաւ նոյն իսկ քո քեռի Մէլիք-Աւանը, երբ բէկը գնաց նրա մօտ:

Աննա-խաթունը մինչև այդ խորին բաւականութեամբ լսում էր իր աղջկայ ասածները. լաւ էին նրանք, սիրտ էին հովացնում. ինչպէս նա համարձակ է, ինչպէս յանկարծ խելքի եկաւ: Բայց երբ լսեց, որ իր եղբայրն էլ դանց չէ արել աշխարհի կարգը, վճռական կերպով ասաց.

—Մենք էլ, ուրեմն, պարտաւոր ենք:

—Ո՛չ, պարտաւոր չենք, աւելի դրական կերպով պատասխանեց Գայիանէն:—Իմ քեռու մօտ նա հիւր էր, իսկ այստեղ: Նա քանդեց մեր աշխարհը, կոտորեց մեր ժողովրդի մէջքը. որբեր, արտասունք, աղքատութիւն տարածեց ամեն տեղ: Նա կոտորեց երեխաներին, տարաւ աղջիկներին: Եւ դեռ այժմ էլ չէ կշտացել: Եթէ այս բոլորը կատարած լինէր Դիզակում, իմ քեռին նրան

ընծայ չէր տայ, այլ սուր կը հանէր նրա դէմ: Մէլիք-Աւանը ազամարդ է, իսկ մենք խեղճ գառներ: Եւ քո բէկը, Օ՛հան, գայլ է այդ գառների մէջ: Ահա՛, գայլը գառների մօտ հիւր գնում է:

Տանուտէրը չը պատասխանեց նրան, այլ ուղղակի դիմեց մէլիքի կնոջը, սկսեց նրան հասկացնել: Գայիանէն ջահիլ է, մի՞թէ Աննա-խաթունն էլ չը գիտէ որ վատ բան է, տեսնված չէ որ թիւրք բէկը առանց «խալաթի» գայ: Օհանը իր համար չէ ուզում, որ ուրիշ կարծիքներ անեն: Օհանը բէկի համար էլ չէ աշխատում, այլ Մէլիք-Յուսէինի տան համար. և հէնց այդ պատճառով շտապեց յիշեցնել, քանի ուշ չէ, թէ որն է աշխարհի կարգը: Անկեղծ խօսելով, չը պէտք է թոյլ տալ որ շունը հաչէ. դրա համար հարկաւոր է պատառներ գցել նրա բերանը . . .

—Բայց շունը չի կշտանայ. որքան շատ տաս, նա էլի շատ կը պահանջէ:

—Մեր բանը այդպէս է դառել, մէլիքի՛ աղջիկ. ուրիշ ինչ ճար ունենք: Դու չը լսեցի՞ր թէ ինչեր խօսեց նա այստեղ: Եթէ լսէիր . . .

—Աւելի վատ: Չեմ լսել, բայց տեսնում եմ որ իմ մօրը շատ է վախեցրել: Այսքան տանջել, արհամարհել, և դեռ ընծայ տանել: Ամօթ է... ամօթ տուողի համար, ամօթ և ուզողի համար. քեզ համար էլ մեծ ամօթ, Օ՛հան. դու քեզ համար չես ուզում, դու վախեցնում ես կանանց. ինչպէս չամաչեցիր . . .

—Մեղը ձեր վզին, հառաչեց տանուտէրը և աւելորդ համարելով շարունակել այդպիսի խօսակցութիւն, սկսեց իջնել սանդուղքներից:

Ծանր էր նրա հառաչանքը. բայց երբ նա սկսեց քթի տակ ինչ-որ բան փնթփնթալ, Աննա-խաթունը այլ ևս չը դիմացաւ. վեր թռաւ տեղից, կանչեց Օհանին որ կանգնէ: Ինչո՞ւ մեղը թողնել այս տան վրա. թող տա-

նեն, թող լափեն, միայն թէ մեղաւորը մէլիքի տունը չը լինի:

Բայց Գայիանէն հանաք չէր անում. բռնելով մօր թևից, նա հարկադրեց չը շարժվել. և մայրը, վերջապէս տեղի տուեց, նորից նստելով նրա կողքին: Տանուտէրը հեռացաւ:

—Այժմ ասա, նորից շարունակեց Գայիանէն իր թախանձանքը, երբ երկուսով մենակ մնացին:—Դու ջարդված ես, սպանված: Այստեղ մի բան պատահել է: Ի՞նչ կայ. ինչ էր նա ուզում . . .

—Քեզ, իմ խեղճ երեխայ, քեզ, իմ անտէր որբ,—յանկարծ բառաչեց մայրը, դողալով ջղային ցնցումից և ջուխտ ձեռքերը դնելով նրա վրա, կարծես պաշտպանում էր նրան . . .

—Ի՞նձ . . .

Կսկծալի էր այդ հարցը, նա դուրս թռաւ իբրև մի ցաւալի հառաչանք և հանգստութիւն պատճառեց տանջված մօրը: Թէև կարճ բացականչութիւն էր, թէև աղջիկը լռեց, բայց մայրը մի հրաշալի վայրկեանի մէջ զգում էր որ Գայիանէն հասկացել է թէ ինչ վտանգ է սպառնում և ուզում է ազատվել:

Եւ նա շտապեց պատմել ամեն ինչ, պատմել բարեխղճութեամբ, չը ծածկելով ոչ մի բան: Ա՜հ, մեծ է վտանգը. նա այսօր կամ վաղը ներս կը մտնէ: Բայց դեռ ժամանակ կայ. դեռ կարելի է ազատվել:

—Շտապի՛ր, շտապի՛ր, Գա՛յիանէ. ժամանակ մի կորցնիր, աչքիս լոյս:

Շտապել, հեռանալ... Թող այնուհետև քանդվի ամբողջ աշխարհը, թող մնացողները խորտակվեն օձի բերանում... Ամեն ինչ կարելի է տանել, միայն Գայիանէն ազատվի . . .

Առաջին անգամն էր նա այդպիսի լեզու գործ ածում իր աղջկայ մօտ: Սոսկալի՜ պարզութիւն: Առանց դժուարութեան նա յայտնում է, որ թիւրքի երկրում ա-

մենամեծ դժբախտութիւնը գեղեցիկ աղջիկ լինելն է։

Մինչև այժմ նա չէր համարձակվում արտասանել այդ ճշմարտութիւնը. մինչև այժմ նա խեղդում էր իրան, օր ու գիշեր պաշտպանում էր իր Գայիանէին՝ Վարանդայի հրեշտակին։ Այժմ... Օ՜, մայրը չէ զանգատվում. նա դժգոհ չէ, նա մոռանում է թէ ինչից առաջացաւ այսօրվայ դժբախտութիւնը. նա ներում է իր աղջկան...

—Միայն շտապիր, Գայիանէ. տեսնում ես որքան անճար ենք մենք...

Նա շտապեցնում էր. ախ, եթէ կարելի լինէր այդ րօպէին թևեր կպցնել նրա մէջքին, հանել բարձր օդի մէջ... այնտեղ չը կայ խայտառակութիւն, այնտեղ թիւրքը իշխող չէ...

Սակայն աղջիկը չէ շտապում, թևեր չեն տրվում նրան։ Մի ծանր զգացմունք բռնել է նրան գետնին։ Գուսական սիրտը տակն ու վրա է եղել թիւրքի լիրբ առաջարկութիւնից։ Ի՞նչպէս... Ատել անդադար, ատել կատաղի, անսահման, և դարձեալ թշնամի չը համարվե՞լ։ Ի՞նչ անարդարութիւն, Տէր Աստուած։ Մի՞թէ այս թիւրքը չը պիտի հասկանայ և այն, որ թշնամուն ոչնչացնել է հարկաւոր և որ դա օրէնք է։

Թշնամի, անհաշտ թշնամի... Այս բախտն է ուզում կոյսի վիրաւորված, խաբված սիրտը։

Բայց ինչպէս պարզ և մանրամասն է խօսում մայրը։ Նա դադար չը գիտէ, կարծես հասկացել է թէ ինչ մտքեր կան իր աղջկայ մէջ և հերքում է նրանց։ Ահաբեկված, արնաքամ երկրի ցաւերը լեռներ են կազմում. մի՞թէ չը գիտէ որ ինքն էլ մի աղջիկ է միայն։ Աստուած այս երկրին մի քաջ, երևելի տղամարդ չէ տուել, որ ոչնչացնէ լեռնացած ցաւերը, ոտքի կանգնեցնէ արտասուքի մէջ խեղդվող ժողովուրդը. Աստուած տուել է մի գեղեցիկ աղջիկ միայն, և ի՞նչ կարող է անել աղջիկը։ Նրան չեն հարցնի թէ ինչ է ուզում, նրան կը

տանեն, կը խայտառակեն և նոյն իսկ այդ դէպքում էլ ոչ ոք ձայն չի հանի... Մի՞թէ չէ յիշում Գայիանէն որ այս երկրում բոլոր աղջիկները Նազլուներ են, Մարգարիտներ են։ Տարան հարիւրներին, կը տանեն և մէկին։ Իսկ մայրը, մայրը... նա չի դիմանայ, նա կը խեղդվի...

Իրողութիւններ են դրանք, որոնք յանկարծ լուսաւորեցին Գայիանէի միտքը։ Նա հասկացաւ որ այժմ է ինքը միանում իր անթիւ դժբախտ քոյրերի հետ։ Ինչո՞ւ թշնամի համարվելու բախտը վայելել մենակ։ Այս երկնքի տակ ծնված բոլոր աղջիկները մի և նոյն են։ Մի՞թէ ինքը չէր, որ ուզում էր դրանցից մէկը լինել առանց արտօնութիւնների, առանց պաշտպանների... Եւ ընդհատելով իր խեղճ մօր աղաչանքները, նա ասաց մի սոսկալի հանգստութեամբ.

—Մի՞թէ բաւական չեմ ես, որ դեռ ընծայ էլ է ուզում...

Մայրը կանգ առաւ և սկսեց աղաչել, որ նա բացառէ այդ խօսքերը։ Գայիանէն կրկնեց նոյն հարցը։

Անտանելին այն էր, որ նա այժմ յուզված չէր, ինչպէս կէս ժամ առաջ, երբ յանդիմանում էր Օհանին. կարծես փոխվել էր ժամանակը, իսկ խօսքը այժմ վերաբերում էր մի սովորական, չնչին գործի։

—Դու... յօժա՞ր ես, հարցրեց նա ահագին դժուարութեամբ։

—Ո՛չ։ Բայց նա ուզում է... Կարո՞ղ ես ընդդիմանալ...

—Փախիր...

Մայր ու աղջիկ նորից անջատվեցին միմեանցից։ Դարձեալ յամառ է աղջիկը, դարձեալ մայրը չէ հասկանում նրան։

Փախչելը ազատվել չէ, պատասխանում է Գայիանէն.—գայլի բերանից փախչողը արջի բերանն է ընկնում...

—Գնա՛ Տող, բեռուղ մօտ...

—Ի՞նչ օգուտ. թիւրքի ձեռքը այնտեղին էլ կը հասնէ։ Թեհրանն կարող է ընդդիմանալ. եթէ կարողանայ, այստեղ էլ կընդդիմանայ։

Դա ճիշդ էր։ Աննա-խաթունը համարեա բոլորովին կտրել էր յոյսը իր եղբօրից։ Մէլիք-Ասանը, ճիշդ է, ոչինչ անել չէ կարող, նա ինքն է ասում որ չէ կարող։ Վերջին ժամանակ նա բոլորովին թաղվել է մռայլ յուսահատութեան մէջ, անդադար ճանապարհորդում է, դիտում է, ականջ է դնում, բայց լուռ ու խուլ է մնում. և ո՞վ գիտէ, գուցէ նա չը զարմանայ, երբ լսէ որ Սուլէյման-բէկը տանում է Գայիանէին։ Ո՛չ, միայն մի ելք կայ և այդ—կոյս Հեղինէի առաջարկած միջոցն է։

—Դու աղջիկ չը պիտի մնաս, շշնջաց մայրը, նայելով իր չորս կողմը, ինքն իրանից զզվելով. և երբ տեսաւ որ իրանց լսող չը կայ, շարունակեց.—տե՛ս, հասկացի՛ր, Գայիանէ, քանի որ դու աղջիկ կը մնաս և այն էլ ազատ աղջիկ, քո գինը շատ մեծ կը լինի այդ անօրէնների աչքում։ Հասկացի՛ր որ դու նշանված ես։ Աստուած մի լաւ ճանապարհ է պատրաստել որ փախչես, ազատվես։ Փորձված, խելօք կնիկ է կոյս Հեղինէն. չը լսեցինք, նա խռովեց մեզանից։ Պէտք է կանչել նրան. ես այժմ համաձայն եմ։ Թո՛ղ խաչէնցիները ինչ ուզում են՝ ասեն, թո՛ղ կտրվի մեր անունը. դրանից աւելի սև օր չի լինի...

Այդ վիշտը պակաս չէր տանջում մէլիքի կնոջը։ Զոհել տոհմային հպարտութիւնը և Խաչէնում խօսքի առարկայ դառնալ... Բայց ինչ արած։ Քար ճխտել սրտին՝ միայն աղջկան ազատելու համար... Ո՞վ կը դատապարտէ այսպիսի մօրը։ Ո՛չ, թո՛ղ տանեն, թո՛ղ նոյն իսկ փախցնեն...

—Իսկ ես աղջիկ մնալ եմ ուզում, մայր, մի վարանդեցի աղջիկ։ Ես ոչ որից լաւ չեմ և ոչ ոք պարտաւոր չէ մտածել, որ ես մենակ ազատվեմ, լինեմ մի հատիկ բախտաւորը այս դժբախտութիւնների մէջ։ Այս-

տեղ եմ ես, ձեզանից մէկը։ Փախչելը մեծ ամօթ կը լինի Մէլիք-Յուսէֆի աղջկայ համար։ Եւ ոչ ոք չի համարձակվի փախցնել նրան։

Նրա աչքերը լի են հպարտութեամբ, ձայնը չէ դողում, ամուր ու անխախտ է նա իր վճռականութեան մէջ։ Յանկարծ բռնկվում է որդիական սիրտը։ Որքան քնքուշ է այդ աղջիկը, երբ խղճում է իր մերձաւորին, որքան սիրում է իր մօրը։ Նա մօտ է նստում, բռնում է բազմաչարչար կնոջ թևը, սեղմում է իր կրծքին, և ինչպէս է փայփայում։ Խեղճ մայրիկ, խեղճ...

Մայրը հեռու է մնում այդ զգացմունքից։ Նրա մէջ ծագել է մի դաժան միտք, որ կապվել է աղջկայ պատասխանից, և այդ միտքը նա չէ կարողանում պահել։ Նրա դէմքին պատեց մեռելային գունատութիւն, խոշոր շրթունքները յանկարծ անշարժացան, կարծես չորացել են, տապակվել։ Եւ նա, վերջապէս, արտասանում է մի տարօրինակ ձայնով, փայտացած շրթունքների միջով.

—Նշանակում է... դու ուզում ես թիւրքին...

Ոչինչ չը շարժվեց, ոչ մի ձայն չը լսվեց իբրև պատասխան։ Գայիանէն բաց չը թողեց իր գրկած թևը, մի նշանով չը հերքեց այդ ծանր ամբաստանութիւնը։ Զարհուրելի լռութիւն։ Կարծես ամեն ինչ քարացել է, որ ցոյց տայ թէ այո, նա չէ սխալվում...

Եւ Աննա-խաթունն էլ ընկաւ այդ լռութեան մէջ։ Նա, կարծես, հանգստանում էր. աչքերը ուղղեց դէպի երկինք։ Կամաց-կամաց նրան յափշտակեցին ինչ-որ տարօրինակ տեսիլներ. Թանձր ստուերներ թրթռացին նրա աչքերի առաջ. երկինքը պոկ եկաւ իր տեղից, թռաւ դէպի վեր, կծկվեց. որքան փոքր է նա, ձեռքով կարելի է ծածկել։ Սարերը սաստիկ թափով աջ ու ձախ գնացին, յետ են մղվում, մանրանում են։ Նա մէջքի վրա յետ ու յետ թեքվեց, թուլացաւ, ընկաւ գորգի վրա։ Այժմ ոչինչ չէ երևում. բայց կարծես գետ է հոսում մէլիքի բակում. Ջրերը ցուրտ չեն, եփվում են անդա-

դար և վշշում... Մեծ գետ է. նա բարձրանում է, երկրորդ յարկն է հասնում. ամեն տեղ լցրեց նա։ Եւ այդ վշշոցների մէջ մի խոր անդունդ դէպի ցած է քաշում մէլիքի կնոջը։ Նա գնում է, թողնելով իր թեւը մէկի գրկում։ Մէկը սաստիկ ճնշում է նրան, թափահարում է, աշխատում է ուշքի բերել։

—Մի վախիր, մայրիկ, ասում է նա.—Մէլիք-Յուսէֆի աղջիկը չի կտրի իր հօր անունը. նա գիտէ թէ ինչ կանէ. մի վախիր, մայրիկ, սիրելի, խեղճ մայրիկ...

Բայց նրա ձայնը տեղ չէ հասնում։ Աննա-խաթունը բոլորովին հանդարտացաւ, նրա աչքերը լայն բացուել են, շուռ են եկել սպիտակուցի վրայ. կապտած շրթունքները բաց են թողել երկու շարք ատամները, որոնք սոսկալի ոյժով սեղմուել են միմեանց...

ԻԷ

Դեռ արեւ մայր չը մտած՝ ամբողջ գիւղը գիտէր բէկի այցելութեան նպատակը։ Բաւական էր որ այդ այցելութեան ներկայ էր Օհանը. նոյն իսկ Փէրիի անակում էլ յայտնի դարձաւ այն, ինչ լսել և տեսել էր տանուտէրը։ Բայց միայն այդքանը։ Իսկ ինչ էր եղել Օհանի հեռանալուց յետոյ։ Յայտնի չէր. ամբոխից դուրս միայն կուսանոցը գիտէր օրվայ անցքերի շարունակութիւնը։

Մէհրին իրիկնապահին իջաւ կուսանոց։ Աննա-խաթունը ուշքի էր եկել Գայիանէի և միայն Գայիանէի ջանքերով. բայց թէև մեծ էր նրա խնամքը, թէև դրանով նա ցոյց տուեց, որ իր մօր համար չէր խնայի իր կեանքն անգամ, Աննա-խաթունը խնդրում էր, որ կոյս Հեղինէն գայ իր մօտ, խելք և ուղղութիւն ցոյց տայ։ Լսել աղջկան, մանաւանդ հաւատ ընծայել նրան, որ չէ սարսափում թիւրքի ձեռքն ընկնելու մտքից, նշանակում էր խաբվել։ Հարկաւոր էր կոյսի աջակցութիւնը, հար-

կաւոր էր վճռական գործողութիւն...

Սակայն այլ ևս ուշ էր։ Երեկոյեան ցուրտ ստուերների մէջ մայրապետը երևում էր շշկլվածի պէս, կարծես չէր հաւատում թէ իր ոտների տակ հող կայ։ Փակւում են եկեղեցիները... Նա դողում էր, որովհետև բարձր պատերի քարերը խախտված էին երևում, որովհետև միաձոյլ քարային զանգուած չէր շրջապարիսպը և այնքան բարձր, որ ոչ մի մարդ չը կարողանայ հասնել նրա գլուխը։

Կոյսերը գիշերային հսկումի պատրաստութիւն էին տեսնում. այժմ կուսանոցը կարող է միայն լաց լինել, և այդ պարտքը նա կը կատարէ ջերմեռանդութեամբ։ Իսկ Աննա-խաթունը... թող անէ, գործէ, ձեռքերը ծալած նստել չէ կարելի։ Պէտք է փրկանք տալ առանց սակարկութիւններ անելու, պէտք է շահել անօրէնին, կուրացնել նրան։ Ինչու են լռել մարդիկ, ինչու չեն աղաչում բէկին, որ ների, ողորմած լինի։ Թող մեղայ գան, թող խոստանան որ հլու, անձայն հպատակ կը լինեն։

Իսկ երբ Մէհրին պատմում է, որ Գայիանէն չը թողեց ընծայ տալ բէկին, կոյսը կուչ է գալիս ամօթից և դայրոյթից, անիծում է և աղաղակում. «Մեղայ, մեղայ, խայտառակվեցանք, Տէր Աստուած»։ Եւ աւելացնում է, որ ինքը ոտք չի դնի մէլիքի տանը, ուր այդպիսի աղջիկ կայ։

Վանքի դռները խնամքով փակվեցին։ Աննա-խաթունը սարսուռ է զգում Մէհրիի պատմութիւնից և գլուխ է պատռում թէ ինչ անել։

Ա՜հ, ինչ օգնութիւն է ուղարկում Աստուած։ Յանկարծ ներս մտաւ Ջալալը։ Նա թեթևութիւն մտցրեց մայր սենեակի մէջ. այժմ նա յուսահատ գանգատաւոր չէր, այլ ևս չը խօսեց իր կրած զրկանքների մասին, չասաց որ ամենքը անտէր են, թոյլ են տալիս, որ ինքը տխուր լինի այնպիսի ժամանակ, երբ ամենաերջանիկ մարդը պիտի համարվի։ Այժմ համարձակ էր նա, փառա-

իբրև մարդ, որ արդէն գտել է գժտութիւնից դուրս հանող ճանապարհը: Տեսնելով Գայիանէին, նա ծիծաղեց, կարծես հասկացնում էր, որ այժմ ինքը ուրիշ մարդ է: Եւ երբ Գայիանէն իր արհամարհանքը ցոյց տալու համար ձեռքով մի շարժում գործեց և ապա նստեց իր մօր ետևում ու երեսը դէպի պատը դարձրեց, երիտասարդը դիմեց Աննա-խաթունին:

—Այս գիշեր կամ երբէք. լաւ մտածիր, մէլիքի կին, ասաց նա:—Վաղը ինձ այստեղ չես տեսնի. ես լսեցի թէ ինչ է ասել բէկը իմ մասին, իսկ ես քո աղջկայ պէս հսկայ փէհլէվան չեմ, որ մենակ դուրս գամ բոլոր օսմանցիների դէմ: Այս գիշեր երկինքը մեր հովանաւորն է: Ես իմաց էի տուել իմ հօրը թէ ինչպէս ինձ այստեղ չարչարում են: Այսօր Աւետարանոց հասան երկու քաջ խաչենցիներ. մէկը Վարդանասի տանուտէրն է, միւսը մեր ջորեպան Աւագը, որին արջ են անուանում: Նրանց ուղարկել է հայրս, պատուիրելով որ անպատճառ վերջացնեն այս գործը: Վարդանասի տանուտէրը պիտի գար քեզ մօտ և ասէր իմ հօր կողմից, որ չը պէտք է շատ էլ ականջ դնել աղջկան. Թաշէնը այստեղ մի աւանդ ունի, վաղ թէ ուշ նրան պիտի տանենք: Բայց ես չը թողեցի որ նա գայ, երկուսին էլ թագցրի. ոչ ոք չը պիտի իմանայ: Եթէ երկու հաւատարիմ մարդ էլ քո կողմից լինեն, մէլիքի կին, այս գիշեր մենք ապահով կը գնանք... Մերոնք բոլորովին պատրաստ են...

Թաշէնցու համարձակութիւնը բարեբար ազդեցութիւն արաւ Աննա-խաթունի վրայ: Առանց երկար մտածելու, նա նշան արաւ, որ Մէհրին դուրս գնայ, և ապա բռնեց Գայիանէի թևից, հարկադրեց որ իրան նայէ: Ու ասաց.

—Մեր կողմից կը լինեն Թէսոր և Թօփալ-Ծատուրը. երևի Ծատուրը այժմ տանն է:

—Վաղը մենք Թաշէն կը հասնենք ասաց Զալալը.—Փարագլուխ գիւղում մեզ սպասում են երկու քահանաներ. նրանք կը կատարեն մեր պսակը. հայրս այդպէս է կարգադրել: Եւ դա խելօք կարգադրութիւն է, մէլիքի կին: Իմ հայրը, ի հարկէ, չէր ուզի որ անպսակ հարս մտնէ իր դռնով:

Ի՞նչ խօսք. Աննա-խաթունը գիտէ, որ ուրիշ կերպ չէ կարելի: Աղջկայ ծնողների պատիւն էլ նոյնն է պահանջում: Գնալ ճանապարհին, գողունի, ծածուկ կատարել պսակը: Անճարութիւն է... Եւ մօր սիրտը փղձկաց: Արտասուքները կուլ տալով, նա երկու բառով հասկացրեց փեսային, որ այսպիսի հարսանիք կարող է տանել միմիայն այն մայրը, որ վճռել է ամեն ինչ զոհել իր երեխայի համար: Ծանր զոհողութիւն. մայրը գերեզմանում էլ չի մոռանայ այդ տխուր երեկոն:

Զալալը չոքեց նրա առաջ: Նա խոնարհ է ու համեստ: Թէև երիտասարդ, թէև ոսկի օրերի համը չը տեսած, նա հասկանում է այդ վիշտը. նա էլ զրկված է, նրա սիրտն էլ շատ բան էր ուզում: Բայց ինչ արած...

—Երևի այս է գրված մեր ճակատին, հառաչեց նա:

Այո, ճակատագիր. նա վերջիվերջոյ կռացրեց, ջարդեց խեղճ մօրը, որ ուրիշ մտքեր ունէր, ուրիշ երազներ էր տեսնում: Ի՞նչպէս է նա այժմ զանգատվում այդ անողորմ ճակատագրից, ինչ արտասուքներով է հառաչում այդ զանգատը: Թորտակված սիրտը ինչպէս կը կշտանայ արտասուքներից: Մի այդպիսի ճակատագիրը պէտք էր ողբալ օրերով, ամիսներով:

Լացը աշխարհի կարգ է, բայց կան դէպքեր, երբ նա չափաւոր պիտի լինի: Փեսան հասկացնում է այդ բանը. նա միշտ լսել է մեծերի խօսքը, նա էլ հաւատում է, որ տարաժամ արտասուքը չարագուշակ է: Թող յիշէ մէլիքի կինը, որ երկար գիշերային ճանապարհորդութիւն կայ... Լաց լինել երեկոյեան, այն ժամանակ, երբ ճրագը վառված է և քնի հրեշտակը մօտ է գալիս, վատ է...

—Մի յուսահատվիր, իմ մայր, շարունակում է երի-

տատարգը.—Աստուծու կամքն է, հնազանդվիր նրան, ինչպէս ես եմ հնազանդվել։ Ինձ և քո աղջկան այժմ քո օրհնութիւնն է հարկաւոր։ Ես էլ այսուհետև այս տանից եմ, քո որդիներից մէկը. և քեզանից չեմ ծածկի այն, ինչ որ սրտիս մէջ է։ Չեմ մոռանայ այս երեկոն, չեմ մոռանայ քո արտասուքները։ Դու կը լսես և կը տեսնես թէ ինչպէս ենք մենք և կը մխիթարվես, կը մոռանաս այս օրերը։ Սրան (նա մի համեստ հայեացք գցեց Գայիանէի վրա) ես կը պահեմ իմ աչքի լոյսի պէս։ Սա մի ճրագ կը լինի մեր տանը և ամեն մէկը, որ սիրում է ինձ, թիթեռնիկի պէս պտոյտ կը գայ սրա չուրջը։ Ինձ համար այլ ևս արեգակ չը կայ երկնքում. ինչ՞ս է նա, իմ արեգակը երկրի վրա է և դա—Գայիանէն է։ Թող բուք ու փոթորիկ լինի ամեն օր, թող երկինքը ամպերով թխպած մնայ, ինձ ինչ... Իմ արեգակը տանն է, իմ կողքին, ինձ հետ միասին։ Խաչէնի առաջին հարս, նա առաջինը կը լինի և բախտաւորութեան մէջ. հազար բերաններ երանի կը տան նրան...

Խօսքի դիւթական ոյժ... Նա մօր արտասուքների մէջ ծիծաղ դրեց. ինչպէս հեշտ, ինչքան շուտ մոռացվեցին վշտերը։ Եւ մայրը բերանը բաց է անում օրհնութիւնների համար։ Անա նա համբուրեց իր փեսայի ճակատը, անթիւ բարիքներ է մաղթում։ Հրաժեշտի ժամը գալիս է... Եւ այնքան է մայրը յափշտակվել, որ չէ լսում իր ձախ ականջի մօտ ինչ-որ քրթմնջիւն, ինչ-որ հեգնական ծիծաղ։

Վաղուց էր այդ ձայնը խփում նրա ականջին։ Բայց այս անգամ այլ ևս անտես անել անկարելի է. չափն անցաւ, և Գայիանէն բոլորովին մօտեցնում է իր բերանը մօր ականջին և շշնջում է պարզ, վճռական կերպով։ Լռութիւն է տիրում, պէտք է լսել և աղջկան։ Լսում է և Ջալալը.

—Մի խաբվիր, խեղճ մայր, վատ խօսքեր են դըրանք. ես գիտեմ, ես հասկացել եմ... Քո աղջիկը կանգ-

նած է մի խեղճ, վախկոտ մարդ. չէ՞ս տեսնում։

Ջալալն էլ պատասխան ունի և դիմում է նոյնպէս Աննա-խաթունին։ Սկսվում է պայքարը։ Վախկոտ... Դեռ ոչ ոք այդպիսի անուն չէ համարձակվել տալ Վաղահասի տանուտէրին և Արջ-Աւագին։ Նա պատմում է երկուսի համառօտ կենսագրութիւնը, աւելացնում է որ եթէ երկու սրտոտ մարդ էլ Վարանդայից գնան իրանց հետ, ոչինչ չի լինի...

—Քառասուն հազար օսմանցիներ, աւելի բարձր ձայնով շշնջում է Գայիանէն և էլի ծիծաղում։

Մայրը զարմացած նայում է փեսային, չը գիտէ այդ խօսքերի միտքը։ Բայց մի՞թէ Ջալալը պատասխան չը պիտի տայ։ Այդ հեգնութիւնը շամփրում է նրան և նա ինքն էլ չէ խնայում.

—Օսմանցիները քնած են, ասաց նա հպարտութեամբ, փաղօրօք մի յաղթական հայեացք գցելով իր զօքանչի և նշանածի վրա։—Օսմանցիները այս ժամին ոչ մի կասկած չունեն. նրանք գիտեն որ Գայիանէն ինքն է ուզում գնալ բէկին։

Նա յաղթեց. թէ մայրը և թէ աղջիկը պշեցին իրանց աչքերը։

—Գոնէ այդպէս է վկայում ամբողջ գիւղը, շարունակեց Ջալալը նոյն ձևով։—Այնտեղ այժմ ուրիշ խօսք չը կայ. ձեր մարդիկ, մելիքի կին, միայն դրա մասին են խօսում. ասում են որ բանը բանից անցել է...

—Եւ հաւատում են, հարցրեց մայրը։

—Ամենքը... Մի հատ թերահաւատ չը տեսայ...

Եւ նա մանրամասն պատմում է ամբոխի ասածները։

Սարսափելի է դրսի դատաստանը։ Դատապարտողը միայն մելիքի աղջիկն է. բէկը ոչինչ մեղ չունի։ Առաջին անգամն է որ հայ աղջիկը իր յօժար կամքով գնում է անօրէն թիւրքին. և ո՞վ է դա... ամօթ, երկրի առաջին մարդու աղջիկը... Մարդիկ ընդունում են, որ սէրը կարող է կպչել նոյն իսկ գազանին, բայց մելիքի աղ-

ջիկը պիտի խնայէր ժողովուրդը։ Օ՜, միայն ինքը, Զալալն է, որ չէ հաւատում այդ խօսքերին։ Եթէ հաւատար, այստեղ չէր լինի այս ժամին։ Նա ճանաչում է Գայիանէին և չէ հաւատում...

—Բաւական է, կրակ կտրած կանչեց Աննա-խաթունը և վերկացաւ։—Ես ցոյց կը տամ որ մարդիկ սխալւում են...

—Ի հարկէ... Տղամարդի փափախ է դրած իմ գլխին, պէտք է ինձ էլ ազատել ամօթից։

—Պատճառը ես էի, ասաց մայրը։ Զը լուսանար Վարդավառի օրը... Կոյս Հեղինէն իմաստուն է. նրա գուշակութիւնը կատարվեց։

—Հա՛, մոռացայ, մայր... Այն աղջիկը, որի անունը Նազլու է, այժմ ապրում է թիւրքերի հետ։ Այսօր տեսան նրան ինչ-որ մութ մարդկանց մէջ. դրանք աղջիկ փախցնող Բէօսա-Մուխտարի մարդիկն են, որոնք մինչև այժմ գիւղում չէին երևում։ Նազլուն ուրախ, ծիծաղկոտ է։ Մի գիւղացու ասել է, որ ինքը այժմ խեղճ չէ, որ հիմա կարող է անել ինչ ուզէ. հիմա նա մարդկանց հարկաւոր է եղել. թող այժմ զգոյշ լինեն բոլոր բախտաւորները։

—Այդ հաստատ բան է, յանկարծ հարցրեց Գայիանէն։

—Հաաաաա. երեխան էլ գիտէ։

Տղամարդը ժպտում է։ Վերջապէս այդ աղջիկը կոտրվեց, այլ ևս ասելիք չունի. ինչպէս յետ քաշվեց նա, ինչպէս յենվեց պատին և կախ է արել գլուխը, կարծես լաց լինել է ուզում... Եւ մայրը մօտենում է նրան։

—Տեսա՞ր, տեսա՞ր, հարցնում է նա։—Դու մեզ չէիր հաւատում, դու կարծում էիր թէ միակ խելօքը դու ես...

Նա էլ հանգիստ է և խօսում է յաղթական եղանակով. նա էլ գիտէ որ այժմ ընդդիմութիւն չի լինի։

—Վերջացաւ, ասաց նա։—Ա՛րի, ձեռքդ տամ քո նշանածի ձեռքը և... Աստուած ձեզ հետ։

Նա բռնում է Գայիանէի ձեռքը։ Ընդդիմութիւն չը կայ. մի վայրկեան ևս, և այդ քնքոյշ ձեռքը տեղ կը հասնէ, կը յանձնվի տիրոջը։ Նա գլխով նշան է անում և փեսան մօտենում է։ Բայց յանկարծ ցնցվեց այդ ձեռքը, կարծես օձի ատամներ խրվեցին նրա մէջ։ Ջղերը ուժգին կծկվում են, ձեռքը դուրս է հանվում և Գայիանէն մի քայլ յետ է վազում։

—Երբէք... Քո փեսան թիւրքից լաւ չէ, բացականչեց նա մի դառն խառութեամբ։

Այդ կրակոտ եռանդը մի վայրկեան կաշկանդեց մօրը։ Գայիանէն առաջ գնաց այնպիսի վստահութեամբ, որ Զալալը յետ քաշվեց, ճանապարհ տալով նրան։

Անէծքներ է թափում մայրը։ Բայց աղջիկը ուշադրութիւն չէ դարձնում և կանգ առնելով, նայում է խաչէնցու աչքերի մէջ և ասում է.

—Լսի՛ր, մէլիքի՛ տղայ... Մելիք-Յուսէինի աղջկան փախցնելու համար չես դու ստեղծված։ Գնա՛, նստի՛ր գիւղի մարդկանց մէջ, դու էլ բամբասի՛ր։ Լսեցի՞ր ինչ ասացի. չը կայ մի թիւրք, որից դու լաւ լինէիր...

Նա դուրս գնաց, թողնելով ապշած մօրը իր ապշած փեսայի հետ։

Անցան ժամեր. խոր գիշեր էր արդէն։

Յովսէփը դրուել էր իր սովորական անկիւնը Գայիանէի սենեակում. այդտեղ էր նա քնում այն ժամանակից, երբ Գայիանէն ազատեց նրան Շահնազարի ձեռքից։

Վաղուց նա քուն մտած պիտի լինէր։ Բայց այս գիշեր տարօրինակ դէպքեր են տեղի ունենում, և նա քնած չէ, սպասում է թէ ինչ կը լինի։ Ահագին վիրքը ընկած է նրա գողում, բայց այս անգամ նա խորասուզված չէ անհուն տաղերի մէջ։ Նրան խանգարում են։ Աննա-խաթունը ծեծում, չարչարում է դուռը, պահանջում է բաց անել. բայց Գայիանէն անողոք է, չէ շարժվում, պատասխան չէ տալիս, և մօր կատաղութիւնը, անէծք-

ներն ու հայհոյանքները սաստկանում են։ Ահա նա յայտնեց դռան ճեղքով, որ Ջալալն ու Թէոսը գնացին գիւղը, շուտով կը վերադառնան խաչէնցիների ու Ծառուրի հետ և այն ժամանակ կը կոտրեն դուռը, կը տանեն Գայիանէին . . .

Այնուհետև մօր ձայնը չէ լսվում և ամբողջ տիրում է ծանր լռութիւն։ Յովսէփը շուռ-շուռ ճակատի տակից նայում է իր քրոջը, և նրա սիրտը սաստիկ յուզվում է։ Տեսնում է նա որ Գայիանէն տխուր է, կարծես դողում է սարսափից։ Հասկանում է նա ամէն ինչ։ Հասկանում է որ մօր խօսքերը չեն այնպէս խեղդում իր քրոջը, այլ այն դատաստանը, որ տեղի ունի դրսում, ամբոխի մէջ։ ɣ

Այդպիսի խոր խոցող, այդպիսի անողորմ հարուած դեռ չէր ընդունել Գայիանէն։ Հասարակութիւնը դատում է. ինչ կարծիք ունի Գայիանէն դրսի աշխարհի մասին, բայց ինչ է ասում այդ դրսինը Գայիանէի մասին։ Այդ դատաստանը, այդ կարծիքը մի ահաւոր ույժ էր, որի առաջ ոչնչանում էր դիմադրողի ամբողջ եռանդը։ Գիշերային լռութիւնը հաստատում էր մարդկանց կարծիքը. նա ցոյց էր տալիս, որ այդ անարդար դատավճռի դէմ չի բարձրանալ ոչ մի ձայն, և համատարած անխօսութիւնը պիտի հալածէ դատապարտվածին։

Նա մենակ է, բոլորովին մենակ։ Նոյն իսկ Նազլուն էլ հասկացաւ, որ էլի ապրելն է լաւ։ Եւ ուրիշ ո՞վ է մնում։—Մանասը... Նրան էլ հալածում է հասարակաց կարծիքը, նրան էլ մարդիկ դատապարտում են։ Բայց նա բախտաւոր է. հեռու բամբասող ամբոխից, հեռու այդ դատաստանից, նա գործում է, իր գլխի տէրն է։ Նրան դատապարտողը և նրան արդարացնողը նրա զէնքն է։ Բայց նա հեռու է և ո՞վ գիտէ, կարող կը լինի՞ մի խօսքով խրախուսել Գայիանէին, ցոյց տալ թէ մի աշխարհի մէջ լինում են զանազան կարծիքներ . . .

Յովսէփը անդէտ է, նա տեսնում է իր քրոջը և

ինչպէս է յուզվում։ Խեղճ քոյրիկ… քեզ տանում են զոռով, բայց դու չես ուզում անձնատուր լինել քեզ չարչարողներին։ Ի՞նչ կը լինի. ժամանակն անցնում է, այժմ, երևի, գալիս են Ջալալը, Թէոսը և միւս մարդիկ . . .

Յանկարծ նա ցնցվեց, մի անհանգիստ շարժում գործեց, որպէս թէ ուզում էր ոտքի կանգնել և օգնութեան վազել։ Ի՞նչ է այդ։ Գայիանէն տեղից վեր թռաւ, բարձրացաւ բուխարու քարի վրա և պատի ճակատին կախած զէնքերից մէկը յափշտակելով, իսկոյն էլի ցած իջաւ։

Ի՞նչ էր նրա միտքը։ Հրաշալի՜ բան. կարծես տոհմային զէնքերի մէջ ծածկված էր մի կախարդական թալիսման, որ մի ակնթարթում կերպարանափոխեց Գայիանէին։ Ամենքից մերժված մարդը այժմ ինքնավստահութիւն ստացաւ. նա գտել էր պաշտպան, անկաշառ նեցուկը։ Դա մի շատ փոքրիկ արծաթապատ խէնջար էր, որ հեշտութեամբ տեղաւորվեց Գայիանէի ծոցում և անչափ ուրախութիւն պատճառեց նրան։ Այո, դուրս գալով իր թագուստի տեղից, փոքրիկ զէնքը ենթարկվեց մանրամասն քննութեան։

Ընտանեկան աւանդութիւնները ուշադրութեամբ էին վերաբերվում դէպի մէլիքի տոհմային զէնքերը. համարեա իւրաքանչիւրն ունէր իր պատմութիւնը, իսկ փոքրիկ խէնջարը նշանաւոր էր նաև իր հնութեամբ։ Նա շինված էր լեզգիների երկրում և հարիւր տարուց աւել էր, ինչ մի կռւի մէջ ընկել էր Մէլիք-Յուսէֆի պապի ձեռքը։ Նրա պատեանն էլ ճարտար վարպետի գործ էր. չը կար մի կտոր արծաթ, որ ցոյց չը տար թէ ինչ ճարպիկ ձեռք և հարուստ երևակայութիւն է ունեցել արհեստաւորը։ Գեղեցիկ էր մանաւանդ խէնջարի կոթը. կլոր արծաթը, որի կենտրոնում անկված էր արծաթի մեծ մեխը, ներկայացնում էր ահագին բերանը բաց արած մի վիշապ։

Ո՛րքան հեշտ է հասկացվում վարպետի միտքը, որ դրած է այդ մանրանկարի մէջ։ Նա ասում է, որ աշ-

խարհը մի հրէշաւոր վիշապ է, և ով չէ ուզում ոչնչանալ այդ ահռելի բերանում, պիտի ձեռքից չը տայ խէնջարը . . .

Դա հին դաս է, որ այժմ կրկնվում է մի հրաշալի պարզութեամբ. տարիների անագին շարքը պատռելով, վարպետը իր խելօք ձայնը հասցնում է այս լուռ սենեակը, հնչեցնում է այս մենակ աղջկայ ականջում... Ի՜նչքան լաւ է նա, այդ հին, փորձված ձայնը։ Եւ դեռ Գայիանէն կարծում էր թէ ոչ մի ձայն չի լսվի իրան խրախուսելու համար . . .

Նա ծիծաղում է և աչքը չէ հեռացնում բերանը բաց վիշապից։ Այլ ևս զուր է ամրոցը այդպէս լուռ մընում։ Ի՞նչ եղան. ինչո՞ւ չեն գալիս։

Դուռը պինդ փակված է և Գայիանէն չը գիտէ, որ Աննա-խաթունը այլ ևս չէ սպասում իր փեսային։ Թէև որ շուտ վերադարձաւ, նա չէր էլ իջել գիւղը։ Նա պատմեց թէ ինչ զարմանալի դէպք տեղի ունեցաւ։

Դուրս գալով ամրոցի դռներից, Ջալալը տեսաւ մի զինուոր, որ պառկած էր ամրոցից քիչ հեռու, դռների դիմաց և քնած էր, թէև գիշերը ցուրտ էր։ Քիչ էլ առաջ անցնելով, Ջալալը տեսաւ մի ուրիշին, որ նոյնպէս ընկած էր, բայց քնածի նման չէր. Նա շարժվեց, կարծես ինչ-որ բան ասաց։ Ինչացո՞ւ էին այդ զինուորները. գուցէ իրանց կամքով էին այստեղ, գուցէ ոչինչ պաշտօն չունէին, ով գիտէ։ Բայց Ջալալը այնպէս հասկացաւ, որ դրանք բէկի կողմից նշանակված պահապաններ են և պիտի հսկեն մէլիքի տան վրա։

Եւ յետ դարձրեց Թէոսին, ասելով որ ինքը այլ ևս չէ կարող մի բան անել. պէտք է թողնել, թէ չէ՞ աշխարհը տակն ու վրա կը դառնայ. զուր չէ բէկը լուր հասցրել իրան, որ հեռանայ այստեղից։ Թէոսը գիտէր, որ ամրոցի արևմտեան կողմում զինուոր չը կայ, հասկացնում էր որ կարելի է գործել այդ կողմից, չուաններ կախելով ժայռի գլխից։ Բայց խաչէնցին չը հաւա-

տաց. Նա համոզված էր, որ օսմանցիները դարաններ են սարքել ամրոցի շուրջը, որպէս զի բռնեն իրան։ Նա մինչև անգամ չուզեց վերադառնալ ամրոց, անձամբ պատմել իր իմացածը, հրաժեշտ տալ մէլիքի կնոջը. այլ կամաց դէպի գիւղը վազեց, աշխատելով աղմուկ չը յարուցանել . . .

Եւ Աննա-խաթունը դարձեալ չը նեղացաւ իր փեսայից . . .

Իսկ Գայիանէն սպասում էր։

Շունը երկու անգամ հաչեց։ Գալիս են։ Նա շտապով դուրս քաշեց կէնջարը պատեանից։ Խնամքով յըղկած պողվատը շողշողաց, իսկ երկու սուր բերանները խօսեցին նրա հետ, ասացին որ երկաթն էլ չի դիմանայ իրանց։ Հիանալի՜ էր այդ խօսքը... Պողվատի շողը ընկաւ նրա աչքերին, մի փայլուն յոյսի պէս տարածվեց նրա երակներում և երկու կաթիլ արտասունք հանեց նրա աչքերից։

—Օ՜, հանգստացի՛ր, դու կը սպանես, արտասանեց նա պողվատի ձայնով։

Ինքն իր հետ էր խօսում . . .

Եւ սպասում էր, անհամբեր էր, արդէն ձանձրանալու վրա էր։

Յանկարծ նա դողաց, զգալով որ երկու ձեռքեր փաթաթվեցին իր վզին։ Ետ նայեց. նա բոլորովին մոռացել էր, որ իր եղբայրը ակնատես է իր ուխտին։ Յովսէփն էր, որ պինդ գրկեց քրոջը. Նրա աչքերն էլ լցվել էին արտասուքով։

—Մի հատ էլ ինձ տուր, քոյրիկ, ասաց նա ընդհատվող ձայնով։

—Ի՞նչ . . .

—Դրանից... Իմ ձեռքը չի հասնի զէնքերին, դու լաւ ես կանգնում բուխարու քարի վրա... Ես չեմ կարող...

—Քեզ հարկաւոր չէ, Յովսէփ... Զէնքը խաղալիք չէ . . .

Յովսէփը վեր կացաւ։ Նա նեղացած էր այդ խօսքերից, նրա դէմքը շառագունել էր, աչքերը բորբոքված էին։ Մի կատարեալ տղամարդ էր. կարծես սակաւախօս, կծկված երեխան մի ժամում մեծացել էր, ահագին հասակ քաշել։

Ի՞նչպէս նա գնաց դէպի բուխարին, հերոսական ջանքեր անելով որ իր կաղ ոտը չընդդիմանայ իր կամքին. ինչպէս երկու ձեռքով յենվեց պատին, առաջ առողջ ոտը դրեց քարի վրա, ապա քաշեց, տարաւ կաղ ոտը և կանգնեց։ Նա դողում է, վայր կընկնէ, բայց չէ վախում, արհամարհում է մարմնի թուլութիւնը, նոյն իսկ բարձրանում է առողջ ոտի մատների վրա և ձեռքը տանում է դէպի բարձր, դէպի զէնքերը։

Գայիանէն զարմացած է. ուզում է վեր կենալ, բռնել նրան։ Բայց երեխան ինքը տեսնում է, որ զուր է աշխատում. ձեռքը չը հասաւ զէնքերին. և մի ոստիւնով ցած իջնելով, նա օրօրվում է և ասում.

—Տո՛ւր, քո՛յրիկ... Օ՜, ես լաց կը լինեմ, տո՛ւր...

—Բայց ինչի՞դ է, Յո՛վսէփ...

—Ես քեզ հետ եմ... Ես էլ կը սպանեմ և կը սպանվեմ։

Անակնկալ խօսքեր կան, որոնց չէ կարելի պատասխանել։ Եւ Յովսէփը չը թողեց էլ, որ իր քոյրը զարմանք յայտնէ։ Կարծես չը կարողանալով դիմանալ իր մտքերի ծանրութեանը, նա ընկաւ ծնկների վրա և շարունակեց.

—Յովսէփը երեխայ չէ, Յովսէփը գիտէ ամեն ինչ. նա շատ է լաց եղել իր քոյրիկի համար... Նա հիմա լաց չի լինի, նա էլ կը խփէ...

— Դո՛ւ... ինձ համար...

—Քեզ չարչարում են... Բայց մի՛ վախիր, դու արդար ես... Մինչև այժմ ես տանում էի չարչարողներին, քո՛յրիկ. հիմա իմացայ որ նրանց պէտք է սպանել... Տանտէրը ինձ ծեծում է և ես տանում եմ նրան. բայց ես նրան չեմ սպանի, այլ կաղաչեմ որ նա էլ մի սուր վերցնէ, քեզ հետ միասին լինենք... Մենք չենք վախում

վատ մարդկանցից, այնպէս չէ՞, քո՛յրիկ։ Նոյն իսկ թիւրք բէկից էլ չենք վախի... Կը սպանենք և կը սպանվենք...

Երեխան կարծես ջերմուտենդի մէջ էր։ Նրա թոյլ կազմուածքի մէջ բորբոքված կրակը արտայայտվում էր խիստ ցնցումներով։

Գայիանէն առաջին վայրկեան վախեց։ Բայց Յովսէփը այժմ բութ ու անտարբեր երեխայ չէր. նա հասկանում էր թէ ինչ է ասում, նա պահանջում էր և հաւատացնում որ ինքը կարող է... Այդ ձայնը, որ դուրս էր գալիս կենդանի մարդուց, որ դողում էր ներքին կրակից, կրկնում էր նոյնը, ինչ ասում էր վաղուց հող դարձած զինագործը իր նկարի միջոցով։ Ուրեմն աշխարհը չէ փոխվել։ Ո՛չ... Այժմեան աշխարհի մէջ էլ կայ ուրիշ կարծիք, որ հակառակ է գիւղի կարծիքին։

Այդ կարծիքը արտասանում էր Աւետարանոցի ամենաթոյլ խեղճ մարդը։ Բայց դա էլ բաւական էր...

Գայիանէն պինդ գրկեց Յովսէփին։ Նա լաց էր լինում, իսկ Յովսէփը անդադար կրկնում էր.

—Ինձ էլ տուր, քո՛յրիկ...



ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա.

—Մի՞թէ դեռ կասկած կայ։

—Թահմազ-Ղուլի-խանը Իրանի առաջին հերոսն է, բայց երբէք չէ մոռանում, որ մարդկային գործի աջողութիւնը տարակուսական է։ Թահմազը զգոյշ է, մինչդեռ մի ուրիշը նրա տեղ վաղուց ինքն իրան Աստուած կամ Աստուծու նման մի բան կը լինէր հրատարակած։

—Դա խելօքութիւն է ցոյց տալիս։ Խելօք մարդը նոյն իսկ աննշան յաղթութիւնից էլ ահագին օգուտներ է դուրս բերում։ Իրանը, այո, կենդանացաւ, այժմ կարելի է հաւատալ. մի այդպիսի փտած դիակին շունչ տալ կարող էր միայն այն մարդը, որ քաջութիւնից աւելի խելք ունի։ Բայց ինձ չէ ուրախացնում Իրանի վերածնութիւնը... Ինձ զարմացնում է քո բերած խորհուրդը... Ո՞րտեղից հանեցին նրան։

—Չը գիտեմ, մելիք, ես միայն պատմեցի այն, ինչ մի քանի անգամ լսել եմ շատերից։ Մարդիկ, որոնք Թահմազ-Ղուլի-խանի մերձաւորներից են, որոնց յայտնի են նրա դիտաւորութիւնները, այդ էին ասում։

—Հաշտութի՞ւն...

—Այո... Ասում են, Իրանը ունի իր սեփական շատ ցաւերը, պէտք է սպասել, հաշտվելով գոնէ առժամանակ։

Եւ այսպէս խօսողը մօտեցաւ փոքրիկ խուցի լուսամուտին։ Տարիքով նա շատ ջահիլ էր իր խօսակցից,

բայց հասակով այնքան բարձր էր, որ կարողացաւ նայել պատի վերևում բացած լուսամուտից և տեսնել շրջակայքը։

Խօսակցութիւնը տեղի ունէր Դիզակի Սպիտակ-Խաչ վանքում, որ շինված էր մի բարձրաւանդակի վրա, Հադրութ և Վանք գիւղերի մէջտեղը։—Ցուրտ առաւօտ էր։ Երէկվանից մաղում էր խիտ և մանր ձիւնը։

Լուսամուտը նայում էր այն բարձր սարերին, որոնք երեք կողմից շրջապատում են Հադրութի ձորը։ Նրանց երկար կատարները կարծես ծուխ էին արձակում. գիշերը վեր էր կացել սաստիկ քամի, բուքը ցածրից ձիւնի ամպեր էր բարձրացնում և պտտեցնում էր օդի մէջ, խառնելով վերևից տեղացող տարափի հետ։ Երիտասարդը ուշադրութեամբ դիտում էր լեռնաստանի ձմեռնային մռայլ և սպառնալից օրը։ Եւ հասկանալի էր թէ ինչու։ Նա պատրաստված էր ճանապարհ գնալու։

Միւս մարդը, որին նա մելիք անուանեց, նոյնպէս ճանապարհորդ էր, բայց բոլորովին անտարբեր դէպի դրսի եղանակը։ Ծանր քայլերով անց ու դարձ էր անում փոքրիկ խուցի մէջ, ձախ ձեռքի մատներով անդադար շոյում էր իր ալեխառն բեղերը։ Ամեն անգամ, երբ երիտասարդը պատասխաններ էր տալիս նրա հարցերին, տեղի էր ունենում կարճատև ընդմիջում. մելիքը խորասուզվում էր մտքերի մէջ, իսկ նրա լիքը դէմքը ցոյց էր տալիս սաստիկ սրտնեղութիւն, հոգեկան մռայլ տրամադրութիւն։

Երիտասարդը վաղ առաւօտեանից էր զարմացած այդ դէմքի վրա, դեռ այն բոպէից, երբ երկուսը հանդիպեցին միմեանց և բարևեցին։

Հինգ ամսից աւել էր, որ երիտասարդը գնացել էր Պարսկաստան, ուր աշխատում էր օգնութիւն հասցնել Ղարաբաղին։ Երէկ նա շտապում էր, չը խնայելով իր ձիուն, որպէս զի որքան կարելի է շուտ տեսնուի մելիքի հետ։ Նա լաւ լուրեր չէր բերում, բայց զգում էր որ

պարսիկ մեծամեծների սառն վարմունքից և յուսահատական խօսքերից խոցոտուած իր սիրտը մխիթարութիւն կը գտնէ Մէլիք-Աւանի մօտ։ Այժմ նրա առջևն է Դիզակի տէրը։ Բայց ո՜րպիսի փոփոխութիւն հինգ ամսվայ մէջ։

Դարձեալ լուրջ ու խելօք է նրա դէմքը. դարձեալ յափշտակող են նրա գեղեցիկ, վառվռուն աչքերը. նրա շարժուածքները, ձայնը նոյնն են. բայց նա կարծես շատ է ծերացել այսքան կարճ միջոցում. նրա խօսքի մէջ այլ ևս չը կայ վստահութեան այն ուժգին շեշտը, որ հաւատ էր ներշնչում։ Ընդհակառակն, նա ինքն էլ, կարծես, կորցրել էր իր հաւատը. իսկ նրա բարի ժպիտը, որ արհամարհում էր ամեն մի արգելք, ամեն մի անաջողութիւն, այժմ անհետացել էր նրա բերանից... Այժմ ո՛րքան շատ է նա մտածում։ Առաջ նա այդպէս չէր. առաջ շուտ էր գտնում այն, ինչ իրան հարկաւոր էր՝ ելք ճարելու, ճանապարհ բաց անելու համար։

Այժմ, ինչպէս երևում էր, նա զուր էր տրորում իր հաստ բեղերը. մտքերը փախչում էին նրանից...

Եւ երիտասարդը, նայելով սարերի բուքին, մի բաւականութիւն էր զգում. հարկաւոր է գնալ, այդ ձիւնախառն քամիների մէջ մոռանալ այս դառն իրողութիւնը։ Նա լսեց մէլիքի ձայնը և յետ դարձաւ լուսամուտից։

—Թահմազի բախտը շատերին չէ վիճակվում, բայց ես էլ, Ասլան, շատ թէ քիչ հասկանում եմ աշխարհի բաները։

—Ի՞նչ խօսք, մէլիք։ Թահմազը դեռ երեխայ էր, երբ դու...

—Ես զգում եմ խելքը, ընդհատեց Մէլիք-Աւանը երիտասարդի խօսքը և ապա շարունակեց.

—Ես ինքս էլ թեթևամիտ, անպարծ մարդկանց թշնամին եմ, պահանջում եմ, որ ամեն գործի մէջ լինի խելք, հեռատեսութիւն։ Բայց էլի կրկնում եմ՝ հաշտութիւն—դա ծիծաղելի, անմիտ ձայն է մի այսպիսի

երկրում։ Հաշտվել—նշանակում է գլուխ իջեցնել այն բոլոր իրողութիւնների առաջ, որոնք կատարվել են այստեղ, կատարվում են և պիտի կատարվեն։ Այդ իրողութիւններից մի հատն էլ մեր օգտին չէ խօսում, ամեն մէկը մեզ ոչնչացնելու, մեր հոգին հանելու նպատակն ունի։ Հաշտութեան ուրիշ պայման չը կայ, պէտք է ընդունել այդ իրողութիւնները. իսկ ընդունել—նշանակում է իր ձեռքով իրան սպանել։ Ո՛չ... մեր ձեռքը չի բարձրանայ մեր կեանքին վերջ տալու համար։ Կիսամորթ մարդն էլ իրան մեռած չէ համարում. նա յոյս ունի որ կը բժշկվի, կապրի։ Մենք էլ այդպէս ենք։ Մենք և օսմանցիները շատ հեռու ենք միմեանցից. մեր և նրանց մէջ ահագին ձորեր կան, որոնք լցված են մեր արիւնով, մեր արտասունքներով։ Հաշտվել հնարաւոր էր, եթէ կարելի լինէր կամուրջներ շինել այդ ձորերի վրա։ Բայց ինչի՞ց շինենք կամուրջներ։ Օսմանցին անգթաբար այրել, ոչնչացրել է բոլոր նիւթերը, մոխրի կոյտեր են դիզված մեր սրտերում, և մոխրից ո՛չ մի վարպետ, ո՛րքան էլ վարժ ու ճարտար լինի, չէ կարող կամուրջ շինել... Մեզ օգնութիւն պիտի ուղարկեն, բայց փոխարէնը խորհուրդներ են ուղարկում...

—Օգնութիւն չը կա՛յ, բացականչեց երիտասարդը ոգևորված։

Մէլիք-Աւանը դարձեալ յափշտակեց նրան. նրա աչքերը փայլեցին խորին բաւականութիւնից։

—Օգնութիւն չը կայ, գոնէ շուտով չի լինի... Ամբողջ Պարսկաստանը գիտէ, որ Թահմազի աչքը Սէֆէվիների գահին է յառած։ Իսկ այդ գահի վրա նստելը հեշտ բան չէ, թէև Թահմազը այժմ Իրանի կուռքն է։ Գահը թափուր չէ. նրա վրա նստած է մի մանուկ, որի երակների մէջ վազում է Սէֆէվիների արիւնը և որին պաշտպանում է հոգևորականութիւնը։ Պէտք է գրաւել հոգևորականների սիրտը. դրա համար Թահմազը պիտի հրապարակէ իւրաքանչիւր շիա մահմեդականի նուիրական

ուխտը, ազատելով Քէրբալան օսմանցիների ձեռքից։ Շիաների մեծ իմամները գերութեան մէջ են. Հասանի և Հուսէյնի գերեզմանները պղծվում են սիւննիներից։ Թահմազը միւսների նման ողբում է այս հանգամանքը. նա ամենից առաջ շիա է և երդվել է իմամների գերեզմանով, որ իր առաջին գործը կը լինի Քէրբալան ազատելը։ Նրա ուշն ու միտքը դէպի այն կողմն է դարձրած, դէպի Բաղդադ։ Անսուր պատերազմ պիտի լինի. մինչև որ Բաղդադը չընկնի, իմամները գերութիւնից չեն ազատվի։ Թահմազը գիտէ թէ ինչ դժուար գործ է դա, բայց չէ յուսահատվում, պատրաստվում է, իսկ իրան շրջապատողներին ասում է, որ դեռ ժամանակ չէ։ Տեսնում ես, մէլիք, որքան նա հեռու է մեզանից...

—Դու էլ, ուրեմն, հաստատում ես, որ մենք մենակ ենք... Բայց մենակ ոչինչ չենք անի...

Մէլիք-Աւանը նորից սկսեց իր անցուդարձը, նորից թաղվեց մտքերի մէջ։ Իսկ երիտասարդը երեսը դարձրեց դէպի սարերը։ Այս անգամ նա չը ծածկեց հեռանալու, բուքի մէջ ընկնելու ցանկութիւնը։

—Եղանակը մի մութ գիշերվայ չափ նպաստաւոր է, ասաց նա.—ես ճանապարհ կընկնեմ հէնց այժմ և կը գնամ ուղիղ։ Այսպիսի ժամանակ ծոյլ օսմանցին չի դուրս գայ իր տաք անկիւնից, որ տեսնէ թէ ով է գնում ճանապարհով։

—Բայց մի քանի ժամանակ առաջ ես յոյս ունէի,—յանկարծ, կարճ լռութիւնից յետոյ, շարունակեց մէլիքը, կարծես չը լսեց Աւանի խօսքերը։—Հիւսիսը կամ հարաւը... երկուսից մէկը ձեռք կը մեկնէ մեզ, ասում էի ես։ Անցեալ ուրբաթ օրը Հասեկայ վանքում յայտնի դարձաւ, որ չը պէտք է յոյս դնել հիւսիսի վրա։ Վրաստանը հոգին է շունչ քաշում. երեք անողորմ թշնամիներ—ներքին խռովութիւնները, լեզգիները և օսմանցիները կեղեքում են այդ դժբախտ երկիրը։ Վրաստանից դէնը, սարերի միւս կողմում, կատարեալ լռութիւն է

տիրում։ Պետրոս Թագաւորը իր հետ գերեզման տարաւ մեր բոլոր յոյսերը. այժմ ռուսները չեն նայում դէպի մեր կողմերը, թէև շարունակ յոյս տալիս են։ Վանքից դուրս եկայ. չը գիտէի թէ դէպի ո՛ր կողմ դարձնեմ իմ ձիու գլուխը։ Արևելքում Մուղանի անապատն է, արևմուտքը օսմանցիներին է պատկանում։ Մնում էր հարաւը. էլի Պարսկաստանը, պառաւ, մաշված Պարսկաստանը... Նա շատ հարուածներ է տուել մեզ, բայց աւելի վատ հարուածներ ինքը ստացել է ուրիշներից։ Հին գազանը այժմ մի լէշ է, որի վրա աչք են տնկել բազմաթիւ արծիւներ։ Բայց նա դեռ ճիրաններ ու ատամներ ունի։ Օսմանեան զօրքերից մի բաւական ստուար հատուած գնաց այդ գազանի դէմ և մեր Գիւլստանն ու Ջրաբերդը այլ ևս այնպէս ոտնակոխ չեն, ինչպէս առաջ։ Թող գազանը քիչ էլ մռնչայ, քիչ էլ հանէ իր ճանկերը, օսմանցիների մի մասն էլ կը հեռանայ մեր երկրից։ Ահա և օգնութիւն...

—Այլ ևս չեն հեռանայ... Թահմազը շուտով կը քաշվի Խորասանի կողմերը, որ այնտեղ հանգիստ պատրաստվի։

—Ուրեմն հարաւն էլ չէ օգնում... Մենակ ենք, ուր որ գնում ենք, ճակատներս խփում ենք քարերին։ Մեր մէջ, անայլին կերպով, գուցէ հնար լինէր մի բան մտածել, գլուխ բերել։ Գիւլստանը, Ջրաբերդը, Դիզակը և դրանց հետևելով նաև Խաչէնը կարող էին մօտ հինգ հազար մարդ հանել։ Բայց ո՞ւր է կռւի դաշտը։ Օսմանցիները նստած են մեր տներում. դուրս անել նրանց չէ կարելի, իսկ կռւելու համար պէտք է, որ մենք դրսից սկսենք և սրով ու հրով գնանք մեր տների վրա... Բացի դրանից Վարանդան... Ա՛հ, եթէ կարելի լինէր կտրել նրան, դէն գցել մեզանից։ Բայց դա անհնարին է. Վարանդան մեր հինգ մէլիքութիւնների մէջ ձեռքի կամ ոտի տեղը չէ բռնում, որ կտրենք ու հեռացնենք։ Նա մեր սրտին շատ մօտիկ տեղն է, և սուր մխել այդ տեղը, անխելքութիւն կը լինի։ Թշնամին շատ պինդ է նրա-

տել այնտեղ և մեզ միշտ կը ջարդէ։ Դրսում օգնող չը կայ, իսկ տանը ողբալի է մեր դրութիւնը։

—Մեծ սխալ էր Վարանդան կանանց ձեռքին թողնելը, յանկարծ տաքանալով ասաց Սալմանը։

Նա մոռացաւ որ այդ կանայք Մէլիք-Աւանի հարազատներն են. այդ վարկեանին նրան տանջողը անարդար իրողութիւնն էր։ Դիզակի տէրը, սակայն, շատ մեղմ կերպով նայեց նրան, նոյն իսկ հաւանութեան նշան արաւ գլխով։

Սալմանը առաջ տարաւ իր խօսքը։

—Վարանդան պէտք էր յանձնել տղամարդի, և այժմ նա մեր հիւանդոտ կողմը չէր լինի։ Կինը աշխարհ կառավարող չէ… Երէկ մեր Պօղոսը արտասուք թափեց, երբ տեսաւ մեր սարերը։ Հինգ ամսվայ կարօտը նրան դարձրել էր մի երեխայ, որ յանկարծ տեսնում է իր մօրը։ Բարագլուխ գիւղի մօտ հանդիպեցինք մի քանի մարդկանց. նա մոռացաւ ամէն զգուշութիւն, յետ մնաց և սկսեց խօսել նրանց հետ։ Մէկ էլ տեսայ, Պօղոսս ձին քշում է իմ ետևից և կանչում է ինձ, կարծես մի դժբախտութիւն է պատահել։ Մօտեցաւ. նա այլ ևս Պօղոսը չէր. յուսահատ, տխուր, կարծես թէ թլոցի միջից է դուրս եկել։ Նա իմացել էր գիւղացիներից թէ ինչեր են պատահել Աւետարանոցում և պատմեց ինձ ախ ու վաշով։ Ճիշդն ասած, ես չը հաւատացի և, բարկանալով Պօղոսի վրա, պատուիրեցի առաջ գնալ և աշխատել մինչև երեկոյ հասնել Տող ու իմաց տալ քեզ իմ գալուստը։ Ինքս բաւական ուշ հասայ այստեղ, համարեա կէս գիշեր էր։ Պօղոսը վերադարձել էր. վազելով իմ ձիու առաջ, բռնեց սանձը, յայտնեց որ ճիշդ էր Քարագլխի մօտ լսածը և նորից պատմեց Աւետարանոցի դէպքերը, ապա միայն ասաց թէ դու առաւօտն այստեղ կը լինես… Պակասն այդ սիրահարութիւնն էր. մեր ողբալի դրութեան մէջ պակասում էր այն, որ Մէլիք-Յուսէփն աղջիկը թիւրք բէկին գնայ…

—Նա միայն Մէլիք-Յուսէփնի աղջիկը չէ, իմ քրոջ աղջիկն էլ է, ասաց Մէլիք-Աւանը մի խուլ և տխուր ձայնով։

—Եւ ինչ կը լինի, մէլիք…

—Ես էլ այդ հարցն եմ տալիս։ Ես էլ քեզ պէս երէկ եմ լսել, ճանապարհին, երբ գալիս էի Ջրաբերդից։ Աւետարանոց չը գնացի, ուզում էի իմանալ՝ ինչ լուր կայ քեզանից։ Ես սպասում էի քեզ։

—Վարանդան կորած է։ Մէլիք-Յուսէփնի ժառանգը կը դառնայ Սուլէյման-բէկը։ Սա, ի հարկէ, ոչինչ բան է սիրահարված աղջկայ համար…

—Դու շատ ուռցրիր մի փոքրիկ անցքը, անհաճութեամբ պատասխանեց Մէլիք-Աւանը, թոյլ չը տալով որ երիտասարդը վերջացնէ իր խօսքը։—Չափազանցելը յատուկ է վախկոտ մարդկանց. իսկ դու՝ դրանցից չես։ Ես հաւատում եմ այդ պատմութեան, որովհետև ճանաչում եմ իմ քրոջ աղջկան։ Պապերի խօսք է, որ անսովոր երեխան կուտէ իր գլուխը։ Եւ իրաւ, զարմանալի խելօք, շնորհալի երեխայից պէտք է սպասել կամ երևելի գործ, կամ մեծ յիմարութիւն։ Թողնենք երեխային. նրա արարքը ընտանեկան պատուի հարց է և ոչ աւելի. այդ ընտանիքում ներկայ են և իմ սպիտակ մազերը…

Նա թափ տուեց ձեռքը, մի կտրուկ նշան արաւ, որ հասկացնում էր թէ նա ինքը լաւ կիմանայ պահպանել իր մազերի անարատ գոյնը։ Եւ Սալմանը չը համարձակվեց խօսել։ Նա բաւարարութիւն ստացաւ, որովհետև գիտէր թէ ով է կանգնած իր առաջ։

—Զուր է նաև խօսել այն սխալների մասին, որոնք տեղի են ունեցել և որոնց այժմ չէ կարելի ջնջել, շարունակեց մէլիքը։—Խեղդվողը յարդից էլ է բռնում. մենք էլ պիտի բռնենք ամէն մի շիւղից, որ կարող է օգնել մեզ։ Հասկացրու այս բոլորը. մտիր Թահմազի մօտ, անձամբ խօսիր նրա հետ իմ անունից, խօսիր համարձակ։ Մի ժամանակ ինքը Թահմազն էր մարդ ուղարկում ինձ

մօտ, ինքն էր առաջարկում միանալ օսմանցիների դէմ։ Այժմ... աջողութիւնը մարդուն զօռօղութիւն է տալիս, ես ոչինչ չունեմ դրա դէմ։ Ասա՛, որ մենք կուսարար երեխաներ չենք, իսկ նա մեր մեծը չէ, որ հաշտութեան խրատներ տայ։ Թո՛ղ օգնէ գոնէ շահսէվանների և այլ թափառական ցեղերի միջոցով։ Թահմազին նրանք լսում են... Բաւական է որ մի քանի արշաւանք գործեն օսմանցիների դէմ, մեր գործը կը հեշտանայ։ Պէտք է մի կերպ դուրս անել օսմանցիներին մեր տներից... Այնուհետև մենք էլ կը կուենք...

—Բայց այդ վայրենիները վտանգաւոր դաշնակիցներ են. նրանք կողոպտում են միմեանց և մեզ էլ չեն խնայի։

—Ջուրն ընկնողը անձրևից չէ վախենում։ Սա վերջին միջոցն է. չեմ կարծում, որ գոնէ այդ չնչին օգնութիւնը հասցնեն մեզ, բայց պէտք է փորձել։ Ղարաբաղը ինձ է նայում, ինձանից է հարցնում թէ ինչ կը լինի վերջը։ Եւ ես չեմ խօսում. ինչ կարող եմ ասել։ Միայն քեզ եմ յայտնում ամեն ինչ. դու իմ խոստովանահայրն ես Լօրի, Թահմազը...

Նա յանկարծ լռեց. դուռը բացվեց և շէմքում երևաց մի ծերունի վարդապետ, որ ժպտում էր։ Մէլիքը նրան ներս կանչեց, բայց այլ ևս չը նորոգեց խօսակցութիւնը Թահմազի մասին։

Թահմազը Նադիրի երկրորդ անունն էր։ Դիզակի տէրը վաղուց բարեկամութիւն ունէր պարսիկ աւազակապետի հետ, որ այժմ Իրանի միահեծան հրամանատարն էր։ Բարեկամութիւնը, ինչպէս տեսանք, կատարվում էր Ասլանի միջոցով։ Ասլանը մէլիքի մօտիկ ազգականն էր և փայլուն կերպով էր տանում իր պաշտօնը։ Ամենադժուար բանը սահմանի գաղտնիք պահելն էր։ Օսմանցիները խիստ հսկում էին, որ Արաքսի երկու ափերի մէջ բարեկամութիւն չը հաստատվի, բայց Ասլանի համար դա արգելք չէր. նրա ճանապարհները անծանօթ էին

օսմանցիներին. միայն Մէլիք-Աւանը և նա գիտէին թէ ինչ են անում։ Նոյն իսկ Ասլանի հաւատարիմ ծառան, Պօղոսը, որ շուաքի պէս հետևում էր իր տիրոջը, շատ բան չը գիտէր։

—Այսպիսի եղանակին տանից դուրս չեն գնում, մէլիք, ասաց վարդապետը։—Մեր վանքը, փառք Աստուծոյ, աւերակ չէ և կարող է տաք անկիւն ու մի ամանկերակուր պատրաստել ձեզ նման հիւրերի համար։ Այսօր ես չեմ կարողանում հասկացնել Պօղոսին ու Հայրապետին, որոնք առաւօտեանից մի քանի անգամ հանել են ձեր ձիաները ախոռից, ասելով թէ դուք գնում էք, և էլի ներս են տարել, տեսնելով որ չէք դուրս գալիս։

—Նրանք գիտեն, հայր սուրբ, որ մենք չենք կարող չը գնալ, ասաց մէլիքը։

—Մեղք է գնալը... Սարերում այնպիսի բուք է, որ Աստուած ազատէ...

—Բուքը մեզ չի սպանի...

—Գոնէ սպասեցէք մինչև երեկոյ. քամին արևելքից է, երկար չի մնայ։ Ես միայն եղանակի պատճառով չեմ ասում։ Ժողովուրդը ուզում է քեզ տեսնել, մէլիք։ Արդէն գիտեն, որ դու այստեղ ես և շատ մարդիկ են գալիս Թաղասեռից, Հադրութից, Վանքից, նոյն իսկ Որդնաշատից։ Մեր ձորի գիւղերում մարդ չը կայ, որ ասելիք չունենայ...

—Ի՞նչ են ուզում։

—Բոլոր այրված սրտերը իրանց ցաւն ու գանգատներն են ուզում յայտնել։ Կան շատերը, որոնք մի քանի անգամ գնացել են Տող, բայց քեզ չեն տեսել։ Վերջին ժամանակները դու տանը չէիր։ Մենք էլ ունենք շատ բան, Սպիտակ-Խաչի ցաւերն էլ շատ են։

Մէլիքը կախ արեց գլուխը. նա արդէն հասկանում էր թէ ինչ պիտի ասեն գանգատաւորները։ Իսկ վարդապետը աւելի ևս պարզեց այդ հանգամանքը։

—Մեծ մասը, որքան ես գիտեմ, գանգատվում է

օսմանցիների ձեռքից։ Բոլոր գրկվածները իսկոյն վազում են վանք, յայտնում են, որ այլ ևս ապրել անկարելի է։ Բայց մենք ինչ անենք, մենք ինքներս էլ գանգատաւոր ենք։ Մեր ձորի ժողովուրդը հանդարտ է, դիմացող. բայց նրան էլ յուսահատեցրել են։ Վանքի թոնրատանը այժմ ապրում է մի ամբողջ ընտանիք։ Ես լեզու չունեմ, որ նկարագրեմ նրանց թշուառութիւնը։ Երեք երեխաներ կան, բոլորովին մերկ։ Մէկին մայրը երեք օր պահել է մոխրի մէջ թաղած, որպէս զի ցրտահար չը լինի։ Խեղճ Բարսեղ. ճանաչում էի նրան. ամառը լաւ էր, երկու լուծ եզն ունէր, աշխատում էր։ Մի շաբաթվայ մէջ օսմանցի զինուորները նրան պլոկեցին և այժմ նա ընկած է կիսամեռ, վիրաւոր։ Մի դատարկ բանի համար ընդդիմացել է թիւրքին, որ առանց աջ ու ձախ նայելու հանել է իր սուրը և խփել նրա ուսին. Նա այլ ևս աջ թև չունի...

Մէլիք-Աւանը միայն մի «հը՛մ» արաւ և սկսեց մատները քսել իր բեղերին։ Իսկ վարդապետը պատմում էր մէկը միւսից քստմնելի դէպքեր։ Ո՛չ, դանակը հասել է ոսկորին։ Սարսափելի բաներ են պատմում Վարանդայի մասին, բայց Դիզակը Վարանդայից յետ չէ մնում։

Ասլանը չը կարողացաւ երկար նայել այն ջլատ, պինդ մարդուն, որի հետ քիչ առաջ խօսում էր Թահմազի օգնութեան մասին։ Այդպիսի դրութեան մէջ նա դեռ չէր տեսել Դիզակի տիրոջը... Մէլիք-Աւանը լսում էր այդպիսի ցաւեր և լռում էր... Լռում էր, որովհետև խօսք չունէր։ Նա չի դիմացաւ և բացականչեց.

—Ես կը գնամ, դու մնացիր, մէլիք, ես հէնց այժմ կը գնամ...

Բայց մէլիքը կանգնեցրեց նրան իր մի հայեացքով։

—Ես էլ եմ գնում, ասաց նա.—ինձ սպասում են շատ կարեւոր գործեր։

—Իսկ ժողովուրդը... Ի՞նչ պատասխանեմ նրան, հարցրեց վարդապետը։

—Եթէ հայը հայի հետ վէճ ունի, ես կը լսեմ, թող գան ինձ մօտ երեք օրից յետոյ։

—Վէճեր չը կան, վէճերը մոռացվել են...

—Ասա ամենքին, հայր սուրբ, որ օսմանցու գործերի մէջ ես չեմ խառնվում... իրաւունք չունեմ։ Մի՞թէ դու չը գիտես... Թող գնան Սուլէյման-բէկի մօտ։

—Ասել եմ, հարիւր անգամ բացատրել եմ։ Բայց դու պիտի տեսնես թէ ինչպէս են ինձ պատասխանում։

—Ի՞նչպէս...

—Լաց են լինում... Ժողովրդի արտասունքը գետի պէս է գնում...

Նրանք դուրս գնացին։ Ցուրտ քամին չորացնում էր։ Վարդապետը, մէլիքը ձայն չէին հանում, իսկ Ասլանը շտապեցնում էր Պօղոսին։ Չորս հոգին դեռ չէին նստել ձիաների վրա, երբ վանքի թոնրատանից դուրս սողաց Բարսեղի ընտանիքը։ Ամենքը լաց էին լինում... Լաց էր լինում ինքը՝ Բարսեղը, ձախ ձեռքով ցոյց էր տալիս միւս ուսը, որ փաթաթված էր փալասների մէջ. լաց էր լինում նոյն իսկ ծծկեր երեխան, նա, որին մայրը երեք օր պահել էր մոխրի մէջ թաղած։ Բարսեղի կինը ողորմութիւն էր աղերսում... Թշուառութիւնը անհերես է դարձնում մարդուն։ Մէլիքը մի քանի անգամ ասաց որ լաւ է, բաւական է, յանձնեց վարդապետին, որ խնամէ այդ ընտանիքը. բայց կինը դրանով բաւական չէր, խնդրում էր որ մէլիքը լսէ ամեն ինչ, իմանայ թէ ինչ արին անօրէնները... Ձիաները պատրաստ են, Ասլանը նստել է, գնում է, իսկ Բարսեղի կինը կպել է մէլիքին, աղաչում է...

Մէլիքը, վերջապէս, կորցրեց համբերութիւնը, յանկարծ գոռաց խեղճերի վրա։ Եւ նրանք լուռ ու մունջ յետ քաշվեցին, նորից մտան թոնրատուն։

Ձիաւորները գնացին դէպի վանքի դուռը։

—Դու բարկացա՞ր, հարցրեց Ասլանը։

—Ի՞նչ անեմ, բարկութիւնն էլ երբեմն ծածկում է մարդու անկարողութիւնը...

Բայց յետոյ, դրսում։ Այնտեղ, ձիների մէջ, երեւում էին տղամարդիկ, կանայք, երեխաներ։ Ամենքը առաջ վազեցին կիսամեռ, ցրտահար, կապտած. կանչում էին, հեծեծում, ուզում էին ընկնել մէլիքի ձիու ոտների տակ...

—Գնացէք վանք, ես վարդապետին ասել եմ. գնացէք, գնացէք, անդադար կրկնում էր Մէլիք-Աւանը ճանապարհ բաց անելով ձիու համար։

Ի՞նչ պիտի անէր վարդապետը։ Այստեղ էլ նոյն աղաչանքն էր, այստեղ էլ խնդրում էին, որ մէլիքը լսէ ամեն մէկին, ճար անէ։ Աղաղակները, հեծեծանքները սաստկանում էին. ո՛ր մէկին լսել, ի՛նչպէս լսել...

Եւ մէլիքը շարժեց ձիու սանձը, բայց հեծեծանքները, լացը, ճիչերը չը յուսահատւեցին, վազեցին նրա ետեւից։ Դա մի հալածանք էր. Դիզակի տէրը յոյսը դրել էր ձիու վրա, իսկ ձին երբէք անկատար չէր թողել իր տիրոջ կամքը։ Աղաչողները, ձիների մէջ վազվզողները յետ մնացին։ Այլ ես ձայներ չէին լսվում։

—Դու փախա՛ր, խաբեցի՛ր, նորից հարցրեց Ասլանը եւ կանգնեցրեց ձին։

—Ի՞նչ արած, դրանք էլ միջոցներ են։

Եւ յետ նայելով դէպի վանքը, նա աւելացրեց.

—Հաշտվեցէք, համբերեցէք... այս են ասում հեռաւոր մարդիկ, նրանք, որոնք այսպիսի բաներ չեն տեսնում...

—Թողնենք տեսնողներին եւ չը տեսնողներին։ Ինձ թո՛յլ տուր, մէլիք, հէնց այստեղ բաժանվել քեզանից։ Այստեղից ես ուղիղ դէպի սարը կը գնամ...

—Ճանապարհ չը կայ այս կողմից, պատասխանեց մէլիքը, նայելով դէպի բարձր, ուր ցցված էին սարի ձիւնապատ լանջերը։

—Մի եւ նոյն է, ես առանց ճանապարհի էլ կեր-

թամ. ո՞վ է այսպիսի ժամանակ ճանապարհ որոնում...

—Մինչեւ Սեւհող-Աղբիւրը մենք միասին կը գնանք եւ կը խօսենք...

—Իմ տեսածից եւ լսածից յետոյ ի՞նչ խօսք կարող է լինել։

Մէլիքը ծիծաղեց։

—Ճի՛շդ պատասխանի, ասաց նա, տեսնելով որ Ասլանը յամառում է.—մի քանի ժամ է, որ տեսնում ես մեր օրը եւ փախչում ես...

—Այո, ես լաւ եմ համարում հեռանալ, ոչինչ չը տեսնել։

—Ի՞նչ է, դու մեղադրում ես ինձ...

—Ո՛չ, ոչ... Ես այլ ես չեմ կարողանում տեսնել քեզ այդ դրութեան մէջ... Իմ սիրտը ցաւում է...

—Իրաւունք ունես. ամեն մեկը կարող է խղճալ ինձ...

—Ո՛չ, մէլիք, ես այդ չեմ ասում։ Պարսիկ իշխանաւորների տան, անտարբեր դէմքերը ինձ զզուեցրել էին։ Ես մի շաբաթ չէի դիմանայ Պարսկաստանում, եթէ իմանայի թէ դու կարող ես ուրիշին յանձնել իմ պաշտօնը։ Ամեն օր մի եւ նոյնը. գոնէ այդ մարդիկ անկեղծ լինէին, գոնէ ասէին այն, ինչ որ ունեն իրանց սրտի մէջ։ Ես զզվեցի նրանց շողոքորթութիւնից, նրանց կիսատ-պռատ խոստումներից, ակնարկներից։ Անտանելի է մուրացկանութիւնը. բայց մուրացկանից հազար անգամ վատ է այն մարդը, որ ծեծում է մեծերի դուռը, խնդրում է ոչ թէ մի կտոր հաց, մի չնչին ողորմութիւն, այլ մի ահագին գործ—օգնութիւն։ Մարդը մի կտոր հացն էլ հեշտութեամբ չէ տալիս ողորմութիւն, իսկ ես պարսիկներին պիտի համոզէի որ գան, մեզ համար արիւն թափեն։ Պարսիկը պիտի մարդասիրութիւն ցոյց տար... Ես եկայ այս անհեթեթութիւնը քեզ յայտնելու։ Օրերով ճանապարհ էի կտրում, յոյս ունենալով որ Արաքսի այս ափը դեռ պահպանում է լեռնցու ծիծաղ-

կատուԹիւնը։ Լեռան մարդը իր գժնդակ կեցուԹեան մէջ լայն ու բաց սիրտ ունի։ Միշտ դժոխք է բացված նրա առաջ, բայց նա ասում է. «Ոչինչ, մենք կը յաղԹենք»։ Դիզակի տէրը լեռնցու կատարեալ տիպն է։ Այսօր առաւօտեանից ես սպասում էի նրա հեգնական ծիծաղին, սպասում էի որ նա խոկոյն կարտասանէ լեռնցու «ոչինչը», բայց իզուր։ Դժոխքը կոխել է մեր բոլոր լեռները, և ես վճռեցի էլի գնալ Պարսկաստան, էլի փորձել ամեն միջոց... Ինձ քշում է այն, որ Մէլիք-Աւանը չէ կարող մնալ այդ դրուԹեան մէջ։ Հասկանում եմ, ճար չը կայ։ Մենք ման կը գանք ճարի ետևից, կորոնենք ամեն տեղ։ Դու շահսէվանցիների մասին ես ասում։ Գիտեմ որ ոչինչ չի լինի, բայց ինչ փոյԹ. այդ չի լինի, մի ուրիշը հօ կը գտնենք։ Ինձ հրաման տուր, մէլիք, և ես չեմ բաւականանայ շահսէվանցիներով. կամենում ես, կանցնեմ Աւղանիստան, Հնդկաստան, Արաբիա... Ամեն տեղ ման կը գամ, ուր որ դուռ կը տեսնեմ, կը ծեծեմ... ԵԹէ մենք առանց դրսի օգնուԹեան այսպէս պիտի մնանք, ճ, ես աշխարհի ծայրն էլ կը գնամ՝ դաշնակից, օգնական գըտնելու...

Մէլիք-Աւանը խոնարհվեց իր ձիուց, գրկեց երիտասարդին և համբուրելով նրա ճակատը, ասաց.

—Գնա, որդի, ես քեզ չեմ պահի... Աստուած քեզ հետ. դու լաւ ես հասկանում մեր դրուԹիւնը... Մինչև գարուն... եԹէ օգնուԹիւն չեկաւ, մենք կորած ենք։ Այն ժամանակ դու այսպէս չես տեսնի Մէլիք-Աւանին. կը տեսնես որ նրան ծաղրում է վերջին խաղարածը։ Աշխատենք... Ես էլ չեմ հաւատում, որ մի բան դուրս գայ քո այս ճանապարհորդուԹիւնից, բայց եԹէ մեր վերջն է, Թող պարզ երեսով մտնենք հողի մէջ և մեզանից յետոյ եկողները, կանգնելով մեր գերեզմանի քարի վրա, չը հայհոյեն, այլ ասեն. «Եղբէր, դուք ոչինչ չը խնայեցիք, դուք փորձեցիք բոլոր միջոցները»։ Մի բան էլ կայ, որ ես մոռացայ յայտնել քեզ։ Ես և Մուստաֆա-փաշան

բարեկամներ ենք։ Նա հաւատում է, որ ես հաշտվել եմ իմ դրուԹեան հետ, իսկ ես հաւատում եմ որ փորձված աղուէսը դեռ շատ մտքեր ունի, Թէև յայտնի է, որ փորձված աղուէսը չորս ոտով է Թակարդի մէջ ընկնում։ Մենք միմեանց պատիւներ ենք անում։ Արդեօք մի օգուտ կը լինի՞ այս բարեկամուԹիւնից... Դու էլ մըտածիր...

Նրանք նորից համբուրվեցին։ Ասլանը մտրակի մի հարուածով հարկադրեց իր ձիուն սլանալ դէպի վեր, լեռնային կածանով, որ սպիտակ ժապաւէնի նման նըշմարվում էր խոր ձորերի մէջ։

Նրան հետևեց Պօղոսը, իսկ Հայրապետը, որ սպասում էր ձորի մէջ, տեսաւ որ մէլիքը ցած գնալիս երկու անգամ յետ նայեց՝ Ասլանին տեսնելու համար։ Նա դարձեալ նոյն Մէլիք-Աւանն էր. լուռ, անտարբեր։ Երիտասարդից բաժանվելուց յետոյ նա իր բոլոր մտքերն ու զգացմունքները նորից պինդ փակեց իր սրտի մէջ և այժմ տանջված, մխիԹարուԹեան կարօտ աշխարհի առաջ երևան էր գալիս Դիզակի տէրը։

Դա մի տարօրինակ մարդ էր. տեսնում էր, լսում էր, բայց անխօսով ու անզգայ էր, ինչպէս մի ժայռ։

Ձիւնը մաղում էր անդադար։ Ձիաւորների մեծ փափախները, Թաւամազ եափունջիները արդէն սպիտակել էին։ Ճանապարհը միշտ դէպի բարձր էր գնում, ոլորվելով խոր ձորերի շուրջը։ Մերձակայ բարձրուԹիւնից ձիւնախառն քամին յաճախ յարձակումներ էր գործում դէպի ճանապարհը. երբեմն նա այնքան սաստիկ էր և այնքան շատ ձիւն էր Թափում, որ ձիաները կանգ էին առնում, կուչ գալիս, չորս կողմում ամեն ինչ կորչում էր մի մառախուղի մէջ, որ պտոյտներ էր գործում, ոռնում էր, հեծեծում։ Թռչող ձիւնը բիւրաւոր մանր ասեղների նման ծակոտում էր հեծեալներին, չը նայելով որ նրանք ծածկում էին իրանց դէմքերը, աւելի պինդ փաԹաԹվելով եափունջիների մէջ։

Անցնում էր բուքը, ձմեռնային օրը պարզում էր իր դէմքը, գալիս էր համատարած լռութիւնը, որի միակ տէրերը ագռաւներն էին. երբեմն նրանք խմբերով թռչում էին ճանապարհի վրայով, աղմկելով սառած օդը իրանց թևերի խշշոցներով, իսկ երբեմն ձորերի խորքից տարածվում էին նրանց խմբական կանչոցները։ Ձիաները նորից շարժվում էին, մինչև ծնկները խրվելով քամու դիզած ձիւնակոյտների մէջ։ Ճանապարհը շատ դժուար էր, բայց ճանապարհորդներին չէր կարող յուսահատեցնել մի այսպիսի եղանակ։

Քամու մի զօրեղ յարձակումից յետոյ, մէլիքը, որ գնում էր առջևից, ձեռքը մեկնեց դէպի աջ, դէպի ձորի միւս կողմում ընկած զառիվայրը և ասաց.

—Հրէ՛ն, պառ-ուտողը...

Հայրապետը նայեց ցոյց տուած ուղղութեամբ։ Զառիվայրի գլխին, ծմակի ծառերի մէջ, սևին էր տալիս մի ինչ-որ խոշոր առարկայ։

Պառ-ուտող կոչվում է այն արջը, որ ձմեռը դուրս է գալիս իր որջից։ Հայրապետը լաւ անդրդելուց յետոյ պատասխանեց, որ մէլիքը սխալվում է... Բայց մէլիքը համոզված էր, որ սև առարկան ուրիշ բան լինել չէ կարող։ Հայրապետը հակառակն էր պնդում։ Նա շատ լաւ էր տեսնում. առարկան անշարժ էր, երևի մի սև քար էր, որի վրա եղած ձիւնը սրբել էր քամին։

—Մի անգամ էլ այս կողմերում մի պառ-ուտող պատահեց մեզ։ Կարծեմ հէնց այստեղ էր, այսպիսի մի օր։ Յիշո՞ւմ ես...

Հայրապետի յիշողութիւնը կարճ էր, իսկ այդ դէպքի վրայով տասը տարուց աւելի էր անցել։ Մէլիքը մանրամասնութիւններ պատմեց։ Այն ժամանակ այս իսկ ճանապարհով դէպի Ալխալ-Թաչ էին գնում Ղարաբաղի բոլոր հինգ մէլիքները։ Նրանք մի նշանաւոր գործի համար էին ման գալիս և վանքում նրանց սպասում էր մի մարդ, որ այդ ժամանակ ամբողջ երկրի սիրտն էր։

Անցած խոշոր դէպքեր էին և իսկոյն պատռեցին անցեալի վարագոյրը։

Հայրապետը մի ուրախ բացականչութիւն արձակեց. յիշո՛ւմ է։ Եւ նա ուղղեց մէլիքի սխալները։ Նախ՝ այն օրը այսպիսի բուք չը կար, այլ ձիւն էր միայն, փափուկ, խոր ձիւն։ Երկրորդ՝ պառ-ուտողը պատահեց վերևում, համարեա սարի գլխին։ Մէլիք-Յուսէփը — կարծես այժմ էլ Հայրապետի աչքի առաջն է — մի գնդակով ծանր վէրք հասցրեց արջին. Թուլացածը վերջացրին մէլիքների հետ եղած երիտասարդները։ Մի ահագին պառ-ուտող էր։ Ինքը, Հայրապետն էլ, իր դանակով մի մեծ կտոր ճարպ կտրեց նրա փորից։

Բայց Մէլիք-Աւանը այլ ևս չէր լսում նրան։ Վաղուց էր նա մտքով փոխադրվել այն ժամանակը։

Աւանը, հրաժեշտ տալիս, յիշեցրեց Ղարաբաղի նախկին յարաբերութիւնները Պարսկաստանի հետ և ահա այդ բոլորից մէլիքի աչքի առաջն է այն անմոռանալի օրը։

Ձմեռ էր։ Դարձեալ այսպիսի սառցային լռութիւն էր, դարձեալ պաղ երկնքի տակ տիրապետողները միայն բուքերն էին, սառնամանիքները, մէկ էլ սև ագռաւները։ Կատաղի, դաժան բնութիւնը դարձեալ սուգ էր անում և իր ահաւոր լեռների, մայլ անտառների, սառցապատ ձորային անդունդների ամէն մի անկիւնից պըլշած, կարծես զարմանքից վրդովված, նայում էր մի խումբ ձիաւորների, որոնք ճանապարհորդում էին մեծ շուքով և աղմուկով։

Նրանք, կարծես, զբօսանք էին կատարում տարվայ այդ սարսափելի ժամանակին։

Եւ քանի՜ օր... Եւ ո՛րտեղից որտեղ։ Հոռեկի վանքից, սարերով, ոլոր-մոլոր ուղղութեամբ, մինչև Դիզափայտի Թիկունքները։

Յոգնեցնող չէր ձմեռնային ճանապարհը։ Ընդհակառակը, որքան երկարանում էր նա, այնքան աւելի շատ էր ոգևորում ձիաւորներին։ Եւ գնալով նրանց ուրախ

խօսակցութիւնները, հանաքները, զիլ երգերը աւելի անզուսպ, աւելի բարձրաձայն էին դառնում, կարծես ուզում էին նախանձից ճաքեցնել ձիւների փռած ամայութիւնը, որ մեռելութիւն, սուգ, վայեր էր տարածում օր ու գիշեր…

Ճանապարհորդում էին երկրի գլխաւորները։ Խումբը շատ մեծ չէր։ Ամեն մէկը մի հատ ծառայ ունէր իր հետ՝ ձին խնամելու համար։

Տարօրինակ էր այդ ճանապարհորդութիւնը ոչ միայն իր լեռնային, սրտաբաց ուրախութիւններով, տարօրինակ էր թւում և այն հանգամանքը, որ խմբի մէջ էր կամ, աւելի ճիշտն ասած, խմբի գլխաւորն էր վեղար ծածկած մի հոգեւորական։ Նա շատ բարձր աստիճան ունէր և ամբողջ խումբը մեծ յարգանքով էր վերաբերւում նրան։ Բայց աստիճանը, յարգանքները ոչինչ տարբերութիւն չէր դնում նրա և խմբի մէջ։ Նա էլ մասնակցում էր ընդհանուր ուրախութեան, մոռացել էր ոչ միայն իր գիրքը, այլ և իր տարիները։ Լեռնային առողջ ծերութեան ալիքներն էին պսակում նրա բաց, համակրելի դէմքը։

Ամեն գիւղ չէր մտնում խումբը։ Եւ ուր էլ մտնում էր, երկար չէր մնում։ Ամենաշատը երկու օր։ Գործը շատ արագ էր վերջանում։ Ճանապարհորդներն ու բնակիչները հեշտ էին իրար հասկանում։ Բարձրաստիճան հոգեւորականը ամեն տեղ հանդէս էր գալիս իբրև փորձված զինուորական հրամանատար։ Նա էր առաջինը, գլխաւորը, իսկ մնացածները նրան էին հնազանդվում։ Նա հաւաքել էր տալիս գիւղում եղած զէնքերը, մի-մի նայում, քննում էր, հեղինակաւոր վճիռներ էր տալիս նրանց պէտքականութեան մասին։ Գրում էին թէ որքան է պակասում։ Արդէն շատ գիւղերում զինանոցներ էին սարքված, որոնք աշխատում էին անդադար։ Վառօդ ու գնդակ պատրաստելու համար էլ առանձին կարգադրութիւններ կային։ Այս բոլորից յետոյ գալիս էր ամենա-

կարեւորը։ Նոյն հոգեւորականը նայում էր գիւղի տղամարդկանց և անձամբ որոշում էր թէ նրանցից քանիսը պիտի զինվեն։

Դա Գանձասարի Եսայի կաթողիկոսն էր, Իսրայէլ Օրիի եռանդուն, համոզված աջակիցը։

Քանի տարի նա ամենայն ջերմեռանդութեամբ ծառայում էր հայրենիքի ազատութեան գաղափարին։ Քանի տարի նա յոյսեր էր փայփայում իր կրծքի տակ։ Շատ ու շատ յուսահատական անաջողութիւններ էին այդքան տարիների ընթացքում կանգնել նրա առաջ, բայց նա չէր կորցրել իր վառ հաւատը։ Մեռաւ նրա բարեկամ Օրին, բայց Եսային թոյլ չը տուեց որ սկսված գործն էլ մեռնէ նրա հետ։ Նա ինքը կանգնեց Օրիի տեղ և շարունակեց գործը։ Շարունակեց զարմանալի համբերութեամբ, սպասելով այն օրին, երբ գաղափարը գործ կը դառնայ։

Եւ ահա այժմ… հեռու չէր այդ օրը։ Նա գալիս էր, նրան զգում էր ամեն մէկը։ Պէտք էր պատրաստվել՝ նրան լաւ ընդունելու համար։ Եւ կաթողիկոսը ամեն տեղ ասում էր որ գարնանը Ղարաբաղը քանի հազար զինուոր պիտի պատրաստէ, կրթէ։ Ահա ինչու էր նա ճանապարհորդում ձմեռվայ այդ դաժան օրերում։

Մեծ, համարեա անհնարին թիւ էր նրա պահանջածը. ծերերն էլ պիտի զէնք վերցնէին։ Բայց ոգեւորվողը միայն այդ հոգեւորականը չէր։ Բոլոր լեռներում տարածվում էր այդ ոգեւորութիւնը։

Ձիւների տակ սառած ժողովուրդը ինչպէս տաքացաւ։ Գարունն անգամ այնպիսի շարժում չէ բերում։ Առաջին անգամ Ղարաբաղը պիտի հանէր իր միջից մի ընդհանուր մեծ զինուորութիւն։ Կռուողների ահագին բազմութիւնը այլ ևս երկրի ներսում չը պիտի գործէր՝ բաժան-բաժան դարձած, ամեն մէկն իր տանը, իր երկրի սահմաններում։ Նոր, անսովոր, ծանր պարտաւորութիւն էր եկել։ Պէտք էր մի միապաղաղ, թանձր ոյժ, որ ար-

շուէր հեռու տեղից, գնար կռուելու մեծ գործերի հետ. կաթողիկոսը խօսել, համաձայնութիւն էր կայացրել վըրաց Վախթանգ թագաւորի հետ։ Հիմա ժամանակ էր։

Ժամանակ... Եւ երկիրը չը վախեց իր բաժին ընկած ծանր պարտաւորութիւնից։ Իր քաջ կաթողիկոսին նա լիուլի ապացոյցներ տուեց որ նա իրաւունք ունէր հաստատ խօսք տալ, պայմաններ առաջարկել և պայմաններ ընդունել։

Ի՞նչ ուրախութիւններ էին կատարվում զինուորագրութեան ենթարկված գիւղերում։ Կարծես մի ընդհանուր հարսանիք էր սկսվել։ Ճանապարհորդող խումբը հազիւ կարողանում էր գլուխ ազատել խընճոյքներից. նրան ճանապարհ էին գնում մեծ-մեծ խմբերով, զուռնայով, աղաղակներով, գինու փարչերով, ուրախութեան արտասունքներով։ Ուխտի օրեր էին. ձիւները ճեղքելով, մարդիկ գնում էին իրանց սուրբերին մատաղներով շնորհակալութիւն և իղձեր յայտնելու։

Վերջին կէտը Սպիտակ-Խաչ վանքն էր։ Այստեղ պիտի վերջանար ճանապարհորդութիւնը, այստեղ էլ ճանապարհորդները հաշւի նստեցին և իմացան թէ ինչ է տալիս երկիրը։ Եւ գոհութեամբ իմացան որ շատ ու շատ է նա տալիս։ Մէլիք-Աւանը մի մեծ խնճոյքով վերջացրեց հայկական առաջին մեծ զինուորութեան հանդէսը։

Կիրակի օր էր։ Կարծես Վարդավառ լինէր այս ձըմեռնամիջին։ Վանքի շրջակայ գաւիվայրերը սեւցել էին մարդկանց բազմութիւնից։ Եսայի կաթողիկոսը պատարագ մատուցեց։ Յանկարծ ընդմիջվեց ժամասացութիւնը. պատարագիչը մի ձեռքով բռնեց խաչը, միւս ձեռքն առաւ գաւազանը և դարձաւ դէպի ժողովուրդը։ Եկեղեցում, դրսում խոր լռութիւն տիրեց։

— Երանի սգաւորներին, որովհետև նրանք կը մխիթարվեն, — արտասանեց պատարագիչը մի խրոխտ, որոտացող ձայնով։

Եւ նա մխիթարում է ամենքին, մխիթարում է Քրիստոսի եկեղեցին, որ պիտի վերցնէ սգի քօղը, մխիթարում է մեծին ու փոքրին, իշխանին ու ռամիկին, բոլոր մարդկանց, որոնք արտասունք են թափել, ողբացել են իրանց գերութեան օրերը։

Նա պարզ չէ պատմում, թէ երբ պիտի գայ այս մխիթարութեան օրը։ Բայց նրա խօսքերը թափվում են յորդ հեղեղի նման, յոյս են տալիս, կրակ են գցում սրտերի մէջ։ Նա օրհնում է քրիստոնեայ թագաւորին, որ իր գահի վրա բազմեցրել է սէր, արդարութիւն, որ տեսնում է տանջվողներին և ունի նրանց համար ազդու, ուժեղ խօսք։ Քրիստոսի Աստուածը խօսում է նրա բերանով և ասում է. «Ահա ես կը ջարդեմ ձեր շղթաները, ինչպէս գաւազանի մի հարուածով ջարդվում են բրուտի ամանները, և դուք կը տեսնէք, որ ես Աստուած եմ, չեմ մոռացել ձեզ»։

Դա անզգանալի պատգամ է։ Եւ ահա Աստուծու սպասաւորը տալիս է ազատ օրերի ողջոյն։ Նա օրհնում է ազատ արօրը, որ Աստուծու անունով դուրս է գալիս հողը հերկելու և գիտէ, որ իր աշխատանքը իրան է պատկանում. օրհնում է օրօրոցը, որի մէջ ազատ երեխան է փաթաթված, օրհնում է և դագաղը, որի մէջ պառկում է խաղաղ ու ազատ մարդը։ Օրհնում է հարսներին ու աղջիկներին, որոնց յայտնի չէ մարդանման գայլերի ահը։ Օրհնում է երկիրը, որ այլ ևս չէ ծծում իր սպասաւոր մշակի արիւնը, օրհնում է լեռներն ու դաշտերը, որոնց սիրոյ համար մարդիկ չեն տանջվում, չեն կոտորվում։ Օրհնում է նոր օրը, օրհնում է մի հաւատացող, սպասող ժողովրդի պատրաստութիւնները, օրհնում է այն արդարութիւնը, որ վաղը երկրի տէրը կը դառնայ։

Ապա քարոզիչը անցնում է հներին, նրանց, որոնք թողել, գնացել են։ Օրհնում է բոլոր տառապեալ սերունդները, բոլոր յայտնի և անյայտ նահատակներին, որոնք

տանջվել են, բայց անձնատուր չեն եղել, մեռել են, բայց արդարութիւն են կանչել։

Վերջացնելով անցեալը, նա դիմում է ապագային և յորդորում է պինդ ու անյողդողդ լինել։

«Աշխատենք, եղբայրներ»։ Ի՛նչ հրաշալի եղանակով է նա ասում այս խօսքերը և քանի անգամ է կրկնում։

Աշխատենք, աշխատաւորը Աստուծու օրհնութիւնն է։ Պատրաստ լինենք Աւետարանի իմաստուն կոյսերի նման. չը քնենք, երբ կը գայ ժամը, երբ մեզ կը կանչեն, թող վառ լինեն մեր ճրագները և պատրաստ մեր հոգիները գնալու այնտեղ, ուր Աստծու գործն է սպասում։

Եւ բարձրացնելով խաչը, նա խաչակնքում է աջ ու ձախ, աջողութիւն է մաղթում մեծերին ու փոքրերին, թոյլին և ուժեղին...

Նորից սկսվում են երգերը, բայց եկեղեցում մարդ չը կայ, որի աչքերը թաց չը լինեն։ Ձայն, հառաչանք չունեն այդ արտասունքները, որովհետև յուսահատութեան, վշտի արտասունքներ չէին։

Սկիզբը այնքան հրաշալի։ Բայց պակաս չէր և շարունակութիւնը։ Տարիներ եկան, գործի, կրակի կարմիր տարիներ։ Առանց երկնքի օգնութեան չէր երկրի այդ մեծ, աննման աջողութիւնը։ Նա էր օրհնում, նա էր միացրել ամենին, մի սիրտ ու մի հոգի դարձրել։ Երեք տարի պատերազմեց Ղարաբաղը և երեք տարում նա արդէն զինուորական մի մեծ բանակ էր։ Լեռները աւելի մեծացել էին, աւելի ահաւոր ու խոժոռ էին դարձել։ Ամեն կողմից նրանք, կազմ ու պատրաստ, լարված ուշադրութեամբ նայում էին Գանձասարին, ուզում էին օր առաջ տեսնել թէ ինչպէս այդ վանքի փոքրիկ բակում ձի կը նստէր անխոնջ ալևորը և կասէր. «ժամանակ է»։

Գալի՜ս է այդ օրը։ Կաթողիկոսն էլ անհամբեր էր։ Աչքերը դարձրած դէպի հիւսիս, ուզում էր տեսնել թէ

երբ, վերջապէս, դէպի երկինք կը դիզանայ քրիստոնեայ զօրքի բարձրացրած փոշին։ Սպասում էր Պետրոս Թագաւորին։

Եւ Թագաւորը, վերջապէս, եկաւ։ Զինված լեռնաստանը ոտի ելաւ իր տեղից, գնաց դէպի նրան, դէպի հիւսիս։

Գանձակի մօտ իրար հանդիպեցին հայոց և վրաց բանակները։ Երկու ազգերը եղբայրացան։ Վախտանգի նուիրական տենչանքը կատարված էր։ Կովկասեան սարերը երկնքի տակ ցցված գագաթներից նայեցին այդ եղբայրութեան դաշտին և հիացած վկայեցին, որ այսպիսի երևոյթ դեռ չէր եղել։ Դարերով նահատակված, անարգված քրիստոնէութիւնը եկել, հաւաքվել էր մի ընդհանուր դրօշակի տակ։ Օրերով ցնծութիւնից դղրդում էր միացած բանակը։ Զէնքի եղբայրութիւնը հրճուանքի մի անդուսպ, անվերջ տօն էր։

Բայց մարդկային ճակատագիր...

Ուրախութիւնը յանկարծ կտրվեց, սուգ ու յուսահատութիւն դարձաւ։ Հաստատ լուր բերին որ Պետրոսը Դերբենդից վերադարձել է Ռուսաստան։ Ո՛րքան ծանր էր այդ ցուրտ իրողութիւնը, որ գալիս էր ճնշելու երկու ազգերի հրդեհված ոգևորութիւնը։ Տարիներով սպասված օրը դարձեալ հեռանում էր, դարձեալ անյայտութիւն էր դառնում...

Տխուր ու տրտում երկու բանակները վերադարձան իրանց երկիրները։ Բայց այսպիսի ցնցումները չեն մոռացվում։ Ղարաբաղը պատերազմական դիրքի մէջ էր մտել և ցած չը դրեց իր զէնքը։ Հայ զինուորութիւնը լեռներում երկու ամրացրած բանակներ կազմեց և սկսեց մանր, երկարատև կռիւ շրջակայ թշնամիների դէմ։

Նրանից բաժանված մի հատուած Սիւնիքը պատերազմական ասպարէզ դարձրեց։ Դաւիթ-բէկը յաղթում էր, նուաճում էր ազատութիւն։ Իսկ այստեղ՝ մելիքները։ Երկու ամրացրած բանակները սերտ կապված էին իրար

հետ։ Զօրքի առաջնորդները միաբան, միակամ։ Մարդկի շուրջը հաւաքված, նրանք խորհրդակցում էին, դասում, արշաւանքներ էին ուղարկում ուր որ հարկաւոր էր։

Դեռ կար ռուսական օգնութեան յոյսը, դեռ սպասում էին նրան։ Երկար սպասեցին և իզուր։ Ութ տարի անընդհատ պատերազմներ օսմանցիների դէմ, ութ տարի յաղթութիւն, ութ տարի լեռնականի քաջութիւնները աշխարհ էին զարմացնում։

Եւ այդքան մեծ բախտից յետոյ այսպիսի անկում։ Երեք տարի չը կայ, ինչ այդ յաղթանակները դարձել են անցած երազ, աւանդութիւն։ Այնպիսի հրաշք և այսօրվայ դժոխքը։ Ի՞նչպէս հաշտվել երկնքի գործերի հետ...

Տարիների ընթացքում տեղի ունեցած այդ զարմանալի փոփոխութիւնները, նախկին բախտը և այժմեան դժբախտութիւնը երկար տեղ գերել էին Մէլիք-Աւանին։ Բուքը բոլորովին աննկատելի էր նրա համար։ Մի-մի, երբ նրա ձին կանգ էր առնում և ձիւնի ամպերը փաթաթվում էին նրան, նա սպասում էր համբերութեամբ և երբ ձին նորից քայլում էր, նա նորից ընկնում էր իր մտքերի մէջ։

Այդ դրութիւնից նրան հանեց Հայրապետը, որ յանկարծ կանչեց.

—Տէր, մէլիք, այստեղից պարզ է երևում. ես չէի սխալված։

Նրանք հասել էին սարի գլուխը։ Մէլիքը դէպի ցած նայեց և տեսաւ, որ սև առարկան իսկ որ մի սրածայր ժայռի գլուխ է, որ սրբել էր քամին։ Նա ոչինչ չը պատասխանեց։ Բուքը աւելի սաստկացաւ. Նա փաթաթվեց եափունջու մէջ։

—Շտապիր, Հայրապետ, ասաց նա.—այսօր մենք պիտի գնանք Աւետարանոց։

Երևաց Տողի հսկայ սարը։ Նրանք մտան ծմակը։

Այդ ժամանակ Աւանը, որ նոյնպէս հասել էր լեռնային բարձրութեան գլուխը և մօտեցել էր դէպի հա-

րաւ տանող ճանապարհին, կանգ առաւ, Պօղոսի հետ մի թեթև խորհրդակցութիւն արաւ։ Վերջացնելով, նա իջաւ ձիուց. Պօղոսն էլ հետևեց նրա օրինակին։ Երկուսը դուրս եկան ճանապարհից և ձիաները քաշելով իրանց ետևից, սկսեցին դանդաղ կերպով ցած գնալ սարի ուղղաձիգ լանջերով։

Նրանք դիմում էին դէպի արևմուտք։ Նրանք այլ ևս Պարսկաստան չէին գնում...

Գ

Դիզակի այդ փոթորկալից օրը խաղաղ կերպով մարում էր Վարանդայի այն մասում, ուր Քիրսի լեռներն են տարածված։ Այստեղ բուք չը կար, այստեղ ձիւները անշարժ էին։

Սպիտակ բարձրութիւններով շրջապատված մի փոքրիկ հովիտ դանդաղ կուլ էր գնում երեկոյեան կիսամթութեան մէջ։ Երկինքը պարզ էր, հրաշալի. արևմուտքում դեռ վառ էր դեղին-կարմրագոյն վերջալոյսը, որ խառնում էր իր գոյները երկնքի կապուտակութեան հետ, և ձիւնային տարածութիւնները նոյնպէս ստացել էին այդ գոյները, կարծես իրանց կուսական կրծքի վրա ցոլացնում էին լոյսերով ողողված երկինքը։ Երեկոյեան խոշոր աստղը սկսել էր փայլել. երկրի վրա կախ էր ընկել ցուրտ գոլորշիների թափանցիկ վարագոյրը։

Օդը խեղդում էր։ Ցուրտ էր, զարհուրելի ցուրտ...

Այդ ժամին հովիտը շրջափակող հիւսիսային լանջերի վրա, մի քանի հատ ձիւնապատ ծառերի մօտ, երևաց մի մենաւոր մարդ։ Նա մեծ դժուարութեամբ էր քայլում խոր ձիւնի մէջ. Նա կանգ առաւ, երեսը դարձրեց դէպի արևելք, ուր նեղ ձորը անհետանում էր, շուռ գալով դէպի աջ։

Երևում էր որ այդ մարդը դիտում էր շրջակայքը։ Բայց ի՞նչ կար։ Հովիտի մէջ չէր երևում կենդանու-

թեան որ և է նշոյլ։ Սառնամանիքները ամէն ինչ թաղել էին խոր գերեզմանի մէջ. Նոյն իսկ ձորի առուակը լռել էր, անյայտացել ձիւնի տակ։ Նախ քան հովիտ մտնելը առուակը թափվում էր մի ժայռի գլխից, կազմելով մի աղմկալի ջրվէժ։ Այդ ամբողջ աղմուկը, որ ամառը լեռնային դրախտի այս դալար և ծաղկափթիթ անկիւնի զարդն էր, այժմ սառոյցի երկար ճիպոտների կերպարանք ընդունած, կպել էր ժայռի կրծքին։

Մեռելութիւնը ահաւոր էր։

Մարդը քիչ էլ նայեց արեւելեան ձորին, համոզվեց որ ոչ ոք չը կայ և սկսեց դանդաղ քայլերով ցած իջնել։ Թէև մութը հետզհետէ խտանում էր, բայց նա միանգամայն ապահով էր որ լաւ է տեսնում։ Երկնքի տակ միայն սպիտակ գոյնն էր, մի այլ գոյնի առարկայ իսկոյն աչքի կընկնէր։

Նա անյայտացաւ, բայց երկու րոպէ չանցած՝ հովտի արևելեան կողմում երևացին երկու մարդ։

Նրանք քայլում էին մորթվածի պէս. թւում էր թէ որսորդներ էին, կորցրել էին ճանապարհը և այժմ թափառում էին՝ յոյս դրած մի որ և է պատահական աջողութեան վրայ։ Երևի մի անկիւն կը գտնվի երկնքի տակ, ուր կարելի կը լինի կուչ գալ այս գիշեր։ Նրանք կորցրել էին ապրելու յոյսը, ուստի ոչինչ միջոց չէին գործադրում, որ գոնէ քիչ տաքացնեն իրանց սառած ձեռքերն ու դէմքերը։

Երկուսն էլ լուռ էին, կորցրել էին խօսելու ընդունակութիւնը։ Եւ զարմանալի չէր. պարզկայ երեկոն արդէն կիսամեռ դրութեան էր հասցրել նրանց։ Զարհուրելի լռութեան մէջ երբեմն լսվում էր ինչ-որ չարագուշակ ճայթոց։ Դրանք ծառերն էին ճաքվում զարհուրելի ցրտից։ Ցուրտը խեղդում էր, անհնարին դարձնելով շնչառութիւնը. բերան բաց անել չէր կարելի, իսկ քթի ծակերը կուչ էին գալիս, կարծես լցվել էին ինչ-որ ցուրտ, մածուցիկ նիւթով։

Մոլորվածները մի-մի ձի էին քաշում իրանց ետեւից. կենդանիներն էլ յուսահատ էին, նրանց քթից դուրս էին թափվում գոլորշու թանձր ամպեր...

Առջևից գնացողը շեղվեց իր բռնած ուղղութիւնից։ Իր ոտների մօտ նա նկատեց ինչ-որ հետքեր. կարծես այս մեռած տեղերի գազանները խմբով դէպի ցած էին վազել։ Նա էլ ցած գնաց. գոնէ գտնել այդ գազաններին, գտնել մի կենդանի արարած...

Բայց ետևից գնացողի ձին յանկարծ բարձրացրեց գլուխը, լայնացրեց քթածակերը և հանդարտ կերպով խրխնջաց։ Նա, երևի, նկատել էր մի բան։ Նրա տէրը կանգ առաւ և լարեց իր տեսողութեան ամբողջ կարողութիւնը. Նա հեռուն էր նայում և միանգամից չը նկատեց, որ իրանից մի քանի քայլ հեռու, ձիւնի մի կոյտի տակից, ծուխ է բարձրանում։ Նա ինչ-որ ուրախ աղաղակ արձակեց և երբ առջևից գնացողը յետ նայեց, նա ձեռք մեկնեց դէպի այդ հրաշալի երևոյթը։ Ծուխ էր. կրակի ներկայութիւնը անհերքելի էր։ Կիսամեռ ճանապարհորդները զգացին նրա տաքութիւնը և գնացին դէպի այն կողմ։

Ձիու խրխնջոցը, մոլորվածների աղաղակները անլսելի չը մնացին։ Ծուխ արձակող ձիւնակոյտի առաջ երևան եկաւ հրացանը բռնած մի մարդ։ Տեղի ունեցաւ կարճ հարց ու փորձ.

—Ո՞վ էք։

—Հայ։

Հրացանաւոր մարդը լռեց. և երբ եկողները կանգ առան ձիւնակոյտի առաջ, նա ցոյց տուեց մի փոքրիկ ծակ, իսկ ինքը առաւ ձիաների սանձերը։

—Մտէք, բայց չը մօտենաք կրակին։

Ծակից դուրս սողացին երկու մարդ էլ, դարձեալ հրացանները ձեռքին։ Նրանք էլ իմացան, որ եկողները հայեր են և նոյնպէս կրկնեցին.

—Կրակին մօտ չը նստէք...

Դա բարեկամութեան նշան էր։ Ջիմնակոյտի բնակիչները հիւրասիրութեան առաջին գործն էին համարում յիշեցնել թէ ինչ վտանգաւոր բան է կրակը՝ սառած մարդու համար։ Նրանք լաւ գիտէին, որ այսպիսի ցրտի մէջ եղած մարդու ցանկութիւնը կը լինի մտնել կրակի մէջ, կլանել նրա ամբողջ ջերմութիւնը, բայց դա շատ վտանգաւոր ցանկութիւն է. կրակը կը տաքացնէր, բայց սառած մարդը կընկնէր սաստիկ ջերմ ու տենդի մէջ և կը հիւանդանար։

Ներսում տիրում էր թանձր խաւար. գետնափոր գոմը լցված էր ծխով։ Նրա կտուրի վրա մի հատ փոքրիկ ծակ կար, որի միջով ծուխը դուրս էր գնում։ Երդիկի տակ երկու ահագին կոճղեր ծխրտում էին։ Երբեմն խաւարի մէջ փայլում էին երկու երեք հրեղէն լեզուներ, որոնք դանդաղ կերպով շրջում էին խանձողների վրա. նրանք տարածում էին մի թոյլ լուսաւորութիւն, որ խաւարի միջից դուրս էր հանում զանազան դէմքեր. ամենքը հետաքրքրութեամբ նայում էին եկողներին։

—Տղերք, մի լաւ կրակ, կանչեց մէկը։

Մութ անկիւնից դուրս եկաւ մի փոքրիկ մարդ, մօտեցաւ խանձողներին, շարժեց նրանց։ Բոցերը սկսեցին աւելի աշխոյժով լափել փայտերը. և մինչդեռ երկու հոգի տեղերից վեր թռան այդ հրամանը կատարելու, փոքրիկ մարդը շարունակեց.

—Լաւ որ երէկ մեզ համար արաղ բերին։ Այս խեղճերը հիմա սառած կը լինեն. մի-մի թաս արաղ տանք, որ ներսները տաքացնեն։

Նա ինքը բերեց հողէ ամանը և փոքրիկ գաւաթը, ինքը ածեց։ Նորեկները դեռ խօսել չէին կարողանում։ Կրակը քիչ թէժացաւ և այդ միջոցին արաղ տուողը ճանաչեց հիւրերից մէկին։

—Սալա՛ն, բացականչեց նա։

—Ես եմ, Մա՛նաս, պատասխանեց Սալանը դժուարութեամբ։

—Տղերք, հասարակ հիւր չէ... տաքացրէք այս կանց. լաւ սառել են։

Ինքը, փոքրիկ մարդն էլ, անգործ
փունջիներ, կապերտի կտորներ դարսեց
մար։ Նա նստեց, իսկ նրա ուղեկիցը, որ
քաշվեց մի անկիւն։

—Դո՞ւ... այստե՞ղ, անդադար հարցնում էր Ս
սը, շփելով Սալանի ձեռքերը։—Ի՞նչ է պատահել... Ո՞րտեղ էիր, շատ ժամանակ է որ չեմ տեսել քեզ...

Կարճ միջոցում բռնկվեց չոր խարոյկը. տղերքը աշխատում էին, բոցերը բարձրացան, համարեա կտուրին էին հասնում. Սալանը քիչ-քիչ ազատվում էր ցրտի ազդեցութիւնից. նրա լեզուն բացվում էր կամաց-կամաց և նա կարողանում էր պատասխանել Մանասի հարցերին։

—Բայց ի՞նչ կար այսպիսի ժամանակ...

—Զարմանո՞ւմ ես... Քեզ մօտ գալը շատ դժուար չէ։ Միայն այս բարձրութիւնն է քիչ դժուարացնում. այսօրվայ ցուրտը զարհուրելի է...

—Հա՛, սրան Մեծ-Քարի հազ են ասում. հեշտ չէ ձմեռը այստեղ գալը։

—Հեշտ է, Մա՛նաս. հօ միշտ այսպիսի ցուրտ չէ լինում... Սովորական եղանակ լինէր, մենք դժուարութիւն չէինք զգայ։ Քեզ համար ապահով տեղ չէ։ Մի օր կը տեսնես որ քեզ շրջապատեցին...

—Դու, ի հարկէ, հանաք ես անում։

—Ո՛չ, հանաքի բան չը կայ։

—Եթէ այդպէս է, ապահով եղիր, Սա՛լան, մեր գըժերը որոգայթի մէջ ընկնող պտուղներ չեն։ Տեսնո՞ւմ ես այս տղամարդկանց... Օսմանցիները շատ լաւ են ճանաչում սրանց. և եթէ քնած էլ տեսնեն մեզ, չեն համարձակվի մօտենալ։

Նա պատմեց թէ ո՛րն է այդ ապահովութեան գաղտնիքը։ Ջէնքը, սարերը, ձիանը բաւական չեն. թէև էլ մեծ նշանակութիւն չունի։ Գլխաւորը անունն է։ Եթէ

ապրում, կարող ես հանգիստ քնել.
քեզ և մի մարդու տեղ հարիւրը կը
Վարանդայի գժերը. ինչու պիտի
ի որ ամէնքը իրանցից են վախում...
ն ուշադրութեամբ դիտում էր այդ
այնքան մեծ երկիւղ էր տարածում։
էլ ընդարձակ չէր և գժերի մի մասը ապ-
րում էր հարևան գոմում. այդտեղ էլ գտնվում էին խմբի ձիաները։ Դրանց թիւը այժմ շատ քիչ էր. ձմեռը խումբը կռվում էր հետևակ. իսկ ձիաները տեղաւորում էր գիւղերում։ Գոմի առաստաղը ցածրիկ էր, հիւսած ճիպոտներից. նա ամբողջապէս սևացել էր ծուխից. և այդ սև փայտերից կախված էին բազմաթիւ հրացաններ, ատրճանակներ և սրեր։

Աղքատ և միանգամայն անկեր էր գժերի օթևանը. բայց օջախի բոցերը ինչպէս ուրախ ցոլում էին զէնքերի մաքրած ու յղկած պողպատների վրա։ Նրանց տակ, չոր հողի վրա, երևում էին մի քանի հատ կապերտներ միայն. Ջրի հողէ կուժը դրած էր պատի մօտ։ Եւ այլ ևս ոչինչ... Այսքան մարդիկ ապրում էին միայն օջախի օգնութեամբ և բացի զէնքերից ուրիշ մի բան չէին ճանաչում։ Նրանք թափված էին յատակի վրա, ընդունելով զանազան դիրքեր։

Բրթոտ, գզգզված մարդիկ էին. նրանց դէմքերը սևացել էին արևի, ձիւնի և անձրևի ազդեցութիւնից, նրանց ձեռքերը կոշտ էին, փայտացած։ Սարսափելի աղքատութիւնը ընդհանուրի բաժինն էր։ Այստեղ էլ, այս ձիւնակոյտի տակ, դրանք գիւղացիներ էին. չը կար մի հատ հպարտ դէմք, մէկը միւսին չէր հրամայում, ամէնքը եղբայրներ էին։

Ահա աջ կողմի պատի տակ լսվեց մի տնքոց։ Մի մարդ է պառկած այդտեղ, երեսը դարձրել է դէպի պատը։ Հիւանդ է, ընկերները ծածկել են նրան մի քանի հատ դատարկ ջուալների տակ։ Նա ջուր ուզեց. և իս-

կոյն ոտի կանգնեց խոժոռ դէմքով մի տղամարդ, ջուր տուեց։ Ապա շօշափեց հիւանդի ձեռքերն ու կուրծքը և յայտնեց ամէնքին, որ տաքութիւնն անցնում է։ Մանասը պատմում է, որ սարսափելի ջերմ ու տենդը ամառվանից չէ թողնում այդ մարդուն։ Բայց և այնպէս, նա իր ընկերներից չէ բաժանվում, չէ գնում գիւղը, ուր ունի հայր, մայր, կին, երեխաներ։ Սուլէյման-բէկը տանջում է նրանց, պահանջում է որ այս տղամարդը թողնէ գժերին, բայց նա չէ ուզում։ Շատերն են այդպէս, շատերն են թողել տուն ու տեղ և այժմ բոլորովին մոռացել են իրանց սիրելիներին։

Կրակը ուրախ ճրթճրթում էր։ Որը խօսում էր իր ընկերների հետ, որը կարկատում էր իր տրեխները. իսկ մի քանիսը նստել էին կրակի մօտ և նոր լուրեր էին հարցնում Ասլանից։ Ի՞նչ կայ աշխարհում, ինչպէս են ապրում մարդիկ, ո՞վ է մեռել, ո՞վ է կենդանի։

Անհրապոյր, վտիտ դէմքեր, զրկանքների, չարքաշ կեանքի զաւակներ։

Ասլանը պատմում է ինչ որ գիտէ, թէև ինքն էլ շատ տեղեկութիւնների տէր չէր։ Նրա խօսքը քաղցր էր, ախորժելի։ Նա այս մարդկանց տեսնելու համար էր եկել այստեղ. իր վիրաւորված սրտի համար նա այստեղ, գլուխներից ձեռք վերցրած այս մարդկանց մէջ էր մխիթարութիւն որոնում։

Եւ որքան խեղճ, բարի մարդիկ էին Մանասի գժերը, նրանք, որոնցից վախում են օսմանեան զինուորները։ Ո՛չ ոք չէ խօսում իր մասին, ո՛չ ոք չէ յիշում թէ երէկ, անցեալ օրը ինչ քաջութիւններ է գործել ինքը։ Դժուար էր հաւատալ թէ դրանք էին այն մարդիկը, որոնք ձեռնունայն յետ դարձրին զաղան Սուլէյման-բէկին և որոնց պատճառով Վարանդան տակն ու վրա եղաւ։ Կարծես խաղաղ երկրագործներ են, հաւաքվել են կրակի շուրջը, միասին տաքանում են, միասին օրեր են համրում թէ երբ ձիւնը կը հալվի և իրանք կը վերցնեն խո-

փը ու մի գնան հողը վարելու։

Այսպիսի մարդկանց չէր սպասում Ասլանը։ Ճեղքելով իր ճանապարհից, Դիզակի և Վարանդայի սարերի ձիւները պատռելով, նա ոգևորված էր այն մտքով թէ Մանասի որջում կը տեսնէ «սըրած թրեր», կը խօսէ այնպիսի քաջերի հետ, որոնց շնչառութիւնից կրակ է կաթում։ Ամաչում էր Ասլանը. ինչպէս ինքը պիտի նըստէր այն մարդկանց շարքում, որոնցից իւրաքանչիւրը կարող է բաց անել իր ճակատը և մի ամբողջ գիշեր պատմել իր ձեռքի գործերը։

Ի՞նչ պիտի անէր ինքը։—Ոչինչ։ Մէլիք-Աւանին այնպիսի դրութեան մէջ թողնելուց յետոյ երիտասարդը չէր կարողանում պահվել թամբի վրա, այնքան էր այրվում զժգոհութիւնից. և մինչև սարի գլուխը հանելը՝ հաստատապէս գիտէր որ այդպիսի սրտով չէ կարող գնալ Պարսկաստան։

Ո՛չ, պէտք էր տեսնել մի յուսատու բան, պէտք էր համոզվել թէ լեռնցու նախկին պատիւը դեռ մնում է, պէտք էր մի ապացոյց թէ զուր չէ աշխատութիւնը, թէ այս անբախտ երկրի մէջ վերջնականապէս չէ մարել կրակը, որից պիտի առաջին հրդեհ գոյանայ։ Նա յիշեց Մանասի ասպատակներին, և այդ ժամանակ թողեց Պարսկաստանի ճանապարհը։ Նա եկաւ Մանասի մօտ ուխտաւորի յոյսերով, եկաւ որ տեսնէ թէ ինչպէս են լեռների անկախ և ազատ մարդիկ։

Սրանք Դիզակի մէլիքի պէս չը պիտի լինէին. սրանք նոյնքան հրաշալի պիտի լինէին, որքան հրաշալի է անկախութիւնը։

Եկաւ, և ի՞նչ է տեսնում։—Հասարակ մարդիկ, պատռված չուխաներ, գզգզված փափախներ։

Ահա սկսվեց մի փոքրիկ անձրև. ջուրը կաթում է գոմի առաստաղից, ծըծըլում է. չոր խարույկը տաքացրել է կտուրը, ձիւնը հալվում է։ Մարդիկ նստած են կաթոցների տակ, ուրիշ տեղ չունեն։ Հիւանդը տնքում

է, վայ է կանչում, իսկ Մանասի պատմութիւններից երևում է, որ տղերքը շատ անգամ քաղցած են մնում։

Հիասթափութի՜ւն է։ Ասլանը հարցնում էր իրան. «Արժէ՞ր գալ. մի՞թէ սրանք են մի ամօթահար երկրի պարծանքը» . . .

Հարևան գոմում սկսվեց ինչ-որ թրխկոց. մէկը, ինչպէս երևում էր, մի բան էր ծեծում։ Կարծես դանդաշան էր, և ահա այստեղ էլ մէկը մօտեցաւ օջախին, կրակի վրա դրեց երկաթի ամանը. Նա կապար էր հալում. բաց արեց երկաթի կաղապարը, հրացանի գնդակներ էր ձուլում։ Մանասը բացատրեց Ասլանին, որ հարևան գոմում վառօդ են շինում։ Եւ աւելացրեց.

—Պատրաստվում ենք գարնան համար։ Արդէն մեծ պաշար ունենք։

Գնդակներ թափողը մի շատ ջահիլ երիտասարդ էր, համարեա պատանի, որի բեղերը նոր էին սևին տալիս։ Նա ուշադրութեամբ հետևում էր իր գործին, հազարից մի անգամ կարճ պատասխան տալով Ասլանին։ Վերջապէս նա յայտնեց, որ խմբի գործերը գիտէ Մանասը։ Իսկ Մանասը պատմեց, որ մեծ կռւի ժամանակ այս պատանին է սպանել քուրդ Հասանին, մտնելով այն վրանը, ուր թաքնվել էր վախկոտ գազանը։

—Մեծ բան էր, հեգնութեամբ ասաց պատանին, և կարծես ամաչելով իր արածից, գլուխը կախ արաւ և քթի տակ փնթփնթաց.

—Ամենքը գնացին քրդերի վրա, ես հօ չը պիտի նստէի տեղս։

Մեծ բան չը կար այս մարդկանց համար. ինչ որ եղել էր, պիտի լինէր։ Ամենքը... անողները ամենքն են, անհատ չը կայ, ոչ ոք իր ընկերից լաւ չէ։ Բայց «մեծ կռիւը»—այսպէս էր խումբը անուանում գիւղացիների կոտորածը—յարուցանում է յիշողութիւններ, որոնց մէջ փայլում էր և անհատը. դա, ի հարկէ, Տէր-Սողոմոնն էր։

Մարդկանց լեզուն յանկարծ բացվեց. խօսում էր

ամբողջ գոմը։ Մեռած ընկերը գովասանքների, օրհնութիւնների առարկայ դարձաւ, և այս մարդիկ, որոնք այնքան ժլատ են գովասանքների մէջ, բացարձակ մեծացնում էին իրանցից մէկին. իւրաքանչիւրն աշխատում էր մի դէպք պատմել, որի մէջ գործում, շարժվում էր Տէր-Սողոմոնը։

Գոմի անկիւններից մարդիկ առաջ եկան, կանգնեցին խարոյկի առաջ. բոլոր դէմքերը փայլում էին գոհութիւնից. այս գծերին էլ անծանօթ չէ եղել երջանկութիւնը... Նոյն իսկ հիւանդն էլ շարժվեց, ինչ-որ խօսքեր արտասանեց։ Ասլանը յիշեց Նահատակ քահանայի մահը, որի մասին լսել էր օտարութեան մէջ։ Սարսափելի մահ. բայց ինչպէս նա դիմանում էր, ինչպէս արհամարում էր սպանողներին։ Այդ յիշողութիւնը ազդեցութիւն չարաւ։

—Մեռնելը մի և նոյն է, ասաց գնդակներ թափող պատանին։

—Ի՞նչ տեսակ ուզում ես՝ մեռիր, զանազանութիւն չը կայ, վրա բերեց մի ուրիշը։

—Մենք մեռնելու մասին երբէք չենք խօսում, բացատրեց Մանասը։

Եւ դարձեալ խօսքը կենդանի Տէր-Սողոմոնի գործերին անցաւ։ Ասլանը բնական էր համարում այդ ոգևորութիւնը։ Քահանան խոշոր գործիչ էր, և ի հարկէ, նրան չէին մոռանայ։ Բայց Ասլանը սխալվում էր։ Ահա անունը փոխվեց. Տէր-Սողոմոնի տեղը բռնեց մի ինչ-որ Ակու։ Նա մեռել էր կռուի մէջ ստացած վէրքերից, նրան թաղեցին ընկերները, խենջարների ծայրով փոս փորելով գեղեցիկ թումբի վրա, աղբիւրի կողքին։ Նա նոր էր մտել խումբը, մի երկու գործով ցոյց էր տուել, որ իր ընկերներից յետ չի մնայ և ահա ընկերները նոյն ոգևորութեամբ մեծարում էին նրա յիշատակը...

—Մեռածները լաւ են լինում, յանկարծ ասաց Ասլանը։—Ես ձեզ մօտ հիւր եկայ ոչ թէ այն պատճառով,

որ իմանամ թէ ինչ ընկերներ էք կորցրել։ Ես ուզում եմ կենդանիներին ճանաչել, ուզում եմ իմանալ թէ ինչ տղամարդիկ կան ձեր մէջ...

—Աստեղ ամենքն են, պատասխանեցին մի քանի մարդիկ, միմեանց նայելով։

Իսկ մէկը, որի տափակ դէմքը, ինչպէս երեւում էր, ամիսներով ածելի չէր տեսել, նստեց Ասլանի կողքին, որպէս զի լաւ հասկացնէ նրան թէ ինչու մեռածներին են այստեղ յիշում։

—Վերջն է լաւ, ասաց նա ժպտալով.—միշտ պէտք է սպասել վերջին։ Այսօր լաւ եմ, էգուց վատ, դրանից ինչ կը լինի։ Գերեզմանն է մարդուն ջոկում։ Եթէ հայհոյում են գերեզմանը, կը նշանակէ որ վատ է նրա մէջ պառկածը...

—Ուրեմն կենդանի մարդու մասին դուք լաւ կամ վատ չէք ասում։

—Վատը կարելի է, բայց լաւը...

--Մանասը լաւն էլ է ասում։

—Մանասը ուրիշ բան է։ Մենք միայն նրան ենք հաւատում։ Տեսնում է մեզ, ասում է՝ ինչ որ արդար ու ճիշդ է։ Նա մեր գլուխն է, նրա պէս իմացող չը կայ...

Այստեղ Մանասն ընդհատեց խօսակցութիւնը, երեւի նկատելով որ տղաները գովում են իրան։

—Դու նոր եկար և, ի հարկէ, զարմանում ես, ասաց նա Ասլանին։—Սպասիր, մի երկու օրից յետոյ կը ճանաչես ամենքին։

— Վաղը ինձ այստեղ չես տեսնի։

—Այդքան շուտ քեզ բաց թողնել չէ կարելի։ Ձմեռ է, մենք պարապ, դու պարապ. վաղուց է քեզ հետ որս չեմ արել։ Գիտե՞ս որքան առատ է որսը այս կողմերում. եղնիկները հօտերով են ման գալիս։ Ձիւնը խոր է. Աստուծու անասունները փախչել չեն կարողանում։ Ով ինչ ուզում է լինի, բայց քեզ պէս հրացան խփող չի լինի։ Մենք կը գնանք...

—Գովել չէ կարելի, ինքներդ չէք ասում։

—Դա գովասանք չէ. կնամարդն էլ կարող է լաւ հրացան խփել: Հա, ձմեռը դու Թիֆլիսում չէ՞ս եղել:

—Այստեղ էլ սար է, չէ՞:

—Այստեղ ի՞նչ սար է: Այստեղ մեր ձմեռոցն է: Դու պիտի տեսնես այն տեղերը, ուր մենք ապրում ենք ամառը: Ցուրտ ես ուզում, այնտեղ է, ձի՞ւն ես ասում՝ գագաթների մօտ: Խօսք եմ տալիս հարիւր որջ գտնել, արջի որջ . . .

—Դուք այժմ էլ գնո՞ւմ էք այնտեղ:

—Միշտ ման ենք գալիս... Այս գոմի մէջ ոչ ոք մեզ չի կերակրի . . .

—Դա ճիշդ է, դուք համ գժութիւններ պիտի անէք, համ կերակուր գտնէք ձեզ համար:

—Երկուսն էլ դժուար բաներ չեն: Տղերք, բաւական է, որքան խօսեցիք... Այժմ պէտք է մի կտոր հաց ուտել: Մեր Ասլանին ցոյց տանք թէ ինչ համ ունի Թիֆլիսի գլխարը . . .

Օջախի մօտ հաւաքվածներից մի քանիսը գնացին Մանասի պատուէրը կատարելու. իսկ մէկը այս ու այն կողմը քաշեց խանձողները, կուտեց կրակը, խորովածի համար տեղ պատրաստեց: Միայն այդ ժամանակ Ասլանի աչքն ընկաւ մի տարօրինակ երևոյթի վրա, և նա հարցրեց Մանասից.

—Ի՞նչ է նա... Իմ աչքի՞ն է այդպէս երևում, թէ՞ իսկապէս աղջիկ է . . .

—Աղջիկ է:

Ջրի կժի մօտ կանգնած էր մի աղջիկ և նայում էր նորեկին:

—Ուրեմն աղջիկներ է՞լ են կռւում քո ձեռքի տակ . . .

—Ո՛չ, դա այսօր եկաւ, քեզանից շատ առաջ, կէսօրին:

—Մենա՞կ . . .

—Մենք ճանաչում ենք նրան և չենք զարմանում:

—Բայց ինչպէս եկաւ, ինչո՞ւ եկաւ:

—Նրա համար դժուարութիւն չը կայ: Երէկ մեր տղաներից մէկը իջաւ սարերից, որ մեզ համար աղ ու հաց բերէ: Այսօր առաւօտեան, վերադառնալիս, նա տեսնում է, որ սա գնում է մի ինչ-որ մարդու հետ. հեռուից այնպէս է թւում թէ սրա ընկերը մեր երկրացի չէ, կասես թէ թուրք լինի: Նա ուշադրութիւն չէ դարձնում, շարունակում է ճանապարհը. ասացի որ մենք ճանաչում ենք այս աղջկան: Բաւական տեղ գալուց յետոյ մեր տղան տեսնում է յանկարծ, որ աղջիկը վազում է իր ետևից: Մենակ էր, նրա ընկերը կորել էր... Եւ այդպէս աղջիկը եկաւ այստեղ:

—Տղամարդ աղջիկ է, զարմացած բացականչեց Ասլանը:

—Ո՛չ, խենթ է: Ամառը նա թափառում էր ծմակներում, պտուղներ էր հաւաքում: Քանի անգամ տեսել եմ նրան ծառի տակ նստած, մենակ, գլխաբաց, բոբիկ: Խօսում էր ինքն իր հետ, ձեռքը յաճախ դնում էր կրծքի վրա, սաստիկ ցնցվում էր և ինչպէս էր ոռնում. երևի սաստիկ ցաւ ունէր սրտի մէջ... բայց ոչ ոք չէր կարողանում իմանալ թէ այդ ինչ ցաւ է: Ում տեսնում էր, կպչում էր նրան և վարազի ժանիքներ էր ուզում: Ասում էին, որ երեխաները փախչում են դրանից, իսկ դա «ժանիք» կանչելով վազում է նրանց ետևից: Մի խօսքով՝ խենթ... Այժմ հանդարտվել է, բայց խելքը էլի նոյնն է: Ամբողջ օրը նա կրկնում էր թէ ինքը հիմա մարդ է դառել, հիմա ինքն էլ հարկաւոր է մարդկանց և կարող է լացացնել բոլոր բախտաւորներին:

—Ովքե՞ր են դրանք:

—Նա բախտաւոր է անուանում ամեն մէկին, որ իրանից լաւ է: Իսկ ո՞վ չէ լաւ նրանից: Տեսնո՞ւմ ես ո՜րքան խեղճ է . . .

Ջրի կժի մօտ մի սուր քրքիջ բարձրացաւ: Մանասը լռեց, իսկ աղջիկը—դա Նազլուն էր—երեսը դարձրեց դէպի պատը, ձեռքը բարձրացրեց, սպառնականի

նշան արաւ և կանչեց.

—Կը լացացնեմ...

Նա գնաց դէպի անկիւնը, անշարժացաւ մթութեան մէջ։ Ամենքը, նոյն իսկ Ասլանը, հանգարտ ծիծաղում էին։

—Յօսացնես, կապելու խենթ է, ասաց մէկը.— բայց այսօր կարկատեց մեր շորերը։ Կէս ժամ առաջ միւս գոմում նստած էր կրակի առաջ և արագ գործում էր ասեղով։ Գործի տակ նա մի շատ լաւ աղջիկ է...

Օջախի վրա բարձրացաւ խորովվող մսի մուխը. տղաները պլրզել էին շարքով և այս ու այն կողմից ահագին շամփուրներ էին պատեցնում կրակի վրա։ Ամեն մէկը իր շամփուրին էր ծառայում. պլրզածների եռեւում կանգնել էին հերթի սպասողները. խորովածի ախորժելի հոտը ամենքին ոգի էր կանգնեցրել։ Աղջիկը առաջ եկաւ և հաց բաժանեց. նա չը մօտեցաւ և հիւանդին։ Ընդհանուր սեղան չը կար. ամեն մէկը հանում էր շամփուրի ծայրից խորովածը և ուտում էր, ուր ուզում էր։ Առաստաղի կաթոցը քիչ հանդարտուել էր, որովհետև կրակը փոքրացել էր և վերևում նորից հաստատվում էր սառնամանիքը։

—Այս մսից կշտանալ չի լինի, բացականչեց Մանասը, մեծ բաւականութեամբ կրծելով մի մեծ ոսկոր։

—Օրհնվի՛ Բիբար, պատասխանեց Ասլանը, որ նոյնպէս հիացած էր խորովածից։

—Օրհնվի՛ և Նախիջևանը... Դու գիտե՞ս, Ա՛սլան, մի ամբողջ շաբաթ մենք առանց աղի էինք. այն ժամանակ այս միսը չէր կարելի մօտեցնել բերանին։ Այսօր աղ հասաւ մեզ։ Հաւատա՛, առանց աղի մարդ կը մեռնի։

Մթութեան միջից նոր շամփուրներ էին լոյս ընկնում, ամենքի ախորժակը սաստիկ գրգռված էր, կարծես սովից էին ազատվել։ Որսորդի գնդակից ընկած գրխտարը այդ երեկոյ անվերջ զովասանքներ, հիացմունք զարթեցրեց։ Մուխը գնալով թանձրանում էր։ Ասլանը միանգամից չը նկատեց, որ դիմացը, մուխի քուլաների

եռեւում, նստել է Նազլուն։ Միայն նա էր, որ չէր մասնակցում ընթրիքին։

Երկու ձեռքերի մէջ առնելով իր ծունկը, նա ակնապիշ նայում էր անծանօթ երիտասարդին, կարծես ուզում էր կարդալ թէ ինչ կայ նրա լայն ճակատի տակ։ Ասլանը մի կտոր խորոված մեկնեց դէպի նրան։ Նա չը շարժվեց, չընդունեց պատառը և յանկարծ հարցրեց.

—Դու հաւատացի՞ր դրան։

Եւ ցոյց տուեց Մանասին։ Ասլանի դէմքի վրա երևաց մի ներողամիտ ժպիտ։ Ծանօթ նշան։ Մարդիկ դրանով են ցոյց տալիս թէ խենթի հետ գլուխ չեն դընում։ Եւ աղջիկն շտապեց մի կտրուկ ձայնով հերքել այդ բանը.

—Ես խենթ չեմ, ասաց նա։—Հիմա ես հարկաւոր մարդ եմ և կարող եմ լացացնել բախտաւորներին։ Այդ դժուար չէ, եթէ ուզենամ...

Խորին ինքնաբաւականութիւն ցոյց տուող մի ծիծաղ յանկարծ դուրս ցայտեց, ընդհատելով այդ խօսքերը։ Խե՜ղճ աղջիկ... Ասլանն ամաչեց այդ մոլորված դէմքից և հանգարտ կերպով պատասխանեց.

—Հաւատում եմ։ Բայց դու, ի հարկէ, խելօք ես և չես լացացնի...

—Չէ, մինչև որ բախտաւորը լաց չը լինի, խեղճը չը պիտի ծիծաղէ։ Այդպէս է երևում...

—Ի՞նչ կը լինի որ երկուսն էլ ծիծաղեն։

—Հա՛, այդ ուրիշ բան է։

Նա հեռացրեց ձեռքերը ծնկնից և մեղմ, շատ մեղմ կերպով ծիծաղեց. նրա դէմքը այլափոխվեց, աչքերի մէջ բռնկվեց մի յանկարծահաս, վարակիչ ուրախութիւն։

—Գիտե՞ս... ես գտայ իմ մօրը... Նա ինձ համբուրեց. քանի՜ անգամ համբուրեց. իմ ամբողջ երեսը այժմ էլի տաքացաւ։ Լա՜ւ էր... Նա չը թողեց որ ես լաց լինեմ, ասաց բաւական է իր լացը...

Կատաղի, անզուսպ զգացմունք յարուցին մօր համ-

բոյրները։ Նա չէր կարող մենակ տանել այդ ալեկոծումը. կանգ առաւ հանգստանալու համար, աչք ածեց իրան շրջապատողների վրա։

Բոլոր դէմքերը նրան էին մտիկ տալիս, բայց ոչ մէկը մասնակից չեղաւ նրա ուրախութեան։ Ամենքը շարունակում էին հանդարտ ծամել, ամենքի վրա պարզ երեւում էր նոյն ներողամիտ ժպիտը։ Եւ Նազլուն խիստ ցնցումից վեր թռաւ, ձեռքերով ինչ-որ տարօրինակ նշաններ արաւ, ճչաց, ապա բռունցքները սեղմելով կատաղի հայեացք գցեց կրակի վրա, կարծես ուզում էր կռիւ տալ, տրորել նրան։

Օջախի շուրջը միահամուռ, սրտանց ծիծաղ բարձրացաւ։ Աղջիկը մի ակնթարթում թուլացաւ, փշրվեց. նորից ցած ընկաւ, նստեց իր տեղը, նորից գրկեց իր ծունկը և հանգստացաւ։ Իսկ տղաները շարունակում էին ուտել և ծիծաղել։ Միայն Ասլանն էր, որ հետաքրքրութեամբ նայում էր խեղճ աղջկան. նա մինչև անգամ փորձեց սիրտ տալ նրան։

—Գիտէի որ այսպէս պիտի լինի, յանկարծ ասաց Նազլուն, դիմելով Ասլանին։—Մարդիկ մի և նոյն են, թէև այսպիսի փայլուն բաներ ունենան . . .

Նա ցոյց տուեց առաստաղից ու պատերից կախած հրացանները, արհամարհանքով նայեց Մանասին և ապա շարունակեց.

—Դու հիմա էլ ասում ես, որ ես խենթ չեմ, հա՞։

—Ի հարկէ, դու լաւ ես խօսում։

—Իմ մայրն էլ մեղաւոր է… Ինչո՞ւ էր այնպէս քաղցր խօսում, ինչո՞ւ համբուրեց ինձ, լաց եղաւ… Գալիս էի նրա մօտից և գիտէի որ այսպէս պիտի լինի… Հիմա բախտաւորների բանը վատ է. չեն ուզում լաց լինել, հա՞։ Բայց ինչո՞ւ չեն թողնում, որ Նազլուն ծիծաղէ, գոնէ մի անգամ . . .

—Խեղճ աղջիկ… Ո՞վ է քեզ այդպէս հալածում. տամ, ես նրան . . .

—Իմ մայրը հեռու է այստեղից։ Այս սարերի ետեւում մի գիւղ ցոյց տուին ինձ—սեւանայ նա, Թուրքի գիւղ է։ Այնտեղ են փակված խեղճերը, մի մեծ տան մէջ… Շատ են նրանք, բայց ես իսկոյն ճանաչեցի իմ մօրը։ Մաշվել է… արտասունքը այրել է նրա երեսը, բայց դռները էլի բաց չեն թողնում… Ի՞նչ են ուզում նրանից… Կրակ տալ գիւղը, քանդել այդ տունը…

Ասլանը յոյս չունէր թէ նա կարգին կը պատմէ, կը հասկացնէ ամեն ինչ, ուստի սկսեց հարցեր տալ և ղեկավարել նրա միտքը։ Բայց այդ էլ չէր օգնում։ Մանասը, կորցնելով համբերութիւնը, լռեցրեց Նազլուին և ինքը բացատրեց թէ ինչի մասին է նա խօսում։

—Օսմանցիները շատ կանայք տարան այս կողմերից. երևի նրանց մէջ է և այս աղջկայ մայրը։ Խեղճը որոնում է մօրը, գուցէ և գտել է նրա տեղը և ամբողջ օրը ինձ խելք էր սովորեցնում… Թուրքի գիւղը կրակ տալ, քանդել այն տունը, ուր փակված է մայրը, ազատել նրան… Այդ է ուզում։

—Ուզո՞ւմ եմ, բացականչեց Նազլուն և նրա աչքերը պսպղացին այդ անզուսպ տենչանքից։—Թող սրանք ամենքը գնան… Ես կը տանեմ, ես գիտեմ ճանապարհը… Արի հէնց այժմ ես ու դու գնանք այս սարի գլուխը. դու ոչինչ մի ասա, ես կը նայեմ չորս կողմը և իսկոյն կիմանամ թէ ո՛ր կողմից է մայրս կանչում ինձ . . .

Մանասը ծիծաղեց, բայց Ասլանը զարմացած էր այդ տարօրինակ աղջկայ վրա, որ հաւատացնում էր թէ կէս գիշերին, ամեն ժամ, նոյն իսկ աչքերը կապած, կարող է գտնել այդ ճանապարհը։ Մի՞թէ խենթութիւն է դա. մի՞թէ այդ խեղճը իր երազներն է պատմում… Խմբապետը հաստատում էր որ, այո՛, դատարկ բաներ են, միայն խենթը կարող է այդպիսի միտք գտնել։ Գաղտնին այն է, որ Մանասը գնայ ամեն մէկի ետեւից, կատարէ ինչ որ իրան ցոյց կը տան։ Նա գիտէ իր գործը, նա ձմեռը չի գնայ մի գիւղի վրա, ուր ազատմարդիկ հաւաք-

ված են ամերում և կարող են իսկոյն դուրս վազել։

—Դժուար է, հաստատեց և Նազլուն։—Գիւղը լի է դեւերով, որոնց մարդիկ—կեղծաւորները—թիւրք են անուանում։ Մուխտարն էլ շատ շներ ունի։ Նրանք հսկում են օր ու գիշեր։ Բայց սրանք հոգի են հանում...

Վերջին խօսքերը վերաբերվում էին հրացաններին։ Մի վայրկեան սարսափելով իր տեսած դեւերից ու շներից, նա նայեց փայլուն զէնքերին և իր հիացմունքն արտայայտեց երեխայի նման, տարօրինակ շարժումներ գործեց, էլի ծիծաղ յարուցեց։ Ասլանը հաւատաց Մանասի խօսքերին. խելք իսկ որ չը կար այդ խեղճի գլխում։

—Ե՞րբ պիտի սրանք գոռան, հարցրեց Նազլուն, դանդաղ կերպով իջեցնելով տատասաղից իր հայեացքը Մանասի վրա։

—Երբ դու կը խելօքանաս, պատասխանեց խելաբօլը։

Մի ցաւալի, ողեկտուր ճիչ թռաւ խեղճի բերանից։ Ինքն էլ չէր հաւատում թէ շուտ կը լինի այդ բանը, գիտէր որ երբէք չը պիտի հաւատան թէ ինքը խենթ չէ։

—Նրան չարչարում են... Նրան կը տանեն...

Բարակ, սուր շրթունքները սեղմվեցին միմեանց, դողացին և նա բառաչեց.

—Իմ մա... այ...րը։

—Ա՛րի քեզ փոխենք նրա հետ... Դու գնա, նա մնայ...

Դա անխղճութիւն էր։ Ասլանը բռնեց Մանասի թեւից և խնդրեց որ այլ ևս չը չարչարեն դժբախտ աղջկան։ Տղաներից մէկը վերկացրեց նրան, բարկացաւ, տարաւ գոմի մի անկիւնը, նստացրեց այնտեղ։

Այնուհետև ուշադրութիւն չը դարձրին նրա վրա։ Բայց նա խօսում էր, անդադար խօսում էր։ Նախատեց այս գոմի բնակիչներին, անուանեց ամենքին սարի գըլխից, քարի տակից, պինդ անկիւններից ազատարդութիւն անող։ Ապա մի խոր հառաչանք արձակեց և մխիթարութիւն գտաւ իր սիրած մտքի մէջ.

—Բախտաւորները լաց պիտի լինեն... Սպասիր... Հէնց էգուց... Դժուար չէ, մայր...

Նա, վերջապէս, լռեց։

Դ

Շուտով լռեցին Մանասի դժերը։ Խաւարը կլանեց գոմի ներսը, օջախի տեղը մնացին գլուխ գլխի տուած երկու կռճղերը։ Գոմը լցվեց կծու, խեղդող ծխով։ Ամեն մէկը փաթաթվեց կամ եափնջու կամ կապերտի մէջ, անշարժացաւ չոր յատակի վրա։ Նեղ երդիկից ներս էր թափվում պարզկայ գիշերվայ սարսափելի ցուրտը։

Արթուն էին միայն Մանասն ու Ասլանը։ Նրանք հանդարտ խօսում էին՝ պառկած կռճղերի մօտ. նրանք դատողութիւններ էին անում և ուրիշ լսող չը կար։ Տղաները գործ չունէին դատողութիւնների հետ. նրանցն այն էր, ինչ կասէր Մանասը։

Ասլանը չը թագցրեց, որ իր այրվող սիրտն էր իրան այստեղ բերել։ Ծառայութիւնից վերադարձած, նա մի օր էլ չը կարողացաւ մնալ իր հայրենիքում. ամեն տեղ կրակ էր, որ այրում էր նրան։ Ի՞նչ օրեր են։ Մինչև անգամ Մելիք-Աւանն էլ է շշկլվել։

—Հա, մելիքը... Շատ ժամանակ է մեր տղաները չեն տեսնում նրան։ Ի՞նչ է ուզում։

—Ոչինչ, ոչինչ... Ճար բոլորովին չը կայ, յուսահատութիւնը կատարեալ է... Մելիքի դրութիւնն անտանելի է։ Մարդը ազատ չէ, նման է մի հսկայի, որ տեսնում է ծովի մէջ խեղդվող անհաշիւ բազմութիւնը, ընկնում է կատաղած ալիքների մէջ որ ազատէ ամենքին, բայց խեղդվողները քաշում, տանում են նրան և նա հազիւ է կարողանում ինքն իրան պահել ջրերի երեսին։ Կայ մի ուրիշ մարդ, որ չէ ընկել ծովը, այլ ընդհակառակը, բարձրացել է սարի գլուխը, որին չեն հասնում

թշուառութեան ալիքները։ Այդ մարդը Մանասն է. ինչ է ուզում Մանասը…

—Մենք կռւում ենք և պիտի կռւենք։ Մենք երբէք չենք դադարի։

—Ես այդ տեսնում եմ։ Այսպիսի գժերի տէրը ուրիշ խօսք ասել չէ կարող։ Բայց դու էլ մենակ ես։

—Մենակ էլ կը կռւենք։ Մենք օգնութեան չենք սպասում։

—Մի բուռն մարդիկ ահագին բազմութեան դէմ…

—Այդ չէ նշանակում թէ չը պէտք է կռւել։ Գարնանը մեր տղաների թիւը հասնում է հարիւրի։ Հաստատ իմացիր, որ ամեն մէկը հինգ մարդու դէմ կը գնայ, եթէ իմանայ օգտւել մեր սարերից։ Բայց մեզ դէմ հինգ հարիւր հոգի չեն բերում, և մենք մեծ կռիւների շատ քիչ ենք հանդիպում։ Մեր հրացանների նպատակը հատ֊հատ օսմանցիներ են։ Երբ թփի ետևից ծխում է մեր հրացանը և օսմանցին փռւում է հողի վրա, մենք ամենքըս ուրախ ենք. մէկն էլ, ուրեմն, չը կայ, մէկն էլ պակասեց…

—Բայց դա մանր կռիւ է։

—Մանր, բայց անողորմ, անխնայ…

—Այդպէս տարիներ են հարկաւոր։

—Աւելի լաւ է յոյս դնել տարիների վրա, քան չունենալ որ և է յոյս։ Մենք փոքր ենք, իսկ մեր թշնամին մի ահռելի վիշապ է, դու ճիշդ ասացիր։ Բայց ինչ կարող ենք անել. եթէ միանգամից ոչնչացնել անհնարին է, գոնէ պիտի աշխատենք կաթ-կաթ հանել հրէշի արիւնը։ Կաթ-կաթ, բայց անընդհատ. այդպէս են յաղթում փոքրերը։ Թող վիշապը լինի լեռան չափ, ունենայ տասը գլուխ. եթէ նրա դիմաց մենք դառնանք չնչին, բայց ժիր տզրուկներ, դարձեալ մենք կը լինենք շահվողը. ժամանակի ընթացքում մեզ կաջողվի ցամաքեցնել հրէշի կազմուածքը։

—Այո, եթէ կարելի լինէր կախարդել հրէշին, գցել

նրա վրա մի հրէշային թմրութիւն, հեքիաթների թանձր քունը, որ տարիներ է շարունակվում,—պատասխանեց Ասլանը հոգոց հանելով։—Բայց մեր հանած իւրաքանչիւր կաթիլի փոխարէն՝ մենք տալիս ենք գետեր, փրփրած գետեր։ Ո՞վ շուտ կը սպառվի…

Մանասը ծիծաղեց, կարծես շատ անգամ էր լսել այդ խօսքերը. ապա յանկարծ տաքացաւ և, չը կարողանալով դադար գտնել, շուռ եկաւ մէջքի վրա ու նստեց։

—Դու, կարծես, Մէլիք-Յուսէֆնի կնոջ մօտից ես գալիս, ասաց նա։

—Նրա երեսն էլ չեմ տեսել…

—Բայց նրա խօսքերը լաւ ես կրկնում։ Լսիր, ես նոր եմ հասկանում, որ մարդը շատ է սխալվում։ Ինձ համար կանանց մէջ ամենալաւը, նա, որ արժան էր մի հսկայ տղամարդի կնիկը լինել, Մէլիք-Աւանի քոյրն էր, Աննա-խաթունը։ Այդ բաւական չէ. սուրբ մարդկանցից ոչ ոք, ինձ համար, նման չէր Աւետարանոցի մայրապետին, որի անունն է Հեղինէ։ Հիմա ես գիտեմ, որ երկուսն էլ ոչինչ են։ Միթէ դու էլ, Ասլան, մեր երկրի լաւ երիտասարդներից մէկը, կարդացած, աշխարհ տեսած, ամենաճարտար որսորդ, պիտի ուրիշ բան երևաս իմ աչքում։

—Դա ինչ խօսք է։

—Ահա ինչ։ Ամառը, երբ մենք մի փոքրիկ վրէժ հանեցինք գիւղացիներից, Մէլիք-Յուսէֆնի կինը ինձ լուր ուղարկեց, որ ինքը հակառակ է մեր գործին, երես է դարձնում ինձանից։ Ինչ ծածկեմ. դա ծանր հարւած էր ինձ համար. ինձ ամենից առաջ մերժում էր այն տունը, որի օջախը սուրբ է ինձ համար, որից կուզէի հեռանալ՝ միայն գերեզման գնալու համար։ Եւ մերժում էր այն ժամանակ, երբ մեր տղաները ուրախութիւնից չէին կարողանում դադար առնել, քնել։ Նրանք կատարել էին մի ահագին գործ, բայց ինչ էր վարձատրութիւնը։ Մեզանից երես էին դարձնում մեր ամենամօ-

ակի բարեկամները, մեր ծնողները։ Ես լսեցի։ Անցաւ ժամանակ, մի օր էլ եկաւ կուսակալի հրամանը. կայս Հեղինէն, Աւետարանոցի ամենախելօք մարդը, հրամայում էր, որ ձեռք վերցնեն արիւնոտ գործերից, կոչեմ մեր սարերից, թէ՝ չէ՝ եկեղեցին ինձ կանիծէ և Աստուած խռով կը մնայ մեզանից։ Եկեղեցին, ի հարկէ, ուժեղ է մէլիքի իշխանութիւնից։ Բայց նա չէր վախեցնի Մանասին, որ այնքան ժամանակ ապրել է Տէր-Սողոմոնի հետ…

Այդ անունը մի վայրկեան կանգնեցրեց փոքրիկ մարդուն, մի թեթև հառաչանք հանեց նրա սրտից։

—Բայց թող մնայ, ասաց նա.—Կարճ կտրենք. երկու կանայքը ասում էին այն, ինչ դու ասացիր։ Այժմ կանգնեցէք երեքդ այս օջախի մօտ, նայենք միմեանց երեսին։ Փրփրած գետեր են հանում մեզանից, այնպէս ասացիր դու։ Շատ ճիշդ… Դու կամ քո երկու ընկերուհիները խօսք տուէք ինձ թէ այդ գետերը կը դադարեն, եթէ սարի գլխին մի Մանաս չը լինի, և ես վաղը, քո աչքի առաջ, դէն կը գցեմ հրացանս ու կը կոչեմ։ Խօսք տայիս էք։

—Բայց ինչու դու այդ կանանց ընկեր դարձրիր ինձ. ես այդպէս չէի ասում։

—Քո ասածն էլ կը լսենք. բայց նախ պատասխանիր. խօսք տայիս էք։

—Ոչ որ չի տայ…

—Ողորմի հօրդ… Մենք ազնուականներ ենք, կաթ-կաթ արիւն ենք հանում։ Ո՞րտեղ գոյացանք մենք։—Այնտեղ, ուր առաջին անգամ, առանց պատճառի, լոկ սարսափեցնելու, ոչնչացնելու համար, թափեցին արեան գետեր։ Մենք լոյս ընկանք այն օրը, երբ Վարանդայի երկինքը զարհուրեց իր առաջ կատարված անարդարութիւնից։ Դա մի վճռական օր էր. բազմութիւնը, քաղցր համարելով դրսատի կեանքը, գնաց խոնարհվելու։ Իսկ հատ-հատ մարդիկ, որոնց մէջ չէր մարել Աստուծու բարկութեան կրակը, դուրս փախեցին, և նրանց առաջին ազդակն էր՝

«կռիւ»։ Անհաւասար, անխելք կռիւ… Ինչու ես զարմանում. չես տեսել՝ ինչպէս է մի մարդը յարձակվում հինգի վրա. չը գիտես միթէ, որ նա իր ոյժի վրա յոյս չունի, այլ յարձակվում է, որովհետև գիտէ մեռնել։ Ուրեմն մեզ վրա էլ մի զարմանար. արեան գետերը մենք չը բերինք, այլ ընդհակառակը, նրանք մեզ դուրս հանեցին. նրանք կային, երբ մենք չը կայինք…

—Ճշմարիտ է, ասաց Ասլանը, ձեռքը մտերմաբար դնելով խմբապետի ուսի վրա։—Հանգամանքներն ստեղծում են կռւի տեսակներ. մի տեղ մեծ չափերով է լինում, մի տեղ այսպէս. մի տեղ կաթ-կաթ, միւս տեղ գետի նման…

—Ի՞նչ օգուտ մեր կռւից, հարցնում են մարդիկ։ Օգուտ կայ, և ահա ինչ օգուտ։ Օսմանցիները գայլեր են, բայց բաւական չեն համարում իրանց բերաններով, իրանց քէֆի համար ծուատելը։ Նրանք իրանց ատամներից գնում են և մկների բերանում և ուղարկում են մեզ ուտելու։ Իւրաքանչիւր քասա մուսլիման մեր գլխի տէրն էր դարձել։ Մեր ձեռքից խլում էին զէնքերը և տալիս էին մեր հարևան մուսլիմաններին։ Գայլի կծածը շատ չէ ցաւեցնում, երբ սկսում ես մտածել, որ գազանը քեզանից շատ ուժեղ է։ Անտանելին մկան կծածն է. անտանելին այն է, երբ քեզ գզգզում է վախկոտ ու մերկ գողը և ինչով.—փոխ առած ատամներով. սուր ատամներ են դրանք, բայց միթէ գործադրողը մկան թոյլ ծնօտները չեն… Ի՞նչպէս չը յուսահատվել, ի՞նչպէս չը համոզվել, որ այնուհետև ճանճն էլ կուտէ քեզ։ Ամենավատը այդ համոզմունքն է. երբ մարդը հասկանում է թէ աշխարհի մէջ ամեն ինչ բարձր է իրանից և իր կեանքի աւելն է, նա դառնում է մի զարհուրելի բան. ճիճուն էլ նրանից սար չէ… Այժմ մկները մտան իրանց ծակերը. այժմ նրանք գիտեն, որ գայլից փոխ առածը դեռ բաւական չէ, որ մուկն էլ գազան դառնայ։ Մենք խրատեցինք նրանց. և մեր ժողովուրդը, ապահով եղիր, այլ ևս

չի խռովվի մկների ձեռքին. ամենագլխավորն այն է, որ նա չի կարծի թէ մժեղն էլ կարող է իր հոգին հանել... Սա քիչ բան չէ...

—Ոչ ոք այդ չէ ուրանում։ Բայց իմ ասածն այդ չէր, Մանաս։ Երկու կանայք քեզ անիծում են, ասելով. դու չը պէտք է սաստկացնես հրդեհը, իսկ ես, ընդհակառակն, քիչ եմ համարում այդքանը։ Ես համաձայն չեմ կաթ-կաթ արիւն հանելուն. և հէնց այդ պատճառով էլ գանց եմ անում մկներին, ագռաւներին, ծառերին, որոնք ընդհանուր աւերմունքի ժամանակ մի-մի բան գողանում են, տանում։ Ինձ Մէլիք-Աւանն ասաց որ ամեն ինչ ձեռքից գնում է, որ այլ ևս սպասել անհնարին է... Եւ ես հաւատում եմ որ այդպէս է։

—Ասելը, հաւատալը բաւական չէ...

—Ի՞նչ անել։ Քեզ գլորել են գետնի վրա, նստել են քո կրծքին. դու պիտի դուրս գաս քեզ ճնշող մարմնի տակից ու յետոյ փորձես ույժդ...

Օջախում այրվող կոճղերից մէկը, բաժանվելով իր ընկերից, գլորվեց ընկաւ երկու խօսակիցների առաջ. կծու մուխը սկսեց խեղդել. քնածներից մէկը գլուխը բարձրացրեց և ջուխտ ձեռքերով շփում էր իր աչքերը։ Մանասը վեր կացաւ, կարգի բերեց խանձողները։

Անտանելի ծխից ազատվելու համար նա փորձեց բոցեր արծարծել. յենվելով ձեռքի թաթերի վրա, դէմքը մօտեցրեց կրակին և սկսեց փչել։ Բայց ահագին խանձողները դիմադրում էին նրա ջանքերին. փոքրիկ լոյսը, որ հազիւ էր դուրս գալիս նրանց կարմիր գլուխների արանքից, երևան էր հանում խմբապետի նիհար, ծաղկատար դէմքը, որ ծածկված էր նօսր, ալեխառն մազերով. նա անվրդով յամառութեամբ մրցում էր ծխի ոլորուն քուլաների մէջ։

Ասլանը սաստիկ հետաքրքրութեամբ նայում էր այդ մարդուն։ Անհրապոյր, կոպիտ, նոյն իսկ անխիղճ էր ֆանատիկոս զինուորը. բայց ինչպէս էր խօսում իր գործի

մասին. որպիսի հաւատ, որքան սէր, կամք... Փոքրիկ մարդուց շատ բան էր կախված. վաղը նա, եթէ կամենար, կարող էր տակն ու վրա անել ամբողջ երկիրը. նրանից վախում են, նրա դէմ զօրաբաժիններ են ուղարկում... Բայց նա գլուխ դնելու տեղ չունի. ինչպէս է մրցում ծխի դէմ, որպէս մի քիչ հանգստանայ... Նրա աչքերից ջուր էր գնում...

Ասլանը մեղք համարեց անտարբեր մնալը և տեղից վեր թռչելով, ինքն էլ սկսեց օգնել Մանասին։ Կրակը թէժացաւ, նրանք յետ նստեցին և այլ ևս չը պառկեցին։

—Թո՛ղ փորձեն, ասաց խմբապետը, նայելով հրեղէն երկար լեզուներին, որոնք թրթռում էին ծխի ծովի մէջ։—Թո՛ղ փորձեն չափելով, կշռելով, զանազան հանգամանքներ նկատի առնելով։ Մեզ համար այդպիսի բան չը կայ։ Առածն ասում է. «Մինչև խելօքը մտածում էր, գիժը գետն անցաւ։» Զուր չեն մեզ գիժ անուանում...

—Եթէ շատ լինէին ձեզ պէս գժերը, եթէ այս մըտքերը միայն այս սարերի վրա չը լինէին տարածված, ուր քաղցած աղուէսներն ու գայլերն են ման գալիս, այլ հաստատ ու անհերքելի լինէին և մարդկանց մէջ, ժողովրդի սրտում...

—Լաւ կը լինէր, հա՛... Եթէ լաւ է, ինչո՞ւ չէք անում։ Վայ այն քաղցածին, որ մէջքի վրա պառկում է, բաց է անում բերանը և սպասում է թէ երբ երկնքից կերակուր կընկնէ ուղիղ բերանի մէջ։ Երկա՞ր կը սպասէ, չէ՞։ Բայց մի՞թէ դուք այդպիսի քաղցածից քիչ կը սպասէք. դուք, որ ձեռքներդ ծալել էք, նստել, աչք էք դրել ճանապարհին, օգնութիւն էք սպասում։ Ի՞նչ երևելի բան կը լինէր, եթէ յանկարծ, մի օր, Դիզակում երևար Պարսկաստանից ուղարկած մի մեծ զօրք... Այն ժամանակ, ի հարկէ, դուք այդպէս չէիք լինի, դուք կը յաղթէիք...

Փոքրիկ խմբապետը լեզուով էլ խնայել չը գիտէր, մանաւանդ երբ խօսում էր այնպիսի բաների մասին, որոնք, իր կարծիքով, անհեթեթ էին։ Նրա վերջին խօս-

քերի մէջ դառն հեղնութիւն կար. դրանով էր նա արտայայտում իր խորին անբաւականութիւնը գործունէութեան այն եղանակի դէմ, որ լաւ էր համարում Դիզակի տէրը։

Ասլանի և Մանասի մէջ մի ակնթարթում արծարծվեց առանձին գաւառների սնապարծութիւնը։ Դիզակեցին զգաց որ իրան ծաղրում է վարանդեցին։ Բաւական չէին այդ խօսքերը, Մանասը ձեռքով մի քանի անգամ թեթև խփեց դիզակեցու մէջքին, որպէս թէ խրախուսում էր, որ ասածն, ասածը լաւ է...

—Մեր մելիքը, ճիշդ է, սպասում է օգնութեան, պատասխանեց Ասլանը, աշխատելով իր կողմից ևս շատ չը խնայել վարանդեցուն։—Ամեն ջանք գործ է դնում որ մենակ չը մնայ։ Կարելի էր մենակ մի բան անել, եթէ Վարանդան այս դրութեան մէջ չը լինէր։ Դու այստեղ կաթ-կաթ արիւն ես հանում. իսկ ինչ են անում Աւետարանոցում։ Եթէ մնացել էր պակաս տեղ, դա այն սիրահարութիւնն է, որ...

—Դու բոլորը պիտի պատմես, խուլ կերպով մռնչաց Մանասը և ձեռքը թափ տալով, հասկացրեց որ չարժէ պատմել։

Նա ինքն էլ գիտէր ամեն ինչ։ Բաւական է, Դիզակը յաղթեց, Վարանդան զինաթափ է դառնում։ Վարանդան ամօթահար է, արժէ՞ նորից հաստատել այդ ճշմարտութիւնը։ Խմբապետը կերպարանափոխվեց մի րոպէում. նա այժմ խորհրդաւոր, առանձնացած մի մարդ էր, կարծես թէ աշնան մշուշների մէջ փաթաթված մի սար լինէր։ Հազիւ լսելի ձայնով նա փնթփնթաց. որ պէտք է քնել, բաւական գիշեր է անցել։ Իսկ ինքը չը պառկեց։ Գտաւ փայտի մի կտոր, սկսեց բզբզել կրակը, կարծես ուզում էր աւելի լաւ լուսաւորել իր չեչոտ դէմքը և ցոյց տալ, որ Ասլանը պինդ, շատ պինդ է բռնել ու անխնայ սեղմում է Մանասի մի հատիկ, բայց խիստ ցաւեցնող վէրքը։

Նոր բոցեր բարձրացան ճարճատելով, պայծառ լոյսեր տարածեցին, բայց նրանց օգնութիւնն աւելորդ էր. ինքը, Ասլանը, շուտ զգաց իր անզգուշութիւնը։ Նա չը գիտէր թէ այս երկաթի մարդու մէջ էլ կարող է լինել թուլութիւն, այն էլ մի աղջկայ վերաբերմամբ. և սկսեց մեղմացնել իր խօսքերի ծանր տպաւորութիւնը։

Ո՛րպիսի աջողութիւն։ Բաւական էր մի քիչ շարժել անողոք, կոշտ զինուորի սիրտը, և իսկոյն երևան եկաւ թէ որքան մեծ տեղ ունի այդ աղջիկը նրա մէջ։ Երիտասարդը դարձաւ նրա ցաւակիցը, խօսեց իբրև մերձաւոր։ Միայն վիշտը, այո, միայն անկեղծ վիշտը հարկադրեց նրան յիշել մելիքի աղջկայ մոլորութիւնը, չէ՞ որ նա ինքն էլ ազգական է Մելիք-Աւանի կողմից։ Եւ հարկաւոր էլ չէ ազգական կամ ծանօթ լինել. նոյն իսկ օտարն էլ ցաւում է։ Ա՛յդքան հրաշալի աղջիկ, բայց ինչ դառաւ...

Խմբապետը չը կարողացաւ լսել։ Նա էլ, Մելիք-Աւանի նման, չափազանցութիւն էր գտնում երիտասարդի վերջին խօսքերի մէջ, բայց նա, մելիքի նման, դատարկ ու փքքիկ բան չէր համարում Աւետարանոցի անցքը։ Մանասը զանգատաւոր էր, սաստիկ ցաւում էր, ուրեմն ծանօթ էին այնպիսի հանգամանքներ, երբ սիրտը յաղթում է, երբ զգացմունքը խլացնում է հոգու ամբողջ կարողութիւնը։

Այժմ նա մի խումբ գժերի յանդուգն առաջնորդը չէր, այլ սպիտակ մազերով մի խաղաղ գիւղացի, որ գիտէ թէ չը պէտք է վիշտ թագցնել ընկերից ու ծանօթից։

—Տեսնո՞ւմ ես, հարցրեց նա խոստովանող մարդու համեստութեամբ։—Տեսնո՞ւմ ես... Իսկ մարդիկ ասում են. «Մանասը ոչինչ հոգս չունի, մի դատարկ գլխի տէր է, ինչ պիտի կորցնէ»... Դա, ի հարկէ, ճիշդ է, բայց ոչ բոլորովին։ Մի՞թէ դատարկ գլխի տէրը կորցնելու բան չունի։ Ես, ճշմարիտ է, բախտից երես առած մարդ չեմ.

այս մազերը ձիու վրա եմ սպիտակացրել, սեփական տուն չեմ տեսել. ինձ վիճակված չէր ճաշակել ընտանիքի, երեխաների քաղցրութիւնը։ Յիշում եմ միայն իմ մօրը, որ Աւետարանոցի գերեզմանատանը ցոյց էր տալիս հողի մէջ թաղած երեք կտոր սև քար և ասում էր. «Քո հօր գերեզմանն է... խեղճ մարդ, նա չը տեսաւ քեզ»։ Յիշում եմ և մի այլ օր. ես խաղում էի դրսում, մի կին եկաւ, բռնեց իմ ձեռքից և զօռով ներս քաշեց։ Մայրս պառկած էր անկողնում. երազի պէս է մտքումս մնացել—ինձպէս մի կարճլիկ կնիկ էր, ինձ գցեցին նրա վըրա և կանչում էին նրա ականջում թէ Մանասն է։ Նա բաց արաւ աչքերը, գրկեց, համբուրեց ինձ, նրա լեզուն հազիւ կարողացաւ թոթովել սովորական խօսքերը՝ «մատաղ լինեմ»։ Դա վերջին համբոյրն էր, միւս օրը ես մենակ էի այս աշխարհում. այժմ էլ չը գիտեմ թէ որտեղ թաղեցին մօրս։ Այնուհետև տաւարած, հօտաղ, նոյն իսկ մաճկալ. ես ծառայում էի, և ինձ չէին խընայում... Ծմակը, դաշտը, անձրևը, մշուշը իմ ընկերներն էին, իմ ծնողները. նրանք էին ինձ պատժում։ Եւ ես, որպէս մի երեխայ, թունդ կապվեցի նրանց հետ. մարդկանց հետ գործ չունէի. գիւղում, տան մէջ, անխօս էի։ Ինձ համար խորթ, անհասկանալի էին փաղաքշանքները. ես բարկանում էի, երբ մթնով ծմակից վերադառնալիս՝ գիւղի ծայրում տեսնում էի մայրերին, որոնք իրանց որդիներին էին սպասում. և ես երբեք չէի պատասխանում, երբ հարցնում էին թէ տեսե՞լ եմ այս ինչին։ Երբ երեխան վայր էր ընկնում և լաց էր լինում, ես հեռու էի փախչում, թողնելով որ նա բղաւէ, որքան ուզում է։ Իսկ երբ լսում էի սուղի ձայն, գժվում էի։ Ես խղճահարվել չը գիտէի. մենակ էի, ինձ էլ ոչ ոք չէր խղճում։ Եւ ինձ անուանեցին ծմակի մարդ։ Ոտաբոբիկ, համարեա կիսամերկ էի. ինձ տեսնում էին, ծիծաղում և ասում էին. «Ո՛վ ուտում է, Մանասն է մարսում. արիւն է կաթում նրա թշերից»...

Նա կանգ առաւ, մի րոպէ մտածութեան մէջ ընկաւ, կարծես վերանորոգում էր յիշողութիւնները։ Ապա էլի բզբզեց խանձողները և շարունակեց.

—Մի անգամ տաւարածների մէջ կռիւ ընկաւ. երկար ժամանակ մեր մահակները թրխկում էին, աղմուկը այնքան սաստկացաւ, որ գիւղից մարդիկ եկան։ Ինձ զօռով դուրս հանեցին կռւի միջից. արիւնը ծլլում էր իմ գլխից, բայց իմ հակառակորդն աւելի վատ դրութեան մէջ էր։ Երեկոյեան մեզ տարան մէլիքի մօտ։ Պարզ, լուսնկայ երեկոյ էր։ Մէլիք-Շահնազարը—լոյս դառնայ նա—նստած էր մի կտուրի վրա. նա ինձ չը պատժեց, մինչև անգամ չը հայհոյեց. ընդհակառակն, տեսնելով իմ դրութիւնը, քաղցր ծիծաղեց և ասաց. «Կուարար ես, քեզ համար գործ ես կը գտնեմ»։ Այդ օրվանից ես մի անկիւն ունէի մէլիքի տան մէջ։ Հետզհետէ իմացան, որ անպէտք մարդ չեմ. մէլիքը հրաշալի կերպով գիտէր փորձել մարդուն։ Ես տաւարած չը մնացի, իսկ մի անգամ, Մուղանի թափառականների դէմ գնալիս, վերցրեց ինձ իր հետ։ Հարկաւոր չէ, որ ես պատմեմ քեզ թէ ինչ արշաւանքներ են եղել մեծ մէլիքի ժամանակ և ինչեր ենք արել. դա շատ երկար կը լինէր։ Կասեմ այսքանը, որ մէլիքը ասում էր ամենքի առաջ թէ ես երախտիք ունեմ նրա տան վրա և ոչ ոք իրաւունք չունի դիպչել իմ քէֆին։ Բայց ինձ շատ բան էլ հարկաւոր չէր. իմը մի ձի էր, մի սուր և մի հրացան։ Գործ շատ կար. եթէ կռիւ չէր լինում, որսի էինք գնում կամ թէ շրջում էի զանազան կողմեր՝ մէլիքի յանձնարարութիւնները կատարելու համար։ Երկու թէ երեք անգամ էլ Պարսկաստան եմ գնացել։ Այս սուրը ձեռք եմ բերել Պարսկաստանում, ալիալլահների մի գիւղում...

Նա յետ թեքվեց, պատի տակից վերցրեց մի կեռ սուր և, կիսով չափ հանելով պատեանից, ցոյց տուեց Ասլանին։ Սա ուշադրութեամբ զննեց սրի վրա դրոշմած կնիքը և ասաց.

—Դժվար չէնք է…

—Այո, շատ լաւ ջուր ունի։ Կեանքումս ես դրա պէս լաւ կարող չը տեսայ։ Լաւ զէնքը միայն ամենալաւ ընկեր չէ, այլ և մի պահապան հրեշտակ, որ կանգնած է մարդու ետեւում…

—Յետո՞յ, Մանաս…

—Հա, ես չիմացայ թէ ինչպէս անցաւ իմ առաջին երիտասարդութիւնը։ Ես չը գիտէի թէ ինչ է կատարվում մարդկանց մէջ. ինձ ոչ ոք չէր ասում թէ ով է մեռել, ով է ապրում։ Իմացայ միայն մեծ մելիքի մահը։ Ես լաց չեղայ, բայց այնքան ծանր թւաց մահը, որ ես վռնեցի բոլորովին հեռանալ մարդկանցից։ Իմ սիրտն ուզում էր բարձր մի տեղ, քերծի գլխին շինած մի բոյն. ապրել այնտեղ, ինչպէս ապրել են Քեօռ-օղլին, Մուսան… Բայց Մելիք-Յուսէֆը իր հօրից պակաս չէր թէ քաջութեամբ և թէ խելքի մէջ. նա ինձ բաց չը թողեց, նա իմ ընկերն էր արշաւանքների մէջ և այդպէս էլ մնաց, երբ ինքը դառաւ Վարանդայի մելիք, իսկ ես նոյն Մանասն էի, նոյն ծմակի մարդը։ Ոչ, իմ ճակատին չէր գրված քերծի գլխի բոյնը, ինձ սուածը—մելիքի օջախն էր։ Չը գիտեմ ինչպէս էր և երբ, այդ օջախի մօտ մի երեխայ նստեց իմ ծնկներին։ Փոքրիկը—կատարեալ մի հրեշտակ—սովորեց իմ ծնկներին և, զարմանք. ես էլ սովորեցի նրան։ Գայիանէն էր… Արագ մեծանում էր իմ աչքի առջև, և իր լեզուով, իր փոքրիկ բայց սուր խելքով մի կրակ էր, որ այրում էր մեզ։ Առաջին խօսքերը, որ նա սովորեց արտասանել՝ մօր, հօր և իմ անուններն էին։ Դրսից ինձ դէպի տուն էր քաշում երեխան։ Այդ ինչ զարմանալի ոյժ էր… Իմ ամեն մի ներս մտնելը նրան անզուսպ ուրախութիւն էր պատճառում. կարծր էի շուտ-շուտ ներս չը մտնել։ Նա ծիծաղում էր, տալիս էր իմ անունը, իր փափլիկ ձեռքերով փաթաթվում էր իմ վզին, ո՞վ կարող էր դիմադրել… Մի անգամ նա հիւանդացաւ. և ես, վախելով մահից, առաջին

օրը փախայ ծմակը, որովհետև ասում էին թէ երեխայի դրութիւնը լաւ չէ։ Բայց ծմակն ինձ համար կրակ դառաւ, սկսեց այրել. կարծես իւրաքանչիւր ճիւղ կանչում էր. «Ի՞նչպէս է Գայիանէն, հօ չի՞ մեռնի»։ Եւ ես տուն վերադարձայ, չը հեռացայ այն սենեակից, ուր երեխան հալվում էր ճրագի պէս։ Սիրտս մրմնջում էր, հարիւր ու մի սուր մտածմունքներ խեղդում էին ինձ, բայց ես էլ մելիքի ու նրա կնոջ նման մնացել էի մեխված։ Երևի, այսպէս են ծնողները…

—Նա լաւացաւ, էլի սկսեց օրերով, ժամերով ծաղկել։ Նա ինձ մօտեցրեց մարդկանց, մտցրեց աշխարհի մէջ, հասկացրեց թէ ինչ է մարդու ցաւը, մարդու ուրախութիւնը։ Եւ այսպէս—տարիներ։ Մանասը թուլացաւ. ծմակի մարդը այժմ նստում էր գիւղի մէջ, ճանաչում էր մարդկանց, խօսում, վիճում էր։ Նա այլ ևս չէր կարող թողնել այդ տունը, եթէ մինչև անգամ նրան դուրս անէին։ Գայիանէն կապել էր… Նա մեծացաւ, խելօք, շնորհքով աղջիկ էր. բայց Մանասին չը մոռացաւ, դէն չը գցեց. նա էլի սրտաբաց էր նրա մօտ, ուրախանում էր, երբ գալիս էր Մանասը. իր երկու եղբայրներին խրատում էր լսել Մանասին, հասկացնում էր, որ Մանասը ուրիշ մարդկանց նման չէ։ Իսկ ինքը… Նայում էի նրան և տեսնում էի նրա մէջ Մելիք-Յուսէֆին. նոյն մեծ սիրտը, նոյն կորուկ, համարձակ խօսքը. վատութիւն նա չէր կարողանում տեսնել, խեղճերին օգնում էր, աղքատի մօտ նա էլ աղքատ էր։ Աղջիկ էր նա և տղամարդ։ Դու տեսե՞լ ես որ աղջիկը մի-մի քրքրէ, իմանայ թէ ինչեր են եղել իրանից առաջ։ Նա գիտէր ամեն ինչ, նա ճանաչում էր թէ ինչ քաջեր են եղել մեր երկրում. նա իր մատների վրա կը համրէ բոլոր վատերին, վախկոտներին…

—Բայց որտեղից իմացաւ այդ բոլորը։

—Մանասն էր պատմում։ Ծմակի մարդուն նա աշուղ էր դարձրել, պատմել էր տալիս… Եւ ես պատմել

եմ ամեն ինչ՝ թէ իմ տեսածը, թէ լսածը։ Ո՛չ, ես չեմ ուզում հաւատալ... Այդպիսի աղջիկը մի կատաղած շան կերը չի դառնայ... Սպանիր, բայց հաւատս չէ գալիս, թէև ինքս էլ գիտեմ որ այդպէս է, թէև Գայիանէն ինքն է ինձ լուր ուղարկել։

—Նա ինքը։

—Այո, իր բերանով։ Բայց նախ լսիր թէ ինչպէս եղաւ, որ ես մինչև այժմ չէի մտածում Գայիանէի մասին։ Աննա-խաթունը վաղուց էր սկսել յայտնել ինձ իր վախերը. նա զգում էր, որ իր աղջկան վտանգ է սպառնում։ Բայց ես ծիծաղում էի այդ մտքի վրա։ Օսմանցիները, ես հաւատացած էի, երբեք չէին համարձակվի ձեռք տալ մեր մելիքի աղջկան։ Չասեմ թէ ես, ուրիշն, նրանց մարդ էի համարում։ Ո՛չ, գիտէի որ շունը, որքան էլ աներես լինի, չէ կարող պատարագի ժամանակ մտնել եկեղեցի և մարդկանց աչքի առաջ գնալ, սեղանը բարձրանալ։ Ճիշդ այդպիսի սրբապղծութիւն կը լինէր և Գայիանէին դիպչելը։ Միամիտ էի, ծմակի մարդը դեռ իմ մէջ է...

—Եւ բացի դրանից, նա նշանված աղջիկ էր, պիտի մարդու գնար, աւելացրեց Ասլանը։

—Այո, այդ հանգամանքն էլ էր ինձ հանգստացնում։ Եւ ահա, յանկարծ գալիս է այդ լուրը։ Մելիքի կինը, որ ամառը երես էր դարձրել ինձանից, ուղարկեց իր ծառային, Թէոսին, ինձ մօտ և օգնութիւն էր խնդրում։ Գայիանէն դուրս է վռնդել իր նշանածին, ուզում է գնալ Թիւրքին։ Նա ինձ կը լսէ, որովհետև շատ է տալիս իմ անունը։ Աննա-խաթունի հետ ես գործ չունեմ, բայց Գայիանէի համար... Մանասը պատրաստ է դժոխք գնալ։ Ես մարդ ուղարկեցի և նա բերեց ինձ Գայիանէի պատասխանը. «Թո՛ղ Մանասը գայ, նստէ այստեղ ինձ հետ, և այն ժամանակ Թիւրքը ինձ չի տանի»։ Ուրիշ կերպ նա համաձայն չէ։ Եւ դեռ ասում են թէ Մանասը ոչինչ հոգս չունի...

Նորից նա ընդհատեց իր խօսքը և ծանր մտածութեան մէջ ընկաւ։ Ասլանը շտապեց պատմել նրան այն ամենը, ինչ ասել էր Մելիք-Աւանը։ Վհատելու պատճառ չը կայ, մելիքը միամտացրեց Ասլանին, ասելով որ իր սպիտակ մազերի պատիւ կայ մէջտեղ։ Վաղը կամ միւս օրը նա կը գնայ Աւետարանոց և կիմանայ թէ ինչպէս ազատել մեր երկիրը այդ խայտառակութիւնից։

—Խօսքը, ի հարկէ, ամենից առաջ մելիքին է պատկանում, պատասխանեց Մանասը։—Բայց հազիւ թէ մելիքը աջողութիւն ունենայ։

—Ինչո՞ւ։

—Գայիանէին ես եմ ճանաչում։ Մելիքը մտածող, չափող, կշռող է. երկար ու բարակ խրատներ, հարցեր ու պատասխաններ։ Այդ միջոցը չի օգնի։ Գայիանէն նրան կը յաղթէ։

—Բայց ի՞նչ պէտք է անել։

—Այն՝ ինչ որ ես եմ անում։ Յարձակվել, վրա տալ, յափշտակել առանց հարց ու փորձի։ Եւ ես կանեմ այդ, եթէ մելիքը չը կարողանայ... Գայիանէն ինձ կանչում է, ես կը գնամ. բայց չեմ նստի նրա կողքին, ինչպէս ինքն է կամենում, այդ անկարելի է... Ես նրան կը հեռացնեմ Աւետարանոցից, կը տանեմ ինձ հետ...

—Իսկ եթէ Թիւրքերն իմանան։

—Ո՞վ է դրանից վախում։ Թող ամբողջ գիւղը կրակի կերակուր դառնայ։ Հարկաւոր է մի գիշերային յարձակում...

Ասլանը զարմացած նայեց խմբապետի փոքրիկ դէմքին։ Նա նորից կերպարանափոխվել էր։ Նորից խօսում էր գժերի առաջնորդը, էլի յանդուգն, էլի անվախ. նա կանէր իր ուզածը, թէև աշխարհը քանդվէր, մոխիր դառնար։

—Նա ինձ մարդ է դարձրել, և ես շուն պիտի լինեմ, եթէ թոյլ տամ որ նա իմ զզուանքի առարկայ դառնայ։

Ասլանը հիացած էր այդ ձայնի, այդ կրակոտ աչքերի վրա։ Թւում էր թէ նա հիմա կը կանչէ իր ոդաներին, ասքի կը կանգնեցնէ և հէնց այժմ, մութ ու ցուրտ գիշերին, առաջ կընկնէ, կը տանէ նրանց՝ Աւետարանոցը կրակելու համար...

—Թո՛ղ կոտորվեն ամենքը, ես կը փրկեմ մէկին...

Ասլանը յիշեցրեց որ անակնկալ յարձակումով կարելի է փչացնել Մէլիք-Աւանի գործը։

—Ես այդ հասկանում եմ և առանց նրա գիտութեան ոչինչ չեմ անի... Առաւօտեան մեր մարդիկը կը գնան...

Նա վերկացաւ, իր համար տեղ պատրաստեց։ Բաւական գիշեր էր անցել, մեռելային լռութեան մէջ լըսվում էին միայն հարևան գոմում կապած ձիաների տրոփինները։ Ասլանն էլ պատրաստվեց քնելու։ Օջախը մոռացութեան տրվեց։

—Ինձ չէ զարմացնում, որ Գայիանէն հեռացրել է իր նշանածին։ Ես վաղուց եմ ասել, որ խաչէնցի Ջալալը արժան չէ մեր աղջկան։ Բայց այժմ չէ կարելի մտածել այդպիսի բաների մասին։ Ժամանակը վատ է, մենք աղջիկների ամուսնութեան մասին հոգս անել չենք կարող։ Վատն էլ լաւ է այսպիսի ժամանակ. և երանի կը լինէր, եթէ մեր բոլոր աղջիկներին տեղաւորէինք այնպէս, որ օսմանցիները չը տանէին նրանց։ Այս խենթ աղջիկը սուտ չէր ասում։ Բայց ո՞ւր կը հասնէինք, եթէ սկսէինք յետ խլել օսմանցիների փախցրած աղջիկներին։ Մանաւանդ այժմ... դեռ պէտք է խլել Գայիանէին. նրա բանը ուրիշ է, նրա պատիւը մեր ամենքիս պատիւն է, նա մի հատ է... Անցեալ օրը մեր այս միւս գոմում, ուր կապած են մեր ձիաները, ես մի ճախարակ տեսայ և երկար կանգ առայ նրա մօտ։ Հաւատա՞ւմ ես. ճախարակը ինձ ասում էր, որ իրան թողել են այստեղ, որպէս զի եկող ամառ բուրդ մանեն. նա սպասում է իր տէրերին, բայց չի տեսնի նրանց...

—Ի՞նչ գիտես։

—Ամենքը կոտորվեցին։ Ամառը այստեղ գալիս էին նորագիւղցիները. իսկ նրանց սրի քաշեց Սուլէյման-բէկը՝ ինձանից վրէժ հանելու համար։ Ճախարակը խօսում էր ինձ հետ, իսկ ես շրթունքներս կծոտելով ասում էի. «Ա՛խ, շնէր, անհաւատներ, ինչ արեցիք»։ Ես չեմ մոռանայ անտէր մնացած ճախարակները. նրանք էլ, թէև փայտից են և անհոգի բաներ, վրէժ են պահանջում։ Մեր աղերքը գիտեն այդ... Բայց բանն այս չէ, Ասլա՛ն. հարցրու, ո՞վ սովորեցրեց Մանասին խօսել ճախարակների հետ։—Գայիանէն։ Ո՛չ, պէտք է նրան խլել Թիւրքից և տալ Ջալալին...

Նրանք պառկեցին։ Անցան րոպէներ, և Մանասը յանկարծ ծիծաղեց։

—Զարմանալի բաներ կան աշխարհիս մէջ, ասաց նա բարձրացնելով իր գլուխը։—Դու քնած չես, լսիր ուրեմն։ Դու էլ կրկնեցիր այն, ինչ ամենքն են ասում. նա սիրահարված է։ Զարմա՜նք... Բայց ո՞վ գիտէ կնոջ գործը. կինը, որքան էլ լաւ լինի, դարձեալ կին է. Աննա-խաթունը և կոյս Հեղինէն քեզ օրինակ։ Ես ասացի քեզ, որ չեմ հաւատում թէ Մէլիք-Յուսէինի աղջիկը կը գնայ Թիւրքին։ Ես իզուր այդպէս հաստատ խօսեցի։ Հէնց այժմ միտս եկան այն խօսքերը, որ Գայիանէն ասել է իմ ուղարկած մարդուն։ Գիտե՞ս ինչ պատճառ է նա բերում. Սուլէյման-բէկին նա գնում է այն մտքով, որ սպանէ նրան. Գայիանէն ուզում է ինձպէս լինել, ուզում է կռուել... Լա՛ւ պատրուակ չէ՞... Բայց ո՞վ կը խաբվի... Եթէ այդպիսի միտք ունի, աւելի վատ։ Կինը չը պիտի խառնվի մեր գործի մէջ. Գայիանէն կարող է ինձպէս հարիւրներին տուն բերել, սովորեցնել ճախարակի լեզուն. նա կարող է Խաչէնի մէլիքի համար երեւելի, շնորհքով կին դառնալ... Բայց կռուե՞լ... Այն ժամանակ մենք ամենքս պիտի լաչակ գցենք մեր գլխին և կնիկ դառնանք... Նա հօ իր մօրից լաւ չէ. բայց եթէ

լաւ էլ լինի, դարձեալ մեզ կը խայտառակէ... Ջահիլ աղջիկ, այն էլ այնպիսի աղջիկ... Նրան մի անգամ դիպչելն էլ մեծ ամօթ է մեզ համար, մի ամօթ, որ սրբել չէ կարող վեց Սուլէյման-բէկերի մահը... Ո՛չ, աղջիկը հեռու պիտի մնայ... Էգուց ես մարդիկ կուղարկեմ մէլիքի մօտ։ Մենք պատրաստ ենք...

Ասլանը յայտնեց, որ ինքը միանգամայն գովում է այդ միտքը։ Նա ուզում էր իր կողմից ուրիշ պատճառներ բերել, բայց յանկարծ լսեց Մանասի խռմփոցը և լռեց, փաթաթվելով յափունջու մէջ։

Քունը այնքան հեշտ չը մօտեցաւ նրա աչքերին։ Օջախում այլ ևս կրակ չէր երևում, միայն խանձողներն էին հանդարտ մխում։ Ցուրտը գնալով սաստկանում էր։ Լռութեան մէջ երիտասարդը դարձեալ նոյն հարցը տուեց իրան։ Արժէ՞ր այնքան ձիուն կոխ տալ, գալ՝ Մանասին և նրա գժերին տեսնելու համար։

—Արժէր, պատասխանեց ինքն իրան.—լաւ են, շատ լաւ... Բայց ո՛րքան քիչ են...

Նա քնում էր գոհ սրտով։ Եւ չը լսեց թէ ինչպէս մէկը այդ ժամին շարժվեց գոմի անկիւնում և ինքնաբուական ու վայրենի մի քրքիջ արձակեց։

Դա Նազլուն էր։

Ե

Մահը բաւական բարերարութիւն էր արել Փէրիի բնակարանում։ Ձմեռը ոչինչ գութ չունեցաւ. արև չը կար և չէր կարելի նրանից ջերմութիւն գողանալ. ձիւնը հաստ շերտի տակ թաղել էր աղբանոցը և այլ ևս չէր կարելի խրվել աղբերի մէջ ու տաքանալ։ Մերկութիւնը հալվել էր ձիւնի պէս։

Քչերին կարելի եղաւ ցրվել գիւղերում, յանձնել բարի մարդկանց. շատը նրանք էին, որոնք, լուռ ու խոնարհ, գնացին գետի ձորը։ Ափի բարձրութիւնն էր բա-

ժանում ձորի սառած յատակը այն տնակից, ուր կենդանի համարվող արարածները օրհասական ջանքեր էին անում, որ պահեն իրանց մէջ հանգչող տաքութիւնը։ Բայց այդ կարճլիկ ճանապարհից ազատվելը վեր էր նրանց ույժերից։

Մարմնի վրա փտող վէրքերը, խոր ընկած կրծքերի տակ այրվող սրտերը և սովը, միշտ կատաղի սովը—սրանք էին աղբանոցից ցած իջեցնողները։ Գետի ձորը պահում էր իր մէջ մի փոքրիկ, անյիշատակ գերեզմանատուն, միակ վինը, որ այս աշխարհում կարողանում էր լռեցնել մարդու մռմռունջները։ Եւ այդ պատճառով այլ ևս անձուկ չէր ողորմելի տնակը։

Երեք հիւանդ երեխայ էին մնացել այնտեղ, մէկ էլ մի պառաւ կնիկ, որ անչափ լաց լինելուց համարեա կուրացել էր։

Դրանց պահապանը Փէրին էր։ Օրերով նա նստում էր, լուռ իբրև գերեզմանի թումբ, բայց ուշադիր և խնամոտ, ինչպէս ծնող մայր։ Մի համբերութեամբ, որ գուցէ քարերին է յատուկ, նա սպասում էր թէ ինչ կը դառնան իր վերջին անբախտ հիւրերը։ Մահն էլ նրա հիւրն էր և նա չէր տեսել, որ այդ հիւրը խնայէ մէկին։ Բայց պառաւը հանգիստ էր։ Գետի ձորը իջնողները այժմ օրէնքով սահմանված, Աստուծու դրած ճանապարհն ունէին—քահանայ, պատան, խունկ, նոյն իսկ լաց... Այժմ հոգացող կար։

Մինչև անգամ հիւանդոց տնակին էլ դիպել էր մի բարերար ձեռք. պատի կիսատ տեղը ծածկված էր հին կապերտներով, իսկ դռան տեղ կախ էր ընկած կարկատաններով ծածկված մի հին ջուալ։ Այժմ ձիւնն ազատ ներս չէր թափվում, իսկ ցրտի դէմ յաճախ դուրս էր սողում մի թանձր ծուխ, որի համար առանձին ծակ էր բացվել պատի վերին մասում։ Խեղճերի օթևանը ամեն կերպ զինվել էր սպառնող ձմեռվայ դէմ։ Այլ ևս մի կտոր հացի համար հարկաւոր չէր չափել գիւղը ծայրից

ծայր ու աղաչել։ Հայն այժմ առատ է, իսկ քահանան գալիս է իսկոյն, երբ Մարթան վազում է նրա մօտ և յայտնում թէ մեռել կայ։ Այժմ Փէրին փառք է տալիս Աստուծուն. այսպիսի «յարմարութիւնների» մէջ նա յաւիտեան չէր յուսահատւիլ և հանգիստ կը նստէր, կը սպասէր տխուր վերջին։

Միայն անբախտ Անուշն էր, որ անպատասան էր մնում. բայց այժմ նա էլ խղճում է պառաւին և քիչ է երևում նրա աչքին. գիշերները քամի չէ լինում և Անուշը չէ կանչում ձորից. «Ի՞նչ արիր»...

Զարչարանքները, այո, վերջացան։ Փէրին գիտէր որ ամեն ինչ կախված է մելիքի դռներից և չէր հաւատում, որ նրանք միշտ փակված կը մնան։

Դռները այժմ բաց էին։ Բաց էին ոչ միայն Փէրիի համար, այլ... խեղճ Գայիանէ... երկու թէ երեք անգամ ներս էր մտել և Սիւլէյման-բէկը։ Այժմ հաստատ էր, որ աղջիկը գնում է թիւրքին։

Նա ինքն է ասում որ գնում է, ասում է լաց լինելով. միշտ լաց է լինում, երբ մենակ է մնում,—այդպէս էր պատմում Մէհրին։ Փէրին էլ մի երկու անգամ լաց եղաւ, բայց աղջկան արգելեց. նա միշտ ասում էր. «Տա՛ր, ոչ ոք չի ընդդիմանայ քեզ. թող ուտեն խեղճերը, բախտաւոր չեն, գոնէ կուշտ լինեն»։

Եւ համեստ, ցածրիկ ձայնով աւելացնում էր, որ ինքը խեղճերի պատճառով ընտրեց այս ճանապարհը... Գեղեցի՜կ խօսքեր. բայց որքա՜ն ուշ են լսվում... Այժմ այլ ևս ուտող չը կայ. հացի առատութիւն է տնակում, բայց ո՞վ է հասկանում այդ։ Հաց կանչողները մէկ-մէկ իջան գետի ձորը և լուռ պառկեցին գերեզմաններում... Դատաստանդ քաղցր լինի, Տէր։ Ի հարկէ, Գայիանէն չէր մեղաւորը, որ մելիքի դռները այդքան ուշ բացվեցին, վերջին մեռնողների համար միայն։ Նա միշտ էր բարի, ողորմած. բայց նրան չէին լսում։

Այժմ է նա բանեցնում իր իրաւունքները։ Վերջին

իրաւունքներ... Կանչում է գիւղի աղջիկներին, որ իր վերջին բարիները տայ նրանց։ Եւ տալիս է ծածուկ. հաւաքում է իր սենեակը, փակում է դուռը։ Ի՞նչ է նա խօսում, ոչ ոք չէ ասում։ Մի զարմանալի գաղտնիք կայ աղջիկների մէջ. գաղտնիք չէ միայն այն, որ մի քանի աղջիկներ լաց եղած են դուրս գալիս Գայիանէի սենեակից։ Տեսել են մի անգամ և մի զարմանալի բան. պահարանում դրված էր աւետարան, իսկ նրա կողքերին վառած էին մոմեր։ Գայիանէն չէ յայտնում թէ ինչ է անում, բայց ամենքին սիրտ է տալիս, որ չը վախեն։ Մի օր Փէրիին ասաց. «Չը վախես. ես ուխտ ունեմ»։ Թող այդպէս լինի... Աստուած կընդունէ այդ ուխտը. նրա պէս ողորմած աղջիկ չը կայ. նա երբէք սուտ չէ ասել...

Ասում է, որ չը վախեն իրանից, բայց ամենքն արդէն վախում են։ Քահանան այլ ևս չէ համարձակվում անթաղ թողնել աղբանոցի մեռելներին, որովհետև Գայիանէն մի անգամ ասել է թէ ամենքին պէտք է թաղել, ինչպէս կարգն է. իսկ այժմ ո՞վ է Գայիանէն... Սիւլէյման-բէկի նշանածը։ Ո՛չ ոք չէր համարձակվում մոռանալ այդ հանգամանքը։

Նոյն իսկ մայրը... Նա հանդարտվել էր, այլ ևս ինքն իրան չէր տանջում և այլ ևս անէծքներ չէր թափում իր աղջկայ վրա։ Ասում էին թէ նա էլ է վախում։ Ասում էին և չէին զարմանում։ Կար ժամանակ, երբ նա գժվում էր այն մտքից թէ Գայիանէին կարող է վտանգ սպառնալ. այն ժամանակ նա անքուն էր, ամեն րոպէ սպասում էր դժբախտութեան և պատրաստ էր ամեն ինչ զոհել՝ իր երեխան ազատելու համար։ Այժմ պարզ էր որ կորած է երեխան, բայց այժմ նա, մայրը, սառել է, յետ քաշվել, ամեն ինչ թողնելով Աստուծու կամքին։ Նա, ի հարկէ, վախում էր Սիւլէյման-բէկի նշանածից...

Այդպէս դատողներից ոչ մէկն էլ չը գիտէր, որ Գայիանէն մտել էր իր մօր ծոցը, օր ու գիշեր հանգիստ չէր տալիս նրան։ Նա հետևում էր այդ խեղճ կնոջը պա-

հալած հրեշտակի նման, չէր թոյլ տալիս, որ նա յուսահատվի, լացով, աղաչանքով, բարկութեամբ գրաւում էր նրա սիրտը, մխիթարում էր։

Գայիանէն սովորեցրեց նրան սպասել, սպասել նոյն իսկ այդ դժոխային դրութեան մէջ։ Երբ դժբախտութիւնը հեղեղել է ամեն տեղ, երբ ամեն ինչ կորած է և չը կայ մէկը, որ բռնէ ընկածի ձեռքը, այդ ժամանակ օձիք պատռելով, գլուխ ծեծելով, ուշաթափվելով ոչինչ չէ կարելի դրստել։ Թուլութիւնը մահ է. չը պէտք է թուլանալ, այլ պէտք է յիշել, որ վերջին շունչ արձակելիս էլ կարելի է կռւել։

—Երեխան խելօք է, ասաց Մէլիք-Աւանը, երբ Աննա-խաթունը պատմեց ամեն ինչ։—Խելօք է, ինչպէս միշտ։ Նա ճիշդ է ասում։ Մեռնողի ետևից գերեզման չեն գնում, եթէ մեռնողը նոյն իսկ դրա պէս մի սիրուն երեխայ է։

—Բայց սա գերեզման չէ, Աւան, բացականչեց Աննա-խաթունը։—Գերեզմանի հետ ես շուտ կը հաշտվեմ։ Գերեզման մանելը ամօթ չէ, ամօթը... Ի՞նչ միս պիտի լինի մարդու երեսին, որ յաւիտեան տանէ այսքան ամօթ...

Եւ նա սկսեց իր գանգատները։

Օ՜, եղբայրը չէ հասկանում թէ այդ ինչ կրակ է, որ այրում է իր քրոջ սիրտը։ Առաջին այցելութիւնից յետոյ Սուլէյման-բէկը երկու անգամ էլ եկաւ մէլիքի տունը, բայց Գայիանէն չը փախաւ, չը թաքնվեց։ Բաց երեսով, միանգամայն համարձակ ու վստահ, նա երևաց բէկին, նայում էր նրան այնպէս, կարծես չէր կշտանում։ Մէհրին զանազանութիւն չէր գտնում այժմեան օրերի և այն ժամանակների մէջ, երբ խաչէնցին էր նրա սրտի ուզածը։ Այն ժամանակ նա սիրահարված էր, իսկ այժմ... Մէհրին գիտէ որ այժմ էլ նոյն դրութիւնն է։ Թէև աղջիկը լաց է լինում, երբ մի-մի յիշում է անցեալը, խաչէնցուն, բայց լացը իսկոյն ծիծաղի է փոխ-

վում, երբ միտն է բերում, որ Սուլէյման-բէկը իրանից ձեռք չի վերցնի...

Այժմ էլ նա սիրահարված է... Բայց այժմ ում վրա...

Մէլիք-Աւանը երեսը շուռ տուեց և դուրս գնաց, նշան անելով, որ քոյրը չը հեռանէ իրանից։ Գայիանէին մենակ էր ուզում տեսնել և մտնելով նրա սենեակը, ամենից առաջ փակեց դուռը։ Այժմ նրա մէջ կասկած չը կար, որ սուտ չէ մարդկանց կարծիքը, որ աղջիկը, իսկ որ, սիրահարված է։

Գայիանէն մօտեցաւ նրան, ծիծաղեց, բարևներ տուեց, յայտնեց, որ ինքը վաղուց էր սպասում քեռուն։ Բայց մէլիքը չը կարողացաւ սառնասիրտ մնալ. ոչ մի քաղցր խօսք չարտասանեց, այլ միայն ասաց թէ ինքը զբաղված էր...

Նրա ձայնը խիստ էր և դէմքը այլայլված, անհարկու։ Առանց նախաբանի, առանց խրատների նա ասաց, որ եթէ խելօք երեխան կորցրել է իր խելքը մի գործի մէջ և չէ ուզում ձեռք վերցնել այդ գործից, պիտի իմանայ, որ իրան թոյլ կը տան անել, ինչ որ ուզում է։ Թող նա չը կարծէ թէ աշխարհը տակն ու վրա կը դառնայ նրա պատճառով։ Այժմ աշխարհը իր ցաւերն ու հոգսերն ունի։ Նա արդէն հարիւրաւոր աղջիկներ է կորցրել և մեծ բան չի լինի, եթէ մի աղջիկ էլ կորչի։

—Եթէ դու չես խնայի, ոչինչ կը համարես մեզ ամենքիս, այն ժամանակ մենք ամենքս չենք խնայի քեզ, ոչինչ կը համարենք քեզ... Դու մեզ չես խայտառակի, որովհետև մենք ձեռք կը վերցնենք քեզանից և դու կը դառնաս մի հասարակ աղջիկ...

—Ա՛հ, դու ճշմարիտ ես ասում, քեռի, հիացած բացականչեց Գայիանէն, փաթաթվելով մէլիքի կրծքին։

Յուզմունքը թոյլ չը տուեց նրան շարունակել. մի վայրկեան նա տեղի տուեց խուլ հեկեկանքներին։ Եւ ապա, բարձրացնելով իր դէմքը, նա նայեց իր քեռուն, որ կանգնած էր ժայռի նման, և ասաց.

— Դու արդար ես, քեռի... Ինչո՞ւ շուտ չեկար, որ լսես այդ խօսքերը... Ոչ ոք չէր ընդունում, որ ես հասարակ աղջիկ դառնամ. որքան էի տանջվում, որ հասկացնեմ այն, ինչ հիմա դու ասացիր։ Ա՜հ, սիրելի քեռի, հասկացրու ամենքին, որ ես ոչ ոքից լաւ չեմ...

— Շատ լաւ...

Եւ այլ ևս ոչ մի խօսք։ Մէլիք-Աւանը հեռացրեց նրան իրանից ու դուրս գնաց։

Բայց իր զայրոյթը չը կարողացաւ պահել։ Նոյն օրը գնաց Սուլէյման-բէկի մօտ։ Իսկ երեկոյեան պատմում էր իր քրոջը, թէ ինչ էր ասել և ինչ էր լսել։

— Մեզ ոչինչ բան չի օգնի, ասաց նա մի ծանր, յուսահատ եղանակով։ — Նոյն իսկ Մուստաֆա-փաշայի անունն էլ ազդեցութիւն չարաւ։

Բէկը չէ վախում իր հրամանատարից։ Փաշան ոչինչ չէ կարող անել, եթէ ինքը, բէկը, մի օրում քանդէ մէլիքի տունը։ Ո՛չ մի օսմանցի չի խղճայ այն գեաւուրներին, որոնք աւազակ Մանասի գործակիցներն են։

— Նա պարզ հասկացրեց, որ եթէ իրան ընդդիմանանք, նա այդպէս էլ կանի, կը քանդէ այս տունը։ Փչանայ Շահնազարը... Նա է այդ զէնքը տուել անօրէն թիւրքին։ Չը մոռանաս, Աննա, վաղը նրան ուղարկիր մեր տնից։ Ես կը խրատեմ այդ լակոտին...

Այդքանը բաւական չէր, բէկի ականջին հասել էր և այն, ինչ խօսում էին մարդիկ. նա գիտէր որ Գայիանէն սիրում է իրան։ Պէտք էր տեսնել գազանի պսպղուն աչքերը, որպէս զի կասկած չը մնար, թէ նա ձեռք չի վերցնի մէլիքի աղջկանից։ Նրա ձեռքին մի ուրիշ զէնք էլ կայ։ Ո՛չ մի գեաւուր իրաւունք չունի պահել իր տանը այն աղջկան, որ ուզում է մարգարէի աղախինը դառնալ։

— Եւ սա, դժբախտաբար, ճիշդ է, շարունակեց մէլիքը։ — Այստեղ կայ և հաւատի գործ։ Ինքը, փադիշահն

էլ չի արգելի բէկին տանել մեր աղջկան և մահմեդական դարձնել...

— Ուրե՛մն...

— Մենք ճար չունենք, պատասխանեց նա, իր տխուր աչքերը դարձնելով քրոջ վրա։ — Քիչ յոյս կարող ենք ունենալ, եթէ Գայիանէն պարզ ասէ, որ չէ ուզում մահմեդական դառնալ։ Այն ժամանակ կը մնայ միւս հանգամանքը, Շահնազարի պատմածը։ Մենք կասենք, որ նա սուտ է ասել, որ այդպիսի բան չէ եղել։

— Եղել է, նա այդ գիտէ, ես ասել եմ որ եղել է...

— Դո՞ւ...

Այս հարցի մէջ այնքան դառն յանդիմանութիւն կար, որ Աննա-խաթունը լաց եղաւ և սկսեց բացատրել թէ ինչ է ինքը ասել բէկին։ Այո, չէ ուրացել, որ Մանասը մարդ էր ուղարկել իր մօտ, բայց պատմել է և այն, ինչ ինքը ասել է Մանասի մարդուն...

— Դու քո աղջկանից պակաս չես խելքդ կորցրել, փնթփնթաց նա քթի տակ և լռեց։

Խեղճ քոյրը լուռ արտասունքներ էր թափում. նա այժմ հասկացաւ, որ իր բոլոր արածները սխալ են եղել, անխելքութիւն... Թո՛ղ այդպէս լինի, թո՛ղ իրան ոչինչ համարեն, մի անկիւն շպրտեն։ Թո՛ղ խելօքները մի բան անեն։

— Դրանով բան չի դառնայ, արտասանեց մէլիքը մի անողորմ խստութեամբ։

Արտասունքները այդ վայրկեանին կարծես աւելի կատաղեցրին նրան։ Վաղուց էր, որ նա մի մխիթարական խօսք չունէր իր քրոջ համար. վաղուց էր, որ նա ոչ ոքին չէր խնայում։ Այժմ էլ նա չասաց թէ ինչ մտադրութիւն ունի։

— Ձմեռվայ մէջ ենք, թիւրքերը նստած են մեր տներում, շարունակեց նա նոյն եղանակով։ — Ո՞վ պիտի նրանց դուրս հանէ այստեղից...

Նա վերկացաւ, սկսեց քայլել սենեակում. ծանր ի-

բողութիւնը նորից փաթաթվեց նրա կոկորդին: Այժմ այլ ևս հնար չը կար նախատեսելու թէ ինչ կը լինի:

Դուռը հանդարտ բացվեց և Գայիանէն ներս մտաւ, բռնեց մէլիքի ձեռքը:

—Ես հէնց այստեղ էլ կը խօսէի, ասաց նա,—բայց մայր Հեղինէն գալիս է... Մինչև նրան լսելը ինձ պիտի լսես, քեռի... խոստովանութիւն ունեմ:

Նա քաշեց, տարաւ մէլիքին իր սենեակը: Այդտեղ նա ծիծաղելով ասաց.

—Ես լսեցի ամեն ինչ, ես ականջ էի դնում դռան ետևից: Դու զուր ես ասում թէ ոչ մի ճար չը կայ:

—Ճարը գտել ես դու քո մօր հետ, սառն կերպով պատասխանեց քեռին:

—Ես գտել եմ, վաղուց եմ գտել: Ի՛նչ էլ անէք ամենքդ, բայց չէք կարող ասել, որ ես Մէլիք-Յուսէֆի աղջիկը չեմ:

Նա հանեց իր ծոցից փոքրիկ խէնջարը և պինդ սեղմեց իր ձեռքերի մէջ:

—Ահա ճարը, ասաց նա:—Այս փոքրիկ և սիրուն բանը պիտի կոխվի նրա կրծքի տակ. եթէ այդ չաջողվի, ես ինքս մինչև կոթը կը խրեմ իմ կրծքի մէջ...

Այժմ Մէլիք-Աւանի դէմքի վրա երևաց մի հեգնական ժպիտ. ճարը շատ էր չնչին...

—Դու չես հաւատում... Դու էլ ես քարացել, քեռի. բայց դու չէ՞իր, որ ինձ այնքան սիրում էիր... Ե՞րբ եմ ես քեզ մօտ սուտ ասել. Երբ ես դու խաբվել ինձանից...

—Այժմ էլ կը հաւատայի, եթէ...

—Եթէ՞...

—Չասէին որ դու սիրահարված ես Թիւրքի վրա...

—Դրան չե՞ս հաւատում: Հաւատա, քեռի: Ես սիրահարված եմ ճիշդ այնպէս, ինչպէս փոքրիկ սարդը սիրահարվում է իրանից հինգ անգամ մեծ ճանճի վրա: Չե՞ս տեսել թէ ինչպէս մի խեղճ, փոքրիկ միջատ ընկ-

նում է իրանից մեծի ետևից, հալածում է նրան ծածուկ և յարմար րօպէի է սպասում նրան սպանելու համար: Ես սիրահարված եմ... Վկայ է այս հրաշալի խէնջարը, որ իմ ծոցում է պառկում, որին ես ուխտ եմ արել, իբրև մի սրբութեան: Սա ինձ հաստատ խօսք է տուել, որ ինձ կուղարկէ գերեզման, եթէ իմ ձեռքը դողայ այն ահաւոր րօպէին և Թիւրքը ազատվի սրա բերանից: Սա պողվատի երդումն է կերել թոյլ չը տալ, որ պիղծ ձեռք դիպչի Մէլիք-Յուսէֆի աղջկան: Նայիր, չե՞ս հաւատում...

Երկուսն էլ լուռ նայեցին արծաթապատ զէնքին. երկուսն էլ մի և նոյն հարցն էին տալիս նրան. «Ճի՞շդ է»:

—Մենակ ես չեմ սիրահարված, ասաց Գայիանէն. —մեր բոլոր աղջիկներն են ինձ պէս:

Մէլիքը մի հարցական հայեացք գցեց նրա վրա: Իսկ աղջիկը յանկարծ սկսեց աղաչել նրան.

—Քեռի, սիրելի՛ քեռի, դու ամենքի մեծն ես, դու աշխարհի տէրն ես, քո խօսքը հրաման է ամենքի համար: Մի բարերարութիւն արա մեզ. մի՛թէ հիմա էլ չես խղճայ...

Յուզված, բեկբեկուն ձայնը կրակոտ էր, պաղանչելի: Գեղեցիկ շրթունքները վարդեր էին դառել և շարժվում էին անդադար, այրում էին: Մէլիքը չը դիմացաւ այդ հմայքներին: Նա զգաց նախկին Գայիանէի համն ու հոտը և քիչ մեղմ ձայնով հարցրեց.

—Ի՞նչ ես ուզում:

—Այս փոքրիկ զէնքից քիչ կայ... Վաղը մարդիկ ուղարկիր, թող ման գան ամեն տեղ և քանիսը գտնեն, բերեն այստեղ: Կանչիր բոլոր զինագործներին, թող նրանք, օր ու գիշեր երկաթ ու պողվատ ծեծեն, խէնջարներ շինեն: Մեծերը չենք ուզում. ամեն մէկը այնքան լինի, որ տեղաւորվի աղջկայ ծոցում...

—Յետո՞յ:

—Յետոյ մի ահագին հարսանիք արա: Մեզ ամենքիս

մի օրում տուր Թիւրքերին։ Նրանք չեն մերժի, նրանք ուրախ կը լինեն. և մի գիշերվայ մէջ, որքան աղջիկ կայ, այնքան պողպատ կը ցցվի Թիւրքերի կրծքում։

Համարձակ ծրագիրը առաջին անգամ ծիծաղ պատճառեց մէլիքին։ Բայց Գայիանէն այնքան ոգևորված էր, այնքան հաւատում էր այդ մտքին, որ մէլիքը սկսեց հերքումներ առաջ բերել. Նա հնարաւոր համարեց քննել այդ յանդուգն միտքը։

—Դու միայն քո մասին կարող ես խօսել, ասաց Նա։

—Խօսում եմ ամենքի կողմից։ Մեր գիւղում աղջիկ չը կայ, որ համաձայն չը լինի։ Մենք երդվել ենք աւետարանի վրա։

Նա յետ քաշեց պահարանի փոքրիկ վարագոյրը, ցոյց տուեց աւետարանը, որի կողքին դեռ մնում էին մոմերը։

—Ամեն մի սիրտ, որ մեզ հետ է, այստեղ երդվել է. ամեն մէկի շրթունքները համբուրել են այս սուրբ գիրքը։

—Բայց այդ գործը երկար կը տևի. իսկ բէկը քեզ ուզում է շուտով, չէ համբերում. . .

—Ի՞նչ անենք, նրան խաբելը դժուար չէ. մենք խօսք կը տանք, կարճ ժամանակ կը խնդրենք։ Ես միշտ պատրաստ եմ և նա իմ ձեռքից չի պրծնի... Բայց պէտք է որ բոլոր քոյրերը պատրաստվեն։ Մենք երդվել ենք միասին սկսել. . .

Յանկարծ նա մի բան յիշեց և կանգ առաւ. դա մի վայրկեան էր, նա աչքը գցեց առաստաղին և հրաշալի կարմրութիւնը ծածկեց նրա ամբողջ դէմքը։

—Ես մոռացել եմ, բացականչեց նա մի անզուսպ կատաղի հրճուանքով, որ միայն երեխաներին է կարող այդպէս վարակել։—Դեռ կան Սօնան, Գիւլ-Ջհանը, Մանիշակը... Դրանք էլ կը գան, քոյր կը դրվեն... Դու չե՞ս արգելի, քեռի... Բայց արգելես էլ, նրանք քեզ չեն լսի... Օ՜, մենք շատ ենք, մենք կը յաղթենք. . .

Մոռացված զինակցները, կարծես, ցած իջան ա-

ռաստաղից, ծիծաղեցին և ասացին որ այո, իրանք յետ չեն մնայ քոյրերից... Մէլիքը ցնցվեց, լսելով իր երկու աղջիկների և եղբօր աղջկայ անունները։

Երեքին էլ կանչում էր Գայիանէն. կարծես խնջոյքի էր կանչում, կարծես մի հանդէս էր սարքել, որի մէջ բոլոր քոյրերը պիտի հրճվէին, թրթռային, ծիծաղէին և ծիծաղեցնէին։ Նրանք գալիս էին, և Գայիանէն դողում էր խորին բաւականութիւնից. Նա տարածեց իր թևերը, կարծես գրկում էր նոր քոյրերին։ Մէլիք-Աւանը շարժվեց տեղից, գնաց դէպի նրան և սեղմեց իր կրծքին։

—Նրանք էլ կը լինեն, ասաց Դիզակի տէրը մի խուլ, ախորժելի ձայնով։

Եւ սկսեց շոյել աղջկայ հրաշէկ ճակատը։ Նրա մէջ նորից բռնկվեց այն քնքշութիւնը, որով նա մի ժամանակ փայփայում էր այդ սիրուն երեխային, այդ Գայիանէին, որ այժմ այրվում էր նրա գրկի մէջ, կարծես ուշաթափված էր, աշխարհից վերացած։

—Օ՜հ, քեռի, քեռի, մրմնջաց այդ կրակը և իր գլուխը թեքեց նրա ուսի վրա։—Մեզ Թիւրքերին տուր, քեռի. . .

Նա աղաչում էր, իսկ քեռին համբուրում էր նրան, հանգստացնում էր իր գգուանքներով։ Դժուար չէ կատարել այդ աղաչանքը։ Բայց. . .

—Աղջիկնե՞րն ազատեն մեզ, արտասանեց նա հազիւ լսելի ձայնով։

Խօսում էր տղամարդի վիրաւորված ինքնասիրութիւնը... Ի՞նչպէս. տղամարդիկ նստեն, իսկ այս երեխաները գնան. . .

—Մենք, մե՛նք, պատասխանեց Գայիանէն։—Մենք լաւ ենք ձեզանից։ Մեզ ուզում են... Մենք, ո՜հ, գեղեցիկ ենք... Իսկ ձեզ ատում են. . .

—Տեսնենք. . .

Այդ խօսքով մէլիքը վերջ էր տալիս նրա թախան-

ձանքներին։ Հաստատ, դրական բան չը կար։ Տեսնենք, Աստուած, երևի, մի ճանապարհ ցոյց կը տայ... Բայց ինչ էլ լինի, պէտք չէ տաքանալ։ Ջահիլութիւնը փորձանք է, ամենալաւ մտքերն անգամ նա կարող է փչացնել իր խակութեամբ. իսկ Գայիանէն շատ է խակ. ահա այժմ նա քրտնել է, մինչդեռ ոչինչ չը կայ մէջտեղ։

Գայիանէն չէր ուրանում, որ ինքն շտապում է, այրվում է։ Նա գիշերները քուն չունի, նրա միտքը միշտ իր փոքրիկ խէնջարի հետ է։ Այժմ նա պատրաստ է համբերել, սառնասիրտ լինել։ Ո՜րքան գոհ է. իրան լսեցին, այս անգամ չը ծաղրեցին։ Տէր Աստուած, սա առաջին անգամն է... Եւ նա այլ ևս չէ պահում մէլիքին, միայն մի շնորհ է խնդրում նրանից.

—Կոյս Հեղինէին չը լսես, սիրելի քեռի... Այդ կինը սարսափելի լեզու ունի և կարող է քեզ պէս մարդուն էլ խելքից հանել։

—Տեսնենք, նորից կրկնեց Մէլիք-Աւանը։

Շէմքի մօտ, մթութեան մէջ, մէլիքին կանգնեցրին երկու ձեռքեր, որոնք յանկարծ պինդ փաթաթվեցին նրա ծնկներին։ Մի և նոյն ժամանակ մէկը հեալով թոթովեց.

—Ես էլ, քեռի, ես էլ...

Մէլիքը խոնարհվեց և տեսաւ Յովսէփին։

— Դու՞ էլ ես գնում, հարցրեց նա։

—Ես կասեմ, եթէ չը ծիծաղես... Մի՛ ծիծաղիր, ես լաց կը լինեմ...

Բայց քեռին չը կարողացաւ չը ծիծաղել։ Յովսէփը, կրակոտ արտասուքներ թափելով, խօսեց իր քրոջ մասին, կրկնեց նրա աղաչանքը։ Քոյրիկը սուտ չէ ասում. նա արդար է ու խելօք, ինչպէս այն մեծ գիրքը, որ մայրիկը առել է Երիցմանկանց վանքից, փոխարէնը տալով մի ջուխտ եզ...

—Շատ լաւ, բայց դո՞ւ...

Պատասխանի փոխարէն Յովսէփը ցոյց տուեց իր գօտուց կախած փոքրիկ խէնջարը։

—Ինչի՞դ է... Աղջիկ չես որ թիւրքի գնաս...

—Ո՛չ, աղաղակեց երեխան,—ես տղայ եմ...

Այդ հպարտութիւնը բոլորովին սազ չէր գալիս նրան։ Մէլիքը նորից ծիծաղեց, բայց Գայիանէն հիացած էր. զարմեալ թւում էր նրան, թէ երեխան բարձրանում է, հասակ է քաշում և պնդանում է... Բայց այդ ցնորք էր, որ չքացաւ մի ակնթարթում։ Մէլիքն ասաց.

—Երանի կը լինէր, եթէ աղջիկ ծնվէիր, Յովսէփ։ Գոնէ քեզ էլ մարդու կը տայինք... Բայց ո՛չ աղջիկ ես, ո՛չ տղայ...

Երեխան կուչ եկաւ, կարծես կայծակ խփեց նրան։ Մէլիքն անցաւ, իսկ Գայիանէն գրկեց Յովսէփին, որ երևում էր յանկարծակի տենդով բռնվածի նման։

Քրոջ շունչն էր, որ հանեց նրան այդ դրութիւնից։ Քրոջ շունչը հաւատացնում էր, որ ոչինչ է մարդկանց կարծիքը, որ իրանք, այդ երկուսը, միասին կը լինեն և աջողութիւնն այժմ անկասկած է։

—Աջողութի՛ւն, դուրս թռաւ երեխայի բերանից։

Զ

Աջողութի՜ւն... Այս մի և նոյն խօսքը նոյն երեկոյեան արտասանում էր և Քէօսա-Մուխտարը։ Նա էլ մեծ յոյս ունէր. նա էլ գիտէր որ անկասկած է աջողութիւնը։

—Սիրիացու գլուխը շատ է հաստ, ասաց Մուխտարը իր մօտ նստած վիթխարի մարդուն, որ իր ծառաներից մէկն էր։—Հաստ գլուխը չի հասկանայ ոչ օգուտ, ոչ մեծերի պատիւ։ Մուրադ-աղան յաղթի՞ այդ սև վայրենուց—ես չեմ թողնի։ Նա քաջ է, բայց յիմար... Մենք մեր շահը չենք կորցնի, մենք յիմար չենք։ Լսո՞ւմ ես, լաւ պատրաստիր մեր ադամներին։ Հէնց որ ճանկենք հիւրին, պիտի փախչենք, փախչենք քամու պէս։ Դու կէսօրից յետոյ կը սպասես իմ ցոյց տուած տեղը. յիշո՞ւմ ես. մեծ քարի մօտ, ձիւնը սրբեցինք...

Վիթխարին վեր կացաւ, լուռ համաձայնութեան նշան արաւ։

—Լաւ կը լինէր, եթէ Աստուածն ինձ օգնէր, բայց ծեր ապուէսը չը հրապուրվեց մեր ռուբլիներից. փառք չունի, նա գոնէ ձայն չի հանի...

Մուխտարը ճանապարհ դրեց իր անխօս ստորադրեալին, նորից և նորից կրկնելով իր խրատները։ Նա ինքն էլ չը մնաց տանը և իր քայլերն ուղղեց դէպի աղբանոցը։ Ցուրտը նրան չը նեղեց. նա սրբել էր ականջները, լռում էր, հոտոտում էր...

Այժմ ճրագ էլ կար Փէրիի սենակում։ Հին, սև ամանում լճացած ձէթի մէջ խաղաղ այրվում էր բարակ պատրոյգը, դեղին լոյսեր սփռելով մի անկողնի վրա, որի մէջ պառկած էին երեք հիւանդները։

Ձայն, շարժողութիւն չը կար այդտեղ. վերմակը, կարծես, սառել էր, քարացել. ճրագը իր տխուր փալ-փլոցներով, կարծես, խորին ուշադրութեամբ հետևում էր թէ ինչ է անում մահը։

Փէրին երբեմն չոքէչոք առաջ էր անցնում, ձեռքը մօտեցնում էր հիւանդների բերանին ու քթին և միայն այդ ժամանակն էր համոզվում, որ դեռ շունչ կայ։ Բայց մօտենում էր վերջին ժամը, և պառաւը, իբրև արթուն պահապան, սպասում էր, աչք չէր գոցում, որպէս զի այդ ժամը իրան անպատրաստ չը գտնէ...

Փակել խեղճ որբերի աչքերը, մի քանի խօսք արտասանել աշխարհից հեռացողների վրա, մի քանի կաթիլ արտասուքներով թրջել նրանց երկար ճանապարհը, խնդրել Աստուծու քաղցր դատաստանը—ահա ինչու էր նա սպասում։ Դա պարտք էր, նրա սիրած պարտքը. և ճրագի գունատ լոյսերը ցոյց էին տալիս, թէ որպիսի լըրջութեամբ է նա պատրաստվում այդ պարտքը կատարելու... Վաղուց անցել էր նրա քնի ժամը, բայց նա սպասում էր, անդադար սպասում։

Երբեմն սենեակի աջ անկիւնից բարձրանում էին

խուլ հեկեկանքներ և խանգարում էին գերեզմանային լռութիւնը։ Դա արտասուքներից կուրացած պառաւ կինն էր։

Այն բարեբար ձեռքը, որ ճրագ էր վառել այս քանդված սենակում, դիպել էր և այդ թշուառին. նա այժմ ծածկել էր իր հին մսերը, փաթաթվել էր մի հին վերմակի մէջ և քնած պիտի լինէր, բայց քունն էլ չէր խեղդում նրա անթիւ վշտերը և նա այդպէս կը հեկեկար մինչև առաւօտ... Լռում էր ջարդված սրտի մրմուռը և նրա փոխարէն երբեմն բարձրանում էր Մարթայի հանդարտ շնչառութիւնը։

Երեխան առողջ ու անհոգ քնի մէջ էր. մանկան այս օթևանում այդ քունն էր հաստատում, որ մի յարկի տակ, մեռնողի կողքին, ծլում, ծաղկում է թարմ կեանքը.... Տատը երբեմն աչքը դարձնում էր նրա վրա և պառաւական անթիւ կնճիռների մէջ գոհունակութեան ժպիտն էր շարժվում. նա խոնարհվում էր, լուռ ու անձայն իր շրթունքները դնում էր նրա ճակատին և շուտով էլի ուղղվում էր, էլի նայում երեք հիւանդներին...

Բայց գերեզմանի ցրտութիւնը ուշանում էր. նրանից առաջ ներս մտաւ մի անակնկալ հիւր։

Նազլուն էր։ Առաջին անգամ նա չը համարձակվեց խօսել. քաշվեց ճրագի լոյսից, որ անկողնի վրա էր թափված, և այն լռութիւնից, որ պատրաստված էր հիւանդների վերջի համար։ Նա դէս ու դէն նայեց, չը զարմացաւ ոչ մի բանի վրա, մինչև անգամ չուզեց իմանալ թէ ով է այսպէս կերպարանափոխել սենակը։ Նա գիտէր որ աշխարհի մէջ անհնարին բան չը կայ։ Եւ այս հանգամանքը նա շտապեց յայտնել Փէրիին։ Բռնելով նրա ուսից, աղջիկը բացականչեց.

—Ես տեսայ իմ մօրը...

Փէրին ուրախացաւ։ Այդպիսի լաւ բանի համար կարելի էր խանգարել մահվան կարգն ու սարքը։

—Նա ինքն էր. լաց եղաւ, համբուրեց ինձ։ Ի՞նչպէս էր փառք տալիս Աստուծուն...

—Ե՞րբ կը գայ։

—Օ՜... գալը... գալը...

Այդ բացականչութեան համապատասխանում էր մի տեսակ տարակուսական-հեգնական ծամածութիւն, որ միաժամանակ երևան եկաւ նրա դէմքի վրա։ Փէրին համարեա հասկացաւ, ուստի իսկոյն հարցրեց.

—Դժուա՞ր է...

—Դժուար... Չէ, դժուար է մի խեղճ աղջկայ համար, պատասխանեց նա ծիծաղելով։

—Քեզանից էլ խե՞ղճ... Էլ ինչո՞ւ ցոյց տուիր քեզ։

Նազլուն նախ ձեռքով բացասական նշան արաւ և ապա հանդարտ արտասանեց.

—Ես խեղճ չեմ, ինձ համար դժուարութիւն չը կայ... Նայի՛ր ինձ, մի՞թէ չես տեսնում։

Եւ նա հարկադրեց, որ պառաւը լաւ տնտղէ իրան, անդադար կրկնում էր այդ հարցը։ Փէրին նայում էր, խորին ուշադրութեամբ դիտում էր այդ նիհար դէմքը, բորբոքված աչքերը, որոնց մէջ այժմ մի չար ինքնավստահութիւն էր երևան եկել։ Ուրիշ մի բան չը նկատեց պառաւը և ասաց.

—Դու նոյն Նազլուն ես...

Եւ Նազլուն ծիծաղեց ու սկսեց ծաղրել Փէրիի աչքերը։

—Դու լաւ չես տեսնում, դու ծերացել ես և այս ճրագն էլ շատ բարակ լոյս ունի։ Բայց եթէ տեսնէիր՝ ինչե՛ր կան իմ մէջ... Ես—հսկայ եմ. Մէլիք-Աւանին կը գցեմ ոտիս տակ, Սուլէյման-բէկին իմ էշը կը շինեմ, իսկ Մանասը ձեռքիս մէջ է, մի անգամ փչեմ, հոգին կը տայ... Օ՜հ, ո՜րքան մեծացայ այս քանի օրը...

Փէրին ամաչեց այդ խօսքերից, հասկացաւ որ Նազլուն էլի կատաղել է։ Ի՞նչ կասկած որ այդպէս էր։ Ա՛ննա տեղից վեր թռաւ, երկու անգամ պտոյտ արաւ, հռռաց և ապա ցատկեց ու ընկաւ Փէրիի գիրկը։ Պառաւը գէն հրեց նրան և նորից շօշափեց մեռնող հիւանդներին։ Դրանով ցոյց էր տալիս, որ այժմ չէ կարող գլուխ գնել մի խենթի հետ։ Նազլուն չոքեց նրա առաջ և ասաց.

—Լսի՛ր, ես գործ ունեմ քեզ մօտ։ Էգուց երեկոյեան իմ մայրը լոյս աշխարհ դուրս կը գայ... Ուզո՞ւմ ես։

—Ո՞վ չի ուզի։

—Բայց նրա տեղ մի ուրիշը պիտի գնայ։ Օգնի՛ր ինձ...

—Ո՞վ պիտի գնայ...

—Այս անգամ մի բախտաւոր... Վերջապէս հերթը հասաւ բախտաւորներին...

—Ո՞վ է։

—Մէլիքի աղջիկը... Քէօսա-Մուխտարը իմ մօրը փոխում է նրա հետ։

Փէրին սարսափահար նայեց Նազլուի անողորմ դէմքին։

—Դու ուզում ես որ իմ մայրը ազատվի, շարունակեց նա, ուշադրութիւն չը դարձնելով պառաւի տհաճութեան վրա։—Որ այդպէս է, վաղը երեկոյեան դու կը գաս ինձ հետ։ Մենք ուրիշ գործ չունենք, մերը այն կը լինի, որ դուրս կը կանչենք բախտաւորին և յետոյ...

— Յետոյ ի՞նչ։

—Մենք գործ չունենք, փախցնողները գիտեն թէ ինչ պիտի անեն։ Ես կը գնամ իմ մօր ետևից և կը բերեմ նրան... Ա՜հ, միասին կը գանք, լացն ու ծիծաղը կը խառնենք ճանապարհին...

Նա յոգնածի պէս կանգ առաւ, երկար շունչ քաշեց... Ապա հիացած վերադարձաւ իր մտքին, որ յափշտակել էր նրան։

—Խեղճերը, վերջապէս, հարկաւոր եկան մարդկանց և կարող են ապրել... Մուխտարը մի կատարեալ դև է, բայց այս րոպէին մեր ձեռքումն է... Առանց մեզ ոչինչ չէ կարող անել։ Մի ժամանակ Նազլուն խենթ էր, ծիծաղ էր յարուցանում, երբ ուզում էր իմանալ թէ ու-

է իր մայրը։ Այժմ նրա ետևից մահ են գալիս...

—Եւ դու կանե՞ս այդ բանը։

Նազլուն սաստիկ ծիծաղեց։ Ո՜րքան միամիտ էր այդ պառաւը։

—Ես խօսք տուել եմ և վաղը երեկոյեան մենք կը գնանք...

—Խօսիր միայն քո մասին։

—Դու չես ուզում, ես այդ սկզբից նկատեցի։ Բայց դու գիտե՞ս որ երկնքի տակ իմ մայրը մի ուրիշ յոյս չունի...

—Գիտեմ, խեղճ Նազլու... Բայց մելիքի աղջիկը մեղք է...

—Մե՞ղք... Օ՜հ, սիրտս պատռվում է, այդպէս մի խօսիր...

—Տեսնո՞ւմ ես այս ճրագը, այս օջախը... Մի ամբողջ տուն կայ այստեղ. հիւանդները, խեղճե՛րը, հայ քրիստոնեաների նման կը մեռնեն, փա՛ռք Աստուծու։ Այս բոլորը Գայիանէի արածն է...

—Հիմա ես կը պատմեմ իմ արածը։ Բանն այնպէս էր, որ բախտաւորները պիտի լաց լինէին, որ ես ուրախանայի։ Ես չուզեցի որ այդպէս լինի և գնացի Մանասի մօտ։ Գիտե՞ս, մի տուն լի հրացաններով և սրերով... Երկար աղաչեցի, որ այդ լաւ բաները վերցնեն և գնան իմ մօրն ազատելու։ Բայց ամենքն ինձ ծաղրեցին, էլի խենթ էին համարում...

—Աստուծու բանն է...

—Սուտ է, սուտ, դա մարդկանց բանն է։ Մանասը լսել է, որ մելիքի աղջիկը գնում է Թիւրքին և էգուց միւս օրը կը գայ, կը փախցնէ նրան... Բախտաւորը հարիւր ու մի հաւատարիմ մարդ ունի... Նրան կազատեն։ Բայց իմ մայրը... միայն Նազլուն...

Արտասուքներից դողացող ձայնով նա սկսեց պատմել թէ ինչպէս տեսաւ իր մօրը, նկարագրեց գերիների դրութիւնը։ Այդ բոլոր դժբախտներին կարելի է ազատել, հարկաւոր է միայն, որ Նազլուն ու Փէրին վաղը

երեկոյեան գնան մելիքի տան մօտ...

Նրա խօսքը յանկարծ ընդհատեց մի կատաղի հեկեկանք, որ լսվեց տնակի անկիւնում։ Կուրացած պառաւն էր, ձեռքերը ման էր ածում օդի մէջ, կարծես ուզում էր շօշափել խօսողներին։ Լաց էր լինում, և մի շարք խօսքեր խեղդում էին նրան։

—Նախշո՜ւնը... իմ Նախշո՜ւնը... Նա էլ կազատվի... Աստուծո՜ւ սէրին...

Փէրին իսկոյն վեր կացաւ, գնաց նրա մօտ. ձեռքը քսեց նրա ձեռքերին, մի քանի խօսք ասաց։ Եւ խեղճը երեխայի պէս իսկոյն հանդարտվեց, սկսեց հեկեկալ մեղմ, շատ մեղմ ձայնով։ Նազլուն բաւական չը համարեց Փէրիի մխիթարանքը, ինքն էլ հաստատ յոյսեր տուեց։ Ինքը, այո՛, կանէ, ինքը կազատէ ամենքին!..

—Տեսնո՞ւմ ես, հարցրեց նա խեղդված ձայնով, երբ Փէրին վերադարձաւ իր տեղը։

—Նրան հանգստացնելը հեշտ է, փա՛ռք Աստուծու...

—Բայց ես... Ի՞նչ պիտի անես ինձ համար...

—Լաց կը լինեմ... Յիշո՞ւմ ես...

Նա մօտեցաւ աղջկան, բռնեց նրա ձեռքը և թախանձում էր։

—Կը գան կանաչները, ձմեռն անվերջ չէ, ասում էր նա։—Գետը հիմա է սառել, այն ժամանակ կը վշշայ ձորում. սարերը այժմ են սպիտակ, այն ժամանակ կը մթնեն... Լաւ խօսքեր կասեմ քեզ համար և դու լաց կը լինես... Ես քարերն էլ կը լացացնեմ... Յիշո՞ւմ ես։

Աղջիկը կախ արաւ գլուխը. նա հրապուրվում էր, նա լսեց, և այդ մեղմաղձոտ ձայնը, այդ հանդարտ քրթմնջիւնը գիւթեց նրան։

Փէրին այժմ լաց չէ լինում, գիտէ, որ գիշերային այս պահուն իր տնակում հանդարտ սաւառնում է մահվան հրեշտակը։ Նա պահում է արտասուքները, բայց նրա լեզուն նոյնպէս կպչուն ու յափշտակող է, որպէս այն մութ երեկոյին, կաղնիների սօսափիւնների մէջ։

Երգվում է երեք արդար հոգիներով, որոնք երկնքի ճանապարհի վրա են կանգնած, երգվում է նրանց համար իջած լուսաթաթախ հրեշտակով, երգվում է երեք գերեզմաններով, որոնք վաղը կը փորվեն գետի ձորում, երգվում է և հաւատացնում, որ արտասունքի մէջ հալվում է ամեն մի վիշտ։

Միայն կայ մէկը, ամենից սարսափելին, որ չէ կարող ջնջել ոչ մի արտասունք։ Դա այն վիշտն է, որ կը պատճառէ մելիքի աղջկայ կորուստը։ Գայիանէին տանեն թիւրքերը՛... Օ՛հ, Փէրին կը չորանայ, քար կը դառնայ և մի հատ արտասունք չէ կարող կաթեցնել, մի հատ մրմունջ չէ կարող հանել իր սրտից։ Վիշտը կը սպանէ նրան և այն ժամանակ կը մեռնեն շատ խեղճեր, բայց առանց Փէրիի արտասունքների։ Գայիանէն չը լինի... Հապա ով պիտի պատմէ ու խունկ տայ խեղճերին։ Անբախտ Անուշ... նա այժմ էլ դադար չունի իր գերեզմանում։ Փէրին այդ չէ մոռանում. Փէրին չը գիտէ թէ ինչ է անում Գայիանէն, բայց հիացած է նրա վրա. Նրա բարի խօսքերը, նրա արտասունքները... Վկայ են այս ձէթի ճրագը, կտաւը, որից պատաններ պիտի կարեն, խունկը, որ մեռելների բաժինն է...

Նա լռեց, բայց Նազլուն շուտ սթափվեց։

—Իմ մայրը, իմ մայրը, բացականչեց նա, գրկելով պառաւին։—Նա հիմա խօսում էր քեզ հետ, նա ասում էր, որ ինքն էլ, այդ խեղճ, տանջված կնիկը, ուզում է ապրել, ծիծաղել... Նա էլ մեր սարերի ջուրն է խմել։ Ինչո՞ւ են տանում... Օ՛, ես մենակ կմնեմ. նա ուրիշ ճար չունի։ Ես խօսք եմ տուել և վաղը երեկոյեան կը գնամ բախտաւորին դուրս կանչելու... Լաւ են քո խօսքերը, լաւ էր այն մութ երեկոն, բայց ես ուզո՞ւմ եմ իմ մօրը...

Նա սկսեց հեկեկալ։ Փէրին այս անգամ էլ չը խղճաց նրան։

—Դու այդ չես անի, ասաց նա.—ես թոյլ չեմ տայ...

—Ինձ էլ չես թոյլ տալիս... Չես կարող, իմ ձեռքին ուրիշ միջոցներ էլ կան... Բայց հասկանում եմ. առաւօտը դու կը գնաս և իմաց կը տաս բախտաւորին։

—Ո՛չ, չեմ գնայ, այդ ամօթ կը լինի... Նազլուին ես չեմ խայտառակի... Ես կը հետևեմ նրան, ուր որ գնայ և կը բռնեմ նրա ձեռքը, թոյլ չեմ տայ...

—Խեղճ իմ մայր, լռում ես այդտեղ, արտասունքն աչքերիդ, այդ սև գևերի մէջ...

Բայց յանկարծ ընդհատելով այդ խօսքը, նա դարձաւ պառաւին և ասաց.

—Լսիր. դու ինձ թուլացնում ես, բայց ինձ պէս հսկայ մարդ չը կայ աշխարհում։ Գիտե՞ս ինչեր կան իմ մէջ։ Ես գիտեմ Մանասի տեղը, գիտեմ թէ նա ինչ մտքեր ունի։ Գիտեմ թէ Մէլիք-Աւանն ինչ է ուզում անել. իմ ականջով լսեցի, որ նա Պարսկաստանից օգնութիւն է սպասում։ Բաւական է որ այս բաները պատմեմ Սուլէյման-բէկին, նա ինձ կը տայ իմ մօրը։ Ինձ մօտ կայ և մի մեծ գաղտնիք։ Գարնանը այստեղ մեծ կռիւ պիտի լինի. գևերը, որոնց այստեղ օսմանցի են անուանում, կը կտորեն ամենքին և ամենից առաջ Մէլիք-Աւանին։ Ես այս բանը կը յայտնէի մելիքին, եթէ նա ազատէր իմ մօրը։ Բայց նա չի անի, ինչպէս չարաւ Մանասը։ Մերոնք վախկոտ են, ծածկվում են քարերի ետևում։ Մերոնք լաւ ծաղրում են խենթերին...

—Մերոնց կողմը գնա, Նազլու...

—Ես իմ մօր կողմն եմ։ Եթէ նրա պատճառով բախտաւորները լաց պիտի լինեն, ես մեղաւոր չեմ։ Ամեն ինչ արի, բայց ով խղճաց ինձ... Յիշո՞ւմ ես մելիքի կնոջը, վանքի կոյսին... Ինձ հայհոյում էին, հիմա էլ իմ երեսը տեսնել չեն ուզում։ Հիմա ես չեմ խղճայ մարդկանց. հիմա իմ ձեռքին են ամենքը։ Ես ուզում եմ ուրախանալ, և ով կարող է հակառակվել։ Ուժեղ եմ, մեծ եմ... Տկլոր, ծարաւ, բայց իմ մօր կողքին... Սրտիս փը-

չերը... ա՜հ, Տէր Աստուած, գոնէ մի հատը հանեմ... Մի՞թէ ես խեղճ չեմ, Փէրի...

—Խեղճ ես, բայց կորցրել ես քեզ...

—Այդ դու՛ ես ասում։ Բայց դու չէ՞իր, որ ուրախացար, երբ գնայ մօրս... Մուխտարը ինձ մի բուռն ոսկի էր տալիս, բայց ես զզվեցի Թիւրքի փողից։ Նա ձեռք չը վերցրեց, թախանձում էր, որ այդ ոսկիները ընդունեմ ու քեզ տամ. ես կատաղեցի. շունը չէր հասկանում որ Փէրին էլ չի վերցնի, Փէրին էլ միմիայն իմ մօր համար կը գնար ինձ հետ մէլիքի դռների մօտ։ Ես հայհոյեցի այդ շանը, թքեցի նրա զզուելի դէմքին. և երբ նա, վերջապէս, ասաց, որ հաւատում է իմ ասածներին, ես խօսք տուի իմ և քո կողմից։

Պառաւն աչքերը բարձրացրեց դէպի հինաւուրց առաստաղը, ձեռքերով պինդ խփեց կրծքին, հառաչանքներ արձակեց և սկսեց մեղայ գալ։ Նա թողութիւն էր խնդրում Աստուծուց, աղաչում էր որ չը լսէ այդ խօսքերը, ներէ։ Վերջացնելով, նա դարձաւ զարմացած ու զայրացած Նազլուին և ասաց.

—Սատանան է քեզ խաբում, խեղճ Նազլու. եկ այստեղ, իմ կողքից մի հեռանար... Հրեշտակներ են մտնում այս տունը. տեսնո՞ւմ ես, ինչպէս հանդարտ հանգչում են խեղճ երեխաները. նրանք տեսնում են լուսաթաթախ հրեշտակին և ծիծաղկոտ են, կարծես ծաղիկներ լինեն։ Սատանան այստեղ չի մտնի։ Ինչե՞ր լսեցի քեզանից...

Նա երեսին խաչ հանեց, նորից երկնքի ողորմութիւնը կանչեց։ Բայց յանկարծ սարսափահար եղաւ, տեսնելով մի մարդու, որ կանգնած էր շէմքի մօտ։

—Սատանա՜ն, շշնջաց նա և յետ քաշվեց դէպի հիւանդների գլխատակը, դէպի այնտեղ, ուր հրեշտակն էր ծիծաղեցնում մեռնողներին։

Նազլուն էլ ծիծաղեց, երբ տեսաւ թէ ով է սատանան։ Նա վեր թռաւ տեղից և կանչեց, ցոյց տալով պառաւին.

—Սա չէ ուզում և ինձ էլ չէ թողնում... Գրո՞ղը տանէ քո կերպարանքը։ Ինչո՞ւ այդքան զզուելի ես, որ նոյն իսկ իմ մօրը ազատելու համար քեզ չեն լսում։

Մուխտարը—ներս մտնողը նա էր—առաջ անցաւ, կակուղ ձայնով մի քանի խօսք ասաց։ Փէրին իր դէմքը կախ արեց հիւանդների վրա, կարծես չէր թոյլ տալիս, որ երեք անմեղ հոգիների վրա ընկնէ այդ սարսափելի մարդու շուքը։

Նազլուն շարունակում էր յանդիմանել, ծաղրել Մուխտարին, իսկ սա փորձում էր համոզել պառաւին։ Էլի ոսկիների անունը տուեց, էլի ասաց, որ վաղը երեկոյեան մի թեթև գործ է հարկաւոր. միայն դուրս կանչել աղջկան...

Փէրին չէր նայում նրան, միայն ձեռքով նշան էր անում, որ հեռանայ, գնայ։ Բայց Մուրադ-աղայի գործակատարը առևտուրի վրա էր, քայլ-քայլ առաջ էր գնում, հասկացնում էր։ Նա մօտեցաւ անկողնին, նա մեկնում է ձեռքը դէպի պառաւը, ցոյց է տալիս ոսկիները և ուզում է զօռով նրա ձեռքը յանձնել այդ հարստութիւնը...

Փէրին կատաղած վեր թռաւ, բայց դարձեալ չը նայեց իրան փորձողին, այլ դիմեց Նազլուին և աղաղակեց.

—Տա՛ր, կորցրո՛ւ... Երեխաները հոգեդարձ դառան, հրեշտակ կայ այստեղ...

Անկիւնում կուչ եկած պառաւը զարթնեց և իսկոյն սկսեց լաց լինել։ Շարժվեց և Մարթան։

—Կորցրո՛ւ, կորցրո՛ւ. մի՞թէ դու քրիստոնեայ չես, նորից կանչեց Փէրին և ինքն էլ լաց եղաւ։

Նազլուն բռնեց Մուխտարի թևից և դուրս քաշեց։ Շէմքի մօտ երկու ձեռքով ճանկ արաւ նրան և ատամները միմեանց սեղմելով, ասաց.

—Գրո՞ղը քեզ տանէ... Ա՛յդքան էլ զզուելի երևա...

Մուխտարը սառն կերպով պատասխանեց.

—Քո մօրը բերել են։

Եւ աղջիկը ոռնալով դուրս վազեց...

Գիշերը հանդարտ էր։ Մեռնողները հոգեդարձ չէին դառել. նրանց մեղմ շունչը դեռ գնում-գալիս էր։ Փէրին շուտ համոզվեց, որ բարի հրեշտակն սպասում է մինչև առաւօտ։

Լուսադէմին, երբ բացվում են երկնքի դռները և հրեշտակները Աստուծու բարի լոյսը թափ են տալիս սարերի գլխին, երբ կորչում են չար դեւերը և երեխան օրօրոցում սկսում է իր առաւօտեան անուշ բըլըլը— այդ ժամին հրեշտակը կը տանէ փոքրիկների հոգիները։ Արժանի են, Տէր Աստուած... Երանի ձեզ, անմեղներ...

Փէրին պառկում է, որ այն վաղ ժամին դարձեալ ոտքի վրա լինի, իր տեղը նստած, բարի հրեշտակի առաջ։ Նա քնում է, նրա դէմքի վրա փայլում է լոյսը, նա սպասում է և քնի մէջ... Իսկ ճրագը շարունակում է պլպլալ ի պատիւ հրեշտակի...

Անցնում է ժամանակը։

Մի ծանր, շատ ծանր բան սկսում է սեղմել պառաւի կոկորդը։ Ճրագը հանգցրած է, ամէն ինչ կորել է խաւարի մէջ, բայց խեղդվողը գիտէ թէ ով է իրան սպանում։ Հինգ երկար մատներ, ոսկորների հինգ շարաններ, սեղմում են սարսափելի ոյժով... Անուշն է... Նա այժմ չէ խնայում, բայց լուռ է, այլ ևս պատան չէ ուզում... Գետի ձորից այլ ևս ձայներ չեն գալիս, պատի ծակերում չէ լսվում չարագուշակ փսփսոցը. «Ի՞նչ արիր»...

Պառաւը գալարվում է, պառաւը չէ դիմադրում... Հինգ մատները խրվել են նրա մէջ, խեղդում են, խեղդում... Դուրս թռաւ վերջին խռռոցը... Անուշը կորաւ...

Բայց չանցած՝ տնակից դուրս գնաց մի մարդ և հեռացաւ դանդաղ քայլերով։

Է

Աղէտի առաջն առնել անհնարին էր. պէտք էր գոհ լինել գոնէ նրանով, որ գտնվեց միջին ճանապարհը։ Աղէտը յետաձգվեց առժամանակ, բայց որպիսի դժուարութեամբ։

Դիզակի տէրը վերադառնում էր Աւետարանոցից և շարունակ քննում էր այն հարցը՝ թէ կա՞ր մի ուրիշ ելք։

Կէս գիշերից անց, հազիւ վերջացաւ ընտանեկան խորհուրդը, որ տեղի ունէր մելիքի, նրա կնոջ և կոյս Հեղինէի մէջ։ Վերջինս անողոք ու յամառ էր իր դիմադրութեան մէջ. նա գործ դրեց իր ամբողջ խելքը, ամբողջ իմաստութիւնը և շատ պարզ, պերճախօս հաստատութիւններով ապացուցանում էր, որ ամբողջ երկիրը կանգնած է կորստի առաջ, որ անխելքութիւնը ամենքին մղում է դէպի անդունդ։

Նկարագրելով իրերի դրութիւնը, նա միայն մի ճանապարհ ցոյց տուեց—ապրելու ճանապարհը, որ հարթված կը լինի ամենքի համար, եթէ այժմ ձեռք վերցնեն ամեն ինչից և դիմեն աղաչանքներին։ Նա հաշտութիւն չէր պահանջում, այլ կատարեալ հնազանդութիւն։

Մի պայման կարող է լինել—խոնարհվել, վիզ ծկել. այդ ժամանակ կը դադարեն հարուածները։ Իսկ մելիքի տունը աղէտներից ազատելու համար պէտք է դիմել զոհաբերութեան։ Աշխարհի կարգը վերացնողը—լինի դա մի մարդ թէ մի ամբողջ երկիր—անպատիժ չի մնայ. կարգ է, որ իշխանական տունը, երբ ուրիշ միջոցներ չեն մնում, պիտի պահպանէ իրան՝ մեծ փրկանքներ տալով։ Անկարելի է, որ ընդհանուր թշուառութեան ժամանակ իշխանն ու հպատակը մի և նոյն դրութեան մէջ լինեն. երկրորդը միշտ պիտի զոհվի առաջինի համար։

Այսպիսի կարգ դնողները երեխաներ չէին։ Նրանք

լաւ հասկանում էին, որ ժողովուրդը իշխանի համար է, իսկ իշխանը—Աստուծու համար։ Իշխանը շինում է Աստուծու տները. իշխանը բարեպաշտութեան օրինակ է ամենքի համար. Նրա կայքը Աստուծու կայքն է եղել։ Չը լինի իշխանը, չէ կարող լինել եկեղեցին բարեկարգ, լուսաւոր դրութեան մէջ։ Իսկ առանց եկեղեցու թող չը լինի երկիրը։

Ահա այդ պատճառով է, որ եկեղեցու խոնարհ, մեղաւոր սպասաւորը դատապարտում է մարդկանց անմըտութիւնը, դատապարտում է ամեն մի յանդուգն գործ, որ անօգուտ է, միայն աղէտների դուռ բաց կանէ։ Ո՛չ, այս երկիրը ուրիշ ցաւ չունի. աղաչանքներով կարող է ձեռք բերել խաղաղութիւնը, իսկ ամեն մի դժուար դէպքում նրան կօգնէ փրկանքը, որքան էլ ծանր լինի նա։ Պէտք է տալ անօրէններին այն ամենը, ինչ կարելի է տալ։ Գայիանէի մասին ուրիշ հարց չէ կարող լինել. պէտք է խօսել բէկի հետ, իմանալ թէ ինչ գնով նա յետ կը կանգնէ իր պահանջից. մի՞թէ չը կան ուրիշ աղջիկներ, մի՞թէ ոչ մի հարստութիւն չի փոխարինի մելիքի աղջկան։

Խնայել կամ սակարկութիւն անել չէ կարելի. տալ և պրծնել։ Չը պէտք է մոռանալ, որ Գայիանէի հետ թուրք բէկին կը տան և մելիքի տունը։ Յայտնի է թէ որքան անպիտան թուրք է Սուլէյման-բէկը. դառնալով մելիքի տան տէրը, նա իր ատելութիւնը կը թափէ եկեղեցու վրա և ամենից առաջ, ի հարկէ, կուսանոցի վրա, որ մելիքի տան տուրքերով է շինված և պահվում է նրա խնամքով։

Ամեն անգամ, երբ աշխարհը թաղվել է դառն վըշտերի մէջ, եկեղեցին է եղել, որ սփոփել է, ճանապարհ ցոյց տուել։ Բայց այս անգամ անտես են անում եկեղեցու ձայնը, որ խաղաղութիւն է քարոզում։ Խաղաղութիւնը, այո, խոնարհութիւն է պահանջում, և ով ուզում է խաղաղ լինել, նա պիտի ծռած պահէ իր վիզը։ Եկե-

ղեցին ամեն օր երանի է տալիս այդպիսիներին։ Բայց չեն հասկանում թէ ինչ բան է եկեղեցու երանին. անխելքութիւնը տանում է ամենքին դէպի անելի անդունդ։

Մելիք-Աւանը մաքառեց այդ մտքերի դէմ, մաքառեց մենակ, որովհետև Աննա-խաթունն էլ կոյսի կողմն էր. բայց աջողութիւն չունեցաւ։

Նա, ի հարկէ, չէր կարող այդ երկու կանանց առաջ բաց անել իր մտքերը, իր անկալութիւնները, որոնք թաքուն էին և թաքուն էլ մնացին։ Նա միայն դիմադրեց, աչքի առաջ ունենալով այն, որ այժմ չէր կարելի խօսել ոչ կռւի, ոչ հաշտութեան և ոչ էլ կատարեալ հնազանդութեան մասին։ Ժամանակ էր հարկաւոր, որ ցոյց տար թէ դրանցից որն է անխուսափելին։

Երբ կը գայ այդ ժամանակը, մելիքը, ի հարկէ, կառնէ իր վերջին խօսքը, ընտրելով երեք դրութիւններից մէկը,—այնպիսին, որ արժանի կը լինէր իր պատւին և անուան։ Իսկ այժմ... Գայիանէի ասածների մէջ միայն մի բան էր ճիշդ, դրական. պէտք է ժամանակ վաստակել, իսկ դրա համար մեղք չէր և խաբելը։ Եւ մելիքը կանգ առաւ այդ մտքի վրա, չընայելով Հեղինէի դիմադրութեան։

Միջին ճանապարհը, որ յետաձգում էր աղէտը, Սուլէյման-բէկի հետ մի կեղծ, առերես համաձայնութիւն կայացնելն էր։ Աղջկայ մայրը, քեռին, այո, համաձայն են, տալիս են Գայիանէին, բայց ոչ իսկոյն և եթ, ոչ թէ տեղի տալով բռնութեան, այլ իրանց յօժար կամքով, բացարձակ, ինչպէս օրէնք է աշխարհի համար։ Բէկը պիտի սպասէ, մինչև որ մելիքի տունը կը պատրաստվի. հարսանիքի ծէսերից ոչ մէկն էլ չը պիտի անտես առնվի. աղջկայ ծնողը պիտի հարսանիք կատարէ, ինչպէս սահմանել է քրիստոնէի եկեղեցին. դրանից յետոյ միայն բէկը կարող է տանել իր հարսին։

—Այսպէս կարելի է ձգձգել գործը, մինչև...

—Մինչև երբ, հարցրեց Հեղինէն, տեսնելով որ

մելիքը չը կարողացաւ շարունակել։

—Չը գիտեմ, պատասխանեց նա մի րոպէ լուռ մնալուց յետոյ.—գուցէ մինչև վաղը, միւս օրը, մինչև մի շաբաթ, մի ամիս... Չը գիտեմ, բայց այժմ ոչինչ որոշել չէ կարելի, այժմ պէտք է օրեր վաստակել։

Կոյսը վճռական և կտրուկ կերպով յայտնեց, որ եկեղեցին չը կայ գործողութեան այդ տեսակի մէջ և վերապահում է իր ազատութիւնը։ Եկեղեցին գիտէ, որ վաղ թէ ուշ պիտի գայ աղաչելու ժամանակը և ահա այն միջոցին էլ նա կը կատարէ իր գործը...

Եկեղեցին վերջնականապէս հրաժարվում էր երկրի իշխանական տանից։ Աննա-խաթունի համար դա մի շատ ծանր հարուած էր։

—Մի՞թէ ճիշդ չէր նրա ասածը, հարցրեց նա, երբ կոյսը հեռացաւ։—Մենք աղջկան մեր ձեռքով ենք տալիս և այնուհետև չենք կարող յետ խլել...

—Մենք չենք տալիս, այլ քնացնում ենք։

—Բայց առաջ այդպէս չէիր խօսում։

—Առաջ ես էլ հաւատում էի, որ քո աղջիկը պիտի խայտառակէ մեզ։ Բայց դա սուտ է, մարդիկ բամբասում են, Աննա։ Դու շուտ կը հաշտվես գերեզմանի հետ, այնպէս չէ՞...

—Այո, հազար երանի գերեզմանին...

—Ես էլ մի և նոյնն եմ ասում։ Այժմ ես բոլորովին ապահով եմ այդ կողմից. երեխան լաւ պատրաստված է գերեզմանի համար։ Դու էլ հաւատայիր, Աննա, ես ինքս տեսայ. դա հաստատ բան է։

Նա երկու խօսքով պատմեց իր տեսածն ու լսածը, զանց առնելով մանրամասնութիւնները. խիստ պատուիրեց, որ այդ մասին ոչ ոքի ոչինչ չասէ, նոյն իսկ Գայիանէին։

—Դու կը փչացնես ամէն ինչ, ասաց մելիքը։—Չը կարծես թէ ես հաւատում եմ երեխայի գործին... Ո՛չ, երեխաներին չէ տուած աշխարհ կառավարելը։ Բայց ես

յոյս ունեմ, որ մինչև այդ մի գործ էլ ինքս կը սկսեմ։ Աստուած ողորմած է, ո՞վ գիտէ ինչ կարող է պատահել վաղը։ Ի՛նչ որ էլ լինի, ապահո՛վ եղիր, որ նա մեզ չի խայտառակի։

Աննա-խաթունը հանգստացաւ։ Եւ Հեղինէն էլ կը լռէր, եթէ միւս օրը մտնէր մելիքի տունը։

Առաւօտեան եկաւ Սուլէյման-բէկը և պահանջեց աղջկան։ Մելիք-Աւանն արդէն գիտէր թէ ինչ սարսափելի կրքեր են վառված Թիւրքի մէջ, բայց և այնպէս, չէր սպասում թէ նա այնքան յանդուգն կը լինի այստեղ, Վարանդայի իշխանի տանը։ Նա կտրական կերպով յայտարարեց որ Գայիանէն իրան է պատկանում, թէկուզ ամբողջ աշխարհը տակն ու վրա դառնայ։

Անագոք գազանը իրան վայել կատաղի համարձակութեամբ թաթը դրել էր որսի վրա և ասում էր. «Իմն է, միայն ես պիտի վայելեմ»։ Նրա ահարկու աչքերը չէին թագցնում, որ այդ որսը նրան հանգստութիւն չէ տալիս։ Ի՞նչ փոխարինութիւն, ինչ փրկանք կարող էին ընդունել այդ կրքերը։ Զուր են կարծում թէ գազանը անսիրտ է լինում։ Բէկն ուղղակի ասաց, որ Գայիանէն իր ամենասիրելի կինը կը լինի։ Որսը լաւ էր շղթայել գազանին։ Աւելի լաւ, եթէ այդպէս է. աւելի լաւ որսի համար, որ այնպիսի մտքեր ունէր։

Մելիք-Աւանը միանգամայն գոհ էր. զսպեց իր բնածին հպարտութիւնը, տարաւ բոլոր վիրաւորանքները, սառնասրտութեամբ նայեց իր ոխերիմ թշնամուն, ինչպէս սովոր էր նայել նրանից մեծին, Մուստաֆա-փաշային։

Այդ մարդը, որ այնքան լաւ գիտէր թագցնել ներքին զգացմունքները արտաքին անխռով տեսքի տակ, սկսեց պարզ ու հանգիստ կերպով խօսել իր և իր քրոջ համաձայնութեան մասին։ Եթէ Մելիք-Յուսէինի աղջկայ ճակատին այդ ամուսնութիւնն է գրված, ո՞վ պիտի արգելէ Աստուծու այդ հրամանը։ Թո՛ղ կատարվի բէկի կամ-

քը, եթէ միայն երկու կողմերի մէջ դրանով բարեկամութիւն պիտի հաստատուի։

Բարեկամութիւն, և ուրեմն ոչ մի կողմից բռնութիւն, հակառակութիւն չը պիտի լինի։ Սա այդ ամուսնութեան առաջին պայմանն է։ Մէլիքը յայտնեց և միւս պայմանները, հաստատեց, որ դրանք շատ բնական են, շատ էլ հասարակ։ Նրա նուրբ միտքը ճարտարութեամբ գործեց. բանակցութիւնը կարճ էր և յաղթական. գազանը ջուխտ ոտներով ընկնում էր թակարդի մէջ...

Մէլիք-Ասլանն, ի հարկէ, չը գիտէր, բայց այդ րոպէին նրա հակառակորդի ականջներում հնչում էր Ֆէհմի-փաշայի ձայնը. «Քնացրու, որդի, քնացրու»։ Սրանից էլ լաւ միջոց... Մի թեթև զիջողութիւն էր պահանջվում. անհաւատ շները բարեկամութիւն էին խնդրում, մի բան, որ կատարելապէս համապատասխանում էր Մուստաֆա-փաշայի դիտաւորութիւններին։ Ինչու չը խաբել դիմացինին, որ այնքան անխելք է։ Բէկն սկսեց իր կողմից էլ հաստատել, որ լաւ է բարեկամութիւնը։ Նա ինքը կարող էր քարուքանդ անել մէլիքի տունը, բայց չարասիրուն աղջկայ պատճառով։ Նա համաձայն է, բայց խօսք ունի միայն ժամանակի մասին։

—Մինչև գարուն ես չեմ սպասի, ասաց նա։

Բայց մէլիքը դրական խօսք չէր տալիս. նա աշխատում էր ժամանակն անորոշ թողնել, և աջողութիւն չունեցաւ։ Բէկը ձեռք չէր վերցնում իր պահանջից։

—Արժէ՞ երկար խօսել այդ մասին, բէկ, հարցրեց մէլիքը։—Դեռ ամիսներ կան, հեշտ է, կը տեսնենք...

Այդ խօսքերով նա վերջ տուեց խնամախօսութեան։ Միջին ճանապարհը բացված էր. նորափեսան գնաց, համաձայնվելով, որ իրաւ, այդ հարցն էլ հեշտ կարելի է լուծել։

Այնուհետև մէլիքը երկար խօսում էր Աննա-խաթունին և Գայիանէին։ Ամեն ինչ այժմ այդ երկուսի ձեռքումն էր։ Գիտէ՞ն նրանք թէ ինչպէս են գաղտնի

փաթաթուած ցանցերի մէջ, յիշում են հէքեաթի երեխային, որ քնացնում էր ամեհի վիշապին։ Այս տան մէջ օր ու գիշեր ուրիշ միտք չը պիտի լինի։ Զգուշութիւն, գաղտնապահութիւն...

Նա գնաց, վստահ լինելով, որ աղջիկը կառաջնորդէ մօրը։ Գայիանէն գոհ էր և հանգիստ. նա լաւ գիտէր իր գործը և հետզհետէ կը փարատէր մօր տարակուսանքները։

Գիւղում արդէն գիտէին, որ Մէլիք-Ասլանը իր ձեռքով իր քրոջ աղջկան տուեց Սուլէյման-բէկին։ Եւ մէլիքը ամենևին չուզեց ծածկել, որ, այո, այդպէս է արել ինքը։ Նա յայտնեց մարդկանց այդ «ուրախալի» լուրը, «աչքալուսանք» տուեց և աւելացրեց, որ այսուհետև ամենքն ուրախ պիտի լինեն։

Նրան պատասխանում էին հեգնական ժպիտներով. ոչ ոք, ի հարկէ, չէր համարձակվի ասել թէ դա ուրախալի բան չէ. բայց հաւանութեան խօսքերի մէջ անգամ ո՜րքան դառնութիւն կար... Մէլիքն ուշադրութիւն չը դարձրեց ծաղրի վրա և պարզ երեսով հեռացաւ գիւղից։ Մի՞թէ ուրիշ ելք կար, հարցնում էր նա ինքն իրան։

Ո՛չ, միայն այս միջին ճանապարհն էր, որ ուղիղ էր ու լայն։ Նա տանում էր դէպի ձմեռվայ վերջը։ Այնտեղ նա վերջանում էր և այնուհետև գարուն էր... Ի՞նչ կը լինի, երբ ձնծաղիկը կը նայէ թփերի տակից, երբ կը գան ծիծեռնակները և կորոնեն իրանց հին բոյները։

Գարո՜ւն... Բէկն անգիտակցաբար կրկնում էր այդ անունը, չը հասկանալով, ի հարկէ, որ մէլիքն սպասում է գարնան այնպէս, ինչպէս երեխան սպասում է կարմիր ձուին։

Ո՞ւր է այժմ Ասլանը։ Նա աջողութիւն չի ունենայ այս անգամ էլ. և այն ժամանակ... ծիծեռնակների, մաշահաւերի երգերով լցված կը լինեն ձորերը, իսկ մէլիքը կարտասանէ իր վերջին, սարսափելի խօսքը։ Օգնութիւն չեկաւ, թող բացվեն գերեզմանները։ Հողի տակ շատերը կան, որոնք ընկել են անհաւասար կռւի մէջ. թող նր-

բանք իմանան, որ անհաւասար կռիւը հասցրեց վերջին, և վերջը կատարեալ եղաւ...

Բայց մինչև ծիծեռնակները ժամանակ կայ, և ով գիտէ... աշխարհը անակնկալ բաների ասպարէզ է։ Ո՞վ էր սպասում թէ օսմանցիները կը յաղթեն Ղարաբաղը և ով էր սպասում թէ այս երկիրը յանկարծ այսքան մոռացված, անօգնական կը մնայ։ Ո՞վ կը կարծէր թէ աղէտները լրացնելու համար կը մեռնէր Մէլիք-Յուսէփը և մանաւանդ ով կը կարծէր թէ այժմեան մեծ աղէտի ժամանակ նրա աղջիկը փոքրիկ խէնջար կը պահէ իր ծոցում...

Երեխան կանէ, ինչ ասում է. անհնարին է որ այդպիսի սուրբ եռանդով, այդ աստիճան վառ հաւատով սկսած գործն անաջող լինի։ Երեխաները ոտքի են կանգնում. միթէ դա նշան չէ, որ նրանց արդար հոգիները տեսնում են գալոց օրերը և զգում են, որ ծիծեռնակների հետ կը գայ և օգնութիւնը... Ո՛չ, ամենալաւը այս միջին ճանապարհն էր...

Ապագան անյոյս էր, մութ. այս մտքերի մէջ թաղված մէլիքին ոգևորում, սիրտ էր տալիս այն ճանապարհը, որ տանում էր դէպի այդ ապագան։ Նա չը նկատեց, որ մի մարդ դուրս եկաւ իր առաջ և ուշադրութիւն դարձրեց այն ժամանակ, երբ այդ մարդը տուեց իր անունը։ Առանց մի խօսք ասելու, նա իսկոյն դուրս եկաւ ճանապարհից և իր ձին քշեց դէպի ձիւնապատ բլուրները։

Նա գնում էր Մանասին տեսնելու։

Երէկ խմբի մարդկանցից մէկը դուրս էր կանչել նըրան մէլիքի տանից և յայտնել էր թէ ինչ է ուզում անել Մանասը։ Դիզակի տէրը բոլորովին հակառակ էր այդ մտքին, բայց ոչինչ չասելով, տեսակցութիւն էր նշանակել այսօր ճանապարհին, այն ժամանակ, երբ ինքը կը վերադառնար Աւետարանոցից։ Մանասն սպասում էր առաւօտից։ Եւ մէլիքն շտապում էր նրան հասկացնելու, որ այժմ վնասակար է ամէն մի աղմուկ, ամէն մի խռովութիւն։

Երկրի համար պահանջվում է խաղաղութիւն. Թըշնամիները պիտի քնեն, ինչ խելք է այժմ, ձմեռվայ մէջ, զարթեցնել նրանց։ Եւ վերջապէս այն գործը, որ վերջացաւ այսօր առաւօտ... Մանասի կողմից մի մեծ յիմարութիւն կը լինի խանգարել այդ գործը հէնց սկզբում։ Եւ մէլիքն շտապեցնում էր իր ձիուն, որ ժամ առաջ հասկացնէ Մանասին թէ որքան կարևոր է Սիւլէյման-բէկի անվրդով քունը։

Ը

Բռնաւորի քնի մասին էր մտածում և Քէօսա-Մուխտարը, երբ խոնարհ երկրպագութիւններ անելով ներս մտաւ, մատուցեց իր շնորհաւորութիւնները և յայտնեց իր ուրախութիւնը։ Այդ ուրախութիւնը կեղծ չէր։ Բէկը բարեհաճութեամբ վերաբերվեց նրան և այդքանն էլ բաւական էր։ Մուրադ-աղայի գործակատարը հեռացաւ, աւելի ևս համոզված՝ որ սիրիացին հաստատվելու է։

Նրա հաստ շրթունքները ճանապարհին մի քանի անգամ արտասանեցին. «Ո՛վ արագ է գործում, նա է վերցնում»։ Եւ իրաւ, եթէ Մէլիք-Աւանին հարկաւոր էր անորոշ ժամանակ վաստակել, Մուխտարի համար մի քանի ժամն էլ բաւական էր... Վտանգաւոր էր նրա ձեռնարկութիւնը, բայց աջողութիւնը կախված էր յանդըգնութեան չափից։ Առայժմ շատ լաւ էին գնում հանգամանքները։ Նա մի անգամ էլ համոզվեց այդ բանի մէջ, երբ հասնելով տուն, տեսաւ որ Նազլուն նոյն գըրգռված դրութեան մէջ է։ Եւ քիչ մնաց որ չը կարողանայ ծածկել իր ներքին բերկրանքը, երբ աղջիկը յարձակվեց նրա վրա ու արտասանեց նոյն անփոփոխ հարցը.

—Ո՞ւր է մայրս։

Ամբողջ գիշերը և առաւօտը նա հարցնում էր, հա-

ւատացնում, որ ուզում է տեսնել իր մօրը։ Բայց Մուխտարն ուշադրութիւն չէր դարձնում, իսկ մէկ-մէկ բերանի ծայրով ասում էր թէ Նազլուն մենակ չի անի այն, ինչ պահանջվում է։ Այս անգամ էլ նա կրկնեց նոյնը և աղջիկը էլի սկսեց հաւատացնել.

—Ես մենակ կանեմ, ես ինքս դուրս կը բերեմ բախտաւորին, ասում էր նա և արտասունք թափում։

Մուխտարն անողոք էր։ Նա սկզբից շատ լաւ էր ըմբռնել թէ ինչպէս կարելի է շահագործել որդիական սէրը, որ բորբոքված էր այդ խեղճի մէջ։ Եւ նա ջանք չէր խնայում, որ աւելի և աւելի բռնկվի այդ սէրը, հանդիպելով որքան կարելի է շատ դժուարութիւնների։

—Ո՞ւր է, ցո՛յց տուր, թո՛ղ մի անգամ էլ տեսնեմ. Թո՛յլ տուր որ նա համբուրէ ինձ...

Եւ մահիկ տալով արեգակին, նա աւելի խստութեամբ առաջ տարաւ իր պահանջը.

—Դեռ օր կայ, ինչպէս սպասեմ։ Ա՛հ, շուտ մըթնէր, շո՜ւտ... Այն ժամանակ ցոյց կը տաս, հա՛...

Մուխտարի դիւական ժպիտները նրան կատարելապէս ուժասպառ էին արել։ Խեղճը չէր էլ ենթադրում, որ այդ մարդը խաբում է իրան, չը գիտէր որ իր մայրը Աւետարանից չէ բերված։ Նա հաւատում էր, որ այստեղ կայ մի բաժանող պատ, կայ մի դուռ և եթէ նա բացվի, ինքն անարգել կընկնի իր մօր գիրկը։ Այդ պատը, այդ դուռն էր նա որոնում և չէր տեսնում... Իսկ Մուխտարը ծուատում էր նրա սիրտը իր ժպիտներով։

—Դու էլի նախկին դեն ես, գրո՜ղը տանէ քեզ, աղաղակեց Նազլուն.—դարձեալ քար, դարձեալ զզուելի... Բայց ես քեզ հարկաւոր պիտի լինեմ, հասկանո՞ւմ ես... Առանց դրան իմ մայրը չի ազատվի... Չէ՞ս հաւատում, որ ես մենակ կանեմ։ Սպասիր, ես իսկոյն կը գամ և կը հաւատացնեմ քեզ...

Եւ դուրս փախելով, գնաց դէպի աղբանոցը։

—Փէրին... Նա էր, որ կորցրեց Մուխտարի հա-

ւատը։ Ինչու այնպէս խօսեց, ինչու ասաց թէ ինքը չի թողնի... Հիմա չեն ցոյց տալիս, բայց նա այստեղ է, իմ մայրը։ Թող այժմ Փէրին գայ և հաւատացնէ Մուխտարին, որ Նազլուն, այո՛, կարող է մենակ կատարել... Ի՞նչ դժուար բան է բախտաւորին դուրս հանելը։ Բայց որ չեն հաւատում...

Այսպէս խօսելով ինքն իր հետ, նա մտաւ անակը։ Ամէն ինչ քարացել էր այդտեղ. ոչ ոք չէր շարժվում, ոչ ոք շունչ չէր քաշում։

Մինչև անգամ Մարթան... Նա կպել էր պատին և նայում էր նրան։ Նազլուն յետ քաշեց երեխային և յանկարծ մի զարհուրելի ճիչ արձակեց։ Նրա առաջ ընկած էր Փէրին խեղդված մարդու այլանդակ դէմքով. աչքերը չռած, ապխտակուցի վրա շուռ եկած, բերանը կիսաբաց, արիւնոտ լեզուն կախ ընկած...

—Փէրի, նորից աղաղակեց աղջիկը և սկսեց շարժել դիակը, կարծես ուզում էր զարթեցնել նրան։

Անկիւնում կուչ եկած պառաւը շարժվեց, հեկեկաց և ասաց, որ ինքը առաւօտեանից կանչում է Փէրին, բայց նա ձայն չէ հանում։

—Նա սպանված է, նրան խեղդել են, ասաց Նազլուն և լաց եղաւ։

Մարթան կարծես նոր հասկացաւ, որ դա Նազլուն է և շանթահարի պէս ընկաւ նրա գիրկը։ Բայց Նազլուն միայն խեղդվածին էր տեսնում։

—Ո՞վ արաւ, ինչու, կանչում էր նա։

Ոչ ոք պատասխան չը տուեց։ Մի կողմում պառաւը հանդարտ հեկեկում էր, իսկ միւս կողմին անկողինը, որի մէջ դրված էին հիւանդները, չը շարժվեց. Նա ամբողջովին մահվան անշարժութիւն էր... Այդ լռութիւնը, այդ դողացող երեխան և մանաւանդ այդ լեզուն, կախ ընկած, արիւնոտ լեզուն, կատաղութիւն էին թափում աղջկայ սիրտը։

—Ա՛խ, Փէրի, Փէրի, գոռաց նա մի զարհուրելի ձայ-

նով, և բարեբար արտասուքները ջրի պես ծլացին նրա աչքերից։

Վիշտը մոռացրեց օրը, սպասվող ուրախութիւնը, ամեն ինչ։ Իսկ երեխան կարծես ուզում էր ծակել այն կուրծքը, որին կպել էր։ Նա էլ լաց եղաւ, նա ուզում էր իր տատին...

—Տատիկ, վեր կաց, քաղցած եմ...

Նազլուն հաց տուեց և նա սկսեց կլանել ագահութեամբ, թացացնում էր պատառները իր արտասուքներով։ Նա ուտում էր և նայելով Նազլուին, հարցնում էր.

—Տատիկը շո՞ւտ վեր կը կենայ... Ես ամբողջ օրը հաց էի ուզում, բայց նա չէր լսում։ Ինչո՞ւ չէր լսում...

Խեղճը ոչինչ չէր հասկանում Նազլուի արտասուքներից. նա մեծացել էր լացի մէջ և այժմ, հէնց որ կշտացաւ, գործի գցեց իր փոքրիկ լեզուն։ Հարց ու փորձ էր անում տատի մասին, նեղանում, լաց էր լինում, երբ Նազլուն պատասխան չէր տալիս։ Ի՞նչպէս էր նայում դիակին. ուզում էր մոտենալ, բայց մի կերպ երկիւղ էր զգում, յետ էր քաշվում և սարսափով լի աչքերը դարձնում էր Նազլուի վրա, կարծես օգնութիւն էր խնդրում։

Այդ հարց ու փորձն ընդհատեց մի ձայն, որ յանկարծ լսվեց շեմքից.

—Ժամանակ է...

Նազլուն ցնցվեց։ Մուխտարն էր... Բայց նա չը վեր կացաւ, չը վազեց դէպի այն կողմը։ Արտասուքներից խեղդվող ձայնով, իբրև մի մարդ, որ ուզում է բաժանել վիշտը իր նման մի մարդու, թէև օտար մարդու հետ, նա ասաց.

—Փէրին խեղդել են... Ի՞նչ լաւ կնիկ էր... Ա՜հ, տես ինչ են արել։

Բայց Մուխտարը չը նայեց, այլ սառն եղանակով ասաց.

—Աւելի լաւ, քեզ չի խանգարի...

Յանդգնութիւնը կուրացրել էր մեծ գերեվաճառի վը-

ւխտ գործակատարին, և նա չը հասկացաւ թէ ինչ արաւ իր այդ խօսքերով։ Այնքան նա վստահ էր այդ աղջկայ վրա, որ համոզված էր թէ նրան էլ կուրախացնէ ամեն մի հանգամանք, որ նպաստում էր մէլիքի աղջկայ առեւանգման։ Ուստի մի առանձին բան չը համարեց այն, որ Նազլուն սաստիկ հարուածից շշկլվածի պէս թափ տուեց իր ուսերը, տեղից վեր թռաւ, մի կողմ գցեց Մարթային և, ուշադրութիւն չը դարձնելով նրա լացի վրա, վազեց դէպի շէմքը։

Նրա աչքերը լայն բացված էին, կարծես տրաքվում էին զարհուրանքից։

—Ի՞նչ ասացիր, աղաղակեց նա։

—Պառաւը քեզ չի խանգարի... Խեղդողը օգնել է քեզ...

—Դո՞ւ էիր, հա՞...

Այս հարցը դուրս թռաւ անգիտակցաբար. Նազլուն բնազդմամբ ճանաչեց յանցաւորին։

Բայց այդ րօպէին նա բացասական պատասխան էր սպասում. Մուխտարն այս երեկոյ սուրբ և անարատ պիտի լինէր։

Օրը վերջանում էր, և մի՞թէ Փէրիի սպանողի հետ պիտի մնայ Նազլուն... Մուխտարը երբէք չէր կարող մտածել թէ այս խելացնոր, կիսամերկ աղջկան մատչելի են այդ տեսակ հասկացողութիւններ... Նա, ընդհակառակն, ուզեց աւելի ես սիրտ տալ նրան և իր զզուելի ժպիտով հասկացրեց որ, այո, ճիշդ է...

—Ինչո՞ւ արիր...

Իսկոյն լսվեց սարսափելի պատասխանը.

—Որ դու տեսնես քո մօրը։ Ժամանակ է...

—Իմ մօրը... Սուտ ես ասում... Իմ մօր ազատութեան համար բաւական էր, որ լաց լինէին բախտաւորները։ Բայց Փէրին... Խեղճ էր, շատ խեղճ... Տեսնո՞ւմ ես այս տունը. տեսնո՞ւմ ես այս անկողինը... Իսկ այս երեխան...

—Դրան էլ տար հետդ։ Մելիքի աղջիկը որբերին շատ է սիրում և իսկոյն դուրս կը գայ, երբ դու իմաց կը տաս թէ քեզ հետ լացող երեխայ էլ կայ...

Նազլուն ճչաց և վազելով ընկաւ պառաւի կրծքին, այնտեղ խեղդեց իր վայրենի ոռնոցները...

Մուխտարը բռնեց նրա ձեռքից, վեր կացրեց և, տանելով դէպի դուրս, ասաց.

—Խենթութեան ժամանակ չէ... Նայիր, օրը մթնում է...

Եւ Նազլուն գլխի շարժմամբ հաստատեց, որ մթնում է. ապա երկար նայեց իրան տանջողին ու յանկարծ անսահման գգուանքով արտասանեց.

—Լաւ... Բայց գրողը կը տանէ քեզ հէնց այս գիշեր...

Բռնելով Մարթայի ձեռքից, նա գնաց։ Երեխան լաց էր լինում, անդադար պահանջում էր իր տատին։ Խեղճը դեռ այդպէս չէր դուրս եկել տանից. այժմ նրան տանում էր օտար մարդը, որ չունէր տատի քաղցր խօսքերը։

Գիւղի մէջ Մարթան սկսեց գոռալ, ընդդիմանալ. այլ ևս առաջ չէր գնում, իսկ Նազլուն զոռով քարշ էր տալիս նրան, որովհետև ուզում էր շուտ հեռանալ մարդկանցից։ Հակառակի պէս այսօր շատ են մարդիկ գիւղամիջում և ի հարկէ կը ծիծաղեն այս զգզված աղջկայ և այս նոր որբի վրա... Եւ նա բարկացած քաշում էր փոքրիկի թևից։ Բայց մի կին կանչեց.

—Խենթ, չե՞ս տեսնում որ երեխան բոբիկ է...

Այն ժամանակ նա յարձակվեց Մարթայի վրա, մի ակնթարթում գցեց նրան իր խուրջի մէջ և սկսեց համբոյրներ թափել նրա դէմքին, սկսեց մատաղ գնալ նրան։ Կանգ առնելով մի կտուրի ետևում, նա զգուշութեամբ սրբեց ձիւնը երեխայի ոտներից։ Նրա սիրտը պատռվում էր այդ անգթութիւնից. նա հեծեծում էր, միտը բերելով որ աղբանոցից մինչև այստեղ քարշ էր տուել երեխային ձիւների միջով։

Եւ նրա մէջ բռնկվեց գուրգուրելու մի կատաղի ցանկութիւն, արտասուքները հոսում էին նրա աչքերից, նա համբուրում էր այդ սառած ոտները, տաքացնում էր իր բերանի շունչով։ Բաւական չը համարելով այդքանը, նա պառկեցրեց նրան իր թևերի վրա և ոտները դրեց իր ծոցում... Ոչինչ ջանք նա չէր խնայում և հանգիստ շունչ քաշել սկսեց, երբ երեխան մի քիչ հանդարտուեց։

Այլ ևս ժամանակ չը կորցնելով, նա վազէվազ գնաց դէպի բարձր, մի շունչով հասաւ մելիքի տան դռներին։ Բայց մի վայրկեան անգամ կանգ չառաւ այդտեղ, ինչպէս պայմանաւորված էր։ Նա չը նայեց էլ, որ տեսնէ թէ ով կայ։ Բէօսա-Մուխտարը, որ արդէն դարան էր մտել մեծ քարի ետևում, ձեռքերով նշան արաւ, հանգարտ շուացրեց, բայց իզուր... Նազլուն հեւալով ներս վազեց, բարձրացաւ վերև։

Բաց անելով առաջին պատահած դուռը, նա, դեռ ոչ ոքին չը տեսած, սկսեց խօսել.

—Ասում են որ շատ ես սիրում որբերին... Ահա մէկը, սա նոր է, այսօր որբացաւ...

Երեխային զգուշութեամբ ներս տանելով, դրեց գորգի վրա, բարձրացրեց գլուխը և այդ ժամանակ տեսաւ Գայիանէին, որ նստած էր իր մօր և Մէհրիի մէջտեղ։ Ձեռքը մեկնելով դէպի նրան, Նազլուն դողացող ձայնով աւելացրեց.

—Փէրիին սպանեցին...

—Ի՞նչ ես ասում, գոչեց Գայիանէն և թռաւ դէպի երեխան։

Նազլուն յետ քաշվեց, կանգնեց դռան առաջ և մի խիստ ձայնով հրամայեց.

—Դուրս չը գնաս... Այնտեղ...

—Փէրի՛ին... Ա՛խ, Աստուած, ո՛վ սպանեց...

Այս անգամ Գայիանէի հարցը ուղղած էր Մարթային։ Բռնելով երեխայի ձեռքերից, նա նայեց նրա աչ-

քերի մէջ և հասկացաւ։ Թուխ, անմեղ աչքերում լճացած արտասունքը վկայում էր որ, այո, պատահել է մի սարսափելի բան։

—Ճշմարիտ է, մայր, ասաց Գայիանէն, տանելով երեխային իր մօր մօտ։—Տեսնո՞ւմ ես… Խեղճ Փէրի, խեղճ…

Բայց Մարթան լաց եղաւ։ Երեք հոգին չը կարողացան զբաւել նրան. և դուրս պրծնելով Գայիանէի ձեռքից, նա լեղապատառ բղաւեց և վազեց դէպի Նազլուն, որ իսկոյն գրկեց նրան։

—Եւ ո՞վ պիտի անէր այդ բանը, հարցրեց Աննախաթունը.—մի՞թէ այդ խեղճն էլ ունէր թշնամի…

—Այո, խեղճ էր, ոչ ոքին վատութիւն անել չէր կարող, կրկնեց Գայիանէն։—Ո՞ր անխիղճը…

—Նա սպանվեց քեզ համար, բախտաւոր, յանկարծ ասաց Նազլուն։

—Բայց ո՞վ սպանեց, ինչպէս…

—Դժուար չէր. խեղճը—դա մի ծիտ է. կը մեռնէ, և ո՞վ է հարցնողը թէ ինչ էր նա։ Ձեզ պէս չէ խեղճը…

—Դու էլի եկար մեզ անարգելո՞ւ, բարկացաւ Աննա-խաթունը։

—Ո՛չ, դա աւելորդ է։ Բոլոր խեղճերը ձեզ համար են ստեղծված. ես նոր հասկացայ, որ այդպէս է ու եկայ լաւութիւն անելու…

—Մեզ հարկաւոր չէ քո լաւութիւնը, մենք բախտաւոր չենք…

Պայքարը խիստ կերպարանք էր ընդունում։ Բայց Գայիանէն մէջ մտաւ, խնդրեց իր մօրը որ չը խօսէ, և բռնելով Նազլուի ձեռքից, տարաւ նրան ու երեխային իր սենեակը։ Այդտեղ նա հարցրեց.

—Հիմա՞ էլ եմ ես բախտաւոր…

—Փէրին քեզ համար սպանվեց, հեծեծաց աղջիկը։

—Ա՞յդ է իմ բախտը… Փէրին ինձանից լաւ էր. երանի՜ նրան, մխիթարում էր թշուառներին։ Ի՞նչ կը լի-

նէիր դու, եթէ չը գտնէիր նրան։ Խեղճ Փէրի… Իմ սիրտըն էլ է նա հովացրել…

Նազլուն երեխայի պէս հրճուեց այդ խօսքերից։ Ձեռքը դնելով Մարթայի գլխին, նա ծիծաղկոտ հայեացք գցեց մէլիքի աղջկայ վրա և ասաց.

—Լա՛ւ թաղիր նրան, դու հարուստ ես… Նա արժանի է… Օ՛, ես շատ լաց կը լինեմ… Հէնց հիմա մարդ ուղարկիր։

—Պէտք է ուղարկել։ Այնտեղ հիւանդներ էլ կային…

—Նրանց անկողինը, թէ այս պատը… ոչ ոք չէր շարժվում…

—Մեռե՜լ են… Տէր Աստուած, որքա՜ն ծաղիկներ գնացին այս ձմեռ… Եւ Փէրին չը կայ, ո՞վ լաց կը լինի խեղճերի վրա։

Գայիանէի աչքերից երկու կաթիլ արտասունք ընկան։ Նազլուն ցած դրեց Մարթային և մօտենալով մէլիքի աղջկան, ասաց.

—Օ՛, դու ուրիշ կերպ ես խօսում… Դո՞ւ չես թիւրքի կինը…

—Մենք ամենքս, մի հաստատ ձայնով պատասխանեց Գայիանէն.—այստեղ աղջիկ չը կայ, որ թիւրքի կին չը լինի… Միայն դու ես…

Նրան ընդհատեց աղջկայ կոպիտ ոռնոցը։

—Ե՛ս, բացականչեց նա։—Ե՛ս…

—Գիտենք, Նա՛զլու, ամենքս գիտենք. և ո՜րքան լաց եղանք քեզ համար։ Եթէ տեսնէի՜ր…

—Ի՞նձ համար…

—Քեզ համար. դու մեր քոյրն ես…

—Հիմա էլ դու ես խենթացել, մէլիքի՛ աղջիկ…

—Ի՞նչպէս։

—Ասա՛ այդ խօսքերը մարդկանց մէջ. ասա՛ որ դու իմ քոյրն ես կամ ես եմ քո քոյրը… Ո՞վ կը հաւատայ։ Օ՛, դու խենթ ես…

—Մարդկանց կարծիքը մեզ համար ոչինչ է։ Թո՛ղ

ինչ ուզում են՝ անեն։ Մենք...

Նա բռնեց Նազլուի ձեռքը, հանգարտ մոտեցրեց փոքրիկ պահարանին։ Յետ ձգելով չթի վարագոյրը, նա մատով ցոյց տուեց մետաքսէ թաշկինակների վրա դրած գիրքը, որի կազմը զարդարված էր արծաթի խաչով։

—Սա Աւետարան է, ասաց նա։—Այստեղ կանգնել են շատ աղջիկներ. ով համբուրել է սուրբ գիրքը, նա քոյր է դարձել...

—Ամենքը համբուրեցին...

—Միայն Նազլուն էր մնում. նա թիւրքերի հետ էր...

—Եւ դուք լաց եղաք նրա համար...

—Շատ։

Նազլուն երկու ձեռքը ներս տարաւ, վերցրեց Աւետարանը և դողալով սեղմեց նրան իր կրծքին։ Ապա նայեց Գայիանէի հեզ, ուրախ դէմքին, ինքն էլ ուրախացաւ, ծիծաղեց, և յանկարծ, անսպասելի կերպով, գլուխը թեքեց դէպի սուրբ գիրքը, բայց մինչև նրա շրթունքները կը հասնէին, երկու խոշոր կաթիլ արտասունքներ ընկան արծաթապատ կազմի վրա...

—Դու մեր քոյրն ես, գոչեց Գայիանէն և պինդ գրկեց նրան։

Մի վայրկեան նրանք դողում էին միմեանց գրկում։ Նազլուն խուլ հեկեկանքներ էր արձակում։ Գայիանէն պինդ համբուրեց նրա ճակատը և ասաց.

—Լաց չը լինենք, քոյրիկ։ Հիմա ես կը պատմեմ քեզ ամեն ինչ...

—Ո՛չ, հարկաւոր չէ քո պատմութիւնը, ասաց Նազլուն, դուրս գալով նրա գրկից։—Ինձ տար քո մօր մօտ։

—Բայց ուր է Մարթան։

Նա քնած էր։ Երկու աղջիկները զգուշութեամբ ծածկեցին նրան ու դուրս գնացին։

Նազլուն չոքեց Աննա-խաթունի առաջ և արտասունքները կուլ տալով, ասաց.

—Ինձ մի՛ հայհոյիր, մեղքի կլին։ Ես ուզում էի ա-

զատել իմ մօրը։ Սամ, այժմ ձեր դռները պինդ փակված
են, չէ՞։ Դու ծիծաղո՞ւմ ես։ Ծիծաղի տեղ չէ. ասա ինձ՝
պինդ են դռները։

—Պինդ են, պինդ են, ասաց Աննա-խաթունը։

—Օ՜, այդ լաւ է։ Ամառը ես տեսայ ձեր պատերը,
քշո՞ւմ ես։ Այժմ էլ նրանք այնպէս են, այժմ էլ ձեր
տունը մի բերդ է։

—Այո, ոչինչ չէ փոխուել այն ժամանակից։

—Շատ լաւ, ես հիմա հանգիստ եմ։ Մեր գիւղի
տղամարդիկ ոչինչ են։ Եթէ լինէր մի հաստ սրտոտ մարդ,
այժմ կը գնար դուրս և կը տեսնէր ձեր դռների առաջ,
մեծ բարի եռում, մի զզուելի մարդ... Նա հիմա էլ
այնտեղ պիտի լինի. հիմա էլ, երևի, սատանայի աչքե-
րով նայում է ձեր դռներին և սպասում է... Ճանաչո՞ւմ
ես Բէօսա-Մուխտարին...

—Երանի քեզ որ չես տեսել, շարունակեց նա, երբ
Աննա-խաթունը գլխով բացասական նշան արաւ։—Հեռու
այստեղից, մի թուրքի գիւղի մէջ, նա մի մեծ տուն
ունի, որ լիքն է աղջիկներով և կանանցով։ Նա տարաւ
ինձ այնտեղ, բաց արաւ դուռը։ Իմ մօրը ես իսկոյն ճա-
նաչեցի. Նա ինձ համբուրեց, արտասունք թափեց. Նա
լիզում էր իմ երեսը. ինչ խօսքեր, ինչ կրակ...

Այդ յիշողութիւնն ընդհատեց պատմութիւնը։ Բայց
Նազլուն շուտ զսպեց իրան և շարունակեց.

—Մուխտարն էլի դուրս հանեց ինձ, էլի փակեց
դուռը և ասաց. «Տեսնո՞ւմ ես, ես քո մօրը քեզ կը տամ,
եթէ մի փոքրիկ բան կատարես ինձ համար»։ Եւ պատ-
մեց թէ ինչ է ուզում։ Գերիների կարաւանը նա պիտի
ուղարկէր Ստամբուլ, բայց ուզում էր, որ այդ կարա-
ւանի գլխին կանգնած լինէր Վարանդայի ամենագեղեցիկ
աղջիկը, այսինքն քո աղջիկը... Սուլէյման-բէկին նա
արհամարհում էր և յոյս ունէր, որ նրա ճանկերից կը
խլէր սիրուն աղջկան։ Փէրին և ես պիտի գայինք ձեր
դռների մօտ, պիտի դուրս կանչէինք քո աղջկան։ Այ-

նուհետև Մուխտարը գիտէր թէ ինչ կանէր։ Ես գնացի Փէրիի մօտ և աղաչեցի, որ ինձ օգնէ։ Ես գիտէի որ մինչև բախտաւորները, այսինքն դուք, լաց չը լինէք, իմ մայրը չի ազատվի։ Փէրին ընդդիմացաւ և նրան խեղդեցին գիշերը։ Ես լաց էի լինում նրա դիակի վրա, չը գիտէի թէ ինչպէս հանգստացնեմ նրա փոքրիկ որբին, երբ եկաւ Մուխտարը։ Ժամանակ էր... Այս երեկոյ պիտի փախցնէին քո աղջկան և ինձ պիտի գցէին իմ մօր գիրկը...

—Այս երեկո՞յ, բացականչեց Աննա-խաթունը, ծընկները ծեծելով։

—Թո՛ղ պատմեմ, մէլիքի կին, ինձ մի՛ ընդհատիր... Մուխտարը բաց արաւ իմ աչքերը։ Նրա ձեռքերը արիւնոտ էին, իսկ ես թէև խեղճ ու կորած աղջիկ եմ, բայց հոգի ունեմ, որ պիտի տամ Աստուծուն... Ես իմացայ որ Մուխտարն է սպանել Փէրիին...

—Ինչո՞ւ...

—Որովհետև Փէրին սաստիկ ընդդիմացաւ նրան և յայտնեց, որ ինձ էլ չի թողնի ազատել իմ մօրը. նա պիտի մահ գար իմ ետևից, պիտի բռնէր իմ ձեռքը և յետ քաշէր...

—Խե՜ղճ Փէրի... Եւ մենք նրան մի առանձին լաւութիւն էլ չենք արել...

—Նրան երկու բուռը ոսկի առաջարկեցին, բայց նա դրանից աւելի ես կատաղեց։ Այժմ Մուխտարը ապահով էր. նա պարզ ասաց ինձ, որ այժմ ես ազատ եմ, ոչ ոք ինձ չի խանգարի։ Բայց Փէրին խանգարող չէր. նա խեղճ էր, արդար։ Նրա հոգին դեռ չէր գնացել երկինք և հասկացնում էր ինձ թէ ինչ պիտի անեմ։ Մարթան ոտաբոբիկ, ձիւների մէջ... Ո՞վ պիտի վրէժ հանէր, ո՞վ պիտի պատժէր մարդասպանին։—Ես, միայն ես... Փէրին մի ուրիշ սրտացաւ բարեկամ չունէր... Եւ ես եկայ, բայց այստեղ եմ, իսկ նա սպասում է դրսում... Դռները պինդ փակեցէք. նա դև է, ներս կը մտնի, և

այն ժամանակ անբախտ Փէրին չի հանգստանայ գերեզմանում...

—Ողորմած Աստուած, այս անգամ էլ խղճացիր մեզ, աղաղակեց Աննա-խաթունը և էլի սկսեց խփել իր ծնկներին։

—Ես մեղաւո՞ր եմ, հարցրեց Նազլուն։—Ասացէք, մէլիքի կին. եթէ մեղաւոր է մի աղջիկ, որ իր մօրը ազատել էր ուզում, նա կը քաւէ իր մեղքը։ Ես գիտեմ սարսափելի բաներ։ Լսեցէք. գարնանը այստեղ մեծ կոտորած կը լինի...

—Այստեղ, մեր գիւղո՞ւմ, միաժամանակ հարցրին մայր ու աղջիկ։

—Երբ օսմանցու զօրքը կը վերադառնայ Պարսկաստանից, բէկը, ձեր փեսան, կը քանդէ ձեր տունը, Մէլիք-Ուսանի տունը... Մեծեր, մէլիքներ չեն մնայ Ղարաբաղում... Մուխտարը աչք է դրել Մէլիք-Ուսանի աղջիկների վրա էլ։ Նա պատմում էր Ահմէդին, իսկ այն ծեր շունը ծիծաղում էր...

—Քեզ մօ՞տ էր պատմում։

—Այո՛, ինչ կայ... Ամենքը ինձ խենթ էին անուանում... Խենթը, օ՜հ, ոչինչ չի հասկանայ և եթէ պատմէ էլ, ո՞վ նրան կը հաւատայ... Խենթ... Ինձ ուղարկիր Մէլիք-Ուսանի մօտ։ Այժմ մութ է, բայց առաւօտեան... Ես կը վազեմ, կը պատմեմ նրան... Ես շատ բան գիտեմ... Միայն մի բան եմ խնդրում, մէլիքի կին. ասա՛ քո եղբօրը, որ հաւատայ ինձ, ասա՛ որ խենթն էլ հասկանում է, և ինչպէս է հասկանում...

—Ոչ ոք չի համարձակվի քեզ խենթ անուանել, ասաց Գայիանէն։

—Դու խենթ չես, Նազլու, հաստատեց Աննա-խաթունը մի գորովալից ձայնով։—Այսօրվանից դու մեր բարերարն ես, խեղճ աղջիկ... Ես չեմ մոռանայ քո արածը...

Այդ խօսքերը աւելի սաստկացրին հոգեկան այն սաստիկ յուզմունքը, որ ցնցում էր Նազլուին ամբողջ

պատմութեան ժամանակ։ Յանկարծ նա լաց եղաւ մի զարհուրելի ձայնով և ասաց.

—Բայց իմ մայրը...

Գայիանէն չոքեց նրա կողքին, մի թևով գրկեց նրա պարանոցը և իր դէմքը մօտեցրեց նրա դէմքին։ Նա շընչում էր նրա ականջին գեղեցիկ խօսքեր, գուրգուրում էր, յոյսեր էր ներշնչում։ Նազլուն չէր լսում. յետ դարձնելով իր դէմքը, նա շրթունքները քսեց Գայիանէի թշերին և ասաց նուաղած ձայնով.

—Ինձ փակի՛ր, քոյրիկ... Պինդ փակիր, մի՛ թողնիր, որ այս գիշեր դուրս գամ... Նա այստեղ է... գիւղում... Մայրս...

Նա սաստիկ դողաց և կախ ընկաւ Գայիանէի թևի վրա։ Աննա-խաթունը բռնեց նրա ձեռքից և կանչեց.

—Ջո՛ւր...

Բայց Գայիանէն պինդ խառեց նրան և գլուխը կախ արաւ նրա դալկահար դէմքի վրա։ Նրա սուր շրթունքները դեռ մրմնջում էին.

—Մայր... Մէլիք-Աւան... Մէլիք...

Արտասուքները լճացան Գայիանէի աչքերում և գլորվեցին դէպի այդ բազմաչարչար դէմքը։

—Քո ցաւը ամենից մեծն է, խեղճ Նազլու, ասաց նա խորին լռութեան մէջ...

Թ

Խոստովանում եմ, ես բոլորովին նման էի այն հիւանդին, որ գիտէ թէ իր համար բժշկութիւն չը կայ, թէ մահն անխուսափելի է, բայց էլի յոյս ունի, որ հիւանդութիւնը մի կերպ, ինքն իրան, կանցնի...

Մի կերպ... Երկար տարածութիւններ անցայ, բայց չը տեսայ այդ կերպը, այդ կախարդական բալասանը։ Եւ ինչպէս տեսնեմ, երբ նա չը կայ, չէ կարող լինել։ Ես կանգ եմ առել ճանապարհի կէսում։ Թահմազը անցել է Խորասան, անդադար դէպի արևելք է շարժվում. այստեղ ասում են թէ Աւղանստանը

էլի կռիւ է ուզում. այստեղ հաւատացած են, որ Թահմազը էլի հրաշքներ կը գործէ... Ի՞նչ կասկած. բայց մեզ ինչ օգուտ։ Ղարաբաղից եկած օսմանեան զօրքերը կանգ են առել այս կողմերում. երէկ ես տեսայ նրանց ձիաների երամակները։ Թէհմի փաշան առաջ չէ գնում և հասկանալի է թէ ինչու.—առջևում ոչինչ գործ չը կայ։ Այստեղ խօսում են, որ զօրքերը պիտի... վերադառնան։ Ահա թէ ինչու կանգ առայ այս փոքրիկ գիւղում, որի բնակիչները շէն են և ամբողջ ժամանակ դողում են թիւրքերից...

Հաստատը, ի հարկէ, չը գիտեմ։ Վերադարձ... Սարսափելի չէ՞։ Բայց ես ծածկել չեմ կարող։ Յոյս ունեմ, որ Պօղոսը չորս օրում կը հասցնէ քեզ այս լուրը։ Նրան իսկոյն յետ ուղարկիր, որպէս զի ես շարունակեմ ճանապարհս։ Ո՞ւր,—այդ մի՛ հարցնիր։ Պարսկաստանը—մի անծայր անապատ է մեզ համար։ Բայց ես խօսք եմ տուել չափչփել այդ անապատը, և պիտի կատարեմ իմ խօսքը։ Ափսոսում եմ իմ ձիուն. բայց թող նա և նրա վրա նստածը անապատի թռչունների կերակուր դառնան, միայն թէ Մէլիք-Աւանը կարողանայ ամենայն վստահութեամբ ասել. «Ես փորձեցի բոլոր միջոցները»։ Անհամբեր սպասում եմ Պօղոսին...

Երկու օր ուշ ես ստանում այս նամակը։ Պատճառը ես եմ։ Սղնախ-Խաչի մօտից ես ծռեցի ճանապարհս։ Ուզում էի Ղարաբաղից հեռու տանել մի փոքրիկ մխիթարութիւն և գնացի տեսնելու Մանասի քաջերին։ Տեսայ... Համատարած խաւարի մէջ համեստ պսպղում է փոքրիկ կայծը։ Մեր լացերի, մեր անհուն ցաւերի մէջ այդ մի բուռն մարդիկն էին, որ հանդստացրին ինձ, հանդստացրին այն բոլորից յետոյ, որ ես տեսայ Սղնախ-Խաչի բակում և պարիսպներից դուրս։ Այո, ողորմած Աստուածը մեզ համար մխիթարութիւն պահել է. բայց այդ մի փոքրիկ կայծ է... Ի՞նչ կը լինի նրա վիճակը։ Արդեօք կո՞ւլ կը գնայ զզուելի աղջամուղջի մէջ, թէ՞ հարիւրաւոր խարոյկներ կը վառէ մեր սարերում... Մեզ մնում է հրաշքի սպասել։

Մէլիք-Աւանը երկրորդ անգամն էր կարդում Ալանի այս նամակը։

—Հրաշքն արդէն երևում է, ասաց նա ինքն իրան և յետ դառնալով, նայեց Պօղոսին, որ անշարժ սպասում էր շէմքի մօտ։

—Ե՞րբ տեղ կը հասնես, հարցրեց մէլիքը։

—Եթէ հրամայես գիշերն էլ գնալ,—երեք օրում կարելի է։

—Իսկոյն ճանապարհվիր և այդպէս էլ արա։ Ես էլ գնում եմ, բայց մինչև այն ժամանակ կը վերադառնամ... Նա ինձ հարկաւոր է։ Բարի ճանապարհ...

Պօղոսը չը շարժվեց, թէև մելիքը նորից նայեց նրան, գլուխը շարժեց և բարի ճանապարհ ցանկացաւ։

—Բայց ի՞նչ հրաման տանեմ, հարցրեց Ասլանի ծառան։

—Հա՛, ես քեզ չասացի. բայց մի՞թէ դու չը գիտես։

— Չը գիտեմ։

Մելիքը ծիծաղելով մօտեցաւ նրան և ձեռքը դնելով նրա ուսին, ասաց.

—Լսի՛ր։ Հէնց որ տեղ կը հասնես, թող Ասլանը նոյն րօպէին ձիու գլուխը դարձնէ դէպի մեզ։ Ասա, հարկաւոր չէ անապատները չափչփել։ Ես նրան սպասում եմ...

Պօղոսը գլխի շարժումով իմաց տուեց, որ հասկանում է և շտապով դուրս գնաց։

Կէս ժամից յետոյ Տողից հեռանում էր և Մելիք-Աւանը։ Հասնելով գետի մեծ ձորին, նա երեսին խաչ հանեց, աջողութիւն խնդրեց երկնքից և շարժեց ձիու սանձը։

—Հրաշքն արդէն երևում է, կրկնեց նա իր մտքում։—Ասլանը հաստատում է խենթ աղջկայ տեսածները։ Հրաշք է, ի հարկէ, որ մեզ քնից զարթեցնում են և ցոյց են տալիս մեզ համար պատրաստած զարհուրելի թակարդը։ Մենք քուն էինք, իսկ մեր թշնամիները սրում էին իրանց սրերը... Ա՜հ, հիմա մենք չենք քնի...

Նա տանում էր իր հետ մի հսկայական, մի յանդուգն միտք։

Այժմ օգնութեան աչք դնելը երեխայութիւն էր երևում։ Այժմ նա հասկանում էր, որ մինչև օտարը իր սրտի մէջ համակրութեան մի աննշան կաթիլ կը պատ-

րաստէ մի արնաքամ երկրի համար, վերջինս կարող է մի օրում զոհ գնալ մի ահռելի աղէտի, կարող է անսպասելի կերպով մի անծայր գերեզմանատուն դառնալ։

Ո՛չ, տիրողները իրանք են անխուսափելի դարձրել մի հարց՝ մեռնել կամ ապրել... Ապրելու համար կռիւ է հարկաւոր։ Եթէ անկարելի է դարձել բացարձակ կռուել, ճակատ ճակատի դէմ, մի՞թէ դա նշանակում է թէ նրանք, որոնք ապրել են ուզում, պիտի բոլորովին ձեռք վերցնեն կռուելու մտքից։ Ի հարկէ, ոչ։ Կայ մի այլ տեսակ կռիւ—թոյլերի, անօգնականների կռիւ։ Դա ատամներով, ճանկերով, թակարդներով կռուելն է, մի կռիւ, որ մղվում է գիշերները, ծածուկ ու անլոյս տեղերում, անակնկալ, խաբուսիկ միջոցներով։ Այդ տեսակ կռիւը անպատուաբեր է զօրեղների, մեծ միջոցներ ունեցողների, աշխարհակալների համար. բայց մարդիկ, որոնք ուզում են ապրուստ խլել իրանց վրա իջեցրած սրի բերանից, ուրիշ մի հնար չունեն...

Այդպիսի մի կռուի միտքն էր տանում մելիքը։

Նա գնում էր դէպի հիւսիս. նրա առաջ տարածված էին Ղարաբաղի հինգ մելիքութիւնները։ Արդեօք ամեն տեղ աջողութիւն կունենայ այդ միտքը։ Դա այնպիսի ծանր հարց էր, որ մելիքը երբեմն կանգնեցնում էր իր ձին, շունչ էր քաշում և նորից մի-մի քրքրում էր բոլոր նպաստաւոր և աննպաստ հանգամանքները։

Մի-մի գերակշիռ էին հանդիսանում աննպաստ պայմանները։ Վարանդան... Դարձեալ այդ անունն էր, որ անյաղթելի խոչընդոտի նման կանգնում էր նրա ձիու ոտների առաջ։ Այդտեղ գործը ահագին դժուարութիւններ էր ներկայացնում։

Սուլէյման-բէկը երեխայ չէր։ Եթէ նա հեշտութեամբ փակել էր աչքերը մի աղջկայ տիրանալու համար, միթէ դա նշանակում էր թէ նա խոր քնի մէջ թաղված պիտի մնայ մինչև այն ժամանակ, երբ պիտի սուր շողացնէր Դիզակում և Վարանդայում։ Նա քնացնում է

այժմ, բայց ինքն էլ կը ընի՞, որ չը տեսնէ թէ իր աչքի առաջ ինչ սպանդանոց է պատրաստվում... Ո՞վ պիտի կատարէ այս հրաշքը. մի՞թէ դարձեալ Վարանդայի աղջիկները . . .

Ոտնակոխ անելով բոլոր կասկածները, նա, իբրև մի մարդ, որ հաւատում է իր ոյժերին, գնաց խոչընդոտների առաջ։

Նա սկսեց ամենամեծ խոչընդոտից, Աւետարանոցից։

Մի ամբողջ երեկոյ առանձնացաւ իր քրոջ և Գայխանէի հետ, բացատրում էր բոլոր հանգամանքները։ Այժմ նա ոչինչ չը ծածկեց։ Պատմեց թէ ինչեր էր արել, ինչ յոյսեր ունէր և ինչպէս այժմ չքացան բոլոր յոյսերը։ Այժմ ընդհանուր գերեզման է բացվում. օտարը չէ գալիս, ազատողը պիտի լինեն ամենքը՝ մեծից սկսած մինչև օրօրոցի մանուկը։

Գայխանէն խնդրում է մի մեծ հարսանիք կատարել, կարծում է թէ միայն աղջիկներն են կարող ոչնչացնել տանջողներին։ Ինչո՞ւ միայն աղջիկները... Թող լինի այդ միտքը — արիւնահեղ հարսանիք. միակ յոյսը դա է։ Բայց հարսանիք կատարողները կը լինեն ամենքը, առանց հասակի և սեռի խտրութեան։

Հարսանիքը պիտի կատարվի միաժամանակ, ամեն տան մէջ։ Թող իւրաքանչիւրը պատրաստվի. թող հասկանայ որ իր անկոչ հիւրը իր դահն է և թող լաւ դիտէ իր դահին, իմանայ նրա բնաւորութիւնը, նրա թոյլ և ուժեղ կողմերը, սովորէ թէ ինչպէս կարող է սպանել . . .

Նա չը ծածկեց այդ յանդուգն գործի դժուարութիւնները։ Անաջողութեան դէպքում ամեն ինչ կորած է։ Աջողութիւնը գլխաւորապէս կախված է Վարանդայից. եթէ այստեղ դաւադրութիւնը գլուխ չեկաւ, մնացած չորս մելիքութիւնները կոչնչանան մի օրում։ Ղարաբաղը աչք է դրել Մելիք-Յուսէինի տան վրա, պատասխանատուութիւնը իր ամբողջ ծանրութեամբ ընկած

է մօր ու աղջկայ ուսերին։ Ուրիշ մարդ չը կայ, որ փոխարինէ երկուսին։

Հարկաւոր է հիմնաւոր պատրաստութիւն։ Համատարած, մեռելային լռութեան հովանու տակ մարդիկ պիտի պատրաստվեն աննկատելի կերպով։ Բէկին փաթաթել պարուրների մէջ, քնացնել և գործել. մի հատ անպատրաստ մարդ չը պիտի մնայ։ Ինքը, մելիքը, կը հոգայ Վարանդայի հեռաւոր գիւղերի մասին. այդ մտքով էլ նա յետ է կանչել Ասլանին։ Իսկ Աւետարանոցում և շրջականերում ուրիշ մարդ չը պիտի երևայ, կարգադրողները պիտի լինեն միայն և միայն Աննա-խաթունն ու Գայխանէն...

Խրատները վերջացան շատ ուշ, այն ժամանակ, երբ մելիքը միանգամայն համոզվեց, որ ամեն ինչ պարզված է, այլ և անհասկանալի կէտ չէ մնացել իր ծրագրում։ Նա խիստ էր իր պահանջների մէջ, նոյն իսկ անողորմ։ Ոչինչ մեղմացնող հանգամանքներ չէր ընդունում, կարծես այդ երկու հոգին ոչ իր հարազատներն էին, ոչ էլ կանացի թոյլ արարածներ, այլ փորձանքների մէջ բովված տղամարդիկ... Այժմ ամեն ինչ ուրանալու ժամանակն է։ Այժմ միայն մի բան պիտի թագաւորէ. հայրը որդուց, քոյրը եղբօրից, մայրը երեխայից, փեսան հարսնացուից միայն այն պիտի իմանայ, թէ պատրաստ է, գիտէ՞ սպանել։ Վճռական ժամը կանգնած է դահների առաջ. վա՜յ նրան, ով չի հաւատայ։

Միւս օրը դեռ չը լուսացած, նա շարունակեց իր ճանապարհը։

Անցել էր երկու շաբաթ, Սուլէյման-բէկը համարեա ամեն օր լինում էր մելիքի տանը։ Գայխանէն չէր թագնվում, համարձակ ներս ու դուրս էր անում, կարմրելով սիրեկացու կրակոտ հայեացքներից։ Միայն այն հանգամանքը, որ իր կրակը կարմրութիւն է տալիս այդ սրանչելի դէմքին, բաւական էր, որ բէկը յաճախէր այդ տունը՝ իր յօժար կամքով, մեծ հաճութեամբ այրվելու համար։

Գեղեցկութիւնն այդ երկու շաբաթվայ ընթացքում

բոլորովին նուաճել էր նրան։ Եւ երբ անցնում էին այրող րոպէները, երբ աղջիկն այլ ևս չէր երևում, նա նայում էր իր շուրջը, համոզվում էր, որ անհաւատ գեաւուրները իսկ որ խնդրում են իր բարեկամութիւնը։ Ամէն ինչ խոնարհ ու լուռ էր նրա առաջ։ Նա կարգադրութիւններ էր անում մէլիքի տանը և երբէք չէր տեսել, որ տրտունջ կամ աննշան անբաւականութիւն պատճառէ իր խօսքը։

Աննա-խաթունին ճանաչելը շատ դժուար էր։ Ինչպէս ժպտուն և ուրախ էր նա իր փեսայի մօտ, ինչպէս էր հաւատացնում նրան թէ իր տունը, մէլիքի ամբողջ կալքը նրան է պատկանում, և եթէ նա մի օրում կրակ տայ ամեն ինչ, ինքը ոչինչ ցաւ չի զգայ... Նա զոքանչի պէս չէր վարվում իր փեսայի հետ։ Ո՛չ, դա կը լինէր յանդգնութիւն մի խոնարհ գեաւուրի կողմից։ Այդ գեաւուրը շատ լաւ հասկանում էր թէ ինչ պատիւ է, որ բարձրաստիճան, քաջ ուղղահաւատը շնորհ է անում իր տանը, այցելելով նրան այդքան յաճախ։ Այդքանն էլ բաւական է. գեաւուր կինը երբէք չի յանդգնի ասել թէ որ և է երախտիք ունի բէկի վրա։ Ընդհակառակն, որքան էլ նա խոնարհ ու հլու մնայ, դարձեալ չէ կարող երախտագէտ լինել։

Եւ մի անգամ Աննա-խաթունը բացատրեց թէ ինչու է ինքն այդպէս։

—Ես մայր եմ, բէկ, և, ինչ թաքցնեմ, սաստիկ սիրում եմ իմ աղջկան։ Գիտեմ որ նա հասել է, այլ ևս մեզ մօտ չի մնայ։ Ես ուզում եմ որ նա մեզանից հեռանալուց յետոյ աւելի բախտաւոր լինի, այնքան բախտաւոր, որ ամբողջ աշխարհը նայէ նրան և նախանձի։ Դու մեծ շնորհ արիր ինձ, տալով քո համաձայնութիւնը որ այդ աղջիկը քո կինը դառնայ օրինաւոր կարգով։ Դու իշխան ես, քո թուրը կտրուկ է. եթէ կամենայիր տանել նրան քո իրաւունքով, ո՞վ պիտի կանգնէր քո դէմ։ Բայց դու այդ չարիր, դու լաւութիւնը գերադասեցիր...

Այժմ ես կարող եմ իմ ձեռքով ճանապարհել իմ աղջկան։ Հաւատացիր, մի մայր դրանից աւելի բախտ չի էլ ուզի...

—Բայց դու սկզբում հակառակվեցար...

—Եւ այդ զարմացնո՞ւմ է քեզ, բէկ։ Ես ասացի, որ նա նշանված է, ասացի և այն, որ նշանողը ես չեմ եղել, այլ նրա հայրը։ Ի՞նչպէս կը լինի, եթէ քո կինը դուրս գայ քո հրամանից...

—Ես նրան կը սպանեմ...

—Տեսնո՞ւմ ես։ Ես միշտ հնազանդ եմ եղել իմ ամուսնուն և այդպէս էլ սովորեցրել եմ իմ աղջկան։ Ես քեզ շատ կընդդիմանայի, եթէ իմ աղջիկը չուզէր քեզ... Երբ այդ բանն իմացայ, այլ ևս ծպտուն չը հանեցի։ Մայրը իր աղջկայ վատութիւնը չի ուզի... Եւ ինչ եմ ես, որ համարձակվեմ...

—Լաւ, թո՛ղ այդ։ Դու այն ասա, քո աղջիկը ինքն էր ուզում ինձ։

Աննա-խաթունը զարմացած նայեց նրան, հանդարտ կերպով ժպտաց, կարծես չէր հաւատում թէ այդ մասին դեռ կարող է խօսք լինել։ Եւ բէկը շտապեց հարցնել.

—Հիմա էլ, չէ՞։

—Ինչե՞ր ես ասում, բէկ։ Եթէ նա իմանայ թէ դու կասկածում ես...

Բէկը բոլորովին հալվեց։ Մի րոպէ նա կարծես ամաչեց այդ մորից, որ այնպիսի վստահութեամբ վկայում էր թէ իր աղջիկը սիրում է նրան... Բայց յետոյ նրա աչքերի մէջ վառվեց կրակը և նա համարեա աղաչաւոր ձայնով ասաց.

—Արի տուր, հէնց այժմ տանեմ...

Այդպիսի բռնկումներ Աննա-խաթունը տեսել էր մի երկու անգամ էլ։ Դրանք սարսափելի րոպէներ էին, երբ վայրենի գազանը վրդովվում էր իրան զսպող սանձերից և փորձում էր մի կատաղի ոստիւնով, մի անողորմ յար-

ձակումով ոչնչացնել բոլոր արգելքները և վազել իր կեր-
քերի ետևից։

Ամենագեղեցիկ, ամենից խոնարհ ու խեղճ որսն էլ գազանը սիրում է ուտել այնպէս, ինչպէս իր բնաւորութեանն է վայել։ Իսկ այստեղ ձեւականութիւնների անունից են խօսում, այստեղ պէտք է դեռ լռել, խօսել, պատճառներ քննել... Մի՞թէ դա վայելուչ բան է մի սիրիացի քաջի համար, որի առաջ մինչև այժմ ոչ մի բան չէ դիմադրել և որի աչքը տեսնում է թէ ինչպէս մահ է գալիս կարմրող հիւրին...

Աննա-խաթունը, սակայն, գալում էր նրան և այդ սարսափելի րօպէներին։ Ո՞րտեղից էր նա վերցրել այդ հրաշալի կարողութիւնը։

Ամենագլխաւորը ինքն իրան չը կորցնելն էր. պէտք էր մնալ հանդարտ, անխռով։ Այս անգամ էլ նա շատ լաւ պահեց իրան, մինչև իսկ շարունակեց ժպտալ։ Բայց այլ ևս չը յիշատակեց իր մայրական զգացմունքները, որպէս փափագը, ուխտը, ինչպէս արել էր առաջ։ Այս անգամ նա իրան ոչինչ հաշտեց և շահագործեց մի նոր, աւելի զօրեղ պատճառաբանութիւն։

—Քո կամքն է, բէկ, ասաց նա մի ծայրայեղ հնազանդութեամբ։ — Եթէ դու կամենաս, ես ինչ բան եմ, որ պնդեմ թէ դու էլի ողորմութիւն պիտի անես ինձ։ Ո՛չ, մինչև այժմ արածն էլ բաւական է ինձ։ Բայց կայ մի այլ հանգամանք։ Մեզանում նշանած աղջկան շատ ուրախ են պահում, կատարում են նրա բոլոր ցանկութիւնները, պատիւներ են անում. մեզանում փեսան մինչև հարսանիքի օրը աղջկայ ստրուկն է։ Գիտեմ ինչու։ Սիրտ կայ, բէկ... Սիրտը մի բարակ ապակի է, երբ փշըրվեց, այլ ևս շինել, կարկատել չէ կարելի։ Բարակ ապակին կարող է կոտրվել ամենաչնչին պատճառից, ուրեմն պէտք է զգոյշ լինել, մանաւանդ որ ժամանակն էլ երկար չէ։ Հարսանիքից յետոյ, ինչ խօսք, աղջիկը իր ամուսնու հլու ծառան է և այնուհետև նա ինքը պիտի

աշխատէ, որ չը կոտրէ ամուսնու սիրտը։ Քո նշանածն էլ, բէկ, ուզում է այդպէս լինել։ Նա սաստիկ ցանկանում է վայելել նշանած աղջկայ բախտը։ Ո՞վ գիտէ՝ ինչեր կան ջահիլի սրտում։ Նա հաւաքում է իր ընկեր աղջիկներին, խօսում է նրանց հետ, ծիծաղում է, կարմըրում է... Ես չեմ ասի թէ ինչեր է նա խօսում. դու բոլորը կիմանաս յետոյ, երբ միասին կը լինէք. և կիմանաս թէ որքան լաւ էին այս օրերը նոյն իսկ քեզ համար... Աղջիկս դեռ չէ կշտացել այդ խուլ քրթմնջիւններից. նա ինքն է ուզում որ ժամանակ տաս, բէկ։ Ջահիլութիւնը միայն մի անգամ է լինում... Նա գիտէ այդ և բոլորովին կասկած չունի, որ դու չես արգելի նրան քիչ էլ ուրախանալ...

Բէկը հեռանում էր՝ դարձեալ փաթաթված ցանցերի մէջ. դարձեալ պէտք էր վերադառնալ և շուտ վերադառնալ այս զարմանալի տունը, ուր նրան այնքան հաճելի կերպով պլրում էին։ Նա միայն ասաց.

—Շուտ արէք... Ինչ անելու էք, շուտ վերջացրէք։ Գարունը մօտ է. ես ասել եմ, որ գարնան չեմ սպասի...



ժ

Եւ մայր ու աղջիկ, ճիշդ որ, շտապում էին...

Չէր կարելի ասել, որ Աննա-խաթունին շատ հեշտութեամբ էին աջողվում այդ յաղթութիւնները։ Ամեն անգամ, երբ բէկը հեռանում էր, նա խորին զգուանքով ճանկ էր անում իր դէմքին, անիծում էր իրան։ Նրա շիտակ բնաւորութիւնը սարսափելի ցաւերով էր հպատակվում կեղծելու, շողոքորթելու անհրաժեշտութեան։

Լինում էին րօպէներ, երբ նա մահ էր խնդրում արտասուք թափելով և վճռում էր յայտնել իր եղբօրը թէ այսպիսի մայրութիւնը իր կարողութիւնից վեր է։ Խեղճ կին... Նրան ոչ ոք չէր խղճում։ Գայիանէն պահապանի նման կանգնած էր նրա ետևում և աչքից չէր

գցում ոչ մի փոքրիկ ու աննշան հանգամանք։ Ամէն անգամ, երբ տեսնում էր իր մօրը թուլացած, յուսահատ ու վշտահար, մօտենում էր, գործ էր դնում իր կրակոտ լեզուն, նորից և նորից հասկացնում էր թէ միայն այդպէս գործելով, մայրը կարող է ազատել իր աղջկան։

Մի՞թէ նահատակ մայրը էլի հաւատում է արտասուքներին. մի՞թէ էլի պարզ չէ, որ պէտք է սովորել տանջանքներ զգալ, այրվել, խորովվել անխնայ, որպէս զի վրէժը անխուսափելի լինի։ Աստուծու ողորմութիւնն է այժմ այդքան հրաշալի առիթ տալիս իր սեփական անպատուութիւնն զգալու համար։ Վիրաւորվա՞ծ է սիրտը... Ա՛հ, դա է փրկութեան ամենագեղեցիկ ճանապարհը։— Պէտք է աւելի առաջ գնալ, պէտք է շատ պարզ տեսնել թէ ինչ ահռելի անդունդի մէջ է աշխարհը։ Սարսափած միտքն է միայն, որ հսկայական ջանքեր է թելադրում ցաւերի խորխորատից դուրս գալու համար...

Եւ երբ մայրը իր տանջված դէմքով, վշտալի հայեացքով հասկացնում էր, թէ ո՛րքան դժուար են այդ ջանքերը, որպիսի հեշտութեամբ մի անսովոր սիրտ կարող է խորտակվել դրանցից ու վայր ընկնել ճանապարհի կէսին, աղջիկը բարձրացնում էր նրա գլուխը, ձեռքը մեկնում էր դէպի դուրս և ասում էր.

—Ամբողջ Ղարաբաղը մեզ է նայում...

Այն ժամանակ մայրը կորցնում էր հակաճառելու համարձակութիւնը։ Ընկած տեղից նա բարձրանում էր լուռ ու խոնարհ, յենվելով իր աղջկայ թևերին, նեցուկ որոնելով նրա շունչի, նրա մարմնի տաքութեան մէջ։ Նայում էր դրսի աշխարհին և նրան թւում էր թէ հրակայ սարերը մի-մի աչք դարձած՝ իրան են մտիկ տալիս լարված ուշադրութեամբ, անհամբեր... Նրան քաշում-տանում էին այդ վիթխարի հայեացքները և ասում էին, որ արածը քիչ է, թոյլ, անբաւարար...

Իսկ գործը, իրաւ որ, դադար չէր առնում։ Մայր ու աղջիկ Մէլիք-Աւանի հրահանգները կատարում էին մի

մոլեռանդ ճշդութեամբ, որ միայն կանանց է յատուկ։

Գիշերները, մութի մէջ, հանդարտ ու աննկատելի կերպով, հատ-հատ տղամարդիկ ստուերների պէս մտնում էին մէլիքի դռներով։ Ներքնայարկի մեծ սենեակում, ուր մի ժամանակ Ջալալն ու Գայիանէն հանդիպեցին միմեանց, վառ էր մնում ձէթի ճրագը։ Այստեղ Աննա-խաթունը խօսում էր, հասկացնում էր ամէն ինչ. գիշերային այցելուն հեռանում էր միայն այն ժամանակ, երբ հաստատ խօսք էր տալիս և երդվում սուրբ գործի անունով։

Գայիանէն համարեա բոլորովին չէր մասնակցում այդ տեսակցութիւններին. նա գիտէր, որ դրսի աշխարհը դարձեալ երեխայ է համարում իրան և դարձեալ չէ հասկանում թէ ինչու ինքը այդքան ուզում է թիւրք բէկի կինը դառնալ։ Աննա-խաթունը խօսում էր իր կողմից, Մէլիք-Աւանի կողմից։

Գործի սկիզբը լաւ էր դրված և մարդկանց դժուար չէր հաւատացնելը։ Ամենից առաջ գաղտնի խորհրդին մասնակից եղան մէլիքի տան ամենալաւ, յուսալի բարեկամները. սրանք հանդարտ կերպով տարածում էին իրանց լսածը։ Մեծ եռանդով գործում էր և Ասլանը. իսկ պակասը լրացնում էին Ղարաբաղի միւս գաւառներից եկած լուրերը, որոնք ցոյց էին տալիս թէ միայն Մէլիք-Յուսէփի կինը չէ քարոզում այդ զարմանալի և մի և նոյն ժամանակ շատ պարզ ու ճարտար միտքը։

Վարանդան այնքան ընկած և անբարոյականացած չէր, ինչպէս երևակայում էր Դիզակի տէրը։ Թէև թիւրքական բռնութիւններն այստեղ հասել էին զարհուրելի չափերի, բայց ամբոխը դեռ չէր թունաւորվել ստրկական զգացմունքից, որ բռնութեան հետևանքն է։ Նա կրակվում էր միաժամանակ զանազան կողմերից և դա մի լաւ նշան էր, թէ հրդեհը համատարած կը լինի։

Ոգևորում էր մանաւանդ գործի հեշտութիւնը։ Իւ-

բաքանչիւր մարդ հասկանում էր, որ իրանից անհնարին բան չեն պահանջում...

Եւ Աննա-խաթունի գործը օր օրի վրա հեշտանում էր։ Գիշերային հիւրերը համարեա բոլորովին պատրաստված էին գալիս և համարեա մի և նոյն խօսքերն էին ասում.—ոչ ոք յետ չի մնայ ընդհանուր գործից։ Ճանապարհ դնելով ամեն մէկին, մէլիքի կինը գնում էր իր աղջկայ մօտ, հարևան սենեակը, և աւետում էր ամեն մի նոր աջողութիւնը։ Գայիանէն իսկոյն վազում էր վերև, ուր Յովսէփը, Թուղթը ծնկան վրա դրած, անհամբեր սպասում էր թէ երբ կը գրէ մի նոր անուն էլ։ Նա արդէն մի մեծ ցուցակ ունէր. խոշոր ու գեղեցիկ տառերով մի քանի անգամ արտագրել էր անունները և անգիր էր արել ամեն մի տառ, ամեն մի գիծ։

—Ա՜խ, եթէ ինձ էլ ուղարկեն գիւղերը, հառաչում էր նա։

Նա կը գնար, կը քարոզէր, նա չէր հանգստանայ օր ու գիշեր։ Բայց Գայիանէն համաձայն չէր, և երեխան միանգամայն ընդունում էր, որ նա ճիշդ է ասում։ Այո, ինչ խօսք, Յովսէփին ոչ ոք չի հաւատայ. նրա բերանից դուրս եկած իւրաքանչիւր խօսքը ծիծաղ կը յարուցանէր։ Մարդիկ այդպէս են. առաջ լաւ հասակ, կանոնաւոր կազմուածք են պահանջում և ապա խօսք։

Այդ պատճառով էր կաղլիկ երեխան զսպում իրան։ Փոխարէնը նա իր անհուն հրճուանքով ծառայում էր իր ցուցակին։ Գրիչ շարժելիս նա, կարծես, սրբագործութիւն էր կատարում։ Իսկ քնելիս նա այդ թղթի կտորը դնում էր բարձի տակ, որպէս զի երազում էլ տեսնէ նրան, անգիր անէ անասելի քաղցրութեամբ...

Այսպէս անցնում էր գիշերը գիշերի ետևից։ Իսկ ցերեկները ամբողջովին պատկանում էին Գայիանէին։ Աննա-խաթունը սպասում էր իր փեսային, նոր-նոր միջոցներ էր գտնում նրան աւելի հաւատացնելու համար։

Այդ ժամանակ Գայիանէի մօտ հաւաքւում էին կանայք ու աղջիկներ։

Երբ գալիս էր բէկը, նրանք ընդհատում էին իրանց հանդարտ խօսակցութիւնները և սկսում էին մի շարք ուրախութիւններ. երգում էին, ծիծաղում, երբեմն նոյն իսկ պարում էին ծափ տալով։

Նստած փափուկ բարձերի վրա, բէկը մի առանձին ուշադրութեամբ ականջ էր դնում այդ ձայներին, որոնք նոյնպէս սիրում էին նրան, ինչպէս Գայիանէի կարմրելը։

Ուրեմն այդ հուրին միայն կատակել չը գիտէ այնքան հրաշալի կերպով։ Ո՜րքան ուրախ ու կայտառ է նա. օրեր են անցնում այդպէս, իսկ նա չէ կշտանում. նա չը գիտէ յոգնել թռչկոտելուց, խաղալուց։ Այդ կրակը անշէջ կը մնայ մինչև յաւիտեան. նա միայն կատակութեամբ չի յափշտակել, այլ և իր ծիծաղներով, իր թըրթռոցներով։ Օ՜, ոչ մի հարեմ Արևելքում չի ունենայ այսպիսի զարդ...

Ապագայի, մօտիկ ապագայի այդ սքանչելի հրապոյրները կաշկանդում էին բէկին, նա լուռ նայում էր Աննա-խաթունին, իսկ նրա աչքերը, կարծես, հարցնում էին. «Իմ մասին են այնտեղ խօսում, չէ՞... Ես չէ՞մ այդ ուրախութիւնների պատճառը»։ Աննա-խաթունը ազատութեամբ խլում էր այդ հարցերը նրանից և իր կանացի աչքերը մի տեղ հաւաքելով, քաղցրիկ ժպիտներ էր խաղացնում իր շրթունքների վրա։

Նա էլ չէր խօսում. և լաւ էր անում։ Ի՞նչ հարկաւոր են խօսքերը. բէկն արդէն գիտէ ամեն ինչ։ Այդ աղջիկը օր օրի վրա աւելի չքնաղ, աւելի յափշտակող էր երևում նրա աչքերին։ Նա տեսնում էր որ աղջիկներն ու կանայք մէլիքի դռներից դուրս գալուն պէս ընդունում էին լուրջ կերպարանք, տեսնում էր, որ դրանց միջոցով Աւետարանոցի և շրջակայ գիւղերի մէջ անընդհատ երթևեկութիւն էր կատարւում։ Եւ գիտէր որ այդպէս էլ հարկաւոր է։ Գիւղերից նա տեղեկութիւններ

էր տեսնում, որ ամեն տեղ կանայք ու աղջիկները ուրախութիւններ էին անում։ Յայտնի էր թէ ում համար… Միամիտ և յիմար են գեաւուրները։ Նրանք չեն հասկանում թէ ինչ է սպասում իրանց և այդքան ուրախ են, որ ուղղահաւատները քիչ բարեհաճ աչք ունեն իրանց վրա։

Թող այդպէս էլ լինի, ինչ փոյթ։ Առանց մարգարէի մտքի չէր կարող հաստատվել այսպիսի դրութիւն։ Մարգարէն իր ծառաների համար հրաշալի աջողութիւն է պատրաստում. նա գիտէ որ անհաւատներն անգիտակ պիտի մնան, և ահա առել է այդ շների խելքը։ Մի քանի հանգիստ շաբաթներ ևս, և այստեղ ապրել կը կարողանան միայն նրանք, որոնք կընդունեն նրա հաւատը։ Բայց մինչև այդ՝ գեաւուրների ամենագեղեցիկ հուրին իր չքնաղ դէմքը կը դարձնէ դէպի Մէքքա ու վարդ շրթունքներով կը խոստովանէ, որ չը կայ ուրիշ աստուած, բացի Ալլահից և Մուհամմէդը նրա մարգարէն է…

Այդպէս էր խօսում բէկը, երբ վերադառնում էր մէլիքի ամրոցից։ Օրը հինգ անգամ նա այդ խնդրուածքներն ուղղում էր դէպի հարաւ նամազի սրբազան խօսքերի հետ, որոնք թաքչում էին վկայելու թէ ինչ անհուն ջերմեռանդութիւն կայ այդ ուղղահաւատի մէջ, որ նրառել է Վարանդայի սրտին ու պատրաստված է զոհելու այդ սիրուն երկիրը մի արիւնածարաւ աստուծու…

Գայիանէն մի-մի անգամ, փորձի համար, թուլացնում էր իր գործադրած զգուշութիւնները։ Հետևանքը շատ գոհացուցիչ էր։ Պարզ երևում էր որ նրա նշանածը շատ է հեռու գնացել և այլ ևս չէ կարողանում նկատել իր քթի տակ եղածը։ Միայն մի բան նա երբէք չենթարկեց փորձի. երբէք թոյլ չը տուեց, որ Նայլուն երևայ բէկի կամ սամասպետ Ահմէդի աչքին։ Անհնարին էր, որ աղջիկը երկար ու կասկածներ չը յարուցանէր…

Եւ իրաւ, Նայլուն այժմ ուրիշ մարդ էր։ Նախկին խենթի հետքն անգամ չէր երևում այս մշտալուռ, ինքն

իր մէջ փակված խեղճի վրա։ Նրա դէմքն աւելի ևս մաշվել էր, այժմ աւելի խիստ էր ընդգծում սրտամաշ ցաւերի հետքերը։ Բայց նրա ամբողջ էութեան վրա իջել էր մի հանդարտութիւն, որ հարթում, հաւասարեցնում էր տանջանքների գործած աւերմունքները։ Կարծես այլ ևս կամք չէր մնացել նրա մէջ. կարծես յոգնել էր նա, ուժասպառ դարձել։

—Չեմ կարողանում, մէլիքի կին, չեմ կարողանում, ասում էր նա ամեն անգամ, երբ Աննա-խաթունը նկատողութիւն էր անում թէ ինչու նա լուռ է, կարծես մի բան է կորցրել և չէ կարողանում գտնել։

Նրան այդպէս հալում-պարզում էր աղբանոցի անակում կատարված չարագործութիւնը։

Փէրիի մահը արիւն ու ոսկոր էր տաշել, միշտ նրա աչքի առաջ էր, մահ էր գալիս դողդողալով, շարունակ անբաւական էր, լաց էր լինում, անմխիթար, սոսկալի, փայտացնող։

Դա փոքրիկ Մարթան էր… Փէրին այնքան քիչ չէր սիրում իր թոռնիկին, որ նրան մենակ թողնէր այս աշխարհում, օտարների մէջ։ Նա կոխ էր սկսել իր գերեզմանից. տանում էր երեխային օտարների գրկից, քաշում-տանում էր դէպի իրան, և հակառակվել այդ սարսափելի կամքին անկարելի էր։ Մի՞թէ նա չէր տեսնում՝ ինչպէս այժմ լաւ է ապրում Մարթան, մի՞թէ յայտնի չէ նրան, որ մէլիքի տանը երեխան ընդհանուրի ուշադրութեան առարկայ է, որ նրան հագցնում են, ուտեցնում են…

Աննա-խաթունը յաճախ կրկնում էր, որ Փէրին անմեղ զոհ է ուրիշի համար, Գայիանէի համար։ Նա իր պարտքն էր համարում շուտ-շուտ յիշել այդ բանը և չը գիտէր թէ ինչ հարուածներ է տալիս Նայլուի սրտին։ Նայլուն էլ ուզում էր զոհվել ուրիշի համար, այս փոքրիկ երեխայի համար։ Բայց որքան անողորմ է խեղճի ճակատագիրը. նոյն իսկ ուրիշի համար զոհ դառնալն էլ չէ տուած նրան։

Երեխան հալվում էր բարակ մոմի նման։ Ո՛չ մի բան բաւականութիւն չէր տալիս նրան. մահվան ազդարարը մի չարագուշակ փայլի կերպարանքով նստել էր նրա աչքերի մէջ։ Մի անտանելի, շշմեցնող յամառութեամբ այդ աչքերը որոնում էին պառաւին, որոնում էին նրա ծանօթ ցնցոտիները, նրա ծոցում դրած մի կտոր չոր հացը... Այդ կարօտութիւնը լափում էր փոքրիկին, և Նազլուն իզուր տանջում էր իրան, որ մի ճար գտնէ...

Ոչինչ չէր օգնում։ Նա մի-մի տանում էր երեխային մի որ և է անկիւն, պառկեցնում էր իր գոգում, սկսում էր հանդարտ ողբը կանչել։ Մարթան լռում էր, բայց ո՛չ երկար. նա շուտ էր հասկանում, որ դա իր տատի ողբը չէ... Ահա այդ անաջողութիւնից յետոյ էր, որ Նազլուն այնպիսի գանգատաւոր, սրտառուչ ձայնով ասում էր.

—Չեմ կարողանում, մէլիքի կին, չեմ կարողանում...

Աւելի պարզ ու որոշ նա խօսում էր իր նոր քոյրիկի հետ։ Պատմում էր նրան իր սրտի դառն մորմոքները, թրջում էր նրա ձեռքերն իր արտասուքներով։

Այլ ևս մօր անուն չէր տալիս, այլ ևս չէր համարձակվում իր համար մի փոքրիկ ուրախութիւն խնդրել։ —Ո՛չ. միայն ուրախացնել երեխային, այնպիսի հնար գտնել, որ լցվեն նրա թշերը։

Գայիանէն յուսադրում էր նրան, ցոյց էր տալիս, որ նա արդէն շատ բան է արել, այն էլ ո՛չ թէ մի կամ երկու մարդու համար, այլ մի ամբողջ երկրի, մի մեծ ժողովրդի համար։ Մէլիք-Աւանը չէր թագցնում, որ իր աչքերը բաց անողը Նազլուն էր։ Նա ասում էր որ եթէ Վարանդայում Նազլու չը լինէր, Ղարաբաղը կը շարունակէր խամփոլ այլանդակ, հրէշաւոր քնի մէջ մինչև այն օրը, երբ ընդհանուր կործանումը կը գար և ամէն ինչ կը թաղէր խոր գերեզմանում... Մի՞թէ դա փոքր բան է...

Նազլուն գլխով բացասական շարժումներ էր անում։ Ոչինչ էր այդ բոլորը։ Թո՛ղ նա տեսած չը լինէր Մէլիք-Աւանին, թո՛ղ ամէնքը քնած մնային, միայն թէ կարելի լինէր հասկանալ վերջապէս թէ ինչպէս կարելի է բռնել Փէրիի տեղը...

—Երեխային կեանք տալու համար, ասում էր նա, —ինչ որ անում եմ, չէ աջողվում։ Փէրին իրան զոհեց՝ քեզ ազատելու համար, քոյրիկ։ Մի՞թէ ես չեմ կարող զոհել ինձ՝ որ ազատեմ նրա երեխային։ Օ՜հ, միշտ մտածում եմ, բայց չեմ հասկանում թէ ինչպէս հասնեմ Փէրիին... Ես ուզում եմ որ իմ կեանքը տամ մի որ և է խեղճի կեանքն ազատելու համար... Թո՛ղ այդ խեղճը լինի նոյն իսկ մի մաշված, մի կիսամեռ փոքրիկ... Բայց...

Նա թոյլ էր տալիս, որ արտասուքները ծլան իր աչքերից և ապա շարունակում էր.

—Ես միշտ անբաղդ էի, բայց երբէք այնքան անողորմ չէր իմ ճակատագիրը, ինչպէս այժմ։ Ես տալիս եմ իմ անձը... Բայց նա ոչ ոքին հարկաւոր չէ...

Ո՜րքան դառն էր այդ վիշտը։ Գայիանէն սփոփում էր նրան ինչպէս կարողանում էր, բայց ամենից շատ նա օգտվում էր այն ճշմարտութիւնից, որ դժբաղդ են ամէնքը։ Նա օրինակ էր բերում իրան։ Քանի՜-քանի անցքեր անցան նրա գլխով։ Բայց նա արհամարհեց ամէն ինչ, փակեց իր աչքերն ու ականջները և գնաց աշխարհի դէմ, հաւատացած լինելով, որ եթէ ամէնքը ծաղրում են իրան, ոտի տակ են տալիս իր մտքերն ու սիրտը, բայց կայ մէկը, որ կը հասկանայ իրան։

Այդ «մէկը» հաւասար էր ամբողջ աշխարհին։ Եւ դա կապուտաչեայ երիտասարդը չէր, որ խլեց նրա սիրտը, բայց շտապեց ամենից առաջ ծաղրել և արձակել իր բռնած սիրտը։ Ո՛չ, այդպիսի մարդուն կարելի էր մոռանալ մի օրում... Մէկը—դա այն տղամարդն էր, որ պահել, ամրացրել էր Գայիանէին երեխայութիւնից, որ սովորացրել էր նրան ատել վատութիւնը, ինչ տեսակ

էլ լինի նա։ Բայց ինքը Նազլուն չէ՞ր, որ պատմեց թէ ինչեր էր ասում այդ մարդը—Մանասը—Գայիանէի մասին։

—Ես քեզ չէի հաւատում, իմ խեղճ Նազլու... Ես սիրում էի խաբել ինձ նրանով, որ դու, երևի, լաւ չես լսել, որ քո միտքն այդ ժամանակ ուրիշ տեղ էր... Այո, ես պատրաստ էի նոյն իսկ ընդունել, որ դու այդ միջոցին, միայն այդ միջոցին, խենթ էիր և չէիր հասկանում, որ Մանասը այդքան սարսափելի մարդ չէ։ Արդեօք դու կարո՞ղ էիր ըմբռնել թէ ինչ նուրբ հանգամանքներ են յայտնի Մանասին։ Եթէ գետնի վրա արև կայ, ինչ է դա նշանակում.—այն, որ այդ միջոցին երկնքում արեգակ կայ... Եթէ Աւետարանոցում Գայիանէ կար, նշանակում էր, որ սարերում Մանաս կայ։ Ո՞վ էր, որ կատաղի մոլեռանդութեամբ հետևում էր իր արինոտ գործին։ Ո՞վ էր, որ գծված էր այն մաքի վրա, թէ այդ գործի պէս սուրբ, անսխալ և արդար բան չը կայ երկնքի տակ։—Մանասը, միայն նա... Աշխարհը միաբերան դատապարտում էր նրան, անիծում էր նրա ձեռնարկութիւնը, բոլոր թշուառութիւնը, բոլոր արեան գետերը նրան էր վերագրում. բայց նա արհամարհում էր ամեն ինչ, հաստատ գնում էր իր ընտրած ճանապարհով... Ի՞նչ կը դառնար, եթէ նա յանկարծ սկսէր վախել անէծքներից։ Ոչինչ։ Այն պատրաստութիւնը, որ այժմ մենք տեսնում ենք օր ու գիշեր, չէր լինի, որովհետև... դու հօ ճանաչում ես մեր մարդկանց... Մանասը դաստիարակեց մեզ. Մանասը ցոյց տուեց, որ դժոխքի մէջ այրվող մարդը պիտի իմանայ, որ իր դժբախտութեան ամենամեծ պատճառը վիզ ծկելն է։ Ո՞վ էր, որ այն կիսամեռ քահանային ուղարկեց այստեղ, ցցի գլուխը հանել տուեց։—Դարձեալ Մանասը։ Նա ցոյց էր տալիս աշխարհին թէ ինչպէս են սպանում, այժմ ցոյց էր տալիս թէ ինչպէս են մարդիկ մեռնում... Մանասը իր խմբով մեծ գործ չէր կարող անել. նա երբէք չէր կարող ջնջել թշնամուն, և նրա ամենամեծ ծառայութիւնն այն էր,

որ օրինակ էր տալիս... Անկարելի էր, որ այդ օրինակը չունենար հետևողներ. հազարները կանգնէին նրա մօտով, բայց հարիւրները կանգ կառնէին և կը գնային նրա ետևից... Ահա ինչու չէի հաւատում քեզ, քոյրիկ... Ես չէի հաւատում, որ մի մարդ ճրագը ձեռքին գնար խաւարի մէջ և չը հասկանար, որ լոյս է տալիս չորս կողմում գտնվողներին...

Նա, այո, չէր հաւատում. բայց ինչ դուրս եկաւ։ Մէլիք-Աւանը դժգոհութեամբ պատմեց թէ ինչեր նա լսեց Մանասից՝ տեսակցութեան ժամանակ։ Մանասը միայն իրան յատուկ յամառութեամբ պնդեց, որ Գայիանէն հեռու պիտի մնայ. նա աղջիկ է, կարող է հրապուրվել, կարող է թուլանալ և խայտառակութիւնը զարհուրելի կը լինի։

Մանասն էլ, ուրեմն, նոյնն էր ասում, ինչ ասում էին կոյս Հռիփսիմէն, Աննա-խաթունը, բոլոր մարդիկ այս երկրում։ Մանասն էլ ոչինչ էր համարում, որ հարիւրաւոր աղջիկներ պղծվել են և խայտառակութիւնը կատարված է մինչև երկինք։ Սարսափելին այն էր, որ նա չէր հաւատում թէ Գայիանէն բէկի հետ ամուսնանալու մէջ ուրիշ նպատակ ունի։ Դա պատրուակ է միայն, նա այդպէս էր կարծում։ Կինը, ասել էր նա, կեղծիք է։ Բայց ամենից անտանելին այն էր, որ Մանասը ներկայ հանգամանքների մէջ Գայիանէի համար շատ յարմար ամուսին էր համարում խաչէնցի երիտասարդին...

—Մի՞թէ դու ինձ չափ դժբախտ ես, Նազլու, բացականչեց նա, կուլ տալով իր արտասուքները։

Ապա, շարունակելով իր պատմութիւնը, նա ասաց, որ Մէլիք-Աւանին հազիւ էր աջողվել համոզել Մանասին սպասել առժամանակ։ Բայց Մանասն այդքանով չէր բաւականացել։ Չորս օր առաջ, երեկոյեան, նրա մարդկանցից մէկը մտաւ մէլիքի տունը և առանձին տեսակցելով Գայիանէի հետ, մի շարք պատուէրներ կարդաց։

Թող Գայիանէն չը կարծէ թէ Մանասի ձեռքը կարճ

է, իրան չի համնի. Թող իմանայ նա, որ իրան հետևում են և կը հետևեն օր ու գիշեր: Մանասի գծերը չեն թոյլ տայ, որ Սուլէյման-բէկի տասն ծառաներից մէկը դիպչէ այն աղջկան, որին Մանասը ծնողի պէս սիրել է տասն ութ տարիների ընթացքում... Նրանք տակն ու վրա կանեն Աւետարանոցը, կը խլեն և կը փախցնեն Խաչէն, կը յանձնեն հայ քրիստոնեայ նշանածին...

—Ու ես սովորած էի լացով, աղաչանքով ժամանակ խնդրել, շարունակեց Գայիանէն.—Ի՞նչպէս հաւատացնէի նրան, ի՞նչպէս համոզէի... Ես ամաչում էի այսպիսի խօսքեր ասել Մանասին. մի՞թէ ես պիտի նրան դասեր տամ: Մանասը լաւ է. նա, երևի, ընդունել է իմ խնդիրքը: Ես ժամանակ էլ որոշեցի—երկու շաբաթ... Ա՛հ, ի՞նչ կը լինի, Նազլու, իմ խեղճ քոյր, եթէ յանկարծ մի չար դև ընկնի մէջտեղ, խանգարէ մեր գործը և երկու շաբաթից յետոյ էլ այս մի և նոյն դրութիւնը մնայ: Ինձ կը տանեն գժերը, և գիտե՞ս ուր... Խաչէն: Այս անգամ ես չեմ կարող դիմադրել... Այս անգամ Մանասն է ինձ դէմ... Ու դու դեռ քո բախտի՞ց ես գանգատւում...

Նազլուն էլի բացասական նշան արաւ. տխրութեամբ շարժելով իր գլուխը, նա էլի ասաց.

—Փէրին հանգստութիւն չէ տալիս. նա մտել է Մարթայի մէջ և ինձ խեղդում է: Նա կը հեռանայ, երբ ես նրա ձեռքից կը խլեմ Մարթային: Բայց ի՞նչպէս խլեմ. բոլոր միջոցները փորձեցի, մնում է որ ես էլ անեմ նոյնը, ինչ նա արաւ քեզ համար... Ուզո՞ւմ եմ այս բանը: Մի՞թէ դու ճար չը գիտես, քո՛յրիկ...

—Օ՛, սպասիր, ճարի պակասութիւն չի լինի: Մեր առաջ ահագին գործ կայ...

—Բայց երեխան հալվում է ժամերով...

—Ես էլ եմ տեսնում, այո... Բայց քեզ պէս անյոյս ու անմխիթար չեմ ես: Մի՞թէ Մարթան մի հատիկ երեխան է մեր երկրում: Քանի՜սներն են հալվել և քանիսները դեռ պիտի հալվեն, եթէ մենք էլի խեղճ մնանք:

Նայի՛ր, աշխարհը մեծ է, երեխաներն անթիւ: Արո՞ղ ես հաշւել թէ քանի մայրեր են մեռել, բայց էլի նստած են իրանց թողած որբերի մէջ: Նայի՛ր, տնտղի՛ր և դու կը ճանաչես որ ամեն մէկը մի Մարթա է, իսկ նրա մէջ նստածը—մի Փէրի... Օ՛, ո՜ւր էր, եթէ մեր ցաւը այնքան փոքր լինէր, որ մենք միայն մի Մարթայի, միայն մի Փէրիի համար մտածէինք:

Նազլուն պատասխան չէր տալիս, կախ էր անում իր գլուխը: Նա սովորում էր սպասել... Թէև այդ սպասողութիւնն էր, որ հանգստութիւն էր իջեցնում նրա վրա, հարթելով, շտկելով տանջանքների հետքերը, թէև նա ինքն էլ տեսնում էր, որ սպասող ուխտաւորի ակնկալութիւնը մի բոլորովին նոր, մինչև այդ անյայտ թեթևութիւն է պատճառում իր սրտին, բայց Մարթան երբեմն այնքան էր այրում նրա ներսը, որ նա չէր դիմանում:

Նոյն օրը, երբ Գայիանէն պատմեց իր դժբախտութիւնը, Նազլուն էլի դիմեց Աննա-խաթունին: Գուցէ մէլիքի կինը կը գտնէր մի ճար, գուցէ նրա համար հեշտ էր ցոյց տալ այն, ինչ որոնում էր Նազլուն:

—Դու փորձված ես, մէլիքի՛ կին, ասաց նա.—դու այժմ ուրիշ մարդ ես դարձել, ամենքն են լսում քեզ, մինչև իսկ բէկը քո ձեռքումն է...

ԺԱ

Իր ձեռքո՞ւմ... Խեղճ աղջիկ, նա չը գիտէր թէ ինչե՛ր էր տեսնում Աննա-խաթունը...

Բէկը նստած էր իր դռանչի մօտ և, ինչպէս միշտ, մանրամասն հարց ու փորձ էր ենթարկում. [illegible] Նա միշտ մի և նոյն մտքով էր մտնում մէլիքի [illegible] յին հարցերն էին Գայիանէի մասին, նոյն վախ[illegible] էին, որ չորացնում էին նրա շրթունքները: [illegible] ջանում ժամանակը, աղջիկը կշտացմ[illegible], թէ է [illegible]

նածի մասին է մտածում ու խօսում...

Տանջում, այրում էին այդ հարցերը, և մայրը հնարում էր նոր-նոր պատմութիւններ, քնացնելու նոր միջոցներ: Անտանելի էր նրա դրութիւնը. մի կողմից խաբել, անդադար խաբել, երկիւղ կրելով թէ գուցէ լաւ չէ խաբում, գուցէ այդքանը բաւական չէ, միւս կողմից պատիւ պահել, չափը չը կորցնել, հասկանալով որ կայ ապագայ, կայ ամօթ:

Եւ ահա մինչդեռ նա պատմում էր, իսկ սանձահարված գազանը լսում էր հաճութեամբ, յանկարծ ներս մտաւ կոյս Հեղինէն և յայտնեց որ գանգատներ ունի:

Նա հագել էր նոր շորեր, խոնարհ էր, վերին աստիճանի պատկառանքով էր վերաբերվում Թիւրք իշխանուհուն: Սև գլխաշորի տակից դուրս թափված նրա սպիտակ մազերը այդ ժամին մի առանձին յարգանք էին ազդում: Բոլորովին անարդար բան էր երևում, որ նրա մտնելուն պէս ոչ ոք ոտի չը կանգնեց, պատիւներ չարաւ: Բէկը, ընդհակառակը, մի թթու դէմք ցոյց տուեց: Նրան խանգարեցին, նա անբաւական էր...

Հեղինէն նկատեց այդ բանը, բայց արդէն սկսել էր, այլ ևս յետ կանգնել չէր կարելի: Ասաց, որ կուսանոցում ապրում են աշխարհից հեռացած աղջիկներ, որոնց գործը միայն աղօթք անելն է, ապաշխարելը, իրանց մեղքերի համար լաց լինելը. նրանք երբէք գործ չեն ունեցել դրսի հետ, նրանք մեռած են աշխարհային գործերի համար: Եւ սակայն կուսանոցի դռնով ներս էր մտել Քէօսա-Մուխտարը. մտել էր զոռով, ուշադրութիւն չը դարձնելով կոյսերի դիմադրութեան, աղաղակների վրա: Նա գիտեց վանքի բոլոր անկիւնները, մտաւ կոյսերի խուցերը, տեսաւ ամեն ինչ: Բայց կուսանոցը նրա տեղը չէ. ինչու է մտել... Հեղինէն պահանջում էր, որ բէկը իր պաշտպանութեան տակ առնէ կոյսերի վանքը:

—Շատ են քո աղջիկները, հարցրեց բէկը:

—Ութ հոգի:

—Ջահիլ են...

Դողդոջիւն ձայնով արտասանվեցին մի քանի անորոշ, խուսափողական պատասխաններ: Բայց իզուր. բէկը թոյլ չը տուեց շեղվել, բարկացաւ: Եւ կոյսն ստիպված եղաւ խոստովանել, որ կան և ջահիլներ:

—Գեաւուրները միշտ խաբում են... Ինչու ես լեզուդ ծամծամում... Ջահիլութիւնը դեռ բաւական չէ, դու այն ասա, գեղեցի՞կ են...

Նրա դղուելի ծիծաղը մայրապետի մէջ մի յամառութիւն հարուցեց, կրօնաւորի այն յամառութիւնը, որ մարտիրոսների դարում տանում էր նրան դէպի տանջանքներ և մահ: Բայց Հեղինէի յամառութիւնը միայն լռութեան մէջ էր. նա միտք չունէր խոնարհ ու ցած աղաչաւորի դերից դուրս գալ: Եւ չը վրդովվեց, երբ թիւրքը նոյն լրբբ եղանակով շարունակեց.

—Առանց քո ասելու էլ հասկանում եմ որ գեղեցիկ են... Եթէ սատանայի պէս անշնորք լինէին, Մուխտարը, միամի՛տ մնացիր, չէր մտնի ձեզ մօտ... Նա լաւ է ճանաչում իր ապրանքը:

Անպատասխան թողնելով այդ խօսքերը, պառաւ կոյսը սկսեց խօսել երկնքի, Աստուծու մասին, մէջ բերեց քրիստոնեաների սրբութիւնները, ասաց որ սուրբ վայրերում չը կան աշխարհային հասկացողութիւններ գեղեցկութեան և ագեղութեան մասին:

—Մենք աղօթքի մարդիկ ենք, բէկ... Հեռացել ենք աշխարհից, որ ամեն օր աղօթք անենք մեր թագաւորի համար. Աստուած երկարացնէ նրա կեանքը, Աստուած կարողութիւն և ոյժ տայ նրա բազուկին և քաղցր սիրտ հաստատէ նրա մէջ, որ նոյնպէս էլ ապրէ: Դու, [illegible]շուք բէկ. մեր իշխանաւորն ես, նշանակված ես [illegible] կողմից և մենք պարտաւոր ենք հնազանդվել ք[illegible] է հրամայում մեր կրօնը: Ողորմած եղիր. եթ[illegible] դաւոր ենք, դու ներիր մեզ... Մենք ոչինչ ե[illegible] տակի հող ու մոխիր ենք...

Աղաչանքը շարունակվեց երկար. աղաչողը կարծես կուրացել էր և խլացել, ոչ տեսնում էր Թիւրքի արհամարհող դէմքը, ոչ լսում էր նրա բերանից թափվող հայհոյանքները։ Դա հսկայական աշխատանք էր. բառերի, հառաչանքների, արտասուքների մի ամբողջ հեղեղ, յոյսը դրած իր յորդորութեան վրա, հանգիստ ու դադար չը գիտէր, աշխատելով ծածկել բոլոր խութերն ու խոռոչները, որոնք արգելք էին հանդիսանում։ Հեղինէն չէր դա, խստասիրտ, պահանջող և հրամայող կոյսը, այլ մի կին, որ տանջվում էր՝ ապառաժի մի կտոր կակղեցնելու համար...

Ապառաժը անշարժ էր ու անընկճելի։ Բէկը, նայելով իր զոքանչի դէմքին, կարդաց այնտեղ ինչ-որ կծու անբաւականութիւն, ինչ-որ խոր վրդովմունք, որ դժուարութեամբ էր զսպվում։ Կրքերը, որոնք քիչ առաջ այնքան հաճոյք էին վայելում, խօսեցին իրանց լեզուով. այդ պառաւը թոյլ չը տուեց շարունակել խօսակցութիւնը այս տան մէջ ապրող հիւրի մասին, որ այնպէս հրաշալի կերպով կարմրել գիտէ։ Եւ յանկարծ, վայրենի մի բացականչութեամբ, նա պատռեց աղաչանքների հեղեղը, կանգնեցրեց նրան ու ասաց.

—Ձեր աղօթքը Ալլահը չի լսի, դուք անհաւատ շներ էք։ Մուխտարը մեր մարգարէի համար հաճելի գործ է կատարում։ Ինչու՞ ես փակել գեղեցկուհիներին. թո՛ղ գնան, ծառայեն ուղղահաւատներին...

—Աղաչում եմ, բէկ, թագաւորի սէրին, հեծեծաց Հեղինէն։

—Փադիշա՞հը... Օ՜, նրա մի օրը հազար դառնայ, նա ինքն էլ միշտ ուզում է, որ բոլոր գեաւուրները դարձի գան։ Տեսնո՞ւմ ես այս կնոջ աղջկան. ինքը, իր կամքով, փախչում է ձեր անմաքուր հաւատից, մարգարէի աղախինն է դառնում։ Այնպէս չէ՞...

Անմա-խաթունը շտապով հաւանութեան նշան արաւ։ Իսկ Հեղինէն արտասուքներ ծլլացնելով, աղաղակեց.

—Այդ աղջկայ սէրին, էֆէնդի, քո նշանածի սէրին...

Այստեղ կոյսը բոլորովին փչացրեց իր գործը։ Նշանածի անունը վառօդի պէս պայթեց նրա մէջ, կայծեր ցայտեցնելով նրա աչքերից։ Նրա դէմքը մթնեց և նա մռնչաց.

—Ի՞նչ... դու համարձակվում ես իմ կնոջ անունը խառնե՞լ քո պիղծ գործերի մէջ...

Սաստիկ բարկութիւնից նա չոքեց բարձերի վրա և գոռաց.

—Ձայնդ կտրիր, շու՛ն պառաւ... Բոլոր անհաւատներին պէտք է կոտորել։ Լաւ, երախտագէտ շներին մենք պահում ենք, իսկ ձեզ պէս շներին... ժամանակը հեռու չէ և մենք կը կոտորենք... Մուխտարին հիմա ես եմ ուղարկում քո շնանոցը. դու կը ճանաչես թէ ինչ է մուսլիմանը։

Շանթերը ճայթում էին աջ ու ձախ, բայց չէին ոչնչացնում խոնարհ աղաչաւորին։ Ընդհակառակը, վերջին սարսափելի խօսքերից յետոյ նա աւելի պնդացրեց իր երեսը։ Օ՜, այժմ նա բաց չի թողնի բէկի փէշը. նա արիւն-արտասուքով կը պաղատէ օր ու գիշեր, ողորմութիւն կը խնդրէ, իր դէմքը կը քսէ հողերին, քարերին...

Բայց Թիւրքը շատ էր տեսել այդպիսի դէմքեր։ Ահա նա վեր կացաւ և բարձր ձայնով կանչեց Ահմէդին։ Տանապետը դրսումն էր, իսկոյն բաց արաւ դուռը։ Միայն այդ ժամանակ կոյսը կանգնեց, խոնարհ կերպով գլուխ տուեց բէկին ու գնաց...

Փեսայ ու զոքանչ նորից մենակ մնացին, և փեսան հանգստացրեց իրան, վերադառնալով ընդհատված խօսակցութեան։

Զոքանչը բոլորովին պատրաստ էր։ Պատահած դէպքի մասին նա ծպտուն չը հանեց, նրա դէմքի վրա այլ ևս դժգոհութիւն չը կար. կարծես նա շատ գոհ էր, որ կոյսի գործն այդպէս վերջացաւ, և նրա խօսքը դարձեալ քաղցր էր, դէմքը խոնարհ, ժպիտն ինքնաբաւական։ Ի՞նչ

գիտէր բէկը, որ նա այդ միջոցին իր ներսում խեղդում, ճնշում էր մի կրակոտ զգացմունք։ Բէկը հեռացաւ միամիտ, չը մոռանալով սովորականի պէս յորդորել որ շտապեն, վերջացնեն պատրաստութիւնները։ Աննա-խաթունը չը կարողացաւ մենակ շունչ քաշել, գտաւ Գայիանէին և փաթաթվելով նրա շլինքին, ասաց.

—Նա շուն անուանեց մեզ, ամենքիս... Եւ իրաւունք ունի. շունը մեզանից վատ չէ...

Այդպէս են եղել աղաչանքները, որոնց նա մի ժամանակ հաւատում էր...

Այդ ամօթալի արտասունքը, այդ ողորմութիւնը, որ նա խնդրում էր այնքան սառը ձևերով, անպատիւ խօսքերով, կրակ էին տուել Աննա-խաթունին։ Եւ նա կը ճաքվէր, եթէ բէկը գիջանէր, խղճար։ Բայց նա այդ չարաւ, նա չափազանց շատ է արհամարհում շներին, որ ուշադրութիւն էլ դարձնէ նրանց խնդրուածքների վրա։ Ի՞նչպէս նա հալածեց Աննա-խաթունի սիրտը... Այո, այդպէս էլ պէտք է վարվել շների հետ։ Նա ինքն էլ մի շուն է և ուրախ է տեսնելով, որ իրանից զզվում է այն մարդը, որ իբր թէ իր փեսան է։

—Ես տեսայ թէ ինչ է աղաչանքը և այսուհետև ինձանից չը վախենաս, Գայիանէ... Գիշերները չեմ քնի, կը սովորեմ ոչ միայն խաբելը, այլ և ուրիշ շատ բաներ... Սուտ է, չը կայ աղաչանք, չը կայ արտասունք, որ շարժեն նրան։ Շներ ենք մենք և նա գիտէ, որ մեզ պէտք է կոտրել...

—Հիմա որ Մէլիք-Յուսէֆնի կինն ես, բացականչեց աղջիկը և անզուսպ հրճուանքով սեղմեց մօրը իր կրծքին։—Ես սոսկում էի որ դու այդպէս չես մնայ...

—Դու շատ տանջվեցիր, Գայիանէ, իմ սիրուն երեխայ... Դու սուրբ էիր, դու հասկանում էիր...

Երեկոյեան Թէոսը մի թուղթ բերեց և ասաց, որ կոյս Հեղինէն է ուղարկել մի երեխայի ձեռքով։ Գայիանէն կարդաց.

«Քրիստոսի հարսներին անպատուելուց յետոյ դու էլ, քո տունն էլ, քո ամբողջ երկիրն էլ անիծված կը մնաք... Այժմ ես փակված եմ, պահպանում եմ Տիրամօր օթևանը։ Բայց էգուց դուրս կը գամ։ Աղաչանքը, ճշմարիտ է, եղաւ, բայց քիչ էր, այդ պատճառով էլ չօգնեց։ Էգուց դու էլ կաղաչես ինձ հետ, կընկնես նրա ոտները, ողորմութիւն կը խնդրես»։

—Ե՞ս, աղաղակեց Աննա-խաթունը և ձեռքերի շարժմամբ հեռու մղեց իրանից այդպիսի միտքը։—Նա ուզում է ինձ էլ խայտառակել, զզուելի դարձնել։ Ես չեմ անի... Այդպէս էլ գրիր, Գայիանէ։

—Ո՛չ, ես չեմ գրի, պատասխանեց նա ծիծաղելով։—Պէտք է խղճալ նրան... Կոյսերին ես կը թաքցնեմ...

—Ո՞րտեղ...

—Գետնի տակ, գաղտնի սենեակում, որի մուտքը միայն քեզ է յայտնի։

—Սենեակը, բացականչեց մայրը, սաստիկ զարմանքից կծելով իր մատը։

Նոր յիշեց նա, որ գոյութիւն ունի այդ զարմանալի գաղտնարանը։ Ի՞նչպէս նա մինչև այժմ մոռացել էր, որ սև օրվայ համար մէլիքի տունը ունի թաքնվելու տեղ։

Գայիանէի արած գիւտը յափշտակեց նրան։ Այս վտանգաւոր հանգամանքների մէջ երևան էր գալիս մի նոր և վերին աստիճանի յուսալի դաշնակից. եթէ գործը չաջողվի, եթէ հայերը կոտորելու փոխարէն սկսեն կոտորվել, այդ գետնափոր անցքը կը կլանէ մէլիքի ժառանգներին, կը փախցնէ նրանց։ Եւ նա հաւանութիւն չը տուեց Գայիանէին։

—Այդ տեղը շինված է միայն մեզ համար, ասաց նա։—Հայրդ նախ քան մուտքի տեղը ցոյց տալը երկար խրատեց չը մոռանալ, որ միայն մենք ենք կարող պատսպարվել այնտեղ. իսկ դրսի մարդը երբէք չը պիտի իմանայ թէ ինչ կայ մեր տան տակ։

—Այդ բոլորն ինձ պատմեց Մէհրին, երդվեցնելով

որ ոչ ոքին չասեմ։ Եւ ես չեմ ասել։ Բայց այժմ մեր ինչին է այդ գաղտնի ներքնատունը...

Աննա-խաթունը քիչ էլ մտածեց, աչքը չը հեռացնելով իր աղջկանից, որ բացատրում էր թէ փախուստի ճանապարհ չը կայ իրանց համար, թէ ծածկվելու, ազատվելու միտքը բոլորովին չը պիտի լինի, որովհետև նա կարող է թուլացնել, երկիւղ պատճառել վճռական ժամին։ Եւ մայրը, վերջապէս, մի հանգիստ ձայնով պատասխանեց.

—Դու ճիշդ ես ասում. ներքնատունը մեզ հարկաւոր չէ։ Մենք կը մնանք դրսում...

Ուրիշ կերպ, այո, չէր կարող լինել։

Գիշերը Մէլիք-Աւանը իր անակնկալ այցելութիւններից մէկն արաւ՝ հաշիւ պահանջելու համար։ Այդպէս նա արել էր շատ անգամ։ Եւ այդ այցելութիւնների տեղը միայն Աւետարանոցը չէր. նա հասնում էր ամեն տեղ, տեսնվում էր հարկաւոր մարդկանց հետ։

Ցերեկը նա չէր երևում. իսկ գիշերները նրա ձին թռչում էր այս ու այն կողմը, և նրա լուռ ուղեկիցներն էին Հայրապետը և մի ուրիշ հաւատարիմ ծառայ։ Ցանկարծ նա երևում էր մի գիւղում և կարճ միջոցից յետոյ էլի անհետանում էր։

Այս անգամ սովորականից քիչ երկար մնաց նա իր քրոջ տանը։ Այս անգամ նա կարող էր հաստատապէս ասել, որ իր աշխատանքը զուր չը կորաւ. ամեն տեղ պատրաստ էին, գործը զարմանալի աջողութեամբ էր առաջ գնում։

Հասկանում են ամենքը, որ վճռվում է մահվան և կեանքի հարցը։ Խաչէնի մէլիքը մի օրվայ մէջ հաշտվեց իր եղբօր հետ։ Այն՝ ինչ որ չը կարողացաւ անել կաթողիկոսը, գլուխ բերեց հայրենիքի վրա կախ ընկած վըտանգը։ Այսպիսի ժամանակ չը պիտի լինի մի տուն, ուր երկու մարդ միմեանց խէթ աչքով նայեն։ Եւ իրաւ, ամեն տեղ հաստատվել է սերտ եղբայրութիւնը. Թշնամիները հաշտվում են, խօսք տալով միմեանց՝ վէճ չը բարձրացնել մինչև գարունը։ Երկիրը լուռ է, հանդարտ. դրսից նա մի խաղաղ, հնազանդ աշխարհ է, բայց այդ հանդարտութեան տակ տեղի ունի մի խուլ, աննկատելի շարժում։ Զարմանալի է, որ այսպիսի հանգամանքներում չէ յայտնվում մի հատ դաւաճան...

—Բայց կարո՞ղ է յայտնվել, հարցրեց Աննա-խաթունը։

—Շատ հեշտութեամբ... Մի հատ մարդը այժմ կարող է կործանել մի ահագին երկիր՝ Արաքսից սկսած մինչև Գանձակ...

—Ուրեմն պէտք է շտապել։

—Այդ մենք գիտենք...

Նա պատմեց, որ ահը այնքան մեծ չէ։ Գիւլիստանի, Ջրաբերդի և Խաչէնի կողմից կարելի է բոլորովին ապահով լինել. այդ տեղերում գործում է Ջրաբերդի Մէլիք-Հաթամը։

Առանց այդ մարդու օգնութեան հազիւ թէ կարելի լինէր գլուխ բերել մի այսպիսի ահագին գործ։ Նա կայծակի պէս հասնում է ամեն տեղ և նրա կարգադրութիւնները միանգամայն զարմանալի են։ Նա ահ ու դողի մէջ է պահում փոքր ի շատէ կասկածելի մարդկանց։ Նա այնպէս է արել, որ մարդիկ հսկում են միմեանց. ամեն մէկը, որ քիչ բարձր կը խօսէ, յիմար սպառնալիքներ կը կարդայ և փոքր ինչ ծուռ քայլեր կանի, անմիջապէս կը սպանվի։

Բայց, փառք Աստուծու, մինչև այժմ այդպիսի դէպք տեղի չէ ունեցել։ Ժողովուրդը լաւ է հասկանում, որ գործն ամբողջապէս իրան է պատկանում։ Վերջին արարածն էլ մասնակցութիւն ունի։ Ամեն մի այրի կին, ամեն մի չափահաս երեխայ սովորել է, որ պէտք է զգոյշ լինել և սպանել...

—Աջողութիւնն այժմ անկասկած է, բացականչեց Գայիանէն։

—Այո… Միակ վախը գարձեալ Վարանդան է։ Այստեղ օսմանցիները շատ են ուժեղ։

Այդ վախի դէմ իր հոգու ամբողջ կարողութեամբ բողոքեց Աննա-խաթունը, նորից պատմելով այդ օրվայ անցքերը։ Օսմանցիները—ով է ուրանում—շատ են ուժեղ. բայց մինթէ պակաս տեղ են թողել այստեղ գործողները։ Նա երդվեց, որ ինքը դեռ չի թուլանայ, որ դեռ ույժ ունի դիմանալու, եթէ նոյն իսկ ամիսներ հարկաւոր լինեն։

Մէլիքն արժանացրեց նրան իր հաւանութեան, որ արտայայտվեց գլխի թեթև շարժումով։ Նա այլ ևս չուզեց թագցնել, որ ամիսների բան չէ դա, այլ մի քանի հատ օրերի։

Մայր ու աղջիկ մի սրբազան երկիւղով, մի մեղմ ու ցուրտ դողոցով լսեցին նրանից, որ նշանակված է արիւնահեղ գործի ժամանակը… Մի գիշեր, որ կը գայ այս քանի օրերը… Բայց մինչև այդ պէտք էր մի գործ էլ աջողեցնել։ Մէլիքը մանրամասն բացատրեց իր միտքը, հրահանգներ տուեց։

Աննա-խաթունը չը վախեց այդ նոր գործի դժուարութիւնից. ընդհակառակը, հաստատ խօսք տուեց և վստահութիւն ազդող ժպիտներով ճանապարհ դրեց եղբօրը, որ յայտնեց թէ կը վերադառնայ չորս օրից յետոյ։

ԺԲ

Բարեկենդանը վերջանում էր։ Մի սիրուն, արև օր Աւետարանոցը հանդէս բերեց իր բոլոր ուրախութիւնները։ Բնութիւնն էլ միացաւ նրա հետ։

Օդը մեղմ ու անոյշ էր, տոգորված գարնան համով ու հոտով։ Թէև չորս կողմի սարերը դեռ ոտքից մինչև գլուխ սպիտակ, շողշողուն սաւանով էին ծածկված, բայց ամեն ինչ հաւատացնում էր, որ ձմեռը վերջանում է։ Մի տաք ու հանդարտ քամի արդէն անխնայ կերպով

գուրգուրանքներ էր տարածում. ձորերի մէջ, խոռոչներում, ջրերի ափերին հալվող ձիւների տակ, ծնվում էին առաջին կանաչները։

Գալիս էր գարունը—այդ գիտէին երկինքն ու երկիրը։ Աւետիքը լսում էին և մարդիկ։ Բայց նրանք գիտէին, որ այս անգամ գարունը գալիս է բնութեան համար, իսկ մարդկանց համար նա բերում է օսմանցիներին…

Եւ այնուամենայնիւ, ուրախ էին այդ օրը։ Գիւղն ամբողջովին դրսումն էր, չքնաղ արևի տակ։ Դուրս էին բերել նոյն իսկ հիւանդների անկողինները։

Չոր կտուրների վրա, ցանկապատերի տակ խմբված էին մարդիկ, ուտում, խմում էին։ Մի տեղ տաքացած էր լախտի խաղը, միւս տեղ աչքերը կապած աղամարդը այս ու այն կողմ էր յարձակվում, որ բռնէ իրան խփողներին։ Բայց ուրախութիւնների կենտրոնը գիւղամէջն էր։ Այդտեղ մեծ հռչակ ստացած մի լարախաղաց զարմանալի ճարպկութիւններ էր ցոյց տալիս բարձր ձգված պարանի վրա, իսկ «տակի մասխարան» հարիւր ու մի հանաքներով ծիծաղեցնում էր մարդկանց։

Քիչ հեռու խմբված էր աւելի ստուար բազմութիւն. այդտեղ դատաստան էր անում բարեկենդանի թագաւորը։ Նա մի հասարակ գիւղացի էր, բայց ճռպխի ծիծաղաշարժ լրջութեամբ էր կատարում իր պաշտօնը։

Նա նոր էր վերջացրել իր պտոյտը գիւղի փողոցներում և պարկապզուկը, որ առաջնորդում էր նրան իր միանման տաղտուկ ձայներով, լռել էր։ Թագաւորին սպասաւորող գինուորները, նոյնպէս գիւղացիներ, անդադար բերում էին «յանցաւորներ»։ Իր «թախտի» բարձրութիւնից նա արագ ու սրամիտ հարցուփորձով վերջացնում էր գործը և համարեա միշտ դատապարտում էր, նշանակելով ծիծաղաշարժ պատիժներ։ Երբեմն թագաւորը օրինակում էր Թիւրքաց դատարանը. հանդիսականների մէջ բարձրանում էր մի չափաւոր, զսպած ծիծաղ։

Ծիծաղում էին և թիւրք գինուորները, որոնք խառն-

ված էին գիւղացիների հետ։ Նրանց էլ վարակել էին բա-
րեկենդանի հոտերը. ընդհանուր ուրախութիւններին նը-
րանք էլ մասնակից էին. նրանց պարիներ էին անում,
հիւրասիրում էին, տալով ամենալաւ պատառները։ Կար-
ծես յաղթողների և յաղթվածների մէջ այլ ևս թիւր-
իմացութիւն չը կար. ամենքը եղբայրացել էին, ամենքը
առատ տուրք էին տալիս բարեկենդանի ոգուն...

Կէսօր էր։ Թագաւորը վեր կացաւ և յայտարարեց,
որ հերթն այժմ հասաւ նշանաւոր տղամարդկանց։ Իսկոյն
զինուորները դէս ու դէն վազեցին, գտան մի քանիսին,
որոնք ամենայն հաճութեամբ առաջ անցան, թոյլ տուե-
ցին, որ իրանց կապոտեն և որքան կարելի է ծանր փըր-
կանք նշանակեն։ Բայց թագաւորի պահանջները շատ
չափաւոր էին. մէկից կէս չափ արաղ, միւսից երկու ա-
ման չոր միրգ—այսպիսի փրկանքներով էին երիտասարդ-
ները ազատվում իրանց կապանքներից։

—Մնաց բէկը, յանկարծ ձայն տուեց թագաւորը և
ամենքը լռեցին.—Հասարակութիւն, մեծ մարդուց մեծ
բան ենք ուզում։ Բարեկենդանն այսպէս է ասում. փորս
վեց-վեց է անում, իսկ արեգակը մի գլուխ պնդում է,
որ ուտելու ժամանակն է։ Իմ հոգին վկայ, այսօր մենք
պիտի մարդավարի ուտենք։ Եօթը սինի համեղ կերա-
կուր, եօթը փարչ Ամարասի գինի, եօթը թոնիր Աւե-
տարանոցի կարմիր ցորեն թաժայ հաց։ Կը համբէք, կը
տանեք։ Պակաս չի լինի։

—Շէն մնայ, շէն մնայ, կանչեցին ամենքը։

Նշանակելով այդքան խոշոր տուրք, թագաւորը գի-
տէր թէ ով պիտի լինի տուողը, գիտէր և այն, որ ա-
մեն բան արդէն պատրաստ է։ Եւ եօթը մարդուց կազմ-
ված մի պատգամաւորութեան ձեռքով նա ուղարկեց իր
հրամանը։ Ամբոխը շարունակ «շէն» էր կանչում։ Նա
էլ գիտէր, որ շէն մնացողը մելիքի տունն է...

Եւ իրաւ, այդ տունն էր օրվայ ուրախութիւնների
հեղինակը։

Գիւղը դատարկ էր, մի քանի անգամ թալանված.
և եթէ ուտում, խմում էր այդ օրը, պատճառն այն էր,
որ Աննա-խաթունը վճռել էր ոչինչ չը խնայել։

Երեք օր էր մնացել մինչև մեծ պասի կիրակին և
այդ երեք օրը ամբողջ գիւղը պիտի լիանար մելիքի տա-
նից։ Անօթները, պատրաստողները բազմաթիւ էին, աշ-
խատում էին օր ու գիշեր. այլապէս չէր կարող դուրս
գալ այդ ահագին խնջոյքը, որ մոռացնել էր տալիս մէ-
լիքների աւանդական առատաձեռնութեան բոլոր յիշա-
տակները։

Մեծ սենեակում, որ զարդարված էր գորգերով, նըս-
տած էին տղամարդիկը։ Դրանք Վարանդայի տանուտէր-
ներն էին։ Վերևում, սենեակի պատուաւոր տեղում,
փափուկ օթոցներից և բարձերից պատրաստված էր ա-
ռանձին տեղ բէկի համար։ Բացված սեղանը շլացնում
էր իր ճոխութեամբ։ Սպասում էին Մելիք-Աւանին, որ
սկսեն ճաշկերոյթը։ Բայց ահա ներս մտաւ Աննա-խա-
թունը և մօտենալով բէկին, ասաց.

—Հրամայիր որ սկսեն, բէկ։ Եղբայրս մարդ է ու-
ղարկել, յայտնում է որ չէ կարող գալ։ Մի շատ հար-
կաւոր գործի համար երէկ առաւօտ գնացել է Գանձակ,
Մուստաֆա-փաշայի մօտ։ Շտապով գնացել է, որ շտա-
պով էլ վերադառնայ, որպէս զի կիրակի երեկոյեան իր
տանը լինի։ Ես արդէն ասացի, որ այդ երեկոն մեզ հա-
մար շատ նուիրական է. եօթը շաբաթվայ պաս ենք բռ-
նում, և չի լինի մի մարդ, որ այդ ժամանակ իր տանից
հեռու մնայ...

—Կարող էր յետոյ գնալ, պատասխանեց բէկը։

—Ո՛չ, նա չէր թողլ տայ. նա այս տան մեծն է և
պիտի իր ձեռքով յանձնէ քեզ իր քրոջ աղջկան, շնոր-
հակալութիւն յայտնէ քո բարերարութեան համար, որ
արիր մեզ, պահելով այդքան ժամանակ։ Բայց դրանից...

Նա մի ակնթարթում յուզվեց և նրա աչքերը լցվե-
ցին արտասուքներով։

—Բացի դրանից, պիտի խնդրէ, որ դու շնորհ ունենաս դէպի մեր երեխան... Իմ աչքի սիրելին է, բէկ, ուրիշը չունեմ...

Երջանիկ փեսան շտապեց հանգստացնել նրան։ Նա ասաց.

—Միամի՛տ մնացիր... Նա իմ ամենասիրելի կինը կը լինի։ Մեղք է այդ հիւրիին վատ պահելը։ Գիտե՞ս, ես միայն նրա պատճառով այսքան սպասեցի։ Սպասելն էլ լաւ էր։ Բայց հիմա վերջանում է...

—Ամեն ինչ վերջացած է։

—Լաւ, իմ ասածն է լինում. մինչև գարուն ես չէի սպասի...

—Քո կամքը կատարված է, բէկ։ Ահա սկսեցինք հարսանիքը։ Երեք օր կը շարունակենք, կիրակի երեկոյեան միասին պաս կը բռնենք, երկուշաբթի առաւօտը նա կը գնայ իր հօր գերեզմանը համբուրելու, նրա օրհնութիւնն առնելու։ Դա կարգ է։ Այնուհետև... հարսանիքը տեղափոխվում է քո տունը...

—Հա՛, ես սպասում եմ մեր մեծ մոլլային։ Վաղը կամ միւս օրը նա այստեղ կը լինի...

—Այժմ հրամա՛ն տուր, որ մարդիկ հաց ուտեն...

—Մի բան էլ ասա ինձ... Դու մի որդի ունէիր, ո՞ւր կորաւ։

—Շահնազարը, հարցրեց նա մի ձայնով, որ արտայայտում էր մօր խանդաղատանքը, կարօտը։—Ա՛խ, բէկ, ինչ գիտէիր որ հէնց այժմ ես նրա մասին էի մտածում։ Ինձ համար էլ շատ ցաւալի է, որ երեխան ներկայ չէ այս ուրախութիւններին։ Բայց ինչ անեմ։ Բեռին նրան մի ոսկեզօծ քուրակ է ընծայել և նա այլ ևս տուն-տեղ չէ ճանաչում, ուզում է չափել ամբողջ աշխարհը։ Այժմ եղբօրս հետ Գանձակ է գնացել։ Երեխայ է, թո՛ղ ուրախանայ. ես այնպիսի մայր չեմ, բէկ, որ զրկեմ իմ երեխաներին։ Բայց կիրակի երեկոյեան նա, ի հարկէ, այստեղ կը լինի։

Սուլէյման-բէկը այլ ևս սաբրը չունէր. այժմ պէտք էր ուտել։ Այս ու այն կողմից խնդրում էին նրան սկսելու հրաման տալ և նա գլխով հաւանութեան նշան արաւ ու վերցրեց իր առջև դրած հացը։

Երևան եկաւ մի աման, որ լի էր դեղին ոսկիներով։ Աննա-խաթունը չէր մոռացել իր փեսայի ատամնավարձը։ Նոյն իսկ այս խնջոյքի ժամանակ էլ նա շեշտում էր, որ բէկի ամուսնութիւնը ոչ մի առանձին իրաւունք չէ տալիս աղջկայ ծնողներին. նրանք նոյն գեաւուրներն են մնում. իսկ երբ մուսլիման իշխանաւորը արժան է համարում ձեռք մօտեցնել գեաւուրների հացին, նրանք պարտաւոր են վճարել պատուաւոր հիւրի ատամների վարձը։ Ամանը բաւական մեծ էր, պարունակում էր շատ առատ վճար։ Բէկը մի կողմ դրեց այդ տուրքը, իսկ տուրք տուողին արժանացրեց իր բարեհաճ ժպիտին։

Նա սկսեց ուտել։ Մէլիքի տունը թնդաց խնջոյքի ձայներից. երգ, նուագածութիւն, խօսք ու հանաք խառնվեցին, մի անընդհատ, ուրախ աղմուկ կազմեցին։ Տղամարդկանց մօտ երգում էին երկու աշուղներ, իսկ երկու հատ ծաղրածու մրցում էին միմեանց հետ սրախօսութիւններով, զուարճալի պատմուածքներով։

Մի և նոյն ժամանակ հարեմն սենեակում էլ սկսվեց նուագածութիւնը. փողը ձայնակցում էր քամանչային, թմբուկը երբեմն խլացնող ձայներ էր արձակում։ Այդ սենեակը փակված էր տղամարդկանց կողմից. այնտեղ կանայք ու աղջիկներն էին ուրախանում։

Կերակուրները մատուցվում էին միմեանց ետևից։ Վարանդայի լեռները տեսակ-տեսակ որսեր էին ուղարկել ճոխ սեղանի համար. խորոված փասեանները, կաքաւները, եղնիկների ազդրերը ամբողջ կոյտեր էին կազմում սփռոցների վրա։ Գինին էլ առատ էր և բէկը ազատ չէր մնում նրա ազդեցութիւնից։ Օսմանեան զորքերն այդ ժամանակ անարգել գործ էին ածում խմիչքներ. նոյն իսկ սարսափելի ենիչէրներն էլ աւանաս էին

անում մարգարէի պատուիրանը։

Աննա-խաթունը թոյլ չէր տալիս, որ կերուխումը դադար առնէ. ամեն րոպէ ներս էր գալիս, թախանձում էր, որ պակաս տեղ չը թողնեն և էլի հեռանում էր, որ կարգադրութիւններ անէ։ Նա խնդրում էր չը մոռանալ, որ սա Գայիանէի հարսանիքն է, չը մոռանալ մանաւանդ այն որ բէկը շնորհ է արել ամենքին, թոյլ տալով այսքան աղմկալի ուրախութիւններ։ Հիւրերը ոգևորվում էին այդ խօսքերից, խմում էին իրանց բարերարի կենացը, օրհնում էին նրա կեանքը, մաղթում էին բախտ և երջանկութիւն։

—Դրսում էլ մի և նոյնն է կատարվում, ասաց Աննա-խաթունը, մօտենալով իր փեսային։

Ապա պատմեց թէ ինչ հրաման է ուղարկել բարեկենդանի թագաւորը և աւելացրեց.

—Ես չը սպասեցի քո թոյլտւութեան և ինքս յանձն առայ կատարել այն, ինչ քեզանից են պահանջում։ Այսուհետև միթէ կարելի է ջոկել քո կայքը մեր կայքից… Ես այդպէս էլ ասացի ժողովրդին և տուի, ինչ որ ուզում էին։

Թիւրքը աւելորդ համարեց պատասխանել այդ խօսքերին. այդ միջոցին նա իր հաստ մատներով ջարդում էր մի խորոված փասեան. միջից կէս անելով, նա մի քանի անգամ խորին բաւականութեամբ լպստեց մատները և մի մեծ կտոր տալով Աննա-խաթունին, ասաց.

—Տա՛ր աղջկան… թող ուտի. այս կէսն էլ ես եմ ուտում։ Ասա իմ ձեռքով տուի։

Նա վերցրեց կտորը և շտապով դուրս գնաց, որպէս զի ոչ ոքի չը նայէ։ Իսկ բէկը կանչեց ծառաներին և մի հրաման տուեց։ Կարճ միջոցից յետոյ ներս մտան երկու թիւրք զինուորներ։

Աշուղները լռեցին և սենեակում բարձրացաւ թիւրքական երգը։

Մռայլ ու ցուրտ լեռները մի կողմը քաշվեցին, հե-

ւոր Սիրիայի անապատների ծոցից դուրս եկաւ լոյսերով, ջերմութեամբ ողողված Դամասկոսը։ Սուրբ է նրա հողը. այնտեղ են Ալլահի բոլոր հրաշքները։ Կանաչների մէջ թաղված է սրբազան Շամը. արմաւենիները, կիթենիները, խնձորենիները և հազար ու մի հրաշալի ծառեր մութ ու խիտ անտառներ են կազմում, որոնց մէջ ցցված են մոմի պէս բարակ և ձիւնի պէս սպիտակ մինարէները։

Բայց ոչ մի հրաշք նման չէ Դամասկոսի սոխակին։ Երբ ծառերն ու ծաղիկները կռիւ են սկսում միմեանց դէմ, որ միմեանց յաղթեն անուշ բուրմունքներով, իջնում է սոխակը և բերում է իր ձայները։ Երգեր են դըրանք, երկնքի համար նշանակված երգեր. բայց ողորմած է մարգարէն և նրա ողորմութեամբ էլ այդ երկնային երգերը լսելի են դառնում երկրի վրա։ Յասմիկն ու շուշանը, նարգէսն ու մեխակը կանչում են երգչին, գրաւում են նրան, բայց նա միայն վարդի վրա է սիրահարված, միայն նրան է տալիս իր երգը։ Լուռ գիշերին, անուշահոտութիւնից արբեցած, նա համբուրում է վարդի բաց-կարմիր շրթունքները, փռում է նրա թերթիկները իր բոյնի մէջ և այնտեղից փառաբանում է Ալլահին մինչև լուսաբացը։ Եւ Ալլահը լսում է նրան արծաթէ աստղերից։ Ալլահը երգել է տալիս նրան, որ ցոյց տայ մարդկանց մի կտոր իր դրախտից, որ պատրաստված է ուղղահաւատ մուսլիմանի համար…

—Ինշալլա՛հ, բացականչում է բէկը և մի բուռը փող է տալիս երգիչներին։

Իսկ երգը անցնում է պարտէզի խորքը։ Մութը պատել է երկինքը, քչքչում են Շամի շատրուանները։ Ամեն ինչ հանգստացել է, բայց միայն մի տեղ, յասմիկի թփերի մօտ, լսվում է հնաւուրց սևամորթ ստրկուհու շշուկը. նա հանգստացնում է կիսամեռ հիւրին։ Իզմի՜ր… Հարեմի սառը չէ դիւթվում. Նա սպասում է, սպասում է իր սիրոջը, որ գնացել է հեռու մի տեղ,

կախ է վարում անհաւատ գեաւուրների դէմ...

Ամեն ինչ հայրենի, ամեն ինչ հրաշէկ, այրող է այդ երգի մէջ։ Գինին տաքացնում է միւս կողմից և բէկը ոգևորված է։ Նա կանչում է Աննա-խաթունին, բայց մինչև նրա մօտենալը ինքը վեր է կենում տեղից և գնում է նրա առաջ։

—Այս բոլորը առանց նրան ոչինչ է, ասաց նա, և այլանդակ, սարսուռ ազդող ժպիտը տարածվեց նրա թուխ դէմքի վրա։

Երբեք նա այդ աստիճանին չէր հասել։ Գինին, երգը ջնջել էին ամօթի վերջին հետքը, մերկացրել էին նրա բոլոր կրքերը։ Նա պահանջեց, որ ցոյց տան աղջկան։ Եւ սկսեց պատմել, որ տարիներ առաջ մի գնչուհի հասկացրեց, թէ ինչպէս է կինը այրում տղամարդին։

Այն ժամանակ նա բէկ չէր, այլ մի փախստական, որ ապրում էր Ալբանիայի սարերում։ Գիշերային խընջոյք կար մի ալբանացի բէկի ամրոցում. հիւրեր շատ էին հաւաքվել, բայց ամենից սիրելին Սուլէյմանն էր։

Ոչինչ էին ալբանացի բէկի պատրաստութիւնները. ոչ անթիւ կերակուրները, ոչ խմիչքները այնպէս չէին ուրախացնում, ինչպէս սևաչեայ նիհար գնչուհին, մի երկարահասակ աղջիկ, որ պարում էր դրախտի հուրիի պէս։ Մինչև լոյսը նա դադար չառաւ, խաղացնում էր աչքերը, թռչկոտում էր, կրակ զցող շարժումներ էր անում։ Սուլէյմանն անդադար փող էր ընծայում նրան, իսկ նա նստում էր նրա կողքին, շշնջում էր կիսատ-պռատ խօսքեր. նա կարող էր հարիւր գիշեր պարել, աչքերից կրակ թափել։ Եւ ահա հէնց այժմ Սուլէյման-բէկը յիշեց գնչուհուն. և ուզում է տեսնել իր կնոջը...

Զուռնաչը լսեց այդ պատմութիւնը, և նա քար է, չէ սարսափում։ Դարձեալ խոնարհ, դարձեալ ամօթխած, նա ցոյց է տալիս, որ երբեք չի համարձակվի ընդդիմանալ։ Կանանց սենեակի դուռը կիսով չափ բաց արին, բէկը կանգնեց այդ ճեղքի առաջ։

Մի-երկու հայեացք բաւական էր, որ նա հասկանայ թէ այդտեղ, կանանց բազմութեան մէջ, միայն մի հատ թագուհի կայ և դա—Գայիանէն է։ Գնչուհին կորաւ նրա յիշողութիւնից, իսկ այս աղջիկը իր կարմիր մետաքսեայ շորերի մէջ, կարծես, հարցնում էր թէ միթէ կայ մի գեղեցկութիւն, որ յանդգնէ մրցել իր հետ։ Բէկը, կարծես, այդ հարցին պատասխանելու համար էր, որ դարձաւ իր զուռնաչին և էլի ասաց.

—Շուտ արա, ~~վերջացրու։~~

—Վերջանում է, բէկ։ Երեք օր է մնում...

Յաղթահարված սիրիացին չիմացաւ թէ ինչ ասէ, և հրամայեց գինուորներին շարունակել երգը։

Դարձեալ փչեց անապատի շունչը, դարձեալ խօսեցին արևի կրակոտ ճառագայթները, խոխոջացին ջրերը շատրուաններում, դարձեալ շշուկ հանեց մուսլիմանի դրախտը իր հեշտանքներով։ Բէկը լսում էր, նայում էր։

Տեսաւ որ Գայիանէն թեքվեց դէպի իր ընկերուհիներից մէկը. ահա նրանք ինչ-որ բան փսփսացին, ահա երկուսը նայեցին իրան։ Ընկերուհին, միւս նստածները մի ակնթարթում հալվեցին։ Գայիանէն դէմքի վրա մի ծիծաղ ունի, որի մէջ ամբողջ աշխարհը կուլ կը գնար։ Եւ միայն բէկն էր, որ կարող էր հասկանալ այդ հրաշքի միտքը. միայն նա գիտէր, որ ծիծաղը նշանակում էր թէ նշանածը խաղում է իր նշանածի հետ, ուրախ է, որովհետև սիրում է։

Նշանածների երջանկութեան մեծ մասը կուրութիւն է, և այդ կուրութիւնը երբեք թոյլ չէր տայ բէկին ենթադրելու, թէ մի ուրիշ միտք կարող է լինել այդքան գեղեցիկ, այդքան ջահել աղջկայ մէջ։ Ու երբ հրաշքն անցաւ, երբ Գայիանէն նորից իր ընկերուհիներին տուեց իր ուշադրութիւնը, էլի սկսեց խօսել նրանց հետ, բէկն զգաց, որ ինքն էլ պիտի մի բան անէ, արտայայտէ իր խորին գոհութիւնը։

Նա խօսել էր կամենում և նայելով իր զօքանչին, յանկարծ ասաց.

—Ի՞նչ ես ուզում, Աննա-խաթուն։

Այդ անունը նա առաջին անգամն էր արտասանում։ Զարմացած բարեհաճութեան այդ անակնկալ նշանից, մէլիքի կինը հարցրեց.

—Ի՞նչ հրամայեցիր, բէկ։

—Ինձանից մի բան խնդրիր։

Աննա-խաթունը միամիտ կերպով ծիծաղեց և ոչինչ չասաց։

—Հանաք չէ. ես մի բան տալ եմ ուզում։ Լաւ է այս տեղը, այնքան լաւ, որ դու պիտի ասես թէ ինչ ես խնդրում։

—Միայն քո առողջութիւնը, բէկ։

—Այդ բաւական չէ, ասաց նա աւելի ես թուլացած այդ շողոքորթութիւնից։—Միթէ պակասութիւն չունես։

Նա սկսեց հանդարտ մռռալով ձայնակցել զինուորների երգին, և մի և նոյն ժամանակ գլխով նշաններ անել իր զօքանչին։

—Մի բան չեմ գտնում, բէկ, պատասխանեց նա։ —Ի՞նչն է պակաս... Այստեղ, այսօր, այս ուրախութիւնների մէջ պակաս բան չէ երևում։ Ա՛յնքան մեծ է շնորհդ, ա՛յնքան շնորհակալ եմ քեզանից, որ իմ լեզուն ուրիշ բան չէ կարող ասել։ Բայց դու մոռացել ես ճաշդ, ա՛նուշ արա, բէկ, նախիր։

Նա թախանձում էր, իսկ բէկը իրանն էր կրկնում։ Վերջապէս նա յայտնեց որ մեծերը գժգոհ են լինում, երբ հպատակները այսպիսի ուրախութեան ժամանակ մի բան չեն խնդրում։

—Հասկացայ, բէկ, բացականչեց Աննա-խաթունը մի մարդու նման, որ յանկարծ է հասկանում իր սխալը։— Ի հարկէ, այդպէս է, ի հարկէ իշխանը հանդէսների ժամանակ ողորմութիւն պիտի անէ իր հպատակներին։ Ներիր, ես ուշ հասկացայ։ Բայց հաւատացիր, այս րօպէին

ես ոչինչ չեմ գտնում։ Եթէ քիչ ժամանակ տաս, ես կը մտածեմ, գուցէ մի բան գտնեմ։ Եւ պէտք է գտնել, ես չեմ խնայի ոչ մի միջոց, որ քեզ հաճութիւն պատճառեմ, քո փառքն աւելացնեմ։ Բայց ճաշը մնում է, ա՛նուշ արա, ամենից առաջ այդ շնորհն եմ խնդրում...

Բէկը հնազանդուեց, հաւանութեան նշան արաւ ու նստեց իր տեղը. իսկ Աննա-խաթունը դուրս գնաց։

Խնջոյքն աւելի և աւելի աղմկալի էր դառնում։ Հիւրերը մոռացել էին թէ ինչ զանազանութիւն կայ իրանց և բէկի մէջ և շարունակ շողոքորթութիւններ էին անում նրան։ Եւ բէկը բարեհաճութեամբ էր վերաբերվում այդ մարդկանց. նա էլ, կարծես, մոռացել էր որ իր հետ մի տան մէջ նստածները անհաւատ գեաւուրներ են, մոռացել էր որ դարուն է գալիս...

Ծառան ներս բերեց վերջին մատուցարանը և ամենից առաջ դրեց բէկի առաջ։ Աննա-խաթունն եկաւ ծառայի ետևից և էլի սկսեց խնդրել, որ նա շատ բաժին վերցնէ։ Բայց բէկը ձեռքի շարժմամբ հասկացրեց որ եղածը բաւական է և հարցրեց.

—Գտա՞ր մի բան...

Այն ժամանակ մէլիքի կինը կանգնեց մէջտեղ, նշան արաւ և ամենքը լռեցին։ Նա ասաց.

—Մարդիկ, մեր բէկը մեր ամենքիս գլուխն է, Աստուած նրա կեանքը երկարացնէ։

Հանդիսականները միաբերան «ամէն» գոչեցին։

—Կարգ է, որ աշխարհի տէրը իր հարսանիքի օրը բարի աչքով է նայում իր հպատակներին և ողորմութիւն է անում նրանց, շարունակեց Աննա-խաթունը։ Մեր բէկն էլ այնքան ողորմած է, որ այս րօպէին ինքն ասաց, որ մի բան խնդրեմ։ Բայց ինչ խնդրենք։ Ես շատ մտածեցի և ոչինչ չը գտայ։ Եւ ինչ կարող ենք խնդրել։ Մենք, փառք Աստուծու, հանգիստ ու ապահով ենք, ոչինչ նեղութիւն չենք զգում։ Եթէ շնորհ ենք ուզում, սրանից աւել ինչ մեծ շնորհ. մեր գլխի տէրը բարեհա-

ձեզ հաւանել այս օջախը և մի բուռն մոխիր վերցրեց այդ օջախից. այդքանը բաւական չէ, դեռ թոյլ էլ տուեց որ մենք մեր կարգով հարսանիք անենք։ Սրանից աւել մի բան ուզել մենք չենք համարձակվի, այնպէս չէ . . .

Աղմկալի հաւանութիւնները իսկոյն հաստատեցին այդ խօսքերը։

—Միտք էի անում թէ ինչ է մնում և հասկացայ, որ պակասութիւն կարող է ունենալ միայն այս հարսանիքը։ Հարցրէ մելիքի աղջկան. նա օգնեց և ես հիմա պիտի խնդրեմ բէկից, խնդրեմ ոչ թէ մեզ համար, այլ դարձեալ նրա և նրա նշանածի համար . . .

Եւ, դառնալով իր փեսային, նա շարունակեց.

—Կիրակի երեկոյեան մենք պսակ ենք բռնում, բէկ. այդ երեկոն էլ կը լինի հարսանիքի վերջը։ Պապերից մնացած սովորութիւն է, որ պսակ բռնելիս մեր մարդիկ հրացան են արձակում։ Թոյլ տուր, բէկ, որ այս անգամ կատարենք այդ սովորութիւնը։

—Թոյլ տուի, ասաց բէկը մի վեհ և հպարտ ձևով։

Սենեակը թնդաց ուրախութիւնների և շնորհակալութիւնների աղմուկից։ Ամենքն օրհնում էին բէկին։— Աննա-խաթունը նորից հրամայեց որ լռեն և ասաց.

—Ամենքին յայտնի է, որ ռայեան հրացան չը պիտի պահէ, քանի որ օսմանեան առիւծները մեր պահապաններն են։ Հրացաններ մենք չունենք և հարկաւոր էլ չէ որ ունենանք։ Բայց քո հարսանիքի համար թոյլ կը տաս, որ զինուորները հրացան տան մեր մարդկանց. չեմ ասում ամենքին. ոչ, ամեն գիւղում մի քանի հատ լինի, բաւական է։

—Զինուորներն էլ կարձակեն, պատասխանեց բէկը։

—Եթէ ուզում են մեր պսակը շնորհաւորել, ինչու չէ... Ես կարծում եմ, որ դու այդպէս չես անի, բէկ։ Օսմանցին չէ խառնվում մեր հաւատի գործերի մէջ։ Մենք մերը կը վերջացնենք, այնուհետև դու կը սկսես, երբ հարսը քո տանը կը լինի։

—Լաւ խօսք է։

Զինուորներից մէկը գնաց տասնապետ Ահմէդի ետևից։ Բոպէ չանցած, ներս մտաւ ծերունի զինուորը։ Երևում էր, որ նրան էլ բաւական փափկացրել էր մելիքի տան առատութիւնը։ Բարեմիտ ժպիտը բերանին՝ նա լսեց իր գլխաւորի հրամանը։

—Կիրակի երեկոյեան գեաւուրները հրացան պիտի արձակեն. իմ հարսանիքի համար է. թող մերոնք հրացան տան, եթէ հարկաւոր լինի։ Այդպէս էլ գրել տուր դէֆթէրդարին. սա իմ հարսանիքի համար է։

Նա հանեց իր կնիքը, տուեց Ահմէդին և պատուիրեց ձիաւորներ պատրաստել։ Բայց Աննա-Խաթունը խնդրեց նեղութիւն չը տալ զինուորներին։ Ինչքան հրաւիրված հիւրերը երեկոյեան պիտի վերադառնային իրանց գիւղերը. նրանք էլ կարող են տանել հրամանները։ Բէկը համաձայնվեց։

Այնուհետև Աննա-խաթունը ուրախութիւնից փայլող դէմքով շնորհակալութիւններ էր յայտնում. և նրան նոյն անկեղծութեամբ ձայնակցում էին բոլոր հանդիսականները։

—Մինչև երկինք, բէկ, մինչև երկինք շնորհակալ եմ քեզանից, ասում էր մելիքի կինը յուզմունքից դողալով։ —Աստուած ողորմած լինի դէպի քեզ, ինչպէս դու ողորմած ես դէպի մեզ։

-Ածեցէք, շարունակեց նա, դառնալով աշուղներին։—Ուրախացրէք այս մարդկանց։ Էլ ինչ պակասութիւն կայ . . .

Նա ցնդվածի պէս դուրս վազեց և բոպէ չանցած՝ թմբուկը թնդաց կանանց սենեակում. լսվեցին ծափի ձայներ. բէկը ընագդմամբ քաշվեց դէպի կիսաբաց դուռը։ Եւ արժէր։ Պարում էր Գայիանէն . . .

Դեռ նա չէր տեսել թէ ինչպէս է խաղում իր ընտրածը։ Թիւրքի վաւաշոտութիւնը ոչ մի բան այնպէս հեշտ չէ գրգռում, ինչպէս կանացի պարը։ Եւ ահա նա

ներկայ էր մի նոր, դեռ բոլորովին անծանօթ հրաշքի։

Բաւական չը համարելով երկու աչքերը, նա կիսով չափ բաց արեց բերանը, որպէս գի լիուլի հիանայ պարողի նազելի շարժուածքներից։

Ո՛րքան գեղեցիկ էր այդ բարեկազմ, ճկուն մարմինը, երբ իր մեղմ, վեհ շարժումները համաձայնեցնում էր նուագածութեան իւրաքանչիւր շեշտին. որքան թեթև, վայելուչ, քնքուշ կերպով էր նա սահում գորգերի վրա. կուսական ամօթխածութիւնը կարմիրներ էր փռել նրա դէմքի վրա, հրաշալի աչքերը ցած են նայում, հըպարտ են։ Երջանիկ է նա. ոչինչ չէ հարկադրում նրան, նա ինքը, իր սրտի ամբողջ գոհունակութեամբ շարժվում է մեղմ, չը շտապելով, կարծես ինքն էլ սիրահարվել իր վրա, կարծես գիտէ, որ երբէք չէ կարելի կշտանալ այդ բախտից, այդ անհուն ուրախութիւնից։ Նա յոգնել չը գիտէ. նա խեղդում է բէկին անչափ բաւականութեան տակ։

Եւ իր վրա ծանրացած հաճոյքից ու ուրախութիւնից ազատվելու համար փեսան դարձեալ դրամներն է որոնում, գանում է նրան և ասում.

—Ջուր չէ որ գեաւուրներին չեն խղճում... Այսպիսի հուրին արժանի չէր պիղծ անհաւատներին։ Տեսնո՞ւմ ես, նա ինքը եկաւ ինձ... Նա իմն է... Գեաւուրները արժանի չեն նրան...

Աննա-խաթունը չը պատասխանեց. միայն ծիծաղեց թոյլ ու հեզ կերպով, հնազանդ մի գեաւուրի ճակատագրին, որ այժմ էլ ասում էր թէ երբ այդպէս է աշխարհի կարգը, ինչ կարելի է անել...

Պարը խանգարեց ահագին աղմուկը, որ գիւղացիների մի մեծ խումբ մացրեց մէլիքի բակը։ Մարդիկ գիւղում կերել, խմել էին և այժմ եկել էին, որ այստեղ վերջացնեն օրվայ ուրախութիւնները։ Զուռնան լռեց, բարեկենդանի թագաւորը պահանջեց, որ բէկը դուրս գայ և ընդունէ հպատակների շնորհաւորութիւնները։ Եւ վե-

րանորոգվեցին ազատմարդկանց պարերը. իսկ երբ բէկը, վերջապէս, դուրս եկաւ, մարդկանց աղաղակներին վերջ չը կար։ Նորից գինի դուրս բերին, նորից կենացներ պարպեցին։ Կարծես այդ ցոյցերի առարկան սիրելի Սուլէյման-բէկը չէր, այլ մի բարեսիրտ իշխան, որին հպատակները անկեղծ շնորհակալութիւններ էին յայտնում։ Թագաւորը նշան արաւ, զուռնան նուագեց լեռնական եալլին և շարան-շարան մարդիկ սկսեցին այդ ծիծաղաշարժ պարը ի պատիւ բէկի։

Մութը կոխեց, բայց Աւետարանոցը չէր լռում...

Բաւական ուշ էր, երբ դատարկվեց մէլիքի տունը։

Ամենից յետոյ հեռացան ուրիշ գիւղերից հրաւիրված հիւրերը։ Նրանք տարան բէկի կնքով վաւերացրած հրամանները և մէլիքի տան նոր հրահանգները։

Մնալով մենակ իր աղջկայ հետ, Աննա-խաթունը ծիծաղեց, բայց մի անզուսպ, մի կատաղի լաց յանկարծ ընդհատեց այդ ուրախութիւնը։

Գայիանէն գրկեց նրան, յիշեցրեց որ կէս գիշերին պէտք է սպասել մէլիքին։ Բայց իզուր։ Մի երկար օր խեղճ կինը մաքառել էր իր սրտի ու զգացմունքների հետ. և այժմ յոգնած ու ջարդված՝ զգում էր նա, որ հասել է նպատակին, բայց թւում էր թէ դրա համար շատ էր նա տառապել, շատ էր չափն անցրել։

—Ինչո՞ւ պարեցիր, հարցրեց նա։

—Անկեղծ ուրախութիւնից, մեր յաղթանակը տօնելու համար։

—Նա նայում էր քեզ և... Ո՛րքան լիրբն է...

—Ես էլ նայում էի, բայց նրան չէի տեսնում, մայր, այլ մերոնց, այն փրկարար գիշերը, որ գլուխ եկաւ այսօր... Ամբողջ Ղարաբաղը մեզ է նայում. և մենք—ամօթով չենք մնայ. միայն Վարանդան է, որ ահ էր ներշնչում. այժմ ապահով կը լինեն ամենքը... Այդ—ուրախութիւնն ինձ պար ածեց, վերջին անգամ։ Չի՛աճ նրա լրբութիւնը... Ոչինչ, հեռու չէ հաշիւ տեսնելու [illegible]

Ո՞վ է ինձ չափ բախտաւոր։ Քեռին պատուիրեց, որ ես ինքս խնդրեմ. բայց Թիւրքն ինձ ազատեց այդ բանից. նա ինքը պահանջեց որ դու խնդրես։

Իսկ մայրը մինչև վերջը չը լսեց։ Յանկարծ նա ընկաւ կողքի վրա և քնով անցաւ։ Այդպէս քնում են փոքրիկ երեխաները երկար խաղալուց յետոյ։ Գայիանէն ծածկեց նրան և սկսեց սպասել համբերութեամբ։

Մէլիք-Աւանն այս անգամ շատ ուշացաւ։ Մինչև նրա գալը ամրոցում յայտնվեց մի ուրիշ այցելու, որ խօսում էր խիստ, սպառնալիքներ էր կարդում։ Գայիանէն չը համբերեց և նոյնպէս կոշտ կերպով խօսեց։ Այցելուն շուտ հեռացաւ, իսկ երբ Թէօսը իմաց տուեց որ գալիս է Դիզակի մէլիքը, նա մոռացաւ ամեն բան և, վազելով իր քեռու առաջ, բացականչեց.

—Ամեն ինչ պատրաստ է...

—Ես այդ գիտեմ, պատասխանեց քեռին, ձիու սանձը տալով Հայրապետին։

Իսկ երբ մտան սենեակ, նա գրկեց Գայիանէին և ուրախ կերպով շարունակեց.

—Մենք էլ պատրաստ ենք։ Այժմ պէտք է տեսնել Մանասին...

—Նա էլի մարդ էր ուղարկել այստեղ. էլի իր էշն է քշում։

—Ի՞նչ էր ասում։

—Մի և նոյն սպառնալիքը։ Կարծում է թէ խաբում ենք իրան և ասում է թէ ես իր ձեռքից չեմ պրծնի, եթէ մինչև անգամ բէկի տանը լինեմ...

—Նա ոչինչ չը գիտէ. պէտք է տեսնել նրան. հարկաւոր է որ նա այստեղ լինի...

—Չէ՞ կարելի առանց նրան...

—Ինչո՞ւ։

—Է՛հ, քեռի...

Եւ Գայիանէն ծաղր ու արգահատանք արտայայտող մի ծամածռութիւն գործեց։

—Ո՛չ, անկարելի է... Բէկը մի ամբողջ ձիաւոր խումբ ունի... Դժուար է։

—Էլի՞ դժուար, յանկարծ խօսեց Աննա-խաթունը, տեղից վեր թռչելով։ —Դեռ երկու օր էլ ունենք, Ա՛ւան. եթէ այսօր պակաս տեղ է մնացել, ասա. այդ էլ կանեմ...

Բայց Մէլիք-Աւանը չը խօսեց, այլ բռնելով նրա ձեռքից... ծիծաղեց։

Վերջապէս...

ԺԳ

Ձորի խորքից քսան և հինգ զոյգ աչքեր անձկութեամբ դիտում էին երկնքի այն մասը, որ տարածված էր Քիրսի ձիւնապատ ճիւղաւորութիւնների վրա։ Կարծես այդտեղ մի հրաշք պիտի կատարվէր. կարծես ամպերի թեթև, փետրանման պատառները, որոնք այդ երեկոյ գարնանային տեսարան էին ներկայացնում դեռ ձիւների մէջ թաղված լեռնաստանի վրա, պիտի ծնէին մի չը տեսնված, խորհրդաւոր նշան։ Նայողները սպասում էին լուռ, զգոյշ, աշխատելով ոչ մի աղմուկ չը բարձրացնել։

Մի-մի ամպերի պատառածքների մէջ երևան էր գալիս լուսնի նորածին, բարակ եղջիւրը։ Այդ ժամանակ ձորի խորքում սկսվում էր հանդարտ քրթմնջոց, որ ցոյց էր տալիս թէ լուսինն է այդպէս գրաւել քսան և հինգ մարդկանց ուշադրութիւնը։

—Դեռ բաւական ճանապարհ ունի։

—Ի՞նչ ես ասում... մայր է մտնում։

—Ամպը թոյլ չէ տալիս պարզ տեսնել։

—Ահա՛ նա կորաւ։

Լուսինը մտնում էր ամպի տակ և սպասողները դարձեալ լռում էին, դարձեալ իրանց հայեացքները բևեռում էին երկնքի ծայրին։

Ինչու էր լուսինը այդպէս սպասել տալիս։

Ահա նրա մի եղջիւրն անցաւ սարի եաևը։ Օդի մէջ տարածված է անվրդով խաղաղութիւն։ Ձորի գլխից մի մարդ իջաւ, զգուշութեամբ քայլելով մանր քարերի վրա։ Նա յայտնեց որ լուսինը մայր մտաւ ու աւելացրեց.

—Ոչինչ չը կայ... Թամին գիւղի կողմից է, բայց ոչ մի ձայն չէ բերում։

—Երկինքը վկայ, այս գործը չաջողվեց, ասաց մի մարդ, վեր թռչելով տեղից և հրացանը ճիտը գցելով։— Ես կը գնամ և կիմանամ թէ ինչու են քնել...

Նրան հետևեցին մի քանիսն էլ, բայց մի քարի գըլխից արձակված հրամանը կանգնեցրեց ամենքին։

—Դու ասացիր որ նշանը լուսինն է, Մանաս. ահա նա մայր մտաւ...

—Քիչ էլ սպասենք, ասաց Մանասը։

—Շատ է ուշ. այս ժամին պառ չեն բռնում։ Գրաց եմ գալիս, որ այժմ ամենքը քնած են։

—Թող հէնց այդպէս լինի։

—Այն ժամանակ...

—Մենք մեր գործն ունենք, մոռացա՞ր։

—Գիտեմ, մէլիքի տուն պիտի գնանք...

—Եւ տանենք աղջկան, աւելացրեց մի ուրիշը։

—Բայց ժամանակը զուր անցնում է։ Սկսենք, մենք երկար ճանապարհ ունենք։ Գոնէ լուսաբացին հասնենք Խաչէն։

—Համբերութիւն ունեցիր, Բաղդասար։

—Շան հաչոց էլ չէ գալիս, ասաց ձորի գլխից իջած մարդը։

—Լսո՞ւմ ես, Մանաս։

—Դա լաւ նշան է, պատասխանեց խմբի առաջնորդը։—Շուն չէ հաչում, նշանակում է որ դրսում շուն չը կայ. ամեն մէկն այժմ նստած է օջախի մօտ և սպասում է թէ երբ մարդիկ կը կրծոտեն ոսկորները, որպէս զի յետոյ իրան տան։ Դեռ ամենքը հացի վրա են...

Մանասը շատ չէր սխալվում։ Թէև այդ ժամին ամեն տան սեղան էր բացված, բայց համարեա ոչ ոք ձեռք չէր տալիս հացին. և լռութիւնը, որ կլանել էր Աւետարանոցը, հացկերոյթի համար չէր, այլ մի կարճ հանգըստութիւն էր երեք օրվայ անխոնջ իրարանցումից յետոյ։

Աղմկալի էր մանաւանդ կիրակին, ուրախութիւնների վերջին օրը։ Գիւղը ներկայացնում էր մի հսկայական խնջոյք. սփռոցները բացված էին փողոցներում, կտուրների վրա։ Առատութիւնը կշտացրել էր ամենքին, այնպէս որ օսմանեան զինուորները հրաժարվում էին հիւրասիրութիւն ընդունելուց։ Իսկ նրանց գլխաւորը կատարելապէս յոգնել էր ժողովրդի ցոյցերից, անվերջ կոնչկատոցներից։

Իրիկնապահին Գանձակից եկած զինուորը յանձնեց նրան Մուստաֆա-փաշայի նամակը։ Այն ժամանակ նա գտնվում էր մէլիքի տանը և կարգադրութիւններ էր անում միւս օրվայ համար։

Կարդալով նամակը, նա ծիծաղեց և անհոգ կերպով յայտնեց իր զոքանչին, որ Պարսկաստան գնացած զօրքերը մօտ երկու շաբաթից յետոյ կը սկսեն յետ գալ։ Պատրաստութիւններ էին հարկաւոր, բայց ամենից առաջ վաղվայ գործն էր։

Եւ նա գնաց, նորից պատուիրելով, որ առաւօտեան շուտ վերջացնեն ամեն ինչ, որպէս զի կէսօրից յետոյ աղջիկը բերվի իր մօտ։

Աննա-խաթունը ճանապարհ դրեց նրան մինչև դրսի դռները, հեզ ու դողդոջիւն, իբրև մի մայր, որի առաջ կանգնած էր աղջկանից բաժանվելու անհրաժեշտութիւնը, գլուխ տուեց և սիրտ ունեցաւ ասելու, որ վաղը ամեն ինչ կը կատարվի այնպէս, ինչպէս բէկն է ցանկանում։

Վերջին անգամ հայեացք գցելով հեռացող սպամարդի վրա, նա կատաղութիւնից կրճտացրեց ատամները և յետ դարձաւ բոլորովին կերպարանափոխված։ Նրա մէջ սկսեց գործել անհնդալին եռանդը. ամեն տեղ հասաւ նա,

չը մոռացաւ իր տնտեսութիւնը, ամեն մէկին ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է հաւաքել, տեղաւորել ամանները, թափթափած իրեղէնները։ Ապա կանչեց այն բոլոր տղամարդկանց, որոնք վերջին շաբաթ ծառայել էին իր տանը, շնորհակալութիւն յայտնեց, վարձատրեց ու յանկարծ խօսքը փոխելով, ամեն մէկին առանձին-առանձին հրահանգ տուեց և ուղարկեց զանազան կողմեր։

Նա չէր շփոթվում, չէր շտապում. խօսում էր սառնասրտութեամբ, սիրտ էր տալիս։ Այժմ նա մի վագր էր...

Իսկ բէկը, գիւղում հանդիպելով ուրախացողների մի խմբի, նշան արաւ որ ամենքը ցրվեն։ Տանուտէր Ահմէդը նրա կողմից յայտարարեց որ բաւական է, մնացածը կը շարունակվի վաղը։ Ժողովուրդը հպատակվեց բէկի կամքին. միմեանց ետևից անհետացան խմբերը, առանձին անհատները. ամեն տեղ խորին լռութիւն տիրեց։ Կարծես գիւղին իմաց տուին, որ կեր ու խումը, հոգեկան հաճոյքները հանգստութիւն են պահանջում բէկից, և նա սովորականից շուտ քնեց։

Երբէք գիշերն այնքան խորհրդաւոր, յուզիչ չէր եղել Սեւտարանոցում. երբէք անհանգստութիւնն այնքան չէր տանջել մարդկանց։

Դիտմամբ ձգձգվող ընթրիքը արթուն էր պահում մեծերին. փոքրահասակները վաղուց էին քնել։ Խօսք ու զրոյցը գնալով թուլանում էր, դառնում արհեստական, բռնազբօսիկ։

Վտանգաւոր, խեղդող ժամեր էին։ Խաւարի միջից նայում էր անյայտութիւնը. իւրաքանչիւր րոպէ կարող էր երևան գալ որ և է անակնկալ, չնչին հանգամանք, որ կը փչացնէր ամեն ինչ։ Իւրաքանչիւր տուն ունէր իր անկոչ հիւրը, որ մանաւանդ այժմ հոգեհան հրեշտակ էր դառել։

Վերջին օրերում թիւրք զինուորները սաստիկ երես էին առել. գեաւուրների ցոյց տուած հիւրասիրութիւնը, պատիւները, առատաձեռնութիւնը չէին ամոքել նրանց

կոպիտ սրտերը, այլ ընդհակառակն, ներշնչել էին աւելի սանձարձակ լրբութիւն, աւելի մեծ յանդգնութիւն։ Բարեկենդանի տօները մոռացկոտութեան օրեր էին. ինչ ուզեցին, արին զինուորները. բայց նրանց ներեցին, ընդդիմութիւն, գանգատ չեղաւ։

Եւ այժմ, վերջին երեկոյեան, հարստահարողն ու հարստահարվողները նստած էին միմեանց դէմ, մի յարկի տակ։ Հարստահարվողը կրօնական պարտք էր կատարում, իսկ նրա կրծքին չոքած հարստահարողը նոյն իսկ այդ վերջին ժամին էլ իրան չէր զրկում այդ անմեղ ուրախութիւնը թունաւորելու հաճոյքից։

Նա շատ լաւ էր շահագործում իր սարուկի անսպառ համբերութիւնը։ Եւ սարուկը յօժարութեամբ ծծում էր թոյնը, դեռ երկիւղ էր կրում թէ նա քիչ կը լինի, խնայելու թուլութիւն կառաջացնէ։ Թունաւորվածը ստէպ-ստէպ դուրս էր գնում, կանգնում էր խաղաղ երկնքի տակ և շուտով էլի ներս էր մտնում, լուռ նայում էր լցրած հրացանին։

—Ձայն չը կայ։

—Ոչինչ չէ լսվում։

Հարցնողները և պատասխանողը տխրութեամբ շարժում էին իրանց գլուխները։ Այստեղ էլ, տների մէջ, հետզհետէ յաղթող էր հանդիսանում այն կասկածը, որ ձորում յայտնեց Բաղդասարը։

Խոր գիշերը արդէն առաջ էր գալիս իր մրափեցնող թմրութեամբ. յօրանջողները աւելի և աւելի անզուսպ էին դառնում։ Օջախների կողքից հեռացան թիւրք զինուորները. մէկը քնում էր, մէկը, մի անկիւն քաշված, գիշերային զուարճութեան միտքն էր մշակում և ծուլութեամբ դիտում էր գեաւուրներին, որոնք հազարից մի անգամ, ձևի համար, մի պատառ էին դնում իրանց բերանում, լաւ համարելով քիչ էլ սպասել։

Եւ յանկարծ... մի ահեղ պայթիւն պատռեց յօրանջող գիւղի գլխին։ Մի հսկայական ցնցում էր դա, կար-

ծես գետին էլ շարժվեց և հարկադրեց ամենքին վեր թռչել, դուրս վազել։ Պարզ էր. հրացանի հարուած, որ լսվեց պայմանաւորված տեղում, մէլիքի ամրոցի գլխից։

Աննա-խաթունը փորձեց սպասողներին։ Թէպէտ դեռ ցած չէր դրել հրացանը, երբ լսվեց մի ուրիշ թնդիւն։ Մի րոպէ լռութիւն տիրեց, ահեղ, սիրտ ճաքեցնող լռութիւն։ Եթէ նա քիչ էլ երկարանար, Աննա-խաթունը և նրա աղջիկը պիտի քարանային։

Բայց ահա սկսվեց մի շատ, անկանոն, վայրիվերոյ հրացանաձգութիւն, որ ցոյց էր տալիս, թէ մարդիկ շըն-չասպառ էին դառնում անհամբերութիւնից և հիմա շտապում էին իմաց տալ միմեանց, որ ոչ ոք անպատրաստ չէ։ Ճարճատիւնը սաստկանում էր. բայց նա չը խլացրեց այն հրացանաձգութիւնը, որ գալիս էր գետի ձորի կողմից։ Նշանակում էր որ Մանասն էլ ժամանակին էր հասնում։

Սկիզբը շատ լաւ էր։ Աննա-խաթունը ներս մտաւ, ինքն էլ սկսեց պատրաստվել։ Նա սպասում էր գիւղի զանազան կողմերն ուղարկած մարդկանց . . .

Խաղաղ, ընկճված գիւղը, որ այնքան սրտաբաց ուրախութիւններ էր կատարում վերջին օրերը, դժոխք դարձաւ։ Բարբարոսութիւնը այդ դրութեան հասցրեց։

Դրսում թագաւորում էր մի անհնարին ժխոր, կազմված հրացանների ձայնից և շների սարսափելի հաչոցից. մարդու ձայնը այդտեղ չէր բարձրանում։ Տների մէջ էլ խուլ թնդիւններ էին լսվում. և ամեն մի գնդակ խրւում էր մարդկային մարմնի մէջ։ Սպանում էին։ Գնդակը բաւական չէր, ուրիշ զէնք էր հանվում. և ամեն մէկը մորթում էր իր անսիրտ, գազան հիւրին։

Սոսկալի է ստրուկը, երբ իր տիրոջից գազանութիւն է սովորում։ Տարիների հեծեծանքը, արիւն-արտասուքի տուները հաւաքվում են, մի տեղ ձուլվում և դառնում են մի չէշտակի, անպայման մահացու հարուած։ Որքան և երկար լինէր տանջանքների ժամա-

նակամիջոցը, մի րոպէն բաւական էր՝ ամեն ինչ մոռացնել տալու համար. դա այն րոպէն է, երբ զոհը հատուցում է ստանում։

Սպանում էին շտապով, առանց աղմուկի. արիւնաթաթախ դիակները կանանց, աղջիկների քրքիջն էին յարուցանում։ Անգթութիւնը փոխադարձ էր. դա զարհուրելի էր... Բարբարոսութեան զէնքը դարձել էր բարբարոսների դէմ. ոչ ոք չէր ազատվի նրանից. մի տեղ նա օսմանեան հրացան էր, միւս տեղ սուր, որի վրա փորագրված էին Ղուրանի խօսքերը։ Գործիք հայթայթում էր և ստրուկի տունը. կացին, ցակատ, խոփ—օգնում էր ամեն ինչ՝ երկաթ թէ փայտ։

Եւ մինչդեռ պղծված օջախները այդպէս լուացվում, մաքրվում էին, Մանասի խումբը շրջապատել էր մի ցածրիկ տուն, որ բէկի տան կողքին էր գտնվում։ Այդտեղ էին բէկի թիկնապահները, որոնք աւելի յայտնի էին «մարդակեր» անունով։

Մօտ քսան հոգուց բաղկացած այդ վոհմակը, որ հաւաքված էր զանազան վայրենի ազգութիւններից, կարող էր քարուքանդ անել գիւղը, եթէ մի հատ զինուոր էլ չը մնար։ Այդ հանգամանքը նախատեսել էր Մէլիք-Աւանը. և Մանասը նրանից յանձնարարութիւն էր ստացել պինդ շրջափակել մարդակերների որջը։

Մի քանի մարդիկ բարձրացան կտուրը, հրացաններ պարպեցին երդիկից։ Կատաղած վայրենիները աղմուկ բարձրացրին և սկսեցին միմեանց ետևից դուրս վազել. բայց մի կարճ միջոցում մուտքի առաջ կուտվեցին նրանց դիակները. Մանասն այդտեղ խմբեց իր մարդկանց և գործում էր սրերով։

Յամառ կռիւը, գիշերային կատարածի միակ տեսարանը, որ տեղի էր ունենում դրսում, զարթեցրեց սատանայեա Անժէգին։ Նա առաջ վազեց, բայց աղմուկից հասկացաւ թէ ինչ է կատարվում. և շնչասպառ հանելով բէկի դուռն, սկսեց սաստիկ ծեծել։

—Վե՛ր կաց, էֆէնդի, կանչում էր նա.—յանցա՛նք, արիւնահեղութիւն...

—Ինչե՞ր ես ասում, քնաթաթախ գոռաց Սիւլէյման-բէկը։

Նա շուտ չը զարթնեց։ Նա անբաւական էր, որ իրան տարաժամ անհանգստութիւն պատճառեցին։ Մի ուրիշ անգամ Ահմէդը կը դողար այդ ձայնից, բայց այժմ ուշադրութիւն չը դարձրեց և աւելի խիստ կերպով պահանջեց որ նա վեր կենայ։

—Կոտորում են Սէլիմի խումբը, աղաղակեց նա յուսահատ ձայնով և խփեց փակված դուռը։

Բէկը տեղից ցատկեց, մթութեան մէջ որոնում էր իր շորերը։

—Ինչո՞ւ, ո՞վ է կռւողը, հարցրեց նա։

—Գեաւուրները, էֆէնդի. չե՞ս լսում հրացանաձգութիւնը...

—Մոռացա՞ր որ դա իմ հարսանիքի պատճառով է և ես թոյլ տուեցի... Գուցէ երազով ես անցել, անպիտան...

—Ա՜խ, էֆէնդի, սուտ էր, մեզ խաբեցին անհաւատները... Ահա գալիս են դէպի մեզ...

—Թաքնել... Ես ցոյց կը տամ... Հաւաքի՛ր զօրքը... Մի հատ շուն չը թողնել... Վազի՛ր, շո՛ւտ...

Ահմէդը ժպտաց. իր հրամանատարի խրոխտ ձայնն էր, որ կռւի մէջ մնացածներին էլ հոգի էր տալիս։

Բայց մի և նոյն ժամանակ նա գլխով բացասական նշան արաւ. բանը բանից անցել էր։

Նա տեսաւ, որ մի քանի մարդիկ վազում են դէպի բէկի տունը և պինդ սեղմվեց իր տիրոջ դռանը։ Թնդաց նրա հրացանը և միաժամանակ նրա կրծքից դուրս թըռաւ յաղթական աղաղակը. յարձակվողներից մէկը գետին գլորվեց։ Բայց բանը սրանով չը վերջացաւ. կենդանի մնացածները աւելի կատաղի կերպով առաջ եկան։ Ահմէդին մնում էր միայն բռնել իր հրացանի փողից և գործ ածել նրան երկաթի մահակի նման. այդպէս էլ

կարելի էր պաշտպանել այն մուտքը, որի մօտ նա վճռել էր վերջին շունչը արձակել իբրև հաւատարիմ ծառայ։

Բէկի գոռոցներին նա այլ ևս չէր պատասխանում։ Եւ այն ժամանակ, երբ նա երկու ձեռքով բարձրացրած հրացանը ուզում էր իջեցնել յարձակվողներից մէկի գըլխին, ուղիղ նրա աչքերի առաջ փայլատակեց հրացանը և նա գլորվեց, բացականչելով.

—Ինձ օնբաշի Ահմէդ կասեն...

Դուռը սկսեցին խորտակել։ Սիւլէյման-բէկը կատաղած այս ու այն կողմն էր ընկնում, հայհոյում էր։ Գըտաւ իր սուրը, բայց այնքան վրդովված էր, որ չը գիտէր թէ ինչպէս սկսէ գործը։ Դրսից էլ հայհոյանքներով պատասխանեցին, իսկ մէկը բարակ ու սուր ձայնով աւելացրեց.

—Դո՛ւրս արի, կատաղած շո՛ւն, Մանասն սպասում է քեզ...

Աւազակապետի անունը երբեք այնպիսի կատաղութիւն չէր պատճառել բէկին, ինչպէս այս սարսափելի ժամին։ Նա հասկացաւ թէ ովքեր են յարձակվել իր մարդկանց վրա։ Ահմէդը սխալվում էր. ամեն ինչ դեռ կորած չէ...

Նա վերցրեց սուրը և անցաւ տան ետևի կողմը, ուր մի փոքրիկ դուռ տանում էր դէպի ձիաների ախոռը։ Մտաւ այնտեղ, տեսաւ քնած ծառային, բայց չը զարթեցրեց նրան։ Դուրս քաշել ձիաներից մէկը, թռչել մօտիկ գիւղերը և զինուորներ բերել աւազակների դէմ—այս միտքն էր որ կայծակի պէս անցաւ նրա գլխով։ Բայց մթութեան մէջ մի բան ընկաւ նրա ոտի տակ և պղնձի ձայն հանեց. վերցրեց—դա զինուորական փող էր։ Պղնձի բերանը մի ակնթարթում յիշեցրեց հրամանատարին թէ կան զինուորներ և այս գիւղում. նրանք էլ կարող են հաւաքվել։

Ձին մոռացվեց. բէկը կիսամերկ դուրս վազեց ախոռից, բարձրացաւ մի կտուր։ Հրացանաձգութիւնը դա-

դարել էր, գիշերը խաղաղութիւն էր հաստատում անհամար աստղերի տակ։

Փողը խռպոտ, յուսահատական հնչիւններ տարածեց գիւղի վրա և նորից աղմուկը վերանորոգվեց։ Շները կատաղի աղաղակ բարձրացրին, այս ու այն կողմից ճրագներ երևացին և մարդկանց ձայներ լսվեցին։ Բայց բէկն ուզում էր խլացնել բոլոր ձայները. նա փչում էր ամբողջ ույժով, կանչում էր իր զինուորներին։ Նրա մի ձեռքից կախ ընկած էր մերկ սուրը. նրա աչքերը տրաքվում էին սաստիկ լարված ույժից. գետի ձորի կողմից անդրադառնում էր պղնձի կանչողների արձագանքը։ Բայց իզուր. օսմանեան բանակն այլ ևս չէր կարող լսել իր հրամանատարի կատաղի գոչիւնները . . .

Փողը մաունեց. բարեկամների փոխարէն նա հաւաքում էր թշնամիներին։ Ահա մի փողոցում երևաց մի խումբ, որին առաջնորդում էր մի մեծ ճրագ։ Նա գալիս էր դէպի այս կողմը։

Հրացանները նորից ճարճատիւն հանեցին և մի քանի գնդակներ կրակէ ճանճերի նման սզզալով թռան փողահարի գլխի վրայով։ Մի և նոյն ժամանակ նրա տրաքվող աչքերը նշմարեցին, որ մի քանի տներից դուրս են քաշում զինուորների դիակներ։

Նրա ականջին հասան ծիծաղի ձայներ. կատաղութիւնը կայծեր ցայտեցրեց նրա աչքերից և նա, մօտենալով կտուրի ծայրին, ցատկեց, ընկաւ ինչ-որ ցանկապատի նեղ արանքը։ Սուրը դուրս թռաւ նրա ձեռքից. բայց նա չորոնեց նրան, այլ վազեց, անյայտացաւ խաւարի մէջ։

Այդ միջոցին վերևից եկող խումբը մօտենում էր բէկի տանը։ Թէպէտ առջևից տանում էր ճրագը, որ երբեմն լուսաւորում էր Աննա-խաթունի աներկիւղ, լուրջ դէմքը։

Խումբը գնալով ստուարանում էր. այս ու այն կողմից նոր մարդիկ էին երևան գալիս և սկսում էին պատ-

մել թէ ինչպէս գործ կատարեցին։ Կարճ ու երկար պատմութիւններ էին դրանք և ունէին միանման վերջաբան։ Դժուար թէ հեշտ կերպով, յամառ մաքառումից յետոյ, թէ առանց որ և է մրցման— մի և նոյն էր, ոչ մի տեղ սպանողի ձեռքը չէր հրաժարվել գործելուց։

Աննա-խաթունը պարտք էր համարում խրախուսել ամեն մէկին՝ իր գոհութիւնը յայտնելով։ Եւ երբեմն, երբ նա կանգ էր առնում որ և է հետաքրքրական պատմութիւն լաւ լսելու համար, թէպէտ երեսը դարձնում էր դէպի խումբը, բարձրացնում էր ճրագը. այդ ժամանակ շողշողուն լոյսեր էին թափվում Աննա-խաթունի ձեռքում բռնած մերկ սրի վրա։

Նա հարկաւոր էր համարել զինվել, նա դեռ չէր հաւատում թէ այլ ևս կռիւ չի լինի։ Գաղտնիք այլ ևս չը կար. եթէ կենդանի են մնացել օսմանցիները, նրանք արդէն գիտեն որ գեաւուրները կոտորած են անում. և եթէ կամենան դիմադրելու կամ պատժելու փորձ անել, կռիւը տեղի կունենայ դրսում, բացարձակ։ Ահա թէ ինչու էր նա վերցրել իր ամուսնու սուրը և շարունակ պահանջում էր, որ մարդիկ առանց զէնքի դուրս չը գան տանից։

Նրան լսում էին ամենքը. իրերի բերմունքով այդ կինը, ինքն ըստ ինքեան, յանկարծ, հրամանատար էր դարձել։ Խումբը կանգնեց բէկի տան առաջ։ Մութը, մեռելութիւնը կլանել էին այդ ահարկու օթևանը. Ահմէդը լուռ ու անշարժ տարածված էր արեան լճակի մէջ։

Դռները բաց էին. բայց եթէ պատերն էլ փլված լինէին, ոչ ոք չէր հաւատայ թէ բէկը այդտեղ չէ։ Շատ լաւ էին ճանաչում այդ մարդուն և գիտէին, որ եթէ նա մենակ ազատված լինի, ոչինչ էր այս գիշերվայ ամբողջ գործը։ Աննա-խաթունը հրամայեց առաջ գնալ։ Նա ինքը յետ չէր մնում։ Բայց յանկարծ մի մութ անկիւնից դուրս վազեց Մանասը և, հասկանալով թէ ինչ են ուզում մարդիկ, կանչեց.

—Ձո՜ւր է, ո՛չ ոք չը կայ այդտեղ...

Երկու տարվայ անջատումից յետոյ Աննա-խաթունը և Մանասը հանդիպեցին միմեանց։ Երկուսն էլ սրեր էին բռնած, երկուսն էլ ժպտացին միմեանց նայելով։ Մանասն շտապեց աչքալուս տալ. մարդակերներից մէկն էլ չէր ազատվել։

—Իսկ նա՛, որ ամենամեծ մարդակերն է, հարցրեց մէլիքի կինը։

Նա չը կար, կորել էր։

Այդ խրողութիւնը սարի պէս ծանրացաւ լսողների վրա։ Նա ազատվել է... Բայց ի՞նչպէս, ո՞ւր է փախել։ Մանասը պատմեց, որ նրա շորերի մի մասը սենեակում է մնացել, իսկ ձիապանը, որ բռնվել էր յանկարծակի, ասում էր թէ ախոռից ձի չէ հանված։

Փախուստը տեղի էր ունեցել հալածելով. ասով, կիսով չափ մերկ՝ նա հեռու չի գնայ։ Աննա-խաթունն այլ ևս ժամանակ չը կորցրեց. պէտք էր ման գալ, որոնել։ Նա մարդիկ ուղարկեց գետի ձորը, պատուիրելով պտտել ամեն մի խորշ, ամեն մի քարի տակ։ Իսկ Մանասը իր մարդկանց հետ վազեց դէպի հիւսիսային կողմը։

Որոնում էին և գիւղի մէջ։ Տապալով, վազէվազ՝ խուզարկում էին ամեն մի ծակ, բաց էին անում հաւաբոյների, ախոռների դռները։ Քանիսնե՞րն էին ցանկանում լինել առաջին գտնողը, առաջին հարուած իջեցնողը։

Դա մի կատաղի որս էր. շները գիտէին որ յաղթված գազանը ծակ է մտել և կրկնապատկել էին իրանց եռանդը։

ԺԴ

Կար մէկը, որի ձայնը այդ ժամին չէր լսվում։

Մէլիքի տունը դատարկ էր, մութ։ Բայց եթէ մի մարդ մօտենար ամրոցի շրջապարիսպին, կը յիշէր այն տեսարանը, որ տեղի ունէր քահանայի սպանութեան օրը։

Նոյն տեղում կանգնած էր Գայիանէն և նոյնպէս յափշտակված նայում էր գիւղին։ Բայց այս անգամ նրա աչքերը գգուանք և կատաղութիւն չէին թափում աշխարհի վրա. գիշերային խառն ի խուռն աղաղակներից նա մի որոշ բան չէր հասկանում և նրա չքնաղ հայեացքը այժմ պատկերացնում էր երերուն յոյս, աջողութեան և անաջողութեան մերթ խաղաղ և մերթ անհանգիստ, մրրկայոյզ մրցութիւն։

Դարձեալ Մէհրին կուչ էր եկել նրա մօտ։ Հինաւուրց պառաւը զգում էր, որ ներքևում, մութի մէջ, կատարվում է ինչ-որ զարհուրելի գործ և դողում էր սարսափից։ Բայց հիմա էլ նրան էր յանձնված Գայիանէն, և նա պարտաւոր էր աղջկայ նեցուկն ու թիկնապահը դառնալ։

Դուրս քաշելով սուրը պատեանից, Աննա-խաթունը յայտարարել էր, որ միայն ինքը կը գնայ արիւնոտ աները տեսնելու և, եթէ հարկաւոր է, կռուի գործը ղեկավարելու։ Նա կամենում էր, որ Գայիանէն տանը մնայ։

—Չէ կարելի կռիւ գնալ, չունենալով ետևում պահեստի մարդիկ, ասաց նա։—Սպասիր այստեղ։ Առաջ ես, յետոյ դու—այսպէս է Աստուած կարգադրել այն ժամից, երբ ես քո ծնողը դարձայ։ Քեզ եմ թողնում իմ երեխաներին, քո հօր օջախը, և եթէ ես ընկնեմ, չը տեսնելով մեր ուխտի կատարումը, շատ չը տրտմես։ Կասես քեռուդ, որ ես կատարեցի իմ տուած խօսքը։ Բայց եթէ բոլորովին զուր էր այս ուխտը, և այս գիշերը պիտի աւելի ամրացնէ մեր թշուառութեան շղթաները, այն ժամանակ դու էլ քո տուած խօսքը կը կատարես։ Չարժէ ապրել առանց ամօթի, լսո՞ւմ ես։ Վաղը քո հարսանիքն է, եթէ Աստուած մեզ չը խղճայ այս գիշեր...

Երբէք նա այսքան կտրուկ, անվեհեր չէր եղել։ Պինդ սեղմելով աղջկան իր գրկի մէջ, նա չը համարձակվեց արտասունք կաթեցնել և թոյլ չը տուեց, որ Գայ-

խանէն էլ խօսէ։ Շտապով, առանց որ և է տատանման, նա հեռացաւ իր տանից. իսկ աղջիկը գնաց դիտելու պարսպի գլխից։

Սկզբում մեծ էր Գայիանէի հաւատը, որ վերջ ի վերջոյ աջողութիւն կը լինի։ Բայց երբ անյայտութեամբ լցված մութի մէջ կանչեց գինուորական փողը, նա ցրնցվեց ամբողջ մարմնով։ Զարհուրելի նշան. գինուորները հաւաքվում են... Մէհրին ցած կը գլորվէր, եթէ Գայիանէն նրան չը բռնէր ...

Գրկելով պառաւի մէջքը, նա տուն գնաց։ Պէտք էր պատրաստվել... Առաջ նա հոգ տարաւ իր գայլուկի մասին, որ անից շնչասպառ էր դառնում։ Ջուր խմեցրեց նրան, պառկեցրեց իր սենեակում և հանգստացրեց, ասելով թէ այլ ևս վտանգ չը կայ։

Մէհրին կարօտ էր այդ տեսակ խօսքերի, թէև սուտ էլ լինէին։ Եւ երբ նա լռեց, թաղվելով վերմակի տակ, Գայիանէն անցաւ մօր սենեակը։

Այժմ նա բոլորովին մենակ էր ամրոցում։ Յովսէփը երեկոյեան էր վերցրել իր խէնջարը և գնացել էր իր համար նշանակված տեղը, մի աղքատ այրու տուն։ Նազլուն Մարթայի մօտ էր, ներքին յարկի սենեակում։ Վերջին օրերը երեխան պառկած էր և Նազլուն չէր հեռանում նրա անկողնից. նոյն իսկ բարեկենդանի աղմուկները դուրս չը հանեցին նրան այն անկիւնից, ուր հալվում էր փոքրիկը, չը կարողանալով ասել թէ ինչ է իր ցաւը։

Իսկ Նազլուն միայն այդ էր ուզում իմանալ։ Այժմ նա այլ ևս ժամիքներ էլ չէր ուզում...

Եւ մենակութիւնը աւելի էր գրգռում Գայիանէին։ Ամեն ինչ լուռ է և անշարժ, կարծես նրա համար, որ յամառութեամբ պնդէ, թէ Գայիանէն սխալված չէ, թէ գործը չաջողվեց։ Տխուր է մօր դատարկ սենեակը, կարծես լաց է լինում. նոյն իսկ ճրագի բոցն էլ մի առանձին յուսահատութեամբ է երերվում. նա էլ, ուրեմն,

գիտէ, որ դրսում ամեն ինչ ձեռքից գնաց։

Ամեն ինչ... Կայ, երևի, մի անկիւն, մի անծանօթ տեղ, ուր այդ ժամին թագնված է մի ամէհի ույժ, և եթէ նա գայ, կարող է նորից կերպարանափոխել կռիւը, կանգնեցնել խորտակվածներին և ջնջել բոլոր հրէշներին, որոնք չեն թոյլ տալիս իրանց զոհերին դուրս գալ ճանկի տակից։

Կայ, երևի... Բայց ինչպէս կանչել նրան, ուր որոնել։ Սիրտը թրթռում է անհանգիստ կերպով, զգում է, որ միայն մի փոքրիկ խէնջար է դրված իր վրա։ Հիմա խօսքը պողպատին է պատկանում։

Ժամանակ է... Թւում էր թէ գիշերը թռչում է թևատած. թւում էր թէ վաղուց անցել է մօր գրած պայմանաժամը և գալիս է հարսանիքի օրը, որի առաջին լոյսերը պիտի ընկնեն մօր գլխի վրա։ Գնալ, թէ չէ ուշ կը լինի...

Վերջին բոպէին խօսում է հայրական տունը։ Մայրը գնալիս պինդ գրկեց աղջկան. իսկ սա ում հրաժեշտ տայ...

Բռնկվում է՝ մի սիրելի բան համբուրելու, վերջին խօսք արտասանելու տենչանքը։ Արիւնը եռում է այդ մտքից, պատռում է երակները և մի հրային հոսանք է տարածում ոսկորների մէջ։

Լուռ մի աղօթք երկու խօսքով, մի կարճ խնդրուածք շշուկի, հառաչանքի ձևով—որքան անդիմադրելի է այդ կարօտը։ Եւ նրա այրող աչքերը որոնում են մի պատկեր, մի սրբազան նշան։

Պատի ճակատից կախված է մի շերտաւոր մորթի... Մելիք-Յուսէինի քաջութեան մի նշանն է դա։ Տարիներ առաջ Արաքսի դաշտային ափերում նա մի վագր էր սպանել իր ձեռքով և քերթելով նրա մորթին, կախել էր իր պատից։

Գայիանէն վազեց, իր շառագունված դէմքը դրեց ամեհի գազանի մազերի վրա և մի անդուսպ ջերմեռանդութեամբ հեծեծաց.

—Հայր, հայր...

Աղօթքը հանգստացնող էր։ Հայրական տունն այլ ևս չէր կանգնեցնում նրան...

Պատշգամբի վրա ինչ-որ թխկոց լսվեց։ Խայթվածի պէս ցնցվելով, Գայիանէն մի քանի քայլ առաջ վազեց, բայց նոյն թափով յետ ու յետ մղվեց։

Շէմքում կանգնած էր մի սարսափելի մարդ։ Բոբիկ, առանց վերնազգեստի, բաց գլխով, թուխ ու յուզված, փայլեցնելով աչքերի սպիտակուցը, զինուորական փողը ձեռքում։

Բէկը...

Նա շունչ էր առնում, չը հաւատալով իր աչքերին։

Խորովվելով կատաղութիւնից, յոյսը դրած Աւետարանցի նեղ ու ոլորուն փողոցների վրա, ամեն տեղից լսելով իրան որոնողների հայհոյանքները, նա փախչում էր, երբ յանկարծ մի սքանչելի հանգստութիւն զգաց։ Հասել էր մի լուռ տեղ, ուր որոնող չը կար։ Կանգ առաւ, գլուխը բարձրացրեց. միլիքի տունն էր, դարձեալ խոնարհ ու հանդարտ, քնած այդ սարսափելի ժամին։ Դէպի այնտեղ քայլեցին նրա ոտները։ Փախչել, այն էլ այդ տան մօտից... Զզուելի վախկոտը կարող էր թողնել այնպիսի նշանածին և անհետանալ՝ իր գլուխն ազատելու համար։

Նա առաջ վազեց։ Դռները բաց էին, ներսում կատարեալ մեռելութիւն...

Ապահով անկիւն չէր ուզում նա այդ տանից։ Հարիւրաւոր սրեր բարձրանան, նա իր մերկ ձեռքերով կը բռնէր նրանց բերանը. թող աջ ու ձախ հրացաններ գոռան, իր մահի մէջ նա կը սեղմէր շիկացած գնդակները, կանցնէր կրակի և արեան ծովերով, բայց կը հանէր այն աղջկան, որ ուզում է իր կինը դառնալ։ Եւ եթէ բոլոր ճանապարհները փակվեն նրա ետևից, եթէ կարելի չը լինի դուրս տանել դրախտի գեղեցկուհուն, գոնէ այնտեղ, կրակի և ծխի մէջ, արիւնաթաթախ, մահամերձ,

բռնել նրան, սեղմել թևի տակ. գոնէ ծծել վարդագոյն կաշին, գոնէ մի հպաւորութիւն, զգալ փափուկ մարմնի տաքութիւնը, հոտոտել, խածնել... Ապա առիւծի նման միջից կէս անել նրան, որ ուրիշի ձեռքը չընկնէ, ու... մեռնել նրա դիակի կողքին...

Նա ռռնաց այդ տենչանքից և ներս վազեց։ Ո՛չ ոք դուրս չեկաւ, շուն էլ չը կար բակում։

Եւ այժմ... միմեանց հանդէպ, մենակ, առանց ոք և է արգելքի... Եւ հրաշք, միշտ հրաշք... Աղջիկը մոռացնել տուեց ամեն ինչ, փախստականը դիւթված էր։ Կատաղի էր նրա հարսնացուն, որքան կատաղի... Ոչինչ էր այն օրը, երբ սպանվում էր քահանան։ Մի վայրկեան ևս—և գեղեցկուհին կատարելապէս կը խենթացնէր նրան իր շանթերով։

—Մեծ մարգարէ, գոռաց նա, վայր գցեց փողը և, թևերը տարածած, ներս վազեց...

Գայիանէն ձեռքը տարաւ դէպի ծոցը, մի արագ շարժում գործեց և փոքրիկ խէնջարը պսպղաց նրա աջ ձեռքում։ Բէկի հիացմունքը զարհուրելի կատաղութեան փոխվեց։

Աղջիկը և սո՛ւր... Նա այդպիսի բան չէր ենթադրել, և կրճտացնելով ատամները, գոռաց։ Բայց հարուածը անսխալ էր, շեշտակի. նա պատրաստված էր վաղուց և իջաւ յարձակվողի կրծքին։ Մի բոպէ պողվատն էր, որ բաժանում էր երկուսին. այդ տարածութիւնը արագ կարճանում էր։

Բացվեց բէկի բերանը, խռպոտ, արեան մէջ խեղդվող գոռոցներով հայհոյանքներ ժայթքեց։ Բարձրացան նրա թաթերը, ընկան աղջկայ ուսերի վրա և սկսեցին սարսափելի ոյժով քաշել նրանց դէպի առաջ, դէպի այն կուրծքը, որի մէջ ցցված սուրը աւելի և աւելի խոր էր գնում։ Նա ուզում էր պատռել, կտոր-կտոր անել այդ որսը, որին այժմ էին դիպչում իր ձեռքերը։

Արդէն նրա կրակոտ շունչը հասնում էր Գայիանէի

դէմքին, իսկ բացված բերանի երկու շարք սպիտակ ատամները պատրաստ էին ծուատել նրա քնքոյշ միսը։

Գայիանէն պաշտպանվում էր։ Վերջին անգամ տասն և ութ տարիների ույժը թափելով խէնջարի կոթի վրա, նա իր մարմնի դիւրաթեքութիւնը մի տեղ հաւաքեց և սկսեց յետ քաշվել այդ սարսափելի գրկից, ուսերի վրա ծանրացած ջուխտ թաթերից։

Մրցութիւնը կատաղի էր, բայց կարճատև։ Գայիանէին աջողվեց երկու ձեռքով յետ մղել վիրաւոր գազանին, բայց ինքն էլ մնաց մեխված իր տեղը։ Նրա զոհը ծանր կերպով տատանվելով, գնաց մէջքի վրա, սակայն ընկնելիս բռնեց սպանողի փէշից...

Նա բաց չէր թողնում նրան, ճիգ էր թափում, որ քաշէ նրան, մօտեցնէ իր միակ զէնքին—ատամներին։ Բայց իզո՜ւր։ Գայիանէն կռացաւ, կրծքից դուրս քաշեց խէնջարը։ Լայն բացված վէրքից արիւնը հոսեց առուի նման։ Բէկը մռնչում էր ինչպէս վիշապ, խռռացնում էր։

Վերջին շունչի վրա էլ նա չէր մոռանում, որ իրան սպանողը մի աղջիկ է, մէկը այն թոյլ, անլեզու արարածներից, որոնք հարիւրներով, հազարներով հեծում են օսմանցիների գրկում։ Նա սարսափելի ջանքեր էր գործ դնում, բայց դրանից աւելի և աւելի թուլանում էր։ Նրա բերանից էլ արիւն գնաց. և սակայն բաց չը թողեց իր բռնած փէշը, կարծես ուզում էր որ իր նշանածը քարացած մնայ իր կողքում, նայէ, տեսնէ իր զարհուրելի աչքերը, իր արիւնն ու ատամները...

Եւ Գայիանէն չարհամարհեց այդ վերջին ցանկութիւնը։ Լուռ ու անշարժ, վառված իր թափած արեան ջերմութեամբ, գեղեցիկ սպանողը, որպէս մի գիշերային յաւերժահարս, նայում էր իր սարսափելի զոհին և նրա օրհասական ճիգերին պատասխանում էր մի անհոգ հեգնութեամբ, որ մեղմ կերպով յետ էր տարել վարդագոյն շրթունքները և սուր ճառագայթների պէս ցայտում էր հրաշալի աչքերից։

Ծրագը լուսաւորում էր կեանքն ու մահը։ Կեանքը գեղեցիկ էր իբրև շառագունած արշալոյս. Նրա բռնած խէնջարի ծայրից գանդաղ կաթում էր արիւնը։ Մարդկային վրէժը... Թաւալվող դիակ, սարսափելի խռռոցներ, որ վերջին անգամ արձակում էին պատառոտած սրտի կտորները, արեան ցայտեր, կրակ և գալարումն, իսկ այդ բոլորի վրա մի հրեշտակ, գեղեցիկ, անգութ...

Նա զզվեց միայն այն ժամանակ, երբ սիրիացին անշարժացաւ։ Դիակը նողկանքի էր արժանի. և նա խլեց իր հանդերձի ծայրը փայտացող ձեռքից, մի կողմ գցեց խէնջարն ու վազեց դուրս։ Այստեղ գիշերային զովութիւնը փայփայեց նրա դէմքը և մի սիրուն դողոց խառնեց արեան թրթռումների հետ։ Ծակատը դնելով փայտէ սիւնի վրա, նա սկսեց հանգստանալ։

Նոյն միջոցին ցածրում ամբողջ գիւղը խօսում, աղաղակում էր։ Տներում մարդ չէր մնացել։ Որոնողները վերադառնում էին ձեռնունայն, հարիւր ու մի ենթադրութիւնների նիւթ տալով խմբված մարդկանց, որոնք գուշակութիւններ էին անում, վիճում էին։

Վերադարձաւ և այն խումբը, որին Աննա-խաթունը երկրորդ անգամ տարել էր դէպի ձորը։ Այստեղ էր և Յովսէփը։ Նա այժմ բաց էր արել ճակատը, խօսում էր փորձված մարդու վստահութեամբ, կարծիք էր յայտնում, հաւանութիւն էր տալիս կամ հերքում էր, վկայութիւններ բերելով իր գրքերից։ Մի գիշերվայ ընթացքում այդ երեխան կատարեալ տղամարդ էր դարձել. Նա էլ վաստակաւորներից մէկն էր. նա էլ սպանել էր...

Վիճաբանութիւններին, ենթադրութիւններին վերջ դրեց Աննա-խաթունը։ Յայտնի էր որ գիւղի չորս կողմում ոչ մի հետք չէր գտնվել, բայց և այնպէս ոչ ոքի համար կասկած չը կար, որ բէկն ազատվել էր փախչելով։

Ի՞նչպէս գտնել։ Վճռեցին ձիաւորներ ուղարկել մօտիկ գիւղերը, պատուիրելով նրանց մինչև լուսաբացը խուզարկել բոլոր ճանապարհները։ Բացի դրանից, մէկ-

քի այրին պահանջեց որ ոչ ոք չը քնէ, մինչև որ կը պարզվի դրութիւնը։ Հրացանների պակասութիւն չը կար․ իսկոյն մի ստուար խումբ կազմվեց, որ սկսեց շրջագայել ամեն տեղ։

Այդ ժամանակ Աննա-խաթունը Յովսէփի և իր մարդկանց հետ գնաց տուն, ասելով որ ինքն էլ չի քնի։ Գիւղի վերին մասերում խուզարկողները միշտ նրան ասել էին թէ ամրոցի շուրջը հանդարտութիւն է տիրում և նա հաւատացած էր որ այնտեղ ոչինչ չը կայ։

Վերադառնում էր նա, բայց մտատանջութիւնը, անյայտութիւնը այժմ աւելի սաստիկ էին սեղմում նրա կուրծքը։ Մարդիկ հաւատացած էին որ գործը հեշտ է և շուտ կը վերջանայ։ Բայց ինչ դուրս եկաւ... Դրսից էլ լուրեր չը կան, մինչդեռ թւում էր թէ մօտակայ գիւղերը վաղուց պիտի տեղեկութիւններ հասցրած լինէին։

Այնքան ծանր էին այդ կասկածները, որ նա մոռացել էր իր աղջկան։ Եւ տխրութեամբ շարժելով գլուխը, նա կանչեց Սատուծուն, պատուիրեց երկու մարդկանց պահապան կանգնել պարիսպների վրա․ ապա հրամայեց Թէոսին իսկոյն ձի պատրաստել և թռչել Տող, Մելիք-Աւանի մօտ։

—Կասես որ ամեն ինչ լաւ էր, բայց բէկն ազատվեց...

—Եւ մենք որոնում ենք, մեր ձեռքից նա չի ազատվի, աւելացրեց Յովսէփը, պատուիրելով Թէոսին չը մոռանալ այդ խօսքերը։

Վերևից մէկը ինչ-որ տարօրինակ աղաղակ արձակեց և արագութեամբ ցած վազեց։ Յովսէփն իսկոյն ճանաչեց Գայիանէին և կանչեց․

—Եթէ տեսնէիր, քոյրիկ...

Գայիանէն հեկեկալով փաթաթվեց մօր վզին և սկըսեց ինչ-որ կցկտուր խօսքեր շշնջալ։ Մօտեցրին ճրագը և մայրը սոսկաց, տեսնելով նրա արիւնոտ զգեստը։

—Քեզ վիրաւորե՞լ են, աղաղակեց նա խելագարի նման։

—Նա այնտե՞ղ է, վերևում, խօսեց այժմ արդէն պարզ ու վստահ Գայիանէն։

—Բէկը...

Այս բացականչութիւնը դուրս թռաւ ամենքի բերանից։

—Ի՞նչ էք կանգնել, տղերք, Յարութիւն, Սարգիս... Դռները փակեցէք... Տունն իմն է, քանդեցէք, կրակ տուէք... Ամենքս միասին կոտորվենք և նրան էլ մեզ հետ տանենք...

Աննա-խաթունը վառվել էր, այլ ևս ոչինչ չէր ուզում լսել։ Տեսնելով որ իր հրամանները կայծակի արագութեամբ չեն կատարվում, նա ինքը գնաց, որ դռները փակէ։ Բայց Գայիանէն բռնեց նրան և բարձր ձայնով էլի կրկնեց․

—Ջուր է... Նա չազատվեց իմ ձեռքից։

Զարմանքն ու ուրախութիւնը ոռնոց բարձրացրին բակում։ Ամենքը վազեցին վերև. միայն մայրն էր, որ թուլացաւ, ընկաւ Գայիանէի գիրկը։

Պատի գլխին կանգնածներից մէկը ձայն տուեց, իմացրեց գիւղին։ Նորից գիշերը աղմկվեց, նորից շները հաչեցին։ Աննա-խաթունը ուրախութեան արտասուքներ էր թափում, լիզում էր արիւնաթաթախ աղջկայ դէմքը։ Նա թափում էր հարցերի կարկուտ և յուզմունքից չէր սպասում նրանց պատասխանին...

—Թէոս, թռիր, յանկարծ կանչեց նա։—Այժմ հօ իմացար։

—Թէոս, սպասիր, գոռաց Յովսէփը վերևից։

Եւ կրակ կտրածի պէս ցած վազելով, նա յայտնեց, որ ինքն է տանում լուրը։ Մայրը խլեց ձիու սանձը նրա ձեռքից. մութ գիշեր, դժուար ճանապարհ և ով գիտէ, գուցէ այն կողմերում կռիւ է, գուցէ փախչող փախչողի ետևից է. իսկ այդ անփորձ երեխան շատ է

ռոր առաջ գրել, բոլորովին մոռացել է թէ ով է ինքը։ Բայց Յովսէփը յաղթեց, յանկարծ բարձրանալով թամբի գլուխը առանց ուրիշի օգնութեան։

—Առաւօտեան ես կը բերեմ Շահնազարին, որ տեսնէ մեր գիւղը, ասաց նա, ուղղելով գօտուց կախ արած իր խէնջարը։

Ձին շարժվեց, իսկ կաղ հեծեալը, երեխայի պէս թռչկոտալով նրա վրա, կանչեց.

—Միտդ է, քյորիկ... Քեռին հիմա չի ասի թէ մենք երեխայ ենք . . .

Քիչ անցած՝ Թէոսը հեծաւ ջորին և գնաց նրա ետևից։

ԺԵ

Լուսանում էր, բայց մարդկանց հոսանքը դեռ չէր դադարել։ Գալիս էին գիւղից, բարձրանում էին մէլիքի սանդուղքներով, նայում էին սպանվածին, խօսում էին քթի տակ։ Ամենքը չէին վերադառնում տուն. ամրոցի բակում հաւաքված էր մի մեծ խումբ, որ լուռ սպասում էր ինչ-որ բանի։ Այստեղ էր և Մանասը։

Այդ միջոցին գիւղից գիւղ մարդիկ էին վազում, լուրեր էին տանում։ Մի քանի հատ էլ Աւետարանոց մտան։

Ամենից յետոյ եկաւ Ասլանը իր քրտնած, շնչասպառ ձիու վրա։ Նա անցել էր մեծ տարածութիւն. Պօղոսը շատ էր յետ մնացել. նա չէր կարող քշել իր ձին, որովհետև մենակ չէր. նրա առջևից քայլում էր մի կալանաւոր, որի վզին անցկացրած չուանի ծայրը նա փաթաթել էր իր աջ թևին։

Միմեանց հաղորդվող լուրերը այլ ևս կասկած չէին թողնում, որ կոտորածը գլուխ էր եկել Վարանդայի բոլոր կողմերում։ Մարդիկ իրար աչքալուս էին տալիս, շատերն արտասվում էին երեխայի նման։ Ասլանը,

տեղեկանալով թէ ինչպէս էր կատարվել գործի ամենադժուար մասը Աւետարանոցում, հրճուանքից մի երգ մռաց քթի տակ և, գտնելով Մանասին, յարձակվեց, իր գրկի մէջ առաւ այդ փոքրիկ մարմինը և բարձրացրեց իր ձեռքերի վրա։

Բայց ծմակի մարդը սաստիկ դժգոհ էր, և կոպտութեամբ ազատվելով երիտասարդի գրկից, աւելի թթուացրեց դէմքը և քաշվեց մի անկիւն, փնթփնթալով մի քանի խիստ խօսքեր։ Ասլանը, սակայն, հանգիստ չը թողեց նրան։ Ձեռքը դնելով նրա ուսին, երիտասարդը ցոյց տուեց աստղերի բազմութիւնը, որ պսպղում էր երկնքի հիւսիսային կողմում, ահագին տարածութեան վրա։

—Գիշերվայ աչքերն են, ասաց նա։—Դրանցից մի բան հասկանո՞ւմ ես։

—Ի՞նչ հասկանամ, ակամայ պատասխանեց Մանասը։

—Երեք ամբողջ մէլիքութիւններ կան այնտեղ. եթէ աստղերը գիշերվայ աչքեր են, թո՛ղ մեզ ասեն թէ ինչ տեսան իրանց տակ, այստեղ։

—Ինչե՛րիս է . . .

—Երբ Մանասն անհասկացող է ձևանում, պէտք է նրան բացատրել ամեն մի պարզ բան։ Դու հօ գիտե՞ս որ եթէ Խաչէնում, Ջրաբերդում, Գիւլիստանում գործը աջողված չը լինի, մեր արածը ոչինչ է։

Մանասը զարմանքով նայեց երիտասարդի աչքերի մէջ և պատասխանի փոխարէն մատը մեկնեց դէպի մէլիքի տան վերին յարկն ու հարցրեց.

—Տեսա՞ր այնտեղի դիակը։

—Տեսայ։ Հարուածը հրաշալի էր . . .

Ծմակի մարդը հաւանութեան նշաններ արաւ, մի ակնթարթում ոգևորվեց և համարեա դողալով արտասանեց.

—Եթէ ամեն կողմից լուր գայ, որ մերոնք են կատարվել, դարձեալ յաղթողը մենք ենք։ Այդ հարուածը բաւական է։

Եւ նա թեթև հոգոց հանեց ու էլի կիտեց յօնքերը։

—Լաւ չի՞ լինի, եթէ դու հէնց հիմա ճանապարհվես դէպի Թաշէն, նորից ասաց Ասլանը։—Մելիք-Աւանին լուրեր են հարկաւոր... Թաշէնցիները կարող են ուշանալ...

—Աւելորդ է, ընդհատեց Մանասը։—Ես այստեղից չեմ հեռանայ։ Դու լսել ես ինձանից ծմակի մարդու պատմութիւնը։ Այդ մարդն այժմ շատ բան ունի քաւելու...

Աննա-խաթունն էլ համաձայն էր Ասլանի հետ. բայց Մանասի յամառութիւնը կոտրել անհնարին եղաւ։ Պէտք էր որ Ասլանը գնար։

Մինչդեռ նրա համար ձի էին թամբում, եկաւ Գօգոսը, քաշելով իր անխօս կալանաւորի չուանը։ Նրա ետեւից ներս թափվեց կանանց և աղջիկների մի ստուար խումբ։ Հայհոյանք, կատաղութիւն, ծիծաղ յարուցեց կալանաւորը։ Այս ու այն կողմից կանչում էին.

—Մուխտարը... Քէօսա-Մուխտարը... Սպանել այդ սատանային...

Ասլանը չէր հասկանում թէ ինչ էր այդ աղմուկի պատճառը։ Երբ պատմեցին, նա դարձաւ իր ծառային և ասաց.

—Տեսնո՞ւմ ես, Գօգոս... Եթէ այս յիմար թիւրքը յանկարծ չը դուրս գար ճանապարհից ու չը վազեր դէպի անտառը, մենք հօ ուշադրութիւն չէինք դարձնի։ Եւ կը կորչէր մեր աղջիկներին գողացողը։

—Մատով խփես, վիզը կը կոտրվի, ասաց Գօգոսը։

Երեք հատ կանայք առաջ եկան և իրանց բոլոր քոյրերի կողմից խնդրեցին, որ կալանաւորը իրանց յանձնվի։

Քէօսա-Մուխտարը կանգնած էր ուղիղ, բաց ճակատով, դեղնած։ Նրա ոսկորոտ դէմքը առաւօտեան այդ վաղ ժամին դեղին մոմից շինածի էր նման. ոչ մի գիծ չէր շարժվում, որ ցոյց տար թէ ինչ է զգում այդ մարդը։ Թուլ ու անտարբեր դէպի հայհոյանքները, ամեն կողմից թափվող սպառնալիքները, նա դիմեց Ասլանին և ասաց.

—Մի լաւութիւն եմ խնդրում քեզանից. ասա, ի՞նչ դառաւ Սիւլէյման-բէկը։

—Նա սպանված է մէլիքի աղջկայ ձեռքով, հէ՛նց այս տանը։

Մուխտարը նայեց երկինքին և ծանր կերպով արտասանեց.

—Ուրեմն այնտեղ արդարութիւն կայ...

—Այո՛, և այդ արդարութիւնը հիմա քեզ կը պատժէ։

Բայց նա, կարծես, չը լսեց այդ խօսքերը, նոյն կերպով շարունակեց.

—Երբ էշն ուզում է ցոյց տալ թէ ինքը հասկանում է վարդի հոտը, այդպէս է լինում։ Գեաւուրներ, ձեր ծիծաղը զուր չէ. Սիրիայից մի էշ էր եկել ձեզ կառավարելու։ Եթէ նա լսէր ինձ, այս տան մէջ ապրող գեղեցկուհին հիմա իր արժանաւոր տեղում կը լինէր—մի հզօր փաշայի կամ գուցէ նոյն իսկ փադիշահի հարէմում, կիսամերկ, հլու ազախին։ Այն ժամանակ Մուրադ-աղան մեծ գին կը ստանար, իսկ սիրիացի էշը այստեղ իր բերանին յարմար կանաչ կուտէր։ Նա ուզեց վարդի թուփ պոկել և ահա ընկած է այնտեղ. իսկ վարդը էգուց մի պիղծ գեաւուրի ձեռքը կընկնի...

Մի քանի բռունցքներ բարձրացան և հարուածների կարկուտը սկսեց թափվել նրա գլխին, ուսերին։ Ամբոխը պատրաստվում էր նրան կտոր-կտոր անել։ Բայց Ասլանը մէջ ընկաւ, համոզում էր որ դատաստանը թողնվի կանանց, ա՛յն իսկ մարդկանց, որոնք դրա զոհերն էին։ Կանայք էլ գրոհ տուին և զոռով խլեցին իրանց թշնամուն կատաղած տղամարդկանց ձեռքից։

— Դատի տեղ չէ, ասաց Մուխտարը նոյն անտարբեր եղանակով և նայելով իրան շրջապատողներին, շարունակեց.

—Ես վաղուց գիտէի որ իմ վաճառած ապրանքը մի օր կը գզգզէ իմ միսը, այդ պատճառով էլ աւելորդ էի համարում միս թողնել իմ ոսկորների վրա... Բայց

չը գիտէի թէ այդքան քիչ կը լինեն ինձ ծառաողները։ Երկու օր առաջ իմ ճանապարհած ալրանքը սրանցից շատ էր . . .

Նրան քարշ տալով տանում էին, երբ Նադրան դուրս վազեց մի քանի աղջիկներ. հետ և անցաւ կանանց խմբի գլուխը։

Մելիքի տունը ընկղմվեց լռութեան մէջ։ Ասլանը գիւղամիջում էր և սպասում էր թէ երբ կը պատրաստվի ձիաւորների խումբը։ Նա Թաչէն ուղարկել էր Պօղոսին, իսկ ինքն այժմ գնում էր ուրիշ գործի։ Մանսար դարձեալ չը համաձայնվեց տեղից շարժվել։ Այժմ երիտասարդը գիտէր թէ ինչու ծմակի մարդը այնքան դժգոհ ու տխուր էր այս ուրախ ժամերին։ Կէս գիշերից սկսած նա աղաչում էր մելիքի կնոջը, որ Սուլէյման-բէկի սպանողը գոնէ մի անգամ երևայ իր աչքին։

Այդ ցանկութիւնն ունէին և շատ մարդիկ։ Բայց Գայիանէն այլ ևս չէր ուզում տեսնել մարդկանց երեսը։

Զարմանալի չէ՞ր այդ աղջիկը։ Իսկ մի՞ւսը, նա՛, որ Մելիք-Աւանի աչքերը բացեց . . .

Այս վերջինի մասին էր մտածում Ասլանը։ Կուսանոցի փոքրիկ զանգակը յանկարծ հնչեց, և նա բարձրացրեց աչքերը։ Նրա առաջ ցցված էր կուսանոցի ահագին ժայռը, որի գլխին իրարանցում էր նկատվում։ Նա հասկացաւ, որ այդտեղ է կատարվում կանանց դատաստանը։ Եւ դեռ չէր կարողացել նա վերադառնալ իր մտքերին, երբ մի երկար մարմին սուլոց տալով ցած գլորվեց ժայռի գլխից։ Վերջացաւ... Այդպէս էր ցոյց տալիս վերևում խմբված կանանց բարձրաձայն հռհռոցը։

Արշալոյսը կարմիր լոյսեր էր թափում դաշտերի վրա։

Բացվեց նոր օրը . . .

ԺՁ

Գերութեան օրերում Մելիք-Աւանին յափշտակում էին անցեալի յիշատակները, այն հրաշալի ջանքերը, որ տարիների ընթացքում ժողովուրդը գործ էր դնում իր ազատութիւնը պատրաստելու համար։ Ի՞նչպէս էր այդ ժողովուրդն այժմ, երբ իրականութիւն էր դարձել այն, ինչ կախարդական երազ էր տարիներից ի վեր։

Մելիքը քիչ էր նայում իր շուրջը, իսկ համատարած տնախմբութիւնը համարեա չէր նկատում։

Նրա ծրագիրը կատարեալ աջողութեամբ էր պսակվել ամեն տեղ։ Սարր-Մուստաֆա փաշան հազիւ էր կարողացել մի բուռն մարդկանց հետ փախչել Գանձակից և ազատվել կոտորածից, որին զոհ գնաց նրա ամբողջ բանակը։ Այդպիսի հեշտութեամբ ձեռք բերած յաղթութիւնը արբեցնող էր։ Երեկոյեան սարուկ տուն մտած մարդը վաղ առաւօտեան ազատ կանգնած էր իր շէմքում. դա շշմեցնող բախտ էր, որ մոռացնել տուեց ամեն ինչ։

Մելիք-Աւանի սուր հայեացքից չը խուսափեց այդ վերջին տարիճանի վտանգաւոր հանգամանքը։ Ազատութիւնը նուաճված էր. բայց դա բաւական չէր—նրան պէտք էր և պահպանել։ Երկրի սահմանները բաց էին, իսկ Պարսկաստանում և Վրաստանում օսմանեան զօրքեր կային, որոնց համար դժուար չէր յանկարծակի ներս խուժել։ Նրանց դիմադրելը այլ ևս անհնարին չէր. պէտք էր միայն ռազմիկ ուժեր հաւաքել, տեղաւորել սահմանների վրա և արթուն մնալ։

Ահա այդ նոր գործն էր նա այժմ գլուխ բերում, կրկնապատկելով իր հոգսերը, օր ու գիշեր աշխատելով, որ այսօրվայ բախտը միւս օրը դժբախտութիւն չը դառնայ։

Ղարաբաղի հիւսիսային կողմերը նա յանձնել էր Ջրաբերդի Մելիք-Հաթամին, իսկ ինքը գործում էր Արաքսի ձախ ափին։ Զէնքի պակասութիւն չը կար. այժմ հայերի ձեռքին էին օսմանցիների թնդանօթներն անգամ։ Ատամներով կռուելու ժամանակն անցել էր և հիմա Ղարաբաղը ցոյց կը տար, որ երեք տարվայ գերութիւնը չէր մոռացրել կանոնաւոր պատերազմ մղելու ճարտարութիւնը։

Պատրաստութիւնները կատարվում էին շտապով։ Գիւղերից փոքրիկ խմբեր էին դուրս գալիս, իջնում էին սարերի սառցապատ լանջերով, արագ քայլում էին խոր ցեխերի մէջ, անձրևի և ձիւնի տակ։

Բարեկենդանի մի քանի արև օրերը գարնան խաբուսիկ, վաղանցուկ նշաններն էին. այժմ սկսվել էր մռայլ, յուսահատեցնող ձմեռնավերջը։ Սարերը կորել էին մշուշների ծովի մէջ, անձրևը խառնվում էր կպչուն, հալվող ձիւնի հետ. մերթ դաժան յունվարն էր հաստատվում, մերթ յարձակվում էր մարտի քամին։

Ցուրտ, անյոյս ու խոնաւ էր լեռնաստանը։ Բայց հրացանաւորները աշխուժով ճանապարհ էին կտրում, շտապելով շուտ տեղ հասնել։

Այդ տեսակ խմբերից չէր ձիաւորների այն ջոկատը, որ մանր ու սառն անձրևի տակ դանդաղ մօտենում էր Աւետարանոցին։ Առջևից ձիավարողը Ասլանն էր. գիւղի մօտ նա կանգ առաւ՝ յետ մնացածներին սպասելու համար։ Եւ երբ այս վերջիններն էլ դուրս եկան թմբի ետևից, յայտնի դարձաւ, որ այդ դանդաղկոտութեան պատճառը մի խումբ հետևակ կանայք էին, որոնց մէջ երևում էր Նազլուն։

Քէօսա-Մուխտարի կարաւանը... Նա վերադառնում էր թև առած, ծիծաղը բերանին։ Հայրենի տեսարանները ողջունվում էին գերիների ուրախաձայն հրճուանքով...

Նրանց յետ էր խլել Ասլանը Սիւնիքի լեռներում, երկու օրվայ կատաղի ձիարշաւից յետոյ։ Գուցէ նա չը մտածէր էլ գերիների մասին, եթէ ինքը, Մուխտարը չը

յիշեցնէր, պարծենալով որ իր կարաւանն արդէն ճանապարհվել է և, ուրեմն, իր վտիտ մարմինը մի շատ չնչին փոխարինութիւն է այդքան ապրանքի դիմաց։ Իսկ երբ վրէժ պահանջող կանանց միացաւ և Նազլուն, Ասլանը ժպտաց և յիշեց ցուրտ գիշերը Քիրսի լեռներում, Մանասի օջախի մօտ։ Այդ յիշողութիւնն այժմ մանաւանդ շատ քաղցր էր նրա համար։

Դեռ այն ժամանակ անծանօթ աղջիկը համակրութիւն էր յարուցել նրա սրտում. դա ամբողջապէս տանջանք էր, բայց այնպիսի տանջանք, որ մարդկանց զուարճութիւն էր պատճառում։ Ասլանը գիտէր, որ դա անգթութիւն է։ Եւ՝ այդ համակրութիւնը հետզհետէ հիացմունք դարձաւ, երբ երիտասարդը պարզ տեսաւ որ Մելիք-Աւանին օգնութիւն անողը ոչ Թահմազն էր իր հռչակված զօրքերով, ոչ Մանասը իր անպարտելի գժերով, ոչ էլ ինքը, Ասլանը, իր թափառումներով, դռներ ծեծելու, օտարի ուշադրութիւնն աղերսելու իր անվերջ պատրաստակամութեամբ, այլ միայն այդ թշուառ, ամենքից արհամարհված աղջիկը։

Վերջին շաբաթների պատրաստութիւնները, որոնք ամբողջ երկիրը տանում էին դէպի գիշերային կոտորածը, Ասլանի համար երջանիկ ինքնամոռացութեան ժամանակներ էին։ Նա տեսնում էր Մելիք-Աւանին նախկին դրութեան մէջ—վստահ, հրամայող, գործի գլուխ. չքացել էր այն յուսահատութիւնը, որ նա, չը նայած իր հուժկու տղամարդութեան և սառնասրտութեան, չէր կարողանում ծածկել այն փոթորկալից առաւօտին, Սպիտակ-Խաչ վանքում։ Հայրենի լեռները, երիտասարդի այդ վիթխարի որբերը, այժմ ցեխոտված, ամօթահար բարձրութիւններ չէին, որովհետև այժմ Մելիք-Աւանը, լեռնցիների առաջինը, այլ ևս չէր ասում թէ ճար չը կայ։ Նա ինքն իրան բարձրացնում էր անկման անդունդից և նրա հետ լեռներն էլ սրբում, մաքրվում էին. դարձեալ կարելի էր ջերմ եռանդով պաշտել դրանց, որոնք միշտ

եղել են ազատութեան անպարտ կոթողներ, պսակված մի չարքաշ, բայց ինքնագլուխ ժողովրդի պատւով։

Այդպէս հիացնում էր Դիզակի տէրը։ Բայց նա մենակ չէր. նրա հետ Ասլանի մտքին ու սրտին երեւում էր և գզգզված աղջիկը։ Արհամարհված, ծաղրի առարկայ դարձած տանջանքների զոհը, կարծես, նայում էր մէլիքի ուսերի ետևից և հարցնում էր. «Մի՞թէ ես չեմ այս բոլորի պատճառը. և մի՞թէ այս երկրում կայ մի ուրիշը, որ ինձ չափ զրկանքներ կրած լինի այս մեծ գործի համար»։

Ասլանն իր մտքում դրական պատասխան էր տալիս այդ հարցերին, հաստատում էր որ դրա՞նք սուրբ ճշմարտութիւններ են։ Եւ ուզում էր տեսնել նրան, խօսել նրա հետ, իմաց տալ որ իր սիրտն արդէն հասկանում է…

Եւ ահա, վերջապէս, տեսաւ նրան, տեսաւ այն ժամանակ, երբ նա գնում էր Մուխտարի մօտից իր բաժին վրէժը հանելու։ Բայց մի՞թէ այդ աղջիկը միայն այդքան չնչին վարձատրութեան էր արժանի։

Ո՛չ, յանցանք կը լինէր այդպէս կարծելը։ Ասլանն զգաց, որ եթէ միայն Նազլուի մայրը լինէր թիւրքերի ձեռքին, եթէ չը լինէին միւս գերիները, դարձեալ պէտք էր գնալ, անել այն, ինչի մասին Նազլուն աղաչում էր Մանասին։

Այժմ Ասլանը չէր թոյլ տայ, որ անկատար մնայ նրա ցանկութիւնը։ Բայց ո՞ւր էին գերիները։ Կուսանոցի ժայռի գլխին կանայք գնահատեցին Մուխտարի կեանքը. կամ ջարդվել ձորի յատակում, կամ ցոյց տալ գերիների տեղը և ազատ կորչել այս կողմերից։ Մուխտարը մօտեցաւ անդունդի ծայրին, չափեց նրա խորութիւնը, կարծես տարուբերվում էր առաջարկած պայմանների մէջ։ Եւ յանկարծ բացասական նշան անելով, յետ դարձրեց իր թօշնած, մեռելային դէմքը։

Կեանք նա չուզեց։ Անդունդի ծայրին նրան յափշտակեց հաշիւը, որի մէջ նա այնքան ճարտար էր, անխա-

լական։ Նա յիշեց որ իր ուղարկած ապրանքը շատ թանգ գին ունի, որովհետև հանված է այն իսկ տեղերից, ուր այնքան օսմանցիներ են կոտորվել։ Մուրադ-աղան երկու օրում կը հալեցնէ ամբողջ կարաւանը՝ մէկին չորս գին առնելով։ Ո՞րպիսի իրարանցում հարեմների մէջ, ո՞րպիսի նախանձ միւս վաճառանոցներում։

Տաք, շահաւէտ առևտրի հեռանկարը Մուխտարի վերջին ուրախ ծիծաղը շարժեց։ Եւ չը թաքցնելով այդ ծիծաղի պատճառները իրան շրջապատողներից, նա ասաց, որ իր ոսկորները հանգիստ կը լինեն ձորի յատակում։ Ու ցած գլորվեց։

Բայց չարագործի ոսկորների համար հանգստութիւն չը կար։ Դեռ ագռաւները չէին նկատել նրա դիակը, երբ Աւետարանոցից ճանապարհ ընկան ձիաւորները։

Սուտ չէր ասում Նազլուն, որ ինքը մութ գիշերին էլ կիմանար թէ որտեղից է մայրը կանչում իրան։ Նա ձի նստեց, տարաւ խումբը, Գայիանէին յանձնելով Մարթայի հոգսը։

Ճանապարհը երկար էր։ Եւ երկար ժամանակ Ասլանը թամբի վրայից դիտում էր իր հիացմունքի առարկան։ Ո՛րքան շատ էր նայում, այնքան խոր համոզվում էր որ, այո, այդ աղջիկն իրաւունք ունէր Մէլիք-Աւանի հետ լինել իր մտքի ու սրտի մէջ։

Նրա մաշված, տխրութեամբ համակված դէմքը նոյնպէս գրաւիչ էր, ինչպէս նրա կատարած գործը։ Կանոնաւոր, նուրբ գծերը, նախկին սիրունութեան այդ լուռ վկաները, այժմ, տանջանքի ու վշտի ազդեցութեան տակ, այլայլվել էին։ Սակայն դա բացասող, մերժող մի արտայայտութիւն չէր, ընդհակառակը՝ ունէր իր առանձին հրապոյրները, իր առանձին լեզուն, որ թափում էր։ Վիշտ և վիշտ. բայց այդ էր, որ փրկեց Ղարաբաղը…
Ո՞րքան արտասուքներ են թափվել այդ թուխ աչքերից, դառն արտասուքներ, որո՞նք թախծալի կնիք են դրոշմել նրա հայեացքի վրա և այրել, կոշտացրել են նրա

արևառ թշերը. բայց դրանք չէին, որ բուսցրին այսօրվայ ազատութիւնը:

Տանջանքներ կան, որոնք սրբութիւններ են. և ոչ մի փարթամ, ծաղիկ երջանկութիւն չէ կարող ունենալ նրանց գերող ույժը: Միայն ծիծաղը չէ կրակ վառում. արտասունքների միջից էլ ցոլում են ճառագայթներ, որոնք աւելի սաստիկ են այրում զգայուն սիրտը:

Այլ ևս ոչ մի կասկած չը կար Ասլանի համար: Եւ երբ տեղ հասան, նա չը կարողացաւ պահել իրան ու յայտնեց Նազլուին, որ ոչ մի զոհ, ոչ մի դժուարութիւն չի խանգարի այս գործը, որ սկսված է նրա համար: Եւ նա ապացուցեց որ ճիշդ է ասում:

Նազլուն ճանաչում էր այն գիւղը, ուր փակված էին գերիները: Բայց նրանց այժմ տարել էին և հեշտ չէր իմանալ թէ ուր, որ կողմով: Ասլանը, կրակ կտրած, ընկաւ շրջակաները, նոյն իսկ չը վերադարձաւ մի ամբողջ գիշեր. որոնեց, մտաւ շատ գիւղեր. հարց ու փորձը, վերջապէս, տարաւ նրան մի մուրացկանի մօտ, որ տեսել էր կարաւանը:

Խումբը թռաւ ցոյց տուած ուղղութեամբ. պէտք էր շատ շտապել, որովհետև ճանապարհ շատ կար: Այդ ձիարշաւի ժամանակ էլ Ասլանը պտոյտ էր գալիս Նազլուի շուրջը, աչքը չէր հեռացնում նրանից, ծառայում էր նրան: Բայց Նազլուն չէր նկատում այդ բոլորը. այժմ նա մոռացել էր ամեն ինչ և խօսում, մտածում էր միայն Մարթայի մասին:

Նա չէր իմացել թէ այդքան երկար կը տևի ճանապարհորդութիւնը, թէ չէ՝ չէր հեռանայ երեխայի կողքից. նա հառաչում էր, ասելով որ փոքրիկը հալվում է, հառաչում էր մանաւանդ այն պատճառով, որ այժմ նա գտնվում է մի օտարի ձեռքում: Մինչև անգամ նա ուզեց յետ դառնալ ճանապարհի կէսից, և Ասլանի համար շատ էլ հեշտ չէր համոզել նրան որ թողնէ այդ միտքը: Այդտեղ էլ նա աւելի վառվեց այն քնքշութիւնից, այն

քնքշիկ սէրից, որ այդ աղջիկն ընդունակ էր տածել դէպի օտար մարդը:

Ի՛նչ հրաշալի սիրտ կար այդ մաշված կրծքի տակ. նա կարողանում էր մոռանալ նոյն իսկ հարազատ մօրը... Ասլանը նախանձում էր այն անծանօթ, հիւանդ երեխային, որ նստած էր այդ սրտի մէջ:

Այդ նախանձն էր, որ նրան առաջ մղեց աւելի սաստիկ թափով: Գտել էին կարաւանի հետքը: Գիշեր էր. լեռնային գետակի ափին, քարայրի մէջ հաւաքված էին գերիները: Մուտքի մօտ վառված էր մի մեծ խարոյկ, որի շուրջը նստոտել էին Մուրադ-աղայի ծառաները:

Ասլանը զարանամուտ եղաւ իր մարդկանց հետ. պէտք էր յանկարծակի բռնել պահապաններին, որպէսզի կռիւը միայն նրանց հետ լինի և գերիներից ոչ ոք չը վնասվի: Երկար նա սպասում էր. գերեվարները քնեցին, կրակի մօտ մնաց այն վիթխարին, որին մենք տեսանք Մուխտարի տանը: Երևի այս գիշեր հերթը նրանն էր. նա շուտ-շուտ վեր էր կենում, նայում էր այս ու այն կողմը և երբ տեսնում էր որ ոչ մի փոփոխութիւն չը կայ, նստում էր կրակի մօտ: Ասլանը կորցրեց համբերութիւնը և մի անձայն կարգադրութիւն անելով, սկսեց առաջ սողալ ծնկների և ձեռքերի վրա: Նա հասաւ քարայրի կողքին և կանգ առաւ:

Նազլուն և միւս նայողները շնչասպառ դիտում էին այդ վճռական վայրկեանը: Եւ յանկարծ Ասլանը վագրի պէս քիչ բարձրացաւ ու մի թռիչքով հասնելով վիթխարիին, իր սառն մատները փաթաթեց նրա կոկորդին: Սկսվեց կատաղի մրցութիւն: Միւս տղաներն էլ հասան և, մերկացնելով իրանց սրերը, շրջապատեցին գերեվարներին: Մի կարճ միջոցում ոչնչացան բոլոր ընդդիմացողները:

Առաջին րոպէին, դեռ ընդհարումը բոլորովին չը դադարած, խարոյկի առաջ տեղի ունեցաւ մի տեսարան, որ հիացրեց ամենքին: Նախ քան իր մօրը տեսնելը՝ Նազ-

լուն գտաւ Սալմին, գովեց նրան միրուն, սրտաբուղխ խօսքերով, լաց եղաւ և ապա ծիծաղեց։

Երիտասարդը, դեռ կռւի կրակով բորբոքված, շշկըլվեց այդ անակնկալ բախտից, չը համարձակվեց ծպտուն հանել։ Իսկ երբ Նազլուն վազեց դէպի քարայրը, ուր գերիներն արդէն լաց ու ճիչ էին բարձրացրել, այդ ժամանակ Սալմը սթափվեց, երկու քայլ առաջ գնաց, կարծես ուզում էր գրկել աղջկան, կանգնեցնել խօսելու և լսելու համար. բայց յանկարծ ամաչեց շրջապատողներից և ձեռքով ծածկելով դէմքը՝ շտապեց թաղնվել խաւարի մէջ։ Ամաչկոտութիւնը նշան էր, որ Նազլուն խըլել է երիտասարդի սիրտը։

Վերադարձը, Սալմի կարգադրութեամբ, սկսվեց առաւօտեան. կանայք ձիով, տղամարդիկ ոտով։ Բայց երբ եկան Վարանդայի լեռները, ձիաւորները ցած իջան, հանեցին իրանց ոտնամանները և բոբիկ ոտներով առաջ գնացին հայրենի հողի վրա. այդ գերիների ուխտն էր, սրբագործված վաղեմի ժամանակներից։ Նազլուն էլ միացաւ այդ ուխտին. Սալմը մենակ էր գնում առջևից։

Գերիներին Աւետարանոցն ընդունեց գրկաբաց։ Ուրախութիւնը վայնասուն, կատաղի գրկախառնութիւններ, կրակոտ համբոյրներ առաջացրեց։

Տանից դուրս վազեց ալէզարդ Տէր-Մարութը, գրկեց իր Մարգարիտին և օրհնեց ամբողջ աշխարհը։ Նրան բանտից դուրս էր հանել Մանասը բարեկենդան գիշերին. բայց եթէ ինքը և իր պէս հարիւրները փտէին բանտում, իսկ գերիները անհետ կորչէին, դարձեալ չը պէտք էր տրտմել, քանի որ փախածներն ազատվել էին։ Նա կրկնեց և մանրամասն բացատրեց այդ միտքը մի քանի անգամ, երբ յայտնի դարձաւ, որ գերիներից մի քանիսը մահացել էին վշտից և սարսափից։ Այժմ նրանց որոնում էին լաց լինելով և Տէր-Մարութը մխիթարում էր որոնողներին։

Շատ էին և այնպիսիները, որոնք սպասող, որոնող

չունէին։ Դրանք օտարներ էին, մեծ մասամբ այն երկրի թշուառ գիւղերից, որոնք հաւասարեցրած էին հողի հետ։ Ճիշդ է, Աւետարանոցի կանայք նրանց էլ էին գրկում, բայց չը կային ծնողներ, ազգականներ, չը կար գլուխ դնելու տեղ։

Տէր-Մարութը հասկացաւ թէ ինչ են որոնում այդ խեղճերը արտասուքով լի աչքերով և առաջ ընկաւ, գնաց դէպի գետի ձորը։ Ամենքը հետևեցին նրան։

Փէրիի անակի առաջ, աւազուտ փոքրիկ տարածութեան վրա, գետակի բերած քարերի մէջ, երևում էին փոքրիկ թումբեր — մի ամբողջ գերեզմանատուն։ Քահանան երեսին խաչ հանեց և բոլոր տղամարդիկ իսկոյն վերցրին փափախները։ Նա օրհնում էր գերեզմանները, քանդված գիւղերի գերիները խմբվեցին նրա շուրջը։ Եւ երբ նա իր ուժեղ, ցնցող ձայնով երգեց այն տաղը, որ յայտնի է «Ղարիբի գանձ» անունով, ձորը լցվեց աղեկտուր հեծեծանքներով։ Տեսարանը վերին աստիճանի յուզիչ էր. անձրևը թափվում էր քահանայի ալեխառն մազերի վրա, տղամարդիկ անշարժ էին, կորագլուխ, իսկ անտուն, անտէր գերիները արտասունք էին թափում անյիշատակ հողադամբարանների վրա։

Ամեն մէկը երևակայում էր թէ այդտեղ են պառկած իր սիրելիները։ Բայց ո՞վ գիտէր. միայն Փէրին էր դժբախտութեան այդ լուռ օթևանների աւանդապահը. միայն նա էր ճանաչում անունները, տեղերը։ Բայց չը կար նա. լայն ու մեծ քարերով ծածկված մի գերեզման ձորի եզրից նայում էր փոքրիկ գերեզմանոցին. այնտեղ էր Փէրին . . .

Վերջացնելով տաղը, Տէր-Մարութը կարճ, բայց տաք քարոզ խօսեց, կրկնելով նոյնը, ինչ ասել էր գիւղում։

—Լաց չը լինենք, ասաց նա, հազիւ զսպելով իր արտասուքը.—ման գանք, գտնենք այն բոլոր տեղերը, ուր մեր մարդկանց արիւնն է թափվել. հողի իւրաքանչիւր հատիկը, որ ծծել է այդ արիւնը, սուրբ է։ Այլ ես

լաց չը լինենք. պահենք այդ սուրբ հողերը մեր ծոցում և մեռնելիս տանք մեր որդիներին, ասենք նրանց, որ եթէ ուզում են իմանալ թէ ինչ է ազատութիւնը, թող նայեն այդ հողերին։

Զօրն սկսեց դանդաղ կերպով դատարկվել։ Նոյն օ-րը գերութիւնից վերադարձածները խմբով գնացին Գայ-խանէի մօտ։ Նա գրկեց նրանց և երկար արտասվում էր նրանց հետ։

ժէ

Շատերն էին գալիս նրան տեսնելու։ Ամբոխն այժմ ուզում էր պաշտել նրան և շարունակ կարօտ էր նրա տեսքին։ Աւետարանից եկան նոյն իսկ ուրիշ գիւղերից, ուրիշ գաւառներից։

Լեռներում շշնջում էին հրաշալի պատմութիւններ նրա մասին. ժողովուրդը գոյներ էր աւելացնում, խառ-նում էր նրա արածը երկնքի գործերի հետ։ Բայց նա փակված էր, չէր դուրս գալիս. նա ուզում էր մենակ լինել և աղաչում էր իր մօրը՝ ազատել իրան այդ պա-տիւներից, հաւատացնել ամենքին, որ սուտ են պատ-մութիւնները, որ ինքը էլի նոյն հասարակ աղջիկն է և ոչ մի հրաշք տեղի չէ ունեցել։

Եւ ինչ հրաշք կարող էր լինել։ Կռիւը տապալել էր բռնաւորին, որովհետև հէնց դրա համար էլ սկսված էր։ Բայց թէ նա հրաշք չէր, այդ վկայում էին Գայխանէի սրտի վէրքերը։ Պէտք եղաւ ջարդել այդ սիրտը, որպէս զի կռիւը հասունանար. և ո՞վ խնայեց։ Ոչ ոք. ամբողջ աշխարհն էր ջարդում։ Այժմ, երբ կռիւը անցել էր, թող-նելով վէրքերը բաց, արիւնոտ, նա լռիկ մենակութիւն էր որոնում, ուշադրութեամբ ականջ դնելով բնութեան այն շունչին, որ դատարկ տեղեր է լցնում, վէրքեր է բժշկում, վերածնութիւն է տարածում աւերակների մէջ։

Նա արդէն գտել էր սպեղանին։ Նրան գերել, տա-

նում էր նկարչութիւնը, որ այնքան ոգևորել էր նրան մի ժամանակ, երբ նա հաւատացող էր, միամիտ, երբ ճանաչել էր թշուառութիւնը, բայց կարծում էր թէ հեշտ է թշնամուն խորտակելը, որովհետև սիրած տղամարդ ունի...

Ամբողջ օրերով նա չէր հեռանում թղթից, և գծերը, գոյները խօսում էին նրա սրտի հետ, բռնում էին նրա թրթիռները, յոյզերը, հաղորդում էին թղթին, հրաշա-կերտելով տառեր և զարդեր։ Նա գրում էր աւետարան։

Ծանր, մանրակրկիտ գործ, որ պահանջում էր ու-շադրութիւն, համբերութիւն։ Իւրաքանչիւր փոքրիկ ե-րես, որ դուրս էր գալիս նրա ձեռքի տակից, մի տօն էր, որ կատարում էր սիրտը իր մխիթարութեան, իր բժշկութեան համար։ Նա աւելի և աւելի կպչում էր այդ գործին և նրա հետ մտնում էր ստեղծագործութեան աշխարհը, որ ամեն ինչ մոռացնող մի յափշտակութիւն է։

Նա գրում էր. և դա մի անհոգի ընդօրինակութիւն չէր, մի արհեստաւորի աշխատանք, որ բարեխղճութեամբ մի բան փոխադրում է մի թղթից միւս թղթի վրա։ Գծերի, գոյների մէջ նա դնում էր իր հոգին. ամեն տեղ երևում էր ինքնուրոյն, համարձակ ձեռք։ Նա հասկա-նում էր, զգում էր. և սրբազան գրքի իւրաքանչիւր խօսքը առաջ դրոշմվում էր նրա սրտի մէջ և ապա այնտեղից անցնում էր թղթին, ստանալով իրան վայել գեղեցիկ գծագրութիւն։

Մի-մի անգամ այդ գործին մօտենում էր մայրը։ Նա չը գիտէր թէ ինչ է դա, բայց աղջկայ դէմքը բաց էր անում նրա առաջ ամբողջ աւետարանը և նա, մի անգրագէտ կին, հասկանում էր թէ ինչեր կան այնտեղ։ Նայում էր և Մէհրին. բայց այլ ևս դատողի դեր չէր համարձակվում ընդունել, և միայն փառք էր տալիս Աստուծուն։ Դէպքերը սաստիկ ճնշել էին խեղճ պա-ռաւին. նրա մէջ դողոց էր սկսվել և ամեն մի առարկայ տեսնելիս, նա փառք էր տալիս։

Կար և հասկացողը։ Դա Յովսէփն էր։ Որդիսի սրբազան ակնածութեամբ, հասկացողի որդիսի բերկրանքով նա չոքում էր իր քրոջ կողքին, նայում էր և երբեմն այնպէս էր յափշտակվում, որ անձայն արտասունքները կաթում էին նրա աչքերից։ Եթէ ստեղծագործողը գնահատողի խրախոյսներին է կարօտ, Գայիանէի շուրջը միշտ պտրտում էր ոգևորված, կրակոտ գնահատութիւնը։

Նա սիրում էր մի-մի ընդհատել իր գործը, երեսը դարձնել դէպի եղբայրը, լուռ նայել այդ նոր մարդուն։

Անհեղ ցնցումները միայն աշխարհը քանդել, դիակներ կուտել չը գիտեն. նրանք ստեղծում են նոր զինուորներ։ Եւ Թոյլ, չը զարգացած երեխան այլ ևս ծաղր ու արհամարհանք չէր յարուցանում. նրա հոգին անցել էր մի յեղափոխութեան միջով, որ մաքրել էր նրան մարդկանց շարքը, սովորեցնելով լինել սրտոտ, աներկիւղ, ուշադիր դէպի օրվայ չարն ու բարին։ Այդպիսի դասերը չեն մոռացվում։

Թէ՛ մայրը և թէ գիւղացիները այլ ևս անյարմար չէին համարում, որ նա լինի իր հօր ժառանգը։ Բարեկենդանի գիշերը ազատութեան հետ բերել էր և ազատ երկրի նոր մէլիքին։ Նա կաղ էր, սիրահարված գրքերի վրա. բայց ինչ փոյթ. նա տղամարդ էլ էր։

Միայն Շահնազարն էր, որ չէր հաշտվում այդ իրողութեան հետ. նա չէր ընդունում որ Յովսէփը յանկարծ այնպիսի մարդ կը դառնայ, որին չէ կարելի տանջել, ծեծել։ Նա կատաղութիւնից կապտում էր, երբ Յովսէփը փոխանակ լաց լինելու՝ բռունցքի դէմ բռունցք էր բարձրացնում, մի հրուածին պատասխանում էր երկու հարուածով։ Այդպիսի դէպքերում Շահնազարը, արտասուքի խոշոր կաթիլներ թափելով իր աչքերից, գոռում էր.

—Երբ թիւրքերը կը գան այստեղ, դու այդպէս չես մնայ...

—Մի՞թէ նրանք էլի կը գան, քո՛յրիկ, հարցնում էր Յովսէփը։

—Կը գան, եթէ դու առաջվայ նման լինես, պատասխանում էր Գայիանէն ժպտալով։

Եւ Յովսէփը երդվում էր բոլոր սրբերով, որ անցեալը այլ ևս չի վերադառնայ։

Անցեալը... Նրան չէին ուզում այս տանը։ Չէր ուզում նոյն իսկ Մէհրին։ Մի մարդ կար միայն, որ այդպէս չէր մտածում։ Դա Մանասն էր, մի զղջացող մեղաւոր, որ հասկանում էր թէ միայն անցեալը վերադարձնելով ինքը կարող է ապրել մէլիքի օջախի մօտ։

Նա իր խմբի հետ պատրաստվում էր գնալ Արաքսի ափը, ուր սպասում էր Մէլիք-Աւանը։ Պէտք էր կրկին այստեղ վերադառնալ, եթէ թշնամու գնդակը գերեզման չէ պատրաստել մեծ գետի կողքին։

Այդ հարցը պարզելու համար էր, որ նա գնաց Գայիանէի մօտ։ Սարերից իջնելուց յետոյ նա առաջին անգամն էր առանձին խօսում նրա հետ։ Գայիանէն դարձեալ ցուրտ էր, անհրապոյր. Մանասն օտար էր նրա համար...

—Վերջին անգամ ես քեզ տեսայ Վարդավառի օրը, ասաց Մանասը։ Հարսնաղբիւրի մօտ դու հասկացրիր, որ չես մոռացել հին Մանասին։ Ես ուզում եմ որ ծալվեն, ձորն ընկնեն այն բոլոր օրերը, շաբաթները, ամիսները, որոնք անցել են Վարդավառից։

—Մոռանամ...

—Այո, Վարդավառը երէկվայ օր համարենք։

—Այդ անխղճութիւն է։ Կամրջի տակով այն օրից շատ ջուր անցաւ, Մանաս։ Ինչե՞ր չը տեսայ ես։ Ճանաչեցի մարդկանց։ Եւ այլ ևս վերադարձ չը կայ ինձ համար։

—Ճանաչեցիր և արհամարհեցիր...

—Ո՛չ. Ճանաչելով սիրեցի։ Չէ կարելի արհամարհել աշխարհը։ Բայց մարդիկ... Բաժանիր նրանց երկու մասի. տանջվողները—դրանք ամենամեծ մասն են կազ-

մում և դրանց չէ կարելի չը սիրել։ Ես հաւատում էի միւս, փոքրաթիւ մասին։ Բայց երբ ջախջախուեց հաւատքս, նրա տեղ ծնուեց արհամարհանքը... Դա սոսկալի է։

—Ես էլ այդ արհամարհանքի տակ եմ։ Ես վաղուց սովորել եմ կարդալ քո դէմքի վրա... Այն ժամանակից, երբ դու երեխայ էիր...

Գայիանէն լռեց, բայց նրա հայեացքի մէջ Մանասը տեսաւ անողորմ վճիռը, որ, այնու ամենայնիւ, չէր արտասանվում բառերով։ Աղջիկը խնայում էր. չէ՞ որ այդ մարդը փչեց նրա երեխայութիւնը։

Բայց Մանասը բողոքեց այդ շնորհի դէմ։

—Լռութիւնը բաւական չէ, Գայիանէ, արտասանեց նա մի խուլ ձայնով։—Մանասը, որքան էլ ատելի լինի քեզ համար, մի տղամարդ է, որ վատութիւն է համարում փախչել հարուածից։ Ասա՛, ես շնորհ եմ խնդրում. բայց ոչ թէ խղճալու շնորհ, այլ հաստատ, շիտակ պատասխանի շնորհ։ Կեղծութիւնը ես միշտ ատել եմ...

—Այո, և ինձ էլ սովորեցրել ես ատել։ Ես չեմ թաքցնում։ Ամենից վերջը դու էիր, որ արհամարհել տուիր քեզ. քո հարուածը ամենասոսկալին էր, և դու կարող ես նեղանալ, որ փոխարէնը քեզ աւելի սաստիկ արհամարհեմ...

—Ես այդպիսի բան չեմ ասում։

—Եւ ասելն աւելորդ կը լինէր։ Դու հօ գիտես, որ երկնքի տակ ոչ ոք Գայիանէի նման չէր յարգում Մանասին. ուրեմն լսիր։ Դու այստեղ չէիր այն ժամանակ, երբ իմ մայրը, ահաբեկված իրան շրջապատող փախստականներից, ուզում էր զոռով փախցնել ինձ մի մարդու հետ, որին ես ատում էի։ Համաձայնում ես, նոյն իսկ առանց պսակի... Այսպիսի անամօթութեան միայն ստրուկներն են համաձայնում։ Այդ ժամին դու քնած էիր սարում, բայց կանչում էիր իմ ականջին. «Ինչու՞ փախչել, երբ կարելի է կռուել»։ Եւ ես մնացի։ Բայց յետոյ ինչ լսեցի քեզանից։

—Ես, ճիշդ է, չէի հաւատում...

—Չէիր հաւատում ոչ թէ ինձ, այլ քո գործին։ Դու ապստամբութիւն էիր, բայց չէիր ընդունում թէ քո զէնքը պէտքական կարող է լինել և թոյլերի ձեռքում...

—Այդ աշխարհի կարգ է. մեր հայրերի ու պապերի աւանդն է՝ զէնքը զօրեղին...

—Հայրերը, պապերը կարող էին այդպէս ասել, որովհետև չեն տեսել այն, ինչ մեր աչքերի առաջ էր կատարվում։ Երբ թշնամին տանն է նստած, երբ նա օրօրոցից դուրս է քաշում երեխային և նրա մի ոտից բռնած՝ խփում է պատին ու այդ արիւնոտ միսը գցում է մօր գիրկը, իսկ ինքը քրքջում, այն ժամանակ զօրեղ ու թոյլ չեն որոնում։ Դու յանդուգն արշաւանքներ էիր գործում սարերի գլխից և կարծում էիր թէ դրանից աւելի ոչինչ հարկաւոր չէ։ Քեզ պատասխանում էին՝ սրի անցկացնելով երեք գիւղեր. երկինքը կը ճաքճաքվէր այդ գազանութիւնից, եթէ այնքան հեռու չը լինէր։ Բայց դու միայն քո սուրն էիր ճանաչում և պատրաստվում էիր մի ուրիշ տեղ, մի ուրիշ հանգամանքի մէջ կծել նրան, ով գցել էր մեզ իր հրէշաւոր բերանն ու ծամծամում էր։ Եւ քեզ անիծում էին ամենքը։

—Դու էլ, ի հարկէ...

—Ո՛չ, ես չէի անիծում։ Ի՞նչպէս կարելի էր... Դու մեր հանգած օջախում մուխ էիր պահպանում, մեզ դաս էիր տալիս։ Բայց երբ մենք սովորեցինք, երբ մեր Յովսէփն անգամ զէնք վերցրեց, դու չը հասկացար, որ մեզ այլ ևս դասեր չեն հարկաւոր, այլ լաւ առաջնորդներ։ Բաւական չէ որ չը հասկացար, դեռ սկսեցիր մեզ ծաղրել, սպառնալիքներ կարդալ... Այդ ժամից ես սովորեցի արհամարհել քեզ։

—Աշակերտները ուսուցչին չեն է՞լ ներում։

—Ի՞նչ արած։ Դու վատ ուսուցիչ էիր. դու միայն սովորեցնում էիր, իսկ երբ աշակերտներդ պատրաստ էին, դու այլ ևս ոչինչ չունէիր անելու։ Մենք այստեղ

դանակ անգամ չունէինք և մեզ ոչխարների պէս մորթում էին. բայց այդ քո ինչ փոյթն էր։ Բաւական էր որ դու և քո մարդիկ փայլուն զէնքեր ունէիք. մեզ մնում էր նայել նրանց և մխիթարուել։ Ես հասկանում էի թէ ինչու անիծում են քեզ։ Աշակերտները առաջ էին անցել, մինչդեռ վարժապետը դեռ կանգնած էր իր տեղը. նա, ուրեմն, անպէտքացել էր։ Հարկաւոր էին նոր մարդիկ, հարկաւոր էր նոր դաստիարակութիւն։ Մենք գիտէինք, որ գայլերի հետ ապրել չէ կարելի. դա քո դասն էր։ Բայց նոր դաստիարակը պիտի իմանար մի բան—պատրաստել, լաւ պատրաստել մեզ։ Եկաւ մի այդպիսի մարդ։ Նա չարհամարհեց թոյլերին ու երեխաներին. և ամենքը պատրաստվեցին ջերմեռանդութեամբ...

—Հասկանում եմ, դու էիր...

—Ո՛չ, Մելիք-Աւանը։ Ի՞նչ էի ես։ Քո մի դժգոհ աշակերտը... Մելիք-Աւանը լսեց դժգոհներին և գործ սկսեց։ Դու այդ ժամանակ էլ չէիր հաւատում մեզ... Բայց հիմա... Հիացած ես։

—Այդքան անհասկացող էի ես, բացականչեց Մանասը երկու քայլ առաջ անցնելով։

—Ես կարդարանայի քո առաջ, Գայիանէ, շարունակեց նա, քիչ լռելուց յետոյ, մի դառնութեամբ, որ ցոյց էր տալիս թէ մեղադրանքները սաստիկ ազդել են նրա վրա։—Ես էլ ասելիք ունեմ, բայց ինչ հարկաւոր է ասել, քանի որ չեմ կարող ուրանալ որ ես չէի հաւատում քեզ։ Եթէ այդ մեղք է, ուրեմն ես դատապարտված եմ։ Գիտեմ որ ինձ ծմակի մարդ են անուանում։ Միթէ այդ անունը բաւական չէ, որ ես արժանի լինեմ ներողամտութեան...

—Դու ուզում էիր լսել ճշմարտութիւնը և ես ասացի։ Ներել... Ես ներել եմ ամենքին։ Բայց դու ուրիշ, աւելի ծանր մեղք ունես։ Այն՝ ինչ ուզում էր անել իմ ահաբեկված մայրը, չունենալով ուրիշ ճար, դու պիտի կատարէիր, եթէ մեր գործը չաջողվէր։ Դու, քաջ և ան-

վախ մարդ, շրջապատված քո զէնքերով, պիտի տանէիր ինձ Խաչէն և յանձնէիր նոյն ատելի մարդուն։ Ներել կարող եմ, բայց մոռանալ—երբէք...

—Որ նշանակում է թէ ես այլ ևս չը պիտի մնամ այս տանը։ Իմ բախտն է որ կռուի պատրաստութիւն կայ և ես այստեղից ուղղակի կը գնամ Մելիք-Աւանի զօրքի հետ խառնվելու, թէ չէ՝ դժուար կը լինէր գլուխ դնելու տեղ գտնել...

Նա դուրս գնաց, թողնելով Գայիանէին մտքերի մէջ թաղված...

ԺԸ

Նոյն օրը Աննա-խաթունը ճանապարհ էր դնում Մանասին։ Պատրաստված էր ճաշ, որից յետոյ մելիքի կինը դարձեալ սկսեց հաշտեցնող խրատներ տալ Մանասին, աշխատելով մեղմացնել իր աղջկայ ասածների ազդեցութիւնը և անդադար յիշեցնելով անցեալը, այս տան հիմնադիրներին։ Ինքը Գայիանէն էլ, կարծես, մօր միտքն էր հաստատում. վերջին ժամին նա էլ դուրս եկաւ, որ բարի ճանապարհ տայ Մանասին։

Ձիաւորները պատրաստ սպասում էին գիւղում, շտապեցնում էին Մանասին։ Բայց յանկարծ ներս մտաւ կոյս Հեղինէն և բռնելով նրա ձեռքից, պատուիրեց որ քիչ էլ սպասէ։

Մայրապետը դարձեալ առաջվանն էր. նրա աղաչանքներից յետոյ տեղի ունեցած դէպքերը նրա վրա ոչ մի հետք չէին թողել։ Երկար տէրողորմեան պտտեցնելով իր մատերի մէջ, նա յայտնեց որ նամակ է ստացել Խաչէնի մելիքից և բերողը Ջալալն է։

—Այժմ, փառք Աստուծոյ, խաղաղութիւն է և փեսան եկել է բարեկամութիւնը վերանորոգելու, ասաց նա։
—Մելիքն ինձ է յանձնել այդ գործը։

Գայիանէն ինչ-որ բան շշնջաց մօր ականջում, և

սա, կարծես, չը լսելով կոյսի խօսքերը, ասաց.

—Ես ուզում էի մի քահանայի միջոցով յետ ուղարկել մատանին. այժմ կարող են իրանք տանել։

—Ինչու, բացականչեց կոյսը։

—Ես աղջիկ չեմ ուղարկի Խաչէն...

—Երևի Ջալալից լաւ տղայ ես գտել, հեգնութեամբ վրա բերեց Հեղինէն։—Եթէ աչքի առաջ ունես մի բուխ գիւղացի, այդ ուրիշ բան է։ Բայց Ղարաբաղում Ջալալն է միակ նշանաւոր իշխանական տանից...

—Ինձ հարկաւոր չէ։

—Ես չեմ զարմանում այդ խօսքերի վրա... Ե՞րբ ես դու հասկացել քո տան պատիւը, որ այժմ հասկանաս... Իշխանին թողած՝ ռամիկին կը տաս, քեզ ես ճանաչում եմ...

—Ոչ ոքին էլ չեմ տայ, սառն ու կտրուկ եղանակով արտասանեց Աննա-խաթունը։

—Լսո՞ւմ ես, Մանաս... Սրանց նման անաստուածներ չես գտնի։ Սրանց համար կարգ, կանոն, գիրք ու հրաման չը կայ։

Եւ ապա, դառնալով Աննա-խաթունին, նա շարունակեց.

—Ոչ ոքին չես տայ։ Այդպէ՞ս է։ Բայց ինչ են անում աղջկան. հօ թթու չե՞ն դնում... Պահելը միայն փորձանք կը բերէ. մի փորձանքից ազատվեցիր, փառք տուր Աստուծուն։ Աղջիկը տղայի համար է։ Ջալալը չէ ուզում ձեռք վերցնել... Խեղճը դեռ էլի տաքացած է... Լաւ տղայ է, Աստուած է վկայ...

Գայիանէն նորից շշնջաց մօր ականջին և դուրս գնաց, իսկ մայրը հերքում էր կոյսի խօսքերը։ Վերջի ժամանակ շէմքում երևաց Ջալալը, ինչպէս պայմանաւորվել էր Հեղինէի հետ։ Զոքանչը բոլորովին ուշադրութիւն չը դարձրեց նրա վրա. Մանասն էր, որ առաջ գնաց և հեգնութեամբ հարցրեց.

—Ինչու ուղիղ այստեղ չեկար, Ջալալ-բէկ։

Խաչէնցի երիտասարդը կարմրեց, շփոթվեց և խօսք չը գտաւ։ Նրա տեղ պատասխանեց Հեղինէն.

—Վախենում է, Մանաս, ինչ անի խեղճը։ Ժամանակն այնպէս փչացել է, որ հիմա տղամարդիկ են վախենում կանանցից...

—Այդպէս չէ, ընդհատեց Աննա-խաթունը։—Այս տղան, պարզ ասած, երես չունի. ամաչում է, ահա թէ ինչու չեկաւ մեզ մօտ։ Այն գիշեր, երբ ես պատրաստ էի ամեն ինչ անել, երբ պէտք էր միայն վերցնել ու տանել, սա թողեց մեզ ու փախաւ...

—Ի՞նչ անէի, մէլիքի կին, աշխարհը կը քանդվէր, եթէ մնայի,—խօսեց, վերջապէս, Ջալալը։—Ոյժ կար այստեղ... Գնացի լաւ օրերի սպասելու...

—Բայց այդ ժամանակ կարող էին Գայիանէին խլել, բէկ, ասաց Մանասը։

—Օ՜, ես ինձ կը սպանէի, ես քարից ցած կը գլորվէի, եթէ նա թիւրքերի ձեռքն ընկնէր, բացականչեց երիտասարդը մի սրտառուչ, ջերմ ոգևորութեամբ։

Գայիանէն ներս էր մտնում այդ միջոցին, բերելով մետաքսեայ կապոցի մէջ դրած նշանադրութեան մատանին, ապարանջանը և այլ զարդեր։ Նա լսեց այդ խօսքերը։ Արիւնը խփեց նրա գլխին, բայց նա չը վրդովվեց։ Ձեռքում բռնած կապոցը դնելով Հեղինէի գոգը, նա ասաց.

—Սրանք մեզ հարկաւոր չեն։

Աննա-խաթունն էլ կրկնեց այդ խօսքերը։ Գայիանէն, կարծես, դրան էր սպասում։ Բռնելով մօր թևից, նա շարունակեց.

—Քեզ ասում են թէ աղջիկը չը պէտք մնայ իր հօր տանը։ Այդ ճշմարիտ է, և ես չեմ մնայ։ Ես կը գնամ նրա մօտ...

Նա մատն ուղղեց դէպի Հեղինէն։

—Վա՜նքը... բացականչեց Մանասը։

—Այո... Նրան չէ կարելի թողնել այն դրութեան մէջ...

Հեղինէն և ծառաները ապշել էին զարմանքից։ Իսկ աղջիկն առաջ տարաւ իր խօսքը.

—Վանքը... Այնտեղ անիծվում է ազատութեան համար բարձրացող սուրը... Այնտեղ մտնել չի յանդգնի թիւրքի սրով խոցոտված որբը... Այնտեղ վէրք չեն կապում, սպեղանի չեն դնում. այնտեղից դուրս են անում անպատուած աղջիկներին... Այնտեղ երկրպագում են իշխանին, իսկ խեղճի արիւնը ծծում... Այնտեղ քար են պաշտում... Այնտեղ կայ աղօթք, արտասուք, բայց չը կայ մարդկային սիրտ... Այնտեղ աւետարանը փաթաթված է մետաքսների մէջ. նրան չեն կարդում, այլ միայն համբուրում են... Այնտեղ եմ գնում ես...

—Այնտեղ քեզ կը խրատեն, յանդուգն աղջիկ, բացականչեց Հեղինէն, տեղից վեր թռչելով։

—Ես չեմ վախում... Կռւել—որքան ուզում ես...

Աննա-խաթունը կարծես նոր հասկացաւ իր աղջկայ միտքը, և յարձակվելով նրա վրա, մի կոպիտ, խիստ ձայնով ասաց.

—Ես չեմ թողնի... Դու՝ կոյս... Դու էլ աղաչես նրա նման... Ո՛չ, ոչ, այդ չի լինի...

Գայիանէն ձեռքերով խիստ բացասական նշան արաւ և դուրս գնաց։

Բոպէ չանցած՝ Մանասը ճանապարհվեց։ Նախ քան իր խմբին հասնելը՝ նա կանգ առաւ, նայեց Մելիքի տանը։ Նրա փոքրիկ դէմքի վրա խորին բաւականութեան մի արտայայտութիւն երևաց. կարծես նա ասում էր ինքն իրան որ այդ տանից հեռանալ, այնու ամենայնիւ, դժուար է, անհնարին...

Երեկոյ էր։ Գայիանէն ճրագի տակ իր գործն էր կատարում։ Դուռը կիսաբաց էր և նա չը նկատեց թէ

ով էր, որ ներս մտաւ։ Յանկարծ նա լսեց մի ծանր շընչառութիւն և, գլուխը բարձրացնելով, տեղից վեր թռաւ։ Կանգնած էր Նազլուն, Վարդավառի Նազլուն—այլայլված, կատաղի դէմքով։

Գայիանէն շտապով հարցրեց.

—Ի՞նչ է պատահել... Մարթա՞ն...

—Կարծում ես թէ մեռա՞ւ, պատասխանեց Նազլուն նոյն շեշտով, որ այնպէս ազդել էր Գայիանէի վրա Հարանաղբիւրի մօտ։

—Ո՛չ, հիմա լաւ է, շարունակեց նա, երկար շունչ քաշելով։—Իմ մայրը ինձանից լաւ է պահպանում նրան, ես այդ տեսնում եմ... Իմ մայրը գիտէ երեխայ պահել և Մարթան նրանն է այժմ...

—Փառք Աստուծու...

—Դու փառք ես տալիս, խեղճ քոյրիկ... Եթէ դու տեսնես իմ անբախտութիւնը... Իմ ոտների տակ անդունդներ են բացվում. բաց աչքերով ես տեսնում եմ նրանց ամեն քայլում, մութի և լոյսի մէջ։ Հազիւ կարողացայ նրանց վրայով ցատկել և այստեղ հասնել...

—Բայց ի՞նչ է պատահել...

—Սարսափելի բան... Դեռ օր կար, երբ մեր տունը մտաւ մի բարձրահասակ երիտասարդ... Դու նրան ճանաչում ես... Ասլանը։

—Դիզակեցի՞ն... Ի՞նչպէս չը ճանաչեմ, նա մեր բարեկամն է։

—Ի՞նչ ունես նրա դէմ...

—Օ՛, նա շատ լաւ երիտասարդ է, ազնիւ, կրակոտ...

—Եւ քա՛ջ, քա՛ջ, ասաց Նազլուն։

—Այո՛, նա միշտ այդպէս էր...

—Սպասիր, քո՛յրիկ, ես կը պատմեմ։ Ես տեսայ նրան այն մութ գիշերին, երբ նա ազատում էր գերիներին։ Նա հսկայ էր... Եթէ այնտեղ մարդիկ չը լինէին, ես կը չոքէի նրա առաջ և կը լիզէի նրա ոտի տակի հողը։ Վերադառնալիս, ես տեսնում էի նրան սպիտակ ձիու

վրա։ Սուրբ Սարգիսը, որ բարեկենդանին, իր տօն օրը, մտնում է մեր տները և ձիով կոխ է տալիս մեր փոխինդը... Նա այդպէս էր։ Ես չը գիտէի այն ժամանակ որ նա էլ, ինչպէս ամեն մի սուրբը, անողորմ է դէպի ինձ...

—Անողո՞րմ. ինչո՞ւ։

—Նա ինձ ո՞ւզում է, աղաղակեց Նազլուն, արձակելով մի սուր հառաչանք, որից, կարծես, կտոր-կտոր դառան նրա թոքերը։

Գայիանէն ուրախացաւ, շտապեց շնորհաւորել։ Բայց Նազլուն սաստեց նրան և շարունակեց.

—Նա սիրո՞ւմ է ինձ... Բայց ես...

—Մի՞թէ դու նրան անարժան ես համարում...

—Ինձ մի՛ ընդհատիր, քո՛յրիկ, գոչեց նա լաց լինելով։—Ի՞նչ ես ասում. անարժա՞ն... Ես էլ կը սիրէի նրան... Բայց նա սուրբ է, իսկ ես... պղծված, խայտառակ...

—Ա՛հ, խե՛ղճ Նազլու... Բայց նա գուցէ գիտէ այդ բանը...

—Գիտէ... Բայց դա բաւական չէ... Ես պատիւ չունեմ, որ տամ այդ գեղեցիկ, քաջ երիտասարդին, իմ սրբին... Ես կը ցեխոտեմ նրան, ես ամբողջովին կեղտ եմ...

Գայիանէն էլ արտասուեց։ Մի վայրկեան ծանր լռութիւն տիրեց։

—Ես այս երեկոյ հասկացայ թէ ինչու Մարթան ինձ չէր կոչում, շարունակեց Նազլուն։—Մարթան էլ, անմեղ երեխայ, գիտէ որ ես կեղտոտ եմ... Զուր, զո՜ւր էին իմ ջանքերը. ես իմ մարմինը ուզում էի տալ՝ ուրիշին ազատելու համար, ինչպէս Փէրին, բայց չը գիտէի որ ոչ ոքին հարկաւոր չէ այս պիղծ միսը... Օ՜, ինչու եմ ես այստեղ... Ինչո՞ւ եմ կոխ տալիս Աստուծու մաքուր հողը... Ամեն տեղ սրբութիւն. միայն ես եմ պիղծը, զզուելին... Զգո՜յշ, քո՛յրիկ, չե՞ս տեսնում անդունդը...

Ահա՛ բացվեց մէկը, ահռելի, սև... Այստեղ էլ, այս ճրագի առաջ էլ...

—Անդունդ չը կայ, սթափվիր, Նազլու, իմ խեղճ քոյրիկ, ասաց Գայիանէն և գնաց նրան գրկելու։

Բայց Նազլուն չը թողեց նրան մօտենալ և դուրս վազեց։ Մինչև Գայիանէի դուրս գալը նա արդէն բակումն էր։ Նա փախչում էր. կարծես նրան սատանի հալածում էին և նա մի բոպէ կանգ առաւ, որ որոշէ թէ դէպի ո՛ր կողմ պէտք է վազել։ Եւ անընդհատ մրմնջում էր.

—Ասլանն անողորմ է... Մնա՛ս բարով, քո՛յրիկ... Ինձ ոչ ոք չը խղճաց... Նոյն իսկ սրբերը...

Այդ խուլ, ցաւալի քրթմնջիւնը յանկարծ ընդհատվեց. Գայիանէն, վերջապէս, խօսք գտաւ և սկսեց թախանձել նրան որ յետ դառնայ, լսէ իրան։ Բայց, կարծես, սարսափելով այդ թախանձանքից, Նազլուն մի գերեզմանական ձայնով բացականչեց.

—Անդունդնե՜ր, անդունդնե՜ր... Այլ ևս չէ կարելի ցատկել, անցնել... Ինձ տանում են... Երկու թիւրքեր, երկու դևեր... Ասա՛ Ասլանին, նրանք էին ինձ պղծողները...

Եւ նա փութով քայլեց։ Գայիանէն մի վայրկեան անշարժ էր. բայց յանկարծ նրա մէջ փայլատակեց մի միտք. նա հասկացաւ թէ ինչ է ուզում անել Նազլուն։ Եւ սարսափահար վազեց որ ազատէ խեղճին. վերկացրեց Թէօսին, ճրագ բերել տուեց։ Տունը տակն ու վրա եղաւ։

Բայց իզուր։ Նազլուն կորել էր խաւարի մէջ...

Անցաւ մի ամիս, շուտով կը լրանար երկրորդը։ Հրաշալի գարուն էր սարերում, այն ինչ Արաքսի ափերը այրվում էին անտանելի տօթերից։ Այնտեղ, անապատի կրակների մէջ, դեռ երևում էին ձիաւոր և հետևակ

խմբեր, որոնք սպասում էին թշնամուն։ Մի օր միւս ափի լեռներից իջան երեք ձիաւորներ։

Կորելով պղտոր գետը, նրանք կանգ չառան, սկսեցին արշաւել դէպի հանդիպակաց լեռան լանջին տարածված գիւղը, ուր ապրում էր Մէլիք-Աւանը։

Մանասն էր, թռչում էր քամու պէս, որ մի ժամ առաջ տեղ հասցնէ իր բերած ուրախ լուրերը։ Պարսկաստանը դղրդում էր. Նադիրը ահագին պատրաստութեամբ գնում էր Քէրբէլայի վրա։ Օսմանեան զօրքերը անդադար յետ էին քաշվում դէպի արեւմուտք, Ատրպատականի մեծ մասը նորից անցել էր պարսիկների ձեռքը։ Ահաւոր պատերազմն արդէն սկսվում էր. նա այստեղից շատ և շատ հեռու էր։

Փոթորիկն անցաւ...

Միւս օրը Մէլիք-Աւանը վերադառնում էր Տող։ Ճանապարհին Մանասը առաջ քշեց իր ձին և, առանձնանալով մէլիքի հետ, խօսակցութիւն սկսեց։ Այժմ խաղաղութիւն էր, ամեն մէկը վերադառնում էր՛ իր տունը։ Իսկ ո՞րն է Մանասի տունը։

Մէլիքը ցոյց էր տալիս Աւետարանոցը և Մանասը միանգամայն բաւական էր դրանով։ Բայց նա ունէր իր պայմանը։

—Իմ հին բո՞յնը, բացականչեց նա ուրախացած։— Շատ լաւ, մէ՛լիք. բայց Մանասն այնտեղ չի ապրի, եթէ դու մի արդարութիւն չանես։

—Արդարութի՞ւն...

—Այո։ Ես պատմել եմ քեզ, որ Աննա-խաթունը ընդդիմանում է Գայիանէի վերջին ցանկութեանը։ Այժմ խօսքը քեզ է պատկանում, ի՞նչ վճիռ պիտի տաս։

—Դու ի՞նչ կուզէիր։

—Ոչ ոք չը պիտի ընդդիմանայ Գայիանէին...

—Եւ նա վա՞նք գնայ...

Մէլիքը կանգնեցրեց իր ձին, կիտած յօնքերի տակից մի զարմացական հայեացք նետեց իր ուղեկցի դէմքին։

—Կուսանոց, որ մէլիքի սան կողքին է գտնվում, ասաց Մանասը, չը շփոթվելով այդ հայեացքից։—Գայիանէն բացատրեց թէ ինչու է գնում այնտեղ։ Եթէ ես շնորհք ունենայի, կը կրկնէի նրա խօսքերը։ Կասեմ այսքանը, որ այն ժամին, երբ ես լսում էի նրան, ինձ թւաց թէ աչքիս առաջ կանգնած է Տէր-Սողոմոնը...

Ձիաները հանդարտ քայլեցին։ Մանասը, որ աչք չէր հեռացնում մէլիքից, նկատեց նրա դէմքի վրա մի հեգնական արտայայտութիւն։

—Դու ծիծաղո՞ւմ ես, ասաց նա վշտացած։—Ինչ ուզում ես, ասա, մէ՛լիք, բայց այն օրից Տէր-Սողոմոնը կենդանի է ինձ համար։ Արաքսի ափին, Պարսկաստանում, ամեն տեղ մէկը ինձ հետ էր, որ ասում էր թէ նա չէ մեռել։ Եւ եթէ այժմ գնում եմ Աւետարանոց, պատճառն այն է, որ Տէր-Սողոմոնը մեռած չէ։ Լինել նրա մօտ, սովորել նրանից...

—Մազերդ սպիտակել են, էլ չես սովորի։

—Գայիանէի համար այդ դժուար չէ։ Գայիանէն Մանասին դուրս բերեց ծմակից, տարաւ մարդկանց մէջ։ Տէր-Սողոմոնն ինձ ասում էր. «Կը մտնես իմ եկեղեցին և կը հաւատաս»։ Եկեղեցի տեսել էի, բայց նրա եկեղեցին չը տեսայ, որովհետև նա ընկաւ թիւրքի գնդակից։ Այժմ Գայիանէն տանում է ինձ այնտեղ։

—Չեմ հասկանում թէ ինչ եկեղեցի է դա։

—Կուսի եկեղեցին, մէ՛լիք... Ես կուսի մէջ եմ ծերացել. բայց չէի հասկանում այն կոյսը, որ վառում էր Գայիանէն և որից լիացաւ ամբողջ աշխարհը։ Թո՛յլ տուր Մանասին գոնէ այսուհետև տեսնել մի նոր կոյս, որ պիտի սկսէ Գայիանէն Տէր-Սողոմոնի եկեղեցու մէջ և որից դարձեալ պիտի լիանայ աշխարհը...

Մէլիք-Աւանը խորասուզված էր մտքերի մէջ և երկար տեղ գնում էր լուռ, ոլորելով իր բեղերը։ Իսկ Մանասը թախանձում էր, բացատրում էր բոլոր հան[illegible]մանքները։

Յանկարծ նա լռեց, կարծես չէր հաւատում իր երջանկութեան։ Դիգակի աչքը նրան էր նայում իր բարի, գեղեցիկ աչքերով։

Նա համաձայն էր . . .

ՀՀ Ազգային գրադարան
NL0349122

33267